ПЕРЕПЛЕТНАЯ
Г. Б.
КУЗНЕЦОВА
въ Астрахани

П 4/33



1906

3050 1730-ԱՀ

ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄԱԻԹԵԱՆՑ


ՅՃԱՐՈՒՆԱՑ ՍՒՐԲ ԳՐՈՑ

Բացաքննեալ երկասիրութիւնք տեն տեն Սահակայ
Պարթեւապետի Աստուածոյ՝ Եպիսկոպոսի, և
Ընդհանրական Եպրայի Մխիթարեանց։

Եւ տպագրեալ յառաջնորդութենէ Նորա՝ ինքնայօժար ծախիւք
աղնիւ և բարեպաշտ կարնեցի Գէորգ Աղայի Յակոբեան։

ՀԱՏՈՐ Ը.


ԳԱՏԱԻՒՐՓ. ՀՌՈՒԻԹ. Ա. ԵԻ Բ. ԹԱԳ.



Ի ՎԱՆԻՑ
Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ
1819. ՌՄԿԹ.

9427-ԱՀ

221



ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

ՅՃՈՒՐՈՒՆՔ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

ԳԻՐՔ ՆՕԹՆԵՐՈՐԴ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԳՐՈՑՆ

ԴԱՏԱՒՈՐԱՑ, ԵՒ ՀՈՒՈՒԹԱՑ։

ԳԼ. Ա.

Ընդվանուրին որդւոց Իսրայէլի։ Վասնզի եղեան որդւոց յոտից առնու զբնիկն տալոյ։ և զնաֆտաւոր նորա զատոնիբեղեկ խալեալ՝ այլ կրկնել զծայրս ցեղացն և ոտիցն նորա, և այնպէս զանձն մինչև՝ ի մահ նորա։ Վասնզի նիզել առնու զբարիս տալոյ, և հովանի ցեղացեալոյ տալոյ։

Յետ վախճանելոյն յեհուայ որդւոյ Նաւեայ արժանաժառանգ յաջորդին մովսիսի՝ ոչ եկայ ոք՝ ի տեղի նորա յաջորդ՝ ի գլուխ ժողովրդեան որդւոցն Իսրայէլի. այլ իշխանք և ցեղապետք ցեղից կառավարեին իւրաքանչիւր զիւր ցեղ՝ գործակցութեամբ գլխաւորաց ժողովրդեան իւրեանց։ Այլ՝ ի լինել հարկաւորութեամբ խորհրդոյ՝ ի մէջ առնուլ յաղագս հասարակաց օգտութեամբ, իշխանք ցեղից գային՝ ի միասին, և միաբան խորհրդով վճարէին զիրան։ Այն ժողով կացուցանէր զծերակոյտ

նոցա. որ վարէր զգերապետին իշխանութիւնն ի վերայ համօրէն իսրայէլեան ժողովրդեան հանդերձ առաքինութեամբ քահանայապետին յորդւոցն ահարոնայ։ Այսօրինակ վարեցան որդիքն իսրայէլի. այլ էհ յայտ թէ ընդ քանի՛ ամս։ Ընդ այն ժամանակս անիշխանութեանն ցորչափ կենդանի էին ծերքն, որք տեսին զմովսէս, որք և ականատես վկայք եղեն աքանչելեացն՝ որպէս և առ կենդանութեամբ յեսուայ, պաշտեաց իսրայէլ զտէր ամէն երկնի և երկրի. զի նոքա իշխանութեամբ իւրեանց և ողջամիտ հրահանգութեամբ, և բարի օրինակաւ՝ պահէցին զկրօնս Աստուածային ամենապաշտութեանն ի մէջ ժողովրդեան, ուր որպէս թէ և յայն ժամանակս չիցէ բնաւ սպրդեալ ի նոսա կռապաշտութիւն ինչ, այլ զի կամ՝ ի ծածուկ էր, կամ գէթ գայթակղութիւնն չէր ընդհանուր. զի երկիւղ ծերոց սանձ մեծ էր նոցա։

Այլ զկնի ամաց ինչ՝ իբրև սկսան անդրէն զօրանալ մնացորդք քանանացւոց, զորովք զանց առեալ զառաջինն յեսու, որդիքն իսրայէլի հաստատեցին ձեռնարկել ի պատերազմ ի ջնջել զնոսա, և տիրել երկրին, զոր խոստացեալ էր ամէն նոցա։ Այլ քանզի գործառնութեանն այն ծանր էր և վտանգաւոր, նմին իրի ժողովեցաւ ծերակոյտ նոցա ի սեղով, ուր էր խորանն վկայութեան. և ի ձեռն քահանայապետին խնդրեցին ի նմանէ ցուցանել, թէ ո՞ր ի ցեղից սկիզբն արասցէ մարտին ընդ քանանացիս, և լինել յառաջընթաց այլոց և քաջալեր, առ ի զնոյն առնել և նոցա։ Այս պատասխանի ետուր, թէ ցեղն յուդայի լիցի առաջին։ Իշխան այնր ցեղի էր քաղեբ որդի յեփոնեայ, թէպէտ և ծերացեալ, բայց արի և քաջամարտիկ. որոյ առեալ իւր մնրտակից զցեղն շմաւոնի իւրոյ սահմանակցի, քանզի վիճակ ժառանգութեանն նոցա կից էին միմեանց, յարձակեցաւ ի վերայ մասին միոյ քանանացւոյ և փերեզացւոյ. և յառաջին մարտի անդ կոտորեցին տասն հազար արանց պատերազմողաց ի թշնամեաց անտի. առին զբեղեկ քաղաք, և զթագաւոր նորա կենդանւոյն ըմբռնեալ ածին առ

քաղէք։ Այս որ ՚ի քաղաքէ իւրմէ կալեալ զանուն՝ կոչիւր Ադոնիբեզեկ, այն է՝ տէր բեզեկայ, էր այր գազանաձիտ. որ յառաջագոյն յաղթեալ ՚ի պատերազմի եօթանասուն իշխանաց, (որք էին տեարք փոքրիկ նահանգաց, բայց անկախք և ինքնիշխանք, յոյր սակս սէր զիրք կոչէն զնոսա Թագաւորս,) և կալեալ զնոսա կենդանի, ոչ համարեցաւ բաւական ՚ի յագուրդ գազանային անգթութենէ իւրոյ տեսանել զնոսա ՚ի կապանս գերութենէ, այլ ՚ի վերայ այնր յաւել և այլ նոր և դժնդակ տանջանս. զի ետ հատանել զմատունս ձեռաց և ոտից նոցա. և ունէր զնոսա իբրև նոյնչափ շունս ՚ի ներքոյ սեղանոյ իւրոյ. որք կերակրէին ՚ի փշրանաց, զոր բազմակաքն արկանէին նոցա։ Այլ կարծեր եղկելին՝ թէ երբէք դառնայցէ անկս բախտի իւրոյ. և ոչ իակ զմտաւ ածէր, թէ այնու ուսուցանէ այլոյ համ հզօրագունի քան զինքն՝ յաւուր միում զնոյն անցուցանել ընդ նա. որպէս և եղև։ Օ՛ի Թէպէտ սիրտ քաղեքայ ոչ ժուժեաց տեսանել զնա ծայրագոյն ձեռօք և ոտիւք ՚ի ներքոյ սեղանոյ իւրոյ, բայց կամեցաւ զի առցէ զփորձ տանջանացն, զոր ետ կրել այլոց, տալով հատանել զծայրս մատանց ձեռաց և ոտից նորա։ Յայնժամ անագան ուրեմն ՚ի միտ էառ Ադոնիբեզեկ, թէ որով մեզանչէ օք, նովիմբ և տանջի. վասն որոյ ցաւագին սրտիւ խոստովան եղև ասելով. * Եօթանասուն Թագաւորք ծայրակատուրք ձեռօք և ոտիւք էին, որք քաղէին զփշրանս ՚ի ներքոյ սեղանոյ իմոյ. արդ որպէս արարի, նոյնպէս հատոյց ինձ Ած ‖ . պսա . ճ . ղ ։ ՚Ի խոստովանութենէ ասի, որով ցուցանէ Աստուածաբեր զմեծութենէ անօրինութենէ իւրոյ, և զարդար դատաստանն ՚ի վերայ նորա, որում խոնարհութենէ ներքոյ արկանէ զանձն, ոմանք պատճառս առնուն բարելոյս լինել յաղագս փրկութենէ նորա. մանաւանդ զի ասէն՝ միայն նա այնուհետեւ ՚ի մէջ իսրայելացւոց ՚ի բանակին, և ապա յառնուլ նոցա զերուսաղէմ՝ ՚ի քաղաքի անդ մեռաւ։

Ադդ՝ առեալ որդւոցն յուդայ զբեզեկ, զիմե-

ցին ՚ի վերայ Երուսաղեմի, և պաշարեցին զնա. որ էր բաժանեալ իբր յերկու քաղաքս, անջրպետու թե պարսպաց՝ ՚ի վերին և ՚ի ստորին։ Վերինն որ և էր ամրոց՝ կոչիւր Սիոն, և անկանէր ՚ի հարաւակողմն ՚ի բաժնին՝ որ վիճակեցաւ յուդայի. իսկ ստորինն անուանեալ Աղէմ, ՚ի հիւսիսակողմն ՚ի վիճակին բենիամինի։ Յեսու յառաջապոյն ա՛ռ զսաղէմ զստորին քաղաքն, և սպան զԹագաւորն նո՛ր, և զյեբուսացիս զբնակիչս նորա կոտորեաց. այլ Թէ զիա՛րդ վերստին ժողովեցան յեբուսացիք անդր, չիք ինչ յիշատակ ՚ի սո՛ր գիրս։ Այրևի Թէ ՚ի մեկնիլ անտի յեսուայ տալ պատերազմ ընդդէմ հիւսիսային Թագաւորայ՝ առ ջրովն մարոնայ, և ՚ի կողմանս դանայ, և լերանցն լիբանանու, պէտս ունելով բազմութե՛ պատերազմողաց, ոչ եԹող անդ ՚ի զօրաց իւրոց ՚ի պահպանութե՛. որպէս և ոչ ՚ի քեբրոն, ՚ի դաբիր, և յայլ լեռնական քաղաքս, զորս առեալ էր, և զԹագաւորս և զբնակիչս նոցա կոտորեալ և ցրուեալ։ Ասատ ՚ի նմին ժամանակի ապրեալքն ՚ի ժողովրդոց անտի փախըստեամբ, դիպողութե՛ գտեալ՝ դարձեալ ժողովեցան ՚ի տեղիս իւրեանց։

Այս ապա յորժամ բաժանեցաւ երկիրն ՚ի տասն ցեղս, որդիք յուդայ, և որդիք բենիամինի գնացեալ կալան իւրաքանչիւր զվիճակ իւրեանց առ երուսաղեմաւ, յուդա զՀարաւակողմն, իսկ բենիամին զհիւսիսայինն հանդերձ ստորին քաղաքաւ. բայց ամրոցն էր ՚ի ձեռս յեբուսացւոց. և որդիքն յուդայ առ ժամանակ մի բնակեցան խաղաղութեամբ ընդ յեբուսացիս. զի ոչ կարացին բառնալ զնոսա. որպէս յայտ է, յես. ՔԵ. 63. ուր ասի, * Այս յեբուսացին բնակեալ էր յերուսաղէմ. և ոչ կարացին որդիքն յուդայ մարտնչել ընդ նոսա. և բնակեցան յեբուսացիքն ընդ որդիսն յուդայ յերուսաղէմ մինչև ցայսօր ‖։ Այս ՚ի գրգռել միւսանգամ որդւոց իսրայէլի զպատերազմ, որդիք յուդայ առին զերուսաղէմ, յայտ է Թէ զստորինն, և Հարին զբնակիչս ՚ի սայր սուսերի, և զքաղաքն այրեցին,

այլ վերին քաղաքն կամ ամրոցն Սիոնայ և այս անդամ ՚ի ձեռս յեբուսացւոց . զի չէղև յայնժամ փոյթ որդւոց իսրայէլի իսպառ ջնջել զնոսա , այլ միայն նուաճել , և բանալ ինքեանց ճանապարհ արշաւելոյ ՚ի վերայ այլոց քաղաքաց : Եւ այս յայտ անտի է , զի զկնի այսր յաղթութեանն դտանեմք զյեբուսացիս բնակեալ յերուսաղէմ ընդ որդիսն բենիամինի . գ.թագ . ա . 21 : Աստի վերին քաղաքն՝ այսինքն ամրոցն սիոնի եկայ Սիոնայ միշտ ՚ի ձեռս յեբուսացւոց , մինչև ՚ի ժամանակս դաւթի , զոր նա ինքն էառ ՚ի ձեռաց նոցա :

Ձարեալ զյաղթութիւնն երուսաղէմի , անցին ՚ի քեբրոն ՚ի մայր քաղաքացն Հնակայ . առին զնա երկրորդ անգամ , և հարին կոտորեցին անդ զբիս որդիս Հնակայ զսուսի կամ սէսի , զթովմայի կամ թողմի , և զալիման : Նոյնժամ դիմեցին ՚ի դաբիր , որ յառաջն կոչէր քաղաք նամակաց , այսինքն դպրութեանց կամ իմաստասիրութեանց . և զի էր նա քաղաք ամուր , որ կարէր ընդերկար աշխատ առնել զզօրս իսրայէլի , քաղեբ առ փութացուցանէր զգործն՝ խոստացաւ , թէ որ ոք ՚ի զօրապետաց անտի յառաջ նահատակեալ խրամատեսցէ զպարիսպ նորա և մտցէ և առցէ զքաղաքն , տացէ նմա զաղջա զդուստր իւր կնութեան : Ուստ զայս գոդնիէլ որդի կենազի եղբօրորդի քաղեբայ (զոր ՚ի դիրն կրսեր եղբայր քաղեբայ կոչէ . յայտ է թէ լայնաբար փոխանակ մերձաւոր աղգականի՝ ըստ յաձախ սովորութեան իւրոյ . սակս թէ ոչ՝ ըստ օրինաց ոչ կարէր գոդոնիէլ առնուլ ՚ի կնութիւն զդուստր եղբօր իւրոյ) . և վառեալ քաջութեամբ , միանգամայն և առ ակր աղջկանն , յարձակեցաւ անխորտակելի արիութեամբ , եբայց ճանապարհ , եմուտ և կալաւ զքաղաքն , և ՚ի վարձ յաղթութեն ընկալաւ զաղջա ՚ի կին :

Այս քաղեբ դատեր իւրոյ ՚ի վարձանս կալուածոյ ինչ գետնոյ . որոյ դիրք և հայեցուածք թէպէտ քարի էր , զի անկանէր ընդ հարաւ , այլ անջրդի և ազազուն . բայց երևի թէ գոյր կից այնմ այլ եր-

կիր ջրարբի և բեղմնաւոր. զոր ցանկացեալ զոդո-
նիելն ՚ի ձեռս բերել, խրատեաց զկինն խնդրել
և զայն ՚ի հօրէ իւրմէ: Սակ նա յապաղեաց մինչև
ցյետին ժամ բաժանելոյ ՚ի հօրէն, խորհելով թէ
յայնմ ժամու ծերուկն հայրն գորովալից առ սի-
րելի դուստր իւր՝ տացէ նմա զինչ և խնդրեացէ:

Այսն որոյ այն ինչ նստեալ ՚ի վերայ իշոյ մեկ-
նել կամէր ՚ի հօրէն, դարձոյց առ նա զերեսս
տրտմագին, և յորոց եկեալ աղաղակեաց յիշոյ
անտի՝ քանզարտասվով սակս անջրդի երկրին զոր ետ
նմա, և խնդրեաց յաւելուլ ՚ի նմա և զբօսանս
ջրոց: Սակ քանզեզ առ չտրտմեցուցանել զնա յայնմ
յետին ժամու, շնորհեաց նմա առաւել քան զոր
խնդրեր, զի ընդ դաշտային ջրարբի ագարակաց՝
եւս և լեռնայինս ջրաբուղխս. * Այս (ասէ՞ք գ՚ինչն)
բստ սրտի նորա զբօսանս բարձանց, և զբօսանս
հովտաց: ‖

՚Ի նմին ժամանակի՝ մինչ յուդա և շմաւոն
միաբանեալ ընդարձակէին պատերազմաւ զսահ-
մանս ժառանգութեանէ իւրեանց, և այլ ցեղք չէին
անգործ. զի զնոսին պատերազմ մղէին և նոքա ՚ի
վիճակս իւրեանց. այլ եթէ գ՚ինչ ոչ պատմէ
վասն նոցա. յորմէ երևի թէ նշանաւոր ինչ իրք
ոչ գործեցան ՚ի նոցանէ: Այսայն զառուսին բեթ-
լեայ յիշէ, որ յառաջն կոչէր լուզա. զոր որդիք յով-
սեփայ պաշարեցին. և յոչ կարէին ոչ տանել զմուտ
նորա, բստ դիպաց իմն տեսին պահապանքն զայր
մի բեթելացի փախուցեալ ՚ի քաղաքէ անտի. կա-
լան զնա, և առեալ առ զօրապետս՝ քննեցին և
խոստացան առնել նմա ողորմութիւն, եթէ ընդ ծա-
ծուկ ձանապարհ մուծցէ զնոսա ՚ի քաղաք անդր:
Այցոյց նա զմուտն. ընդ որ ՚ի ներքս դիմեալ իւ-
րայեանցն՝ հարին զբնակիչս նորա ՚ի սայր սուսե-
րի, և կալան զքաղաքն: Սակ զայրն մատնիչ և
զազգատոհմն նորա արձակեցին ՚ի բաց ՚ի բանակէ
իւրեանց. և յիրաւի. քանզի մատնութիւնք թէպէտ
հաճոյական են, բայց մատնիչքն միշտ կասկածելի
են. զի թէ իւրեանց հայրենեաց, կամ բնիկ իշ-

քանի իւրեանց չէղէն հաւատարիմ, քանի և սա օտարբի։ Վասկայն երևի Թէ բազում հարստութիւնք ազձակեցին զայրն. քանզի գնացեալ նորա յերկիրն ի քեսիմ, չինեաց անդ քաղաք. և կոչեաց զնա լուզա՝ յանուն հայրենի քաղաքի իւրոյ։

Այս երկրորդ պատերազմունք, զոր զկնի վախճանելոյն յեսուայ սկսան մղել որդիքն իսրայէլի, արագագոյն քան զոր սպառն էր՝ վախճան առին։ Վանզի փոխանակ յառաջ վարելոց զպատերազմ ընդդէմ այլազգեացն ի ջնջել զնոսա, և զսեղանս կռոց նոցա կործանել, և զկուռսն խորտակել, որպէս պատուիրեալ էր ած, նոքա կամ առ վատասրտութենէ Թուլացեալ ի պատերազմական արիութենէ, և կամ սակս շահասիրութեան՝ շատացեալ հարկօքն զոր հանէին ի քանանացւոց, Թողին զնոսա բնակել խաղաղութեբ յամենայն սահմանս իւրեանց։ Այս այսպէս զոյգ ընդ խաղաղական բնակակցութենէ ընդ նոսա՝ սկսան և զնոցին հեթանոսական ամբարշտութիւնս մուծանել յազգս իւրեանց. և չունելով յայնժամ զոք գերագոյն հրամանատար ի վերայ իւրեանց, աներկիւղ ի պատժոց՝ այր իւրաքանչիւր առնէր զհաճոյս անձին։

Ընդ այն ժամանակս յանկարծակի հին երևեցաւ հրեշտակ ած ի գաղգաղա զգալի տեսլեամբ. և կշտամբեալ սաստկապէս զհետեւ նոցա պատուիրանաց ած, սպառնացաւ ի դիմաց ամենայն՝ տանջել զնոսա ի ձեռն ժողովրդոցն այնոցիկ, որովք մերձան՝ ուխտս դնելով ընդ նոսա և ընդ գիս նոցա։ Ընդ այն կշտամբանս հրեշտակին՝ համօրէն ժողովուրդք որդւոց իսրայէլի ի զէղջ հարեալ, ամբարձին զձայնս իւրեանց և լացին յոյժ, մինչև այնու հետև կոչել անուան տեղւոյն այնորիկ լալոնք. որ և յետոյ մասեփաթ անուանեցաւ ըստ ոմանց։ Այլ զոհեցին անդ առ հետեղ ած ողջակէզս քաւութենէ վասն մեղաց իւրեանց. յայտ է Թէ վասն յայտնութենն որ եղև ի ժամուն՝ առանձին հին տեսութենէ արտաքոյ հասարակ օրինաց, ըստ որոյ չէր օրէն ուրեք զոհս մատուցանել՝ բայց միայն ի խո-

քանն վկայութեան, և կամ զի ըստ այլոց՝ անդ էր յայնժամ խորանն. ուստի նաև լայնաբար բեթել կոչի, այսինքն տուն Ա՛յ։ Ականջալուր այն ձեղջ և լսելիւն չերևեցոյց ի նոսա արժանի պատուղ ապաշխարութեանն՝ գնել յոմանս ի ցեղից, որպէս ի ցեղն դանայ, և որդւոց բենիամինի. որպէս տեսցուք յաւաջիկայդ։

Գ·Լ· Ը·

Ա՛նդ պաղտէ հուռա առանձին ի փան էրուամ։ Ընդէր փանայ յափշտակեն զհուռա նորա. և առեալ զլայիսա փաղտ՝ հրձիգ առնեն զնա. և զինեն նոր փաղտ, զոր յանուն նախահաւրն իսրայէլի կոչեն դան. և անդ կանգնեն զհուռան յայսմհետէ ի պաշտօն։

Յայնմ անիշխանութեանն ժամանակի՝ մինչ ժողովուրդ որդւոցն իսրայէլի չունելով զոք գերագոյն հրամանատար ի վերայ իւրեանց, այր իւրաքանչիւր զհաճոյս կամաց իւրոց առնէր, ըստ առաւել հաւանելի կարծեաց մեկնչաց եղև դիպուածն միքայ, և առնուլ որդւոց դանայ զլայիսա. որ պատմի ի գիրս դատաւորաց. գլ· ԺԸ. և ԺԹ։ Պատմութիւն միքայ ըստ որում աւանդի անդ՝ թէպէտ մթին է, մինչ հազիւ մարթ է ի միտ առնուլ զկարգ իրացն եղելոց, սակայն համեմատութիւք այլևայլ թարգմանութեանց՝ զայս օրինակ իմանամք եղեալ։ Ա՛ն մի այրի ի ցեղին եփրեմայ, որպէս երևի պատառաւեալ, զի էին նորա որդիք և թոռունք, պաշտօնասէր անուտեաց, ունէր ի պահեստի հազար և հարիւր սիկղ արծաթոյ որոշեալ յամենայն ստացուածոց իւրոց առանձինն ի պէտս իւր. զոր որդի նորա միքա գաղտ դողացաւ ի նմանէ. գուցէ կասկածելով թէ օտարի ումեք թողուցու, և այն-

պէս արծաթն ելցէ ՚ի տանէ իւրմէ . կամ յայլ յոչ-
ինչ պէտս ծախեսցէ : Այս կին կամ յառաջ քան
զկորուստ արծաթոյն , և կամ որպէս առաւել հա-
մձայն երևի ընթացից պատմուածքն՝ զկնի կորու-
ցանելոյն , թերևս յոսոսով դիւտի արծաթոյն՝ խոս-
տացաւ երդմամբ ՚ի լուր որդւոյն իւրոյ միքայէլ ,
նուիրել զայն ՚ի պաշտօն կռոց՝ եթէ գտցէ :

Լուեալ միքայէլ զերդումն մօրն , և հաստա-
տեալ նովաւ ՚ի միտս իւր , թէ այնու կրօնասիրու-
թիւ մօրն , յոր արդէն և ինքն յօժարեալ էր , ՚ինայ
արծաթն ՚ի տան իւրում , յայտնեաց զգողնն ,
ասելով ցմայրն . մի՛ ինչ վշտանայցես , զի արծաթն
առ իս է , ես առի զնա . և դարձուցից զայն քեզ .
բայց տե՛ս , զի որպէս երդուար յականջս իմ , այն-
պէս արասցես : Իսկ մայրն լի խնդութիւ ընդ դիւտ
արծաթոյն՝ օրհնեաց զնա և ասէ , օրհնեալ լինիս
դու որդեակ իմ ՚ի Տէրէ , այո՝ այնպէս արարից . զի
սրբելով սրբեցի զարծաթն Տէն առնել դրօշեալ և
ձուլածոյ քեզ առանձինն ՚ի տան քումմ : Յայնժամ
դարձոյց միքա զարծաթն առ մայրն իւր . և նա ա-
ռեալ անտի երկերիւր սիկղ արծաթոյ՝ ետ ցձու-
լիչ , և արար կուռս ձուլածոյ և դրօշեալ կռանաս
գործ . և ետ որդւոյ իւրում միքայէլ՝ ընդ նոսին և
զյաւելեալ արծաթն . զոր նա եդ ՚ի տան իւրում ,
որոշեալ առ այն առանձինն սենեակ մի իբր առ
տնկին մատուռն կամ փոքրիկ կռատուն . և ՚ի յա-
ւելեալ արծաթոյն արար միքա այլևս փոքրիկ
դրօշեալս , և զգեստս քահանայականս և անօթս
՚ի պէտս սպասուց . և լցեալ ՚ի ձեռս միոյ յորդւոց
իւրոց իւղ , և առեալ նմա մատուցանել նուէրս
դրօշելոց , որ էր սովորական ծէս քահանայութե-
առ եբրայեցիս , արար զնա քահանայ՝ իմա՛ քումմ .
և այնուհետև առն միքայէլ եղև նմա առն կռա-
պաշտութե :

Ընդ այն աւուրս պատանեակ մի ղևտացի ՚ի
Հօրէ , և յուդայեան ՚ի մօրէ ՚ի ղևտացւոց անտի
որք բնակէին ՚ի մէջ ցեղին յուդայ ՚ի բեթղեհէմ ,
անուն նորա յովնաթան որդի գերսոնի՝ որդւոյ

մանասէի, ելեալ ի քաղաքէ իւրմէ՝ չորքեր թափառական, գտանել ուրեք կռիւ ոտից ի դարմանն անձին. և ձանապարհ արարեալ ընդ լեառնն Եփրեմի, եհաս մինչև ցտուն միքայի. զոր հարցաքննեալ միքայի, թէ ո՞վ է, և յինչ պէտս շրջի, իբրև գիտաց՝ եթէ ղևտացի է, և խնդրէ ուրեք տեղի ի դարմանն անձին, ուրախ եղև միքա, և առանց այլ ևս ինչ տեղեկանալոյ զհանգամանաց պատանւոյն, հրաւիրեաց զնա կալ առ նմա, և լինել քահանայ տան նորա ի սպասաւորութիւն իւրոյ դրօշելոյ. խոստանալով տալ նմա տուն ի քնակութիւն, և սեղան, և տասն սիկղ արծաթոյ, և երկու լրացեալ հանդերձս ամի ամի ի վարձ։ Յանձն առ զպայմանադրութիւնն յետսամիտ պատանին՝ ոչինչ խղձելով թողուլ զպաշտօն տան այ իսրայէլի, և լինել պաշտօնեայ դիւաց։ Տակ միքա վաղվաղակի օծ զձեռս նորա, և արար զնա քահանայ, մեծ ինն բարեբախտութիւն վարկանելով ունել ի տուն իւր քահանայ զևտացի. այժմ ասէ՝ գիտացի, եթէ բարի արար ինձ տէր. իբր զի ակնունելով թէ ի տեսանել ժողովրդեան զայրն ի ցեղէն ղևեայ սպասաւորել աստուածոյ իւրոյ, առաւել յօժարեսցին մատչիլ և յաձախել նուէրս, պատարագս և դահամունս. յորմէ ոչ սակաւ շահ լինիցի տան նորա։ Այս էր բարին՝ զոր խոստովանի արարեալ նմա ի տէնէ. որ և ձշդրիտ կինէք ազգահ կրօնասիրաց, որք ցանկանան զճշմարտութիւնն ընդ զօշաքաղութիւնէ լծակցել։ Այլ զի չարաչար ստացեալն չարաչար կորնչի, ոչ երկարեաց այս կարճեցեալ բարեբախտութիւնն միքայի։

Վանգի որդիք դանայ, թէպէտ ի բաժանել յետուայ զերկիրն՝ ընկալան զբաժին ժառանգութիւնէ իւրեանց, այլ զի ամուլհայիք՝ զորս ի սկզբան անդ անփոյթ արարին ջնջել ի միջոյ, նեղչին զնոսա յոյժ, յանձուկս լերանց փակելով՝ ոչ թողուին ինչ ելանել և սփռիլ ի հովիտսն։ Վասին իրի կամեցեալ նոցա ընդարձակել զսահմանն իւրեանց՝ առաքեցին յաւուրսն յայնոսիկ ի սարսայ և յեսթաւէոլայ արս հինգ որպէս զօրութիւնէ լրտեսել զշրջա-

կայ սահմանս երկրին. և եթէ դատաւիցեն ուրեք տեղի յարմարաւոր և անպատասպար, բերել ինքեանց զրոյց հաւաստի։ Արդ՝ ելեալ նոցա ի ձանապարհ և եկեալ ի լեառն եփրեմի, հասին ի տունն Միքայ. և մնեալ նստան ի գաւթի առնուլ հանգիստ։ Ուան զձայն պատանեկին զևտացւոյ, և յեղանակէ հնչման խօսից նորա ծանեան՝ եթէ օտարական ոք է նա, և ոչ բնիկ յորդւոց եփրեմայ. որք ի խօսս իւրեանց ունէին առանձին ինն եղանակ արտասանութիւն օտար յայլոց. ուստի և առ ի տեղեկանալ զնմանէ՝ մնին ի սենեակ նորա. և նա ուրախութիւն ընկալաւ զնոսա, և առ ժամայն յարեցաւ ի նոսա. քանզի թափառականք արագ սողոսկին ի բարեկամութիւն։ Այս ի հարցանել նոցա վասն նորա, նա յայտնեաց նոցա մանրաբանաբար ոչ միայն վասն իւր՝ թէ ո՛վ է, և զինչ գործ նորա անդ, այլև վասն ամենայն իրաց տանն միքայ. զոր ախորժակ ունկնդրութիւն լուան նոքա. և խնդրեցին ի նմանէ հարցանել զնոճ յաղագս այնր ձանապարհորդութեանն իւրեանց. իսկ նա կամեցեալ ըստ սրտի նոցա տալ պատասխանի, որպէս սովորութիւն է այնպիսի դատաւրկասուն մարդահաճոյից, ասաց ի քմաց իւրոց երթալ խաղաղութիւն, որպէս թէ յաջողեալ իցէ ձանապարհն առաջի նոցա. քանզի թոյլ տայ նոճ երբեմն և դիւաց զձնիւ բիտն գուշակել։

Վասնային հնդեքին արքն, բայց եդին ի մտի, թէ ի գալ անդր բազմութիւն՝ ունիմ գտանել անդ հարուստ մի կողոպուտ։ Այլ վճարեալ զգործ լրտեսութեան, դարձան անդրէն և պատմեցին եղբարց իւրեանց, եթէ տեսին զերկիրն լայնատարած, զի բարի է յոյժ, արգաւանդահող՝ բազմաբերդուն և առատացեալ ամենայն բարեօք. այլ սակայն անզօր և անպատսպար. և ժողովուրդն բնակեալ ի նմա կայ ի խորին խաղաղութեան անհոգ ամենևին և անկասկած, չունելով ուստեք կարծիս երկիւղի. ապաւինեալ ի պաշտպանութեն սիդոնացւոց, այլ նոքա հեռի են. ուստի և դժուարին է օգնութիւն ինչ հա-

ասացանել նոցա. իսկ ընդ ասորիս, կամ ընդ այլ մարդիկ (զի հումանայն է ընթերցուածն եբրայական, ատամ, կամ արամ,) որ առաւել մծատ էին, չունին ինչ հաղորդութիւն: Այս տեղեկութիւն հաձոյ Թուեցաւ որդւոց դանայ. և վաղվաղակի որոշեցան ի սարսայ և յեսթաւուլայ արք վեցհարիւր վառեալք զինու պատերազմի, և եկին ի կարիաթարիմ յուդայ, և բանակեցան արտաքոյ քաղաքին. յորմէ տեղին այն կոչեցաւ բանակեղ դանայ: Նոքա եկին մինչև ցլեառնն եփրեմայ. և իբրև մերձեցան ի տունն միքայ, ասեն լրտեսքն ցընկերս իւրեանց. * Գիտէք գիտիցէք, զի ի տունս յայսոսիկ են եփուտ, և թերափ, և դրօշեալ, և ձուլածոյ. արդ գիտասջիք զինչ առնիցէք: Յորմէ երևի՝ թէ յառաջագոյն պատմեալ էին նոցա յաղագս այնոցիկ, հաստատեալ ի մէջ իւրեանց բառնալ զնոսա:

Ապա որոյ իբրև հասին անդր, արքն հնգեքին իբր նախածանօթք և բարեկամք զևտացւոյն՝ մտին ուղիղ ի սենեակ նորա. իսկ վեցհարիւրքն կացին արտաքոյ առ մուտս դրանն. և որք մտինն, ողջոյն տուեալ նմա՝ ոմանք ի նոցանէ ածին զնա ի դուռն, ուր վեցհարիւրքն կային արձանացեալ. իսկ այլք յարձակեալ ի մատուռն կողոպտեցին զնա. և դարձան վաղվաղակի առ ընկերսն իւրեանց. ընդ որս կայր և զևտացին. որոյ տեսեալ զդրօշեալսն ի ձեռս նոցա՝ հիացաւ, և ասէ ցնոսա. զի՞նչ գործեցիք դուք. իսկ նոքա սաստեալով նմա ասեն, լուռ լեր և ել ընդ մեզ, և լիր մեզ ի հայր և ի քահանայ. միթէ լաւ իցէ լինել քեզ քահանայ տան միոյ առն, քան զի զի միոյ՝ և ազգի իսրայէլի: Ոչ այն իբրև լուաւ զևտացին, ուրախ եղև, և նոյն ժամայն յարեցաւ ի նոսա. և մինչ այլք կողոպտէին զտունն՝ բառնալով զամենայն որ ինչ մեծագին և պատուական էր, նա առեալ զդրօշեալսն և զքահանայական զգեստս և զայլ ամենայն սպասս մատուռանն, եմուտ խառնեցաւ ի զօրսն, և գնաց ընդ նոսա: Այս մինչդեռ էին կարի ինչ հեռացեալ, եկին միքա ի տուն. և տեսեալ զկուռս իւր բարձեալ, և զտունն համօրէն

՚ի լաւագոյն ստացուածոց իւրոց մերկացեալ, լցաւ դառնութեամբ. և վաղվաղակի առեալ զարմն՝ որ ՚ի տան նորա էին, սկսեցաւ զՀետ նոցա՝ բողոք բարձեալ մեծաձայն աղաղակաւ։

Իսկ որդիք դանայ նայեցեալ յետս կոյս՝ ասեն ցմիքա. զի՞նչ է քեզ, ընդէ՞ր աղաղակես. և նա հասեալ նոցա, ասէ ցաւագին ոգւով, զաստուածն իմ զոր արարի ինձ՝ առիք, և զքահանայն և զամենայն ստացուածս իմ յափշտակեցիք և գնացիք. և դուք իբրև ՚ի չքմեղս ինն հարցանէք ցիս, թէ զի՞ աղաղակես. զիարդ ոչ աղաղակեցից, զի կորուսի զստացուածս իմ, և որ դառնագոյն է ինձ՝ նաև զաստուածս իմ. զի՞նչ կայ այսուհետեւ ինձ յերկրի։ Ասեն որդիք դանայ, լռեա, մի՛ եւս լուիցի ձայն քո զկնի մեր. գուցէ ընդ ընչիցդ կորուսանիցես և զկեանս և զտուն քո։ Իբրև ետես միքա՝ եթէ բռնագոյն քան զնա էն, դարձաւ ՚ի տուն իւր լի տրտմութեամբ. իսկ նոքա գնացին զՃանապարհ իւրեանց ՚ի լայիսա. ուր գտեալ զժողովուրդն յանհոգս հանդարտացեալ և վստահացեալ յուսով, հարին զնոսա առ հասարակ ՚ի սայր սուսերի, և զքաղաք նոցա այրեցին հրով. և շինեցին նոր քաղաք, զոր կոչեցին դան՝ ըստ անուան հօրն իւրեանց, և բնակեցան ՚ի նմա։ Եւ անդ կանգնեցին իւրեանց որդիքն դանայ զդրօշեալն միքայ ՚ի պաշտօն. և զղեւտացին քուրմ նմին հանդերձ որդովք իւրովք, զորս անդ ՚ի յերկրին դանայ ծնաւ, մինչև ցգերութիւն տապանակին ՚ի փղշտացւոց յաւուրս Հեղեայ՝ ընդամն իբր 340. որպէս ակնարկեն սբ. գիրք յասել անդ, դպ. ԺԸ. 30. 31. * Եւ յոնաթան որդի գեթսոնի (կամ գերսոնի) որդւոյ մանասէի՝ ինքն և որդիք իւր էին քուրմք ցեղին դանայ մինչև ցօր գերութեանն երկրին. և կարգեցին իւրեանց զդրօշեալն միքայ՝ զամենայն աւուրս զորս էր տունն ՚ի սեղով։

Ասան առնս այսորիկ զևտացւոց, որ ՚ի մէջ իսրայէլի եղև առաջին քուրմ յայտնի պաշտօնատար հռոց, խնդիր է, թէ որո՞ր որդի էցէ. և այն ՚ի պատ-

Ձառս լատին Թարգմանուածէ, որ դնէ զնա լինել որդի գերսոնի որդւոյ Մովսիսի, ուստի՝ և Թոռն Ծորա։ Իսկ բնագիրը եբրայեցւոց, և քաղդէացւոց, և Հօթանասունք, յորմէ և մերքն՝ դնեն որդի գերսոնի կամ գեթսոնի որդւոյ Մանասէի։ Հաղուագիւտ՝ ի յետին խուզարկուաց՝ եթէ գրոց զառաջինն հաստատեն. և՝ ի հաստատուածիւն կարծեաց իւրեանց՝ ցուցանեն զբնագիրը եբրայեցւոց այլայլեալ յաւելմամբ միոյ գրոյ յանուանն Մովսիսի, ոչ միայնոյ՝ ի կարգի տողին, այլ՝ ի վերայ բառին առկախեալ. որով փոխանակ Մովսիսի՝ ընթեռնուին Մանասէի։ Ցայս միտս են և եբրայեցւոց Թալմուտեանք, և քիմխի երևելի ռաբբի նոցա. որք ասեն վասն առնս այսմիկ լինել Թոռն Մովսիսի. այլ զի մի՛ նսեմանայցէ և արատեսցի անուն մեծի օրէնսդրին՝ ի սակս այսպիսի խորթ և անհարազատ Թոռին, ոմն՝ ի նախնի գրչաց յաւել ասեն զնուն գիր՝ ի վերայ անուան Մովսիսի, առ՝ ի ցուցանել՝ Թէ զայրս զայս ըստ վարուց և ըստ ամպարշտութեան մարթ է ասել արժանապէս որդի Մանասէի կռապարիշտ Թագաւորին յուդայ։ Ցոր քիմխի յաւելուս ասել, Թէ գուցէ նաև վասն այսր պատճառի, որպէս զի չընթեռնուլ պարզամտաց զայս տեղի գրոց՝ մի՛ անարժան ինչ խորհիցին զՄովսիսէ, առկախեալ Թողին զգիրն, զի իմաստունք ծանիցեն Թէ այն գիր ոչ պատկանի առ այն անուն, ուստի և ուղիղ ընթեռնուցուն. բայց եղաւ լոկ՝ զի մի՛ տկարամիտք գայթակղեսցին։

Այս եբրայական ինքնաստեղծ մտածուիք Թէպետև ցուրտ են և անյարմարք, սակայն հնութեանն ոչ սակաւ նպաստեն առաջնոց կարծեաց. նա զի և ժամանակ առնս՝ ի դէպ գայ ժամանակին փենհէսի Թոռին Ահարոնի. նմին իրի մեկնիչք գրեթէ առ հասարակ յայս կարծիս են. և առ՝ ի միաբանել զԹարգմանուածին ընդ բնագրին եբրայեցւոց՝ դնեն զնա ոչ անմիջական Թոռն Մովսիսի, այլ որդի Թոռին նորա. յաւելեալ յորդւոյն գերսամայ և զոմն մանասէ, զայս օրինակ. Մովսէս ծնաւ զգերսամ,

գերսամ զմանասէ . և նա զայրս զայս . բայց տակաւ
ւին ՚ի նոյ քանն յերեսի : Ա՛յսչափ ինչ վասն այսր
շատ լիցի :

ԳԼՈՒԽ Գ.

Գ՚Խոստացեալ ՚ի լեռնէն Եփրեմայ : Բառնաբասուրեալ կնոջ
նորա յեղեռնագործ գաբաաթացւոց :

Ա՚Ի նոյն աւուրս անիշխանութեանէ այր մի գևտա
ցի բնակեալ ՚ի կողմանս լերինն Եփրեմի , ա՛ռ իւր
կին ՚ի բեթղահեմէ յուդայ : Ո՚կնի սակաւուց քան
զի անկաւ դժկամակութեի ինն կամ գժտութեի ՚ի
մէջ նոցա , որ չէ ինչ անսովոր ՚ի մէջ առն և կնոջ ,
եթող կինն զայր իւր , և փախուցեալ ՚ի նմանէ՝
գնաց ՚ի տուն հօր իւրոյ ՚ի բեթղահեմ յուդայ :
Լ՚ռեաց այրն առ ժամանակ մի , մինչև մոռանայցէ
կինն զանցս՝ որք անցին ՚ի մէջ նոցա , և զովասցի
սիրտ նորա . ապա յետ երից ամսոց յարուցեալ էր-
գաւ անձամբ զՀետ նորա՝ առ ՚ի ամոքել զնա ՚ի
հաշտութեի , և ածել միւսանգամ առ ինքն : Լ՚ըրև
եհաս անդր , եւ ընդ առաջ նորա անէր իւր՝ հայր
աղջկանն , և խնդութեբ ողջագուրեալ՝ տարաւ ՚ի
տնեբքս , ոչինչ բնաւ յիշելով զանցեալոց իրաց ո՛չ ՚ի
միոյ և ո՛չ ՚ի միւս կողմանէ : Ո՚ր չէք ազգողագոյն
սպեղանի ՚ի բժշկութեի վիրաւորեալ սրտից՝ քան
զլռել զանցելոց դիպուածոց , և անուշակ կենակ-
ցութեբ վարիլ , որպէս թէ չէր ինչ գժկամակութեի
անկեալ երբեք ՚ի միջի :

Ա՚կաց այրն զևտացի ՚ի տան աներոյն աւուրս
երիս , զոր ՚ի խնջոյս և ՚ի խրախութեիս անցուցին .
իսկ չաւուրն չորրորդի յարուցեալ այրն գիշերային՝
կամէր չառաջ քան զծագել արշալուսոյն յուղղ ան-
կանիլ ընդ կնոջ իւրոյ և ընդ ծառային , զի մի ՚ի

9127-53050 .16

տօթաժամու մնասցեն. այլ հայր աղջկանն որպէս թէ տմարդութիւն համարելով անսուաղ արձակել զնոսա, բռնադատեաց նախ ձաշակել ինչ և հաստատել զսիրտս իւրեանց, և ապա ելանել ի ճանապարհ. և մինչև պատրաստեցաւ կերակուրն, և մինչև կերան և արբին, էանց ժամն, և ծագեաց արևն. ուստի և հայր աղջկանն բռնադատեաց զփեսայն և զայն օր անդ առնմա անցուցանել: Օ՝նոյն բռնադատուի արար և յաւուրն հինգերորդի պատճառելով զտարաժամել աւուրն. բայց նա ոչ ևս զլռեաւ, այլ զկնի ճաշուն ի խոնարհիլ արեգական՝ եւ ընդ կնոջ իւրում և ընդ ծառային ի ճանապարհ: Այլ ճանապարհորդ որ կորուսանէ զժամանակ, կորուսանէ և զպատեհութիւն պատշաճաւոր օթևանի: Ընդ երեկս հասին հանդէպ յերուսաղէմ. այն է երուսաղէմ. յայնժամ ասաց ծառայն՝ մնանել և ազանել անդ. բայց ՚ի՛ր նորա ոչ կամեցաւ. այլ խոստովեցուք ասէ ի քաղաքս օտարոտւոցս, ուր ոչ գուցէ յորդւոց իսրայէլի. յորմէ յայտնի երևի, թէ անդրէն եկեալ կալեալ ունէին յերուսաղէմ. (որպէս յառաջագոյն ասացաք.) այլ գնացին յառաջ ի գաբաա, որ էր ի հիւսիսակողմն երուսաղէմի, իբր հինգ մղոնաւ հեռի ի նմանէ. և ի մուտս արեգական գտան մերձ ի դուռն քաղաքին. որոյ բնակիչք որդիք բենիամինի ի ժամանակին յայնմիկ էին դիրտ համօրէն ժողովրդեան որդւոց իսրայէլի, տմարդիք՝ ժանտագործք՝ անառակք, և միանգամայն ասել՝ լցեալ ամենայն չարութեամբ:

Յայն եղեռնաւոր վատանուն քաղաք մտին ագահնել զայն գիշեր, ակնունելով լաւագոյն ասպնջականութիւնէ հանդիպիլ առ եղբարս իւրեանց՝ քան առ այլազգի յերուսացիս: Այլ վաղվաղակի ծանեան, զի վրէպ գտան ի յուսոյ իւրեանց. քանզի յայնչափ բազմութիւնէ բնակչաց ոչ գտաւ ոք՝ որ ժողովէր զնոսա ընդ յարկաւ. թէպետ և ունելով ընդ ինքեանս զամենայն կարևոր պէտս վասն անձանց և վասն պրաստուց, ոչինչ ծանրանային հիւրընկա-

լուի իւրեանց. ուստի և առ ՚ի չգոյէ հասարակաց պանդոկի՝ ստիպեցան նստիլ բացօթեայ ՚ի հրապարակի անդ քաղաքին: Այլ ահա ՚ի նմին պահու այր մի ծեր, որ և ինքն էր ՚ի լեռնէն եփրեմայ, այլ յայնժամ բնակէր անդ ՚ի գաբաա, եկեալ յագարակէ իւրմէ անագանի մտանէր ՚ի քաղաքն. և տեսեալ զղևտացին զայրն ուղևոր՝ եհարց, Թէ ուստի՞ էցէ, և յո՞ դիմեալ երթայ. իբրև գիտաց եթէ գաւառակից իւր է, առ տարաւ զնոսա ՚ի տուն իւր. ոչ եթող ՚ի կիր արկանել զպաշար իւրեանց՝ զոր ընդ ինքեանս ունէին, այլ ինքն արկ խոտ իշոյն. եւ լուանալ զոտս նոցա, և եդ սեղան առատ առաջի նոցա: Իբրև կերին և արբին և զուարթացան, մինչդեռ էին յարուցեալ ՚ի սեղանոյն, ահա խումբ մի յորդւոց անօրինաց պատեցին զտունն, և պահանջէին ՚ի ծերոյն զայրն մտեալ ՚ի տուն նորա՝ ՚ի գործ պղծութեան:

Այլ այն ինչ մերձ էին խորտակել զդուռն, եւ առ նոսա ծերն, խօսեցաւ քաղցրութիւբ, յորդորէր խրատէր ՚ի բաց կալ ՚ի մեծեղեռն անօրէնութենէ անտի. առաջի դնէր նոցա զսրբազան օրէնս հիւրընկալութեան, և զսրբազնագոյնն ևս զօրէնս բնութեան. այլ ոչ կարելով ամոքել զնոսա ՚ի քաղցրութեան, և ոչ իսկ դիմագրաւ լինել նոցա, զի բազումք էին և կատաղիք քան զշունս, առ զերծուցանել զղևտացին՝ խոստանայր հանել առ նոսա զդուստր իւր և զկին ղևտացւոյն: Ո՛րինչ նոքա յայնմ վիճակի էին ընդ ծերոյն, առ ղևտացին զկին իւր, և ետ զնա ՚ի ձեռս նոցա. և ո՛չ փոքր ինչ թուեցաւ նմա, զի կատաղիքն այնոքիկ շատացան նուաւս. զոր զգիւշերն ողջոյն լկեցին. և ընդ առաւօտն թէպէտ և արձակեցին, այլ կիսամեռ. զի հազիւ հասեալ եղկելի կնոջն ՚ի դուռն տան ծերոյն հիւրընկալուի իւրեանց, մինչև բաղխել անդամ չպօրել զդուռն, անկաւ անդ առ դրան և մեռաւ: Իսկ այր նորա ընդ այգանալ առաւօտուն յարուցեալ, իբրև ետես զի յամեաց կինն, այնուհետև ոչ ևս յուսալով առնել զնա՝ այն ինչ եբաց զդուռն երթալ զճանապարհ

իւր առանց կնոջ, եւ ես և ահա կինն անկեալ կայր առ դրանն, և ձեռն նորա ձգեալ ի վերայ դրանդւոյն. զոր ի քուն կարծելով՝ ձայնեաց զնա յառնել, զի երթիցեն. իբրև ոչ ընկալաւ պատասխանի, գիտաց՝ եթէ մեռեալ է։

Ապա ի մեկնչաց գուն գործեն զերկոսին զոսկա զծերն և զղեւտացին անբասիր առնել ի մեղաց։ Ներոյն թերևս մարթ իցէ արդարանալ ի ձեռն անյաղթելի տգիտութեան. որ գուցէ լուեալ զհամանման առաջարկութեն ղովտայ, իրաւունս համարեցաւ և ինքեան առնել զայն, առ ի պահել ըզհիւրն յանօրէնն գործոյ անտի։ Այլ ղեւտացւոյն դժուարին է արդարանալ. մի՝ զի մեծապէս անիրաւեցաւ ի կինն, ընդդէմ կամաց նորա մատնելով զպարկեշտութիւն նորա. զի որպէս երևի ի գրոյն, քանի եհան զնա առ գաբաաացիս. * առ (ասէ) այրն զհարճ իւր ‖. ուր քննագիր եբրայեցւոց ունի * բուռն եհար այրն զհարճին իւրմէ, և եհան առ տաքս ‖։ Այրկրորդ՝ զի ըստ իմիք գործակից եղև մեղաց նոցա, ինքնին տալով զկինն ի ձեռս նոցա, թէպէտ և առ ի խաւսանել զմեծագոյն չարն. քանզի չէ օրէն երբէք յորդորել զոք ի փոքրագոյն մեղս, առ ի արգելուլ ի մեծագունէն. մանաւանդ յորժամ երկուստեք են մեղք մնհուչափք։ Այլ զի նոքա ոչ խնդրեցին զկինն, այլ զնա ինքն, ապա նմա պարտ էր դիմադրաւ լինել նոցա, և մահու չափ մարտնչել. և եթէ յաղթահարեաւ ի նոցանէ՝ ակամայ բռնաբարութեն կրեր, ոչինչ մեղք գոյր նորա. զի ուր չկամք, անդ ոչ մեղք։ Այլ այսպիսի արիութեն պէտս ունի հաստատուն առաքինութեան։

Այլ զհարդ և իցէ, իբրև եհաս զկինն մեռեալ, լցաւ դառնութեբ. բայց լռեաց ի ժամուն. զի ծանեաւ՝ եթէ չիք ի քաղաքի անդ ոչ իրաւունք, և ոչ դատաստան արդար. ապա թէ ոչ՝ անհնարին էր քաղաքացւոց զայնպիսի եղերականաւ ոճիրս գործել հրապարակաւ և անպատիժ. այն զի՝ գուցէ և իշխանքն իսկ չէին անմասն յանօրէնութէ անտի։

Եւ զի ուր չէ մարթ խօսել և իրաւաբանել վստահութիւնք, խոհեմութիւն է լռել, և սպասել անդ բարձրացուցանել զձայն՝ ուր անվտանգ կարելի է խօսել. նմին իրի և ղեւտացին առեալ լռութիւնք զդի կնոջն՝ կապեաց ի վերայ գրաստու. և նովաւ չորս աւ ի տուն իւր ի լեառն եփրեմի: Նդ ապա բարձրացոյց զձայն իւր՝ խնդրելով զվրէժ կնոջն. մանաւանդ թէ արար՝ զի մեռեալ մարմին կնոջն խընդրեսցէ զվրէժ անձին. զի յօշեաց զնա յերկոտասան մասն, և տուեալ երկոտասան սուրհանդակաց մի մի մասն իւր փողս զարթուցիչս ի ձէն, արձակեաց զնոսա ընդ ամենայն մայրաքաղաքս երկոտասան ցեղից որդւոց իսրայէլի. պատուիրելով զի զկնի ցուցանելոյ զյօշուածս անդամոց, պատմեսցեն և բերանով զանօրինութիւնն գաբաաց: Այս արարք ղեւտացւոյն բաւական եղև զամենայն որդիս իսրայէլի վառել ի ձէն. զի վաղվաղակի իշխանք և ցեղապետք նոցա ժողովեցան ի մասեփա, որ էր ի մէջ սահմանաց յուդայ և բենիամինի, և սովորական առեղի ժողովոյ նոցա, հարցանել զնոր վասն այնր դիպուածոյ, ուր ի սուղ ժամանակի գտան հանախմբեալ չորեքհարիւր հազար արանց սուսերամերկաց ի հիւսիսային ծագացն դանայ՝ մինչև ցծագ հարաւային բերսաբեայ. ամենեքեան զարհուրեալ և նողկացեալ ընդ անլուր եղեռնական անառակութիւն որդւոյ բենիամինի. որոյ նման ոչ երբէք տեսաւ ի ժողովրդեան իւրեանց. նմին իրի ամենեքեան միաբարբառ աղաղակեին վրէժխնդրութիւն:

Այլ կամեցեալ իշխանացն ըստ կարգի իրաւանց պործել, նախ կոչեցին յատեան ղեւտացին. և եհարց նմա պատմել զամենայն անցս ստուգութիւն: Նպա առաքեցին պատգամաւորս յամենայն ցեղն բենիամինի, (յորմէ յայտնի երևի թէ իշխանք ցեղին բենիամինի ոչ գտան ի ժողովն անդ ի մասեփա,) և խնդրեցին տալ ի ձեռս գլխատպործան: Ոչ նոքա ոչ միայն չկամեցան տալ, թէպէտև յանցանքն յայտնի էին և անժխտելի, այլև պատրաստեցան ամենայն զօրութիւք իւրեանց պաշտպանել

նոցա ։ Այսոր որոյ միւնչդեռ մեռանիս ցեղքն խորհուրդ ի մէջ առնուին, որդիք բենիամինի տեսեալ զի իրքն պատերազմաւ ունէին վճարիլ, գումարեցան յամենայն սահմանաց իւրեանց ի գաբաա, գունդ կազմեցին քսան և հինգ հազար արանց սուսերամերկաց. Թո՛ղ զեօթն հարիւր երիտասարդս ընտիրս յամենայն ժողովրդենէ կորովաձիգ պարսաւորս յերկոցունց ձեռանց յաջողակս, որ ձգէին քարինս շէշտակի ի նպատակ անդր, զոր դիտէին, և ի մազէ ոչ վրիպէին ։ Այս թէպէտ այս թիւ նոցա առ համեմատուբ բազմութե՛ որդւոց իսրայէլի նուազ էր, այլ զպակասուէին զայն համարեցան քաջութե՛ բազկի իւրեանց լցուցանել. նմին իրի համարձակ մերժեցին զխնդիր նոցա ։

Ընդ՝ առեալ որդւոց իսրայէլի ի պատգամաւորաց գյանդուզն պատասխանի նոցա, հաստատեցին մնրտիւ պատերազմի հանել զվրէժ մեծի անօրէնութե՛ ի բենիամինեանց. երդուան ամենեքին ոչ դառնալ ի տուն, և ոչ իսկ ընդ յարկաւ ուրեք մտանել ի հանգչիլ, մինչև ոչ վճարեսցի պատերազմին ։ Այսոր օրինակ երդմամբ պարտաւորեցին զանձինս չտալ զդուստր իւրեանց ի կնութե՛ որդւոց բենիամինի. և առ վստաղդիս ունելով զնոսա՝ չառնել բնաւ խնամութե՛ ընդ նոսա ։ Այս ևս հաստատեցին, զի ամենայն այր իսրայէլացի, որ կաթողիր զկն առնուլ, անդիմադարձ մտցէ ի մարտ ։ Ո՜ այսոսիկ այսպէս հաստատեալ, միայր նոցա հոգալ և զայլ երկու ինչ. մի՝ պաշար վասն պատերազմողաց. որ դժուարին էր. վասն զի երկիրն ուր հանդերձեալ էին զմարտն մղել, ոչ կարէր այնչափ բազմութե՛ բաւական պարէն մատակարարել. և զաբաա քաղաք գոլով ի վերջին ծագ հիւսիսային սահմանաց ցեղին բենիամինի, անկանէր ընդ մէջ ձանապարհին, ընդ որ հարկ էր անցուցանել զամենայն պաշար եկեալ ի հարաւային կողմանց. զոր որդիք բենիամինի կարօղ էին խափանել ։ Ի դառնալ մանն այսմ դժուարութե՛, առին այր մի ի տասանց յամենայն ցեղից իսրայէլի, և տասն ի հարիւրոց ։

և հարիւր ՚ի հազարաց. և այսպէս ՚ի չորեք հարիւր հազարաց անտի առին քառասուն հազար. զորս ՚ի գունդս գունդս բաժանեալ, կացուցին լինել յառաջապահ զօրուն, բանալ առաջի նոցա ձանապարհ, և պատրաստել պաշար, և շուրջ պահ ունել համօրէն բանակին: Երկրորդ հոպալին էր կացուցանել գլուխ և առաջնորդ պատերազմին. վասն զի չունէին յայնժամ իշխան ընդհանուր հրամանատար ՚ի վերայ ամենեցուն, այլ իւրաքանչիւր ցեղ ձանաչէր զիւր սեպհական իշխան:

Եւ զի այս գործ ծանր էր և դժուարին, նմին իրի առ վաղագոյն և առանց հակառակութեան՝ (որ սովորական է յայսպիսի ընտրութիւն) ՚ի գլուխ ելանելոյ իրացն, դիմեցին ՚ի խորանն, և հարցին ՚ի ձեռն քահանայապետին զնոր, թէ ո՞վ լիցի ինքեանց առաջնորդ պատերազմի: Նա պատասխանի ետ, ցեղն յուդայ ելանել յառաջընթաց. վասն որոյ իշխան այնր ցեղի կալաւ զհրամանատարութիւն համօրէն բանակին իբր գերագոյն սպարապետ: Այլ թէ ո՛վ էր իշխանն այն, չէ յայտ. քանզի՝ ոչ գիրք ոչ նշանակեն զնա յանուանէ. չէ՛ հաւանելի թէ քաղէբ իցէ, քանզի նա մի էր ՚ի նախապատիւ ծերոց, առ որոց առաջնորդութիւնք խորհել սպասեաց զնոր. վասն որոյ հարկ է ասել թէ մեռեալ էր նա յառաջ քան զայն ժամանակ, յորում երկու ցեղք դանայ և բենիամինի արդէն յայնպիսի եղեռնական ամպարշտութիւնս էին պարանոցաթաղ ընկղմեալ: Զմանք համարին զգոդոնիէլ. զոր փոքր ի զկնի տեսցուք սուր ՚ի ձեռին փրկել զժողովուրդ իսրայէլի ՚ի ձեռաց Թշնամեացն նոյ: Այլ զի՝ ոչ գիրք ոչ ասեն, և ոչ մեք իշխեմք հաստատել. սակայն ո՛ոք և էր, այս յայտնի է, զի խուճապական առաջնորդութեամբ ոչ սակաւ նսեմացոյց զփառս անուան իւրոյ, մինչ փոքր միւս ևս բովանդակ բառնակին իսրայէլի աւերիլ:

Վաղահաս պատերազմ ի Հէ որդւոցն Իսրայէլի, և հրաժանաւն ցեղին Բենիամինի։

Որդիքն Իսրայէլի ելին վաստահութեամբ և բանակեցան առ գաբաաւ. այլ՝ ոչ պատնէշ կանգնեցին, ոչ ընտրութեամբ յարմարաւորը դրիւց տեղեաց արարին, և ոչ զձակատ ըստ կարգի զինուորական օրինաց կարգեցին։ Ա՛ան այնորիկ որդիքն բենիամինի յարձակեալ ի դուրս ի քաղաքէն, կոտորեցին յաւուր յայնմիկ ի նոցանէ քսան և երկու հազար արանց պատերազմողաց։ Ա՛յս հարուած զգաստացոյց զնոսա, և ետ ի միտ առնուլ նոցա զվրիպակն զոր վրիպեցան՝ յորժամ ո՛չ չոգան օրինաւք հարցանել զՅԱ։ Վանզի պարտ էր նոցա նախ հարցանել, Թէ կամիցի՞ Տէր առնուլ պատերազմաւ զվրէժ անօրէնութեց ի մեղապարտ ցեղէն բենիամինի. և ՅԱ պատասխանուլոյ. մանաւանդ Թէ պարտ էր նոցա նախ քաւել զբազմապատիկ մեղս իւրեանց, և ապա լինել վրէժխնդիր մեղաց այլոց։ Նոքա առանց ընդ միտ ածելոյ զայսոսիկ՝ խորհուրդ ի մէջ առին, պատգամաւորս առաքեցին յամենայն ցեղն բենիամինի, և հաստատեցին պատերազմիլ. միայն վասն առաջնորդի պատերազմին հարցանեն։ Ստացան զառաջնորդ, բայց կորուսին քսան և երկու հազարս։ Ո՛յս վրիպակ՝ զկնի պարտութեանն իւրեանց ուղղեցին. զի օր մի ողջոյն լացին առաջի Տեառն, և ապա հարցին և ասեն, Եթէ յաւելցո՞ւք ելանել ի պատերազմ ընդ բենիամինի եղբօր մերում. ետ պատասխանի Տէր, և ասէ. ելէ՛ք ի վերայ նոցա։ Նոքին և պատերազմեցան, այլ վերստին ի պարտութեի մատնեցան. քանզի գաբաացիք ընդ զանազան դրունս քաղաքին ելեալք՝ աստի և անտի հարին զնոսա. և միւսանգամ տապաստ արկին

՚ի նոցանէ ուԹ հազար, (ըստ այլ Թարգմանու-
ԹԵ ուԹուտան հազար արանց.) ամենեքեան նոքա
ընտիր սուսերաձիգք։

Ա.յս հարուած եղև նոցա երկրորդ ուսումն, որ
եբաց զաչս մտաց նոցա ձանաչել զվրիպմունս, յո-
րոց սակս այն անցք անցին ընդ նոսա։ Օ՛ի հար-
ցին զնո՛ր, եԹէ ելանիցե՞ն միւսանգամ ՚ի մարտ.
քայց ո՛չ հարցին, եԹէ հա՛շտ իցէ արդեօք ած ընդ
նոսա և յաղԹիցե՞ն. որպէս և ոչ մատուցին ողջա-
կիզս փրկուԹե՛ն, այլ վստահացեալ ՚ի բազմուԹիւն
և ՚ի զօրուԹի իւրեանց, իբրև առին հրաման
պատերազմի՝ եդին ՚ի մտի զյաղԹուԹիւնն ՚ի ձեռին
ունել. որպէս այն ԹԷ առանց կարօտելոյ առան-
ձին օգնականուԹե՛ն նո՛ց, զոր ոչ խնդրեցին, և ո՛չ
խակ ած խոստացաւ նոցա, աներկբայ ունելոյին զեր
՚ի վերոյ հանդիսանալ՝ առաւելուԹի՛ զօրուԹեան
իւրեանց քան զզօրուԹի՛ Թշնամեաց։ Վասն այնո-
րիկ կամեցաւ ած ցուցանել, ԹԷ ինքն՝ է ո՛ր զօ-
րուԹի՛ց, և ՚ի նմանէ ուղղին պատերազմունք,
և ԹԷ՝ ո՛չ ՚ի բազմուԹի՛ և յուժոյ մարդկան, այլ
յիւրոց ձեռաց յաջողին յաղԹուԹի՛ք։ Կամեցաւ՝
զի ծանիցեն, ԹԷ յորժամ ինքն իսկ հրամայէ
զպատերազմ, ընդ նմին կամի՝ զի զամենայն մարդ-
կային խոհեմուԹի՛ և աչալրջուԹի՛ ՚ի վար արկա-
նիցեն ըստ զինուորական օրինաց. և ոչ կոյր զկու-
րայն գահավիժ յարձակիլ։ ՎԹէ նոքա յառաջ քան
զմերձենալ ՚ի պարիսպս գաբաոն զրաւեալ էին ըստ
պատերազմականացն օրինի զդէրս տեղեաց պատե-
հագոյնս առ անձկագոյն պաշարումն քաղաքին.
եԹէ առ սակաւ սակաւ յառաջ խաղացեալ՝ կանգ-
նեալ էին պատնէշս հողոյ, եԹէ չէին յարձակեալ
անխորհուրդ յանդգնուԹի՛ ՚ի միում աւուր առ-
նուլ զքաղաքն, և զյաղԹուԹիւնն վՀարել, որ ա-
ւուրց կարօտէր, ոչ արդեօք զայնչափ կատորած
կրէին։

Կամեցաւ ած զի պատերազմեսցին, այլ ոչ այն-
պէս անընտրողաբար. սակայն Թոյլ ետ այսմ այս-
պէս լինել ՚ի պատիժ մեղաց նոցա։ Օ՛ի Թէպ

զայլ մեղս աղգին, մեղան և հպարտութիւք, ապա-
ւինեալ յանձինս, և ոչ յաւծ. մեղան և երդմամբ
պարտաւորեալով զանձինս սպառնպուռ ջնջել զե-
բարս իւրեանց՝ ձգելով զպրտմտութիւն նախանձու և
ի կանայս և ի մանկունս անմեղս. զոր չէր հրա-
մայեալ Աւծ: Եւ այն բոլոքոքեալ նախանձ նոցա
ոչ էր անկեղծ լոկ վասն փառացն Այ. որ յայտ ան-
տի է, զի ցեղն դանայ, որպէս տեսաք ի վեր
անդր, յայտնի պաշտեր կուռս, որ էր մեղք մեծա-
գոյն քան զանառակութիւն բենիամինի. և սակայն
տանելին այնմ լռութիւք, ոչ ինչ վրէժխնդրութիւն
ցուցեալ ընդդէմ այնպիսի ահարկու անօրէնութիւն,
որ դէմընդդէմ հակառակ էր Աւծպետական մեծ-
վայելչութիւն. նա զի՝ և նոքին իսկ որդիք դանայ
որք չէին ինչ լաւագոյն քան զբենիամինեանս, խառն
ընդ այլոց մարտնչէին ի վրէժխնդրութիւն չարա-
գործութեանն նոցա: Այսն այսր ամենայնի նախ
զսոսա պատժեալ Աւծ. զի կայրն և ի նոսա պատ-
ժոյ արժանիք. և ապա դարձոյց զձեռն ի մե-
պարտ ցեղն բենիամինի:

Վանգի զկնի երկրորդ հարուածոցս զգօնա-
ցեալ որդւոց իսրայէլի, զամենայն յոյս ապաւինու-
թիւն եդին յԱւծ. եկին ի խորանն վկայութիւն, լացին
առաջի Տեառն, պահեցին անսուաղ զօրն զայն ողջոյն.
և մատուցին զոհս և ողջակէզս փրկութիւն. որով և
ի հաշտութիւն զնջեալ Այ ընդ նոսա՝ ասաց երանել
երրորդ անգամ ի պատերազմ, զի ի վաղիւ տայցէ
նոցա զկատարեալ յաղթութիւն: Այվին քաջալերեալ
որդւոց իսրայէլի՝ վաղվաղակի կարգեցին զպատե-
րազմ ըստ օրինակին, զոր տեսաք ի վեր անդր
կարգել յեսուայ զղօրս իւր, յորժամ Էաւ զգայի:
Վերեցան եդին դարանակալս շուրջ զգաբաւաւ ի
զանազան տեղիս անյայտս. և ընդ առաւօտն զօ-
րականք յառաջապահ գնդին երևեցան Հանդէպ
քաղաքին. զոր տեսեալ որդւոց բենիամինի՝
խրոխտ խիզախմամբ ի վերայ յարձակեցան՝ յուսով
Հարկանելոյ զնոսա ըստ օրինակի երկուց առաջին
Հարուածոց: Յայնժամ գունդն իսրայէլեան սկսաւ

յետոյս ընդ կրունկն նահանջիլ՝ կեղծեօք զփա-
խուստ ձեւացուցեալ՝ ընդ երկուս Ջանասպարհս,
որոց մին հանէր ՚ի բեթէլ և միւսն ՚ի դաբաա, առ
՚ի բաժանել և զթշնամին։ Այս հնարք ՚ի գէպ
յաջողեցաւ իսրայէլի. զի Թէպետև կորոյս արս
երեսուն, բայց կանգնեաց նոքօք զկատարեալ յաղ-
թութիւն՝ գրեթէ խսպառ խորտակելով զցեղն բե-
նիամինի։ Այնպէս այն ինչ բենիամինեանք յան-
դուգն խրոխտանօք զհետ պնդէին փախստէից ընդ
երկուս Ջանասպարհս, ՚ի լեռնակողմանէ ածան ՚ի
մէջ դարանակալաց. և ՚ի միւս կողմանէ ձգեցան ՚ի
լայնարձակ դաշտավայրս բաալթամայ, ուր կայր
պատրաստ դունդ մի մեծ իսրայէլի։ Այդ՝ տեսեալ
նոցա զայս օրինակ յերից կողմանց պաշարեալ զան-
ձինս ՚ի մարտակացն իսրայէլի, Թիկունս դարձուցին
անդրէն ՚ի քաղաք անդր պատսպարիլ յերեսաց նո-
ցա. և տեսին՝ զի ահա ծուխս քաղաքին ելանէր
յերկինս։

Այնմիջ իբրև հեռացան նոքա ՚ի քաղաքէ ան-
տի, մտին դարանաւորքն, և հուր հարին զնո-
վաս. և ելեալ ՚ի քաղաքէն ընդ առաջ, առին ՚ի
մէջ զնոսա. և այնպէս ՚ի քաղաքէ, ՚ի լեռնէ, և ՚ի
դաշտէ, և յամենայն կողմանց՝ յառաջոյ և յետոյ,
յաջմէ և յահեկէ անզերծ պաշարեցին զնոսա. և
անդէն հարին ՚ի նոցանէ յաւուր յայնմիկ ութ-
տասն հազար արս զօրաւորս։ Իսկ մնացեալքն
փախստեայ դիմեցին յանապատն կոյս՝ ապաստան
լինել ՚ի վէմն ռեմմոնայ, որ էր ՚ի գլուխ բարձր և
սեպացեալ ժայռի անմատոյց կարծեցեալ. բայց
զՋանասպարհայն երկիցս ՚ի վերայ հասեալ նոցա զօ-
րաց իսրայէլի, կոտորեցին ՚ի նոցանէ միանգամ
արս հինգ հազար, և յերկրորդումն հազարս եր-
կուս։ Եւ ամենայն անկան յաւուր յայնմիկ ՚ի բե-
նիամինէ քսան և հինգ հազար և հարիւր այր. ուս-
տի և ՚ի բովանդակ գնդէ նոցա, որպէս և ՚ի հա-
մօրէն ցեղէ անտի, վեց հարիւր և եթե այր ողջան-
դամ զերծան ՚ի վէմն ռեմմոնայ. յորս պահեցաւ, և
յորոց յետոյ սերեցաւ ցեղն բենիամինի։ Այնմիջ

դունդն իսրայէլեան առ անհնարին կատաղութենն սակս երկուց առաջին հարուածոց զոր ընկալան ՚ի բենիամինեանց, ոչ շատացեալ հրձիգ զդաբաա քաղաք նոցա առնել, և զբնակիչս նորա առ հասարակ ՚ի սայր սուսերի կոտորել, դարձան ընդ կրունկն և սիրեցան ընդ ամենայն երկիր բենիամեան, և զամենայն քաղաքս և զաւանս և զգեօղս հրկիզ արարին, և զբնակիչս նոցա զայր և զկին ՚ի մեծէ ցոտնդեացն և զանասուն նոցա կոտորեցին, մինչև չմնալոյ ապրեալ և ոչ մի։

Յետ զայս օրինակ բնաջինջ առնելոյ զցեղն բենիամինի եղեօր իւրեանց, ջունելով այնուհետև յո՛ թափել զգազանացեալ սրտմտութենէ իւրեանց, զիջաւ ապաժոյժ եռանդն վրէժխնդրութենէ նոցա։ Նէ յայնժամ բացան աչք նոցա, և ծանեան զվնասն մեծ՝ զոր արարին, զցեղ մի սպառեալով յիսրայէլ։ Ոմանք որոյ ժողովեալ ՚ի մասեփայ ՚ի բեթել ամբարձին զձայնս իւրեանց և լացին մեծաձայն լայպուռ մինչև ցերեկոյ. և ՚ի վաղիւ անդր շինեցին ՚ի խորանի անդ առանձին սեղան, և մատուցին զոհս և ողջակէզս փրկութենէ։ Ապա խորհուրդ կալան վասն ցեղին բենիամինի, թէ զի՞նչ արասցեն առ ՚ի անդրէն կանգնել զնա։ Վասն որոյ խոկ էին՝ զի կան ՚ի վէմն ռեմմոնայ ապաստանեալք վեց հարիւր արք զերծեալք ՚ի պատերազմէն, վասն որոյ հաստատեցին ապրեցուցանել զնոսա յաձուխն ցեղին բենիամինի։ Այլ զի երդուեալ էին զերդումն անխոհեմ՝ չտալ զդստերս իւրեանց որդւոց բենիամինի ՚ի կնութիւն. և յայլմէ կողմանէ՝ ոչ կարէին տալ հաւանութիւնն առնուլ նոցա կանայս ՚ի դստերացն այլազգեաց, զի արգելեալ էր յօրինաց. նմին իրի վարանէին ՚ի խորհուրդս, և ոչ կարէին ընտրել ինչ։

Յայնժամ յիշեցին, թէ ՚ի սկզբան մարտին երդումն մեծ արարին ընդ պատժով մահապարտութիւն, ընդդէմ այնոցիկ որ ոչ գայցեն յայն պատերազմ։ Նէ գտին զի յամենայն ցեղից միայն բնակիչք յաբեսայ քաղաքի, որ էր ՚ի գաղաադ յայն

կոյս յորդանանու, չէին առաքեալ մարտիկս ի բա-
նակ անդր իսրայէլի. և ոչ իսկ յայս ժողովս որ ի
սելով, ուր ժողովեալ էին յամենայն ցեղից, ե-
կեալ էր ոք ի դլխաւորաց անտի յաբխասցւոց։
Ապա որոյ իբր ապստամբս ունելով զնոսա յեկե-
ղեցւոյն իսրայէլի, ընտրեցին նոյն ժամայն արս
երկոտասան հազար ի զօրաւորագունից, և առա-
քեցին յաբխս. պատուէր տուեալ նոցա կոտորել
անխնայ զամենայն արու և զկին մինչ ցմատաղ
մանկունս, և մի ոք ապրեցուի բնաւ, բայց միայն
կոյս աղջկունք. զոր և կատարեցին նոքա անվրէպ.
և գտին ի քաղաքն անդ չորեք հարիւր աղջիկ
կոյս. և ածին զնոսա ի բանակ անդր։ Յայնժամ
ապա առաքեցին հրեշտակս առ վեցհարիւր որդիս
բենիամինի ի վիմին ռեմմոնայ, ուր չորք ամիսք էին,
զի կային ապաւինեալ՝ մինչև այս ամենայն ասաց-
եալ իրագործութիւնք վճարեցան, և կոչեցին զնո-
սա ի խաղաղութիւն։ Եւ նոցա իջեալ ի վիմէ ան-
տի, եկին առ որդիս իսրայէլի, և չորեք հարիւրքն
ի նոցանէ ընկալան կանայս զաղջկունան զայնոսիկ։

Իսկ վասն մնացեալ երկերիւր անկանանց հր-
նարս այսպիսի խորհեցան. խրատ ետուն նոցա
դարանամուտ լինել և թագչիլ յայգեստանին առ
Ջանապարհաւ սելովայ. զի յելանել դստերաց բը-
նակչացն սելովայ ըստ սովորութե՝ ոմանքն աղաղաւ
ի դաշտ անդր պար առեալ պարուք և երգօք, ել-
ցեն յայնժամ յայգեստանեացն, և յարձակեալ ի
խումբ նոցա՝ յափշտակեսցեն ի նոցանէ այր իւրա-
քանչիւր կին ինքեան։ Եւ մի վասն այնր երկիցեն
ինչ. քանզի յայնմ մեծի հարկաւորութե ծերա-
կոյտն պաշտպան լինիցի նոցա։ Եւ նոքա արարին
այնպէս, և առին կանայս ըստ թուոյ իւրեանց ի
պարաւորաց անտի. և դարձան գնացին յիւրաքան-
չիւր ժառանգութիս իւրեանց, և շինեցին քաղաքս
և բնակեցին ի նոսա։ Ել ընթեռնումք, թէ հարք
աղջկանցն բողոք վասն այնր բարձեալ էցեն առ
ծերակոյտն. յորմէ երևի թէ յափշտակութիւնն այն
չեղև դժուարահաճ ինչ նոցա. մի՝ զի այնու զեր-

ծան՝ի ծանրութէ պաշտատականս տալոյ դատելոյց իւրեանց, և այնպէս թեթևաբեռն ազատեցան՝ի նոցանէ. և երկրորդ՝ զի բենիամինեանք ոչ առնին զնոսա իբրև գերեալս՝ի պատերազմի՝ի ծառայութիւն, այլ իբրև փեսայք յօրինաւոր կնութիւն։ Հա զայս օրինակ վճարեցաւ քաղաքական պատերազմ իսրայէլի. զոր՝ըզ գիրք կնքէ նշանակելով համառօտիւ զպատճառն ամենայն անկարգութեանց, յաւելեալ.* Յաւուրսն յայնոսիկ ոչ գոյր թագաւոր իսրայէլի. և այր իւրաքանչիւր զկամս աչաց իւրոց առնէր։

Այս պատերազմ պատմէ՝ըզ գիրն՝ի կատարած գրոցն դատաւորաց արտաքոյ կարգի, և արտաքոյ ընթացից եբրայական պատմութեանց իբրև առանձին ինն դիպուած յիշատակաց արժանի։ Այլ այն պատահեցաւ՝ի ժամանակի անիշխանութեան՝ որպէս ասացաք յառաջագոյն, զկնի մահուան յեսուայ, յետ անցից միքայ և յառաջ քան զանկանել ժողովրդեան՝ի ծառայութիւն քուսարսաթեմայ արքային։ Եւ այս յայտ անտի է, քանզի այս պատերազմ եղև առ քահանայապետութեանն փենեէսի որդւոյ եղիազարու. գ.թագ. Բ. 28. և չէր մարթ լինել՝ի ժամանակին՝յորում ժողովուրդն կայր նուաձեալ ընդ ծառայութիւն քուսարսաթեմայ. քանզի ոչ արդեօք թոյլ տայր նա այնչափ հզաւարաւորաց ընդ բռնակալութիւն իւրով նուաճելոց՝ յայնպիսի ահաւոր պատերազմ գումարիլ։ Եւ ոչ՝իւրեանց քառասուն ամն, զկնի հարկանելոյ գոդոնիէլի ընդ քուսարսաթեմ. զի՝ըզ գիրն յայտնի ասէ՝ թէ ընդ այն քառասուն ամն դադարեաց, կամ հանգեաւ երկիր. զոր չէր մարթ ասել, եթէ ընդ այն ժամանակս եղեալ էր այն դժնդակ արիւնըռուշտ պատերազմ։ Այլ զկնի այնց քառասուն ամանց՝ չէ հաւանելի փենեէսի կենդանի մնալ. քանզի ընդ այն ժամանակս արդէն սկսեալ էր կարձիլ յոյժ կեանք մարդկան. և եթէ կենդանի էր, ժողովուրդն անդրէն երկրորդ անգամ անկաւ ընդ ծառայութիւն այլազգեաց առ եգղոմաւ մովաբացւոց արքայիւ։

Ա՛պա դիպաւ ընդ մէջ մահուան յեսուայ, և ծառայութիւնք քուսարսաթեմայ։ Ա՛ս՝ կարի իսկ հասանելի է, թէ նա զայն քաղաքական երկպառակութիւնն երբայեցւոց, որով ոչ սակաւ տկարացան՝ այնչափ քաջամարտիկ զօրականս կորուսանելով, պատեհ դիպողութիւն իւրոց կամաց կատարման հասմարեալ, դիմեալ ի վերայ նոցա։ Օ այս կարծիս բաց՝ի պատճառաց աստի՝ հաստատեն և այլք բազումք՝ի մեկնչաց սբ գրոց։

ԳԼՈՒԽ Ե.

Ծառայութիւնք որդւոց Իսրայէլի ընդ յեհոամէ հաւատարմանէնայ արտյին ինչագիտաց։ Ա՛ղաւութիւնք նոցա՝ի յեհոն գերեվարելէ։ Երկրորդ ծառայութիւնք նոցա առ եգղոնա արքայն Մոաբեա. և ապստամբութիւնք նոցա յեհոամէ առաքեայ, որ պատմի և փրկութիւնք սահմգարայ։

Ի նմին անտեղութիւնչ վիճակի որդիքն Իսրայէլի չունելով դեռագոյն դատաւոր սահմարկու՝ նահանջել զնոսա՝ի չարեաց, օր քան զօր յաւելուին յամբարշտութիւնս, զհետ երթեալ հրէական այլազգեաց. զորս եթող Աստ՝ի զգաստութիւն ժողովրդեան իւրոյ, և առ՝ի հանապազորդ կրթութիւնք՝ի զինս՝ մանաւանդ մանկագունից, որք չէին անցեալ ընդ փորձ պատերազմաց քանանացւոց առ յեսուաւ, լինել միշտ կազմ և պատրաստ՝ի մարտ, տեսանելով զանձինս պատեալ՝ի թշնամեաց։ Այնանգամայն և զի լինիցին նոքա պատրաստական գաւազան բարկութիւն՝ի ձեռին Աստ հարկանել և խրատել նոքօք զժողովուրդ իւր յապստամբել նոցա՝ի նմանէ։ Վանգն երկարատև խաղաղութիւնն, անդորրութիւնն և ապահովութիւնն՝ ընդ նմին և կարի յաջողութիւնն մարմնաւոր իրաց, ըստ հասարակ

ընթացից աշխարհի՝ ածեն զմարդիկ յամբարտաւանութիւն, ի ցոփութիւնն և ի մոռացումն այ. զի ի հանգստեան գոլով, և չունելով ուստեք կարծիս երկիւղի, ոչ ձանձրանան զանձինս կարօտ ածային օգնականութեան։ Այս հանապազորդ փորձն ուսուցանէ յամենայն մարդիկ, բայց առաւել լաւս յեբրայեցիս, որք բնութիւն կարի ինձն հակամիտ էին ի կռապաշտութիւն և ի ցոփութիւն։ Արդեօ ահա և յայնմ անիշխանութեան ժամանակի՝ հազիւ ընդամն ինչ անդորրացեալ ի պատերազմանց, մոռացեալ զամենայն պատուէրս տեն այ իւրեանց, և զանսպառ երախտիս բարեաց նորա յոր վայելէին, թողին զնա, և յարեցան յայլազգիս. առին զդրստերս նոցա իւրեանց ի կանայս, և զդստերս իւրեանց ետուն ուստերաց նոցա, և պաշտեցին զդիս նոցա զբահաղ և զանտառան։

Այսուհանդերձ բարկացաւ սրտմտութիւն տեր, և յարոյց ի վերայ նոցա զբուսարսաթեմ արքայ աւորուց միջագետաց, որոյ եկեալ բազմութիւն զօրացն յերկիրն իսրայէլի՝ զօրացաւ ի վերայ նոցա, և ի հարկի ծառայութիւն կացոյց զնոսա։ Այլ էառ քաղաքս. ոչ եբարձ զծերակոյտ ժողովրդեանն. ոչ կացոյց ի վերայ նոցա նոր դատաւորս գաւառակաց, և քաղաքապետս. ուստի և տիրապէս խօսելով, ոչ տիրապետեաց երկրի նոցա. և ոչ աւարն ժողովուրդն իւր ստրուկս. այլ լոկ իբրև բռնաւոր հարկս անթերելիս հանէր ի նոցանէ, որով և անխնայաբար կեղեքէր զնոսա։ Այս է ծառայութիւն յոր նուաճեալ կային որդիքն իսրայէլի ընդամն ութ ընդ բռնակալութիւնն քուսարսաթեմայ։ Այնգուցեակ եղեն և այլ ծառայութիւնք նոցա ընդայլևայլ բռնաւորօք, որք պատմին ի գիրս դատաւորաց. զի ոչ ոք յարտաքին թշնամեաց նոցա այնպէս տիրեաց նոցա, մինչև առնել զնոսա ըստրուկս, և զրկել զնոսա յամենայն քաղաքական իշխանութենէ և յազատութենէ իւրեանց։ Այսպէս առ քուսարսաթեմաւ, նոյնպէս և առ այլովք բռնաւորօք ունէին զիւրեանց սեպհական ատեան

դատաստանի, և իշխանս, և օրէնս. և թէպէտ եղև երբեմն առնուլ թշնամեաց զքաղաքք ինչ նոցա, և տիրել մասին ինչ ցեղի միոյ, կամ դաւաճառի. բայց մնրմին հաստատակաւետութեամբ նոցա պահեաց միշտ զտէրութիւնն իւր, թէպէտ նուաճեալ և հարստահարեալ։

Ընդ այս յուզերորդ ամի այսպիսի դառն ծառայութենէ նեղեալ որդւոց իսրայէլի, և յոգիս ապաստան եղեալ՝ ծանեան զամպարշտութենէ իւրեանց. զարձան սրտի մտօք՝ի մեղաց, և գոչեցին առ Աստուած. որ ըստ իւրում անսահմանն գթութենէն լուաւ աղաղակի նոցա. և յարոյց նոցա փրկիչ զգոթոնիէլ որդի կենեզի զեղբօր որդի քաղեբայ (զկոչեցեալն եղբայր նորա կրտսեր), տալով նմա զոգի իմաստութենէ, հանճարոյ և զօրութենէ՝ դատել ուղղութեամբ զժողովուրդն, և փրկել զնոսա՝ի ձեռաց քուսարսաթեմայ։ Եւ նա ապաւինեալ՝ի նոր՝ եւ հզօր ձեռամբ՝ի պատերազմ ընդդէմ ասորւոց. և եհար վանեաց զնոսա, կէս մի՝ի սայր սուսերի կոտորելով, և կէս մի՝ի փախուստ դարձուցանելով. և ազատեաց զերկիրն յամենայն թշնամեաց՝ կատարեալ յաղթութիւն կանգնելով։ Այս նշանաւոր յաղթութենէ գոթոնիէլ, զոր՝ոչ գիրն միով բառիւ յայտնէ յասելն.* Եւ սաստկացաւ ձեռն նորա (գոթոնիէլի)՝ի վերայ քուսարսաթեմայ ‖. դաս. Ճ. 10. Ելից արհսւրօք զամենայն շրջակայ ազգս, այնպէս՝ զի ընդ ամն քառասուն ոչ ոք՝ի նոցանէ իշխեաց անհանգիստ առնել զորդիս իսրայէլի։ Եւ այնուհետեւ դատեաց գոթոնիէլ զիսրայէլ մինչեւ ցվախճան կենաց իւրոց. այլ թէ նա կեցեալ էր՝ոչ ընդ այն քառասուն ամն խաղաղութեան, չէ յայտ. քանզի՝ի վերայ այսորիկ զայս ևեթ գտանեմք՝ի՝ոչ գիրս.* Եւ դադարեաց երկիրն ամն քառասուն. և մեռաւ գոթոնիէլ որդի կենեզի ‖։ Սակայն երևի թէ մեռեալ էր յառաջ քան զլրանալ քառասուն ամաց հանդարտութեան. զի ընդ Թեռնուամբ դաս. Է. 19. Թէ իբրև մեռանէր դատաւորն, որդիք իսրայէլի դառնային միւսանգամ

եղծանիլ առաւել քան զՀարս իւրեանց։ Եւ ահա տեսանեմք՝ զի զկնի պատմելոյ նոր գրոց զմահ Նոր, յարէ անմիջապէս, Թէ յաւելին որդիքն Իսրայէլի առնել չար առաջի Տեառն։

Ապա որոյ և ՚ած ա՛ռ ՚ի ձեռն գաւազան խրատու զեգղոմ արքայ Մովաբու. որոյ առեալ իւր յօդնութիւն յամենացւոց և յամաղեկայեցւոց՝ եել ՚ի վերայ Իսրայէլի, որք ՚ի մեռանիլ գոթոնիէլի չև էին կացուցեալ զոք դատաւոր և զօրագլուխ. ուստի և գոլով նոցա անգլուխ և անառաջնորդ՝ արագ նուաճեցան ՚ի ծառայութիւն եգղոմայ, նախ ցեղն ռուբինի և գադայ և կէս ցեղին մանասէի, որ էին յայնկոյս յորդանանու յարևելեան կողմն։ Եւ այնու բացեալ եգղոմայ Ճանապարհ, անց զյորդանան. և բանակեցաւ ՚ի տեղին՝ ուր էր յառաջագոյն երիքով քաղաք, զոր հրկէզ արար և աւերեաց յեսու. նմին իրի ոչ ևս կոչէր քաղաք մարդկան, առ ՚ի չգոյէ անդ բնակութիւն, այլ ՚ի ծառոց տեղւոյն՝ անուանեցաւ քաղաք արմաւենեաց. զոր ա՛ռ եգղոմ, և անդ հաստատեաց զիւորան իւր. և անտի սիրէր գունդս գունդս զինուորաց ՚ի կեղեքել զերկիրն՝ ծանր ծանր հարկս հանելով։ Այս լուծ անբառնալի բարձին որդիքն իսրայէլի ընդ ամս ութետասն. և իբրև տեսին՝ զի ոչ ևս կարեն տանել, բացան աչք նոցա, և արարին զոր ՚ի սկզբան անդ պարտ էր նոցա առնել. աղաղակեցին առ ՚ած քեկեալ ոգւով. և լուաւ ՚ած խնդրուածոց նոցա. և յարոյց զաւուղդ զորդի գերեայ յորդւոց յիմենեցւոց, այսինքն բենիամինի. որք սովին անուամբ յիշատակին ՚ի ՚ած գիրս ՚ի բազում տեղիս։ Արևի Թէ կամեցաւ ՚ած սիսիթարել զցեղն բենիամինի զկնի յեսուին Թշուառութեան նորա, պարգևեալով նմա զայր այսպիսի ՚ի ջնջել զանցեալ կեղտն, և ՚ի բառնալ զնախատինս ՚ի ցեղէ անտի։

Եւ սա այր քաջ և զօրաւոր՝ յերկոցունց ձեռաց աջողակ. զի որպէս աջոյն՝ նոյնպէս և ձախու ձեռամբ վարէր միապէս զգէնս։ Այս իբրև հանձարեղ զգաստ և խորագէտ՝ ընտրեաց ծերակոյտ Իս-

բայէլի տանել առ եգղոմ արքայ մովաբու՝ կամ ընծայս, և կամ հարկս. ՚ըր գիրն պատարագս այ սէ, որ ուրեք ուրեք նշանակէ և զպարտաւորեալ տուրս կամ հարկս։ Վնասոյ աւուդ հաստատելով ՚ի մտի ՚ի վերջ հասուցանել՝ ըստ հրամանի ՚ոն՝ ըզծառայութիւն ժողովրդեան իւրոյ մեհուամբ Թագաւորին, զոր անձամբ ևէթ խորհեցաւ վճարել. ոչ յայտնեաց ումեք զխորհուրդ իւր. ոչ խնդրեաց օգնականս. գիտելով զի այսպիսի խորհուրդք իւրք ՚ի բազումս ՚ի դերև ելանեն. վ՚ զի ուր ուրեմն պահին գաղտնիք, յորժամ բազմաց գլխոց հաղորդին։ Ա՚ըար իւր առաւ երկսայրի՝ Թզաւ յերկայնուն, որ հանդերձ երախակալաւն՝ էր իբր փոքր կանգուն մի. որպէս ունի բնագիրն եբրայեցւոց. և կապեաց յաջոյ ազդերս ՚ի ներքոյ հանդերձից, ընդդէմ հաւասարակ սովորութեան, առ ՚ի չտալ բնաւ կարծիս կասկածանաց։ Ա՚յսպէս պատրաստեալ չոգաւ ընդ կերակցութիւն այլոց բազմաց՝ որք բարձեալ տանէին զպատարագսն առ Թագաւորն. որ ոչ ևս նստէր ՚ի դաշտին երիքովի ընդ խորանաւ, այլ յերկիրն մովաբու յապարանս իւր. որ յայտ անտի է, զի էին անդ սենեակք, և վերնատունն և ամարանոց և պատշգամք։ Այս անդ կատարեալ զգործ հրեշտակութիւն իւրոյ գյանձնեաըն ՚ի ծերակուտն, եւ և դնաց ՚ի գաղգաղա, ուր կային դրօշեալք, ըստ ումանց՝ կանգնեալք ՚ի մովաբացւոց. և անտի արձակեալ յիւրմէ զպատարագաբարձան, ինքն միայն գարձաւ ՚ի դրօշելոց առ եգղոմ հանդերձ գաղգաղաւն, որպէս Թէ պատգամաւ դրօշելոցն գաղգաղայի. (ուր ումանք ՚ի մերոց օրինակաց ունին, հանդերձ դագաղաւն. արտաքոյ բնագրի եբրայեցւոց և ամենայն Թարգմանութեց և ընտիր օրինակաց մերոց. ուստի և ե վրիպակ գրչաց)։ Այս խնդրեաց խօսել առանձինն ընդ Թագաւորին. իսկ նա ասաց նմա լռել, մինչև ՚ի բաց արձակեսցէ զարմն որ ընդնուաւան կային։

Իբրև ելին ամենեքեան արտաքս, և նա նստեր յամարանոցի ՚ի վերնատանն իւրում միայն առան-

ձինն, աւուվդ՝ որ յառաջնումն յորժամ եմուտ առ Թագաւորն մատուցանել զպատարագն՝ զնեաւ գաղտաբար զամենայն դիրս տեղւոյն, նշանակեաց զծածուկ դուռն մի, որ ՚ի սրահէ անտի հանէր ՚ի պատշգամբն. ասէ ցԹագաւորն. պատգամ ունի ինձ առ քեզ ա՛րքայ։ Իսկ նա համարելով՝ Թէ ՚ի դրօշելոց անտի գաղտաղալի ունիցի ինչ, յարեաւ վաղվաղակի յաԹոռոյն, և մերձ եղև առ նա. յայնժամ աւուվդ հանեաւ ձախոյ ձեռամբն զսուրն յաջոյ ազդերէ իւրմէ՝ մխեաց ՚ի կուշտ Թագաւորին ուժգին, մինչև զհետ սրոյն մտանել և երախակալին ՚ի խոցուածն անդր. և զի պարարտ էր յոյժ նա՝ ձարպն ելեալ փակեաց զվիրաբերանն, և պնդեաց զսուրն ՚ի ներքս. զոր ոչ կարաց աւուվդ Ձեպով ՚ի բաց հանել ՚ի կշտէն, զի մինչև ՚ի սիրտն հասուցեաւ էր. որով և առժամայն անշնչացաւ արքայն, մինչ չզօրել գէԹ Ձիկ հանել։ Ապա որոյ Թողեաւ զսուրն ՚ի կշտին, և զդրուն՝ն վերնատանն աղխեաւ ՚ի ներքուստ, եւ ընդ ծածուկ դուռն ՚ի պատշգամն և դնաց։ Իսկ ծառայք Թագաւորին կային արտաքոյ. իբրև անցին ժամք ինչ՝ մերձեցան ՚ի դուռն վերնատան, և տեսեալ զի աղխեալ էր, համարեցան Թէ գուցէ յաԹոռն նստիցի ՚ի կարիս որովայնի. և կացին մնացին և ևս. ապա տեսեալ զի կարի լինն յամէ, առեալ զբանալին՝ բացին զդուռն. և տեսին զի ահա ՚որ իւրեանց անկեալ կայր մեռեալ ՚ի գետնի։ Ա՛յս անակնկալ արկած այնպէս խառնեաց զամենեսին, և եբարձ զխորհուրդ նոցա, մինչև առ մեծի շփոԹուԹե՛ ոչ ոք փոյԹ կալաւ պնդիլ զհետ սպանողին. որով և եգիտ աւուվդ ժամանակ բաւական ապրեցուցանելոյ զանձն ՚ի ձեռաց նոցա։

Ա՛րդ՝ անցեալ նորա զյորդանան և առ դրօշելովք, ուստի դարձեալ էր առ եգղոմ, և հասեալ ՚ի սիրովԹա ՚ի լերինն Եփրեմի, փող պատերազմի եհար, և վաղվաղակի գումարեցան զօրաւորքն Իսրայէլի. և ինքն կացեալ գլուխ և առաջնորդ նոցա, ասէ ցնոսա. իջէ՛ք զկնի իմ, զի մատնեաց ՚որ

մեր զթշնամիս մեր զմովաբացիս՝ի ձեռս մեր։ Եւ
լինին ընդ նմա. այլ զի մի ոք՝ի թշնամեաց անտի
ողջանդամ զերծանիցի, հրամայեաց աւուդ փա-
կել զամենայն ձանապարհս, ընդ որ կարէին փախ-
չել. պատուէր եառ ունել և զհունս յորդանանու,
զի մի ոք ընդ այն անցանիցէ. և այսպէս՝ի մէջ ա-
ռեալ զթշնամին՝ հարին կոտորեցին զամենեսին,
որք էին իբր տասն հազար՝ամենեքին արք զօրա-
ւորք և քաջավարժ մարտիկք, և ոչ ոք՝ի նոցանէ
ապրեցաւ։ Եւ որդիքն իսրայէլի ստացեալ զազա-
տութիւն իւրեանց, կացին մնացին՝ի խաղաղութիւն
ընդ ամն ութսուն. և դատեաց աւուդ զնոսա.
այլ թէ ընդ քանի՞ ամս, չէ յայտ. զի՞ոբ գիրն
զայս ևեթ ասէ. * Եւ դատեաց զնոսա աւուդ,
մինչև մեռաւ ‖. գաս. Ը. 30։

Յետ նորա յարեաւ սամեգար որդի անաթայ՝
այր հողագործ, ուժեղ և զօրաւոր. որ մանձուխ ա-
ղօրոյ, կամ խոփիւ, և կամ ըստ ոմանց՝ երկաթա-
ծայր խթանաւ եզանց եհար և սատակեաց վեց
հարիւր այր՝ի փղշտացւոց, որք աւերէին զմերձա-
կայ սահմանս երկրին որդւոց իսրայէլի. և ա՛ռ յա-
ւարի արջառ և ոչխար բազում յոյժ. որով և ար-
ժանացաւ յաջորդել՝ի տեղի աւուդայ՝ի դատել
զիսրայէլ։ Վատաւորութիւն սորա ըստ առաւել հա-
ւանելի կարծեաց եղև՝ի վերջին ժամանակս ութ-
սուն ամաց հանդարտութեանն, նաև փոքր մի զկնի՝ի
քսան ամանն ծառայութեանն ընդ բռնակալութեան յա-
բինայ արքայի քանանացւոց. յորժամ որդիքն իս-
րայէլի գտեալ անդորրութիւն յարտաքին թշնամեաց՝
ըստ սովորութեանն իւրեանց դարձեալ սկսան ամ-
պարշտել դառնալով անդրէն՝ի պաշտօն բահաղի-
մայց։ Վանզի սամեգար թէպետև եհար միան-
գամ զգունդ մի վեցհարիւր փղշտացւոց, բայց չու-
նէր բաւական զօրութիւն ոչ միայն ետ՝ի վանել զը-
քանանացիս, այլև ոչ՝ի կարձել զիսրայէլացիս յա-
նօրէնութենէ իւրեանց, մննաւանդ զհեռաւորսն,
առ որս ոչ ժամանէր կարողութիւն նորա. զի ընդ
այն ժամանակս ծառայութեանն յաբինայ կարի էին

նուաձեալ էր, և նկուն յոյժ ժողովուրդն, մինչև չիշխել ումեք քնաւ դլուխ ամբառնալ. զոր յայտնի ակնարկէ դեբորա յօրհնութիւնս իւր՝ յասելն, թէ յաւուրցն, կամ ըստ այլ թարգմանութեան՝ յաւուրսն սամեգարայ որդւոյ անաթայ գնացք ժողովուրդն ընդ շաւիղս թիւրս, և ընդ ճանապարհս կամակորս. և պակասեցին քաջք և զօրաւորք յիսրայէլ, և ոչ շարժեցան փրկել զանձինս ի թշնամեաց, մինչև յարեաւ դեբորա, մինչև յարեաւ մայր իսրայէլի. պաշ. Ե. 6։

ԳԼ. ՅՕ.

Ծառայութիւն որդւոց իսրայէլի ընդ յեհաբէ յաբինայ արքայի քանանացւոց։ Պատերազմ նոցա ի յեհաբ դեբորայ և բարակայ։ Յարութիւն նոցա ի մադիանացւոց։

Եւ յայ յաբին արքայ քանանացւոց՝ որդի կամ թոռն կամ այլ ոք ի սերնդոց յաբինայ արքային, զոր սպան յեհու, և զասովր մայրաքաղաք նորա հրկէզ արար. յեհ. ՃԼ. 10. Ժողովեալ զինացորդս ժողովրդեան իւրոյ՝ չինեաց անդրէն զասովր քաղաք. և անդ զկնի ժամանակաց զօրացաւ. արար իւր ինն հարիւր կառս երկաթեղէնս, և զօրս բազումս. որոց կացոյց սպարապետ հրամանատար զսիսարա զայր պատերազմող։ Իբրև ետես զնորոգութիւն իւր այսպէս զնդակազմ պատրաստեալ, և զժողովուրդ որդւոց իսրայէլի երկար հանդարտութիւն լուծեալ և մեղկացեալ, ժամ դիպոյ զայն վարկաւ՝ հանել ի նոցանէ զբիւն վրիժու հարուածոց իւրոցն նախնեաց որ ի ժամանակս յեհուայ։ Այսն որոյ ամենայն զօրութիւք իւրով յարձակեցաւ յերկիրն իսրայէլի. և ոչ ոք ի նոցանէ իշխեաց մարտիւ ընդդէմ ելանել նմա ընդ ամն քսան. յորս անընդհատ

հրոսակութիւն աստիճանակութիւն աւարառութիւն, այլև անբերելի հարկապահանջութիւն տառապեցուցանէր ժողովուրդն, մինչև ի յեռին թշուառութեն հասուցանել զնոսա։

Ի ժամանակին յայնմիկ յետ մեռանելոյ սամդարայ, կամ առ նորին իսկ կենդանութիւն, դերբուրա կին ղաբիդովթայ, բայց յայնժամ ըստ ոմանց՝ այրի, սկսաւ դատել զհսրայէլ. զի տուեալ էր նմա յայ հոգի մարգարէութեն, և ժողովուրդն սովորեալ ի հոգևորական կարօտութեան իւրեանց դիմել առ նա իբրև առ մարգարէ՝ սկսան բազումք և զվէձս քաղաքականս հանել առ նա, և նորա դատաստանի անսալ. և այնպէս զկնի սամեգարայ նա եղև դատաւոր համօրէն իսրայէլի։ Ընդ որում ժամանակս զաթոռ իւր ընդ արմաւենեաւն, որ յանուն նորա կոչեցաւ Արմաւենի դեբորայ՝ ի մէջ ռամայ և բեթելայ ի լերինն եփրեմի ի սահմանս ցեղից բենիամինի և եփրեմայ. ուր ոչ հասանէին աստիճանակութիւնք թշնամեաց։ Ընդ դատել բազմաթեայ ի ներքոյ արմաւենւոյն, կամ ընդ խորանաւ, զի ամենեցուն համարձակ լինի մուտ դատանել առ նա։ Սէր քաղցրութիւն զգանգատ ամենեցուն, և լուսաւորեալ ի հոգւոյն այ, ամենայն սրբութիւն և ուղղութիւն դատէր զգատաստանս նոցա. և մայրօրինակ խնամածութիւն առաջնորդելով նոցա, արժանապէս մայր իսրայէլի կոչեցաւ. որով և դարձոյց զժողովուրդն յապաշխարութիւն և ի պահպանութիւն պատուիրանաց ենն այ։

Յայնժամ և ասծ հայեցեալ յապաշխարութիւնն նոցա, դարձոյց զբարկութիւն իւր ի գթութիւն. և կամեցեալ ի վերջ հասուցանել զգառն ծառայութիւն ժողովրդեան իւրոյ, յայտնեաց զյեղանակն փրկութիւն դեբորայ մարգարէի։ Սակ նա առաքեալ կոչեաց զբարակ ի կադեսայ՝ զորդի աբինեեմայ ի ցեղէն նեփթաղիմայ. և պատուիրեաց նմա ի դիմաց այ երթալ ի լեառն թաբովր, և առնուլ ի ցեղէն նեփթաղիմայ և ի ցեղէն զաբուղոնի ևեթ արս տասն հազար. և ի լեառնէ անտի իջանել նո-

քօք ՚ի հեղեղատն կիսոնի ՚ի վերայ սիսարայ սպա-
բապետի զօրուն յաբինայ. զի անդ հանդերձեալ
էր ՚ուծ տալ նմա զկատարեալ յաղթութի։ Յանձն
ա՛ռ բարակ զդործն, այլ հանդերձ պայմանաւ, զի
և նա ինքն դեբորա երթիցէ ընդ նմա. քանզի
ասէ. * ո՛չ գիտեմ զօրն՝ յորում յաջողեսցէ ՚ուր
ձեռնարկեալ իւր ընդ իս ‖. իբր թէ ասել, մուադիւր
և առանց այլ ինչ խնդրելոյ կատարէի զոր պատուի-
րես ինձ, եթէ գիտէի զժամն յորում պարտ իցէ
ինձ յարձակիլ ՚ի վերայ թշնամւոյն. այլ զի ոչ ինչ
զայսմանէ յայտնեցեր ինձ, ապա մի ծանր թուեսցի
յաղաչել իմ զքեզ գալ ընդ իս. զի մերձ առ իս
գոլով, յայտնեսցես ինձ մեկին զպատուէրն ՚ուր և
ժամն ձեռն ՚ի գործ արկանելոյ ՚ի կատարումն
նորին։

Ասաւ դեբորա բանիւ նորա. բայց գիտասջի՛ր
ասէ, զի թէպէտ և գործառնուիցին՝ յոր երթաս, յա-
ջողեսցի, այլ սակայն քաջութի՛ն յաղթութենն ոչ ք՛ո
լիցի, այլ՝ կնոջ. ոմանք այսու իմանան զնա ինքն
զդեբորա. այլք զայսէ՝ որ սպան զսիսարա։ Ա՛պա
յարեաւ դեբորա գնաց ընդ բարակայ ՚ի կադէս.
և անդ հանդէս արար բարակ տասն հազար արանց
յերկուց նախատրեալ ցեղից և եթ. զի այլք կամ
առ ահի ահեղ զօրութե՛ն թշնամւոյն, որպէս ցեղն
ռուբինի որ յայնկոյս յորդանանու, և կամ՚ի սակս
իւրեանց առանձնական վաճառաշահու՛ն ընդ ծով,
որպէս ցեղն գադայ և դանայ, ոչ ինչ օգնութիւն
ետուն բարակայ. յոյր սակս ստգտանէ զնոսա դե-
բորա յօրհնութի՛ս իւր։ Ա՛պա գնաց բարակ տասն
հազարօք և եթ, և դեբորա ընդ նոսա՝ ուղիղ ՚ի
լեառն թաբուղ, և բանակեցան ՚ի գլուխ անդր լե-
բինն, յապահովեալ յամրոցն, որ կայր անդ։ Օ՛, այն
իբրև լուաւ յաբին արքայ, ազդ արար վաղվաղակի
սիսարայ իւրում սպարապետի հասանել ՚ի վերայ
նոցա. և նա եհաս ընդ իւր զինհարիւր կառս, և
զօր բազում. զոր յովսեպոս տարապայման բազմա-
յուցանէ ցերեք հարիւր հազար հետևակաց, և
ցտասն հազար հեծելոց. այլ զի ՚ուր գիրն ինչ ոչ

նշանակէ յաղագս Թուոյ նոցա, չկամիմք և մեք ըստ մտի գուշակել։

Ա.ըդ՝ եւ սիսարա բանակաւ իւրով յասիրովթայ, և եկն պաշարեաց զլեառն. առաքեաց և ՚ի Թահաք մերձ ՚ի ջուրսն մակեդովայ՝ փակել զանցս հեղեղատին կիսոնի։ Իրրև այսպէս կազմեալ պատրաստեաց զամենայն, հաստատեալ ՚ի մտի և ոչ միւսմ ումեք յիսրայէլացւոց անտի ողջանդամ զերծանիլ ՚ի ձեռաց իւրոց, յայնժամ ըստ հրամանին գեբորայ էջ բարակ տասն հազարօքն ՚ի լեառնէ անտի, և ելից ՚ած անհնարին արհաւրօք զսիսարա և զամենայն բանակ նորա. այլ զիա՛րդ, կամ որո՛վ օրինակաւ, ոչ յայտնէ ՚ըր գիրն. զայս ունիմք յօրհնութի՛ւն դեբորայ, Թէ յերկնից ձակատեցան աստեղք յիւրաքանչիւր յօրինուածոց, և ետուն պատերազմ ընդ սիսարայ. այլ Թէ ա՛րդեօք հողմովք, կամ փայլատակմամբ և երկնաւաք շանթիւք, կամ զարհուրելի երևմամբք և ցնորիւք՝ չէ յայտ։ Ո՛յն և եթէ ասէ գիրն, Թէ զարհուրեցոյց զնոսա ՚ած սրով սուսերի առաջի բարակայ. որով երևի նշանակել, Թէ ՚ի տեսանել նոցա զզօրս իսրայէլի, այնպէս ահաբեկ եղեն, մինչ առհասարակ չփոթիլ, և ինն հարիւր կառացն խառնակիլ և զվիժեանս արգելուլ յընթացից. և որդւոց իսրայէլի իջեալ և անկեալ ՚ի վերայ նոցա՝ սկսան յանխնայս կոտորել զնոսա առաջի բարակայ։ Միայն սիսարայ կամեցեալ զանձն ապրեցուցանել՝ էջ ՚ի կառացն և ՚ի փախուստ դիմեաց հետիոտս միայն և անընկեր ՚ի կալուածս քաբերայ կինեցւոյ, որ էր յօրդւոցն յոբաբայ աներոյն մովսիսի. որք յանապատին յարեցան յիսրայէլացիս, և յերկրին աւետեաց ընկալան և նոքա վիճակ յարևմտեան կողմն ծովուն աղւոյ առ սահմանօք յուդայի։ Ա.յլ յետոյ քաբեր մեկնեցաւ յեղբարց իւրոց յօրդւոց յոբաբայ, և գնացեալ եհար զխորան իւր ՚ի սահմանս նեփթաղիմայ մերձ ՚ի կադէս. և անդ միտ դնեը ՚ի զարմանն խաշանայ իւրոց. զորմէ չունելով ինչ կասկած քանանացւոց, Թողին զնա կեալ խաղաղ

զուարճ ազատ ի հարկաց, զոր պահանջէին յորդւոց Իսրայէլի. վասն որոյ և էր տուն նորա խաղաղութիւն որպէս ընդ Իսրայելացիս, նոյնպէս և ընդ յաբինայ արքային ասորւոյ։ Այլ ինչ իրի ի փախչիլ սիսարայ՝ յայն կողմն դիմեաց յապահովել զկեանս իւր ի սրոյն բարակայ։

Այլ տեսեալ զնա յայելի կնոջ քաբերայ գալ շտապաւ, եւ ընդ առաջ նորա, և հրաւիրեաց զնա ի խորանն իւր՝ վստահացուցեալ չերկնչիլ յիմեքէ։ Այնուհետ սիսարա անկասկած. և զի վաստակեալ էր, խնդրեաց ջուր, իսկ նա արքայից նման կաթն, և յորդորեաց փոքր ի հանդիստ առնուլ. և նա ըստ զինուորական օրինի տարածեցաւ ի գետնի. և ծածկեաց զնա յայելը ընդ փեղկիւք խորանին. այլ մինչ չև էր ի քուն մտեալ, պատուիրեաց յայելի պահ ունել առ դրան խորանին. և եթէ ոք հարցանիցէ՝ եթէ կայցէ ոք այր ի խորանի անդ, ասիցէ՝ թէ չիք ոք. և այնպէս յապահովացեալ ննջեաց ի քուն խորին։ Այնժամ առեալ յայելի զմի ի սրածայր ցցից խորանին, և զուռնն ի ձեռին՝ եմուտ մեղմով առ նա, և եհար զցիցն ընդ ծամերիս նորա, և վարեաց զգլուխն ընդ գետինն. և նա տապալեցաւ առ ոտս նորա, և եհան զոգի։ Այնմին պահու և բարակ, որ վհետ մտեալ էր սիսարայ, գայր հասանէր. զոր տեսեալ յայելի՝ ընթացաւ ընդ առաջ նորա, և առեալ զնա եմոյծ ի խորան անդր, և եցոյց զայրն զոր խնդրէր նա, զի կայր մեռեալ ի գետնի, և ցիցն ի ծամերսն նորա. ընդ այս ուրախ եղև յոյժ բարակ՝ գոհացեալ զնոսն։ Այնչ բարակ վհետ պնդէր սիսարայ, զօրք նորա յայլ կողմն վհետ մտեալ բանակին քանանացւոց, կոտորեցին զնոսա մինչև յասերովթ ազգաց, այն է՝ անտառն ազգաց, և ոչ մնաց ի նոցանէ ապրեալ։

Այլ վճարիլ այսր սքանչելի յաղթութենէ, երգեաց դեբորա ցնծալից երգս օրհնութենէ ի գոհութիւն ՅՀՎ, և բարակ ընդ նմա՝ ձայնակցութեամբ համօրէն զօրաց իւրոց։ Օրհնութեան անդ ձարտարահիւս քերթուածով յիշատակէ զմեծագործութիւնս ՅՀՎ,

զոք եցոյց ՚ի վերայ որդւոց իսրայէլի ՚ի սինեականս լերինն, և յառաջնորդել նոցա ընդ երկիրն եդովմայեցւոց և այլոց զանազան ազգաց։ Յարէ ասպա զթշուառութիւն ժողովրդեան իւրոյ առ յաբինաւ յաղագս մեղաց կռապաշտութեանն նոցա մինչև ցժամանակ դառնալոյ նոցա ՚ի բերան նորա Աստուծոյ կոչել զանձն՝ իսրայէլ, ոչ միայն յաղագս մայրենի խնամոյ ՚ի վերայ ժողովրդեան, այլև վասն բարեյաջող ելից պատերազմին, որում նա ինքն եղև սկզբնաւորիչ և կարգադիր՝ ուսեալ ՚ի յայտնութենէ նմա, և բարակ գործակից նմին։ Զովութեամբ ՚ի մէջ բերէ զայնոսիկ՝ որք մտադիւր անձնատուր եղեն ՚ի փրկութենէ ազգին, և դարմանէ զորս յետնեալ գտանի ՚ի մարտակցութենէ անտի եղբարց իւրեանց. առաւել զընտակիչս մարտից, զորս ըստ հրամանին հրեշտակի նմա՝ ասէ անհնձանել, զի գուցէ փոխանակ օգնելոյ իսրայէլի՝ նոցին թշնամեաց եղեն նպաստաւոր։ Զկարագրէ զՀզօր պատրաստութենէ քանանացւոց, առ որով իբր ոչինչ էր գունդն իսրայէլեան, սակայն և այնպէս զօրացան ՚ի վերայ նոցա սպառ սպառս կոտորելով զնոսա. զի ամենազօր ձեռն նոցա էր ընդ իսրայէլի։ Զհնութենէ պատմէ զքաջութենէ յայելի կնոջ քաբեայ կինեացւոյ, որ հնարագիտութենէ սատակեաց զսիսարա զթշնամի նոցա. ուր և տխրագոյն երանգ զօք նկարագրէ զյարաչար սատակումն նորա, և զողբ և զսուգ մեծ նորա և տոհմայնոց. և ապա կնքէ ասելով. * Այսպէս կորիցեն ամենայն թշնամիք քո Տէր. և որք սիրիցեն զնա՝ իբրև զելս արեգական ՚ի զօրութենէ նորա ։

Յետ այսր յաղթութենէ խաղաղացաւ երկիրն ամս քառասուն. ըստ ոմանց՝ ՚ի մահուանէ աւուդայ, քսան ամ ծառայութենէ, և նոյնչափ խաղաղութենէ մինչև ցվախճան բարակայ. զորմէ ասի թէ մեռաւ ՚ի կադէս նեփթաղիմայ ՚ի հայրենիս իւր, և անդ թաղեցաւ։ Այսց բազումք զքառասուն ամսեն տան խաղաղութենէ։ Յայն ամս հանդարտութենէ, զկնի վախճանելոյ դեբորայ և բարակայ, զո-

ըոց չէ յայտ թէ ընդ քանի՛ ամս կեցին զկնի պա-
տերազմին կիսոնի, որդիքն իսրայէլի դարձեալ
ըստ հնացեալ սովորութեան իւրեանց, մոռացան
զնա՛ծ. և բազումք՝ ի նոցանէ ծուռնը կրկնեցին աս-
տուածոց օտարաց։ Ոյ՛ սոն այնորիկ և՝ ի թողուլ
զնոսա յիւրոց հայրենական խնամոց՝ մատնեցան՝ ի
ձեռս մադիանացւոց, որք առ մովսեսիւ գրեթէ
իսպառ խորտակեալ էին՝ ի սակս մեղացն բէելփե-
գովրայ. որպէս պատմի՝ ի գիրս Թուոց. ՃԻ. 8.
10. այլ զկնի երկերիւր և աւելի ամաց բազմացան
և զօրացան յոյժ. և այժմ միացեալ ընդ ամաղե-
կացիս, և ընդ այլ արևելեան ազգս, հոգան
եւտուն՝ ի վերայ ժողովրդեան իսրայէլի՝ ոչ ըստ
օրինի պատերազմողաց առ՝ ի տիրել քաղաքաց նո-
ցա, այլ իբրև ուղեւորք հեղեղս, կամ զօրէն
յոգնեցեալ մարախոյ անսպառ բազմութի՛ւն՝ եղծա-
նել և ապականել զանդաստանս նոցա, և՝ ի յետին
չքաւորութիւն ածել զնոսա. որպէս պի՛ չունելով
այնուհետև զօրութի՛ գլուխ ամբառնալ, ելեալ
յերկրէ իւրեանց աստ անդ գաղթելով առ՝ ի
դտանել դարման կենաց. կամ անդ յերկրի իւր-
եանց սովու սպառեսցին։ Ոյ՛ անզի տեսին, զի աս-
րիք, մովաբացիք, քանանացիք և այլք՝ որք պատե-
րազմաւ կամեցան նուաճել զնոսա՝ ի ծառայութի՛,
ինքեանք խորտակեցան, և զիսրայէլ զօրացուցին
աւարօք իւրեանց։ Ո՛չ ժողովուրդ երբայեցւոց
ազգ է սակն ամենի և քուռն պատերազմող, մինչ
զի եթէ և՝ ի նուաճութի՛ իւրեանց յանկարծ ուստ
ոք՝ ի նոցանէ գլուխ ամբարձեալ փող հարկանիցէ
՝ի կատար միոյ՝ ի լերանց, առ ժամայն գումարի
առ նովաւ ահաւոր բանակ պատերազմողաց։ Ոյ՛ սոն
այնորիկ խորհեցան այսպիսի ձանապարհաւ սպա-
ռել զնոսա. զի՝ ի ժամանակի վարելոյ և սերմա-
նելոյ զանդաստանս ո՛չ մերձենային առ նոսա. այլ
Թոյլ տային խաղաղութի՛ և անկասկած գործել
զգործ իւրեանց. և ապա՝ ի գարնան յորժամ սեր-
մանիքն բուսանէին և աճէին, հասանէին յերկիրն
իսրայէլի՝ ածելով զուզտս և զխաշինս, և զարշա-

իւրեանց իբրև զմարախ բազմութիւն, և զվրանս իւրեանց. և այնպէս ոտն առ ոտն յառաջ խաղացեալ, անցանէին զյորդանան, և հասանէին մինչև ցվերջին սահման երկրին իսրայէլի ցմուտս գազայ՝ ինքեանք և անասունք իւրեանց, և զգարուն և զամառն ողջոյն անդ անցուցանէին, սպառելով զամենայն վաստակս նոցա. իսկ յաշնան չու դարձի ածբարեալ, և անցեալ զյորդանան՝ երթային ձմերել յերկիրս իւրեանց։

Յայնժամ եբրայեցիք համարելով եթէ ազատեցան ի նոցանէ, անդրէն ձեռն ի գործ արկանէին ի մշակել զարտորայս և զայգիս իւրեանց. այլ յամին որ գալիսի՝ դառնային նոքա անդրէն առնել բազմութիւն և յանդգնագոյն խրոխտանօք քան զառաջինն։ Այնու ամբ եօթն, զի զայս ապականագործ երթևեկ առնէին նոքա անընդհատ. յորմէ տառապեալ եբրայեցիք յայն անձկութիւն հասին, մինչև եթէ փոքր մի ևս յերկարեալ էր, հարկ էր նոցա կամ աստ անդ ցրուիլ, և կամ առվալուկ կորնչիլ։ Այլ և այնպէս ահաբեկեալ ի նոցանէ, և նուաճեալ ի ծանրութիւն մեղաց իւրեանց, այնչափ նկուն էին, զի ոչ իշխէին քննաւխալտիլ, ոչ զկիրճս անցից փակել, և ոչ իւիք իրօք դիմակալել նոցա։ Այլ ինչ ոչ ինաց նոցա, բայց յերկինս առ Աստ բողոքել. որ և լուաւ աղաղակի նոցա, և առաքեաց առ նոսա մարգարէ. այլ թէ ուստի՞, և զինչ անուն նորա, չունիմք ի՞նչ գիրս։ Այդ՝ նա եկեալ յուշ արար նոցա զմեծամեծ բարերարութիւնս այ, զոր արար նոցա. և զնոցայն ամբարշտութիւն ընդդէմ բարերար Տեն այ իւրեանց. ապա առաքեաց Տէր և զհրեշտակ իւր առ այրն, յոյր ձեռն սահմանեալ էր փրկել զժողովուրդ իւր, ուսուցանել նմա զչեզնանակ փրկութիւնն։

Գ Լ. Լ.

Գեդէոն երկն ղծողովուրդն Իսրայէլի ՚ի ծառայութենէ
Մադիանացւոց։

Լ՚ը այր մի յերկրա քաղաք փոքր ՚ի վիճակի ժառանգութեան կիսոյ ցեղին Մանասէի՝ յայս կոյս յորդանանու, անուն նորա Գեդէոն որդի Յովասու իշխանի փոքու տոհմին եսրայ կամ աբիեզերայ. այր զգաստ՝ արի, աչալուրջ, հնարագէտ, և ձկմանբիտ ածապաշտ. զի ուր յովաս հայր նորա չինեալ սեղան բահաղու ՚ի փոքրիկ անտառի, պաշտէր զնա ինքն և քնակիչք քաղաքի իւրոյ, գեդէոն միշտ հաւատարիմ գտաւ առ ած. վասն այնորիկ և ած միշտ օգնական եղև նմա։ Ո՚ի յայն դառնագին ժամանակս մինչ այլք ՚ի յետին անձկութիւն տապալին, նա ունէր զբաւականն տան իւրոյ։ Այա յառաջ քան զանցանել մադիանացւոց զյորդանան և հասանել ՚ի կալուածս իւր, նախահայեաց զգուշութիւն ժողովէր զհունձս ՚ի կալ կամ ՚ի համբարանոց հօր իւրոյ յովասու, որ էր յանքոյթ ինչ տեղի առ կաղնեաւ, առ ՚ի փախուցանել յերեսաց մադիանացւոց։

Յաւուր միում մինչ ծեծէր անդ ցորեան, յանկարծ լիճն եկն եկաց ընդ կաղնեաւն հրեշտակ ՚ետն. և ողջոյն տուեալ նմա ասէ. Տէր ընդ քեզ՝ այր հզօր զօրութիւն։ Գեդէոն առանց քնաւ խռովելոյ ընդ յանկարծադէպ տեսիլ առնն անծանօթի, ասէ. աղաչեմ ՚ձեր՝ ասել, զիարդ իցէ ՚ձեր ընդ մեզ, որովհետև յայսպիսի անձկութիւնս և ՚ի տառապանս գտանիմք պաշարեալ. ո՞ւր են աքանչելիք նորա՝ զոր պատմեցին մեզ հարքն մեր. յորժամ եղև ընդ նոսա, ազատեաց զնոսա յեդիպտոսէ. իսկ այժմ զի Թողու զմեզ ՚ի ձեռս մադիանացւոց, նշան է Թէ ոչ ևս է ընդ մեզ, այլ մերժեալ զմեզ յերեսաց իւ-

րոց։ Ընդ այս պատասխանի, որ ցուցանէր հաւատ անդրդուելի, և յոյս հաստատուն ՚ի կարողութիւն ՚ոյ, հաճեցաւ հրեշտակն. և հայեցեալ քաղցրութիւնբ յերեսս գեղէնի, ասէ ցնա. տիրապետ քաջ գտի զքեզ, զի քաջ ծանեար յորմէ՛ եւ զօրութիւն՝ գնելով զայն յոյժ միայն. և արդ ա՛ղէ պլինդ պահէա զոյդ մտածութիւն, և զօրութիւնբդ քով այդուիկ գնասցես և փրկեսցես զհօրդայէլ ՚ի ձեռաց մոդխանացւոց. ո՛չ ապաքէն ես եմ որ առաքեմ զքեզ։ Այլ գեղէոն առ սուղ ինչ պաշարեալ՝ ոչ իշխելով յանձն առնուլ զգործառնութիւնն զայն մեծ. քանզի քաջ տեսանէր, զի տուն նորա առ համեմատութիբ տանց այլոց իշխանաց ցեղին մանասէի փոքր ինչ էր և անշուք. և ինքն կրսեր ՚ի տան հօր իւրոյ. նմին իրի ոչ կարէր հաւատալ թէ հնազանդեսցին նմա ոչ միայն համազգայինք, այլ և ոչ իսկ իւր համահայր եղբարբք։ Վասն զի կաթող էր ՚ոճ տալ նմա յաղթութիւն ՚ի վերայ թշնամեաց և առանց նոցին օգնականութե. բայց ոչ գիտէր թէ ո՛վ է որ խօսի ընդ նմա. ձանձրէր զնա իբր զերմարդկային ումն, այլ ոչ գիտէր թէ հրեշտակ էր ՚ոճ մարդ արէ. և ո՛չ թէ յիւրմէ՝ արդեօք խօսի, եթէ ՚ի դիմաց ՚ոյ. տեսանէր զի իշխանութիբ ինն խօսէր, որ ՚ոյ ամենաճն և եթ է սեպհական, բայց երկնչէր ՚ի խաբէութէ, գիտելով զի ոչ ամենայն այսպիսի երևմունք ՚ի ձշմարիտ ՚ոյ են։ Վասն այնորիկ անկեղծ պարզմտութեամբ խնդրեաց ՚ի հրեշտակէն տալ նմա նշան, և յայտնել զանձն թէ ո՞վ էցէ. միանգամայն կամեցեալ իբրև հիւր նորոդ հասեալ՝ կերակրով մեծարել զնա վասն այնպիսի ուրախարար աւետեաց, աղաչէ զնա չգնալ, այլ մնալ անդ՝ մինչև պատրաստեսցէ նմա ընդան։

Ասա գեղէոն ՚ի կիր արկանել զբաւոդ ըստ, երթայեցերէն ինձ. որ սովորաբար նշանակէ զզօ որ ՚ոյ մատուցանի. բայց բազում անգամ նոյն բառ դնի ՚ի ՚ոճ գիրս և փոխանակ ընծայից և պարգևաց, զոր բազումք երթ մարդ մանեն և պապակ ՚ի նոյն

միտս։ Ա՛նգլի յայտնի է՝ ի կարգէ պատմութենն, զի միտք գեդէոնի չէր զոհ մատուցանել, ապա թէ ոչ՝ ոչ արդեօք եփէր զուրն յառաջագոյն, այլ ըստ օրինաց՝ կենդանի ածէր և անդ զենոյր և հանէր ի սեղան, և դնէր փայտ և հուր. Թո՛ղ զի և ոչ խակ լիով ձանաչէր զնա իբրև հրեշտակ յերկնից եկեալ. ապա թէ ոչ՝ ոչ պատրաստէր նմա սեղան. և առաւել ոչ մատուցանէր զոհ. որ ՚ի միայն վայելէ, որ ՚ից է կենաց և մահու։ Ա՛յլ որպէս երևի՝ զառաջինն համարեցաւ զնա լինել մարգարէ, կամ այլ ոք այր յ՚ից առաքեալ, յայն սակս կամեցաւ կերակրով պատուել զնա. և հրեշտակն զի-ջանելով նմա՝ խոստացաւ մնալ անդ, մինչև դառնայցէ։ Ա՛յս խոստումն էր սկիզբն նշանի, յորմէ կարէր գեդէոն ակնուանել ՚ի վերայ հասանել ձշմարտութենէ. զի թէ երևեալն այն մեկնէր անտի յառաջ քան զդարձ նորա, յայտնի լինէր խաբէութիւն. քանզի որպէս ՚ից է անսուտ, նոյնպէս և հրեշտակ յ՚ից առաքեալ ոչ կարէ ստել. իսկ եթէ ըստ խոստմանն սպասէր անդ, նշան էր թէ կամի յայտնել լինչ նմա։

Ա՛պա փութացաւ հասոյց ուլ մի փափուկ, և բաղարջ. և եդեալ զմին ՚ի վերայ խանի, և զարդանակ նորա ՚ի պուտան, եբեր առաջի հրեշտակին, որ մնայր նմա ընդ կաղնեաւն։ Ա՛սաց նմա հրեշտակն՝ դնել զմիսն և զբաղարջն ՚ի վերայ վիմին, որ կայր անդ մօտ. և հեղուլ զարդանակն ՚ի վերայ մսոյն և հացին. զոր իբրև արար՝ մերձեցոյց հրեշտակն զծայր գաւազանին որ ՚ի ձեռին իւրում ՚ի միսն և ՚ի բաղարջն, և նոյն հետայն ել հուր ՚ի վիմէ անտի, և ծախեաց զայն ամենայն, և հրեշտակն եղև աներևոյթ։ Յայնժամ գիտաց գեդէոն, զի երևեալն որ խօսեցաւ ընդ նմա՝ էր հրեշտակ ՚ից, վասն որոյ և զահի հարեալ՝ համարելով թէ անդէն մեռանիցի, աղաղակեաց, վա՛յ ինձ ՚ից ՚ից, զի տեսի զհրեշտակն ՚ից դէմ յանդիման, և ահա մեռանիցիմ։ Ա՛նգլի ընդ այն ժամանակս զօրացեալ էր այս կարծիք առ ոամիկս, թէ որ տե-

սանէ զՀրեշտակ տէն , վաղվաղակի մեռանի . Թէ-
և այս պատճառս տեսեալ ՚ի բանէ անտի , որ ասի ՚ի
գիրս ելից . կԳ . 20 . * Ոչ տեսանէ մարդ զերեսս
իմ , և ապրի ‖ : Այլ Հրեշտակն , որ տակաւին անդ-
էր յանեղևոյթս , ՚ի բարբառ զգալի քաջալերեաց
զնա՝ ասելով . * Ա՛ի երկնչիր , ո՛չ մեռանիցիս ‖ :
Եւ այսպէս գեդէոն կացուցաւ առ յոյժ իշխան ժո-
ղովրդեան իւրոյ փրկել զնոսա :

Այլ քանզի յառաջ քան զձեռնարկել ՚ի մարտ
ընդդէմ Թշնամեաց , պարտ էր քակել զսեղանն
բահաղու , զոր էր շինեալ յովասու հօր գեդէոնի ,
և առ նովաւ տնկեալ անտառ փոքրիկ նուիրեալ
բահաղու , որ և էր խոչընդոտն և գայթակղութի՛ն
բնակչաց տեղւոյն , ՚ի գիշերին յայնմիկ հրամայեաց
Աստ գեդէոնի կործանել զսեղանն , և զկուռսն խորտա-
կել , և զանտառն կոտորել . և ՚ի վերայ նախա-
պրեալ վիմին , ուր եդ զմիսն և զբաղարջն՝ որ ծա-
խեցաւ ՚ի Հրեշտակէն , շինել սեղան տէն տոյ , և
դնել ՚ի վերայ զփայտ անտառին կոտորելոյ . և
առեալ զեզն պարարակ հօր իւրոյ , և զեզն երկ-
րորդ եօթնամեան՝ ՚ի նշանակ եօթնամեան ծա-
ռայութե՛ն մադիանացւոց , զենուլ և հանել ՚ի սե-
ղան ՚ի վերայ փայտակուտին , և այրել Հրով յող-
ջակէզ տէն : Արկեաւ գեդէոն առնել զայն ՚ի
տուէ , գուցէ զժողովուրդ տեղւոյն բռվանդակ յա-
րուցանիցէ ՚ի վերայ անձին , և խափանումն առնի-
ցեն գործոյն . նմին իրի մնաց մինչև ցխաւար պի-
շերոյ , յորում ամենեքեան ՚ի քուն էին : Եւ յայնժամ
առեալ երեքտասան այր ՚ի ծառայից իւրոց , որք
ոչինչ խղձէին ՚ի կռոց բահաղու , կոտորեաց նո-
քօք զանտառն , քակեաց զսեղանն և խորտակեաց
զկուռսն . և կանգնեաց սեղան՝ զոր կոչեաց խաղա-
ղութի՛ւն . և զերկու եզինս եհան ողջակէզ տէն տոյ :
Գեդէոն ոչ էր զևտացի , և ոչ ՚ի կարգէ քահա-
նայութե՛ն , որոց ևեթ անկ էր ըստ օրինաց ողջա-
կէզս մատուցանել . այլ տա՛ծ որ եդ զօրինս քահա-
նայութե՛ն , ինքն ոչ էր ընդ օրինօքն ընդ այնուիկ ,
ուստի և առանձին տնտեսութե՛ն ընտրհեաց զայն

գեդէոնի . որպէս յետ այնորիկ և այլոց քաջ-
մաց :

Եւ՝ իբրև յարեան ընդ առաւօտն արք քաղա-
քին , և տեսին զսեղանն բահաղու կործանեալ , և
զանտառն որ առ նովաւ կոտորեալ , և զեզն պա-
րարակ հանեալ ողջակէզ ՚ի սեղանն նորոգ կանգ-
նեալ , ամբոխ մեծ յարուցին , և խնդրէին թէ ո՞
արար զայն : Եւայց չէղեն պիտք յերկար խուզողու-
թէ . քանզի գիտակ իսկ էին , զի գեդէոն ոչ եր-
բեք ծուներ խոնարհեցոյց բահաղու , և ոչ իսկ մա-
տոյց նմա երբէք նուէրս , այլ միշտ գարշէր և խոր-
շէր ՚ի նմանէ : Եւ ասեն որոյ ամենեցուն հաստա-
տեալ զմիտս իւրեանց ՚ի վերայ նորա , խումբ կազ-
մեցին դիմեցին առ յովաս հայր նորա , և խնդրէին
տալ զգեդէոն ՚ի ձեռս իւրեանց , զի սպանցեն զնա :
Եւ յովաս՝ որ սիրէր զորդի իւր , և որպէս երևի՝
արդէն և ինքն տաղտկացեալ էր ՚ի կռոց անտի ,
զոր Թերևս առ աչս ևէթ խաժամուժ ռամկին
պաշտէր , և ոչ ՚ի սրտէ , եկաց պաշտպան որդւոյ
իւրում իշխանութիւն , իբր զի իշխան էր տեղւոյն ,
և հանձարեղ փաստիւք . ընդդէմ է ասէ ձեզ վրէժ-
խնդիր լինել վասն բահաղու . մի՛թէ բահաղ՝ որ
հզօրն է և տէրէ ամենայնի , որպէս անուանն իսկ
իւր համարի ցուցանել , ձերո՞ւմդ օգնութիւն կարօտ
իցէ առ ապրեցուցանել զանձն , կամ զինքնասպարտ
իւր պատուհասել . ո՞չ ապաքէն այդու անարգիք
զնա , իբր ապիկար անզօր և անգէտ . եթէ ՚ած է ,
թողի՛ք՝ զի ինքն խնդրեսցէ զվրէժ անձին իւրոյ ,
ոչ ապրեցուցանելով զինքնասպարտ իւր մինչև ցառա-
ւօտ : Եւ յայսմ բանիւք զինջոյց զմնեղգնութիւն
անմիտ ամբոխին . որք և ՚ի գործոյ անտի կոչեցին
զգեդէոն Յերոբաաղ . այն է՝ պատերազմող կամ
դատիչ և դատապարտիչ բահաղու :

Եւ ևս ոչ սակաւ օգնեաց ՚ի հանդարտեցու-
ցանել զամբոխն լուր գումարելոյ ՚ի միասին մա-
դիանացւոց և ամաղեկացւոց և ամենայն արևել-
եայց , և բանակելոյ նոցա ՚ի հովիտն յեզրայելի ,
որ է յետոյս լերանցն գեղբուայ ՚ի հիւսիսակողմն՝

ոչինչ բացագոյն յերփրայ քան որչափ երկու չոր զինուորական դնդից։ Յայնմ վայրի հոգի ՚ին զոբացոյց զդեդէոն, և ետ նմա զոգի առաքինորդական. վասն որոյ իսկ և իսկ փող եհար եղջերաւն ազդ առնելով ելանել ՚ի մարտ ընդդէմ Թշնամեաց. կոչեաց զտոհմն աբիեզերայ, յորմէ էր և ինքն. և արձակեաց հրեշտակս առ ցեղս մնասակս, ասելոյ, զաքուղոնի, և նեփթաղիմայ, և ամենեքեան զնն առեալ՝ գումարեցան առ նա։ Օ՛ սոսա ևեթ կոչեաց, և ոչ զայլ ցեղս, զի վիճակ սոցա գոլով ՚ի հիւսիսակողմն հանդէպ Թշնամեաց, առաւել քան զայլս կայնն ՚ի վտանգի. զի ՚ի յորդել յորձանացն մադիանացւոց՝ նախ զերկիր նոցա ունէին հեղեղել. վասն որոյ և առաւել յօժարափոյթ ընթացան նայնին լինել անձնատուր գեդէոնի. ապա և այլ ցեղք որք հեռի էին ՚ի Թշնամեաց, լուեալ եթէ այսչափ զօրք գումարեալ են առ նա, գուցէ և ինքեանք յորդորեսցին ինքնակամ գալ յօգնութի։

Այլ յառաջ քան զձեռնարկել ՚ի գործ պատերազմի, խնդրեաց գեդէոն ՚ի ՚ինէ նոր նշանաց հաստատել զնոստուծին իւր՝ զոր խոստացաւ ձեռամբ իւրով փրկել զիսրայէլ։ Այս ասէ գնեմ յերեկոյիս գգաթ մի ասուի ՚ի կալ. եթէ իջանիցէ անձրեւ ՚ի վերայ գգաթուն միայնոյ, և շուրջ զնովաւ ցամաքութի եղիցի ամենայն երկրի, գիտացից եթէ փրկեսցես ձեռամբ իմով զիսրայէլ, որպէս խօսեցար։ Կատարեաց ՚ին զինդիր նորա. զի կանխեալ գեդէոնի ընդ առաւօտն՝ ետես զգեաւինն ցամաք. և զգգաթն այնչափ ջրալից, զի ՚ի քամել նորա զայն՝ լցաւ կոնք մի ջրով։

Դարձեալ յաղերս մնատուցեալ առ ՚ին՝ խընդրեաց միւս ևս նշան ՚ի վերայ գգաթուն, որպէս զի գգաթն եղեալ ՚ի բացի, մնասցէ ցամաք, և գեաւինն շուրջ զնովաւ անձրևալից. իսկ ՚ին որ գիտէր՝ զի խնդրեր նա զնշանս անկեղծ սրտիւ, ոչ վասն ընդվայրաքննութե, և ՚ի թերահաւատութե համ երկմտութե սակս, այլ ՚ի քաջալերութե զօրացն իւրոց, այս անգամ ևս հաճեցոյց զնա. զի

ինայց գգաշեն ցամաք, և երկիրն շուրջ նովաւ ջրո-
ղող։ Այս վաղվաղակի առեալ նորա զգեստս՝ խա-
ղաց նոքօք առ աղբիւրն արեգայ, որ անկանի ՚ի
հարաւակողմն լերանցն գեղբուայ. և անդ հանդէս
արարեալ նոցա՝ գտան երեսուն և երկու հասակ։

Այսքա առ համեմատութիւն անթիւ բազմութիւն
թշնամեացն՝ սակաւ էին. բայց առ ՚ի՛ծ բազում քան
զչափն համարեցան. քանզի կամէր ՚ի՛ծ, զի ամե-
նայն իսրայէլ գյաղթութիւնն ծանիցէ գործ իւրոյ
բարերարութիւնէ, և ո՛չ զօրութիւնէ բազկի իւրեանց։
Այս է ասելն և սէյն եղիշէի. * Կարի բազում
են զօրքդ՝ ասէ ՚ի՛ծ ցգեդէոն. յորժամ պատերազ-
մին յաղթես, մուռանաս զիմ բարերարութիւնս. որ-
պէս սովոր էին առաջինն հարքն ձեր ‖։ Այսան այ-
նորիկ հրամայեաց գեդէոնի պատուիրել ժողովըր-
դեան, զի որ ոք ելցէ վատասիրտ և երկչոտ՝ դարձ-
ցի յետս. այս պատուէր՝ որպէս երևի՝ բազմաց
եղև ախորժալուր, զի դարձան քսան և երկու հա-
զար. և մնացին տասն հազարք ևեթ։ Այայց և այն
թիւ առաւել էր քան զոր կամէր ՚ի՛ծ. նմին իրի
ասաց ցգեդէոն՝ իջուցանել զնոսա ՚ի ջուրն, որ-
կամ հեղեղատն կիսոնի, կամ այլ ինչ փոքրիկ
գետ, որ ելեալ ՚ի լեռնէն յեզրայելի, գնայր իջա-
նէր ՚ի նոյն հեղեղատ կիսոնի յարևմտեան կողմն
նորա։ Իբրև հասին նոքա ՚ի ջուր սմանդր՝ գոլով
ամենեցուն պասքեալ ՚ի ծարաւոյ, սիրեցան ընդ
երկայն առ գետակաւն ըմպել ջուր. իսկ գեդէոն
ըստ նշանացն զոր տուեալ էր նմա ՚ի՛ծ՝ գետակն
կալեալ գիտէր մի մի զամենեսեան, թէ զիա՛րդ ըմ-
պեն. ապա ըստ հրամանի ՚ի՛ն՝ զնոսա որք ափուլ
իւրեանց առեալ զջուր լափէին անտի լեզուաւ
իբրև զշունս, որոշեաց մեկուսի ՚ի նոցանէ՝ որք
անկեալ ՚ի վերայ ծնկացս և զերեսս ՚ի ջուր անդր
մխեալ ըմպէին։ Այսքա յետինքս եղեն ինն հազար
և եօթն հարիւր, զորս արձակեաց երթալ ՚ի
վրանս յիւրաքանչիւր տեղիս իւրեանց. և զերեք
հարիւրսն ևեթ կալաւ գեդէոն ընդ իւր. որով
բարձեալ զպաշար յուս իւրեանց, և զսուր յաղեր,

և զփող եղջերեայ, և ջահ փակեալ ՚ի սափոր խեցեղէն ՚ի ձեռս՝ պատրաստեցան անկանիլ ՚ի վերոյ Թշնամեաց։

Այլ ՚ի գիշերին յայնմիկ քաջալերեալ գեդէոնի առ յոյժ, և ըստ հրամանի նորա առեալ ընդ իւր զպատանեակն կոչեցեալ փարա, էջ մերձեցաւ ՚ի մասն ինչ բանակին մադիանացւոց. որք էին բանակեալ ՚ի գաբաաթամ ՚ի ծործորան իբրև զաւազ առ եզերբ ծովու բազմութիւն. և լսէր՝ զի մի ոմն ՚ի զինուորաց պատմէր ընկերին զերազ իւր վասն գարեղէն նկանակի, որ հոլովեալ ՚ի բանակ անդը իւրեանց՝ եհար և կործանեաց զխորանս մադիանացւոց. որուհետ պատասխանի ընկեր նորա, Թէ նկանակն այն է սուրն գեդէոնի որդւոյ յովասու. զի մատնեաց ած ՚ի ձեռս նորա զմադիամ և զամենայն բանակն։ Իբրեւ լուաւ երազին համանայն գտաւ ակնկալութիւնն գեդէոնի. վասն որոյ երկրպագեալ նորա ետն, դարձաւ վաղվաղակի ՚ի բանակն իւր. և պատմեալ զիրան զօրաց իւրոց՝ բաժանեաց զնոսա յերիս առաջս, պատուիրելով հայել ՚ի նա, և զոր ինքն առնիցէ՝ զնոյն արասցեն և նոքա. և առ առաւել զարհուրեցուցանելոյ զթշնամիս՝ ՚ի հարկանել զփողս աղաղակեսցեն ամենեքին, սուր տեառն և գեդէոնի։

Այլ զի բանակ մադիանացւոց ոչ էր իբր գունդ զօրաց կարգեալ ՚ի Չակատամարտ, քան Թէ իբր հաւաքումն բազմամբոխ գողոց և աւազակաց եկեալ ՚ի գողանալ և ՚ի կողոպտել, նմին իրի հարկաւոր կանոնք պատերազմի ոչ պահէին ՚ի նոսա։ Այր հասարակ գիշեր յորժամ եմուտ գեդէոն և հարիւր այր ընդ նմա ՚ի կողմն մի բանակի նոցա, և ահա ամենեքեան ննջէին ՚ի քուն խորին, մինչ նաև պահապանքն իսկ. զոր պատուիրեալ գեդէոն ինքնին հարկեցաւ զարթուցանել, որպէս զի ՚ի դէպ յաջողեսցին հնարքն զոր խորհեցաւ առնել։ Յայնժամ ապա սկսան երեքին առաջքն խաղալ, որք կարգեալ կային յարեւմտեան կողմն շուրջ զբանակաւն մադիանացւոց՝ հարկանել զփողս եղջերեայս, օրինակ

առեալ ՚ի գեղէոնէ, և բաղխեալ ընդ միմեանս զսափորս և խորտակել, և զջահս փակեալս ՚ի նոսա երևեցուցանել, և բարձրաձայն աղաղակել, սուր ՚ին և գեղէոնի։ Զառաչիւն խորտակման սափորոցն Թուէր իբր շաչիւն զինուց պատերազմողաց, և շարժումն լուսոյ ջահիւք՝ զծառս, զթուփս և զքարինս երևեցուցանէր իբրու շարժումն զօրաց շահատակելոց, և զշրջակայ լերինս իբր ծածկեալս ՚ի բանակաց։ Այսպս ահաւոր խառնաձայն շառաչմանէ զարթուցեալ մադիանացւոց լի արհաւրօք, միանգամայն և սակս խաւարային գիշերոյ ոչ կարելով նշմարել ինչ, համարեին զՔշնամին հասեալ ՚ի վրանս իւրեանց. ուստի և կամեցեալ այր իւրաքանչիւր պաշտպանել անձին իւրում՝ հարկանէր զմի և զտանէրն. և այնպէս սկսան զմիմեանս կոտորել, և հեղեղս արեան գործել ՚ի բանակի անդ իւրեանց։ Մինչ երեքհարիւր զօրքն իսրայէլի կայլին անդ ՚ի շնին՝ փոխան զինուց ջահիւք և եղջերեայ փողօք մրցելով։ Այս հարուստ մի կոտորելոյ զմիմեանս՝ այն ինչ առաւօտն մերկանայր, ամենայն բանակն մադիանացւոց, և այլոյ ընդ նոսա միաբանելոց ՚ի փախուստ դարձան։

Այնժամ որդիք սաերայ և նեփթաղիմայ և մանասէի՝ զորս դարձոյց գեղէոն ՚ի տեղիս իւրեանց, տեսեալ ՚ի գլխոյ լերանց զբանակեալ Քշնամւոյն լի դիակամբ, առ հասարակ խրախոյս բարձեալ մտին զՔտ փախստէից ընդ ձանապարհս լերանց. և գեղէոն հրեշտակս արձակեալ յամենայն սահմանս եփրեմայ՝ իջանել ՚ի լերանց իւրեանց ընդ առաջ փախստէից, և ունել զկիրճս ջրոցն և զհունն յորդանանու մինչև ցբեթփարա, զի մի ընդ այն կարիցեն ապրեցուցանել զանձինս. իսկ ինքն ընդ իւրոց երից հարիւրոց պնդեցաւ զՔտ նոցա ուղիղ ընդ ծործորս յեզրայէլի մինչև ցվերին յորդանան ընդ մէջ բեթփարայ և բեթաբետայ։ Եւ այսպէս յամենայն կողմանց պաշարեցան փախստեայքն. յաջմէ ունելով զլերինս գեղբուայ, ընդ որ իջանէին զօրք երից նախապրեալ

յեղեց Իսրայէլ. ՚ի ձախմէ զՀեղեզաան կիսոնի. յառաջոյ զՅորդանան, իսկ ՚ի Թիկանց զգեդէոն, որ ոչ ևս պատերազմէր եղջերեայ փողով, այլ ՚ի սայր սուսերի կոտորելով զթշնամին մինչ ՚ի բեթասետա. ուր մադիանացիք խոտորեցան յաջակողմն մինչև ցդաշն աբեղմաուղայ, ուստի ակն ունէին անցանել զստորին Յորդանան, և գտանել Հանապարհ անկանելոց յերկիր Իբրեանց: Եւ ոչ յաջողեցաւ. քանզի որդիք եփրեմայ աՀասպարեալ կային զառաջս նոցա, և յարձակեալ ՚ի վերայ սակաւաթիւ գնդի նոցա մնացելոց, անդէն սպառեցին և զնոսա. և զերկու իշխանս նոցա զոմբեբ և զզեբ կալեալ կենդանի, Հատին զզլուխս նոցա ՚ի զանազան տեղիս ուր կային զօղեալ. զգլուխ որեբայ ՚ի քարանձաւի, որ յայնմանէ կոչեցաւ վէմ որեբայ. (՚ի մեզ՝ սոլը որեբայ.) իսկ զգլուխ զեբայ ՚ի գուբ հնձանի. յորմէ անուանեցաւ հնձան զեբայ. (՚ի մեզ՝ յակէբ զեբայ. պահելով մերոց Թարգմանչաց ըստ եօԹանասնից յերկոսին տեղիս զբառս բնագրին եբրայեցւոց):

Իսկ փախստականք արևելեայց կալան ուղիղ Հանապարհ ՚ի յորդանան. ընդ որ յաջողեցաւ նոցա անցանել առ բեԹասետաւ, մերձ ՚ի տեղին՝ ուր յորդանան մտանէ ՚ի ծովակն գեննեսարեԹայ: Քանզի երեք Հարիւր զօրք գեդէոնի այնչափ վաստակեալ և պարտասեալ էին, մինչև չմնալ ՚ի նոսա զօրութիւն և ևս հետամուտ լինել նոցա: Բայց և նոքա ոչ ապրեցան, որք էին հնգետասան Հազարք եւԹ մնացեալք ՚ի Հարիւր և յերեսուն և Հինգ Հազար արանց սուսերամերկաց որդւոց արևելից. զօրագլուխս նոցա էին երկու իշխանք մադիանացիք. անուն միոյն զեբէի, և երկրորդին սաղմանայ. որոց հնգետասան Հազարօք անցեալ զՅորդանան, Համարէին զանձինս յապահովի. զի ոչ կարծէին ԹԷ գեդէոն յետ խորտակելոյ գրեԹէ զամենայն բանակ իբրեանց, փոյթ ինչ ունիցի զնոցանէ իբրև զսակաւաւորաց. և զայն ոչ գիտէին, եԹէ նա Հաստատեալ էր ՚ի մտի՝ ոչ կասիլ ՚ի կո-

առրելոյ , ցորչափ գտանիցէ զոք ՚ի թշնամեաց անառի , ուձեռնուլ իւր օգնական զնա : Այս միայն ծանր էր նմա , զի սպառեալ էր պաշար զինուորակցաց իւրոց , և էին աչխատեալ և նեղեալ ՚ի քաղցոյ . սակայն և այնպէս էանց զյորդանան . և փոխանակ դիմելոյ ՚ի յաջակողմն ընդ արևելս ՚ի նաբատ և նաբէ , ուր նստէր յանհոգս բանսարկն հնդետասան հազարաց փախստէից , խոտորեցաւ փոքր մի ՚ի ձախակողմն առ ՚ի տանել կերակուր զօրաց իւրոց ՚ի սոքքովթ . որպէս զի կարիցէ պնդիլ զհետ գնթեի և սաղմանայ իշխանացն մադիամու , և նոքօք կնքել զյաղթութիւնն բոլոր մասամբք կատարեալ :

Այլ փոխանակ հայի՝ խիստ և տմարդի պատասխանի ընկալեալ յիշխանացն սոքքովթայ , էանց անտի յաշտարակն փանուէլայ զնոյն խնդրել . բայց և ՚ի նոցանէ նոյնօրինակ պատասխանի ընկալեալ , ելթող առ ժամն զնոսա հանդերձ սպառնալեօք ՚ի դարձի իւրում հատուցանել զարժանահաս պատիժ տմարդութեանն նոցա . զի ոչ կամեցաւ կորուսանել անդ ժամանակ , և փախուցանել ՚ի ձեռաց զթշնամին : Զմին իրի դարձոյց վաղվաղակի զգօրս իւր ՚ի նոսա . և մինչ նոքա յանհոգս կային՝ չունելով ուստեք կասկած , յեղակարծումն հասեալ ՚ի վերայ՝ եհար զբանակ նոցա . և ՚ի փախչիլ զեբեի և սաղմանայ , սնդեցաւ զհետ նոցա , և ձերբակալ արարեալ զնոսա , դարձաւ ՚ի զառ ՚ի վայրն անտի արեսայ ուղիղ ՚ի սոքքովթ : Այլ յառաջ քան զմտանել ՚ի քաղաք անդր , կալաւ պատանեակ մի ՚ի սոքքովթացւոց անտի , և առեալ գրով ՚ի նմանէ զանուանս էօթանասունն և էօթն իշխանացն սոքքովթայ , էմուտ ՚ի քաղաքն . և կոչեալ զառաջեաւ զնոսա էցոյց նոցա զզեբեէ և զսաղմանայ , վասն որոյ նախատեալ էին զնա իբր անկարօղ առնել ինչ նոցա , ասելով , միթէ ՚ի ձեռին քո՞մ ունիցիս զզեբեէ և զսաղմանայ , զի տացուք հայ զօրականիդ քումմ . և ետ բերել փուշս դժնդակս յանապատէ . (զոր նշանակէ բառդ եբրայական բորկոնիմ . ըստ նոցա պա-

քէքինիմ.) և տարածեալ ՚ի վերայ զդատապարտեալսն, եւ հարկանել զնոսա սայրասուր փշովք այնչափ՝ մինչև քանցեալ զամենայն մարմին նոցա, և այնպէս դառնամահ կորոյս զնոսա. բայց խնայեաց ՚ի սոսկական ժողովուրդն, որք Թերևս չունէին մեղս լինչ յայն անիրաւ գործ իշխանացն։

Ոնոյն հատոյց և բնակչացն փանուէլայ. զի առեալ զքաղաք նոցա՝ կործանեաց զաշտարակն, և քակեաց զամենայն ամրութիւն քաղաքին, և զարան որ ՚ի նմա կոտորեաց. Թուի Թէ զգլխաւորսն և էթ, յորոց ՚ի ձեռս էր տնտեսութիւն քաղաքին. որպէս ասէր ՚ի սոքքովէթ։ Նոնակիչք երկուց տեղեացս էին իսրայէլացիք. ապա Թէ ոչ՝ էթէ յայլազգեաց անտի լինէին, ոչ արդեօք խնդրէր գեդէոն ՚ի նոցանէ կերակուր զօրականի իւրում առ ՚ի մարանչիլ ընդդէմ միացորդաց մադիանացւոց. ընդ որս յայնժամ էին միաբանեալ համօրէն այլազգիք որք ՚ի կողմանան յայնոսիկ։ Աստի յայտ է՝ զի բնակիչք տեղւոյն էբրայեցիք պարտապան էին ըստ կարի իւրեանց օգնել գեդէոնի օրինաւոր իշխանի իւրեանց և զօրաց նորա, որք եդին զանձինս ՚ի վտանգ կենաց վասն փրկութեան համօրէն ազգին։ Նոքա ոչ միայն չկամեցան տալ զկարևոր պարէնն զօրաց յայնմ անձկութեան ժամու, այլև յանդգնեցան նախատինս և դնել իշխանի իւրեանց. նմին իրի ըստ իրաւանց պատերազմի՝ իբր սպառոտամբք արժանի էին մահու։ Եւ այսպէս որք ոչն կամեցան տալ սակաւ մի հաց, ետուն ձապաղիս յորդահոս արեան. անմիտ է՝ որ ոչ գիտէ ընդրկս մատուցանել զինուորաց, յորժամ կարօտ գոլով նոքա բազմաց՝ սակաւուք շատանան. և անխոհեմութեամբ մեծ է զլանալ զսակաւն այնմ, որ ունելով սուր ՚ի ձեռին, կարօղ է առնուլ զբոլորն. որպէս յայտ է ՚ի նաբաղ և ՚ի դաւիթ։

Ի վճարիլ այսր ամենայնի յաջողութիւնք, այն ինչ համարէր գեդէոն՝ եթէ գլխաւորեալ իցէ ամենայն ձիգն պատերազմական աշխատութեանց՝ որդիք եփրեմի անցեալ զյորդանան՝ եկին հասին առ նա, ունե-

լով ցցեալ ՚ի նիզակս զգլուխս երկուց իշխանացդ մադիանացւոց ոմիցեքայ և զեբայ. բայց եկիր ոչ իբր հնազանդեալք առ զօրագլուխ իւրեանց ՚ի խնդակցութիւն, այլ իբր ապստամբք, և խօսեցան յանդուգն հպարտութիւն, թէ ընդէր ՚ի սկզբան անդ յորժամ կարգեցաւ յոյց զօրագլուխս տալ պատերազմ ընդ մադիանացիս՝ ոչ յայտնեաց նոցա զխորհուրդ իւր և ոչ կոչեաց զնոսա, որք առաւել մծտ էին նմա և մերձաւորագոյն ցեղին մանասէի, քան զզաբուղոն զասեր և զնեփեթաղիմ. այլ յայնժամ միայն ազդ արար նոցա, մինչ մերձ ՚ի կատարումն հասեալ էր պատերազմ, յորժամ հարկ եղև ունել զանոս յորդանանու, և հարկանել զսակաւաթիւ մնացորդս փախստականաց, որով ինքեանք ոչ կարացին՝ որպէս կամէին՝ յուցանել զքաջութիւն իւրեանց ՚ի պաշտպանութիւնս ազգին. և այսպէս սաստկագոյնս վիճէին ընդ նմա, մինչ փոքր միւս ևս նոր ներքին պատերազմ յարուցանել։ Ասէ գեդէոն իմաստուն խորհրդով կամեցեալ խափանել զչարն, և զկնճռացանել զնոսա, արար պատասխանի՝ ոչ ըստ յանդգնութեանն նոցա, այլ ամենայն քաղցրութեամբ, միանգամայն և գովելով զքաջութիւնն նոցա. արդ զի՞նչ ինչ ասէ արարի իբրև զձեզ. ոչ սպսպէին լաւագոյն է ձռաքաղութիւնդ եփրեմի, քան զկութան աբիեզերայ. իբր ասել, քաջութի՛ն ձեր զոր արարիք բմբռնելով և սպանանելով զզորեբ և զզէբ և զզևրս որ ընդ նոսա, առաւել է քան ըամենայն զոր ինչ եաս ընդ զօրականիս իմում արարի. իմ գործ թէպէտև առ աչս մեծագոյն երևի, բայց իրօք փոքր է քան զձերդ քաջագործուն. զորոյ ապացոյց ահա տեսանեմ ՚ի ձեռս ձեր։

Մանք զայս պատասխանի գեդէոնի յայլ միտս իմանան. իբր զի ասեն՝ թէ ծրտունջ որդւոց եփրեմայ ոչ էր չաղագս փառաց յաղթութե՛ն, այլ սակս շահասիրութե՛ն առաւելագոյն աւարաց ցանկացեալ. բայց ամաչելով զայն յառաջ բերել՝ զփոյթ իւրեանց ՚ի վերայ ազգին առն պատրուակ. զոր գիտելով գեդէոնի՝ ոչ հայեցաւ ՚ի բանս լեզուի նոցա, այլ

'ի ցանկութէն սրտի. ուսաի և եթող նոցա զամենայն աւար և զկողոպուտ երկուց իշխանացն և զոքաց նոցա՝ զորս սպանին. բայց զի մի՛ շահախնդիրս երևեցուսցէ զնոսա, բազում խոհեմութիւք խօսեցաւ առ նոսա, իբր առ ոչինչ ցուցեալ զբան աւարացն, զորմէ վիճել իսկ չէ արժան, այլ իբրև հարևանցի լինի յիշելով զայն՝ եցոյց թէ առաւել հարստաստ է աւար նոցա, քան զկուրն. զի՞նչ ինչ ասէ ստացայ ես առ համեմատութիւք ձերով. ո՞չ ապաքէն առաւել է մի ձիուն ձեր, քան զամենայն կուռս իմ. զի ձեզ պարգևեաց Աստ զամենայն կողոպուտ ովքերայ և զերայ. առ որով սակաւ ինչ են իմ աւարք: Տեսեալ որդւոց եվրեմայ, զի ընդոհէ նոցա զամենայն աւարն, նոյն հետայն զիջան 'ի սրտմտութէ. և դադարեաց խռովութէն:

Ապա վճարեաց գեդէոն և զպատասխան երկուց իշխանացն զերբէի և սաղմանայ, որք պատճառաւոր և այլ ևս յանցանաց. զի 'ի հերուն հետէ ասպատակեալ 'ի լեառն Թաբովր՝ սպանեալ էին զոմանս 'ի համամայրէ եղբարց գեդէոնի. որոց փախուցեալ էր յերեսաց մադիանացւոց, և ապաւինեալ 'ի գլուխ անդր լերին, ոչ կարծելով զնոսա և անդր հասանել: Ասդ՝ հարցանէ ցնոսա գեդէոն. ո՞ւր են արքն՝ զորս կոտորեցիք 'ի Թաբովր լերին, և ո՞րպիսիք ոմանք էին. զինչ դիտակ մարմնոյ նոցա, և զի՞նչ կերպագրութիւն երեսաց: Ոչ՝ խոստովան եղեն ձշմարտութիւք, ասեն. որպէս դու ես՝ նոյնպէս և նոքա ամենևին նման քեզ, և դու նման նոցա. և տեսիլ նոցա աղնուական իբրև որդւոց Թագաւորի: Ասէ գեդէոն. եղբարք իմ էին նոքա՝ որդիք մօր իմոյ. կենդանի է ՝ուր, եթէ սրաբեալ էր ձեր ողորմութիւն առ նոսա և կենդանի պահեալ էր զնոսա, և ես այժմ ողորմիմ ձեզ, և ոչ սպանանիմ. բայց զի դուք յետ ամենայն չարեաց, զոր արարիք ժողովրդեանն ՝այ, սպանիք և զեղբարս իմ, չէք արժանի ողորմութէ: Ո՛այս ասացեալ՝ դարձաւ առ եթէր անդրանիկ իւր, և հրամայեաց սպանանել զնոսա, զի ուսցի չերկնչիլ 'ի պատե-

բազմի յարենէ իշխանաց, տեսեալ զի և նորա ընդ-
ոունին վէրս և մեռանին որպէս այլք. բայց եթէ
գոլով գեռևս մանուկ՝ անփորձ այնպիսի իրաց, ոչ
համարձակեցաւ հանել զսուրն 'ի պատենէ. և նո-
քա աղաչեցին զգեդէոն չմատնել զնոսա 'ի ձեռս
մանկան 'ի մեծագոյն նախատինս իւրեանց, այլ
լինքն իբր այր զօրաւոր սպանցէ զնոսա. արար գե-
դէոն զայն պատիւ նոցա, զի լինքնին սպան զնոսա.
և նորօք կինքեցաւ պատերազմն։

Գեդէոն վկողոպուտ դիականց, և զաւար բա-
նակին մադիանացւոց բովանդակ չնորհեաց զօրակա-
նին. իսկ լինքն կալաւ վասն իւր միայն զոսկի մա-
նեակս պարանոցաց ուղտուց երկուց իշխանացն
զեբեխ և սալմանայ։ Ոչ ինչ որ այնպէս գրա-
ւեսցէ զսէր սոսկական զօրականին առ զօրագլուխս
իւրեանց, որպէս առատաձեռնութիւն նորա. զոր
գիտուարին համարին, վասն որոյ և գերագոյն քան
զայլ ամենայն առաքինութիւս, և սիրեն տեսանել
զայն 'ի զօրագլուխն իւրեանց իբրև շահաւոր ին-
քեանց. զի սովորական սխալ սոսկական զինուորին
է շահասիրութիւն, յորմէ սակս առ սէր աւարայ՝ դնէ
'ի վտանգ զկեանս իւր։ Ուրդ՝ զայս առաքինութիւն
տեսեալ նոցա 'ի գեդէոն, այնչափ յորդեցաւ սէր
ամենեցուն առ նա, մինչ զի կամեցան առնել զնա
թագաւոր համօրէն իսրայէլի. և ոչ միայն զնա,
այլև զորդիս նորա, և զորդիս որդւոց յաջորդութ.
* Իշնեա՛ մեզ ասեն՝ դու, և որդի քո, և որդի որդ-
ւոյ քոյ ։ Նայց աղատամիտն գեդէոն գովելի
վերհանձնութիւք մերժեաց զառաջարկութիւն նոցա.
և կամեցաւ զի ամենայն իսրայէլ ծանիցէ իւր թա-
գաւոր մի միայն զնա. * Ոչ իշխեցից ես ձեզ ասէ.
և ոչ իշխեսցէ ձեզ որդի իմ. այլ տէր իշխեսցէ
ձեզ ։. որով առաւել մեծացոյց զարդիւնս իւր,
քան ամենայն նախընթաց քաջագործութիւքք. բայց
զդատաւորական իշխանութիւնն զոր ետ նմա տէր,
կալաւ մինչև 'ի վախճան կենաց իւրոց՝ իբրև սպա-
սաւոր և գործակալ նմա 'ի տնտեսութի ժողովրդեան
իւրոյ։

Ապա այն առ ի ցոյց երախտեաց իւրոց՝ խնդրեաց ի նոցանէ դոյզն ինչ պարգեւ. այսինքն գինդ մի առ այր՝ յաւարէ անտի իսմայելացւոց. որք էին մի յազգացն միաբանելոց ընդ մադիանացիս ընդդէմ եբրայեցւոց, որք և սովորութիւն ունէին կրել գինդս ոսկիս յականջս։ Եւ՝ ի խնդրել գեդէոնի, ամենեքին առհասարակ փութացան հաձել ընդ նմա, և նոյն ժամայն տարածեալ առաջի խորանի նորա կապերտ, այր իւրաքանչիւր մի զմիով ելևելս առնելով ընկէց անդր զգինդս զաւարի իւրոյ. որոց կշիռ ծանրութիւն եղև հազար և եօթն հարիւր սիկղ ոսկւոյ. որ առնէ իբրև 850. ունկի հնդումէական. յոր յետոյ ինքնայօրդոր յաւելին մանեակս ոսկիս պարանոցաց ուղտուց, և մեհեանդս, և պսակակալս և ծիրանիս, զոր թագաւորք մադիանացւոց ի կիր արկանէին։

Օձայն ամենայն ոսկի զարդս առեալ գեդէոնի, արար անտի եփուտ մեծագին, զի կացցէ և ծնաց ի տան իւրում ի յաւետական յիշատակ աքսէլէլի յաղթութիւնն զոր ետ նմա ած. միանգամայն և ի նշան իշխանութիւնէ նորա, և ի զարդ իւրոց հայրենեաց. զոր գուցէ իբրև դատաւոր և իշխան իսրայէլի՝ արկանէր զանձամբ ի նշանաւոր հանդիսութիւնս. որպէս արար երբեմն և դաւիթ. (Բ. Թագ. Ը. 14)։ Այլ յետոյ զկնի վախճանելոյ նորա եփուտն այն եղև խոչընդոտն ի գայթակղութիւն տան և տոհմի նորա և ժողովրդեան իսրայէլի, զոր սկսան վարել զառաջինն ի անտի պաշտամունս. և ապա ի պիղծ զոհապարծութիւնս կռոց։ Վանդլի մոռացեալ զնոր ած իւրեանց, որ փրկեաց զնոսա ի թշնամեաց իւրեանց, դարձան ի պաշտօն բահաղու բեերիթայ։ Յետ այսր յաղթութիւնէ եկեաց գեդէոն և վարեաց զդատաւորական իշխանութիւն ամենայն ուղղութիւք և արդարութիւք ի վերայ համայնն ժողովրդեան որդւոց իսրայէլի ամս քառասուն. և մեռաւ ի բարւոք ծերութեան, և թաղեցաւ ի գերեզմանի յովասու հօր իւրոյ յեփրա. և յաւուրս նորա խաղաղացաւ երկիրն իսրայէլի յամենայն թշնամեաց որ շուրջ նովաւ։

Այն որք համարին, թէ գեդէոն առնելով զեփուան զայն՝ իցէ մեղուցեալ յաճօ. նախ՝ զի զայն օրբազան զդեստ ի տան իւրում կալաւ, զոր ի խորանին և եթ օրէնն էր վարել. երկրորդ՝ զի նովաւ եդ զժողովուրդն ի վտանգ կռապաշտութե՛ն. և երրորդ՝ զի ինքնօրէնն զնոր իմն տեսակ կրօնի և տաճարի սահմանեաց՝ զտուն իւր իբր տաճար ձևացուցանելով. զի որպէս երևի՝ ասեն, չէր այն պարզ եփուտ, այլ գուցէ կային ընդ նմա և այլ մնոտի ղարդք ինչ և նմանութի՛ք կարգեալք ի անոտիապաշտութի՛ն: Այլ ի հաստատութի՛ն առնուն զբան գրոյն, որ ասէ. * Այլ եղև գեդէոնի և տան նորա ի գայթակղութի՛ն ||:

Բայց են և այլք, որք անբասիր առնեն զնա յամենայն մեղաց: Այլ կարի յիրաւունս. Նախ՝ զի որ ինչ ըստ ինքեան անզանազան է, եթէ չիցէ արգելեալ գրական իմն պատուիրանաւ, կամ՝ի մտայգործողին չիցէ կարգեալ՝ի թիւր վախճան, ոչ է մեղք. իսկ աստ և ոչ զմի յերկուց աստի մարթէ ցուցանել. այլ ընդ հակառակն՝ միտ գեդէոնի (որպէս ասացաք) էր առնել զայն՝ի փառս նո՛ւ, ի գոհութի՛ն և ի յիշատակ վասն մեծի յազթութե՛ն, զոր արար նա ի ձեռն նորա. և ի նոյն միտս պահել զայն՝ի տան իւրում. միանգամայն և ի նշան իշխանութե՛ն իւրոյ: Երկրորդ՝ չէ յայտ ըստ բաւականն, թէ եփուտն միայն քահանայապետին էր սեպհականեալ. գիտեմք զի նորա սեպհական զարդ էր վկայն, զոր արկանէր՝ի վերայ եփուտին. և երկու ակունք յերկոսին ուսս. առանց որոց՝ եփուտն տակաւին եփուտ էր, զոր կարէին կրել և աշխատիլք. որպէս յայտ է՝ի սամուէլ և՝ի դաւիթ: Երրորդ՝ և ոչ գէթ նշանախեցիւ միով ցուցանէ՛ նա գիրն, թէ գեդէոն կամեցեալ իցէ՝ի պաշտօն կռոց ձգել զժողովուրդն. կամ անցեալ իցէ երբէք ընդ միտս նորա՝ թէ եփուտն իւր տացէ նոցա պատճառս առ կռապաշտութի՛ն. յոր զկնի մահուան նորա խոտորեցաւ ժողովուրդն ըստ իւրում հնացեալ սովորութե՛ն, որ՝ի խաղաղիլ փոքր

մի յարտաքին Թշնամեաց, վաղվաղակի մոռացեալ զնա՝ անդրէն ՚ի պաշտօն կռոց դառնայր: Այս եղև ասէ ՚ցբ գիրն՝ իբրև մեռաւ գեդէոն, դարձան որդիքն իսրայէլի, և պոռնկեցան զհետ բահաղիմայցն. գաս. Ը. 33. որ է ապացոյց մեծի կրօնասիրութեանն և ՚ծաւալաշտութեան գեդէոնի: Այսն որոյ յաւել գրոյն՝ Թէ եփուտն այն եղև գեդէոնի և տան նորա ՚ի գայթակղութիւն, իմանալի է Թէ յետ մահուան նորա որդիք կամ ազգատոհմ նորա չարաչար վարեցան նովաւ: Վասնզի որպէս ցուցանէ ՚ցբ գիրն՝ գեդէոն սրբութիւն եկեաց, և սրբութիւն մեռաւ. զի և ՚ի պատմելն զվախճան նորա՝ նովին յարգոյ և չքնաղ բանիւ վարի, որով սովոր է պատմել զմահ սրբոց: ծնն. ԺԵ. 15. Ի. 8. ա. հաց. իԸ. 18. Այեռաւ ասէ ՚ի բարւոք ծերութիւն: Այս սքն պօղոս գովելով զհաւատ նորա՝ ՚ի կարգ այլոց քաջահաւատ սրբց դասէ. Եբր. ԺԱ. 32. ուստի ոչ միայն հին, այլև նորս եկեղեցի իբրև ՚ցբ պատուէ զնա:

ԳԼ. Ը.

Պատմութիւն Հռութայ, առ պակասութ:

Յաղագս ժամանակի պատմութեն հռութայ զանազան են կարծիք վարդապետաց. ոմանք դնեն ՚ի ժամանակս գոթոնիէլի կամ աւուդայ ՚ի ծառայութէն եգղոմայ արքայի մնավաքացւոց, այլք բարակայ և դեբովրայ. կէսք աբիմելեքայ, կամ լաւ ևս գեդէոնի. որ առաւել հաւանելի Թուի: Վասնզի ՚ի սկիզբն պատմութեն հռութայ՝ ասէ գիրն, Թէ *յաւուրս դատելոյ դատաւորացն եկն սով յերկիրն ||. որով ցուցանէ գալ սովուն յերկիրն իսրայէլի, յորժամ անիշխանութէն ժողովրդեան փո-

խեցաւ ՚ի հաստատուն կարգ դատաւորաց՝ միմեանց զկնի դատելով. և այս եղև առ դեդէոնիւ. զի առ նովաւ սկսաւ ժողովուրդն ընտրել իւր դատաւորս, յորս ինքն առաջին եղև՝ զոր կամէին առնել թագաւոր։ Իսկ եղեալքն յառաջ քան զնա որպէս գոթոնիէլ, աւոդ և այլն, եղեն առանձնական դատաւորք ընտրեալք անմիջանապս յՅի՝ միայն ՚ի վանել զթշնամիս և ՚ի փրկել զիսրայէլ. և ՚ի մեռանել նոցա մնայր ժողովուրդն առանց դատաւորի։ Եւ վասն սովուն ոչ ասէ պատճառեալ ՚ի պակասութէ անձրևաց կամ ՚ի ցամաքութէ, և ոչ ՚ի դադարիլ սովուն՝ ցուցանէ թէ եղեալ էին անձրև, որպէս յայլ տեղիս սովոր է նշանակել. յորմէ իմանամք թէ այս սով էին պատճառեալ յեօթնամեան ասպատակութէ անտի մադիանացւոց, որք ամի ամի յաջորդաբար իջեր զմարախ բազմութէք սփռեալ յերկիրն իսրայէլի հանդերձ ահ նասնովք իւրեանց սպառէին զբերս երկրի նոցա, և ապականէին զանդաստանս. որումհարկաւ ըզհետ գայր սով. որ երևի թէ ձգեցաւ ընդ ամն ութ կամ լինն, զի ՚ի տասներորդ ամի լուաւ նոցին յերկիրն մովաբու՝ թէ բարձաւ սովն. ուստի նաև յառաջնում և յերկրորդում ամի դատաւորութեն գեդէոնի ՚ի հարկէ չբաւորութէ կրէին իսրայելացիք, զի երկիրն աւերեալ և խոպանացեալ ոչ վաղվաղակի դառնայ յառաջին պտղաբերութէ և յարգասաւորութէ իւր։

Վասն՝ յայնմ ժամանակի, յորում տառապէր երկիրն իսրայէլի ՚ի սովէ պատճառելոյ ՚ի մադիանացւոց, այր մի կոչեցեալ եղիմեղէք ՚ի բեթղեհէմէ յուդայ, որ այլով անուամբ կոչի եփրաթա, առեալ զնոսին զկին իւր, և զերկուս որդիս ըզմաղոն և զքեղիոն, չոգաւ պանդխտանալ յերկիրն մովաբացւոց՝ դարմանել զտուն իւր. ուր գտեալ յաջողութէ՝ հաստատեաց անդ զբնակութէն իւր։ Ոչնի սակաւուց մեռաւ եղիմեղէք. և երկու որդիքն նորա մաղոն և քեղիոն առին իւրեանց կանայս ՚ի դստերաց անտի մովաբացւոց. անուն

կնոջ մասաղնայ հոտոտեաց, և քեղկնի որիա. ապա մեռան և երկու որդիք եղիմելեքայ մնասղան և քեղկն անորդի. և մնացին երեքին կանայք՝ նոր. մին և երկու նուանք նորա այրիք։ Յորչափ արքն կենդանի էին, պահէին պատշաճապէս յօտար երկրի անդ զմայր իւրեանց և զկանայս. բայց զկնի մահուան նոցա ծանր էր սոցա և դժուարին դատնել բաւական դարման կենաց այրիութենէ իւրեանց։ Ընդ այն աւուրս՝ այս է՛ի ատաներորդ ամի պանդխտութենէ իւրոյ յերկրին մովաբու, լուաւ նոոմին, թէ այց արար ՚ած ժողովրդեան իւրում, ևետ նոցա հաց. որ եղև յետ հարկանելոյ դեդէոնի զմադիանացիս, և ազատելոյ զերկիրն ՚ի հարստահարութենէն նոցա. վասն որոյ հաստատեաց նոոմին դառնալ՚ի բեթղեհեմ յերկիր յուդայ ՚ի հայրենիս իւր, և զնուանս դարձուցանել ՚ի տուն հօր իւրեանց, անցանել յերկրորդ ամուսնութենէ, և գտանել հանգիստ անձանց իւրեանց։

Այս այսպէս հաստատեալ՝ իբրև էլ ՚ի ձանապարհ, ելին ընդ նմա և երկու նուանք նորա. նա համբուրեալ զնոսա՝ աղաչէր դառնալ իւրաքանչիւր ՚ի տուն հօր իւրոյ, և ասէր արտասուալից, ա բասցէ տէր ողորմութենէ ընդ ձեզ, որպէս արարիք դուք ընդ մեռեալս իմ և ընդ իս. պարգևեսցէ ձեզ ՚ած արս արժանիս բարութենէ ձերում, զի ՚ի տան նոցա գտջիք հանգիստ և խաղաղութենէ, զոր բերիք և պահեցիք միշտ ՚ի տան իմում։ Յայնժամ երկոքեան նոքա՝ որք սիրէին զսկեսուրն իբրև զհարազատ մայր իւրեանց, և նա զնոսա իբրև զդստերս իւր, ձայն բարձեալ լացին յոյժ. ասելով, թէ չիք և չիք հնար մեկնիլ մեզ՚ի քէն, այլ՝ ուր դու գնասս, գամք և մեք ընդ քեզ, և խառնիմք՚ի ժողովուրդ քո։ Ասէ նոոմին որ առաւել քան զնոսա մորմոքէր յանձնառիլ իւր՚ի նոցանէ, զանայր մխիթարել զնոսա. մինչ զի թէպէտ և ինքն ոչինչ ընդհատ՚ի նոցանէ կարօտ էր մխիթարութենէ, կրկնեաց անդրէն ասելով, դարձարո՛ւք գստերք իմ, դարձարո՛ւք՚ի տունս ձեր, ընդէր գայցէք ընդ իս, և լինիցէք

կցորդ առաքեալոյ իմոյ. ես ծերացեալ եմ, և ոչ ևս կարէք յուսալ յորովայնէ իմմէ ունել ձեզ արս. բայց թէպէտ և հնար էր ինձ ծնանել որդիս, սակայն թէ կամիցիք սպասել՝ մինչև յարբունս հասանիցեն, դուք ծերանայք յառաջ քան զհարսնանալ նոցա։ Արդարև դատերք իմ առաւել քան զիմ դառնութեն վշտացնեն զիս ձերդ անձկութիւք. ահա հարկանէ զիս, թողէք զի ես միայն կրեցից զհարուածն նորա. և դուք դարձարուք՛ի տունս ձեր։ Այս այսպէս լային և վիճէին, և ոչ կարէին մեկնիլ՛ի միմեանց. հուսկ ուրեմն որպէս զիջեալ՛ի բանս սկեսերն, համբուրեաց զնա, և թողեալ զնա և զներ իւր, գնաց դարձաւ՛ի տուն իւր. բայց ոչ նոյնպէս և հռութ. առ որ ասէ նոոմին. ահա ներ քո դարձաւ առ ժողովուրդ իւր և առ աստուածս իւր, դարձիր և դու զհետ նորա։ Այլ պատասխանի հռութ, մի եղիցի այդ, թէ ես երբեք մեկնեցայց՛ի քէն. մի հակառակիր սրտի իմոյ մնալոյ իմ, զի ուր թողից զքեզ յաւիտեան. ուր երթայցես, երթայց և ես. ուր հանգիցես, հանգեայց և ես. ժողովուրդ քո եղիցի ժողովուրդ իմ, և աստ քո աստ իմ. ուր մեռանիցիս, անդ մեռայց և ես, և անդ թաղեցայց ընդ քեզ. երդնում՛ի ինձ և ոչ ստեմ, միայն մահն մեկնեսցէ ընդ իս և ընդ քեզ։ Երբև ետես նոոմին զհաստատութիւն մտաց հաւատարիմ նուոյ իւրոյ, դադարեաց այնուհետև՛ի խօսելոյ։

Այս այնպէս գնացեալ երկոցուն՛ի միասին, եկին՛ի բեթղեհէմ՛ի սկիզբն հնձոց գարւոյ։ Որմին յառաջ քան զմեկնիլ իւր՛ի բեթղեհէմայ երևեալ էր՛ի քաղաքի անդ՝ ոչ միայն զի մեծատուն էր եղիմելէք այր նորա, ուստի և ինքն մի յերևելի տիկնաց քաղաքին, այլև վասն անզուգականն գեղոյ երեսաց նորա. յոյր սակս առաւսաւկան անուամբ կոչէին զնա նոոմին, այն է՝ գեղեցիկ։ Մինն իրի՛ի հասանել նորա անդր, առ ժամայն սփռեցաւ լուր գալստեան նորա ընդ քաղաքն. և գային բազումք յողջոյն նորա. յորոց որք յառաջագոյն

ձանաչէին զնա՝ զարմացեալ ընդ այլափոխութիւն գեղոյ նորա, ասէին ցմիմեանս. սա՞ իցէ արդեօք նոյնին գեղեցիկն այն. իսկ նա տայր պատասխա նի, մի կոչէք զնա նոյնին գեղեցիկ, այլ կոչեցէ՛ք զնա դառնացեալ. զի դառնացոյց զնա ամենաբաւա կանն յոյժ. լի չոգայ արամբ և որդւովք, և ունայն դարձոյց զնա տէր յետին աղքատութիւն։ Զի՞նդ ՚ի բեթղէհէմ կամէր ՚ած ցուցանել, թէ ո՛րպէս գի տէ զկնի փորձոյ Թշուառութեանն երջանկացուցա նել զնա, որ հաւատարիմ գտանի ՚ի փորձութիւն։ Երկու խորհուրդք յածէին ՚ի միտս նոյնինայ, մի՝ վասն գտանելոյ չափաւոր դարման կենաց անձին. և միւս ևս՝ որ առաւել տագնապեր զնա, գտանել այր ընտիր սիրեցեալ նուոյ իւրում հռութայ։ Յորհէր զի թէ նա լինիցի առն, որ իցէ յազգա կանութէ առն իւրոյ եղիմելէքայ, ըստ օրինաց երբայեցւոց՝ ստանայ զամենայն կալուածս և զիրա ւունս առաջնոյ առն իւրոյ. իսկ առաւել մերձաւոր ազգականք նորա էին յայնժամ երկու. մին ոչ այնչափ հարուստ, գուցէ և բարուք ոչ այնչափ բարեկիրթ. իսկ միւսն էր այր ՚ի ցեղէն յուդայ ՚ի կարգէ իշխանաց մեծատուն և ազնուաբարոյ, և հասակաւ կատարեալ՝ անցեալ զերիտասարդութէ, անուն նորա բոոս. զժուարութէն ինայր ՚ի հաւա նեցուցանել զմի յերկուց անտի. բայց և զայն փութով յաջողեաց ՚ած։

Օ՞ի որպէս գլխաւոր հոգոցութէ նոյնինայ էր վասն հռութայ, ըստ նմին օրինակի գլխաւոր փոյթ հռութայ էր յաղագս սկեսեր իւրոյ՝ գտանել նմա կերակուր։ Զորին աղագաւ խնդրեաց ՚ի նմանէ հրաման երթալ յանդս քաղել ուրեք հասկս զկնի հնձողաց, ուր ՚ի գթութէ՞ն անդաստանին տա ցի նմա հրաման. ասէ ցնա նոյնին, երթ դուստր։ Գնաց. և ՚ած առաջնորդեաց նմա երթալ յանդ բոոսայ. ուր զկնի սակաւուց եհաս և բոոս եկեալ ՚ի քաղաքէ. և տեսեալ զնա՝ եհարց ցպատանին իւր, որ կայր ՚ի վերայ հնձողաց, թէ ո՞վ իցէ նա և ուստի՞. և իմացեալ ՚ի պատանւոյն՝ եթէ մովա

բացի աղջիկն է՝ որ դարձաւ ընդ նոսին նորա յերկրէն Մովաբու, և լուեալ զանխոնջ աշխատասիրութիւն նորա, թէ զիարդ յառաւօտէ մինչև ցայն ժամ ոչ դադարեայ և ոչ սակաւիկ մի՛ ի գործոյ. միանգամայն և տեսեալ զհամեստութիւն աղջկանն և զխոնարհութիւն և զընդարհալի վայելչութիւն նորա, հարցաւ գուբզ սրտի նորա՛ ի նա. և ասացյ ցնա ջերթալ քնաւ այլուր քաղել հասկ, այլ անդ՛ ի կալուածս իւր զհետ աղջկանց իւրոց, մինչև վախճան նեացեն զհունձան. և՛ ի ծարաւիլ իւրում ըմպել ջուր յամանոյ հնձողացն, և ընդ նոսա ուտել. և պատուիրեայ ծառայից իւրոց չարգելուլ զնա և չնեղել, այլ թողուլ զի համարձակ քաղիցէ զհետ նոցա, և կամօք ևս թողուցուն անկանիլ՛ ի ձեռաց հասկս, և օգնեացեն նմա առ՛ ի բառնալ։

Իսկ հուսթ զարմացեալ՛ ի միտս իւր ընդ այնչափ մարդասիրութիւն առնն, անկաւ յերկիր՛ ի խոնարհ, և ասէ. ուստի՞ է ինձ այսչափ շնորհս գտանել առաջի աչաց քոց. եթէ գիտիցե՞ս, զի ես եմ կին մի օտար։ Ասէ բոոս. գիտեմ, զի պատմեցաւ ինձ ամենայն ինչ, զոր արարեր սկեսրի քումդ յետ մահուան առնն քումդ. և յիշեալով մի ըստ միոջէ զբարեգործութիւնն նորա՝ օրհնեաց զնա հանդերձ բարեմաղթութիւք։ Մինչ այսպէս խօսէին, եհաս ժամ ճաշոյ հնձողաց. ասաց նմա բոոս՝ նստիլ և ճաշել ընդ նոսա. և եդին առաջի նորա կերակուր առատ, յորմէ յետ ուտելոյ ցյագ, եթող և բաժին տանել սկեսրի իւրում։ Ապա յարուցեալ քաղեաց և ևս մինչև ցերեկոյ. զոր և լինքնին ծեծեաց և հոսեաց. որ եղև արդու մի գարւոյ, այսինքն իբր 70. լիտրէ. և բարձեալ տարաւ՛ ի քաղաքն առ սկեսուրն. որ և եհարց ցնա, թէ ո՞ւր ժողովեցեր. իսկ նա ասացյ զտեղին և զանուն՝ ումն անդաստանին, թէ կոչի բոոս. և պատմեաց զամենայն զոր ինչ արար նմա և խօսեցաւ։ Նոոմին օրհնեալով զայրն յաղագս այնչափ մարդասիրութէ՝ զոր եցոյց առ նու իւր, հաստատեցաւ՛ ի յոյն՝ որում ակն ունէր՛ ի նմանէ. և ասէ ցնու իւր. գիտե՞ս, զի այրն այն՛ ի

մերձաւոր աղգականաց մերոց է. արդ՝ որպէս ասացն յքեզ, այնպէս արա. յարեաց յաղջկունս նո-
րա, մինչև վճարեսցին հունձք անդինն բոոսայ. և
մի՛ երթիցես յանդ օտարի. զի մի՛ անպատեհ ինչ
յումեքէ պատահիցէ քեզ. և արար նա՝ որպէս պա-
տուիրեաց նմա սկեսուրն։

Իբրև կատարեցան հունձքն, յայտնեաց նոումին
նուոյ իւրում զնորհուրդ իւր՝ տալ զնա ՚ի կնութիւն
բոոսայ աղգականի իւրեանց։ Վասն՝ զի յայնմ
աւուր բոոս տայր ծեծել զգարին և հոսել, և զգի-
շերն զայն ունէր ագանիլ ՚ի կալ անդր ՚ի բացի.
վասն որոյ ասաց ցհունէթ՝ լուանալ և օծանիլ, և
զգենուլ զհանդերձս վայելուչս, զոր զգենոյր ՚ի
տօնս, և երթալ ի իշերայն, յորժամ ոչ ոք տեսանի-
ցէ զնա՝ և ոչ իսկ նա ինքն բոոս. և իբրև կերիցէ
նա և արբցէ, և գնասցէ ՚ի ննջել, նշմարեսցէ զտե-
ղին. և ապա մինչ հասմարիցի՝ թէ ՚ի քուն իցէ,
երթիցէ գաղտ ՚ի տեղին. և մեղմով իմն՝ զի մի՛ ան-
հանգիստ արասցէ զնա, բացեալ զվերարկուն յո-
տից կողմանէ, ննջեսցէ անդ առ ոտս նորա, մինչև
զարթիցէ նա. յայնժամ ապա անուշակ ողբքանօք
յիշեցուսցէ նմա, թէ գոլով մերձաւոր առն իւրոյ
մեռելոյ, նմա անկ է ըստ օրինաց առնուլ զնա կին։
Եթէ հաւանեսցի նա քեզ ասէ, ահա կատարի օրի-
նաւոր ամուսնութիւն, և դու գտանես հանգիստ ՚ի
տան առն քոյուոյ և մեծատան. քանզի առ նովքին
ժամանակօք առ օրինաւոր ամուսնութիւն չէին պէտք
վկայից կամ այլ ինչ հանդիսութեաց. շատ էր հա-
ւանութիւն ծնողացն, և ամուսնացելոցն։ Ապա եթէ
նա հրաժարեսցի, ուսուսցէ քեզ թէ զինչ առնելոց
էս. և դու արասցես ըստ խորհրդոյ նորա։ Եւ քար
հունէթ զամենայն զոր ինչ ուսոյց նմա սկեսուրն.
զի մինչ ննջէր բոոս առ գադջին գարուոյ, գնաց
գաղտ և ննջեաց առ ոտիւք նորա. և զմեջ գիշե-
րայն զարթուցեալ բոոսի, և խմացեալ թէ կայ ոք
առ ոտիւք նորա, խուովեցաւ. բայց աղջիկն վաղվա-
դակի հանդարտեցոյց զնա՝ յայտնելով զանձն. ես
ինքն եմ ասէ, հունէթ աղախին քո՝ այրի կին մա-

զառնայ. ուստի և աղաչեաց ըստ իրաւանց մերձաւորութեանն առնուլ զնա ի կնութիւն։

Յաձեցաւ բոոս ընդ խոնարհութեան նորա, և ընդ համեստ և իրաւացի խնդիրն նորա. գովեաց զնա յոյժ, զի ոչ արձակեաց աչս յերիտասարդս մեծատունս կամ աղքատս. բարձրացոյց զառաքինութիւն նորա և զգովելին համբաւն՝ որ հնչեալ է ընդ բոլոր քաղաքն. և խոստացաւ կատարել զխնդիրն նորա. բայց ոչ յայնժամ վաղվաղակի. քանզի ասէ՝ գոյ և այլ ոք ազգական առաւել մերձաւոր քան զիս, նորա են առաջին իրաւունքն։ Այլ դու ննջեա այդր մինչև ցառաւօտ. և մի երկնչիր, զի այսօր իսկ կատարեցից զամենայն. և եթէ նա ոչ կամիցի առնուլ զքեզ, կենդանի է տէր՝ ես առից զքեզ. բայց մի՛ ոք գիտասցէ, թէ՝ ի գիշերիս եկիր առ իս՝ ի կալս։ Նա ննջեաց անդ առ ոտս նորա մինչև ցառաւօտ, և ընդ արշալոյսն ետ նմա բոոս վեց չափ գարւոյ. զոր առեալ հնութեայ՝ դարձաւ՝ ի քաղաքն առ սկեսուրն իւր, և պատմեաց նմա զամենայն ինչ զոր արար նմա այրն։ Ասէ նոոմին. կաց միամ դուստր, մինչև տեսցուք զնչ լինի իրացդ. զի ոչ դադարէ այրն՝ թէ ոչ կատարէ առօրին զբանն։ Այսպա ընդ առաւօտն՝ ի դիպօղ ժամու եկ բոոս՝ ի դուռն քաղաքին, և նստաւ անդ. և ահա՝ ի նմին ժամու անցանէր ընդ այն մերձաւոր ազգականն, որոյ էին առաջին իրաւունք ամուսնութեան ընդ հնութեայ. ասաց նմա բոոս նստիլ անդ առ վայր մի. ապա կոչեաց տասն այր՝ ի ծերոց քաղաքին, և նստոյց անդ ըստ սովորութեանն եբրայեցւոց, որք առ դուրս քաղաքաց ժողովեալ՝ ատեան կազմէին առնել իրաւունս, և վճարել զվէճս և զայլ զանազան քաղաքական իրողութիւնս առաջի բազմութեան վկայից։ Եւ՝ ըստ այնմ սովորութեանն ասէ բոոս ցմերձաւոր ազգականն առաջի ծերոց. նոոմին՝ որ դարձեալն է յագարակէն մովաբայ, կամի վաճառել զմասն ինչ անդոյ առն իւրոյ եղիմեղեքայ. արդ կամիս դու ստանալ զայն ըստ իրաւանց մերձաւորութեանդ. եթ պատասխանի այրն, այո. ասէ ցնա բոոս.

ապա պարտիս ընդ ագարակին առնուլ քեզ ՚ի կնու-
թի՛ և զՀուութ մուվաքացի զկին մասաղոնայ մեռե-
լոյն, և յարուցանել զանուն նորա ՚ի ժառանգու-
թեան քումմ։ Իսկ նա ոչ կամելով թաղել զանուն
տան իւրոյ՝ յայտնի հրաժարեցաւ յիրաւանց մերձա-
ւորութե՛ իւրոյ, տուեալ զայն բոոսայ. * Որ-
ձաւրեա՛ ասէ դու քեզ զմերձաւորութի՛ իմ։ և
հանեալ յոտից զմի ՚ի կօշկաց իւրոց՝ ետ ցբոոս. զի
այն սովորութի՛ էր օրինաց՝ ՚ի նշան հրաժարելոյ
յիրաւանց իւրոց և տալոյ զայն ընկերին։

Յայնժամ վկայուբ ծերոց և ամենայն ժողովր-
դեան որք առ դրանն՝ առ բոոս զՀուութ ՚ի կնու-
թի՛. և ընդ նմա զամենայն ինչ՝ որ էր եղիմելե-
քայ և որդւոց նորա քեղղոնի և մասաղոնայ։ Ընդ
այս բան ամենայն քեթղեհէմ ուրախ եղև. և ծերքն
օրհնեցին զբոոս և զտուն նորա՝ լինել իբրև զտունն
իսրայէլի ՚ի պարծանս քեթղեհէմի. և կանայք
գային ՚ի խնդակցութի՛ նոումինայ, և օրհնէին զնո՛
որ ոչ եթող ջնջիլ անուան նորա ՚ի միջոյ իսրայէ-
լի։ Այլ լրումն ուրախութեան նոումինայ և տանն
բոոսի եղև՝ յորժամ ծնաւ ըստ ժամանակին Հուութ
որդի ՚ի ցնծուի՛ ծերութե՛ն նոումինայ. որոյ առեալ
զմանուկն եդ ՚ի ծոց իւրում, և ոչ յագենայր ՚ի
գգուելոյ և ՚ի համբուրելոյ զնա. և իբրև դայեակ
և սնուտու խնամ ածէր նմա. սա է Ովեդ. յորմէ
ծնաւ յեսսէ, և դաւիթ արքայ որդի յեսսեայ, և
այլ թագաւորք և իշխանք ՚ի ծննդոց նորա, զորս
յիշատակէ Աքն մատթէոս ՚ի ծննդաբանութի՛ Յի-
սուսի։ Այսպէս յաղթանակեաց խոնարհութի՛ն՝ հա-
մեստութի՛ն և հաստատութի՛ն. զի որ երէկ իբրև
զմի յաղքատ և այրի և անտէրունչ կանանց վաստա-
կէր ձեռօք գոհանել զառօրեայ պարէն անձին և
սկեսրի իւրում, այսօր եղև տիկին առն մեծատան՝
փառաւորեալ յամենեցունց. զի հաձեցաւ Ած և
և յաստիս վարձատրել զբարեսիրուն նուոյ և սկե-
սեր առ իրեարս, որք իբր մայր և դուստր սիրէին
զմիմեանս։ Ամէն։ Առնալ ՚ի պատմութի՛ դա-
տաւորաց։

Աբիմելէք բռնաւոր դատաւոր Իսրայէլի։

Ընդ ամն քառասուն յորս դատեաց գեդէոն, որդիքն Իսրայէլի յերջանիկ խաղաղութեանէ և յանդորրութենէ վայելեցին, ոչ միայն ըստ քաղաքական մասին, քանզի յաւուրս նորա ոչ ոք ի չըջակայ Թշնամեաց անտի իշխեաց գլուխ ամբառնալ ի վերայ նոցա, այլև ըստ ՚ուծապաշտութե՝ ՚ի ձգալով Հաւատարիմ ՚ի պաշտօն ՚ան ՚ոյ իւրեանց. որ փրկեաց զնոսա յամենայն Թշնամեաց շուրջանակի։ Այլ ՚ի մեռանիլ գեդէոնի, և ՚ի դառնալ ժողովրդեան ըստ հնադեալ սովորութեան իւրեանց անդրէն ՚ի պաշտօն բահաղիմայց, ընդ նմին բարձաւ ՚ի նոցանէ և մարմնոյ խաղաղութենէն, ոչ ՚ի ձեռն այլազգեաց, այլ ՚ի ձեռն միոյ յորդւոց նորին գեդէոնի։ Օ՛ի գեդէոն՝ կամ ըստ ոմանց այնր ժամանակի, և կամ ՚ի զօրացուցանել զտուն իւր բազմութիւք որդւոց՝ միանգամայն և խնամութիւք ընդ բազումս, բազմացոյց իւր կանայս աղնուականս ՚ի զանազան տանց. յորոց եղեն նմա հօթանասուն որդիք, ամենեքեան կենդանիք յետ մահուան նորա։

Բայց յետ անտի էր նորա և այլ որդի մի կոչեցեալ աբիմելէք, զոր ծնաւ նմա հարճ կամ երկրորդական կին նորա սիկիմացի յանունն տոհմէ. զոր ըստ հին սովորութեան՝ որ էր մուծեալ յաբրահամէ, և հաստատեալ յայնժամ յիսր, ՚ի բաց ի հան գեդէոն յիւրաւանց ժառանգութե տան իւրոյ։ Այս պատանի իրրոխտ ամբարտաւան և չարաբարոյ ոչ ժուժելով վարել կեանս սովականս, իբրև մեռաւ հայր նորա, գնաց վաղվաղակի ՚ի սիկիմ քաղաք ծննդեան իւրոյ, ուր բնակէր և մայր նորա. և անդ առեալ իւր զործի զեղբարս և զամենայն ազգատոհմ մօր իւրոյ՝ ՚ինքն յանկուցանել զամենայն

ժողովուրդ սիկիմացւոց առ ի թագաւորեցուցանել զնա ի վերայ իսրայէլի, եդ բանս ի բերան նոցա խօսել յականջս ժողովրդեան օրինակ զայս։ Ա՛րք սիկիմացիք տեսէք և ի միտ առէք, զի եօթանասունն որդիք են գեդէոնի. եթէ նոքա տիրեացեն ձեզ, ունիցիք եօթանասունն բռնակալս ի վերայ ձեր ի կողոպտել և ի կեղեքել զձեզ առ ի մեծացուցանել իւրաքանչիւր զտուն իւր. և ո՞ կարիցէ զդէմ ունել բռնութեանն նոցա, եթէ միաբան նեսցին ընդ միմեանս՝ որպէս և միաբանեալ են, և ի վերայ այնր առնուցուն և յայլոց օգնականս։ Ո՞չ լաւ է ձեզ հնազանդիլ միում, քան այնչափ բռնաւորաց։ Ա՛քիմելեք որդի է գեդէոնի որպէս զնոսա. այլ զի նոքա մերձեցին զնա իբրև օտարախորթ, ինքն ևս ոչ ձանաչէ զնոսա իւր եղբարս. և եթէ ունիցի ի ձեռին իշխանութեի, նուաձեսցէ զնոսա, և ոչ թողուցու խլրտիլ։ Գիշեցէ՛ք զի աբիմելեք ոսկր և մարմին ձեր է. սիրէ զհայրենիս իւր. և ունի զձեզ զամենեսին ոչ լոկ իբրև քաղաքակից իւր, այլ որպէս զհարազատ եղբարս։ Այս թէպէտ դժուարին է զայս հաւանեցուցանել համօրէն ժողովրդեան իսրայէլի, բայց պատանին յաջողակ, սքանչ և գործունեայ՝ եթէ ունիցի ի ձեռին դրամս, զբաղումս յինքն ձգեսցէ պարզևօք. զբաղումս զարհուրեցուսցէ սպառնալեօք, և զբաղումս նուաձեսցէ բռնութեբ։ Լոկ առ ի գտանել դրամս չէ հարկ ծանրանալ ի վերայ քաղաքացւոց. ահա կայ ի տունն բահաղու բերրիթայ գանձ նուիրեալ նմա. առ ինչ այնչափ գանձու միայն անդ անգործ. տուք զայն ի ձեռս աբիմելեքայ, զի ի գործ արկանիցէ ի բարձրութեի և ի փառաւորութեի բահաղու։

Այս և այլ սոցին հանգոյն բանք գրգռիչք սերմանեալք գովութեբ յականջս ժողովրդեան, զսիրտ ամենեցուն ձգեցին զկնի աբիմելեքայ. ուստի սկսան ասել, թէ եղբայր մեր է. և այնպէս միաբանեալ ետուն նմա եօթանասունն արծաթոյ. զոր ոմանք տաղանդ իմանան, այլք սիկղ. բայց տա-

ղանդն կաբի շատ է. իսկ սիկղ կարի սակաւ. այլ որ և է՝ երևի Թէ նշանաւոր գումար ինչ էր, զի առեալ զայնս աբիմելէքայ՝ վաղվաղակի վարձեցաւ նոքօք արս սրիկայս, չարագործս, վտարանդիս։ Տայր զմտաւ ածեալ Թէ ցորչափ կենդանի են եղբարք նորա եօԹանասուն որդիք գեդէոնի, չէ հնար նմա կալ յատակովի, նմին իրի աճապարեաց գնալ ընդ իւրոց աւազակակոյտ սրիկայից յերկիր քաղաք, ուր էին նոքա յանհոգս, ոչինչ իմացեալ զդարանացն զոր գործէր անօրէնն ընդդէմ նոցա՝ ի սկզբանէ. և յեղակարծումն հասեալ՝ ի վերայ նոցա, կալաւ զնոսա կենդանի. և առ ժամայն ետ մի առ մի խողխողել՝ ի վերայ վիմի միոյ ոգիս վաԹսուն և ինն յեղբարց իւրոց առաջի աչաց իւրոց, իբրև նոյնչափ զոհս իւրումն գազանական անդԹուրԹէ. իսկ եօԹանասներորդն, որ կոչիւր յովաԹամ, զերծաւ Թաքստեամբ։ Զմանք՝ ի հարց ասեն, Թէ վէմն այն յորոյ վերայ կոտորեցան նոքա, էր նոյն՝ յոր գեդէոն հայր նոցա հանեալ էր զեզինս հօր իւրոյ ողջակէզ ՚ի նմա, զկնի քակելոյ նորա զսեղանն բահաղու։ Զսուտ ամբարիշտն աբիմելէք պատրուակաւ կրօնասիրուԹէ իբր՝ ի վրէժխնդրուԹիւն բահաղու, զոր պաշտէին սիկիմացիք, ՚ի վերայ այնր սեղանոյ կոտորեաց զնոսա՝ առ առաւել հաձոյանալոյ նոցա։ Զայս կարծիք չէ անհին, քանզի յետ գործելոյ անօրինին զայն գործ անագորոյն, որ պարտ էր զամենայն խորայել վառել՝ ի զէն՝ ի վրէժխնդրուԹէ այնչափ անմեղ արեանց, ժողովուրդն սիկիմայ առ հասարակ, և ամենայն տունն մաղոնայ՝ ի դառնալ նորա՝ ի կոտորածէ անտի, ընկալան զնա փառաւք, որպէս Թէ դարձեալ էր յաղԹանակաւ՝ ի կոտորածէ փղշտացւոց, կամ ա մովաբացւոց։

Այլ՝ ի պատկ կարծեցեալ քաջագործուԹենն՝ ի հրապարակի անդ սիկիմայ քաղաքին առ կաղնեաւն, ուր սովոր էին ժողովիլ՝ ի խորհուրդ վասն իրաց հասարակուԹէ իւրեանց, Թագաւորեցուցին զնա՝ ի Թագաւոր, կէցցէ արքայ աբիմելէք ասե-

լով. որ էր միւս ևս մեծագոյն քրէական յանցանք, առանց հաւանութեանէ այլոց ցեղից որդւոց իսրայէլի՝ թագաւոր զոք կացուցանել։ Եւ սակայն լռեաց ամենայն իսրայէլ. ուր չէ մարթ գուշակել զայլ ինչ պատճառ այսպիսի դիմովելի անհոգութեան և անզգայութեանէ, եթէ ոչ՝ գուցէ յետ իբր երկերիւր ամաց դեռ ևս կենդանի էր առ նոսա յիշատակ արիւնրուխտ պատերազմին՝ ի պատճառս անօրէնութեանէ գաբաաացւոց, զոր անօրինեցան՝ ի կլինն զևտայսյոն. յորում անբաւ կոտորած գործեցաւ յեղկոսին կողմանս. բայց մանաւանդ՝ ի ցեղին բենիամինի, որ փոքր մի ևս՝ ի վերջ հասանէր։ Եւպա զի մի՛ և այս անգամ այնպիսի ինչ պատահիցէ, եթէ զկնն առնուցուն՝ ի վերայ միմեանց, նմին իրի լռեցին՝ ի ժամուն՝ ծնալով տեսանել զկատարածն։

Ա՛ի միայն յովաթամ կրսեր որդի գեդէոնի չհանդուրժեալ տանել այնչափ անիրաւութեանց, ՚ի գլխոյ գարիզին լերին՝ առ որով էր սիկիմ քաղաքն, զօրացաւ կշտամբել զանլուր անիրաւութենէ և զապերախտութենէ նոցա ընդդէմ տանն հօր իւրոյ. և յանդիմանել զանմիտ ընտրութիւնն՝ զոր արարին, առակաւ ծառոց՝ որք խնդրեցին թագաւորեցուցանել ինքեան զձիթենին, զթզենին, և զորթ խաղողոյ. և ՚ի հրաժարել նոցա թագաւորել՚ի վերայ անքեր փայտից անտառի, ընտրեցին զդժնիկն։ Եւրիւք առաջնովք ակնարկէ զհայր իւր զգեդէոն, և զորդիս նորա, և զթոռունս. ցոր ասաց ժողովուրդն իսրայէլի. * Իշեա՛ մեզ դու, և որդի քո, և որդի որդւոյ քոյ ‖. որոց ետ պատասխանի գեդէոն. * Ո՛չ իշխեցից ես ձեզ, և ո՛չ իշխեսցէ ձեզ որդի իմ. այլ տէր իշխեսցէ ձեզ ‖. դպր. Ը. 22. 23։ Եւսկ դժնիկաւն ցուցանէ զաբիմելէք զաղախնորդի. որով տայ նոցա ՚ի միտ առնուլ, թէ այնչափ յիմար է խորհուրդ նոցա, որչափ խորհուրդ ծառոց, որք թագաւորը կացուցին զդժնիկն զանարգն և զանպիտանն ՚ի մէջ ամենայն ծառոց. յորմէ և գուշակէ զերկպառակութիւնս և զխռովութիւնս օրինակաւ հրոյ, որք հանդերձեալ

էն ելանել յաբիմելէքայ և 'ի նոցին իսկ սիկիմացւոյ 'ի կորուստ միմեանց. և այնպէս անձամբք յանձինս լուծանել զվրէժ անիրաւութեն զոր արարին տանն յերոբոաղայ: Ա Ձարեալ յովաթամայ զառակ իւր, փախեաւ և գնաց բնակեցաւ 'ի բերա առերկիւղին աբիմելէքայ եղբօր իւրոյ: Իսկ աբիմելէք թագաւորեաց 'ի վերայ իսրայէլի ամս երիս. ւ'է 'ի վերայ համօրէն ցեղից իսրայէլի, այլ միայն որոց ընտրեցին զնա, գուցէ և այլոց ոմանց զորս բռնութէբ նուաձեաց. և ւ'է իբր թագաւոր ինքնակալ, այլ ըստ օրինակի այլոց նախընթաց դատաւորաց:

Ա Սիկիմացիք համարձին գործ մեծ և յոգնաշահ սարսռեալ 'ի պայծառութիւն ինքեանց և քաղաքի իւրեանց, կացուցանելով զաբիմելէք զքաղաքակից իւրեանց թագաւոր. Թերևս զի ակնունէին, Թէ փոխանակ եղբարց իւրոց զորս կոտորեաց, զնոսա մեծացուսցէ: Ա յլ իբրև տեսին, զի 'ի թագաւորութէնէ անտի նորա զայլ ինչ ոչ ունէին՝ բայց միայն զբեռն և զծանրութէն, յայնժամ սպառ բացան աչք նոցա, և տեսին զանմտութէնէ իւրեանց զարդիւնս. և սկսան քրթմնջել ընդ միմեանս՝ զառաջինն 'ի ծածուկ, և կարեկցաբար խօսել և աւաղել զայնչափ անպարտ արեանց Ձաքաղիս. և պախարակել զանօրէնն զմարդախոշոշ զեղեռնագործն. և առաւ յայտնի նշկահելով զնա: Ա ազումք 'ի քաղաքացւոց անտի միաբանեալ՝ եկին 'ի գլուխս լերանց՝ դարան գործել նմա, ընդ որ ուներ անցանել նա 'ի դառնալ իւրում 'ի սիկիմ. որք և իբր օրինօք պատեբազմի յափշտակէին և կողոպտէին զամենեսին, որք անցանէին առ նոքօք ընդ Ձանապարհ՝ իբր հնազանդեալ ժողովուրդ աբիմելէքայ: Ա այց այս ամենայն ոչ միայն զանխուսափ 'ի նմանէ. որ էր յայնժամ յեփրա քաղաք, ուր որպէս երևի՝ եղեալ էր զաթոռ իւր 'ի տուն հօր իւրոյ. իսկ 'ի սիկիմ կացուցեալ էր իշխան զայր ոմն զեբուղ անուն. որ և այս ոչ սակաւ զայրացոյց զսիրտ սիկիմացւոց ընդդէմ նորա, իբրև խաբեալ 'ի նմանէ:

Յայն խռովութեան եկն ի սիկիմ դաւաղ որդի աբեդդայ ընդ եղբարց իւրոց յօգնութիւն սիկիմացւոց՝ ընդդէմ աբիմելեքայ։ Մինչև ցայն վայր բազումք ի քաղաքացւոց անտի առ երկիւղի լռեալ կային. այլ իբրև եհաս դաւաղ՝ վստահացեալ ինքնա, յայտնի արարին զոր ունէին ի սրտի։ Եւ գի էր ժամանակ կթոց, ելին յանդաստանն, կթեցին զայգիս իւրեանց, և հարին հնձանս, և ըստ սովորութեանն երկրին պարէնին ուրախութիւն, խաղային և կաքաւէին. գի աւուրք կթոց էին առնոսա աւուրք ուրախութեան և խրախճանութեանց. և մտեալ ի տունն բահաղու աստուածոյն իւրեանց գոհանալ զնմանէ, գի զերծոյց զնոսա ի լծոյ աբիմելեքայ, ուտէին և ըմպէին և լիաբերան անիծանէին զնա։ Ընդ էր և դաւաղ որդի աբեդդայ երիտասարդ խրոխտ և փառամոլ, այլ անհանձար, որ յոխորտայր և մեծաբանէր ասելով. Ո՞է աբիմելեք, որ պարծի գոլ որդի սիկիմայ, գի ծառայեսցուք նմա. ո՞չ նա է որդի յերոբոաղայ, որ քակեաց զսեղանն բահաղու. և ո՞ զեբուղ ծառայ նորա՝ զոր կացոյց ոստիկան ի վերայ արանց եմմորայ հօր սիքեմայ. ապա ընդէ՞ր ծառայիցեմք նմա։ Ո՞յա ասէր ի դրդռել յաւէտ զսիկիմացիս ընդդէմ աբիմելեքայ, և բանալ ինքեան ձանապարհ ի տիրապետուն. իցէ՞ թէ ասէր՝ տայր ոք զժողովուրդս զայս ի ձեռս իմ, և ես բառնայի ի միջոյ զաբիմելեք. գի ասէի ցնա, բազմացո՛ զզօրս քո, և ել առաջի իմ։

Ո՞յա և զայլ սմին հանդոյն բանս խօսէր անընդհատաբար ի սիկիմ քաղաքի առաջի բազմամբոխ ժողովրդեան. և ո՛չ ածէր զմտաւ, թէ գուցէ իցէ ոք ի բազմութենէ անդ՝ որ հաստուցանիցէ զայն յունկն զեբուղայ. որպէս և եղև։ Այլ զեբուղ այր խոհեմանկ և աչալուրջ՝ թէպէտ և սրտմտեցաւ բարկութիւն, բայց լռեաց, տեսանելով զքաղաքն խռովեալ, և զանձն անկարօղ ի նուաճել զայնդգնուն նորա. այլ գաղտաբար արձակեաց փութանակի հրեշտակս առ աբիմելեք. և ի ձեռն նոցա յայտնելով նմա զբանս դաւաղայ, և զվերահաս վտանգն

յինքն դարձուցանելոյ զժողովուրդն Համբրէին, ստիպէ զնա գալ վաղվաղակի դիշերային հանդերձ զօրօքն որ ընդ նմա, և լինել դարանամուտ առ անդաստանօքն. և ՚ի վաղիւ ընդ առաւօտն իջանել ՚ի վերայ քաղաքին։ Ընդ ՚ի քաղաքի էին յայնժամ և դարանամուտք սիկիմացւոց. զի իրաղեկ եղեալ՝ եթէ յայտնեցաւ դարան իւրեանց, և թէ քաղաքն ողջոյն յարեաւ ընդդէմ աբիմելէքայ, իջին և նոքա ՚ի զօրացուցանել զկողմն իւրեանց։

Իսկ զերծուղ առ ժամն կեղծեալ զանձն լինել համախոհ գաղտոյ, ՚ի վաղիւ անդր ընդ առաւօտն ՚ի ծագել արեգականն, մինչ սկն ունէր ըստ ժամադրութեանն իւրում երևիլ աբիմելէքայ, էլ ընդ գաղտոյ արտաքոյ ընդ դուռն քաղաքին։ Եւ աբիմելէք, որ զցայգն մերձեցեալ էր ՚ի քաղաք անդր, և զզօրս իւր ՚ի չորս առաջս բաժանեալ՝ եդեալ էր ՚ի դարան ՚ի զանազան տեղիս, դիտեալ ՚ի լերանց անտի զելս սիկկիմացւոց ՚ի քաղաքէն, հրամանն ետ դնդին որ էր դարանեալ ՚ի գլուխ լերին՝ իջանել. զոր տեսեալ գաղտոյ ՚ի հեռուստ ՚ի դրանէ անտի քաղաքին, ասէ ցզերծուղ, ահաւասիկ զօր իջանեն ՚ի գլխոյ լերանցն. նա ժպտելով իբրև ընդ խաղս ասէ. ստուերք լերանց և ծառոց են այնոքիկ, զոր դու իբրև զմարդիկ տեսանես։ Օ՛հնի սակաւուց՝ ահա սկսաւ երևիլ և այլ գունդ մի, որ իջանէր ընդ ծովակողմն առ լանջօք լերին. և միւս ևս գունդ ընդ Ճանապարհ կաղնւոյն դիտոնոցաց։ Գաղաղ մինչ ՚ի բացեայ էր Թէնամին, աներկիւղ խիզախէր. այլ իբրև հասեալ զնա ՚ի զանազան կողմանց մերձենալ, փոխեաց զբարբառ և զգոյն երեսացն։

Յայնժամ զերծուղ վստահացեալ յիւրն աբիմելէք, երթայ զպատրուակ երեսաց իւրոց. և հեգնելով զնա ասէ, ահա այս է զօրն, զոր դու փոքր մի յառաջ աղաղտեիր. այս է աբիմելէք արհամարհեալն ՚ի քէն. արդ՝ ել տուր ընդ նմա պատերազմ։ Իսկ նա Թէպէտ ահաբեկ, բայց զի՛ մի անարի վաստասիրտ երևեսցի, բուռն արար անձին, և ել իբր

զօրագլուխ առաջի արանց սիկիմացւոց ՚ի մարտ ընդ աբիմելեքայ։ Այլ առ երկիւղին շփոթեալ, ոչ ըստ օրինի պատերազմիլ գիտաց, և ոչ հրամայել ըստ արժանեաց. Նախ՝ իբրև յառաջնում քաղխման անդ տկարացեալ՝ ինքն և ամենայն զօրն որ ընդ նմա Թիկունս դարձուցին Թշնամւոյն, և փախեան ՚ի քաղաքն, և աբիմելեք զհետ նոցա սպեալ եւ ելից դիակամբք փախստեից զձանապարհն մինչև ցդրունս քաղաքին։ Այնուհետև բանակ հարկանել յարիմ քաղաք ամուր ՚ի վերայ լերին, ուր կարի ինչ ՚ի բաց եայ ՚ի սիկիմայ ՚ի հարաւակողմն նորա։ Իսկ զեբուղ տեսանելով զկողմն ապստամբաց տկարացեալ ՚ի պատճառս այնչափ մեռելոց ՚ի նոցանէ, և զգաւաղ զզօրագլուխ իւրեանց վատթարեալ, և խոնարհեալ, ՚ի վաղիւ անդր եհան զնա և զեղբարս նորա ՚ի քաղաքէ անտի, զի մի՛ բնակեսցին անդ. Եւ ինքն և արք սիկիմացիք Թշնամիք աբիմելեքայ ՚ի դաշտ անդր։

Իբրև ազդ եղև աբիմելեքայ, վաղվաղակի բաժանեաց զզօրս իւր յերիս գունդս. զերկու գունդսն արձակեաց ՚ի վերայ նոցա, որք յանդաստանսն էին, և հարին զնոսա. իսկ ինքն երրորդ գնդաւն յարձակեցաւ ՚ի վերայ քաղաքին, և զօրն ողջոյն անընդհատ պատերազմեցաւ ընդ նմա. վասն զի և ՚ի քաղաքէն ուժգին մարտնչէին ընդդէմ նորա. այլ հուսկ յետոյ էառ զնա. և ոչ խնայեաց ա՛յ ՚ի մարդ և ա՛յ ՚ի շինուածս. ոչ սպառ խոթէր ընդ Թշնամիս և ընդ բարեկամս. կոտորեաց զամենայն բնակիչս, կործանեաց զպարիսպս, և զամենայն տունս հարթաքաստակ սպառ. և զգետինն ուր շինեալ էր քաղաքն՝ աղարտ վարեաց, զի այնուհետև ոչինչ իմիք լինցի ալիտանացու։ Այս այսպէս աշխարհելի քաղաքն՝ որ իբր եօթնհարիւր ամօք յառաջ աւերեցաւ յորդւոց Յակոբայ ՚ի պատճառս բռնաբարութեանն քեռն իւրեանց դինայի, և ապա շինեցաւ ՚ի քանանացւոց, յետոյ և ևս սմրացուցաւ յորդւոցն Իսրայելի, այժմ դարձեալ հինինայատակ եղև յիւրմէ իսկ քաղաքացւոյ. զոր ինքն զօրացոյց ՚ի հեղուլ զանպատ

արիւն եղբարց իւրոց, և ՚ի վերայ դիականց նոցա հաստատել զաթոռ թագաւորութիւնն ընդդէմ ամենայն իրաւանց և արդարութեան։ Այսպէս թէ իրաւամբք եւ հուր յաբիմելէքայ՝ ըստ գուշակութենն յոթաթամայ, և եկեր զարս սիկխմացւոց և զքաղաքն նոցա։

Օ՜այն դժնդակ ոճիրս լուեալ արանցն բնակելոց յաշտարակին սիկխմացւոց, առ ահի գազանացեալ բռնաւորին ամենեքեան մահին և ամրացան ՚ի տաճարն բերիթայ, վստահացեալ յամրութի նորա. զի էր ամրոց հզօր ՚ի բարձրադոյն վայրի կառուցեալ. միանգամայն և յուսային, թէ առ ՚ի պատիւ տեղւոյն՝ ոչ իշխեսցէ աբիմելէք մերձենալ և աւերել զնա։ Այլ որ ոչն երկեաւ ուրացօղ Աչմարիտ ՚ի լինել, ՚ի սուտ աստուածոյ անտի՞ երկիցէ. արդարև եցոյց պատուել զնա, բայց ցորչափ կարևոր վարկաւ առ ՚ի գլուխ տանելոյ զանօրէնն խորհուրդ իւր. իսկ այժմ զի տեսանէ զնա խոչընդոտան իւրումն կատաղի սրտմտութեանն՝ խնայեցէ՞ ՚ի նա, կամ պատկառեսցի ՚ի նմանէ։ Այսպէս այնորիկ իբրև ազգ եղև նմա, եթէ ամենայն արք աշտարակին սիկխմացւոց ժողովեցան յամրոցն բերիթայ, եւ վաղվաղակի ՚ի լեառն սեղմին, որ չէր ինչ հեռի ՚ի սիկխմայ. պատուէր առեալ զօրաց իւրոց, զի զոր ինչ առնէ ինքն՝ զնոյն արասցեն և նոքա։ Այս ահա առեալ նորա տապար ՚ի ձեռին՝ կոտորեաց քեռն մի փայտի, և եբարձ յուս իւր. զնոյն արարին և ամենայն զօրք նորա, զի բարձեալ մի մի քեռն փայտի, բերին կուտեցին շուրջ զամրոցաւն, և հուր հարեալ՝ այրեցին զամրոցն. և մեռան անդ ամենայն արք աշտարակին սիկխմացւոց իբրև հազար մի ընդ այր և ընդ կին։

Նոյնպէս դիմեաց ՚ի Թեբէս իբրև երկոտասան մղոնաւ հեռի ՚ի սիկխմայ. այլ բնակիչք քաղաքին ամենեքեան արք և կանայք, և ամենայն գլխաւորք փախեան և ամրացան յաշտարակ անդր, որ էր ՚ի մէջ քաղաքին հզօր և քաջ պաշտպանեալ. և սիրեցան ՚ի տանիս և ՚ի բրգաւանս նորա՝ անտի մարտն

չել ոչ արք և եղէ , այլև կանայք . եդեալ ՚ի մտի մեծագնոյ վաճառել զկեանս իւրեանց : Ոսկ աբխմելէք եկեալ՝ առանց երկար պաշարման էառ զքաղաքն , զոր անմարդի գտեալ՝ դիմեաց ՚ի վերայ աշտարակին . այլ տեսեալ զի ոչ կարէը խրամ հատանել ընդ որմունս , և ոչ սանդուխս կանգնել , գոլով արբեալ նախընթաց յաղթութիւք՝ գնաց անձամբ մերձեցաւ ՚ի դուրս աշտարակին առ ՚ի օրինակաւ իւրով խրախուսել և զզօրս իւր . և ահա կին մի ՚ի վերուստ անտի ընկէց քեկոր երկանի՝ այնպէս ուղիղ կշռեալով , զի անկաւ քարն ՚ի վերայ գլխոյ նորա , և խորտակեաց զգագաթն նորա : Տեսեալ աբխմելէքայ՝ թէ չէ ապրելոց , աղաղակեաց վաղվաղակի առ պատանեակն կապարձակիր իւր , և ասաց նմա սպանանել զնա սրով , զի մի՛ ասիցեն յետոյ եթէ կին սպան զաբխմելէք . առաւել վարկանելով զկորուստ քաջի անուան , քան զկորուստ կենաց իւրոց . որով կատարեցաւ և երկրորդ մանն գուշակութեանն յովաթամայ , զի ել հուր ՚ի սիկիմացւոց , և այն ՚ի ձեռն կնոջ՝ յառաւել խայտառակութիւն նորա , և եկեր զաբխմելէք . և ամենայն արք իսրայէլի , որք միաբանեալ էին ընդ աբխմելէքայ գնացին այր իւրաքանչիւր ՚ի տեղի իւր : Այս այսպէս կնքէ՞ր գիրն ասելով . * Այս դարձոյց Աստ զչարիսն աբխմելէքայ ՚ի գլուխ իւր , զոր արար հօր իւրում , կոտորելով զեօթանասուն եղբարսն իւր . և զամենայն չարիս արանց սիկիմացւոց դարձոյց Աստ ՚ի գլուխս նոցա , և եկին ՚ի վերայ նոցա անէծքն յովաթամայ որդւոյ յերոբաղայ ‖ . դպր . Ը . 56 . 57 :

Գ.Լ. Ժ.

Թովղա. Յայիր. Յեփթայէ. Աբեսան. Ելոն. և Աբդոն հաւ ղաբդոն դատաւորք Իսրայէլի։

Իբրև մեռաւ աբիմելէք, բարձաւ ընդ նմա և անուն թագաւորի Իսրայէլի. և միաբան հաւանուբ ժողովրդեան՝ ընտրեցաւ դատաւոր Թովղա որդի փուայ եղբօր գեդէոնի 'ի մօրէ, և ոչ 'ի հօրէ. քանզի գեդէոն էր 'ի ցեղէն մանասէի. իսկ փուա 'ի ցեղէն իսաքարայ. յորմէ յայտ է թէ այլ և այլ էին հարք նոցա։ Եւ այս մի՛ ինչ նոր թուեսցի, կամ ընդդէմ օրինաց, եթէ այրի կին միոյ ցեղի լինիցի առն այլոմ ցեղի. քանզի օրէնքն յայնժամ միայն պարտաւորէին զկանայս ամուսնանալ ընդ առն համացեղի իւրեանց, յորժամ ընդ ինքեանս բերէին կալուածս. զի մի՛ ժառանգութիւն ցեղից խառնակեսցի՝ ցեղէ 'ի ցեղ անցանելով. նմին իրի յորժամ չունէին ժառանգութիւն կալուածոց, կարող էին լինել առն յորմէ՛ ցեղէ և իցէ։ Այնպէս և այն չէ ինչ, զի փուա թէպետև էր 'ի ցեղէն իսաքարայ, սակայն բնակէր յերկրին եփրեմայ. զի ոչ գոյր ինչ պատուէր որդւոց իսրայէլի միշտ բնակել 'ի մէջ համացեղից իւրեանց. այլ միայն զկալուածս չվաճառել այլոմ ցեղի, վասն յառաջագրեալ պատճառին։

Յայսմ ընտրուէ եղոյց ժողովուրդն, թէ չէ արժան մերժել զտոհմ կամ զտուն արդիւնական ողջոյն՝ յաղագս յանցանաց միոյ ուրուք 'ի տանէ անտի. նմին իրի յիշելով նոցա զարդիւնս գեդէոնի, յոր վայելեցին ամն քառասուն և առաւել, ընտրեցին զթովղա զեղբօրորդի նորա. վասն զի յովաթամ կրսեր որդի նորա կամ մեռեալ էր, կամ դեռևս մանուկ անբաւական առ այն ծանր գործ. և կամ առ դառնութիւնէ սրտին վասն մեծի ապերախտութիւնէ

նոցա ՚ի տունն Հօր իւրոյ՝ խոյս տուեալ, կայր ուրբեք առանձնացեալ և վարէր կեանս սոսկականս։ Յաւուրս դատաց զիսրայէլ ամն քսան և երիս, և մեռաւ խաղաղութեամբ, և թաղեցաւ ՚ի սամարիա կամ ՚ի սամիր քաղաք անծանօթ։

Յետ նորա կարգեցաւ դատաւոր իսրայէլի յայիր գաղաադացի. որոյ էին որդիք երեսուն և երկու. ամենեքեան հասակաչափք, իշխանք երեսուն և երկու քաղաքաց. որք էին շինեալք ՚ի նախնեաց յայիրայ, և ՚ի նմանէ նորոգեալք և ամրացուցեալք. յոյր սակս և կոչեաց զնոսա աւանս յայիրայ, յերկրին գաղաադու։ Որքա հեծանէին յերեսուն և երկու յովանակս, ոչ ՚ի զօրավարութէ և յառաջնորդութէ զօրաց ՚ի մրցմունս մարտի, կամ յայլ ինչ արհեստ քաջագործութէիս յօգուտ հասարակաց, այլ լոկ ՚ի սնափառութէ սակս առ ՚ի ցոյց մեծութէ և իշխանական շքոյ։ Լոկ մինչ պէտք եղեն արիութէ ՚ի սանձել զժողովուրդն յամբարշտութէ կռապաշտութէ, և զինուորական քաջութէ ՚ի վանել զթշնամիս, յամենայնի գտան անպիտան ինքեանք և յայիր հայր նոցա։ Եւ դատեաց զիսրայէլ ամն քսան և երկուս։

Յառաջին ամն դատաւորութէ նորա ՚ի խաղաղութէ եղև երկիրն և ժողովուրդն, յերեսաց արտաքին թշնամեաց. բայց չարութէն ինքեանց թշնամի զնոր ՚ի ծոց իւրեանց անօրէնն կռապաշտութէ։ Օ՛ի չունելով ինչ երկիւղ յոմանէ, ոչ թողին յաստուածոցն հեթանոսաց զոր ոչ պաշտեցին, զբահաղիմն և զաստարովթն զաստուածս ասորւոց, սիդոնացւոց, և ամմոնացւոց. որով շարժեցին զբարկութէն տեառն. և մատնեաց զնոսա ՚ի ձեռս որդւոցն ամմոնայ՝ զորոց աստուածս պաշտեցին։ Եւ քա զառաջինն ակսան արշաւել ՚ի մահ ինչ երկրին գաղաադու. բայց ոչ յայիր, և ոչ անարի որդիք նորա արիացան զօրաժողով լինել գոունդ կազմել ընդդէմ նոցա։ Այսն որոյ համարձակութիւն առեալ ամմնացւոց՝ սփռեցան ընդ համօրէն գաղաադ, զոր ՚ի ժամանակս մովսիսի առին որդիքն իս-

բայէլի՛ ի ձեռաց ամուլհացւոց. և չարաչար հարեալ տահարէին զժողովուրդն։ Այս տեսեալ թէ չիք ոք դիմակալ նոցա, վստահացան անցին զյորդանան, և աւերէին զերկիրն յուդայ, բենիամինի, և էփրեմայ ընդ ամն ուղեւորեան։ Ոչ յայտ՝ թէ երբ կամ ուստի՞ սկսանէին այս ուղեւորեան ամք. ոմանք համարին՛ ի վերջին ամաց դատաւորութենն յայիրայ. այլք՛ ի վեցերորդ ամէ նորա մինչև ցաւ ոաջին աժն յեփթայեայ. որ առաւել հաւանելի է. ուստի ըստ սոցա այն ամք արշաւանաց ամմնացւոց մտանեն՛ ի քսան և երկու ամս դատաւորութենն յայիրայ. վասն որոյ ոչ աձեցուցանեն զչափ ժամանակագրութենէ։

Այլ գիրն Թէպետև զայս արշաւանս ամմնացւոց, որպէս և զկռւսպաշտութենէն որդւոց իսրայէլի պատմէ զկնի պատմելոյ զմահ յայիրայ, բայց ոչ ասէ թէ զկնի մահուան նորա եղեն. այլ որպէս յայլ բազում տեղիս սկսեալ զպատմութենէ՝ և ետրտէ զայն առանց ընդհատութենէ, և ապա դառնայ յետս և սկսանի պատմել զայլ ինչ, որ եղև յաոաջ, կամ՛ ի միջոցի այնր պատմութենէ. նոյնպէս և աստ առնէ։ Այս ըստ սոցա մեռաւ յայիր՛ ի վերջին ժամանակս արշաւանաց ամմնացւոց, յորժամ ընդ այնչափ ժամանակս առեալ նոցա զփորձ տկարութենէ եբրայեցւոց՝ ելին և բանակեցան մօտ՛ ի գաղատ գլխաւոր քաղաք համանուն երկրին, կամեցեալ պատերազմաւ տիրել համօրէն գաղատացւոց։ Յայնժամ ժողովուրդն իսրայէլի՛ ի յետին թշուառութենէ հասեալ՝ դարձան՛ ի մեղաց, մերժեցին՛ ի միջոյ իւրեանց զաստուածս օտարոտիս, և աղաղակեցին առ Նա. և կամեցեալ զառաջս ունել թշնամւոյն՝ եկին և բանակեցան՛ ի մասեփա գաղատացւոց, մերձ՛ ի սահմանս հեղեղատին յաբոկայ։ Այլ ամենեքեան այնպէս նկուն և նուաճեալ էին, զի ոչ ոք՛ ի բազմութենէն անտի իշխեր ելանել՛ ի գլուխ զօրուն, և սկիզբն առնել մարտի ընդդէմ որդւոցն ամմնայ. Թէպետև իշխանք նոցա խոստացան կարգել զնա՝ որ զայն գործ յանձն առնուցու՝

իշխան ամենայն ժողովրդեան : Եւ զի լուր քաջուձն յեփթայեայ հասեալ էր առ նոսա , որոյ նման ոչ գոյր ՚ի նմին ժամանակի յորդիսն իսրայէլի , հաստատեցին զնա առնուլ և կարգել զօրագլուխ :

Յեփթայէ էր որդի պաղատաց ՚ի համանուն գաւառէ՝ ըստ ոմանց ՚ի ցեղէն մանասէի , իսկ ըստ այլոց ՚ի ցեղէն գադայ . զոր ՚ի սկզբան անդ արշաւանաց որդւոց ամենայն յերկիրն իսրայէլի , եղբարքն նորա յետ մահուան հօր իւրեանց՝ հանին մերժեցին ՚ի տանէ և ՚ի ժառանգուէ հօր իւրեանց , որպէս երևի՝ յայտնի կամ գէթ լռելեայն հաւանութիւն ծերոցն , իբրև որդի անհարազատ՝ ծնեալ ՚ի պոռնկութենէ : Եւ քանզի քաջ էր նա և պատերազմական , տեսեալ զանձն մերկ կողոպուտ յամենայնէ , եդ ՚ի մտի խնդրել իւր վիճակ կենաց ՚ի ձեռն ասպատակութեան : Ժողովեաց առ ինքն այս անդործս դատարկասունս թափառականս . և զի այս ազգ սինկիքորաց յաճախ են յամենայն տեղիս , և միշտ պատրաստական լինել անձնատուր՝ եթէ գտցեն զոք ժողովել զնոսա և լինել գլուխ նոցա , ՚ի փոքր ժամանակի ստացաւ յեփթայէ ընդ ձեռամբ իւրով երևելի խումբ այսպիսի սրիկայից : Այլ զի արդար էր և իրաւասէր , ոչ կամեցաւ անիրաւ յափշտակութիւն ժողովել ինչս՝ ոչ վասն անձին և ոչ վասն իւրոցն . նմին իսկ ոչ մերձենայր ՚ի սահմանս իսրայէլացւոց , այլ խոյս ետ հանդերձ ընկերօքն, և գնաց հաստատեաց իւր կայան ՚ի սահմանագլուխս ամենացւոց ՚ի միում ՚ի լերանցն գաղաադու , որ կոչէր երկիր տովբայ . տե՛ղ ամուր յիշատակեալ ՚ա . մակ . ե . 23 . և ե . մակ . ձե . 17 . որպէս ուրեք ուրեք և ՚ի գիրս Թագաւորաց՝ բայց այլով անուամբ : Եւ մինչ ամենացիք աւերէին զհրեաստան , ինքն իրաւամբք օրինաւոր պատերազմի ասպատակէր յերկրի նոցա . մերթ յայս և մերթ յայն կողմն արշաւեալ՝ աւար հարկանէր զտեղիս նոցա , զոր անպատասպար ՚ի զօրաց գտանէր . և դառնայր աւարաւ բազմաւ ՚ի տեղի իւր :

Ամսոյն արշաւանօք , և մրցմամբք մանաւոր

բօք քաջալարժ գտաւ ՚ի հրահանգս մարտի. ուսաւ կարգել զզօրս, ընտրել զդիրս տեղեաց, բաժանել կամ միացուցանել զգունդս, դասաւորել ՚ի չափ կատ, յարձակիլ՝ կամ յետս կոյս խուսեալ. որով և անուն քաջութեանն նորա հնչեցաւ ոչ միայն առ ժողովուրդ ազգի իւրոյ, այլև առ որդիս ամենայն։ ¶ Եւ սակայն մինչ ամենացիք յետ Եօթնևտասան ամաց աւերելոյ զգաղատաղ, և զբնակիչս նորա նկուն առնելոյ՝ պատրաստէին ՚ի պաշարումն քաղաքացն և ամրոցացն գաղատադու և ՚ի տիրապետութեի երկրին, իշխանք գաղատադու տեսեալ զանձինս ՚ի նեղ ածեալ, մինչ բռնադատիլ կամ յայտնի պատերազմաւ դիմագրաւ լինել ամենացւոց, և կամ ազգաւ և գաւառաւ մատնիլ ՚ի ստրկութիւն նոցա, և չգտեալ զոք ՚ի բազմութենէ անտի իւրեանց՝ որ իշխեր առաջին լինել ՚ի մարտ, որպէս սովացաք, չոգան անձամբ յերկիր տովբայ առ յետքայէ աղաչել զնա լինել զօրավար զօրու իւրեանց՝ տալ պատերազմ ընդ որդիս ամենայն։ ¶ Նա յետքայէ դեռևս անմոռաց ունելով զզրկանս զոր աբարին նմա, տարագրելով զնա անարգաբար ՚ի տանէ հօր իւրոյ, զկնի ՚ի դէմն ածելոյ զայն նոցա, եցոյց թէ և այն հրաւէր ՚ի գործ ծանր և վտանգաւոր՝ յորում տային նմա գերագոյն և անկախ իշխանութենէ, ոչ էր առ ՚ի պատուել զնա ՚ի դարձ փոխարինի անարգանացն, այլ առ հարկի՝ լոկ ՚ի նեղութենէ ամենացւոց բռնադատեալ. մինչ զի ՚ի վճարել գործոյն և ՚ի բառնալ հարկաւորութենէն, թերևս անդրէն ՚ի բաց հանիցեն զնա յիշխանութենէն իբր զանարդ ոք և զանտոհմ, և դարձեալ խայտառակեացեն ՚ի նախատինս անձին իւրոյ. վասն այնորիկ յայտ արար նոցա, թէ ոչ յանձն առնու զայնպիսի կեղծ և զանհաստատ սպասաւորութիւն։ ¶ Սակայն պատրաստ ցուցանէր զանձն՝ ծառայել ժողովրդեան ազգի իւրոյ, եթէ հաստատութէք գիտասցէ, թէ ՚ի վճարել յաջողութեամբ զգործ պատերազմին, ըստ որում ակն ունէր յօգնականութէ ՚ի ն, հաստատեն զնա դատաւոր իւր-

եանց։ Իսկ նոքա երդուան նմա յանուն ամենայն բնակչաց գաղատու և այլոց որք յայնկոյս յորդանանու՝ ձանաչել զնա միշտ գլուխ և դատաւոր իւրեանց։

Ո՛կնի այնր երդմանն՝ գնաց յեփթայէ՛ի միասին ընդ նոսա՛ի մասեփա, ուր կայր գումարեալ բնդհանուր ժողով նոցա. և ուր ժամադիր էին ժողովիլ զօրաց նոցա։ Ընդ խօսեցաւ յեփթայէ՛ի լուր ժողովրդեան ամենայն իսրայէլի. եդ առաջի նոցա զբանս հրեշտակութեանէ իշխանացն գաղատու, և զպայմանն զոր եդ ընդ նոսա, ըստ որոյ եկն նա անդր. խոստացաւ նոցա զնուրն հաւատարմութեանէ, նոյնպէս և նոքա նմա. յայտնեաց առաջի նոցա զիտս իւր, ըստ որոյ խորհէր սկսանել զբան պատերազմին առ յաջողակ կատարումն։ Եւ այնպէս յերկուց կողմանց ուխտ հաստատութեանէ եղեալ ընդ միմեանս՛ի վկայութեանէ կոչելով զնա, միաբան հաւանութեանէ ամենեցուն կացուցաւ յեփթայէ իշխան և առաջնորդ համօրէն երբայական ժողովրդեան։ Ի վաճարիլ այսր ամենայնի, առաքեաց յեփթայէ հրեշտակս յիւր անուն առ արքայ որդւոցն ամմնայ՝ հարցանել զնա, թէ առ ինչ եկեալ է պատերազմիլ յերկրի իւրում. եթէ ունի պատճառս ինչ իրաւացիս, յայտնեսցէ նմա. զի ինքն պատրաստ է լսել և անսալ իրաւանց, և առանց՛ի զէն ձեռնարկելոյ առնել խաղաղութիւն։ Եւ պատասխանի արքայն ամմնայ. այն ամենայն տրաբածութեանէ երկրի յարևմտից յորդանանու, որ ձգի յառնոնայ մինչև ցյաբոկ և մինչև ցյորդանան, զոր առ իսրայէլ յելանել իւրում յեգիպտոսէ, և զոր ժառանգէ, ի՛մ է՝ ասէ. արդ դարձուսցէ զնա յեփթայէ առ իս խաղաղութեանէ, և գնացից։ Ընդքայն ամմնայ ընդարձակէ զպահանջումն իւր, բայց ստութեանէ. զի յայնմ տարածութեանէ երկրի զոր յիշատակէ, փոքր ինչ և եթ մասն էր ամմնացւոց. յոր ոչ մերձեցան որդիքն իսրայէլի յելանել իւրեանց յեգիպտոսէ. իսկ մեացեալն բովանդակ էր ամմնեզհացւոց և մովաբացւոց. սակայն նա պահանջ

ջէր զբաղըն. զի վստահացեալ՝ի ղենա իւր, ակն-
ունէր թէ իսրայէլացիք առ երկիւղն զիջանիցին ա-
մենայնի զինչ և խնդրեսցէ. կամ զի չուներ կամն
հասիլ՝ի պատերազմ, նմին իրի զայն ինչ պահան-
ջէր, որում գիտէր թէ ոչ ունիցին նաքա զիջանիլ:

Սակայն եթէ նա պատճառս խնդրէր պատե-
րազմի, յերեմայէ պատրաստագոյն ևս էր և ոչ
թազալափ մի երկրի տալ առ՝ի հաստատել ընդ
նմա խաղաղութիւն: Ոչէր անտեղեակ յերեմայէ
բուսոյ բարուց ժողովրդեան իւրոյ, որք չուներլով
առաջնորդ զօրաւոր՝ յամենայն ձախող պատահ-
մունս վաղվաղակի վհատեալ ընկճէին. այլ թէ
յանկարծ ուստեք զօրավար ոք քաջամարտիկ ել-
նէր արձանանայր՝ի գլուխս նոցա, ամենեքին ա-
ռիւծանայինն: Ունէր յերկրին տովբայ գունդ մի
քաջակերթ մարտակայ առ՝ի նմանէ վարժելոյ:
Տեղեակ էր՝ի բազմապատիկ անցից, զի յորժամ
որդիքն իսրայէլի խորտակէին զկուռս, և ապաշ-
խարութիւն դառնայինն և աղաղակէին առ նա ձօ սրտի
մտօք, միշտ յայլմական լինէին՝ի վերայ թշնա-
մեաց. և ահա կուռքն բարձեալ էին, և ժողովուրդն
դարձեալ առ նա իւր: Զինն իրի և ինքն վստա-
հացեալ յօգնութիւն ամենակալին՝ դարձոյց վաղ-
վաղակի անդրէն զհրեշտակս առ արքայն ամմնայ,
պատուիրելով ասել ցնա, թէ անիրաւ է պահան-
ջումն նորա. զի իսրայէլ ինչ ոչ էառ ոչ յամմնաց-
ւոց և ոչ՝ի մովաբացւոց. թէպէտ ունէր արդար
պատճառս, զի նոքա ընդդէմ իրաւանց ազգաց
զլացան տալ իսրայէլի անցս ընդ երկիրս իւրեանց
առանց ծանրութիւն ինն տալոյ նոցա, բայց և այն-
պէս տարաւ մովսէս լռութիւն այսմ անիրաւութեանէ.
զի պատուէր ունէր՝ի տնէ չգրգռել յայնժամ
պատերազմ ընդ ամմնացիս և ընդ մովաբացիս:
Այլ զամենայն երկիրս զոր ժառանգէ իսրայէլ յա-
րևմտից յորդանանու յառնուշեայ մինչև գյաբոկ,
և յանապատէն մինչև գյորդանան, էառ արդար
պատերազմաւ՝ի ձեռաց սեհոնի արքայի ամմնա-
ցւոց, զի նա ոչ միայն չէառ անցս իսրայէլի ընդ

երկիր իւր, այլև ծանր պատերազմաւ էլ ընդդէմ նորա։ Եւ իսրայէլ զօրացեալ օգնութիւն ՚ի իւրոյ, հնար սատակեաց զսեհոն և զամենայն ազգն նորա, և ժառանգեաց զերկիր նոցա. զոր նախնիք նոցա կանխաւ առեալ էին պատերազմաւ յամն նայցոց և ՚ի մովաբացւոց։ Եւ՝ զի ՚ած եբարձ զամովրհացին, և զերկիր նոցա ետ ժողովրդեան իւրոյ իսրայէլի, դու որո՞վ իրաւամբ խնդրես ժառանգել զնա։ Եւ յա երեք հարիւր ամք են և աւելի, զի բնակեալ է իսրայէլ խաղաղութիւն յամենայն քաղաքս առ եզերբք յորդանանու, և ոչ բաղակ և ոչ որ զկնի նորա այլ թագաւորք ամովրհացւոց էրբէք գլուխ ամբարձին պահանջել ինչ ՚ի մէնջ. իսկ արդ մի՛թէ դու առաւել իրաւո՞ւնս ունիցիս քան զնոսա։

Եւ այսպէս յեփթայէ երիւք արդար պատճառօք եցոյց զիրաւունս իսրայէլացւոց ՚ի վերայ երկրին. նախ՝ զի արդար պատերազմաւ ստացան զնա. երկրորդ՝ զի ՚ած որ ՚ուր է ամենայնի, ետ զայն նոցա. և երրորդ՝ զի բազմամեան ժամանակաւ ժառանգեցին զնա առանց ուրուք հակառակելոյ կամ ընդդէմ բողոքելոյ։ Եւպա կնքէ զբանս՝ յանձնելով զիրաւունս իւր արդար դատաստանացն ՚ած. յորմէ նոր զօրութի՛ւն՝ հանձար և խելամտութի՛ւն գործոյն առ ընկալեաւ, գնաց վազվազակի՛ ՚ի զննել զքաղաքս և զամրոցս մանասէի և գաղաադու, որք առաւել ՚ի վտանգի կային. այլ արար և ՚ի մասեփա գաղաադու որ ՚ի մէջ հռամովդայ և ռաբայ էր իբր նահապարիսպ ընդդէմ ամմոնացւոց ՚ի լեռնակողմն. զօրաժողով եղև ՚ի կողմանց անտի. առաքեաց և առ որդիս եփրեմայ խնդրել օգնութի՛ւն, այլ նոքա ոչ եկին. կացոյց յամենայն քաղաքս լեռնականաց զօրս ՚ի պահպանութի՛ւն. զի թէ փորձ ինչ ընդ այն կամիցին փորձել որդիք ամմնայ, դիմագրաւ լինէ ցին նոցա։ Եւ ինքն գարձ արարեալ ՚ի մասեփա, ուր էր մեծ բանակն զօրաց, և առեալ զզօրս, էջ նոքօք ՚ի դաշտ ընդարձակ հանդէպ բանակի զօրաց ամմնացւոց. և անդ առ արօտը քաղաքաւ խա-

դայելի՝ անցեալ զՀեղեզատան առնոմնայ, և կաղ-
մեալ յարդարեալ ի ձակատ զգօրս իւր, յարձակե-
ցաւ բուռն զօրութեամբ ի վերայ որդւոց ամմնայ,
եհար և խորտակեաց զբանակ նոցա. և զհետ
մնեալ փախստեից՝ կոտորեաց զնոսա յարոհերայ
մինչև ի ներքս ի սեմմնիթ քաղաք, իբրև չորս
աշխարհապրական մղոնաւ հեռի յեսեբոնայ ի կողմն
ռաբաստայ քաղաքի ամմնացւոց. և անտի մինչև
ցյաբեղ քաղաք անուանի յաղագս իւրոց այգեստա-
նեացն. և այնպէս սպառապուռ հարուածեալ զա-
մմնացիս, կալաւ ի նոցանէ յայնմ պատերազմի քա-
ղաքս քսան՝ անպատասպար գտեալ զնոսա։

Զհետ այսպիսի մեծի յաղթութեանն՝ այն ինչ դառ-
նայր յեփթայէ ցնծալից յաղթական փառօք, ահա
ելանէր ընդառաջ նորա միամօր սիրելի դուստր
նորա բազմութեբ օրիորդաց՝ թմբկօք և պարուք և
յաղթական երգօք։ Իբրև հետես զնա դորովական
հայր նորա, անդէն և անդ մուացաւ զյաղթուէնն,
և ամենայն ուրախութեի նորա ի սուգ անմխիթար
և ի թախիծ անհնարին փոխեցաւ։ Վասնզի յա-
ռաջ քան զյարձակիլ իւր ի վերայ թշնամեաց՝
ուխտեալ էր զուխտ անսուտ, զի թէ տացէ նմա
ձեր դառնալ յաղթանակաւ ի պատերազմէ անտի,
մատուսցէ նմա յողջակէզ զոյն՝ որ նախ ընդառաջ
ելանիցէ նորա ի տանէ իւրմէ։ Վասն այնորիկ
տեսեալ զսիրեցեալ միակ դուստր իւր՝ պատառեաց
զհանդերձս, և գոչեաց յաւազին, վայ է ինձ
դուստր իմ ասէ, նկուն արարեր զիս. յաղթանակաւ
դառնամ ի թշնամեաց, և ահա դու խոչընդոտն
եղեր ինձ, որով ես ինձէն ի պարտութեի մատնե-
ցայ. զի ես բացի զբերան իմ վասն քո առ ձեր, և
ոչ կարացից դարձուցանել։ Ասէ խոովեցաւ աղ-
ջիկն, ա՛յ զդողանի հարաւ ընդ անակնկալ գոյժն,
և ա՛յ գոյն երեսաց նորա փոխեցաւ. մատոյց արիա-
բար զանձն պատարագ ձեռն ՚ի յաղագս սքանչելի
յաղթութեն՝ զոր ետ Տէր իւրում. եթէ վասն իմ՝
ասէ բացեր զբերան քո առ ձեր, արա ընդ իս՝ որ-
պէս եղ ի բերանոյ քումմէ. փոխանակ զի արար

քեզ ՝ որ վրէժխնդրութեա՛ն ի Թշնամեաց քոց։ Ո՛ւ-
ղայր զօրագլուխն, կայր անսասան աղջիկն. պատ-
րաստագոյն էր զոհն քան զքահանայն. ինչ մի և եթ
խնդրեաց ի հօրէն, Թոյլ տալ նմա զամիսս եր-
կուս շրջիլ ի լերինս, և լալ զկուսութի՛ւն իւր ընդ
ընկերս իւր. զոր և ընկալաւ։ Ա՛պա ի կատարիլ
երկուց ամանոյն, դարձաւ առ հայրն իւր. և ասէ
գիրն. * Ա՛ղար նոաւաւ զուխտն զոր ուխտեաց ‖։

Ա՛ասն ուխտին յեփթայեայ խնդիր մեծ է, Թէ
զինչ՞ ուխտեաց, և զիա՞րդ կատարեաց։ Յաղագս
առաջնոյն՝ բազումք ի հին հարց և ի յետնոց վար-
դապետաց իմանալով զյատուկ ողջակէզ մատու-
ցանելն զենմամբ և այրմամբ, հաստատեն լինել
ուխտ անխոհեմ, բայց անպարտ և առնեն՝ գէթ
ի ծանր մեղաց. իբր զի ասեն՝ յեփթայէ զոլով այր
պատերազմող, և յայն պարագայս ժամանակի գլխո-
վին վառեալ ի փոյթ փրկութե՛ն ազգին, ուստի և
զամենայն խորհուրդ մտացն յայն ևեթ յածեցու-
ցեալ, զի խորտակեսցէ զքշնամիս ազգին և ՚ի յ ի-
րոյ, անպղուշաբար առանց կարևոր ընտրողութե՛ն,
մանաւանդ Թէ ըստ ումանց՝ նաև անյաղթելի տպի-
տութի՛ւն՝ համարելով մեծ ինչ հաճոյական ՚ի յ առնել,
որպէս զայն ուխտ անորոշ՝ արտաքոյ սահմանաց կար-
գելոց ի՛ նոսա։ Ա՛այց են և այս ումանք, որք հայեցեալ
ի գիրն, որ յառաջ քան զպատմել զուխտադրութի՛ն
յեփթայեայ, ասէ. * Ա՛յն եղև ի վերայ յեփթայեայ
հոգի տեառն ‖. յայսմանէ համարին ի հոգւոյն ՚ի յ ազ-
դեցութի՛ն արարեալ նորա զուխտն ընդհանուր ա-
ռանց սահմանելոյ ինչ ի մասնաւորի. զոր հաւաս-
տէ մեզ ասէն վայրումն նորա և ոգին և պատառումն
հանդերձից ի տեսանելն յանկարծ զդուստրն գալ
ընդառաջ։ Ա՛յս այսպէս բարեմտութի՛ն մեկնելով,
արդարացուցանեն զնա Թէ՛ յառնել զուխտն և Թէ՛
ի կատարելն. մանաւանդ զի և ՚ի՞նչ իսկ պարզևե-
լով նմա զյաղթութի՛ն յոյր սակս ուխտեաց, երևի
հաճեալ գէթ ընդ բարեմտութի՛ն ուխտողին, որ
կարծեր նոաւաւ փառաւորել զնա, և ոչ Թէ դառ-
նացուցանել։

Յայսմ մասին Թերևս մարթ էր արդարացուցանել զեփթայէ գէթ ՚ի ծանր յանցաւորութենէ սակս նախագրեալ պատճառացդ. այլ մնայր տակաւին խնդիրն ՚ի վերայ կատարման ուխտին։ Ասացումք հայեցեալ՚ի սաստիկ պատուէրն ՚ոն՝ որով արգելու զմարդազոհն, ո՛չ ՚ի մի, այլ ՚ի բազում տեղիս ՚որ գրոց, ոչ հաւանին Թէ յեփթայէ զենմամբ զոհեալ իցէ զղուստր իւր։ Նկատելի է Թէ խնդրեաց աղջիկն ամիսս երկուս լալ զկուսութիւն իւր. * Թողացո՛ ինձ զերկուս ամիսս, և երթայց զկոյսութիւնս իմ ‖. զոր ընկալաւ.* և ելից զկուսութիւն իւր ՚ի վերայ լերանց ‖։ Աստ ասեն չիք յիշատակ մնհու. այլ միայն ողբ վասն կուսութեանն մարել զամենայն աւուրս կենաց իւրոց։ Նթէ տգիտացաւ ասեն յեփթայէ յուխտեն, մինչ ընդ այն երկամնեան ժամանակս ոչ կարաց ուսանել յիշխանացն և՛ ի քահանայից զնշմարտութիւն. կամ Թէ այնչափ տգիտաք եղեն նոքա, մինչև պարտաւոր դատել զնա լինել որդւոցման ՚ի կատարումն ուխտին։ Նյս եթէ ուսաւ, որպէս հաւանական երևի, ո՞ կարէ հաւատալ զեփթայէ այնպէս յամառեալ՚ի մոլար խիղճ մտաց իւրոց, մինչև այնչափ կսկծանօք սրտի իւրոյ գործել զայն գործ, զոր գիտէր ոչ գոլ հաճոյ ՚ոյ։ Նման որոյ ըստ կարծեաց սոցա՝ յեփթայէ կատարեաց զուխտ իւր ըստ այնմ՝ ըստ որում մարթ էր օրինօք և արդարութիւն կատարել, բառնալով զքաղաքական կեանս դստերն. զի զրկեաց զնա նորին յօժարակամ հաւանութիւն ոչ միայն յամենայն կենակցութիւնէ ընդ մարդկան, այլև ՚ի յուսոյ որդեծնութենէ. որ ընդ այն ժամանակս ՚ի նախատինս և ՚ի նզովս էր համարեալ, պարտաւորելով զնա միանձնացեալ՚ի տան ուրեք մերձ ՚ի խորանն վկայութեան. իսկ ըստ այլոց ՚ի տան հօր իւրոյ մեկուսացեալ. զի և այն էր ողջակէզ կատարեալ՝ առանց սրոյ և հրոյ պատարագել ՚ոն զմարմին և զհոգի՝ ոչինչ ընդհատ յարիւնահեղ զոհից։ Նրևի՝ ասեն

ոքա, Թէ նաև ՚ի գիրն զսոյն ակնարկէ. զի որպէս յառաջ քան զասելն, նոյնպէս և զկնի ասելոյն՝ Թէ կատարեաց զուխտն, ոչ յիշէ զմահ զաւակին, այլ միայն զկուսութիւն նորա, և զլինելն անապատ.* Յետ երկուց ամսոցն գարձաւ (ասէ) առ հայր իւր. և արար նովաւ զուխտն զոր ուխտեաց. և նա ոչ գիտեր զայր ‖: Իբր ասել, հայրն արար զուխտն. այլ զնորին կամակար հաւանութիւն ոչ ետ զնա առն: Ընդանձնութիւն նորա խիստ էր. զի յամին միանգամ ևեթ թոյլ տուեալ էր գտերացդ իսրայէլի ժողովիլ առ նա, և աւուրս չորս և ոչ աւելի կալ ընդ նմա, և ողբալ զնա, այսինքն կարեկցաբար մխիթարել զնա: Այս սովորութիւն տարեկան այցելութիւն պահեցաւ ՚ի մէջ իսրայէլի յայնկոյս յորդանանու զամենայն աւուրս ցորչափ եկեաց դուստր յեփթայեայ. ըստ ոմանց նաև զկնի մահուան նորա գտերքդ գաղաադու ամի ամի ժողովէին, և գովութիւն կատարէին զնիշատակ արիութեան նորա:

Ընդ ընդ մէջ երկուց կարծեացս՝ բազում վարդապետք և մեկնիչք հայեցեալ առաւել ՚ի բառն ողջակէզ, զարիւնաւոր կատարումն ուխտին իմաստան. ուխտեաց ասեն՝ ողջակէզ, ապա ողջակէզ մատոյց. և յայսմ միաբան գոլով նոցա, զանազանին միայն ՚ի հանգամանս ուխտին. զոր ոմանք ըստ որում նշանակեցաք և յառաջագոյն՝ համարին յաղթեցութիւնէ հոգւոյն ՚ով արարեալ, և նովին հոգւով կատարեալ. յոյր սակս գովութիւն ասեն յիշատակի հաւատ նորա յառաքելոյ. Եբր. ժա. 32. 33: Այլք թէպետև գովեն զկրօնասիրութիւն նորա և զբարեպաշտութիւն՝ յորմէ բերաւ յայն ուխտ, բայց ասեն՝ ՚ի ջերմութենէ զինուորական ոգւոյ վարեալ ձգեցաւ արտաքոյ սահմանաց կարգելոց յՕրէ՝ գահավէժ և անբնտրօղ ուխտադրութիւն. զոր տապարեպաշտութիւն և հաւատով յետոյ կատարեաց: Երոնիմոս. ՚ի մէն Եբէմ. գլ. է. ասէ. *Նթէ յեփթայէ մատոյց զդուստրն իւր կոյս Ըստ, ոչ պատարագն է հաճոյ, այլ՝ անձն մատուցողին ‖:

Այլ ամբոխիս. Էին Ե. յաղթե զոլը. Եւ ձէ.
* Ահ կարեմ ասել ամբաստանել զառնէն, որ հարկեցաւ ընուլ, զոր ուխտեալն էր. բայց աչխարելի հարկ՝ որ որդեսպանութիւնէ վճարի։ Օ օրագոյն բարբառի զնոյնս և մերս եղիչէ՝ յասելն. * Ո՛ծ՝ որ զմիս զուարակաց ՚ի ուտէ, և զարիւն նոխազաց ՚ի ըմպէ, զիարդ արիւն մարդոյ քաղցրանայցէ նմա. զոր և մարդոյս բնութիւն ոչ առնու յանձն... Ասկ ընդհ՚ր ասեն պատարագեցաւ դուստրն յեփթայեայ... Թուի ինձ՝ Թէ պատարագն (այն) ընդունելի չէ... այլ վրիպական բանք եւրին ՚ի տագնապ ժամանակին.... մի դատարկաբանութիւն Թուիցի ինչ քեզ այսպիսի խնդրուածս աղջկանն (վասն լալոյ զկուսութիւնն). լաւագոյն է քան զյանձնառութիւն պատարագելոյն... մի ոք ամենևին յանուսումնութիւնէ՝ զայս պատարագ ՚ի կարծիցէ համարեալ (հաձոյական)։ Հանդերձ այսու ամենայնիւ հարք ոչինչ երկմտին՝ ՚ի կարգ այլոց արդարոց դասել զեփթայէ. ասէ օգոստինոս. * Յաղագս բարեպաշտ և հաւատարիմ քաղաքավարութեան, յորում հաւատամք զնա վախճանեալ, այսպիսում արժանացաւ վկայութիւնէ (յառաքելոյ)։

Այլ որք զկուսական զանարիւն նուիրուն դրստերն ընտրեն իմանալ, յորոց է և կաղինոս՝ զոր ասացի ունիմք, ոչ հարկ համարին ձգել զնշանակուն բառին ոչխարէ. հայեցեալ ՚ի ծանր ծանր դժուարութենն՝ որք զկետ գան արիւնաւոր նուիրմանն. զի և ՚ի գրոց՝ զաւրական նուիրուն անձին այլաբանել ՚ի զոհս և յողջակէզս. որպէս և ՚ի բանս եսայեայ ակնարկեալ զնուիրմունս հեթանոսաց դարձելոց ՚ի քէն ասէ. * Ողջակէզք նոցա և պատարագք նոցա ընդունելի եղիցին ՚ի վերայ սեղանոյ իմոյ. (ծղ. 6։) Ո՛րդ՝ զընտրուն երկաքանչիւր կարծեաց Թողեալ յընդարձակ քննուն մեկնչաց, զորմէ մարթ է տեսանել և ՚ի մեկն. Թղթ. առ եբրայ. ժա. 32. մատիցուք անդրէն ՚ի կարգ պատմութեանս։

Ետ վճարելոյ յաղթութենն ընդդէմ ամմնացւոց, որոնք եփրեմի ժանտաբարոյք և խռովայոյզք

խուռն կազմեալ բազմութիւն եկին կուտեցան ՚ի վե-
րայ յեփթայեայ. խօսեցան առ նա ոչ իբրև առ
իշխան ազգին՝ պատկառանօք առաջի գնելով նմա
զգանգատ իւրեանց՝ թէ ուստի՞ն, այլ լի ցասմամբ
իբրև առ բռնաւոր ոք անիրաւեալ առ նոսա, ա-
սելով ատուիր, թէ զիա՞րդ եղև պատերազմել ընդ
որդիս ամմնայ, և զնոսա ոչ կոչեաց. և սպառնային
նոյնժամայն հրով այրել զտուն նորա, և զնա ՚ի
նմին: Այլ անգամ ևս արարին նոքա այսպիսի ինչ
առ գեդէոնիւ. որպէս պատմեցաք յառաջագոյն.
և յաջողեաց նոցա. զի գեդէոն առանց ՚ի զինս
ձեռնարկելոյ՝ շտորհեաց նոցա զաւարն զոր խընդ-
րէին. կարծէին զնոյն գտանել և այժմ: Այլ
յեփթայէ ո՛չ կամեցաւ ներթել, զի այս չար սպըս-
տամբութիւն արմատացեալ ՚ի մէջ ցեղին եփրեմայ,
ոչ սնսալ զօրասլետաց՝ յորժամ՝ կոչին ՚ի մարտ, և
ապա ՚ի վձարել յաղթութենն՝ գալ սուր ՚ի ձեռին,
և պահանջել լինել բաժանորդ փառաց և աւարաց:
Ո՛ առաջինն ՚ի դէմ ա՛ծ նոցա զանիրաւ դանդա-
ղանս նոցա. նեղեալ էի ասէ ես և ամենայն ժո-
ղովուրդ իմ մինչև յոգիս ապաստան յերեսաց որդ-
ւոց ամմնայ. խնդրեցի ՚ի ձէնջ օգնութիւն, և ո՛չ
եղաւք. և ես լինէին եղէ զանձն իմ ՚ի վտանգ,
և ո՞ր յաջողեաց ինձ. և արդ զի՞նչ ունիք պահան-
ջել յինէն, զի եկիք առ իս յաւուր յայսմիկ մարտն-
չել ընդ իս. որով ազդ առնէր նոցա, զի լռեսցեն
՚ի խռովութենէ, և դարձցին խաղաղութիւն ՚ի տեղիս
իւրեանց: Այլ տեսեալ զնոսա, զի յամառեալ
պնդեալ յապստամբութեան՝ բանիւ ոչ համձկէին,
բռնադատեցաւ սրով լռեցուցանել զնոսա, զբա-
զումն ՚ի նոցանէ առ ետեղ կոտորելով:

Սակայն և այնպէս ապրեալքն ոչ միայն չխո-
նարհէցան, այլ նախատել ևս ժպրհէցան զգաղաա-
դայիս, յորոց էր և յեփթայէ, իբր աղգ անարդ և
անզօր. ո՛վ էք դուք ասելով ՚ի մէջ՝ կամ առաջի
եփրեմի և մանասէի, յերկոցունց ևս փախստա-
կանք, սակս յայնկոյս յորդանանու քնակելոյ նոցա.
և օտարք լինիմք և ՚ի յուվսեփայ: Յայնմանէ

և առաւել զայրացեալ յեփեթայեայ, հրամանն ետ սաստկացուցանել զհարուածն. միանգամայն և պատուիրեաց զօրաց իւրոց երթալ ունել զՀունն յորդանանու, զի մի ոք՝ի փախստէից ողջանդամ զերծանիցի։ Ընդ անյաջողութիւն լեզուի նոցա մատներ զնոսա սրոյ արանցն գաղաադու. զի որք՝ի փախըստէից անտի հետ զՀետ հասանէին յանցս գետոյն անցանել անտի յերկիր իւրեանց, հարցանէին ցնոսա պահապանքն, եթէ յեփրեմա՞յ իցեն. և՝ի ժխտել նոցա, սոքա նշան խնդրէին՝ ասել շիպպոլէթ. որ առ մեզ հասկ լսի. և՝ի չյաջողել նոցա հնչել զշայ, անտի իմանային եթէ ընդկ՝ի լեռնէն եփրեմայ են. և անդէն կոտորէին զնոսա. զի ոչ գոյր առ նոսա հնչուածն տառիս շ. այլ փոխանակ այնր ս հնչէին։ Եւ այսպէս կատարած այսր անսպատճառ յանդուգն ապստամբութեանն՝ եղև կորուստ քառասուն և երկու հազար արանց յորդւոց եփրեմայ։ Յետ այնորիկ դատեաց յեփթայէ խաղաղութիւն ցիսրայէլ ամս վեց և եթ, և կնքեաց զցանկալին բազմարդիւն կեանս իւր. և թաղեցաւ՝ի քաղաքի իւրում՝ի գաղաադ։

Յետ նորա դատեաց զիսրայէլ եսեբոն՝ի ցեղէն յուդայ բեթղեհէմացի. վասն սորա իբր դժուարադէպ լինի պատմի ունել ուստերս երեսուն, և դստերս երեսուն՝ ամենեքին միանգամայն կենդանիք. և ինքն առ կենդանութիւն իւրով աճ երեսուն կին արտաքուստ ուստերաց իւրոց. և ետ արտաքս զերեսուն դստերս իւր նոյնչափ արանց. որով բազմացոյց ազգականս տան իւրոյ. և դատեաց զիսրայէլ ամս եօթն, և մեռաւ և թաղեցաւ՝ի բեթղեհէմ։ Յետ նորա յաջորդեաց եղոն՝ի ցեղէն զաբուղոնի. որ դատեաց ամս տասն։ Ապա աբդոն, ՝ի ցեղէն եփրեմայ որդի եղղեքայ փարաթոնացի, որ դատեաց ամս ութ։ Որոց ևս էին քառասուն որդիք միանգամայն կենդանի, և՝ի նոցանէ երեսուն թոռունք՝ յայն հասակ, զի ամենեքեան հեծանէին յեօթանասուն յաւանակս. որք մինչ ելանէին՝ի միասին, երևէին իբրև ողջոյն գունդ մի ասպետաց։

ԳԼ. ԺԸ.

Դատաւորութիւնք Սամփսոնի, և Հեղեայ: Աբեմելոք
ծնունդ սամփսոնի, և անունք նորա:

Ի վերայ ժամանակի դատաւորութիւնք սորա քաղուեմ և զանազան են կարծիք մեկնչաց. այլ գլխաւորքն են չորք: Առաջինն դնէ զսամիսոն յառաջ քան զՀեղի. այլ այս ոչ կարէ կալ. քանզի Հեղի դատեաց զիսրայէլ ամն քառասուն. որոց առաւելագոյն մասն փակի ի ժամանակս ծառայութիւնէ որդւոց իսրայէլի ընդ ձեռամբ փղշտացւոց. յորում ժամանակի ծնաւ և սամիսոն. որպէս յայտ է. ապա ըստ այսմ կարծեաց չէ մարթ գտանել զքսան ամն դատաւորուէ նորա: Երկրորդ կարծիքն դնէ զսամփսոն յառաջին քսան ամն դատաւորուէ Հեղեայ. դժուարին է և այս. ապա թէ ոչ՝ հարկ կր ասել թէ սամիսոն ի տղայութիւնէ կամ յօրօրոցէ սկսեաւ իցէ վարել զդատաւորութիւն. և ողջոյն կեանք նորա հազիւ զքսանամենիւք անցեաւ իցէ: Երրորդ կարծիքն դնէ զնա զկնի Հեղեայ. բայց և այս դժուարուի կրէ. զի ըստ առաւել հաւանելի կարծեաց՝ կատարած ծառայութիւնէ փղշտացւոց եղև յամին երկրորդի յետ մահուան Հեղեայ. ուստի և ընդդէմ ելանէ գուշակութիւնէ հրեշտակին առ մայրն սամիսոնի. որում ոչ ասաց՝ թէ փրկեսցէ, այլ թէ նա սկսցի փրկել զիսրայէլ ի ձեռաց փղշտացւոց. զոր և ելք իրացն հաւաստեցին. որպէս տեսցուք ստորև: Իսկ չորրորդ կարծիքն դնէ զսամիսոն ի վերջին քսան ամ հեղեայ. ընդ որում համաձայնին ամենայն բանք ծր գրոց. վասն որոյ և առաւել հաւանելի երևի. որպէս ցուցցուք յառաջիկայդ:

Այք գիրք յետ պատմելոյ զմահ աբդոնի՝ պատմէ զծառայութինն իսրայէլի ընդ ձեռամբ փղշտացւոց.

յետոյ զծնունդ և զգործս սամիսոնի մինչև ցմահ նորա. ապա ՚ի պատճառս ծննդեան և մանկութե՛ սամուէլի խօսի և յաղագս հեղեայ. ա. Նա՛գ. ա։

Ալ ասն ծառայուե՛ ասէ՝ թէ երկարեաց ընդ ամն քառասուն. նոյնչափ ամն տայ և դատաւորութե՛ հեղեայ. իսկ սամիսոնի տայ ամն քսան. բայց ո՛չ ասէ, թէ սամիսոն դատեաց զկնի ծառայութեան փղշտացւոց, և ո՛չ թէ հեղի յաջորդեաց զկնի սամիսոնի։ Այսպա յայտ է թէ այս ամենայն ամք փակկին ՚ի միմեանս ՚ի մի ժամանակ. վասն որոյ ո՛չ է պարտ հաշուել զայն միջոց ժամանակի ուրոյն ուրոյն՝ քառասուն, և քառասուն, և քսան, որ լինէր հարիւր, այլ պա՛րտ է առնուլ լոկ զգումար ժամանակագրական՝ քառասուն և մի։ Այս թէ արդարև քսան ամք դատաւորութե՛ն սամիսոնի փակկին ՚ի քառասուն ամն ծառայութե՛ն այլազգեաց՝ քաջայայտ է ՚ի գրոյն, որ ասէ. * Այս դատեաց զիսրայէլ յաւուրս այլազեացն ամն քսան ‖. դ՚՚դ. ժէ. 20։ Այս թէ՝ ոչ փրկեաց նա իսպառ զժողովուրդն ՚ի ծառայութէ, այլ միայն սկսաւ զփրկութի՛ զանազան հարուածովք տկարացուցանելով զնոսա, նոյնպէս քաջայայտ է ՚ի նախանշանակեալ բանից հրեշտակին. իսկ կատարեալ փրկութի՛ն եղև յաւուրս սամուէլի, միով ամաւ զկնի մահուան հեղեայ. որ յայտնի երևի նախ՝ ՚ի հարուածոյն, որով ՚ի պատճառս տապալեալին եհար ած զայլազգիս՝ աւերելով զերկիր նոցա, և զհաղարաւորս ՚ի նոցանէ սպանանելով. հարուած՝ որ խոնարհեցոյց զնոսա առաւել քան զմեծ կոտորած պատերազմի։ Այրկրորդ ՚ի բանից անտի զոր ունիմք ա. Նա՛գ. է. 13. ուր ասի. * Այս եղև ձեռն տեառն ՚ի վերայ այլազգեաց զամենայն աւուրս սամուէլի ‖. այսինքն զամենայն ժամանակս յոր դատեաց սամուէլ, եհար ած զայլազգիս. և այնպէս կորացոյց զնոսա, մինչ ոչ ևս կարօղ լինել գլուխ ամբառնալ և խիզախել ՚ի վերայ իսրայէլի. և առաւելապէս ՚ի քսանեւրորդ ամի լինելոյ տապանակին ՚ի կարիաթարիմ. զի ասէ, թէ ՚ի

քսան ամն՝ յորս եկայ անդ տապանակին, հանդեաւ ժողովուրդն ծառայելով ինձ։ * Եւ եղև (ասէ սէր գիրն) յօրէ յորմէ հետէ էր տապանակն ի կաւրիաթարիմ, բազմացան աւուրքն, և եղեն ամք քսան. և հայեցաւ (ըստ լատ. և քաղդ. հանգեաւ. ըստ եբր. և ըստ այլոց, կողկողեցաւ, կամ ուղղեցաւ) ամենայն տունն իսրայէլի զկնի տեառն ‖ ա. Ռաք. է. 2։

Ա.Դդ՝ տապանակն (ըստ որում ցուցցուք ի տեղւոջ իւրում,) աճաւ ի կարիաթարիմ յաւարտ առաջնոյ ամի զկնի մահուան հեղեայ, և յառաջնում ամի դատաւորուքեն սամուէլի. ապա ծառայութիւնն այլազգեաց կամ փղշտացւոց կատարեցաւ միով ամաւ զկնի մահուան հեղեայ, յառաջնում ամի դատաւորութեն սամուէլի։ Ապա յորժամ մեռաւ հեղի՝ էին ամք երեսուն և ինն, յորմէ հետէ ժողովուրդն իսրայէլի անկաւ ընդ ծառայութիւն փղշտացւոց։ Հեղի դատեաց ամն քառասուն. ապա սկսաւ դատել միով ամաւ յառաջ քան զծնունդն սամիսոնի. և սա ծնաւ ի ժամանակի ծառայուքեն. ապա հեղի սկսաւ դատել յառաջ քան զծնանել սամիսոնի, և ոչ եթէ յառաջ քան զդատել։ Յորմէ զհետ գայ՝ թէ հեղի յաջորդեաց զկնի աբդոնի, և ի քառասուն ամն դատաւորութեան նորա փակին երեսուն և ինն ամք ծառայութեանն. և ի սոսա քսան ամք դատաւորութեանն սամիսոնի. և զկնի հեղեայ և սամիսոնի մնաց և ևս ամ մի ծառայութեան։ Ապա քառասուն ամք ծառայութեան, և քառասուն ամք հեղեայ, և քսան՝ սամիսոնի, հաշուին միայն քառասուն և մի. յորում ոչ մտանէ դատաւորութիւն սամուէլի։ Այսչափ ինչ յաղագս ժամանակի սամիսոնի և հեղեայ. արդ՝ մնասիցուք ի կարգ պատմելեացդ։

Յետ մեծի յաղթութեանն յեփթայեայ, որով իսպառ նկուն արար զորդիս ամմոնայ մինչև ցառաջինն ամ դատաւորութեն հեղեայ ընդ ամն իբրև երեսուն և երկու՝ որդիքն իսրայէլի հանգեան յարտաքին Թշնամեացդ, և ի հեղեայ իշխանէ իւրեանց

ջունէին երկիւղ պատկառելոյ. զի նա Թէպէտ էր բարի և երկիւղած, բայց առ կառավարութի՛ յետսահիտ ժողովրդեան՝ ՚ի կարձել զնոսա ՚ի չարեաց, և ՚ի պահել ՚ի կարգի, անքաւական և անզօր. ուստի առանց ակնածելոյ ուստեք՝ դարձան ըստ սովորութե՛ իւրեանց անդրէն ՚ի կռապաշտութի՛: Ոչ սակս որոյ և ՚ես ՚ի պատիժ ամբարշտութե՛ նոցա Թոյլ ետ փղշտացւոց՝ յառնել ՚ի վերայ նոցա. և ընդ սմա քառասուն ՚ի ծառայութի՛ իւրեանց նուաձել զնոսա: Փղշտացիք էին հինգ նախարարութի՛ք կամ Թագաւորութի՛ք սահմանակիցք և դաշնադիրք ընդ միմեանս, յարևմտեան կողմն երկրին Իսրայէլացւոց, ձգեալ ընդ երկայն առ եզերբք միջերկրական ծովուն: Որքա յամին երկրորդի դատաւորութե՛ հեղեալ արշաւեցին ՚ի կողմն մի երկրին Իսրայէլի, և չգտին զոք ընդդիմամարտ առաջի իւրեանց. քանզի հեղի քահանայ, որում պարտ էր իբրև իշխան ժողովրդեան զօրաժողով լինել ընդդէմ նոցա, անվարժ և անփորձ գոլով զինուորական հրահանգաց, և սիրօղ առանձնական հանդարտութե՛, նստեր ՚ի սեղով յապահովի հեռի ՚ի թշնամեաց, և Թողեալ էր զժողովուրդն՝ առնել ինքնին զոր ինչ կարեն. վասն որոյ և փղշտացիք անարգել յառաջ խաղացեալ՝ կալան զԹաբուեաԹա և զդաբաա և զայլ քաղաքս ինչ Իսրայէլացւոց մօտաւորս երկրի իւրեանց: Այս Թէպէտ ոչ պատմէ աստ Աբդիէլն, բայց այլուր ՚ի Ա. Ընդ. Է. 14. յայտնի նշանակէ ՚ի պատմելն զդարձուցանել այլազգեաց զքաղաքն՝ զոր առին, յորդւոց Իսրայէլի յասկաղոնէ մինչև ցգէթ:

Յայսպիսում վիճակի գոլով եբրայեցւոց առ դատաւորութե՛ հեղեալ, իբր անհնարին երևեր փրկութե՛ նոցա, եԹէ ոչ Աստ յարուցանէր զօրագլուխ արիասիրտ քաջակորով ՚ի զարԹուցանել զառաջին պատերազմական ոգիս ժողովրդեան, և գումարել զնոսա ՚ի մարտ ընդդէմ Թշնամեաց. որպէս արար յայլ նուագս: Այլ այս անգամ այլով Ձանապարհաւ կամեցաւ Աստ յուցանել զսքանչելի

կարողուէ ՚ի խոնարհեցուցանել զայլազգիս , այս է՝ ո՛չ բազմութիւն մարտից , և ոչ զօրութիւն զինուց , այլ ՚ի ձեռն անզէն պատանւոյ միոյ . որ նա ինքն է սամփսոն . ծնեալ ՚ի գեղջ միում՝ ՚ի մէջ սարաց և եսթաւուլայ մերձ ՚ի տեղին՝ որ կոչէր բանակեւղ դանայ , սակս անդէն հարկանելոյ որդւոցն դանայ զվրանս իւրեանց՝ մինչ երթային առնուլ զկայիսա . գլխ . ծը . 12 : Նոյնս հօր նորա մանուվէ ՚ի ցեղէն դանայ . իսկ մայր նորա ամուլ էր՝ և ոչ ծնանէր . երևեցաւ նմա հրեշտակն տեառն ՚ի կերպարանս փառացի և մեծաշուք մարդոյ , և խոստացաւ նմա թէ հանդերձեալ է ծնանել որդի . բայց պատուիրեաց զի յայնմ օրէ հրաժարեսցի ՚ի գինւոյ և յօղւոյ և յամենայն արբեցուցիչ ըմպելեաց , և յանիծք կերակրոց ոչ մատչին ՚ի զոհ : Ոյնոյն պատուիրեաց և վասն մանկանն . զամենայն արբեցուցիչ ըմպելի մի ըմպել , և մի անիծք ինչ ուտել , և զհերս գլխոյ իւրոյ մի փոքրել . զի ուխտաւոր ՚ի եղիցի մանուկն անդստին յորովայնէ մինչև ցօր մահուան իւրոյ . և նա սկսանիցի փրկել զիսրայէլ ՚ի ձեռաց փղշտացւոցն : Գնաց կինն ՚ի տուն , (յորմէ երևի թէ արտաքոյ եղև առ նա երևումն հրեշտակին ,) և պատմեաց առն զամենայն զոր ասաց ցնա հրեշտակն . և նորա լուեալ զպատուէր հրեշտակին , զոր մարգարէ ումն մեծ կարծէր , անկաւ ՚ի վարանս՝ թէ զիարդ ունիցին սնուցանել զմանուկն , զինչ եղիցի գործ նորա , կամ չինչ իրս ունիցին կարգել զնա . նմին իրի աղաչեաց մանուվէ զ՚ՅՀՀ՝ առաքել միւսանգամ զայրն ՅՀՀ , զի ուսուսցէ նոցա զկամն ՅՀՀ , և զամենայն որ ինչ կարևոր է վասն մանկանն :

Ուստ ՅՀՀ աղաչանաց նորա , և ահա մինչդեռ նստէր կինն յանդի , երևեցաւ նմա դարձեալ հրեշտակն տեառն . և նա վաղվաղակի ընթացաւ կոչեաց զմանուվէ զայր իւր . որոյ եկեալ և տեղեկացեալ եթէ նա ինքն է՝ որ խօսեցաւ ընդ կնոջն , եհարց ասել վասն գործոյ մանկանն . իսկ հրեշտակն կըրկնեաց նմա զամենայն յառաջագրեալ պատուէրս

զոր եւ կնոջն։ Յայնժամ աղաչեաց զնա մանուէ թոյլ տալ ինքեան, զի զննուցու ուրմի յայծեաց, և պատրաստեսցէ զայն նմա. ասէ ցնա հրեշտակն. եթէ կե բակուր ինձ կամիս պատրաստել զուրն՝ ոչ կերայց. իսկ եթէ ողջակէզ կամիս առնել, ետն մատուսցես զնա։ Ետ ապա մանուէ զանուն նորա, թէ ո՞վ իցէ և ուստի. զի յորժամ կատարեսցի բան նորա, արժանաւոր պարգեւօք մեծարեսցեն զնա. ասէ ցնա հրեշտակն, զի՞ հարցանես զանուանի իմմէ. զի նա խորհրդաւոր է, և ծածկեալ ի մարդկանէ։ Ապա հասոյց մանուէ զուրն և զհաց, և եդ ի վերայ վիմին որ կայր անդ. և ահա ել բոց (որպէս թուի) ի վիմէ անտի. և մանուէ և կինն նորա կային անդ և հայէին. և տեսեալ զի զոյզ ընդ ծխախառն բոցոյն ամբարձաւ և հրեշտակն, և ոչ ևս երևեցաւ. յայնժամ ի միտ առ մանուէ՝ եթէ հրեշտակ ետն էր նա. ուստի և զահի հարեալ ասէ ցկինն. մահու մեռանիցիմք, զի տեսաք. զայս ասէր ըստ աւանդութեանէ առաջոյ, զոր և այլուր նշանակեցաք, թէ որ ոք տեսանէ աչօք զանմարմին էակ՝ վաղաժամ մեռանի։ Ասէ կինն առաւել զգօն քան զայրն գտեալ, քաջալերեաց զնա՝ ասելով. եթէ կամէիցեալ էր մեզ սպանանել զմեզ, ոչ էր արարեալ մեզ զնոսատուսին, և ոչ զողջակէզն ընկալեալ էր ի ձեռաց մերոց. և ոչ իսկ այնչափ սիրեցեալ էր զմեզ, և ուսուցեալ մեզ զկամս իւր։ Այս երևուսին հրեշտակին ըստ նախագրեալ յորորդ կարծեացն եղև յամին երկրորդի դատաւորութեանն հեղեալ. և յառաջնում սմի ծառայութեէ վղջտացուց. ուստի և ծնունդ սամփսոնի եղև յամին երրորդի դատաւորութեանն հեղեալ, և յերկրորդի՝ բռնակալութեան, յամի աշխարհի 3038. ըստ կաղինոսի։

Ընդ՝ ծնաւ կինն ըստ ժամանակին որդի, և կոչեաց զանուն նորա սամփսոն. աճեաց մանուկն ի տան հօր իւրոյ բարիոք մնդեամբ անդստին ի մանկութէ. և էր կայտառ աչխոյժ զօրաւոր մարմնով. միանգամայն և հանճարեղ և հնարագէտ. և

օրհնեաց զնա ՚ի նոր. և հոգի նորա սկսաւ շրջիլ ընդ նմա, վառեալ զնա ՚ի փոյթ փրկութեանն եղբարց. և տալով նմա ոյժ և զօրութիւն գեր քան զկար մարդոյ, և ուղղելով զգնացս նորա ոտն առ ոտն յառաջագէմ լինել ՚ի նուաճումն թշնամեաց։

ԳԼՈՒԽ ՀԱՒ.

Ամփոփումն առնու ՚ի նմա այլազգի. և ՚ի պատճառս նորա հրկիզեալ առնէ ՚ի չեռն աղաւնոցաց զանդս այլազգեաց։ Ապրէ յուրայ փոն զնա ՚ի չեռս այլազգեաց. և նա ծնօղաւ էլոյ սպանանէ հալար այր յայլազգեաց անօք։

Իբրև եհաս սամփսոն յեօթնևտասներորդ ամ հասակի, գնաց ՚ի Թամնաթա, և տեսեալ անդ աղջիկ մի ՚ի դստերաց այլազգեացն, հաճոյ թուեցաւ նմա. և եկեալ ՚ի տուն պատմեաց հօր և մօր իւրում. և ասաց առնուլ զնա նմա ՚ի կնութիւն։ Ասէ նոքա դիտելով՝ զի արգելեալ էր յօրինաց առն իսրայէլացւոյ առնուլ կին յայլազգեաց, ասեն. միթէ պակասի՞ն դստերք յամենայն ժողովրդեան իսրայէլի, զի երթիցես դու առնուլ կին յայլազգեաց։ Ո՛չ այս ասացին ծնօղքն, զի ոչ դիտացին՝ ասէ՝ եթէ գիրն, թէ ՚ի ՚ինէ է, զի հատուցումն խնդրիցէ նա յայլազգեաց, որք ՚ի ժամանակին յայնմիկ տիրէին իսրայէլի. յորմէ յայտ է թէ ՚ի մասնաւոր ինչ յայտնուիցէ, կամ յառանձին ՚ինծայեին աղդեցուէ կամէր սամփսոն առնուլ կին յայլազգեաց, պատճառս խնդրելով թշնամութեանն ընդ նոսա. զի ամուսնութիւնն թէպէտ սովորաբար է յօդակապ սիրոյ, բայց բազում անգամ տայ և պատճառս թշնամութեանն. մանաւանդ յորժամ լինի ՚ի մէջ օտարազգեաց և այլակրօնից. և առաւել՝ մինչ ոք դիտմամբ հնարի գտանել այնպիսի պատճառս։ Խնդրեր սամփսոն

չարչարել և նկուն առնել զայլազգիս. բայց ոչ իբր ՚ի փրկութէն ժողովրդեան ազգին իւրոյ, այլ իբր ՚ի վրէժխնդրութէն անձնական անիրաւութէ իմիք եղելոյ ընդդէմ նորա. նմին իբրև ՚ի նոցանէ խնդրելը կինն, զի վաղագոյն գոցէ պատճառս ՚ի գործադրութէն խորհրդոյն. և ինքնին միայն կամէր յառնել ընդդէմ նոցա առանց օգնականութէ ազգին իւրոյ, զի մի և և՛ս առելի արասցէ զազգն յաչս նոցա՝ ընդ որոց բռնակալութէքն կային։

Այսպա տեսեալ ծնողացն զնա պնդեալ ՚ի կամս իւր, ծանեան զի ոչ է առանց տնտեսութէ ՚ինն. հաւանեցան նմա, և իջեալ ընդ նմա ՚ի Թաւինաթա՝ հաստատեցին զբան ամուսնութէն. և ՚ի Ջանապարհին մինչ երթային, խոտորեցաւ սամիսոն յայգեստանն մերձ յաւանն Թաւինաթայ. և ահա կորիւն մի առիւծոյ կատաղաբար եկ ընդդէմ նորա։ Այլ կարեր սամիսոն խուսել ՚ի նմանէ. և ոչ իսկ սուր կամ այլ ինչ զէնս ունէր ՚ի ձեռին. այլ ՚ի նմին ժամու ընկալեալ նոր զօրութէն ՚ի ՚ինէ, շատ եղեն նմա փոխանակ զինուց երկոքին բազուկք նորա ձեղքել և պատառել զամենի գազանն իբրև զնորածին ուլ մի յայծեաց։ Այր սքէն եղիշէ իմանայ խորհրդաբար և զոսոխն մեր զսատանայ, որ զէտակն ունէր՝ Թէ ՚ի պրպէս կորուսցէ զսամիսոն զաղաւատարարն իսրայէլի, վասն որոյ և դրգռեաց և մոլեգնեալ կատաղեցոյց զգազանն. * Առիւծ առիւծոյ (ասէ) պատահեցաւ. մինն էին աւուրց՝ լի չարութէք, և մինն այն ինչ կորիւն առիւծու՝ մատաղ յաւուրց. իսկ նա զօրութէք մանչէ՝ քամահելով զանոյժ բանս, և փափուկ մարմնովն հեղձուցանէր... Առնչեաց ընդդէմ եօթնապիսեան մանկանն. իսկ նա իբրև զուխտաւոր քահանայ (զոհապործ՝) զաջ ձեռն դնէր ՚ի վերայ գլխոյն, և զահեակն արկանէր զնեերքին կզակաւն. ՚ի գիրկս իւր առեալ հեղձուցանէր զերևակի տրտմութէն, և Թմբրեցուցեալ զանմահ չարութէն. ընդ նմին և զշունչ գազանին քաղեալ հանէր։ Այս առարեալ սամիսոնի՝ ապա եկն առ ծնօղս իւր, և

երթայր ՚ի միասին, այլ ոչ պատմեաց նոցա զոր ա-
րարն։ Այլ թէ գիտացեալ էր միշտ նոյնպէս պա-
հել զգաղտնիս իւր ՚ի կանանց իւրոց, որպէս գի-
տաց պահել զայս ՚ի ծնողաց իւրոց։ Ապրդ՝ զկնի
աւուրց ինչ, յորս արարին ՚ի տան զկարևոր պատ-
րաստութիւնս, դարձան անդրէն ՚ի Թամնաթա աւ-
նել հարսանիս. և զՃանապարհայն խոստոբեցաւ
սամփսոն տեսանել զդէզ առիւծուն առ ՚ի նմանէ
պատառելոյ. և ետես զի ահա մեղուք կազմեալ
էին մեղր ՚ի բերան նորա. զոր առեալ ՚ի ձեռին
երթայր ուտելով. ետ և հօր և մօր իւրում, և
երթալով ՚ի միասին ուտէին. բայց ոչ յայտնեաց
նոցա թէ ուստի՛ եհան զայն. սակայն յետոյ յայտ-
նեաց, որում՝ չէր պարտ յայտնել։

Ապրար հայր նորա անդ հարսանիս սամփսոնի
զեօթն օր ըստ սովորութեանն երկրին. և քաղաք-
ացիքն էտուն սամփսոնի ընկերս երեսուն պատանիս
լինել ընդ նմա յաւուրս հարսանեացն և խրախա-
նալ ՚ի միասին. բայց իրօք ՚ի զգուշութեն, զի ակն-
ածէին ՚ի զօրութենէ՝ որ երևեր յանձին նորա, և
հասկածէին զնմանէ։ ՚Ի խրախութեան անդ արկ
սամփսոն ընկերաց իւրոց առեղծուած, ժամ տու-
եալ նոցա զեօթն աւուրս հարսանեացն. զոր թէ
գտանիցեն, խոստացաւ նոցա երեսուն պատառա-
կալ և երեսուն պատմուճան հանդերձեալ. ապա
թէ ոչ՝ նոքա զնոյն տային նմա։ Ասդ ՚ի յանձն առ-
նուլ նոցա զպայմանն՝ ասէ.* ՚Ի կերչէ եղ կերա-
կուր, և ՚ի հզօրէ քաղցր։ Յառաջին երիս աւուրս
շատ խորհեցան և մտայոյզ եղեն, այլ ոչ կարացին
գտանել. ապա յաւուր չորրորդի տեսեալ զի մեղ-
ձեհոյ օրն եօթնեերորդ, և ոչ կարեն դուշակել
ինչ, դիմեցին առ կին նորա՝ բռնադատեալով զնա
պատրել զայրն և որսալ ՚ի բերանոյ նորա զմեկ-
նութիւն առասպելին, ապա թէ ոչ՝ սպառնային այ-
րել զտուն հօր նորա և զնա ՚ի նմին։ Ապակայն կինն
ըստ կանացի հետաքրքիր բարուց արդէն յօրէ յա-
ռաջնմէ Թախանձէր զայրն պատմել նմա. բայց
յետ այնորիկ ՚ի մեռցեալ աւուրս չորս խրախու-

թէ՝ յաւել զթախանձանս ողբանոք և փաղաքշանոք, խառնեալ և սուտ արտասուս, և տրտունջս՝ որպէս թէ ատիցէ զնա, և խոստմունս մեծամեծս՝ չայտնել բնաւ ումեք. ապա յաւուրն Եօթնեերորդի այնչափ թախանձեաց, այնչափ շողոմեաց, այնչափ ելից առաջի նորա, մինչև թուլանալ մեղկիլ սամփսոնի յարիւական հաստատութէ. և զոր հօր և մօր իւրում ոչ պատմեաց, յայտնեաց յեղյեղուկ կնոջն՝ թէպետև ընդ բիւր կնքով գաղտնութէ։ Այլ հապիւ թէ վճարեալ էր սամփսոնի զասել իւր, գիտացին զայն ոչ միայն ընկերքն սամփսոնի, այլև քաղաքն ողջոյն. որք և՛ ի նմին Եօթնեերորդ աւուր յառաջ քան զմտանել արեգականն եկեալ ասեն ցնա. * Ո՞րինչ քաղցրագոյն քան զմեղր, կամ զի՞նչ հզօրագոյն քան զառիւծ ։ Եւ այնպէս ինաց սամփսոն ըստ պայմանադրութեանն պարտապան տալոյ նոցա երեսուն պատմուճանս ։

Այս եղև առաջին պատճառ՝ զոր կալաւ սամփսոն խնդրել՛ի փղշտացւոց զվրէժ անիրաւ բռնակալութէն նոցա՛ի վերայ ժողովրդեան իսրայէլի, ընդ պատրուակաւ վրէժխնդիր լինելոյ անիրաւութէն՝ զոր արարին նմա, բռնադատեալով զկինն իւր եղծանել զկնիք իւրոց գաղտնեաց ։ Այսն այնորիկ լի սրտմտութէ գնաց յասկաղոն՝ իբր ինն աշխարհագրական մղոնաւ հեռի՛ի Թամնաթայ, և յաջողեցաւ՛ի վերայ նորա հոգւի ՚ն, եհար կոտորեաց յասկաղոնացւոց անտի արս երեսուն, և առեալ զկողոպուտ նոցա՝ ետ առեղծանելեաց առասպելին ։ Եւ ինքն նովին սրտմտութէ դարձաւ՛ի տուն հօր իւրոյ՝ թողեալ անդ զկինն իւր ։ Այլ յետ աւուրց ինչ զիջաւ բարկութէն նորա, զոր կալաւ ընդդէմ կնոջն. գուցէ ինքնին ծանեաւ՝ եթէ մեծագոյն եղև վրիպումն իւր, որ ոչ գիտաց պահել զգաղտնիս իւր յօտարազգի կնոջէ, քան զնոցայն՝ զի յայտնեաց զայն որդւոց ազգի իւրոյ. վասն որոյ և արժանի ներողութէ համարելով ընդնա՝ դարձաւ այց առնել նմա, ածեալ ուլ մի յայծեաց՛ի պարգև՛ի նշան հաշտութեան ընդ նմա ։

Այլ իբրև կամեցաւ մտանել ի սենեակ առ կին իւր, ընդ առաջ եղեալ նորա աներն՝ արգել զնա, ասելով թէ դուստր նորա ոչ ևս է կին նորա. զի յորժամ ասէ Թողեր զնա և գնացեր, եղի ի մտի թէ առեցեր զնա և ի բաց արձակեցեր ի քէն. նմին իրի եւոու զնա ի կնուԹի միւսմ ի բարեկամաց, որ ի խրախուԹէ հարսանեացդ գտաւ առ ընդ քեզ. սակայն եԹէ հաճոյ իցէ քեզ, աւանիկ քոյր նորա կրտսեր լաւագոյն և հանձարեղ քան զնա, տաց զնա քեզ փոխանակ քեռն երիցու։ Այս առաջարկուԹէն չէր ընդունելի և ոչ այնմ որ լանդրեցէ զհաշտուԹէն, Թուղ Թէ սամփսոնի, որ լանդրեր քակել զբարեկամուԹէն և զաղգակցուԹիւն. վասն որոյ եդ վկայուԹէն հրապարակաւ, Թէ այսուհետև ունի իրաւունս առնելոյ այլազգեաց զամենայն չարիս ոչխարի և ձեռնհաս իցէ։

Յերկրին հրէաստանի յաձախուԹէ էր յոյժ աղուխսուց, որպէս և այժմ իսկ ըստ պատմելոյ քաղմաց, ոչ միայն ի լերինս և ի մայրիս, այլև յաւերակս շինուածոց։ Զսին իրի ընդ այն ժամանակս քաջավարժ էին արկանել երագազ և վարմ, և զբազմուԹէն աղուխսուց միանգամայն Թակարդել և ըմբռնել առ ի նուազեցուցանել զնոսա, որք անհնարին ապականուԹէն գործէին յայգեւառանս նոցա։ Սամփսոն այսպիսի հնարագործուԹէք և գործակցուԹէք բարեկամաց՝ կալաւ հետ զհետէ զերեք հարիւր աղուէս. և կապեալ զնոսա երկու երկու ձետ ընդ ձետ, և ի մէջ երկուց ձետոց փոքրիկ խուրձ իւղային դիւրավառ շերտից, որք միանգամ վառեալ գժուարաւ շիջանին, և ի ժամանակի հնձոց մինչ կէս մի հնձեալ էր, և ի բարդս դիզեալ, և կէս մի դեռևս կանգուն, լուցեալ ի խրձունս շերտից հուր, արձակեաց զնոսա ի զանազան կողմանց յանդս այլազգեաց. բայց ոչ միայն խումբ խառնիխուռն, զի այն շփոԹուԹիւն ևԹէ ունէր արկանել ի նոսա առանց մեծ ինչ միտս գործելոյ. և ոչ մի առ մի, զի յայնժամ իւրաքանչիւր ի նոցանէ աձապարէր յորջ իւր հասանել և շի-

ջուցանել զՀուրն. այլ զայդ զայդ կապեաց ՚ի խաչիանել զաշխատասոյր ընթացս միմեանց, ՚ի նկրտիլ միոյն յայս՝ և միւսոյն յայն կողմն ընթանալ. և այնպէս յամրացուցանելով զընթացս, և ուրեք ուրեք ՚ի ձգձգել զմիմեանս՝ զկայ առնլով, լինի ժամանակ ընդարձակագոյն տարածելոյ հրդեհին։ Այս հնարք սամիսոնի եւ յաջողութիւն ՚ի գլուխ. զի հրընկէց աստղատակաւորք նորա յայլ եւ յայլ կողմանց յարձակեալ, և զբոց հրոյն յանդաստանէ յանդաստան տարեալ՝ այրեցին ոչ միայն զկանգնաւորն չև ևս հնձեալ, և զյառաջագոյն հնձեալսն և ՚ի դէզս բարդեալ, այլ հասուցին զՀուրն և ցայգիս և ցձիւնեխս, և այրեցին զամենայն. զոր թերևս չկարէին առնել բազմութիւն զօրաց։

Այս գործ այնչափ զարհուրեցոյց զայլազգիս, մինչև փոխանակ խնդրելոյ վրէժ ՚ի սամիսոնէ իբրև յապականչէ երկրի իւրեանց, հաստատեցին վճարումն առնել նմա սակս անկրաւութեան՝ զոր արար նմա Թամնացին աներ նորա, հանելով ՚ի նմանէ զկին նորա։ Զկին իւր եկեալ այրեցին ըզտուն նորա և զնա և զդուստր նորա զկին սամիսոնի ՚ի միասին. և նոյն հետայն ծանուցին զայն սամիսոնի. որպէս զի տեսեալ նորա զվրէժխնդրութիւն նոցա՝ այնուհետև դադարեսցէ ՚ի թշնամութենէ։ Այլ նա արար պատասխանի. եթէ դոյնչափ ևս առնիցէք, ոչ հաձեցայց. այլ զվրէժ իմ յիւրաքանչիւր ումեքէ ՚ի ձէնջ խնդրեցից. և ծանիջիք զիս միշտ ձեզ թշնամի։ Այնուհետև ոգւով վրէժխնդրութեանն շրջեր ՚ի խնդիր այլազգեաց. և ուր և գտանէր ՚ի նոցանէ իշխանաւոր կամ սոսկական, բազմութեան կամ սակաւաթիւ ՚ի միասին, զինեալ կամ անզէն, արձակ համարձակ հասեալ ՚ի վերայ՝ կոտորէր զնոսա անխնայ. որով և արար հարուածս մեծամեծս ՚ի նոսա։ Իսկ այլազգիքն տեսեալ զայն սաստկացեալ, կային շուարեալ. խօսէին և խորհէին ընդ միմեանս, և ոչ կարէին հասու լինել, թէ զիա՞րդ յետ նուաձելոյ ընդ ձեռամբ իւրեանց ըզժողովուրդ որդւոց Իսրայէլի ողջոյն, ոչ կարէն

գտանել հնարս ինչ ընդդէմ առն միոյ եբրայեցւոյ։

Ի՝նչ յայսպիսի յուզմունս խորհրդոց ծփէին, ազգ եղև նոցա թէ սամփսոն կամ առ՝ի հանգիստ առնուլ, և կամ առ՝ի զգուշութիւն՝ խոյս ետ և նստի՝ի քարանձաւին ետեմայ, որ էր առ սահմանօք ցեղին յուդայ՝ի սեպացեալ և՝ի դժուարամատոյց լերին, ՚ի վերայ հեղեզատին բեսողոյ՝ որ հոսի՝ի ծոմն միջերկրական։ Ո՛այն լուեալ այլազգեաց՝ հաստատեցին բազմութիւ՛ն սպառազինելոց ելանել՚ի վերայ յուդայ, և բռնադատեալ զնոսա՝ տալ ՚ի ձեռս իւրեանց զսամփսոն։ Ելեալ և անցեալ անարգել ընդ սահմանս ցեղին դանայ և շմաւոնի, եկին բանակեցան առ սահմանօք յուդայի, ՚ի տեղւոջն՝ որ յետոյ կոչեցաւ կոտորած ծնօտի։ Ելդիք յուդայ զարհուրեալ ընդ յանկարծահաս գալուստ այլազգեաց՝ վաղվաղակի արձակեցին հրեշտակս գիտել զպատճառ գալստեան նոցա. նոքա կարձառօտ ետուն պատասխանի. Սամփսոն նստի յայրին ետեմայ. տո՛ւք գնա՚ի ձեռս մեր, և խաղաղութի՛ւն մեզ նեսցուք աստի։

Պարտ էր որդւոցն յուդայ զսմենայն ինչ յանձն առնուլ, քան՝ զայր այնպիսի, որ էր մի միայն նեցուկ ողջոյն ազգին, մատնել՚ի ձեռս թշնամեաց։ Ո՛ասան ամբ էին և աւելի, զի հեծէին ընդ լծով բռնակալութի՛ւն այլազգեաց, և չգտաւ ո՛ք՚ի համբերն ժողովրդեան իսրայէլի, որ իշխէր ինքնագրաւ յառնել՚ի վերայ նոցա վասն փրկութի՛ւն ազգին. սամփսոն եղև առաջին և մի միայն՝ որ սկսաւ խորտակել զեղջիւր հպարտութի՛ւն այլազգեաց։ Ո՛այց նոքա ահիւ մեծաւ ըմբռնեալ, և զազատութի՛ն՚ի նեղկայ վտանգէն ևեթ խորհելով, առանց զմտաւ ածելոյ զմեծագոյն վտանգն, յոր ունէին անկանիլ հատանելով զամենայն յոյս փրկութի՛ւ ազգին, զի՛ջան անմտութի՛ւ անիրաւ պահանջողութի՛ւ այլազգեաց։ Ո՛ռաքեցին գունդս երից հազարաց՚ի ծակ վիմին ետեմայ՝ ունել զնա և մատնել՚ի ձեռս այլազգեաց։ Ո՛ւելորդ էր այնչափ բազմութի՛ւ առաքել. զի թէ կամեցեալ էր սամփսոնի պաշտպանել

անձին, չէին և նոքա բաւական ի գլուխ տանել զնրան. զի բազուկք ոչք պատառեցին զառիւծ և զարհուրեցուցին զայլազգիս, մինչև չիշխել մերձենալ առ նա, կարօղ էին և ի նոսա առնել ինչ. մանաւանդ զի տեղին գժուարամատոյց էր. ուր չէր հնար բազմութիե միանգամայն մատչել, այլ սակաւուց ամանց և տաժանմամբ։ Այլ զի հաւատարիմ էր նա առ ժողովուրդ աղգին իւրոյ, ոչ կամէր զզօրութիւն իւր ի կիր արկանել ընդդէմ պաշտօնէից նորա։

Այդ՝ մատուցեալ ոմանք ի գլխաւորաց գնդին ի քարայրն առ սամփսոն, առաջի արարին նմա զվտանգն՝ յոր կային ի պատճառս նորա. ոչ գիտես ասեն, զի իշխեն մեզ այլազգիքն. և ընդէր արարեր զայն ընդ մեզ, ի գրգռել զնոսա ի վերայ մեր. և ահա յայն սակս ստիպեալ յահէ բռնութիե նոցա՝ եկաք կապել զքեզ և մատնել ի ձեռս նոցա։ Այս պատասխանի սամփսոն. ներեմ ձեզ կապել զիս, բայց երդուարուք ինձ դուք՝ չսպանանել զիս, այլ կենդանի տալ ի ձեռս նոցա, և ձեզ կալ ի բացեայ լինիմ։ Այրդուան նմա, և կապեցին զերկուագոյն՝ ոչ միով, այլ երիւք նոր առասանօք. և հանեալ ի քարանձաւէ անտի՝ պահպանութիե երեք հազար սպառազինաց աճիւն կացուցին յանդիման բանակի այլազգեաց։ Եղբա իբրև տեսին զթշնամի իւրեանց կապեալ, ձայն բարձին ուրախութիե և դիմեցին ընդդէմ նորա. բայց կարի ինն համառօտ եղև ուրախութիե նոցա։ Վանգի այն ինչ շուրջ պատեցին զնովաւ, և կամէին ձեռն ի նա արկանել, յաջողեցաւ ի վերայ նորա հոգի տէն, և ահա ի քթթել ական կտրեաց ի բազկաց զայն ամենայն կապանս. և տեսեալ անդ ի գետնի ծնօտ մի էշոյ, առ զայն ի ձեռին, և յաջ և յահեակ շահատակեալ նովաւ, եհար և սպան անդէն հազար այր յայլազգեաց անտի, իսկ զայլս առհասարակ ի փախուստ դարձոյց։ Յայնմ շփոթութիե այլազգեաց եթէ երեք հազարք եբրայեցիք՝ որք կային ի գնէն, արհանային ձեռն ի գործ արկանել ընդ սամփսո-

նի, և ցեղն շմաւոնի և դանայ ընդ որս անցանէին փախստեայքն, զին առեալ էին ընդդէմ նոցա, իբր անտարակոյս յայնմ աւուր ի վերջ հասուցանէին զծառայութիւն իւրեանց։ Այլ մանկական անգոսնելի երկիւղն՝ որով պաշարեալ էին, հայեցօղս և եթ արար զնոսա, առանց արիանալոյ ի զին ձեռնարկել. ուր գրեթէ հաւաստի էին վասն յաղթութեան։

Նոկ սամխոն զկնի այնչափ կոտորածի և գժբնդակ աշխատութեանց, տակաւին այնպէս սեթափ ժիր և կորովի գտաւ, զի զարհուրանաթաթաւ ծնօտ իշոյն ի ձեռին ունելով, սկսաւ երգել զերգ յաղթութեանն ասելով.* Ընօտիւ իշոյ ջնջելով ջնջեցից զնոսա. զի ծնօտիւ իշոյ կոտորեցի հազար այր։ Եւ ապա որպէս թէ չէր մեծ ինչ արարեալ նովաւ՝ ընկից ի գետին զծնօտն. զոր դուցէ այլ ոք զմռսէր և պահէր բազում զգուշութեբ առ ի միանգամեայ յիշատակ աքանչելի յաղթութեանն։ Այլ յանհնարին վաստակոցն ծարաւեալ յոյժ յոյժ՝ մինչև պապակիլ ի պապաքոյն, աղաղակեաց առ տէր՝ յորմէ ձա. նաչէր զյաղթութիւնն զայն մեծ. և լուաւ ած նմա, և բղխեցոյց ջուր ականակիտ ի ծակէ անտի միոյն յատամանց անկելոյ ի ծնօտէ անտի, որ եղև նմա գործի յաղթութեբ. ւրբ, և դարձաւ ոգի իւր և զովացաւ։ Վասն ոմանք՝ որք ասեն, թէ ջուրն այն բղխեաց ի վիմէ՝ որ կոչէր ծնօտ. այլք՝ թէ բղխեաց ի տեղւոջէ, ուր էր ծնօտն, և անցանէր ընդ ծակ ծնօտին. այլ տէր զիրն մեկին ասէ.* Ընդաց տէր զծակ ծնօտին, և ել ի նմանէ ջուր։ ոչ ասէ՝ ել ընդ այն, այլ ի նմանէ։ Եւ ած այնպէս դիւրին էր ջուր բղխեցուցանել ի ծնօտէն՝ որպէս ի վիմէ, կամ ի գետնոյ. և վասն սամխոնի յարմար և աս էր բղխել ջրոյն ի ծնօտէն լինել ի ձեռին նորա փոխանակ զինուորական բաժակի, քան դնել զբերան ի ծորակ վիմի, կամ ափով առնուլ ի ջրոյ բղխելոյ ի հողոյ. և վասն այսր աքանչելեաց կոչեցաց զանուն տեղւոյն.* Ղբխուր անուանեալ ծնօտի։ ոչ եթէ՝ զի աղբիւրն այն կացեալ մնացեալ

ինչ այնուհետև մշտաբուղխ, որպէս ասեն ոմանք. այլ զի յիշատակ սքանչելեացն Քհատցէ անուամբ տեղւոյն ուր գործեցաւ, ընդ որում և յիշատակ քաջագործութիւնն սամփսոնի։

ԳԼՈՒԽ ՀԳ.

Ամէնուն պէրիոսին ֆէղիս պրան գալայ չաղաչին ըսափեալ հանէ ի գլուխ լերին։ Ասանէ ի ինոլը էրմէ ի յեռաս այլ-ազգեայ։ Արծանէ պատճար գտգոնայ, և ջեռանէ անդ. էայդ յայլազգեայ անուն ջեռուցանէ երիս հազարս։

Յետ այսր նշանաւոր հարուածոյ ոչ ևս իշխեին այլազգիք յառնել ի վերայ սամփսոնի. իսկ նա շրջէր և խորհէր միշտ նոր հնարս գտանել ի նուաճել և ի խոնարհեցուցանել զնոսա։ Ոգաւ ի գազա, որ էր մի ի հինգ մայրաքաղաքացն փղշտացւոց ամրապարիսպ մերձ ի ծովն միջերկրական. թերևս տեսանել թէ կարիցէ գտանել անդ պատճառս գրգռութեան ի կռիւ ընդ նոսա. և մտեալ ագաւ ի տան կնոջ միոյ, զոր գիրն պոռնիկ կոչէ։ Այլ զի որպէս ասացաք ի պատմութեան անդ յեսուայ վասն րահաբայ, եբրայական անուանդ Ոգնախ՝ թէպէտ սովորաբար վարի փոխանակ կնոջ պոռնկի, բայց նշանակէ և զկին վանատուր և պանդոկապետ. և զի ի պանդոկս անխտիր է մուտ ամենեցուն, նմին իրի այնպիսի վանատուր կանայք յաչս մարդկան յանպարկեշտից սակս համարեալ էին. յորմէ և անուանդ Ոգնախ առ եբրայեցիս եղև հոմանուն՝ նշանակիչ պոռնկի, և պանդոկապան կնոջ, ըստ պարագայիցն տեղւոյն և ըստ հանգամանաց անձանց։ Այլ զի աստ բան է վասն սամփսոնի, զոր ի բաղում նշանաց տեսանեմք լինել հաճոյ առաջի նմա, վասն այնորիկ ոչն օգտա-

տինոս և այլք բազումք ՚ի պարկեշտ միտս առեալ զանուն եբրայական, ասեն՝ Թէ եմուտ սամիսոն առ նա լոկ վասն ագանելոյ անդ զայն գիշեր իբրև ՚ի հասարակաց պանդոկի. որ և յայտ անտի է, զի զմիջ գիշերաւն եւ անտի. որ ոչ է առն պատշկասիրի։

Ա.ՅԼ Թէ այսպէս և Թէ այնպէս, վաղվաղակի ազդ եղև գազացւոց՝ Թէ ՚ի քաղաքի անդ է սամիսոն. այլ ոչ կարեցով նոցա նոյն հետայն գիտել զտեղին՝ ուր իցէ նա զօղեալ, կացուցին պահակս շուրջանակի առ պարսպօք և առ դրունս քաղաքին, որպէս զի յառաւօտու ՚ի կամիլ նորա խոյս տալ ՚ի քաղաքէն՝ կալցին զնա և սպանցեն։ Ա.ՅԼ ՚ի դերև եղին այն ամենայն զգուշութիւնք նոցա. քանզի սամիսոն յարուցեալ զմիջ գիշերաւն, և եկեալ ՚ի դուռն որ հանէր ՚ի ձանապարհ լերին, ուր դուցէ ՚ի քուն էին պահապանքն, կամ Թէպէտ արԹուն, բայց առաւի կացին անշշունչ իբրև ՚ի քուն, պակուցեալք ընդ զարհուրելի գործ նորա, որ առ մենեվին աներկիւղ և անշփոթ մնատուցեալ Թափեաց զերկու մեծամեծ փեղկս դրանն հանդերձ սեմովքն և ծխնեօք և նգովքն, և բարձեալ ՚ի վերայ ուսոց իւրոց՝ եհան ՚ի գլուխ անդր լերին. որ Թուի Թէ բարձր էր յոյժ, զի ՚ի գագաԹանէ անտի նորա երևէր գլուխ հեռաւոր լերին քեբրոնի. զոր ոչ խափանէին միջանկեալ լերինք հրեաստանի։ Ով յայտ՝ Թէ առ ինչ եհան զնոսա յայն բարձրութիւն լերին. Թերևս կամեցաւ այնպիսի զանազան հրաշալի քաջագործութիւնք ցուցանել այլազգեաց զանյաղԹելի զոյժ և զզօրութիւնն իւր, առ ՚ի ևս քան զևս առաւելուլ ՚ի նոսա զահ և զերկիւղ իւր։

Այլ եղև այնպէս. քանզի հատեալ այլազգեաց զամենայն յոյս պարտելոյ զնա՝ կայլին հանգարտեալ, զգուշանալով չտալ պատճառս և չգրգռել զնա իւիք իրօք ՚ի կռիւ. յայն և եԹ մտայոյզ լինէին՝ Թէ ուստի՞ իցէ նորայն այնչափ զօրութիւն. զի գիտակ լեալ՝ այնուհետև զամենայն հնարս հր-

նաբեւայնն բառնալ զպատճառն. որով՛ի տկարա-
նալ նորա պիղծն լինի նոցա ըմբռնել զնա։ Ա՛ան
այնորիկ ամենայն վաւելոյ պնդութիւն զհետ էին
գտանել դիպողութիւն լինչ իմանալոյ. և ահա
սամիսոն լինքնին եւս նոցա զդիպողութիւնն։ Ա՛ան-
զի սիրեաց նա զկին մի կոչեցեալ դալիլա. որ քնա-
կիր յովրդկ կամ՛ի սովրեկ քաղաք առ եզերբ համ
անուն հեղեզատի մերձ՛ի սարաա, ուր էր տունն
սամիսոնի. և սա ևս յայտ է թէ սյլազգի էր.
սակս թէ ոչ՝ զիաւրդ լշխեին սյլազգիք մատչել առ
կին եբրայեցի, և յորդորել զնա՛ի մատնութիւն։

Ա՛ՀԿ հաւաստի թէ սամիսոն առեալ էր զնա
՛ի կնութիւն. բազումք համարին զնա կին պոռնիկ.
զոր հաւաստեն ասեն խորամանկ հնարագործութիւք
նորա, ցանկութիւն արծաթոյ՛ի վարձ մատնութեն,
ցուրտ սէր առ հոմանին, որպէս և զինուորքն զորս
պահէր՛ի տան իւրում Թագուն՛ի սամիսոնէ. այս
ամենայն ասեն՝ ցուցակ էն կնոջ պոռնկի. ապա
թէ ոչ՝ եթէ օրինաւոր ամուսին էր նորա, առ
ինչ նատիլ ընդ նմա՛ի մէջ այլազգեաց, ընդէր
ոչ ածէր զնա՛ի տուն իւր։ Ա՛այց են և բազումք՝
որք զհակառակն ունին կարծիս, թէ կին էր նա
սամիսոնի. այլ չէ լինչ նորալուր գտանիլ՛ի մէջ
կանանց, և այն՝ բազմաց, յորս սէր արծաթոյ և
սէր ազգին առաւել զօրաւոր էին քան զսէր ա-
մուսնոյն։ Ա՛ին զի չէ իսկ հաւանելի, թէ սամի-
սոն այնչափ սիրեցեալ լիցի՝ վարեալ էին ընդ եր-
կար այնպիսի ծանր մեղանչական կեանս։ Ա՛այլ թէ
կին էր նորա կամ ոչ, այս լինչ յայտնի է, զի գ-
տացին այլազգիք՛ի վար արկանել զայս սէր սամի-
սոնի առ հասանելոյ՛ի վախճան իւրեանց։ Ո՛չ
էին լինչ անտեղեակ՝ թէ՛ի տիրել միանգամ կնոջ
՛ի վերայ սրտի առն, առ սակաւ սակաւ տիրանայ
և՛ի վերայ լեզուի նորա. զի յայտնութիւն ներքին
ախտիժակաց սրտին՝ բերէ զկնի և զյայտնութիւն
գաղտնեաց մտացն։

Ա՛ան այնորիկ ջանահնար եղեն այլազգիք որ-
սալ և շահել զդալիլա. եկին առ նա հինգ նախա-

բարք փղշտացւոց, զի ՚ի նոյնչափ նախարարուԹիս բաժանեալ էր երկիր նոցա. որոց մայրաքաղաքք էին գազա, գԹ, ակկարոն, ազովտոս, և ասկաղոն. և առաջի եդեալ նորա զմեծամեծ չարիս՝ զոր առնէր նոցա սամփսոն, աղաչեցին զնա պատրել զայրն՝ որսալով ՚ի բեւրանոյ նորա, Թէ ԻՒ իցէ զօրուԹիւն նորա, և մատնել ՚ի ձեռս իւրեանց. և առ դիւրաւոր գործելոյ զմատնուԹիւնն, ցուցին շատնալ միայն կապել զնա, տկարացուցանել, և առնել ընդ ձեռամբ իւրեանց. ոչինչ յիշատակելով յաղագս սպանուԹեան. զի մի ՚ի լսել կնոջն զքստմնեալն գոյժ մահու, չառնուցու յանձն։ Եւ խոստացան հնգեքին նախարարքն միաբան տալ նմա այր իւրաքանչիւր հազար և հարիւր արծաԹոյ, ընդ ամենայն հինգ հազար և հինգ հարիւր արծաԹոյ համ սիկղ, (որ առնէ սկուդ հռովմայ 2750.) եԹէ ՚ի գլուխս տարցէ զմատնուԹիւնն։

Ոյս այսպէս հաստատեալ ընդ կնոջն՝ խոյս ետուն անտի նախարարքն. իսկ կինն առ անյապացանկուԹիւնէ արծաԹոյն ոչ եԹող հնարս՝ զոր ոչ գործեաց, առ իմանալ զարմատ զօրուԹիւնէ սամփսոնի, և Թէ ԻՒ մարԹ իցէ կապել զնա և տկարացուցանել։ Ոառաջինն սկսաւ ընտանի մտերմուԹիւնէ իւր կանայի հետազօտուԹիւնէ աղագաւ հարցանել. ապա ողոքանօք և շոյումուԹիւնէ աղաչել. հետոյ անսպառ Թախանձանօք բռնադատեալ և տանջել, մինչև Թափել զոգիս նորա։ Իսկ սամփսոն զառաջինն ոչ կամէր բնաւ հաՃել զնա, բայց չուներ և արիուԹիւն ՚ի տրտմեցուցանել. ասաց նախ, զի Թէ կապեսցի եօԹն ջլօք դալարովք չվտաւելովք, տկարանայ և լինի իբրև զմի ՚ի հասարակ մարդկանէ. երկրորդ անգամ ասաց. եԹէ կապեսցի եօԹն նոր առասանօք, որով չիցէ գործեալ գործ, տկարանայ. երրորդ անգամ ասաց, եԹէ եօԹանեքին գխսակք գլխոյ նորա՝ յորս բաժանեալ էին երկայնացեալ հերք նորա, հիւսեսցին ընդ ազբին, և ցցովք վարսեսցին ընդ որմն, տկարանայ։ Վրար դալիւք զամենայն, զի նախարարքն բե-

ըն[illegible] նմա զկապանս. սամփսոն ննջէր. այլազգիքն դարան գործէին նմա անդ 'ի ծածուկ՝ մնալով ելից իրացն. և դալիլա զինի կապելոյն զնա, իբր հատատմունքի կամեցեալ ցուցանել առ նա, զարթուցանէր զնա աղաղակելով. * Այլազգիքն հասեալ էն 'ի վերայ քո սամփսոն։ Նոքա յարուցեալ խզէր զչիլս և զառաստանս 'ի բազկաց որպէս զասղանի. բայց այլազգիքն բնաւ ոչ շարժէին 'ի Թաքստեանէ իւրեանց, զի մի կասկած դաւաճանութիւն ինչ տայցեն նմա, և մի գիտասցէ թէ մերձ կան անդ և դարան գործեն նմա։ Սամփսոն զայն ամենայն համարէր առնել կնոջն ընդ խաղս 'ի զուարճութիւն կանացի թեթևամտութենէ. և ոչ երբէք անցանէր ընդ միտս նորա, թէ կայցէ անդ դաւազործութիւն։

Այս անհոգութենէ և միամիտ հաւատ կամ սէր 'ի կինն այնչափ գրաւեաց զսիրտ նորա, զի փոխանակ սաստելոյ նմա սակս լիրբ յանդգնութենէն, զի իշխեաց խաղալ ընդ նմա իբրև ընդ մանկան երիցս փորձելով զնա, հուսկ ուրեմն մեղկացեալ 'ի Թախանձէցուսիչ ողոքանաց նորա՝ որով զգիշերն ողջոյն պարտասեցոյց զնա մինչև 'ի մահ, պատմեաց նմա զամենայն ինչ 'ի սրտէ իւրմէ անկեղծութենէ. այսինքն թէ զօրութիւն իւր է յայ՝ տուեալ նմա ընդ պայմանաւ պահելոյ զօրինս նազովրացւոց ուխտաւորաց Այ, 'ի բաց կալ յամենայն արբեցուցիչ ըմպելեաց և յանձէ կերակրոյ, և մանաւանդ չգերծուլ երբէք զգեստս գլխոյ. ապա թէ գերծուցու, մեկնի 'ի նմանէ զօրութիւն նորա մեծ, և լինի իբրև զմի 'ի հասարակ մարդկանէ։ Յուրացաւ սամփսոն մտօք յաւազ քան զկուրանալ յերկոցունց աչաց. ոչ եթէս զոր ակներև ունէր տեսանել, և ոչ խորհեցաւ զոր պարտ էր նմա խորհել, թէ կինն անընդգամ որպէս արար երիցս փորձելով զնա, գուցէ արասցէ և չորրորդ անգամ. և յայնժամ զի՞նչ լինիցի նմա։ Այլ երկարաւոր փորձ համօրէն դարուց ուսուցանէ մեզ, զի ոչ միայն արք ռամիկք և սոսկականք, այլև մեծարուք՝ իմաստունք և խոր-

հրդեհանք յորժամ մեղկին և թոյլ տան զգայական ախորժակաց կամ առնանաց տիրել սրտից իւրեանց, կորուսանեն զամենայն ուղիղ տրամախոհութիւն։

Իբրև ետես դալիլա՝ եթէ պատմեաց նմա զամենայն ճշմարտութիւն, վաղվաղակի ազգ արար նախարարացն այլազգեաց. որոց եկեալ բերին զարծաթն ի ձեռս իւրեանց, և թաքեան անդ ի դարանի. կոչեաց դալիլա սամփսոն, և ննջեցուցեալ զսամփսոն ի ծունն խորին ի մէջ ծնգաց իւրոց, ետ գերծուլ զղխակ գլխոյ նորա. որ էր մի յեօթն փնջոց յորս բաժանեալ էր սամփսոն զվարսս իւր. և ապա կապեաց զնա որպէս յառաջն. յետոյ զարթեալ ասելով ըստ առաջնոյ օրինակի.* Այլազգիք հասեալ են ի վերայ քո սամփսո՛ն։ Իսկ նորա զարթեալ՝ ասէր ի միտս իւր, արարից որպէս միշտ, կտրեցից և թօթափեցից. զի ոչ գիտէր՝ թէ մեկնեալ է զօրութիւն իւր ի նմանէ. եւ և ջանահնար լինէր խզել զկապանս, այլ վայրապար։ Այսմ տեսեալ այլազգեաց՝ ելին նոյնժամայն ի դարանէն, յարձակեցան կալան զնա, բրեցին զերկոսին աչս նորա. և կապեալ երկաթի կապանօք՝ տարան ի գազա քաղաք, և արկին զնա ի բանտ. այլ զի մի՛ և անդ կայցէ դատարկ, ետուն նմա աղալ անդ ի տան բանտին. առ որ չէն պէտք տեսութեան, շատ են բազումք ի շարժել զերկանաքարն։ Այս ինքեանք տօն ցնծութեան առնէին առաւել քան թէ յաղթեալ էր նոցա մեծի բանակի զօրաց։ Նամբրէն նախարարք և իշխանք փղշտացւոց էին ժողովեալ ի գազա. ուր ի մեծի տաճարին դագոնայ չաստուածոյն իւրեանց առնէին զոհս բազումս, և խրախճանս խնջոյից ըստ հեթանոսական սովորութեանէ, ուտէին և ըմպէին ուրախութիւն, և շուայտեալք և արբեալք օրհնէին զդագոն, զի մատնեաց զթշնամի նոցա զսպականիչ երկրին ի ձեռս իւրեանց։

Պայ յաւուր միում կամեցեալ հասարակաց ուրախութիւն ինչ առնել ի զուարճութիւն ժողովրդ-

էան, հրամայէցին ածել զսամփսոն ի տաճար անդր առնել խաղարկութիւն նովաւ ի նշաւակ և ի խայտառակութիւն նորա և ազգին եբրայեցւոց: Տա-ձարը փղշտացւոց ասի թէ էին ըստ ձևոյ մեհենայն եպիսատացւոց՝ ի ձև նորատեսիլ. զի սմենայն շինուածն էր ի վերայ երկուց սեանց մծտ միմեանց հաստատեալ, և առաջի տաճարին պատշգամբ մեծ և ընդարձակ: Ընդ բայ ի նախարարաց և յիշխանացն այլազգեաց՝ ժողովեալ խռնեալ կային անթիւ անհամար բազմութիւն արանց և կանանց ի վերնայարկ տաճարին, և ստորև ի գետնի, ի պատշգամբս, և ի տանիս, ուր ընդ լուսամուտսն կարէին հայել ի ներքս: Այս այնպէս կային ի մեծի ուրախութիւն, ոչինչ կասկած ի մտի ունելով, թէ խաղալիկն իւրեանց ընդ որ ծիծաղէին, ստացեալ էին անդրէն զառաջինն զօրութիւն իւր. զի ոչ գիտէին թէ գիսակ նորա վերստին բուսեալ էին յետ գերծելոյն: Յայնժամ ասաց սամփսոն ցպատանին՝ որ ունէր զձեռանէ նորա, թոյլ տալ նմա յենուլ ի սիւնսն իբր առ ի հանգիստ առնուլ. զի տեսեալ էր նա յառաջագոյն զշինուածն զայն, և գիտէր զի ի վերայ երկուց սեանց էր հաստատեալ: Ընդ-բեաց յայն և զայն մի նուագ օգնել նմա, և զօրացուցանել առ ի հանել զվրէժ ի թշնամեաց ժողովրդեան իւրոյ. և ձգեալ զաջ իւր ի մի սիւնն, և զձախն ի միւսն, աղաղակեաց. քաջութիւն մեռցի անձն իմ ընդ այլազգիսս. և շարժեաց ուժգին զօրութիւն զսիւնս, մինչև խորտակել զնոսա ընդ մէջ. և ահա անդէն անկաւ կործանեցաւ բովանդակ շինուածն այն մեծ, և սմենայն նախարարք և ժողովուրդք որ ի նմա՝ մեռան ընդ փլատակօք. ընդ ամենայն իբրև երեք հազար արք և կանայք. ընդ որս Թէպետ և ինքն մեռաւ, բայց և մեռոյց մահ-ուամբ իւրով՝ որչափ ի կենդանութեանէ իւրում առ մի նուագ չէր մեռուցեալ:

Ապրը գիրն զերկու ևեթ հարուածս զառ ի սամփսոնէ գործեալս յիշատակէ. զհազարն, զորս ծնօտիւ իշոյ կոտորեաց. և զերեսուն ասկաղոնաց

ցին, զորոց զկողոպուտա եւս առեալծանելեաց իւրում առաւսպելն. քայց երևի թէ և այլ բազում կոտորածս արարեալ էին նորա ՚ի փղշտացիս. զի յետ այրելոյ զանդաստանս նոցա, և սպառնալոյ [ինդրել զվրէժ իւրաքանչիւր ՚ի նոցանէ, ասէ գկին. * Այս եհար զնոսա ՚ի սրոնկից մինչև ցերանս հարուածս մեծամեծս ‖. գաս. ժե. 8. ըստ այլ թարգ. * Այհար զնոսա հարուածս մեծամեծս. մինչ զի ապշեալ՝ զսրունս եդին առ երանաք ‖. որ է նշանակ ծանր վարանական հոգւոց և տատամսուիլ այլազգեաց ընդ գործս սամփսոնի. զոր ոչ արդեօք ասէր լոկ վասն հազարաց և երեսնից, որք առ Համեմատութիւն հինգ նախարարութեանց իբր ոչինչ էն։ Ո՞ սոյն հաւաստէ և գոհուիլն նախարարացն այլազգեաց զդագոնայ յաղագս մատնելոյ ՚ի ձեռս իւրեանց զսամփսոն. * Որ յաձախեաց սանն զվիրաւորս մեր ‖. յորմէ կայտ է թէ բազում կոտորած արար ՚ի նոսա։ Այմին իրի զբան գրոյն՝ որ ասէ, թէ * էին մեռեալքն՝ զորս մեռոյց սամփսոն ՚ի մահուն իւրում, առաւել՝ քան զորս սպան ՚ի կենդանութեան իւրում ‖. գաս. ժզ. 30. բազումք լմնանան առ մի նուագ. որպէս և եղաք։

Այս մահ սամփսոնի ոչ եղև առ յուսահատութեան իբր առ զերծանիլ ՚ի թշուառութենէ դերութեան և կուրութեան, այլ յարիւական ոգւոյ և յառանձին սպեղութենէ և ՚ի հրամանէ նոն ոյ։ Այբեն օգոստինոս ասէ. * Ո՞յս արար սամփսոն՝ ոչ մարդկօրէն խաբեաւ, այլ յաստուածուստ հրամայեաւ. ոչ մոլորեաւ, այլ հնազանդեաւ. չի մարթ մեզ այլ ինչ հաւատալ վասն նորա ‖։ Այս յարէ. յորժամ ոճ հրամայէ, և նեղքին լուսով ցուցանէ զկամն իւր՝ որում չէ մարթ կալ հակառակ, ո՞վ իշխեսցէ իբր ամբարիշտ յանդիմանել զնա, որ հնազանդի ակնարկութենէ նոն ոյ իւրոյ։ Այն զի՝ ոճ իսկ յայտնի եղոյց հաճիլ ընդ մահ նորա՝ զօրացուցանելով զնա սպանչելապէս յայն վերջին գործ։ Այայց են և այլք, որք դնեն՝ թէ սամփսոն նաև առանց մասնաւոր և նեղքին ոճոյին յայտնութեանն՝ լոկ զօրութեամբ պաշ-

տաման իւրոյ՝ իբրև դատաւոր և փրկիչ կարօղ էր զկորուստ Թշնամեաց ժողովրդեան իւրոյ մեքենայել. Թէպէտ և տեսանէր չկարել զանձն ապրեցուցանել ի մահուանէ, այլ զոյդ ընդ նոսա և ինքեան կորնչիլ։

Վակայն և այս կարծիք միաբանի ընդ առաջնոյն. վասն զի սամփսան չայս գործ առաջին և գլխաւոր վախճան ունէր ի մտի զկորուստ Թշնամեաց, և զփառան ՅՀ. իսկ զմահն իւր անուղղակի ևեթ կամէր իբր հարկաւոր միջնորդ, որպէս զի արդարացի և գովութէ արժանի քաջագործութէին էլցէ ի գլուխ։ Առաջին խորհուրդ իւր եղև խնդրել զվրէժխնդրութէի իւր փոխանակ երկոցունց աչաց. քանզի որպէս առացաք յառաջագոյն, սամփսոն ոչ կամէրոյ տալ պատճառս առաւելապէս հարստահարելոց այլազգեաց զազգն իւր, զամենայն չնաս զոր հասոյց նոցա ի քահանաւեան դատաւորութէե իւրում, առ աչս այնպէս երևեցոյց, որպէս թէ զիւրոց առանձին անիրաւութէից խնդրիցէ զվրէժ. նորին աղագաւ չկէտ էր միշտ դատանել պատճառս կռուոյ. բայց նորա խորհուրդ յամենայնի և միշտ էր փրկութէի ժողովրդեան իւրոյ խոնարհելով և տկարացուցանելով զթշնամին ընդ պատերազմական առանձնական վրէժխնդրութէե. և ահա զայս զգուշութէի պահեաց մինչև ցմահն իւր։ Այսպէս եկին եղբարք և ամենայն տուն հօր նորա, և հանեալ ի փլատակաց անտի զմարմին նորա, տարան և թաղեցին պատուով ի մէջ սարսայ և յեթաւղայ ի գերեզմանի մանուէայ հօր իւրոյ։

Արդ՝ մեռաւ սամփսոն ի ծաղկեալ հասակի՝ամաց իբրև երեսուն և ութից. ծնեալ յամին երկ-

որդի, և մեռեալ՝ ի վախճան երեսներորդի ինն-
որդի, կամ՝ ի սկիզբն քառասներորդ ամի ծառայ-
ութեանէ որդւոց Իսրայէլի ընդ ձեռամբ փղշտացւոց.
յամի աշխարհի ըստ հաշուի կենսարոսի կազինեան
3075։ Պատեաց զիսրայէլ ընդ ամն քսան՝ ի միա-
սին ընդ հեղեայ. որոյ ծերութիւն կարօտ էր օգ-
նականի. նա նստեր՝ ի սելով առ խորանաւն վկայ-
ութեան, և վարէր զպաշտօն քահանայութեան. իսկ
սա չրջէր՝ ի մէջ այլազգեացս մղել մարտ ընդ նոսա։
Պատ հասակի մարմնոյ նորա ինչ ոչ ընթեռնուամք
՝ի՛նչ գիրս. յորմէ յայտ է թէ դիտակ հասակի
նորա ոչ անցանէր քան զչափ մեծութիւն հասարակ
մարդկան. ապա թէ ոչ՝ ՛նչ գիրն ըստ սովորութիւն
իւրում ոչ արդեօք զանց առնէր նշանակել։ Ընդ-
եթէ մարմնով չէր հսկայաձև, սակայն զօրութիւն
ուժոյ անցանէր զանցանէր քան զամենայն մարդ.
զի չիք ուրեք գտանել ա՛չ՝ ի՛նչ գիրս և ա՛չ յարտա-
քին պատմութիւնս՝ մարդ, որ ինքնին անձամբ այն-
պիսի և այնչափ մեծամեծ արիական գործս քա-
ջութիւն ցուցեալ էցե, որչափ սամփսոն։ Պատմի
ինչ ինչ յառասպելս վասն հերակլեայ կամ հեր-
քուլեսի. որոյ ձշմարտութիւնն՝ ի սամփսոն և եթէ
իւօրէն գտանի. ուստի ըստ ասից ուրուանի՝ հերակ-
լէս ոչ այլ ինչ է, եթէ ոչ զիմակերպեալ սամփ-
սոն. ժամանակ երկոցունց գրեթէ նոյն. երկիր
ուր ծագէին՝ մծտ, միոյն փիւնիկէ, միւսոյն հր-
էսաստան. գործք և տարազ կենաց գաղափար-
եալ ամենայն իրօք՝ ի սամփսոնէ։

Այլ որ մեզս է կարևոր, և առաւել զարմա-
նալի՝ այն է, զի յանձին և յընթացս կենաց սամփ-
սոնի աքանչելահրաշ լուսափայլէ կենդանի նկա-
րագրութիւն փրկական տնօրինութեանց քրիստոսի փրկչին
մերոյ։ Ո՜յս ձոխագոյն մեկնաբանեն հարք և
վարդապետք, ընդ որս և մերս եղիշէ, զամենայն
գործս սամփսոնի գեղեցիկ այլաբանելով՝ ի վերայ
նոյն մերոյ. այլ մեք՝ ի կարճոյ եւեթ նշանակեսցուք
ինչ ինչ։ Ննուանդ նորա աւետեաց հրեշտակի, և
անուն նորա սամփսոն, այն է՝ արեգակն, ո՞չ ապա-

քէն զնա ինքն զՀմարիտ արեգակն արդարութիւնէ զղջացեալն աւետեաց հրեշտակին մեզ յանդիման առնեն։ Ա արանուամն մանուկայ ընդ երեսուն հրեշտակի՝ կնոջ իւրում, և խոստանալ նմա զաւակ, հայի յօրինակ խառնուածիւ յովսեփեայ ընդ յղութիւն կուսին. և դարձեալ երեքեր հրեշտակն, և լուսաւորէր զնա վասն մանկան որ ծնանելոց էր. որպէս և յովսեփեայ երևեցաւ ՚ի տեսլեան և փարատեաց զվարանումն նորա, լուսաւորելով զնա վասն մանկանն զոր կրէր կոյս մայրն յաղթանաւի։ Ա ամփսոն նազովրացի, զի ուխտաւոր էր ՚ով անդստին յորովայնէ. քա նազովրացի կոչեցաւ՝ ոչ միայն ՚ի մարգարէից, այլև յիւրոց Թշնամեաց։ Ա ամփսոն դատաւոր գլուխ և փրկիչ իսրայէլի. քա գլուխ եկեղեցւոյ և դատաւոր կենդանեաց և մեռելոց, և փրկիչ ամենայն մարդկան։ Ա ամփսոն սիրեաց զկին այլազգի. քա սիրեաց զՀեթանոս, և ա՛ռ զնոսա յիւր եկեղեցի։ Ա ամփսոն յեղբարց իւրոց մատնեցաւ ՚ի ձեռս այլազգեաց. քա ՚ի հրէից յիւրոց ազգակցաց ՚ի ձեռս հեթանոս հռովմայեցւոց։ Ա ամփսոն ծնօտիւ իշոյ կոտորեաց զթշնամիս, և ծարաւեալ աղաղակեաց առ ՚ած՝ խնդրելով ջուր ՚ի զովացումն. քա խաչիւ խորտակեաց զաներևոյթ թշնամի մարդկան ազգի, և ՚ի չարչարանս խաչին աղաղակեաց՝ ծարաւի եմ։ Ա ամփսոն տարածեալ ըզբազուկս իւր յերկոսին սիւնս՝ ընդ մէջ խորտակեաց զնոսա. որք ՚ի ձև քառանկիւն և խոտորնակ խաչի ձևացան. յորում և մեռաւ, և մեռոյց առաւել ՚ի մահուան իւրում քան ՚ի կենդանութեան. որով և պսակեաց զամենայն քաջագործութիւնս իւր. քա մեռաւ ՚ի խաչի, և մահուամբ իւրով մեռոյց զմահ, և կանգնեաց միջնջենաւոր յաղթութիւն։ Ա րպէս և Թաղումն սամփսոնի պատուով յիւրոց եղբարց ՚ի բնիկ հայրենիս իւր՝ կարգեցաւ յօրինակ փառաւոր Թաղման և յարութեան քոյ ՚ին մերոյ, և համբարձման ՚ի հայրենի աթոռ իւր։

ԳԻՐՔ ՈՒԹԵՐՈՐԴ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԱՒԱԶՒՆ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ

ԳԼՈՒԽ Ա.

Ընտանեք սամուէլի. և դասախօսակուռնէ նորա ընդ
յեհոամբ հեղեայ։

Զահ սամիսոնի ահաբեկ արարեալ էր զայլազգիս՝ քան զկենդանութիւն նորա. վասն զի զկնի զանազան հարուածոց՝ զոր առ կենդանութիւնէ իւրով արար յայլազգիս, յաւել և զվերջինն մեծագոյն հարուած մահուամբ իւրով՝ ի կործանել զտաճարն դագոնայ. յորում մեռան միանգամայն հինգ նախարարքն, և բազմութիւն յիշխանաց և՝ ի քաջակիրթ զօրավարաց նոցա. որով խոնարհեցան և տկարացան յոյժ, զի յեղակարծ և անակնկալ եհաս նոցա կորուստ ահագին յառնէ միոջէ։ Ալ ասն այսորիկ՝ Թէպէտ տակաւին ընդ ձեռամբ իւրեանց ունէին զօրգիսն իսրայէլի, այլ ոչ իշխէին նեղել զնոսա, և ծանր ծանր հարկապահանջութիւնք կեղեքէր՝ որպէս յառաջն. Թերևս կասկածելով, զի Թէ յանկարծուստ իմն միւս ևս սամիսոն ելցէ՝ ի միջոյ եբրայեցւոց յայնմ ժամու, յորում զուրկ էին՝ ի փորձ և յընտիր զօրավարաց, սպառազինութեանցէ զնոսա։ Նա արդարև այն էր ժամանակ զինուորական որդւոց իսրայէլի Թօթափել զլուծ այլազգեաց՝ ի պարանոցէ իւրեանց։ Այլ հեղի քահա-

նայապետ միանգամայն և դատաւոր՝ի տոհմէ իմոյ մարդոյ որդւոյ ահարոնի՝ թէպէտև տակաւին կենդանի էր, բայց անզօր առ այնպիսի գործ քաջութեան. որպէս ասացաք և յառաջագոյն. զուրկ գոլով յամենայն քաջամտանութենէ արի և աչալուրջ դատաւորի և զօրավարի. թուղ և զծերութեի հասակին։ Իսկ որդիք նորա ոչինչ և փենեհէս առ այլ ինչ չէին պիտանացու, քան թէ զեղխիլ, և անառակիլ ընդ կանայս։ Ելին իրի՝ ած յառաջատես աչխարհելի վիճակին, յորում հեղի՝ի մեռանել իւրում ունէր թողուլ զժողովուրդ իւր, կանխաւ պատրաստէր նմա յաջորդ արժանաւոր բառնական՝ի դարմանել զայն ամենայն չարիս. որ նա ինքն է սամուէլ մարգարէ. նորա աղօթիւ, և իւրում ամենազօր ձեռին պահեալ էր ած զկատարեալ ազատութեի ժողովրդեան իւրոյ, զոր առանց ձեռին մարդոյ կամէր ինքնին վճարել։

Էր՝ սամուէլ էր որդի եղկանայ ղևտացւոյ՝ի տոհմէ կահաթու, որդւոյ յերեմիելի, որդւոյ հեղեայ կամ եղիւթայ, որդւոյ թոուիհեայ կամ կանաթայ, որդւոյ սիփայ կամ սուփեայ. որ ոչ բնակէր՝ի քաղաք ղևտացւոց, (որոյ պատճառն չէ յայտ,) այլ յարիմաթեամ՝ի լերին եփրեմայ. յորմէ սակս և քաղաքն կոչեցաւ Էրիմաթեամ սիփայ կամ սուփայ յորոշումն յայլոց համանուն քաղաքաց։ Եղկանա էր այր բարեպաշտ և երկիւղած յոյ. էին նորա երկու կանայք կոչեցեալք աննա, և փենանա. սա ունէր որդիս և դստերս, այլ աննա ամուլ էր և ոչ ծնանէր, վասն որոյ կայր հանապազ տխուր և վշտագին և պաղատէր յարաժամ առ ած։ Սովոր էր եղկանա ամի ամի՝ի տօնի զատկին և պենտեկոստէի և տաղաւարահարաց հանդէրձ ընտանեօքն ելանել՝ի սեղով, ուր էր տապանակ ուխտին և խորանն վկայութե, երկիր պագանել և մատուցանել զոհս ՚ին ած զօրութեց։

Էնդ էր աթոռն հեղեայ. որ յայնժամ գոլով ծանրացեալ ծերութե՝ զպաշտօն քահանայութե յանձնեալ էր՝ի ձեռս որդւոց իւրոց ոփնեայ, և

փեսեհեսի։ Եւ ըդ ի միում ի տոհմից ելեալ էղկանայ ըստ սովորութե ի սելով կանամիք և որդւովք, մնա տոյց զզօհ իւր. յորմէ առեալ քահանայիցն զբաժին ՚ին, և զբաժին իւրեանց, զյաւելեալն ըստ սովորութե և ըստ օրինաց ետուն ցեղկանա ուտել ուրախութե ընդ կանայս և ընդ որդիս իւր անդ առաջի խորանին վկայութեան. և ՚ի բաշխել նորա զբաժին զոհին, փեսանայի ետ բազում մասունս ըստ Թուոյ ուստերաց և դստերաց նր. իսկ աննայի ետ ՚ի բաժնե անտի՝ զոր ուներ առաջի իւր զընտրելագոյնն՝ մի միայն մնան. զի ոչ գոյր նորա որդի. բայց և այնպէս եղկանա առաւել սիրեր զանա քան զփեսանա։ Եւ յս խորութիւն յամենայն նուագս մինչ ելանելին ՚ի սելով՝ նորոգէր զտրամութե և զվիշտ սրտի աննայի, զոր առաւելոյր և յանդիմանութե՝ ի դէմս աճելով նմա զանզաւակութե, զի փակեաց ՚ին զարգանտ նորա առ ՚ի չտալոյ նմա որդի. և այնպէս առնէր նմա ամի ամի ելանել նորա ՚ի տուն ՚ին։ Իսկ աննա տրտմէր և լայր, և առ ի ախծութե սրտին ոչ ուտէր։ Ցաւուր միում եղկանա այր նորա առ ՚ի խթարելոյ զնա՝ ասէ ցնա. աննա, զի՞ է քեզ՝ զի տրտմիս և լաս. և ընդէ՞ր ոչ ուտես, և ընդէ՞ր հալի կանէ զքեզ սիրտ քո, զի որդիս ոչ ունիս. ո՞չ լաւ եմ ես քեզ քան զտասն որդի։

Եւ յայսիսի բանք միխիթարութե եղէն առ նա և այլ բազում անգամ, բայց նա ոչ երբէք միխիթարեցաւ. իսկ այս անգամ, զի հասեալ էր ժամ այցելութե ՚ին, լուաւ բանից առն, և նստեալ եկեր ընդ նմա խաղաղական ոգւով. և յետ ուտելոյ յարուցեալ գնաց լի երկնաւոր յուսով առ դուրս խորանի ՚ին. ուր նստեր հեղի քահանայ աթոռով բստ սովորութե լսել և ընտրել զդատ ժողովրդեան, կամ ծանուցանել զպատգամն ՚ին որոց երթային հարցանել։ Եւ եկաց աննա յաղօթս առաջի ՚ին, և ցաւագին անձամբ աղբիւրս արտասուաց իջուցանելով ասէր. * Տ՛ր ՚որ ՚ած զօրութե՝ եթէ հայելով հայեսցիս ՚ի տառապանս աղախնոյ քոյ, և յի-

չեսցես զիս, և տացես աղախնոյ քումմ զաւակ արու, տաց զնա նուէր առաջի քո մինչև ցօր մահուան իւրոյ. և գինի և ամենայն արբեցուցիչ մի արբցէ. և երկաթ մի ելցէ 'ի գլուխ նորա։ և այնպէս երկարէր անձանձրոյթ յաղօթս և 'ի պաղատանս առաջի նորա անձայն և անբարբառ 'ի սրտի իւրում խօսելով։

Եղև որ մօտ նստէր, և միտ դնէր բերանոյն նորա, տեսեալ զեռանդն յերեսս նորա 'ի տապնասալոյ սրտին, և 'ի բանից աղօթից նորա ինչ ոչ իմանայեալ, համարեցաւ զնա արբեալ։ Յամ կարծեաց նպաստակ և ժամն. զի նա նորոգ վճարեալ էր զուտել և զըմպել. և որպէս երևի՝ անդ գտաւ և մին 'ի լերդ որդւոց Հեղեայ. որ կսկծագին բանիւք յարձակեալ 'ի վերայ՝ ասէ ցնա. * մինչև յե՞րբ կայցես յարբեցութեն, գնա յերեսաց նո՛ր և թափեա՛ 'ի քէն զգինիդ քո։ Յետ պատասխանի աննա ցածուբ, ըստ որում վայել էր նորա սխրալի համեստուեն, և ասէ. * ո՛չ այդպէս տո՛ր, այլ կին վշտագնեալ եմ ես ոգւով, և գինի և արբեցուի ոչ է իմ արբեալ. մի համարիր զաղախին քո դուստր ժանտ, զի 'ի բազում տրտմութենէ և 'ի տխրութենէ իմմէ վարանեալ կամ մինչև ցայժմ, և հեղում զանձն իմ առաջի տեառն։ Ոչ եաւ հեղեայ զբանս նորա՝ ծանեաւ զվերնական խնդրվածոյ իւրոյ. վասն որոյ և փոխեաւ զթիւր զկարծիս իւր զնմանէ, եւ պատասխանի ըստ սրտին աննայի՝ մաղթելով զկատարումն խնդրուածոյ նորա. երթ ասէ 'ի խաղաղութե՛ն, և աստ իսրայէլի տացէ՛ քեզ զամենայն խնդրուածս քո զոր խնդրեցեր 'ի նմանէ։ Իսկ աննա չնորհս կալեալ զնմանէ վասն բարեմաղթութենն, գնաց լի միխթարութե՛ամբ 'ի վանս իւր, և այնուհետև ոչ ևս երևեցաւ տխրութե՛ն յերեսս նորա, և եկեր ընդ առն իւրում։

Յաւպա ընդ առաւօտն կանխեալ երկիր պագին տեառն. և դարձան յարեմնեմ 'ի տուն իւրեանց. և յղացաւ աննա, և ըստ ժամանակին ծնաւ որդի, և կոչեաց զանուն նորա Յամուէլ. որ թարգմանի * անուն նորա յե՛ս։ կամ * կոչեցեալ յե՛ս։ զի ասէ՝

'ի նմանե զօրութենէ խնդրեցի զսա։ Եւ ետ ծնանելոյ աննայի զորդին և զբռանալոյ նորա 'ի սովորական ակարութենէ ծննդեան, եհաս ու յերկից գլխաւոր տանից երբայեցւոց. և եղկանայ այր նորա բստ սովորութենէ իւրում պատրաստեցաւ երանել 'ի սելով 'ի տուն նոն ընտանեօքն հանդերձ, տանել զպտղ իւր, և զուխտս և զամենայն տասանորդս բստ օրինացս. ակն ունէր թէ և աննա յօժարեսցի երանել ընդ նմա ոչ եւս տիրագին՝ որպէս յառաջն, այլ լի ցնծութիւն։ Այլ նա ոչ ժուժելով և ոչ առ վայր մի կորուսանել յաչաց իւրոց զցանկալի մանկիկն, և ոչ հաւատալով ումեք զնոմա մննդեան նորա, ասաց ցայրն՝ Թոյլ տալ նմա առ ժամն երթալ ընդ նասա, մինչև հատուսցի մանուկն 'ի ստեն և հաստատեսցի. և յայնժամ ասէ երթայ ընդ մանկանս, և բստ ուխտին զոր ուխտեցի՝ յանդիման արարից զնա առաջի նոն, և տայց զնա 'ի պաշտօն խորանին նստիլ անդ մինչև ցյաւիտեան։ Հաճեցաւ եղկանա, և ասէ ցնա. արա՛ որ ինչ բարի թուի առաջի աչաց քոց. նիստ աստէն՝ մինչև հատուսցես զդա 'ի ստենէ. և որ հաստատեսցէ որ ինչ եւ 'ի բերանոյ քումմէ։

Ելիդ՝ ընդ ամն երթս մնուցեալ աննայի զորովալից խնամօք զցանկալի մանուկն, և պատրաստեալ զնա պատարագ կենդանի մատուցանել նոն զօրութենէ, եւ ընդ նմա 'ի սելով 'ի տուն նոն, տանելով զուարակ երեմեան, և պանս հայի, և արդու մի նաշխոյ, և սափոր գինւոյ. և հայր նորա սպան զզուարակն վասն փրկութենէ մանկանն, և մատուցին զմանուկն առաջի նոն։ Ապա մատուցեալ աննայի առ հեղի քահանայ՝ կացոյց առաջի նորա զմանուկն, և ասէ. լուիցէ որդի իմ զբան աղախնոյ իւրոյ. երդնում 'ի կենդանութենէ անձին քո, զի ես այն կին եմ, զոր տեսեր աստ առաջի քո կալ յաղօթս առ որ վասն մանկանս այսորիկ. և ետ որ զխնդրուածս իմ զոր խնդրեցի ընդ նմանէ ըստ բաղում ժամանակս. որդի և դա աղաչեցեալ ես ընդ աստուծոյ զոր մինչև եր ծնեալ՝ ուխտեցի որդի իմ 'ի սպասա-

ւորութիւն խորանի ՚ին զամենայն աւուրս որչափ և կեցցէ ։ Եւ արդ՝ յանձն առնեմ զդա հայրական խնամոց մեծի քահանայապետիդ ՚ոյ կենդանւոյ ուսուցանել և դաստիարակել որպէս և դիտես , զի աձեսցի և զարգասցի առաջի աչաց քոց ընդ հովանեաւ խորանի ՚ին. և եղիցի սիրեցեալ մանկիկդ իմ փոխ ՚ին ։

Եւ նմին ժամու շարժեալ աննայի ՚ի հոգւոյն ՚ոյ, երգեաց ցնծութիւն զդոհաբանական երգ. օրհնութեա առ ՚ած յաղագս մեծի պարգևին , որով Ճոխացոյց զնա և փառաւորեաց և երջանկացոյց , առաջի առնելով պետպետս այլաբանութիւն զյետին նուաստուի և զառաւտանս անձին. և զծայրագոյն մեծութիւն զփառս և զերջանկութի , յոր բարձրացոյց զնա ՚ած . և հոգին ՚ըբ որ լուսաւորէր զմիտս նորա և ուղղէր զբարբառ բերանոյ նորա , ՚ի խոհմանէ անտի առ անձնական բարեբարութիւնէ որ եղև առ նա , վերստացոյց զոգի նորա ՚ի տեսութի բարձրագոյն և խորին խորհրդոյն ՚ոյ ՚ի բարեբարութի հասարակաց ազգի մարդկան . տալով նմա մարգարէանալ վասն անմահ Թագաւորութեան մեսիային , և վասն փառաց և բարձրութիւնէ եկեղեցւոյ նորա ։ Նակ հեղի հիացեալ ընդ այնպիսի արիութիւն և ՚ածպաշտութի աննայի , և ընդ սիրալի տեսիլ մանկանն , զոր կալաւ զնա ուրախութիւնք . և օրհնելով զծնօղս նորա՝ ասէ ցեղկանա . Հատուսցէ քեզ ՚եր զսաւակ ՚ի կնոջէդ յայդմանէ , փոխանակ փոխոյն՝ զոր ետուր ՚ին ։ Եւ նորա Թողեալ զմանուկն սամուէլ անդ՝ երկիր պագին ՚ին , և դարձան յարիմաթեամ ՚ի տուն իւրեանց ։ ( )րհնութի հեղեայ չեզև անարդիւն , քանզի այդ արար ՚ած աննայի բժշկելով զամլութի նորա , յղացաւ և ծնաւ այլևս երիս ուստերս և երիս դստերս ։

Այդ բազմութի զաւակաց նորա չետուն նմա մոռանալ զանդրանիկն իւր զսիրելին սամուէլ . առնէր նմա ձեռամբ իւրով կրկնոց կամ վերարկու փոքրիկ ըստ չափու հասակի նորա , և տանէր նմա ամի ամի յելանել նորա ՚ի սելով ընդ առն իւրում

'ի մատուցանել ՚ն զզոհս իւրեանց : Այս մանուկն սամուէլ յաձել հասակաւ՝ ընդ նմին զարգանայր և չնորհօք և գովելի և պանծալի վարուք, անդրա տին 'ի տղայութենէ զհանդերձեալ մեծութենէ իւրոյ զառհասատչեայ երևեցուցեալ : Ջեղի զգեցոյց նմա եփուտ կտաւի, զոր զգենուին ղևտացիք, և կարգեաց զնա 'ի սպասաւորութիւն խորանին 'ի գործս Թեթևս համեմատս իւրում մատաղ հասակ կի. զոր աքանչելի համեստութենէ և երկիւղածութէ կատարէր, մինչև 'ի հիացուցին ածել զժողովուրդն և զնա ինքն զքահանայապետն գլխովին :

ԳԼՈՒԽ Ը.

Ի մարդասպանութենէ որդւոցն հեղէլի : Պատանալէմ այ առ հեղէլ 'ի չէնն հրեշտակէ : Անէծքն մարգարէութենէ սամուէլի 'ի հաստատութենէ պատանալեցւոյ :

Ա պաքէն երջանիկ էր հեղէլ, եթէ քանի մի ամօք յառաջ ծնեալ էր սամուէլ, և զնա միայն ա ռեալ էր իւր յօգնական 'ի պաշտամանն խորանին ՚ն. և չէր մատնեալ 'ի ձեռս երկուց ամպարիշտ որդւոց իւրոց ոփնեայ և փենեհէսի օտարացելոց յՅայ զայն գործ ՚ածային, զոր 'ի յափշտակութենէ և յանառակութենէ ինքեանց գարձուցին : Ո՛չ արհա մարհեալ զպատուէրս օրինաց՝ որ յաղագս իրա ւանց քահանայից 'ի զոհս, յորժամ մատուցանէր ժողովուրդն զզոհ իւր, գայր ոփնի կամ փենեհէս և կամ մանուկ նոցա, և մինչև էր եփեալ միսն, յան դգնութենէ արկանէր զերեքժանի մսահան յաւազան անդր, կամ 'ի սան մեծ պղնձի, և կամ 'ի պոյան, և որ ինչ գայր 'ի մսահանն՝ կամ զոր ինչ և ախոր ժէր՝ առնոյր և տանէր. ոչինչ ակնածեալ յօրի նաց, որ 'ի զոհից խաղաղականաց, կամ փրկութենէ

զերի և զերբուծ սահմանեալ էր բաժին քահանայից։ Այլ որ մեծագոյն է՝ բազում անգամ միս հուսմ պահանջ լինի, ասելով ցայրն՝ որ զոհէր. տուր միս խորովելոյ քահանային. զի ոչ առնուսմ ի քէն միս եփեալ ի սանէ. և յասել զոհարար առն, թէպէզի ձենձերեսցի և այրեսցի նախ ճարպն՝ որպէս օրէնն է, ի վերայ սեղանոյ ի հոտ անուշից ինն, և ապա առցես քեզ յամենայնէ որոց ցանկասցի անձն քո, նա ոչ յայն հայէր, այլ բունի առնոյր։

Այս յայսմ կրկին մեղանչէին. մի՝ զի յառաջ քան զձենձերել ճարպոյ առաջի ինն առնուին զբաժին քահանային ընդդէմ օրինաց. և երկրորդ՝ զի միս անեփ կամ հում առնուին. զորմէ թէպէտ ոչ գոյր ուրոյն սահմանեալ ինչ յօրինս, բայց քո վանդակիր ի նմին, վասն որոյ սովորութիւն էր միշտ տալ քահանային միս եփեալ. և այս եթէ առ ի պահել զկարգ զոհին նուիրելոյ ինն, և եթէ առ թեթևացուցանելոյ զաշխատութիւնս քահանայից, զի մի ի խաճարարութէն կերակրոց զբաւլեալ՝ արգելցին ի պաշտամանէ սեղանոյ ինն։ Այլ որդիք հեղեայ պորտոյ և որովայնի ծառայք բարձին զայն սովորութիւն, առաւել փոյթ տարեալ որկորաստութէ խրեանց՝ քան անթերի գտանիլ ի պաշտամանն ինն։ Ի վերայ այսչափ ամպարշտութէց յաւելին անամօթել և ի կանայս ուխտաւորս անդառ դրան խորանին վկայութէն. որով վճռ տեղին արարին ապաւէն սղծագործութէ, յանհնարին գայթակղութէ ժողովրդեան, և ի նուազումն զոհից և պատարագաց. զի տաղտկացեալ ժողովրդեան յայնչափ չարեաց նոցա՝ բազումք ոչ ևս երթային ի սեղան։ Այս է մեծագոյն պատիժ բարկութէն ինն ի վերայ ժողովրդեան, յորժամ թոյլ տայ պաշտօնէից եկեղեցւոյ իւրոյ յամբարշտութէնս անկղիտանալ. որոց պարտ էր նզ և անարատ վարուք լինել օրինակ բարեաց. այլ որչափ մեծ են չարիք նոցա, նոյնչափ խիստ և նորանշան է պատիժն՝ զոր ածէ ի վերայ նոցա։

Չէղի ընդ երկար ժամանակ ինչ ոչ գիտէը վասն անօրինութեց որդւոց իւրոց, թէպէտ և գրեթէ առաջի աչաց նորա գործէին. մինչև չհանդուրժեալ և ևս ժողովրդեան՝ բողոք բարձին առ նա: Ասէ նա խրատէ զնոսա, և յանդիմանէը մեղմով. ընդէ՞ր առնէք ասէ՝ զայդպիսի իրս, զոր ես լսեմ 'ի բերանոյ ամենայն ժողովրդեան՝ իրս չարս և ապիրատս. մի՛ որդեակք, մի՛ առնէք զայսպիսի առաջի տեառն ՚ոյ և առաջի մարդկան. ծանր էն ինձ լսել զամբաստանութիս օրինազանցութեան ձերոյ, անամօթութեե և բռնաբարութե. ձեզ պարտ էր տալ եղբարց ձերոց որդւոց իսրայէլի օրինակ սրբութե և հնազանդութե օրինաց տեն. իսկ դուք ձերով անկարդ գնացիւք հեռացուցանէք զնոսա առ 'ի չծառայելոյ ՚ոյ: Եթէ մեղանչիցէ մարդ մարդոյ, մարթէ հաշտեցուցանել զնա, կալով այլոց յաղօթս վասն նորա առ տեր. իսկ եթէ անմիջապէս և ուղղակի տեն մեղանչիցէ, ո՞վ կացցէ յաղօթս 'ի վերայ նորա, մանաւանդ եթէ մեղանչողն իցէ նորին պաշտօնեայ կարգեալ միջնորդ և բարեխօս առ նա վասն այլոց:

Այս խրատ և յանդիմանութի թերևս բաւական էր անպարտ կացուցանել զՀեղի, եթէ միայն հայր էր. բայց գողով և դատաւոր, և տեսանելով զի հայրական խրատն ոչինչ ազդէր 'ի նոսա, պարտ էր նմա զդատաւորականն առնուլ 'ի ձեռին զի՛շխանութի, և ըստ խստութե օրինաց դատել և պատժել զնոսա: Այլ զի պակասեցաւ յայսմ, գողով հայր մեղկաղէտ և ծանրացեալ ծերութե, և որդիք նորա անսաստ գտեալ հանապազորդելին 'ի չարիս, առաքեաց ՚ոծ առ Հեղի հրեշտակ, (ըստ այլ թարգմ. այր մի ՚ոյ. բայց անուն նորա անյայտ,) խօսել առ նա այսպէս. Յայտնելով յայտնեցայ առնային տան հօր քոյ, մինչդեռ էին նոքա յերկրին Եգիպտացւոց ծառայք տան փարաւոնի. և ընտրեցի զտուն հօր քոյ յամենայն գաւազանացն իսրայէլի քահանայանալ ինձ, և ելանել առ սեղանն իմ, արկանել խունկս, և կրել զեփուտն առաջի իմ.

Եւ ես տան հօր քոյ յամենայն ողջակիզաց և ՚ի զո-
հից՝ որ ընդ հուր անցանեն, ՚ի կերակուր։ Այս
ընդէր հայեցար ՚ի խունկս իմ և ՚ի զոհս իմ
ժպիրհ ականջ, արհամարհելի առնել զնոսա ա-
ռաջի ժողովրդեան. որդիք քո առին զիրաւունս
իմ յափշտակելով զառաջնապտուղ ամենայն զոհից
իսրայէլի, զոր ես ինձ պահեցի. և դու գիտացեր,
այլ խնայեցեալ յորդիս քո, փառաւորեցեր զնոսա
քան զիս։ * Վասն այդորիկ այսպէս ասէ Տէր Աստ
իսրայէլի, ասացի՝ Թէ տուն քո և տուն հօր քոյ
շրջեսցին առաջի իմ մինչև յաւիտեան. և արդ՝
ասէ Տէր. քա՛ւ լիցի ինձ, այլ զփառաւորիչս իմ
փառաւորեցից, և որ արհամարհին զիս՝ անարգես-
ցի։ Եւ ահա յարէ ղդատակնիք ահն ՚ի վերայ հե-
ղեայ և որդւոց նորա և ՚ի վերայ ամենայն տան
նորա, բառնալ զքահանայութիւնն ՚ի տանէ նորա.
և յարուցանել այլ քահանայ հաւատարիմ, որ ա-
րասցէ զամենայն կամս իմ։ Եւ առ հաստատութիւն
սպառնալեացս՝ տայ նշան զմահ երկուց որդւոց նո-
րա ոփնեայ և փենեհեսի՝ ՚ի միում աւուր մեռա-
նիլ երկոցունն. որ և կատարեցաւ. որպէս տեսցուք
՚ի կարգս։

Զեռ այնորիկ ընդ ամն ինչ յասպաղեաց ահն
զպօրծադրութիւնն դատակնքոյն իւրոյ. զի թե-
րևս զկնի այսպիսի ահարկու սպառնալեաց և խրա-
տուց հեղեայ, որդիք նորա ոփնի և փենեհէս կա-
սեսցին ՚ի չարեաց. կամ հեղի արիասցի ՚ի գործ
արկանել ՚ի վերայ նոցա զդատաւորական իշխանու-
թիւն, ՚ի բաց հանելով զնոսա ՚ի պաշտամանէ ահն,
կամ այլ ինչ ծանրագոյն պատիժ ածել ՚ի վերայ
նոցա. և կամ իշխանք ժողովրդեան, ՚ի պակասիլ
հեղեայ՝ լինիցին վրէժխնդիր փառաց ահն, ըստ
որում պարտական էին։ Այլ ոչ հեղի արար ինչ,
զի այնուհետև և կարօղ իսկ ոչ էր յաղագս ծե-
րունեն. և ոչ իշխանքն ցուցին նախանձ ՚ի վրէժխընդ-
րութիւն փառացն ահ՝ ըստ որում պարտական էին.
զի կամ ցրտացեալ էին և նոքա յանձապաշտութիւնէ,
յոյր սակս եկն պատիժ ՚ի վերայ նոցա, և ՚ի վե-

բայ ժողովրդեան. կամ զի առաւելապէս ակն առեալ երեսաց ծերունւոյն իշխանին իւրեանց, չկամեցան արտաքս հանել զնա պատժելով զորդիս նորա. վասն որոյ նոքա աներկիւղ հանապազորդ՝ին՝ի չարիս: Սակայն և այնպէս ամօթ երկայնամտեալ՝ ոչ էած վաղվաղակի զարժանահաս պատուհաս՝ի վերայ նոցա. այլ առ առաւել զարհուրեցուցանել զնոսա զնոցին և զորդիս նորա զի թերևս զգաստասցին, ա՛ռ՝ի ձեռին զսամուէլ զհաւատարիմ պաշտօնեային իւր. և նովաւ նորոգեաց զսպառնալիս ոչ միայն առ հեղի, այլև առ ժողովուրդն իսրայէլի:

Կնակութէ հեղեայ էր՝ի գաւթի խորանին մերձ՝ի տապանակ ամն. որ առ խորին ծերութէն, և առ նուազելոյ տեսութէ աչաց՝ զի էր ամաց աւելի քան ինսնանից, ոչ կարելով կատարել զգործս պաշտաման իւրոյ, ունէր զսամուէլ ընդ ձեռամբ իւրով օգնական՝ ոչ միայն՝ի գործս իւր, այլև՝ի սպասաւորութէն ծերութէ իւրոյ. յոյր սակս և նա՝ի գաւթի անդ խորանին ննջէր ոչինչ՝ի բացեայ՝ի հեղեայ, առ՝ի լինել պատրաստ յամենայն ժամ՝ի ձայն ծերունւոյն: Կնդ այն ժամանակս ոչ դոյր մարգարէ յիսրայէլի ծանուցեալ ժողովրդեան՝ դիմել առ նա առ խմանալոյ զկամս նորա, և ոչ տեսիլ և յայտնութէն լոյս առ մարդիկ: Սա մնուէլ եղև առաջին իբրև նոր աստղ ծագեալ, ընդ որում սկսաւ ամօթ խօսել. վասն այնորիկ սքեն պետրոս՝ի նմանէ սկսանի թուել զկարգ մարգարէից՝ որ եղեն զկնի նորա. գործ. գ. 24: Կրդ՝ի դիշերի միում մինչ հեղի ննջէր՝ի տեղւոջ իւրում, նոյնպէս և սամուէլ յիւր տեղի, զմկջ գիշերաւ յառաջ քան զնշան լուսանալոյ՝ յորում սովորութէն էր անցուցանել զձրագ աշտանակին, որ էր հանդեպ վարագուրի սրբութեան սրբութէց, եղև՝ի ձայն առ սամուէլ՝ որ յանուանէ կոչէր զնա, ասելով. սամուէլ սամուէլ: Սակ նա համարելով՝ թէ հեղի կոչեցէ, յարուցեալ վաղվաղակի ընթացաւ առ նա, և ասէ. ահաւասիկ եմ ամ, զի՞ կո-

չէցեր զիս. ասէ Հեղի. ոչ կոչեցի զքեզ որդեակ իմ, դարձիր և ննջեա. դարձեալ երկրորդ և երրորդ անգամ եղև առ նա ձայն ՚ի նոյնօրինակ. և նա զնոյն սրտի միշտ՝ ընթանալով առ Հեղի, քանզի ցայն վայր չէր խօսեցեալ ՚ի առ նա, և ոչ յայտնեալ ինչ նմա. վասն այնորիկ ոչ գիտէր ընտրել զձայն ՚ի ձայնէ մարդոյ. զոր յետոյ ուսաւ, յորմէ յայտ է թէ գոյր նշան ինչ, որ ցուցանէր մարգարէից զձայն ՚ի և զներկայութիւն նորա. որով հաւաստի իմանային մարգարէք՝ եթէ ՚ի խօսի առ նոսա։

Երդ՝ ՚ի գնալ սամուէլի երրորդ անգամ առ Հեղի, ծանեաւ Հեղի՝ եթէ ՚ի՛ր կոչէ զնա, և ունէր ինչ ՚ի գաղտնեաց իւրոց յայտնել նմա. բայց զայս կարծիս իւր ՚ի ոչ մեկն եցոյց նմա. այլ միայն ասաց, որպէս յայլ նուագս, դարձիր ՚ի որդեակ անդրէն, և ննջեա. և եղիցի եթէ կոչեսցէ զքեզ միւսանգամ, ասասցես, խօսեաց ՚ի՛ր, զի լուիցէ ծառայ քո. և նա արար այնպէս։ Յայնժամ յայտնեաց ՚ի՛ր նոր մարգարէին սամուէլի զնորհուրդ իւր ՚ի վերայ տանն Հեղեայ, ասելով ցնա. Երդ՝ Ահա ես առնեմ զբանս իմ ՚ի ՚ի ՚ի մէջ իսրայէլի, որպէս զի ամենայն որ լսիցէ՝ զարհուրեսցի յանձն իւր և յասպուշ կրթեսցի. մերձեալ է ժամանակն, զի սկսայց կատարել զամենայն բանս իմ ՚ի վերայ տանն Հեղեայ. որպէս պատմեցի նմա, եթէ խնդրեցից վրէժ ՚ի տանէ նորա մինչև յաւիտեան վասն անօրէնութեան որդւոց նորա, զի հայհոյէին զՅՀ, և նա ոչ խրատէր զնոսա որպէս արժանն էր։ Երդուայ տանն Հեղեայ, թէ ոչ քաւեսցի ՚ի վերայ երկրի պատիժ անօրէնութեան տանն Հեղեայ խնկոք և զոհիւք մինչև յաւիտեան։ Ոյս ասացեալ՝ լռեաց ՚ի՛ր ՚ի խօսելոյ. և սամուէլ եկաց յանկողնի լի դողութիւք և տրտմութիւք վասն քաղցր վարդապետի իւրոյ մինչև յառաւօտ. և կանխեալ ընդ առաւօտն ՚ի սովորական ժամու երթայ զդուրս տանն ՚ի՛ր. և ջանայր ծածկել զերկն ՚ի Հեղեայ. վասն որոյ խոյս տայր երևիլ առաջի նորա։ Երդ Հեղի հաղիւ զարթուցեալ՝

նոյն ժամայն կոչեաց զնա, և երդուեցոյց չԹաքուցանել ՚ի նմանէ բան մի յամենայն բանից, զոր լուաւ· իսկ նա ակամայ կամաք պատմեաց նմա զամենայն զբանն· և ոչ Թաքոյց ինչ ՚ի նմանէ· Եղև լուաւ զամենայն խոնարհուԹիւն և անխռով սրտիւ առանց քննաւ նշան ինչ դժկամակուԹեան երևեցուցանելոյ· և երկիրպագեալ արդար դատաստանաց ՚ին, ասաց· * Տէր որ ինչ բարի է առաջի իւր՝ ինքն արասցէ ‖ ՚ի վերայ իմ և ՚ի վերայ տանն իմոյ·

Յետ այսր յայտնուԹեանն մեծացաւ սամուէլ յոյժ· զի անուն նորա որ մինչև ցայնժամ գրեԹէ չէր եղեալ արտաքոյ գաւԹի խորանին, յետ այնորիկ հնչեցաւ ընդ ամենայն հրէաստան ՚ի դանայ մինչև ցբերսաբէէ· զի գիտաց ամենայն ժողովուրդն, եԹէ սամուէլ է հաւատարիմ մարգարէ ՚ին· և ԹէՀ ՚ին է ընդ նմա· և ամենայն բան մարգարէուԹեանն նորա անվրէպ կատարի· որով և սեղով՝ ուր նստէր սամուէլ, եղև հռչակաւոր· անդ դիմէր ժողովուրդն հարցանել վասն հանդերձելոյ իրաց· անդ որպէս երևի՝ յայտնեաց նմա ՚ին և զմօտակայ հարուածս, որով եհար ՚ին ՚ի միւսմ աւուր զՀովիւն հեղգաւիտ, և զՀօտն ապառուամ·

Ա՛յլազգիւ երկնցս հարկանեն ղորդէս Իսրայէլ ՚ի չարաչար հարուածս : Ա՛ռնուն պատպանակ ՚ին. և կոտորէն ղորդէս հեղեայ : Ա՛եռանի և հեղի բնէմամբ ոչին Իսրայ :

Ընդ այն ժամանակս որդիքն Իսրայէլի թեպետ և չէին զերծ բոլորովին ՚ի լծոյ ծառայութենէ այլազգեաց, բայց վայելէին ՚ի խաղաղութենէ, հանդարտեալք յերկրի իւրեանց իբրև ազատք և ինքնատեառքն : Ա՛նզի որպէս ասացաք յառաջագոյն, այլազգիք զկնի հարուածոցն սամխոնի, և մանաւանդ յետ կործանելոյ նորա զտաճարն դագոնայ, յորում մեռան ամենայն նախարարքն նոցա և մեծամեծք բազումք, տկարացան յոյժ. մինչև չկշխեալ այնուհետև հարկս պահանջել յորդւոց Իսրայէլի, կամ իւիք իրօք բռնանալ ՚ի վերայ նոցա : Ա՛յլ յետ անցանելոյ ամաց հինչ անդրէն զօրացեալ նոցա, և կամեցեալ զառաջինն տիրապետութենէ իւրեանց ՚ի վերայ Իսրայէլի ՚ի ձեռս բերել, գունդ կազմեցին և եկին բանակ Հարին յաբեկ. որ էր քաղաք ՚ի սահմանագլուխ այլազգեաց առ երի որդւոցն դանայ ՚ի վերայ լերինն : Ո՛յն լուեալ որդւոց Իսրայէլի, ելին և նոքա ընդդէմ նոցա ՚ի պատերազմ, և բանակեցան ՚ի տեղւոջն, որ յետոյ կոչեցաւ ՚ի սամուէլէ՝ Ա՛բենեզեր. այն է՝ վէմ օգնականի : Ա՛նդ հարան ընդ միմեանս երկոքինն ձակատք. այլ յառաջին բաղխման անդ պարտեցաւ Իսրայէլ, և թիկունս դարձուցեալ ՚ի փախուստ ձեռնեցին. և անկան յաւուր յայնմիկ ՚ի նոցանէ արք չորք հազարք, ոչ այնչափ ՚ի տեղի ձակատուն, քան թէ ՚ի Հանապարհի խայտառակ փախստեանն. իսկ այլք եկին ՚ի բանակն. նոյնպէս և այլազգիք դարձան ՚ի բանակ իւրեանց, ոչ իշխեալով յառաջ խաղալ. վի դեռևս երկնչէին ՚ի նոցանէ :

Ովքեր Իսրայէլի զարմացեալք ՚ի միտս իւրեանց ընդ այն հարուած, ժողովեցան ՚ի խորհուրդ, և հարցանէին ցմիմեանս. զինչ արդեօք արարաք մեք, զի այսպէս եհար զմեզ Տէր այսօր ՚ի ձեռն այլազգեաց. գուցէ մնացորդք կռապաշտութեց, որք չև ևս ինպատ հետախաղաղ եղեն ՚ի միջոյ մերմէ, զարթուցին զբարկութիւն նմա ՚ի վերայ մեր: Այնժամ ՚ի նշան իբր հանդիսական դաւանութիւն այ, զամենայն յոյս իւրեանց հաստատեալ ՚ի տապանակ ուխտի նմա զօրութեց որ նստի ՚ի քերովբէս, առաքեցին առնուլ զնա ՚ի սելովայ և ածել ՚ի բանակ անդր. զի յուշ եղեն նոցա պատմչքն որ եղեն նուաւս առ մովսիսիւ և առ յեսուսաւ: Պովելն էր յոյս նոցա ՚ի տապանակն, այլ չէր օրէն համարձակիլ ՚ի փորձ այսպիսի. թէղ զի արդէն մեծ էր անարգութիւն, որ արարաւ նմա ՚ի սելով, և ընդ այնչափ ժամանակս չգտաւ ոք ՚ի նոցանէ նախանձայոյզ՝ լինել վրէժխնդիր վասն այ ընդդէմ որդւոցն հեղեայ. իսկ այժմ ՚ի պետս առաջնիկայ վտանգին գործի ՚ի ձեռս առնուին զտապանակն. վասն որոյ և ՚ած յառաջ քան զերևեցուցանել զողորմութիւն իւր՝ կամեցաւ ՚ի վար արկանել զսրդարութիւնն ըստ յառաջագոյն ըսպառնալոյ:

Արդ՝ իբրև եհաս տապանակ Տէր ՚ի բանակ անդր, ընդ որում եկին և որդիք հեղեայ ոփնի և փենեհէս, աղաղակեաց ամենայն իսրայէլ մեծաձայն ցնծութիւբ, հաւատալով իբրև արդէն ՚ի ձեռին ունել զյաղթութիւնն նորին անպարտելի զօրութիւբ: Ի ձայնէ աղաղակի նոցա հնչեաց երկիրն, մինչև լսելի լինել և ՚ի բանակն այլազգեաց. որոց հարցեալ և տեղեկացեալ՝ թէ աղաղակն այն էր վասն տապանակի Տէն, որ եկն ՚ի բանակ նոցա, զարհուրեցան յանձինս իւրեանց, և ողբալով, վայ մեզ ասէին՝ զի կորեաք. այն ՚ած էն, որք հարին զեգիպտոս ամենայն հարուածովք, և յանապատին զայլազգիս. և ո՞ սպրեցուսցէ զմեզ ՚ի ձեռաց ՚ածոյն հզօրացն այնոցիկ: Երկիւղ նոցա իրաւացի

էր յոյժ, եթէ ձեռամբ մովսիսի կամ յեսուայ աճեալ էր տապանակն. այլ զի փոխան նոցա էին ոտինք և փենեհէս անօրինեալք ՚ի տապանակ անդր, վասն որոյ և մահապարտք, սուգ նոցա համառօտեցաւ: Վանդի քաջալերեալ զմիմեանս և խրատեալ, յարձակեցան գազանաբար ՚ի վերայ իսրայէլի. և անդէն առ ետեղ հարին կոտորեցին ՚ի նոցանէ երեսուն հազար ՚ի գաւսուց հետևակաց. իսկ ապրեալքն փախեան այր իւրաքանչիւր ՚ի յարկս իւրեանց. անդ մեռան առ տապանակին և որդիք հեղեայ ոտինք և փենեհէս. և առին այլազգիք զտապանակն ՚ին: Վրիուեթ մեծ ցուցին աստանօր որդիքն հեղեայ, զոր չէր ակնունել ՚ի նոցանէ. զի գոլով նոցա ընդ տապանակի ՚ին յապահովագոյն վայրի, յետ անկանելոյ յառաջապահ գնդին, և վտանգաւորելոյ բանակին իսրայէլի, ունէին ժամանակ բաւական փախստեամբ ապրեցուցանելոյ զանձինս, բայց ոչ արարին զայն, այլ կային մնացին անշարժ անդէն առ տապանակին, և պաշտպանեցին նմա մինչև ցյետին շունչ կենաց իւրեանց. Թէպետև խիթալի է, Թէ յուսալով հրաշիւք ապրիլ ընդ տապանակին՝ չիցեն մեկնեալ քնաւ ՚ի նմանէ: Վրանի տայի սոցա, եթէ ընդ գովելի արիւԹե՝ ընկալեալ իցեն յայնմ պահու և զձշմարիտ ապաշաւ ՚ի սրտի. և այնպէս կամակար պատարագելով զկեանս, լուացեալ իցեն հեղմամբ արեան իւրեանց զյետին անարգանս, զոր երբեմն արարին տապանակի ՚ին ՚այ: Ընկ յայտ Թէ ծրչափ անկան և յայլազգեաց. որովհետև դուն ուրեք նշանակէ՝ Թէ գիրն զԹիւ մեռելոց ՚ի կողմանէ յաղԹողաց: Վակայն երևի Թէ չեղեն սակաւ. որ յայտ անտի է. զի նոքա փոխանակ յառաջ խաղալոյ մտանել յերկիրն իսրայէլի և տիրել քաղաքի իմիք, յետս ընդ կրունկն փոխեալ զգնացս՝ դարձան յերկիր իւրեանց. զտապանակն ևԷթ տալեալ իբր յաղԹանակ, բայց ՚ի կորուստ իւրեանց. որպէս տեսցուք ՚ի մօտոյ:

Յետ ձախողակ մարտիս՝ յայնչափ փախստէից

իսրայէլացւոց մի միայն այր յամինացի ՚ի ցեղէն բենիամինի ուշադիր եղև ընթանալ և բերել զլոյց ՚ի սելով վասն անցից պատերազմին. որ երևի լեալ այր քաջասիրտ, զի եկաց հաստատուն ՚ի մարտին մինչև ցվերջին յուսահատութիւն. և ոչ դարձոյց թիկունս, մինչև ետես զմահ երկուց որդւոց հեղեայ, և զառնուլ տապանակին յայլազգեաց. յայնժամ ապա տեսեալ զի ոչ ևս կարէ օգնել ինչ, քանզի էր ցրուեալ բանակ իւրեանց, ընթացաւ այնուհետև ոչ իբր զինուոր փախստական, այլ որպէս սուրհանդակ գուժաբեր, ձորձք իւր պատառեալ, և հող զգլխով, եմուտ ՚ի քաղաքն՝ գոյժ արկանել, եթէ հարաւ իսրայէլ, և առաւ տապանակ ՚ինն։ ՚Ինդ այն լուր խռովեցաւ քաղաքն ամենայն, և եղև աղաղակ մեծ։ Հեղի ամաց ինն լուսնոյն և ութից, և աչք իւր վատեալ առ ծերուն թէ, նստեր ՚ի նմին ժամու աթոռով առ դրանն խորանին վկայութէ, ունելով զերեսս ՚ի վերայ Ճանապարհին, քայց տեսանէր և ոչինչ. և մնայր առնուլ զլոյց ՚ի պատերազմէն. զի էր սիրտ նորա տագնապեալ վասն տապանակի ՚ինն։

ՙՆա լուեալ յանկարծակի զբարբառ աղաղակի քաղաքացւոց, այն ինչ սկսաւ հարցանել՝ որոց առ նովաւ կայն, թէ զի՞նչ իցէ ողբագին բարբառն, ահա եմուտ առ նա յամինացին գուժաբեր. և պատմեաց զամենայն անցս պատերազմին, զՀարուածս ժողովրդեան, զցրուումն բանակին իսրայէլի, և զմահ երկուց որդւոց նորա։ ՙԻնչև ցաստ կայր ծերուն անշարժ, և ունկն դնէր արհեստական ոգւով, մանաւանդ թէ բեկեալ և զղջացեալ սրտիւ՝ հնազանդելով ածային արդարութէ։ ՙՅլ երբև յիշեաց գուժարկուն զտապանակն ՚ին, և ասաց՝ թէ առաւ յայլազգեաց, յանհնարին ցաւոց սրտին նուաղեալ՝ անկաւ յաթոռոյն յետս կոյս առ դրանն, և բեկաւ ողն նորա, և մեռաւ նոյն ժամայն։ Ո՞ այս մահ հեղեայ չէ մարթ ասել յանկարծահաս. առ որ բազմօք յառաջ էր նա պատրաստեալ կատարեալ հպատակութէ ածային վճռոյ ՚ի վերայ անձին և ՚ի

վերայ ամենայն տան իւրոյ, և Ձիմարիտ սիրով առ նա. զի առաւել Հոգայր վասն փառաց Նորա՝ քան Թէ վասն որդւոց և տան իւրոյ, և քան վասն ամենայն իրաց որ ի վերայ երկրի: Արդարև մեղաւ նա՝ ոչ ըստ խստութեան դատաւորական իշխանութեան խրատելով և պատժելով զորդիս իւր. բայց հաւատալ արժան է, Թէ քաւեաց զայն մահուամբ իւրով, և մահուամբ որդւոցն, և այլովք պատժովք, զոր ած ած յաստի կեանս ի վերայ Նորա. որով յոյս մեծ տայ վասն յաւիտենական փրկութե իւրոյ. սակայն և այնպէս յոլովք ի հարց հայեցեալ ի կրկին սպառնալիս այ, և ի նշանաւոր պատիժն, խստագոյնս խօսին վասն Նորա. Նորին աղագաւ յայս անյայտ խնդիր լաւ ևս Թուի լուծել պատուել զածային գաղտնի դատաստանն:

Նմին աւուր մեռաւ և նու Նորա՝ կին փենեհէսի, որ յղի էր և մերձ ի ծնունդս. զի ի սաստիկ ցաւոց ընդ գոյժ գերութե տապանակին այ, և մահուան սկեսրաւն, որպէս և առն իւրոյ, պատեցան զնուաւ երկունք. և ծնաւ որդի ապաժամ, որով և մեռաւ. և կոչեցին զմանուկն այ քաբովթ, այն է, վայ փառք, կամ ո՞ւր են փառքն, կամ ոչ ևս գոյ փառք. իսկ անուամբ փառաց իմանային զտապանակն այ, որ էր փառք տանն իսրայէլի: Ահա զայս օրինակ կատարեցաւ այն օր բազմաւխտւր. որ Թուէր Թէ ի վերջին կործանութիւն հասոյց զտառապեալ ազգն իսրայէլի. և սակայն այն օր եղև սկիզբն, յորում ածային իմաստութիւնն սկսաւ կանգնել զնա, և ի կատարեալ աշատութե դարձուցանել:

ԳԼ. Գ.

Սամուէլ հայուցանէ զաւրսն իսրայէլի, և յորդորա-
նօք իւրովք զարհուրացանէ զնոսին առ ինքն: Նշար-
ձին այլազգիք վասն պատերազմին ինն, և զարհուրանքն ընդ
ընծայիւք ՚ի Բեղեսամիւս:

Կատարեալ ազատութիւն որդւոց իսրայէլի ՚ի ծառայութենէ այլազգեաց՝ որպէս ասացաք յառաջագոյն՝ էր պահեալ աղօթից սամուէլի, և ամենազօր ձեռին նորա ՚ի զօրութենէ. զոր կամէր ինքնին առանց գործակցութեան մարդոյ վճարել: Յորժամ մեռաւ հեղլի, սամուէլ էր պատանի իբրև քսան և հինգ ամաց, կամ թերևս փոքր ինչ աւելի. այլ անկատար հասակ նորա չէղև ինչ խափան առ ՚ի ընտրել զնա միաբան հաւանութիւնք հասարակութենէ որդւոց իսրայէլի՝ իշխան և դատաւոր ազգի իւրեանց. առ որ յառաջ քան զծնանիլ իւր էր սահմանեալ ՚ի նմանէ. որ Ճոխացոյց զնա ոչ միայն առաքինական ձրիւք կարևորօք առ առաջնորդութիւն այնչափ մեծի ժողովրդեան, տալով նմա միտս և սիրտ լայնարձակ, և արիութիւն անխորտակելի յաւելեալ ծանր և ՚ի դժուարին հանդիպուածս, այլև հոգի մարգարէութենէ. որով և եղև բերան նորա առ ժողովուրդն՝ ուսուցանել նոցա զամենայն կամս նորա: Այլ ՚ի վերայ ամենայնի՝ առ և նա յարգոյ ընծայեցուցանելոյ զնա առ ժողովուրդն, ամբարձ զնա նաև առանձին տնտեսութիւնք և ՚ի պատիւ քահանայութեան, զոր չունէր ՚ի տոհմէ իւրմէ, գոլով լոկ ղևտացի, և ոչ ՚ի բնիկ ցեղէ քահանայից:

Իբրև կարգեցաւ դատաւոր և գլուխ աղգի իւրոյ, չէղև նմա փոյթ զօրաժողով լինել գունդ կազմել ընդդէմ այլազգեաց, յազատութիւն տալ պանակի՝ նա, և ժողովրդեան իւրոյ ՚ի ծառայու-

թէ նոցա : Քանզի չէր ինչ անտեղեակ պայմանացն՝ որով խոստացեալ էր ամէն պաշտպանել նոցա, և նկուն առնել առաջի նոցա զթշնամիս իւրեանց. այն էր՝ զի սրտի մտաք նմա ծառայեսցեն, և զնա միայն պաշտեսցեն, և զօրինս նորա պահեսցեն : Քանզի իբրև սկզբան անպ իւրոյ դատաւորութեանն գուն գործեաց ամենայն հոգւով հանրական նորոգումն առնել վարուց և գնացից համօրէն ժողովրդեան իւրոյ. խրատէր՝ յորդորէր՝ պատուիրէր բառնալ անկեալ առնել ի միջոյ զբահաղիմն, և զանտառս աստարովթայ, և զամենայն մնացուածս անոտի պաշտամանց և պատրաստել զսիրտս իւրեանց առ Տէր Ձշմարիտ ապաշխարութիւն. և այնպէս հաշտեցուցանել զնա. վստահ գոլով զի թէ զայն արասցեն, նա որ է հայր ողորմութեց, ողորմեսցի նոցա, և ինքնին գարձուսցէ զտապանակն իւր՝ որ էր մի միայն գանձ և փառք որդւոց իսրայէլի, և զլուծ այլազգեացն բարձցէ ի պարանոցաց նոցա : Եղեն անարդիւն վաստակք սամուէլի. քանզի լուան նմա որդիքն իսրայէլի, և անկեալ արարին ի միջոյ իւրեանց զամենայն մնոտի պաշտամունս. և կատարեալ սրտիւ դարձան առ նա. և այնպէս ի սակաւ ամիսս՝ դարձեալ սկսաւ ծաղկիլ Ձշմարիտ նախապաշտութիւնն ի մէջ ժողովրդեան իսրայէլի :

Այս դարձ նոցա առ նա՝ որ գիրն յետոյ պատմէ. ա. Թագ. գլ. է. արտաքոյ կարգի, կամեցեալ նախ քան զամ յաձախ սովորութիւնէ իւրում, զկարգ պատմութեան տապանակին՝ զոր սկսեալ էր, անընդհատ վճարել. ապա թէ ոչ՝ որպէս կարգ իրացն յուցանէ՝ այս փոփոխութիւն եղև յառաջին ամիսս դատաւորութեն սամուէլի : Քանզի զիարդ մարթէ հաւատալ՝ թէ սամուէլ ջերմնախանձայոյզ փառացն Այ, և ազատութեան ժողովրդեան իւրոյ, ընդ սմա քան՝ յորս եկաց տապանակ նա ի տունն ամինադաբայ, լռեալ կայր և թողեալ զժողովուրդն ի կռապաշտութիւն և ի դառն ծառայութիւն այլազգեաց : Այլ ևս արդեօք միաբանեսցի այս ընդ այնմ, զոր ընթեռնումք ի 13. կամար. Նորին գլխոյ. * Այլ

եղև ձեռն տէր ՚ի վերայ այլազգեաց զամենայն ա-
ւուրս սամուէլի ‖. որ յայտ առնէ, թէ ՚ի սկզբա-
նէ դատաւորութեանն սամուէլի սկսաւ տէր հարուա-
ծել զայլազգիս, և հանգուցանել զժողովուրդ
իւր, որք յամենայն սրտէ դարձան առ նա. մինչև
հուսկ ուրեմն խոպառ ազատել զնոսա ՚ի ծառայու-
թէ նոցա: Այս զայս հատուած բանի պարտ է
առնուլ ՚ի մէջ փակագծից՝ իբր ոչինչ կապակցու-
թի ունել ընդ հետագայ բանից: Զի որ գիրն
յայսմ վայրի զայս ևեթ կամի յայտնել, թէ զկնի
փոխադրութեանն տապանակին ՚ի կարիաթարիմ, ան-
ցին ամք քսան. յորս իսրայէլացիք վայելէցին ՚ի
խաղաղութեանն, և ծառայեցին այ զամենայն աւուրս
սամուէլի. և ապա անմիջապէս սկսանի պատմել՝
զոր ինչ արար սամուէլ զառաջինն յորժամ կարգե-
ցաւ դատաւոր իսրայէլի:

Այդ՝ յաւուրսն, յորս որդիքն իսրայէլի դարձ-
եալ սրտի մտօք առ տէր ՚ի ծառայութենէ՝ վայելէին
՚ի խաղաղութեանն յերկրի իւրեանց ընդ իմաստուն
և քաղցր տնտեսութեանն սամուէլի, երկիրն այլազ-
գեաց համօրէն կայր ՚ի տանջանս անհնարինս և
յողբս և յաղաղակ, որ մինչև յերկինս հասանէր:
Այանգի յորժամ առին նոքա զտապանակ տէն յաբի-
նեզերայ, այն է ՚ի տեղւոջէ որ կոչեցաւ վէմ օգ-
նականի. ուր բանակեալ կային իսրայէլացիք յա-
ռաջ քան զմարտն, տարան զնա իբրև յաղթանակ
քաջութեանն իւրեանց յազովտոս ՚ի մի ՚ի հինգ գլխա-
ւոր մայրաքաղաքաց իւրեանց. և եդին ՚ի տաճարն
դագոնայ առ ընթեր դրօշելոյ նորա. և այս կամ
առ ՚ի յարդուրթի նմին իսրայէլի, յորոյ զօրութենէ
երկնչէին, և կամ ՚ի պատիւ դագոնայ սպիկար և
անկենդան աստուածոյն իւրեանց, որում խոստո-
վանէին զյաղթութենէն զայն: Այլ վաղվաղակի տե-
սին զանհնարինութենէ նորա՝ թէ մերձ ինչ զօրեր.
զի ՚ի վաղիւ անդր մատուցեալ քրմաց ընդ առաւօտն
՚ի տաճար անդր, տեսին զդագոն կործանեալ ՚ի
վերայ երեսաց իւրոց ՚ի գետին՝ ՚ի ձև երկրպագու-
թէ առաջի տապանակի տէն. զոր նոյն հետայն ՚ի

վեր առեալ՝ կանգնեցին անդրէն ՚ի տեղւոջ իւրում. և որպէս երևի՝ ՚ի Թագուն պահեցին զկրան, զի մի ոք գիտասցէ. բայց վայրապար։ Վասնզի յերկրորդումն աւուր վաղագոյն քան զառաջինն կանխեալ ՚ի տաճար անդր, իբրև բացին զդուռն, գտին զգլուխ, և զերկոսին դաստակս ձեռացն դա-գոնայ անկեալ ՚ի գետին առ սեմովքն, և երկոքին Թաթք ոտից նորա խորտակեալք՝ կային ցըրուեալ աստ անդ ընդ մէջ տաճարին. միայն ողնայարն կայր ամբողջ անկեալ առաջի տապանակի տէն, որպէս յառաջնումն։ Յերկուց աստի ակնեբև հրաշէից կարօղ էին ազովտացիք՝ մանաւանդ Թէ և պարտական իսկ էին՝ ՚ի միտ առնուլ զունայնութիւնն դագոնայ սուտ առտուածոյ իւրեանց. և զահեղ զօրութիւն տայ իսրայէլի։ Այլ զի խաւարեալ էին միտք նոցա կռամոլ ախտիւ, փոխանակ հրաժեշտ տալոյ ՚ի դիւանուէր պաշտամանէ անտի անկենդան և անբան դրօշելոյ, օրինս հաստատեցին քուրմք նոցա ոչ եւս կոխել ազովտացւոց զսեամն տաճարի նորա, այլ ընդ ոստ անցանել, ՚ի յիշատակ այսր ձախող արկածից։ Այս ոչ ՚ի միտ առնուին՝ Թէ այնու միջանկեանաւորեն զամօթ անարգանաց աստուածոյն իւրեանց, և յաւէժական մրցանակ յաղթութէ կանգնեն տայն իսրայէլի։

Այդ՝ որովհետև ոչ կամեցան հարուածով դագոնայ զգաստանալ, ա՛ւ տէ՛ ՚ի ձեռին զգաւազան սաստից. զի առաքեաց ՚ի նոսա նոր և այլանդակ սխտ տարափոխիկ յերաստանս. քանզի ՚ի վեր ելին ուռոյգք և խաղաւարտք խղխղալթեալք կսկծագինք, որ Ձարակեալ գնային ՚ի փտուի մահաբեր՝ անբուժելի ՚ի բժշկական հնարից. որ և տարածեցաւ ոչ միայն ընդ ողջոյն քաղաքն ազովտայ, այլև յամենայն շրջակայ սահմանս նորա։ Այս մինչ այս հարուած կոտորեր զմարդիկ ՚ի քաղաքի, միանգ անհամարք զօրէն մրջման անսպառ յաձախութէ եռացեալ յանդաստանս ազովտայ՝ սպառէին զամենայն բերս նոցա։ Այս ամենայն ՚ի տնաս զառաջինն համարէին պատՁառեալ ՚ի բնական ապականութէ օդոյն, և

'ի վերասաբեր զուգընթացութենէ լինչ մոլորակաց. բայց տեսեալ զի հարուածն ոչ առնու վախճան, և միայն 'ի մէջ ազովտացւոց զօրանայ՝ յօտարս ոչ անցանելով, ծանեան եթէ պատիժ է այն եկեալ յիւրայէլացւոց յաղագս տապանակին նորա։ Ապա որոյ ժողովուրդն ազովտայ առ հասարակ բողբ բարձին հանել զտապանակ ՚ի նմանէ, զի ծանրացաւ ասէին ձեռն նորա ՚ի վերայ մեր, յորմէ կորընչիմք սպառիմք։ Լսեալ իշխանաց նոցա ոչ իշխեցին լինքնին առնել լինչ, առաքեցին ժողովեցին յազովտոս զամենայն նախարարս այլազգեաց՝ խորհել ևս զտապանակին, թէ զինչ առնիցեն։ Ընդ գտան և իշխանք գեթացւոց, որք ոչ հաւատալով լինել հարուածոցն 'ի պատճառս տապանակին՝ առաջարկեցին 'ի խորհրդեան անդ փորձ փորձել, փոխադրելով զնա 'ի զանազան քաղաքս նախարարութենէ իւրեանց. զի եթէ հարուածքն զհետ նորա երթիցեն յամենայն տեղիս, յայտնի լինիցի՝ եթէ 'ի նմանէ են. ապա թէ ոչ՝ դիպուած է 'ի բնական պատճառաց առնեալ։

Խորհուրդ անխոհեմ և վտանգաւոր. զորոյ զառաջինն փորձ կամեցան գեթացիք 'ի վերայ իւրեանց տեսանել. փոխեսցի ասեն տապանակն ՚ոյ առ մեզ. ընդ որ կամակար հաւանեցան ազովտացիք, զի 'ի վերջին թշուառութենէ հասեալ՝ յոգիս էին ապաստան. և փոխեցաւ տապանակն 'ի գեթ. այլ զձնառապարհայն յամենայն տեղիս՝ ընդ որ անցանէր, կրկնատեսակ հարուածք զուգընթաց նմին լինէին։ Տեսանէին զայն գեթացիք, սակայն և այնպէս ոչ զգաստանային, թերևս վստահացեալ 'ի բարեխառնութենէ օդոյ քաղաքի իւրեանց, որ գոլով 'ի վերայ բլրոյ մերձ 'ի ծովն մեծ, օդ նորա մաքուր էր և բարեշունչ. մինչև անձամբ առին զփորձ։ Վանգի հազիւ եմուտ տապանակ ՚ն 'ի քաղաք անդր նոցա, զոյգ ընդ նմին և ախտն դժնդակ ձարակեցաւ 'ի բնակիչսն 'ի փոքուէ մինչև ցմեծամեծս. յորմէ աղմուկ և շշուկ մեծ մահու եղև 'ի քաղաքին. զի բաց 'ի մեռելոց, նաև կենդանիք յանհնարին ցաւս

տառապէին. և առ դիւրելոյ փոքր ինչ անձանց՝ արարին իւրեանց երաստանս, կամ ըստ այլ թարգմանութեան նստարանս կամ աթոռս մշակեցին փոխանակ փայտելոյն աթոռոց, զի ոչ կարէին ի վեր բայ մերկ տախտակի նստել առ անբմբեռելի ցաւոցն սաստկութենէ. և փութացան հանին անտի զտապանակն ոսկի, և առաքեցին յասկաղոն, կամ ըստ այլոց յաշկարոն։ Այլ զի իշխանք ասկաղոնի էին անառեղեակք չարաչար հարուածոցն՝ որք եղեն յայլ քաղաքս, բողոք բարձին և ասեն. ընդէր դարձուցիք զտապանակն Աստուծոյ իսրայէլի առ մեզ՝ սպանանել զմեզ և զժողովուրդս մեր. և նոյն հետայն առաքեցին և ժողովեցին զարձեալ զամենայն նախարարս այլազգեաց ի խորհուրդ. և ամենեքեան միաբան հաստատեցին դարձուցանել զնա անդրէն առ որդիս իսրայէլի. զի նստցի ասեն ի տեղւոջ իւրում, և մի սպառեսցէ զմեզ և զժողովուրդս առ հասարակ։

Օ՜ այն՝ զոր պատ էր նոցա խորհել և առնել ի սկզբան անդ, յորժամ տեսինն զհարուածս մեծ կամ երկուց քաղաքաց և շրջակայ սահմանացնոցա, և մինչ ժողովուրդն բողոք բարձեալ աղաղակէր, հաղիւ կէտ եօթն ամսոյ՝ յորժամ քաղաքք նոցա աճմայացան և երկիրն քանդեցաւ, խորհեցան և արարին։ Այն զի իշխանք նոցա ոչ կամէին հաւատալ աքանչելեացդ, մինչև եհաս խայտառակ և ամօթալի աւուրն և ի մարմինս նոցա. յայնժամ ապա ճշմարտութեանց բռնադատեցան խոստովանել զոր ոչն կամէին։ Այլ որպէս զի ըստ կարգի արասցեն, զի մի այլ նոր ինչ հարուած գայցէ ի վերայ նոցա, կոչեցին զքուրմսն և զիղձսն և զգետս իւրեանց ի խորհուրդ՝ թէ զինչ արասցեն տապանակին տեառն, և ընդ առաքեսցեն զնա ի տեղի իւր։ Ոսկ նոքա թէպէտև պաշտօնեայք մնացորեալք, բայց յայս դիպուած ուղիղ խորհեցան, և ըստ խորհրդոյ նոցա իրքն յաջողութիւն վճարեցան. և եթէ ոչ հասին խոստովանել զնա իսրայէլի մի միայն ձշմարիտ Աստուած, գէթ ծանեան զնա անհամեմատ գերազոյն քան զամենայն աստուածս այլազգեաց։ Աստի և խորհուրդ

եւտուն մի ունայն առաքել, այլ ըստ Թուոյ նախա-
րարաց՝ արասցեն հինգ ոսկի պատկերս երաստա-
նաց, և հինգ նմանութիս մկանց յոսկւոյ՝ ի նշա-
նակ խոստովանութե, թէ ձանաչեն զհարուածն
զայնոսիկ եկեալ յոյն իսրայէլի, որպէս զի հաշ-
տեսցի ընդ նոսա, և թեթևացուսցէ զձեռն իւր
ի նոցանէ և ի դից նոցա և յերկրէ նոցա։ Ցայսո-
սիկ տանեսցէք նուէրս յաւելան և այլք. քանզի ա-
մենայն քաղաքք և աւանք երկրին այլազգեաց ա-
հիւ մեծաւ ըմբռնեալք, արարին իւրաքանչիւր
ըստ կարի ոսկի մկունս և երաստանս առ ի զեր-
ծանիլ ի զարհուրելի հարուածոց անտի։

Եւ ապա խրատեալ զնոսա քրմացն չխստացու-
ցանել և ևս զսիրտս իւրեանց ըստ օրինակի փա-
րաւոնի, որ ոչ կամեցաւ արձակել զորդիս իսրայէ-
լի, մինչև կորեաւ ինքն և անհամար ժողովուրդք
ընդ նմա, առացին շինել սայլ մի նոր. և դնել զտա-
պանակ ոն ի վերայ նորա. և զոսկի նուէրս եդեալ
յանօթ ինչ, (ըստ եբրայականին Ղրեկազ. զոր
ումանք արկղ Թարգմանեն. այլք՝ աման, կամ դիրք.
իսկ մերքն ըստ Հասարակ օրինակի եօթանամանից,
և ընդ ակիւզասայ և ընդ այլոց՝ քուրձ. առ որով
յարեն և զեբրայական անունն փոքր ինչ այլայլու-
թիւ այսպէս. * դիջիք ի քուրձ արգոք ‖,) դնել
ի սայլն ի կողմանէ տապանակին. և լծել ի սայ-
լին երկու երինջս նորս՝ որոց չիցէ երբեք մտեալ
ընդ լծով՝ անդրանկածինս. և քեցեալ զորդիս նո-
ցա ի հետոյ նոցա՝ արգելուլ ի տան. և այնպէս
հանեալ զտապանակ ոն ի Ձանասարհ, արձակեա-
ցեն երթալ ինքնին առանց եղողի։ Ցթէ ուղղեա-
ցին դէպ ի սահմանս երկրին եբրայեցւոց, և եր-
թայցեն ի բեթսամիս, եղիցի անդիմադարձ ա-
պացոյց՝ թէ ածն իսրայէլի զարար մեզ զյարիսս մե-
ծամեծս զայսոսիկ։ Ցապա եթէ յետս դառնայցեն
առ որդիս իւրեանց, կամ դժկամակեսցին ընդ
լծով, կամ աստ անդ խոտորեսցին խեթկելով եղ-
ջերօք, որպէս սովոր են տրմուղ և անկիրթ ե-
րինջք, յայնժամ գիտասցուք ասեն, թէ ոչ նա
[illegible] ասեն, թէ ոչ

եհաս զմեզ, այլ վրիպակ ինչ բնութիւն յոդոց, կամ
յայլ ինչ բնական պատճառաց գործեցաւ ի մեզ։

Ապարին նոքա զամենայն. հանին զսայլն ընդ
այն դուռն ակկարոն քաղաքի, որ հանէր յերկու
ձանապարհ, մինն ի բեթսամիւս, և միւսն ի թամ-
նաթա այլազգեաց. իսկ երինջքն վարեալք յա-
ներևոյթ ձեռաց հրեշտակի՝ ուղղեցան ընդ ճա-
նապարհ բեթսամիւսայ. ընդ մի շաւիղ երթային,
և ոչ խոտորէին ոչ յաջ և ոչ յահեակ. այլ ուղիղ
և հանդարտահետ գնացիւք տարան զտապանակ
տէն հաւատացեալ ինքեանց՝ մինչև ի սահմանս
բեթսամիւսայ. և անդ միայն խոտորեալ ի ճանա-
պարհէ՝ մտին յանդաստանն ովսեայ, ըստ այլոց յե-
սուայ ուրուն բեթսամիւսացւոյ. և անդ զտեղի ա-
ուին. չոքան և նախարարքն այլազգեաց զհետ նոցա
մինչև ցայն վայր ի յանձնել զնա ի ձեռս որդւոց
իսրայէլի։ Ա՛ր ժամանակ հնձոց ցորենոյ. և բեթ-
սամիւսացիքն եւեալ էին ի հնձել հունձս ի հո-
վիտան մերձ ի քաղաքն. որոց տեսեալ ի բացուստ
զնա զայր տապանակ տէն անկշռելի գանձն իւրեանց,
եւին ցնծալից ընդ առաջ նորա։ Ապեթսամիւս էր
քաղաք քահանայից ի բաժնին յուդայ. ուստի և
գտան անդ քահանայքն և ղևտացիքն պատրաստա-
կանք. որոց առեալ ի սայլէ զտապանակն՝ եդին
պատուով ի վերայ վիմի մեծի. և զբուրձն յորում
էին ոսկի նուէրքն այլազգեաց՝ եդին առ նովաւ։
Ապա զի մի սայլն այն և երինջքն այնուհետև յայլ
գործ արտաքին ի կիր արկցին, կոտորեցին զփայտ
սայլին, և կուտեալ ի վերայ այնր վիմի մեծի, և
զերինջս զենեալ հանին ի վերայ փայտակուտին,
լուցին հուր, և մատուցին զնոսա յողջակէզ տէն։

Ովպէտև յօրէնսն պատուիրեալ էր զարուս և
եթէ յանասնոց մատուցանել յողջակէզ տէն, բայց
նոքա զայս գիպուած՝ որ նոր էր և մանաւանդ, դա-
տեցին լինել արտաքոյ հասարակ օրինաց. մանա-
ւանդ զի ամբ ինքնին առաքեաց առ նոսա զերինջսն.
որք տանելով զտապանակ նորա, ըստ իւիք սրբեցան
և նուիրեցան տէն. որպէս և նոքին իսկ այլազգիք

արդէն նուիրեալ էին զնոսա սայլիւն Հանդերձ ամե-
նայ իսրայէլ։ Այսու այնորիկ արժանապէս դատե-
ցին զոհել զնոսա ամեն. զի մի որպէս ասացաք՝ այ-
նուհետեւ յայլ գործ վարեսցին. Թո՛ղ զի ոչ՝ ի խո-
րանն և ոչ՝ ի սեղանի նորա մատուցին, այլ արտա-
քոյ։ Նաց յերկուց երնջոց անտի, մատուցին յաւուր
յայնմիկ բեթասամիւսացիք այլ և ողջակէզս և զոհս
գոհութեանց։ Ամէն նախարարքն այլազգեաց որք էկին
ընդ տասանեակին, կացին ինացին անդ՝ ի զնին՝
մինչև կատարեցան այն ամենայն պաշտամունք, և
ողջացեալ յախտէ երաստանաց, դարձան անդրէն
յակկարոն. և ոչ ևս յաւելին նեղել զորդիս իսրայէ-
լի, գոլով նոցա ձնշեալ և նուազեալ՝ ի չարախտա-
վատ հարուածոց անտի. որով և կատարեցան յայն-
ժամ քառասուն ամք բռնակալութեանն նոցա՝ ի վե-
րայ որդւոց իսրայէլի, և սոցին ծառայութեան։

ԳԼՈՒԽ Ե.

Հարուածին բեղեսամիւսացիք յաղագս անպատուութեամբ
ընծայից նոցա պատահակ ինն։ Յոսեդրէ պատանին՝ ի կա-
բնաբուիմ։ Անանիա այլազգիք մարթէ՝ ի վերայ իսրայէլի.
յաղթեցին նոցա որդիք իսրայէլի՝ ի ձեռն աղօթից սամուէլի։

Ա՚ՐԴ՝ ընկալեալ որդւոց իսրայէլի զտասանեակն
ինն, որ էր գանձ անկշռելի և մի միայն փառք ազ-
գի իւրեանց, այն ինչ կային՝ ի մեծի խաղաղութեան
ազատացեալ առանց աշխատուե և առանց զինուո-
րութեան և առանց ձեռին մարդոյ՝ ի դառն և յեր-
կար ծառայութենէ, յանցանեք մի մեծ՝ ի սուգ դար-
ձոյց զուրախութիւնն նոցա, և ելից զժողովուրդն
բեթասամիւսայ խառնութեանբ։ Վանզի զրդռեալ նո-
ցա՝ ի մարդկային ընդվայրաքննին հետազօտութենէ,
դիմեցին խուռնընթաց յանդաստան անդր ոմնեայ

ոչ միայն ՚ի բեթսամիւս քաղաքէ, այլև ՚ի շրջակայ տեղեաց իբր ՚ի զննին նոր և անսովոր ինչ իրաց, և համարձակ հայեցան տեսին և զննեցին զտապանակ տէն մերկ և անծածկոյթ. և ոչ այսչափ միայն, այլև ըստ ոմանց, որոց նպաստէ բնագիրս եբրայեցւոց՝ ուր ասի, *Տեսին ՚ի տապանակն տեն*, բացին զնա, Թերևս տեսանել Թէ զինչ կայցէ ՚ի նմա, կամ Թէ արդեօք բարձին ինչ անտի այլազգիք, և կամ եդին ինչ ՚ի նմա: Իւր ընդ պատժով մահու արգելեալ էր ոչ միայն հասարակ ժողովրդեան, այլև նոցին իսկ զևտացւոց, և քահանայից տեսանել զնա անծածկոյթ, Թո՛ղ Թէ ձեռամբ մերձենալ. յոյր սակս յորժամ դէպ լինէր տանել զնա ուրեք, նախ քահանայապետն մտեալ միայն ՚ի խորանն ՚ի սրբուԹինն սրբուԹեաց՝ ծածկէր վարագուրօք, և ապա յանձնէր քահանայից բառնալ յուսիւրեանց և տանիլ: Զմին իրի ՚ի պատիժ այսպիսի ձեռներկից համարձակուԹե և անպատուուե, հարան ՚ի մահ ՚ի խառնաղանձ ժողովրդենէ անտի բեթսամիւսայ և ՚ի շրջակայ սահմանաց՝ արք յիսուն հազարք. Թո՛ղ զեօԹանասունսն յիշխանաց և ՚ի գլխաւորաց քաղաքին:

Ընդ այն ահարկու պատուհաս զարհուրեալ ահիւ՝ պակեան բեթսամիւսացիք. միանգամայն և յերկիւղի եղեն՝ զի մի և այլ ինչ իրօք յանցանիցեն ընդդէմ յարդուԹե ածային տապանակին. որ յանդիման առնէր զնոսա իբր ամենաառ ՚ի ձեռն երկուց տախտակաց տանաբանեայ պատուիրանաց. իբրև ամենախնամ ՚ի ձեռն ոսկի սափորոյ մանանայինն. և իբրև ամենակարօղ ՚ի ձեռն գաւազանին ահարկի սքանչելեօք ծաղկելոյ՝ որք էին ՚ի տապանակի անդ: Ոչ այն այսորիկ հրեշտակս առաքեցին առ բնակիչս կարիաԹարիմայ, աղզ առնել նոցա, Թէ դարձուցին այլազգիք զտապանակ տէն. ուստի և եկեալ տարցին զնա ՚ի քաղաք իւրեանց ՚ի կարիաԹարիմ: Այլ ընդէր արդեօք ընտրեցին առաքել ՚ի կարիաԹարիմ և ոչ յայլ քաղաք, կամ անմիջապէս ՚ի սեղով ՚ի տեղի իւր ուր էր խորանն վկայու-

թէ, չէ յայտ իսկական պատճառն. զի ՚ոբ գիրն
ինչ ոչ ասէ: Սակայն ըստ ոմանց՝ թէպէտ զի յեր-
կուց ձանապարհաց ընդ որս մարթի էր դարձուցա-
նել զնա ՚ի սելով, ձանապարհն կարիսթարիմայ,
թէպէտ փոքր մի երկայն էր, բայց առաւել հարթ
և արահետ: Օ՚ի կարիսթարիմ էր ՚ի վերայ ար-
քունի հասարակաց ձանապարհի, որ ՚ի սելովայ և
յերուսաղէմ հանէր մինչև ցեթովպիա և ցեգիպ-
տոս. իսկ ՚ի բեթսամիւսայ ցկարիսթարիմ սակաւ
ձանապարհ էր, և գրեթէ նոյնչափ անտի ՚ի սելով:
Օ՚ի կարի հաւանելի է թէ խորանն վկայուիցէ, և
ընդ նմա ամենայն անօթք սրբազանք կարգեալք
՚ի պաշտօն ՚ոյ՝ կացին մնացին ՚ի սելով. մինչև փո-
խադրեցաւ խորանն ՚ի նոմբա, ուր էր ՚ի ժամանա-
կին սաւուղայ:

Ընդակիչք կարիսթարիմայ թէպէտ չէին ան-
տեղեակ հարուածոյն բեթսամիւսացւոց, սակայն
և այնպէս իշխեցին ընդունել զտապանակ ՚ոն ՚ի
քաղաք իւրեանց. վասն զի էր զանխուսափ ՚ի նոցա
նէ և պատճառն՝ յոյր սակս հարուածեցան նոքա.
որ էզև անզգոյշ համարձակուիցն և անպատուուիցն.
նորին աղագաւ առ ՚ի հեռացուցանել յանձանց զա-
մենայն կասկած չարեաց՝ բազում փառօք և մեծաւ
երկիւղածութիւք և պատկառանօք առեալ տարան
զնա ՚ի կարիսթարիմ քաղաք իւրեանց. և հանգու-
ցին ՚ի տուն ամինադաբայ զևտացւոյ առն ազնուա-
կանի, որ էր ՚ի վերայ բլրոյ ՚ի բարձրադիտակ վայ-
րի. և զեղիազար զորդի նորա սրբեցին՝ ըստ ոմանց
քահանայական օծմամբ. իսկ ըստ այլոց լոկ զևտա-
կան սրբութիւք և ՚ոնագրութիւք. ըստ որում առան-
ձին ՚ի գիրս Ննոց. ը. 7. և կարգեցին զնա ՚ի պահ-
պանութիւն և ՚ի սպասաւորութիւն ՚ոծային տապա-
նակին:

Այսպէս տապանակ ՚ոն ՚ի կարիսթարիմ ամն
քսան. յորս որդիքն իսրայէլի յամենայն սրտէ դար-
ձեալ առ ՚ոծ, կային յերկրի իւրեանց ՚ի մեծի խա-
ղաղութիւն ընդ իմաստուն տնտեսութիւն սամուէլի:
Եւ այլազգիք յայնչափ հարուածոց որք գործեցան

առ նոսա ՚ի մարդիկ և յանդաստանս նոցա ՚ի սամի-
սանէ և ՚ի պատճառս տապանակին՝ ոգի ի առեալ ջա-
նահնար եղեն օր ըստ օրէ դարմանել զայն ամենայն
ինչս, մտադիր լինելով ՚ի շինուածն երկրին, և ՚ի
զօրացուցանել անդրէն զքինուորական զօրութիւն
իւրեանց։ Այնմ հանդարտութեան ժամանակի կո-
չեաց սամուէլ զամենայն իսրայէլ յընդհանուր ժո-
ղով ՚ի մասեփաթ. ուր յետ վերստին յորդորելոյ
զնոսա ՚ի զեղջ և յապաշաւ և ՚ի հաստատութիւն
ուխտի իւրեանց ընդ այ, հրամանն ետ հանել զօր,
զոր ինքնին եհեղ յերկիր առաջի տեն ՚ի նշան երդ-
մանն ՚ի դիմաց ժողովրդեան. իբր ասել, այնպէս
կորիցուք որպէս զջուրս զայս հեղեալ յերկիր, որ
ոչ ևս հաւաքի, եթէ անցանիցեմք զուխտիս որ
ընդ տեն այ մերոյ. և զայն օր պահեցին անսուաղ։
Զի եղև այլազգեաց՝ եթէ ժողովեցան որդիքն
իսրայէլի ՚ի մասեփաթ իբրև ՚ի հանդէս կրօնից.
և քաջ զիպողութիւն համարեցան զայն՝ առ ՚ի անդ-
րէն նուաճել զնոսա ընդ ձեռամբ իւրեանց.
Թէպէտ զի խիթային, թէ ՚ի դառնալ տապանակին
առ նոսա, վստահացեալ թէ հաշտեալ իցէ ընդ
նոսա տէրն նոցա, գուցէ խորհիցին պատերազմաւ
ելանել ՚ի վերայ իւրեանց՝ ՚ի հանել զվրէժ հա-
րուածոցն, զոր ընկալան ՚ի մեծ պատերազմին յա-
քեակայ։ Այլն իրի ամասպարեցին ժողովեցան հինգ
նախարարք այլազգեաց ՚ի միասին, և գումարտակ
արարեալ ամենայն զօրու իւրեանց, այլև ՚ի տիւ-
րացւոց օգնութիւն ընկալեալ, հորդան ետուն յե-
րակարծումն հասանել ՚ի վերայ իսրայէլի։

Լուեալ որդւոց իսրայէլի զանակնկալ արշա-
ւանս այլազգեաց, և զմտաւ ածեալ զբազմութիւն
նոցա, և զիւրեանց անպատրաստութիւն, զահի հա-
րան յոյժ. զիմացին առ սամուէլ իբրև առ գործ-
ական հայր, և իբրև առ մի միայն միջնորդ առ
տեն, և աղաչեցին չդադարիլ ՚ի գոչելոյ առ տէր,
զի փրկեսցէ զնոսա ՚ի ձեռաց այլազգեացն։ Ետուն
սամուէլ միխիթարիր քաջալերիչ զնոսա՝ մի ինչ
երկնչիլ, այլ զամենայն յոյս իւրեանց յտեն հաստա-

տեալ՝ ելանել աներկիւղ ընդդէմ թշնամեաց, զի Տէր ինքնին պատերազմեսցի ասէ ընդ նոսա։ Եւ ինքն ա՛ռ գառն մի դիեցիկ, և եհան զնա ողջակէզ Տեառն հանդերձ ամենայն ժողովրդեամբն. և այն ինչ մատուցանէր զողջակէզն, ահա մերձեցան այլազգիքն՝ի պարիսպ քաղաքին, և սկսան մարտնչիլ։ Յամուռել կարդայր առ Տէր, և որդիքն Իսրայէլի՝ որք փոքր մի յառաջ կային սասանեալ, յանկարծ իմն առիւծացեալ, ելին՝ի դուրս, և սկսան կոտորել։ Եւ նմին պահու և ՚ի բերկնից սկսաւ մարտնչել ընդդէմ այլազգեաց. զի երկինք պատեցան մթագին ամպովք, և որոտմունք ահեղաձայնք, և յոլմունք հրայայտք լցին արհաւրօք զնոսա, և բովանդակ բանակ զօրաց նոցա խռովեալ և շփոթեալ, դարձան՝ի փախուստ. և որդիքն Իսրայէլի զհետ նոցա սլընդեալ կոտորելով անխնայաբար, լցին զիսակամբք նոցա զաւերնայն Ձանաապարհն իբրև տասն աշխարհադրական մղոնաւ չափ մինչև՝ի Նեղբոյ բեթքորայ։ Այս յաղթութիւն է մի՝ի մեծամեծ և՝ի հրաշալի յաղթութեանց, զոր ընթեռնումք՝ի գիրս. և թէպէտ ոչ նշանակի թէ որչափ անկան յայլազգեաց, սակայն յաջորդ բանք այսր եօթնեերորդ գլխոյ ցուցանեն՝ թէ մեծ եղև խորտակումն նոցա. զոր հաստատէ և սիրաք յասելն վասն սամուէլի. * Խորտակեաց զիշխանս տիւրացւոց, և զամենայն առաջնորդս փղշտացւոց ‖. Կեղ. 21։ Եւ մինչ իբրև՝ի չիշատակ այսր նշանաւոր յաղթութեանն՝ կանգնեաց սամուէլ վէմ մի՝ի մէջ մասեփայ և՝ի մէջ պաղսեմայ, կամ բեթսանայ (որպէս ուրն և արաբացին,) ՚ի տեղւոջն ուր կալան այլազգիքն զտապաստակ ՚ի նմա. և կոչեաց զանուն վիմին Էբենէզէր. այն է՝ վէմ օգնական. հանդերձ արձանագրութեամբ, * մինչև ցայս վայր օգնեաց մեզ Տէր ‖։

Պատուղ մեծի յաղթութեանս եղև՝ զի դարձուցին այլազգիքն զամենայն քաղաքս և զսահմանս որ՝ի մէջ ասկաղոնի կամ ակկարոնի և՝ի մէջ գեթայ, զոր յառաջագոյն առեալ էր նոցա յորդւոցն դանայ։ Եւ այնուհետև ոչ ևս նեղեցին զորդիսն Իսրայէլի,

զի կորացոյց զնոսա ՚ի եւ նկուն արար յոյժ զամենայն աւուրս դատաւորուձէն սամուէլի։ Եւ ամենայն հացիք մնացորդք քանանացւոց, որք յայս անուն կոչին ՚ի ՚ոբ գիրս ՚ի բազում տեղիս, բնակեալք յերկրին Հրէաստանի, խաղաղութիւն էին ընդ իսրայէլացիս՝ հպատակելով նոցա յամենայնի։ Եւ իբրեւ այսպէս յամենայն կողմանց խաղաղացեալ և յաստուածացեալ լինէր երկիրն իսրայէլի, սամուէլ անդրէն ՚ի մէջ առեալ զիւր սովորական փոյթն տնտեսութիւն ՚ի խնամս ժողովրդեան, երթայր ամ յամէ և պատէր զբեթէլ, և զգաղգադ, և զմասեփաթ, որք մաքրեալ և որթեալ էին յամենայն հետոյ կռապաշտութիւն. որպէս զի դիւրաւ մարթասցի ժողովուրդ կողմանցն այնոցիկ դիմել առ նա, որոց իցէն դատք կամ վէճք ինչ և հակառակութիւն ընդ միմեանս. զոր նա ըստ իւրում ՚ուժգնութիւր իմնաստութեն վճարեալ իրաւամբ և արդարութիւն, և զամենայն կարգս բարեաց յարդարեալ, և ՚ի փոյթ պահպանութիւն օրինաց հաստատեալ զնոսա, դառնայր յարիմաթեմ. զի անդ էր տուն նորա և սովորական աթոռ դատաւորութեան, ուր դատէր զիսրայէլ։ Եւնդ շինեաց և սեղան ՚ին մանաւանդ անօրէնութեն ՚այ վասն իւրոյ առանձնական ՚ուժպաշտութիւն. միանգամայն և ՚ի յորդոր ժողովրդեան ՚ի պաշտօն ՚այ, որք յաձախէին առ նա յարիմաթեմ իբր առ մարգարէ ՚այ և առ դատաւոր իւրեանց։

Եւ յոսիխ ամենազգաստ արթնութիւն և անխոնջ աշխատասիրութիւն հայրական խնամոյ վարեաց սամուէլ զդատաւորական տնտեսութիւն ՚ի վերայ հարկն իսրայէլի մինչև ցծերութիւն. որպէս յայտ է, ՚ա. Թագ. Ը. ուր ասի. * Եւ եղև իբրև ծերացաւ սամուէլ ‖. և ժողովուրդն ասէ ցնա. * Դու ա՛ւա դիւք ծերացար ‖։ Սակայն հաւաստի է, թէ չէր այն չափ տկարացեալ, մինչև չզօրել յետ այնորիկ երթալ ընդ սաւուղայ ՚ի պատերազմ յարիմաթայ. և յետոյ իւրով ձեռամբ սպանանել զագագ Թագաւոր ամաղեկայ. և առնել զանազան Ճանապարհորդութիւս. որպէս ունիմք տեսանել զկնի։ Վերոյիշեալն

սովորական՝ զառաջինն իբր տակաւին ժիր՝ սկսանի
՚ի վաթսներորդ ամի կենաց. յորմէ և անդր մեծա-
քայլ երթայ ՚ի նուաղումն. և զի երկարումն կե-
նաց մարդկան ընդ այն ժամանակս գրեթէ նոյն-
չափ էր՝ որ հինչ այժմ առ մեզ, վասն այսորիկ հա-
սարակաց կարծիք ձշդրտագոյն քննողաց դնեն զսա-
մուէլ լինել յայնժամ վաթսուն կամ իբր վաթսուն
և մի ամաց. իսկ մինչ կացուցաւ դատաւոր՝ լինել
քսան և հինգ ամաց և փոքր հինչ աւելի. որպէս
նշանակեցաք վերագոյն. զոր ունիմք իմաստասիրել
՚ի բանից նորին իսկ սամուէլի, որ ՚ի գաղգաղա ՚ի
համագումար ժողովի անդ որդւոց իսրայէլի յօծա-
նել հանդիսիւ զսաւուղ ՚ի թագաւոր իսրայէլի՝
ասաց. * Այս ես ընկեցայ առաջի ձեր ՚ի մանկութէ
իմմէ ‖. այսինքն ՚ի պատանեկութէ։ Իսկ հասակ
պատանւոյ լրանայ ՚ի քսան և հինգ, կամ ՚ի քսան և
վեցերորդ ամի. ապա ՚ի նմին հասակի սկսաւ դա-
տել։ Այս Թէոփէտ չասաց՝ առաջնորդեցի ձեզ, կամ
դատեցի զձեզ. զի առ խոնարհումն և ընդաբոյս
քաղցրութէ, չկամեցաւ փառաւոր և իշխանական
բանիւ վարիլ, բայց յարեալ * մինչև ցայսօր ‖. և
պահանջեալով ՚ի նոցանէ տալ պատասխանի առաջի
Տեառն և առաջի նորապսակ թագաւորին, եթէ զեղն
ուրուք առեալ իցէ, կամ զոք չաղթահարեալ իցէ,
և կամ զրկեալ, (ա. Ռաք. ԺԲ.) զդատեն յայտ առ-
նէ. զի այսպիսի պահանջմունք լինին չիշխանէ և ՚ի
դատաւորէ, և ոչ չայնմանէ որ իբր սոսկական ոք
լոկ կենակցութէ վարեալ իցէ ընդ նոսա։ Այս-
ցելոցս զՀետ գայ՝ թէ այն ամ էր երեսներորդ
վեցերորդ ամ դատաւորութէն սամուէլի. նաև
փոքր հինչ աւելի։

Ի պատճառս որդւոց սամուէլի՝ որ չարաչար վարէին զպաշտօն քահանայութեանն, ծողովուրդն խնդրէ նոցա փոփոխութիւն: Սամուէլ առաջի դնէ նոցա զձանրութիւնն երեսանց նահապետութեան. բայց և այնպէս նոքա պնդեն զխնդիրն իւրեանց:

Ընդ այնչափ ամս տարժանեալ սամուէլի յառաջնորդութեն յետասահիտ և ապաշնորհ ժողովրդեան, միանգամայն և հասակաւ ծանրացեալ և վաստակաբեկ, ետես զի չէր կարօղ այնուհետեւ ինքնին միայն զծանրութենն զայն բառնալ՝ վճարելոյ անթերի զամենայն գործառնութեանս դատաւորական պաշտամանն իւրոյ: Ոչ ատն այնորիկ կարևոր վարկաւ կացուցանել յիւր օգնութեն, և ժողովրդեան ի դիւրութեն և յանդորրութեն՝ այլ երկու դատաւորս: Նա զի մի ամբարտաւանեսցին նոքա իշխանութենէն, և մի յանդգնեսցին ձգիլ արտաքոյ կոպարի սահմանելոյ նոցա առ ի նմանե, կացոյց զերկոսին որդիս իւր զյովէլ և զաբիա. որպէս զի իբրև որդիք միշտ հպատակ կայցեն նմա. և ինքն իբրև հայր կարիցէ համարձակ առանց լինչ ակնածութեան խրատել և ուղղել զնոսա յամենայնի: Որպէս և ակնունէր, թէ նոքա իբրև եղբարքն հարազատք օգնական լինիցին միմեանց խորհրդով և գործով ի փոյթ՝ կարզաւորապէս և ըստ իրաւանց կատարելոյ զյանձնեալ գործառնութեն. և ի պակասիլ յիմիք, ուղղեսցեն զիմեանս. և այնպէս կրթեալ և վարժեալ յայնմ կոպարաւոր և կախեալ պաշտօնատարութենէ, յընդունակութեն բարձրագունի գտցին արժանաւոր: Այսպիսի խորհրդով առաքեաց զնոսա յերկոսին ծագս երկրին հրեաստանի, զմին ի դան ի հիւսիս, իսկ զմիւսն ի թերսաբեէ ընդ հարաւ. Թէպէտ դիրն զբերսաբէէ ևեթ

յիշատակէ, այլ յովսեպոս, ընդ որում և երևելի մեկնիչք՝ յայս միտ առնուն զբան դրոյն։

Այլ վրիպեցաւ սամուէլ՝ի քաղցր ակնկալու-թէ իւրմէ. քանզի նոքա թողեալ զարահետ ձանապարհ հօր իւրեանց, թիւրեցան զհետ զօշաքաղու-թէ. վաճառէին դրամոյ զարդարութիւն, և թիւրէին զդատաստան և զիրաւունս վասն կաշառաց. և այնպէս զամենայն ուղղութիւն և զկարգս դատո-ղութէ վեր՝ի վայր տապալէին։ Ել կարաց սամուէլ այսմ յառաջատես լինել, կամ դէթ կասկած ինչ՝ի մտի դնել, զի որդիք իւր չէին կարօտ խմիք. օրպէս զի առ չքաւորութէ յայնսիսի անիրաւու-թիս ստիպեսցին ձեռնարկել։ Այդարև զարմանք են, զի իբր՝ի բազումն որդիք երևելի երևելի և մեծարգոյ արանց, զորոց ընթեռնումք՝ի հբ գիրս, և յարտաքին պատմութիս, խորթանան՝ի հարցն առաքինութէց. տեսաք՝ի վերոյ զորդիսն հեղեայ՝ իբր առաջի աչաց հօր իւրեանց յամենայն եղեռնու-թիս թաթաւեալ. իսկ աստ ունիմք զորդիս սա-մուէլի, որք գրեթէ ոչինչ ընդ հատ՝ի նոցանէ՝ ի լուսափայլ սրբութէն հօրն, և յամենապայծառ անուն առնն սբանչելոյ խոտորնակ դնացիւք իւր-եանց՝ մեայլ արկանեն։ Պատճառ այսմ կամ այն է, զի այսպիսի արք մեծամեծք գլխովին՝ի տնօրի-նութիւն հասարակաց իրագործութէնեանց զբաղեալ, չգտանեն պարապ միտ դնել՝ի գաւառիարակութէն և՝ի կրթութէն որդւոց իւրեանց. և կամ մանա-ւանդ՝ զի որդիք նոցա վստահացեալք՝ի մեծութէն հարց, և՝ի փառս տան և տոհմի իւրեանց, հեղ-գանան՝ի վաստակս կրթութեան առաքինութէց՝ որք վայել են ինքեանց և հարկաւոր. որպէս թէ հօրն առաքինութէն բաւական իցէ բառնալ զյոռու-թէն որդւոց, և աղնուականս գործել զնոսա։

Այդ՝ ընդ այնպիսի խոտորնակ գնացս յովելեայ և աբիայ որդւոց սամուէլի դառնացեալ ժողովը-գեանն, սկսան՝ի նոր լինն և յօտարոտի խորհուրդ մտաբերել։ Օ մտաւ ածէին թէ ամենայն ազգք որ շուրջ զնոքօք, պերձացեալ թագաւորօք՝ հռչա-

կաւոր են և փառաւորեալ և զօրաւոր. զի Թագաւորք նոցա միշտ ունին յոտին կազմ և պատրաստական գունդս զօրաց, և զինս և կարասիս պատերազմի: Ընդեանք միայն ՚ի մէջ ամենայն ազգաց իրրև չարգ անգլուխ՝ հալածեալ և արհամարհեալ էն. զի դատաւորք իւրեանց չեն ինչ առաւել քան Թէ արք սոսկականք, ոչ հարստութիւն ունելով, ոչ մեծարոյութիւն և ոչ արտաքին շուք և փառաւորութիւն իշխանավայել. և հրամանատարութիւն նոցա առժողովուրդն տկար և անզօր ՚ի գումարել զինուսա ըստ ժամանակին ՚ի մարտ ընդդէմ թշնամեաց: Ալորին ազգագաւ բազում անգամ մնանեցան ՚ի ծառայութիւն այլազգեաց. և Թէպէտ ազատեցան, բայց միշտ անագան յետ բազմանեան ժամանակաւ զծանր և զանբերելի լուծ նոցա կրելոյ՝ մինչև յոգիս լինել ապաստան: Այս խակամիտ և պղտոր մտածութիւնս նոցա Թուի Թէ առաւելոյր և համբաւն՝ որ գայր յերկրէն ամենացւոց, եԹէ նաստ Թագաւոր նոցա զօրաժողով լինի և պատրաստէ կառս գերանդաղէնս, և այլ կարասիս պատերազմի եւանել ՚ի վերայ յաբիսայ գաղատացու առ գրաւելոյ զբովանդակ գաւառն զայն ընդ իւրով իշխանութիւն: Այս մտածութիւնք որդւոց իսրայէլի, յորոց յորդորեցան ինքնակամ մնանել զաղատութիւն իւրեանց, և ինդրել Թագաւոր, յայտնի են յառաջարկութենէ անտի զոր արարին սամուէլի. և ՚ի հինգերորդ օրինաց զոր սահմանեաց սամուէլ վասն նորոյ Թագաւորութե նոցա:

Այսպիսի խորհուրդք և զրոյցք ՚ի սկզբան անդ լինելին ՚ի մէջ սակաւուց ումանց իրր յունկանէ, և բազում զգուշութիւք ըստ պահանջելոյ բնութեան վտանգաւոր նիւթոյս. և ապա յառաջնականն խումբս քաղաքաց, յետոյ ՚ի մնանաւոր ժողովս անցնիւր ցեղից, հաղորդելով միմեանց քաղաքէ ՚ի քաղաք զխորհուրդ իւրեանց. մինչև առ սակաւ սակաւ սփռիլ սկսաւ բանն և ՚ի մէջ ժողովրդեան: Այս իրրև ծանեան իշխանք նոցա և զժողովուրդն հակամէտ ՚ի նոյն խորհուրդ, յայնժամ ապա եկին

գումարեցան ՚ի հանրական ժողով, ոչ ՚ի մասեփաԹ՝ ըստ սովորուԹե՛, այլ յարիմաԹեմ՛ուր նստեր սա մուէլ· ոչ որպես ՚ի խորհուրդ, այլ ՚ի գործադրուԹե՛ խորհրդոյն հաստատելոյ ՚ի նոցանէ յառաջնում ժողովս իւրեանց։ Եւ այսպէս հայեցեալ յայս ամենայն պարագայս իրագործուԹե՛ս՝ արդարանայ կարծիք այնոցիկ, որք գնեն իբր տարի մի ՚ի սկիզբ քանէ անտի երբ սկսան նոքա խորհել վասն Թագաւորի մինչև ցհանդիսաւոր օծումն սաւուղայ ՚ի գաղգաղա ՚ի Թագաւոր իսրայէլի։ Վասն զի առ այսպիսի մեծ փոփոխուԹե՛ ժամանակի պէտք էին ՚ի հաւանեցուցանել զժողովուրդն· զի մի երկպառակուԹե՛ և նոր գրգիռ նեղքին մարտի ծագիցէ ՚ի նոսա։

Վասն՝ ժողովեալ ամենայն արանց իսրայէլի և եկեալ առ սամուէլ յարիմաԹեմ՛, ասէն ցնա ան. պատկառ յանդգնուԹե՛ · կացի՛ ՚ի վերայ մեր Թագաւոր՝ դատել զմեզ, որպէս և այլ ազգք· և զի մի երևեսցին անպատճառ խնդրել զայն՝ ՚ի վերայ բերինն· զի դու ասեն՝ աւադիկ ծերացար, և ոչ ևս կարօղ ես առաջնորդել մեզ· և որդիք քո ոչ գնան զձանապարհ քո։ Թուի Թե յայնժամ զառաջինն ծանեաւ սամուէլ զանկարգ գնացս որդւոց իւրոց· զի Թէ յառաջադոյն գիտացեալ էր, չէք տարակոյս, Թէ նոյն հետայն ՚ի բաց հանեալ էր զնոսա յիշխանուԹե՛ անտի։ Վասն այն անակնուռնելի առաջարկուԹե՛ նոցա ՚ի խոր խոցեցաւ սամուէլ, զմտաւ ածեալ զանհնարին անմտուԹե՛ նոցա, որ գոլով ազատ՝ խնդրեն կամաւորապէս լուծ ՚ի պարանոցս, և ոտնակապ յոտս· և որ պանծալի և փառաւորեալ էին քան զամենայն ազգս՝ ունելով անմիջական Թագաւոր զամենակալն, կամին նմանիլ նոցա, փոխանակելով զայծ ընդ անզօր և ապիկար մարդոյ։ Վասն զի ցայն վայր ՚ասծ էր մի միայն Թագաւոր նոցա, որ զնոսա ևԹէ ընտրեաց և արար իւր ժողովուրդ սեպհական՝ գեր ՚ի վերոյ քան զամենայն ազգս որ ՚ի վերայ երկրի քարձրացուցեալ· և սքանչելի մարդասիրուԹե՛ նախախնամեալ առաջնորդեր

նոցա ։ Եւներ ՚ի մէջ նոցա կարդեալ իւր պաշտօն. եայս քահանայապետս , դատաւորս , և մարգարէս , ընդ որս խօսեր . և նոցա յայտներ զկամն իւր , և ՚ի ձեռն նոցա ընդուներ զաղերսանս նոցա . և զի միանգամայն ասացից՝ ուներ ՚ած զԻսրայէլացիս առաւել որպէս հայր ամենագորով զսիրեցեալ որդիս , քան թէ իբրեւ թագաւոր մեծազօր զհպատակս իւր ։ Վասն երջանիկ էին՝ լինացեալ զեղեալ ամենայն բարեաւք յանսպառ առատութէ՛ն ՚ան և թագաւորի իւրեանց , ցորչափ հաւատարիմ էին առնա . և եթէ ընդ ժամանակս ժամանակս հեծէին ընդ լծով օտարաց , այն էր նոցա ՚ի խրատ հայրական վասն հեատուԹե՛ նոցա ։ Այլ չէին անգէտ՝ թէ առ ստացուա՛ն առաջնոյ ազատութե՛ և երջանկութե՛ չպիտեր այլ լինէ , քան թէ դառնալ և հաշտեցուցանել զ՚ած . որով և նոյն հետայն նորահրաշ աքանչելեաւք գտանէին զանձինս զերծ յամենայն թշուառութե՛ց ։ Վասն իրի կառավարութե՛ն եբրայական ժողովրդեան ընդ այն ժամանակս արժանապէս կոչեցաւ յոմանց Թէօքրիդիդն , այսինքն Աստուածատ , կամ Աստուածական , իբր անմիջապէս կառավարեալ յա՛յ ։ Ասէ այժմ խնդրել այլ թագաւոր , որպէս թէ ած ոչ ևս ունիցի զառաջինն կարողութի՛ն ՚ի փրկել զնոսա , և ոչ զառաջինն մարդասիրութի՛ն ՚ի խնամել և ՚ի յանձանձել զնոսա , չար Թուեցաւ յաչս սամուէլի իբր ապստամբութի՛ւն լինի յա՛յ ։

Վասն այնորիկ ոչ նոյն հետայն զիջաւ ՚ի խընդիրն նոցա՝ զոր ստիպմամբ խնդրէին . քայց և ոչ բացե՛ ՚ի քաց մերժել զայնչափ բազմութի՛ն իշխեաց . զի մի առաւել զայրասցին , որք արդէն վառեալ էին , և այնպէս ՚ի յոռեգոյն ինչ ձեռներէց լինէին՝ ինքնին կացուցանելով իւրեանց Թագաւոր , ընդդէմ յայտնի պատուիրանաց ՚ան . որ կանխատես լինելով այժմու բորբոքման նոցա ՚ի խնդիրն Թագաւորի , պատուէր տուեալ էր յերկրորդ յօրէնսն . ԺԷ . 15 . ՚ի ձեռն մովսիսի , զի Թէ լինիցի նոցա երբեք խնդրել Թագաւոր , ընտ կացուցցեն՝ զոր

ինքն ՚ած ընտրեսցէ ։ ՚Ի որին աղագաւ սամուէլ պատրուակեալ առ երեսս զարդար և զիրաւացի Թախիծ սրտի իւրոյ, ասաց նոցա քաղցրութի՛ն նե- րել նմա մինչև նախ հարցանիցէ զ՚ած · զի զայն ընտրութի՛ն ինքեան պահեալ է · և այնպէս արձա կեաց զնոսա ։ Եւ ինքն առանձնացեալ՝ առաջի արար ՚ոյ զիրան համօրէն մասամբք, հայցելով յայտնել զամենայնեքե կամն իւր ։

Լսեսցաւ ՚ած առ սամուէլ, և առ ՚ի մխիթա- րել զնա ՚ի տրտմութի՛ն իւրում ընդ ապերախտու- թի՛ն եբրայական ժողովրդեանն առ նա, ասէ ցնա, ո՛չ եթէ զքե՛զ անարգեցին, այլ զիս մերժեցին չթագաւորել ՚ի վերայ նոցա ։ Վակայն և այնպէս ասաց զիջանիլ ակամայ կամաք խնդրոյ նոցա · բայց նախ դնելով դիցես ասէ՝ առաջի աչաց նոցա զի- րաւունս թագաւորին՝ որ թագաւորելոց է նոցա · որպէս զի գիտասցեն թէ զինչ խնդրեն ։ Զառաջինն իրաւունք թագաւորին՝ որ լինելոց է, այս ինչ է · առնուցու զուստերս նոցա յարքունիս ՚ի սպասաւո- րութի՛ն անձին իւրոյ · զոմանս արասցէ հառավարս՝ վարել զերկիվարս հառաց իւրոց · զոմանս թիկնա- պահս անձին հեծեալ յերկիվարս երթալ առ նո- վաւ · զայլս սուրհանդակս ընթանալ առաջի հա- ռաց իւրոց ։ Զայս ըստ արքունի շքոյ · Եւկ վասն պատերազմի առնուցու ՚ի նոցանէ զօրավարս հա- զարապետս և հարիւրապետս և առ ներքին տրն- տեսութի՛ն իրաց իւրոց, կարգեսցէ ՚ի նոցանէ ՚ի մշակութի՛ն երկրի իւրոյ՝ հերկապործել, սերմա- նել, հնձել զհունձս, և կթել զկութս նորա · և առնել նմա զինս, և հառս և այլ անօթս պատե- րազմի ։ Եւ զդստերս նոցա առցէ յարքունիս՝ յիւ- ղագործս ՚ի խորտկարարս և ՚ի հացեբեացս, և յայլ զանազան գործս կանանց ծառայեցուցեալ ։ Զկրորդ իրաւունք · վարեսցէ իշխանութի՛ն ՚ի վե- րայ ընչից և ստացուածոց նոցա · առցէ զանդս նո- ցա և զայգիս և զձիթենիս զաշնիւս, և տացէ ստրկաց և ծառայից իւրոց · և տասանորդեսցէ զարմտիս նոցա և զայգիս առ ՚ի վճարել զթոշակ

նեղբևնեաց և այլոց ծառայից իւրոց որք յարքունի էին։ Երրորդ իրաւունք. առնուցու վասն իւր զսարուկս նոցա և զաղախնայս, և զպատանիս ու ժեզակս և զանդեայս զաղնիւս և զէշս առ ի վարել զնոսա ի գործ անդաստանաց իւրոց տասանորդելով և զանասունս նոցա։ Չորրորդ իրաւունք. զայն իշխանութիւն վարեսցէ ի վերայ նոցա, զոր վարէն տեարք ի վերայ ծառայից և ստրկաց իւրեանց։

Ա այս ամենայն իրաւունս եդեալ սամուէլի առաջի նոցա իբրև հիմնական օրինս նորոյ թագաւորութեանն, զոր խնդրէին կացուցանել, գուն գործեր զառածանել զնոսա յանմիտ խորհրդոյ անտի. քանզ խորհեցարուք ասէ, թէ յորմէ երջանկութեանն կամիք զրկել զձեզ, և յոր գերութեան մատնել. ապա թէ ոչ՝ յետոյ ծանիջիք զվրիպակ ձեր, յորժամ ընդ անբերելի լծով նուաձեալ՝ յոգւոյ ելանիցէք, և աղաղակեսջիք առ ՚ի երեսաց թագաւորի ձերոյ. բայց անապան, զի նա ոչ լսիցէ ձեզ. վասն զի դուք ձեզէն ընտրեցիք ձեզ զայն լուծ ծանրաբեռն ընդդեմ կամաց նորա։ Այլ ամենայն յորդոր բարեխորհուրդ՝ է անզօր պատնէշ ընդդեմ յարձակմանն բռնասեալ կրից։ Ահաբա ետուն պատասխանի զայրագին. ոչ այդպէս է ասեն. քանզ խորհեալ է մեր զխորհելս. չիք այդպիսի ինչ վտանգ և ոչ մի. բայց թէպէտ և իցէ, ոչ եղիցի յոռեգոյն վիճակ մեր քան զվիճակ ազգացն որ առ մեօք։ Ի՝հապետութիւնն ունի զիւր ծանրութիւն. բայց ունի և զիւր օգտութիւն և զթեթևութիւն. միանգամայն և զշուք և զփառս առ ամենեսին. յորմէ չէն մեր կամք զրկել զմեզ։ Թէ ծանր է լինել նուաձեալ ընդ միով թագաւորաւ, ապաքէն ծանրագոյն է ողջոյն ազգի՝ զորօրինակ է մերս ազգ, յարաժամ կալ զէն ՚ի ձեռին յերեսաց թագաւորեալ թշնամեաց։ Թէ ցարդ դատաւորք դատեցին զմեզ, դատեսցի այսուհետև թագաւոր մեր, լիցի գլուխ և առաջնորդ զօրաց մերոց. ելցէ առաջի մեր, և պատերազմեսցի զպատերազմին մեր։

Այս վերջին քան էր յայտնի ոտնհարուածէն առ մուէլէլ, իբր թէ անպիտան է առ ձեռնարկ պատերազմի. և զայն մնուացեալ էր նոցա, թէ փոքր մի յառաջ զիարդ ահաբեկեալ յերեսաց հինգ նախարարացն այլազգեաց՝ դիմեցին առ նա աղօթս առնել առ ՚ուր վասն փրկուածէ իւրեանց. և նա իւրով աղօթիւք ետ ՚ի ձեռս նոցա զյաղթուածէին զայն մեծ. որով և ազատեաց զնոսա ՚ի ծանրաբեռն լծոյ ծառայուածեան այլազգեաց. զի նորա միայնոյ աղօթք առաւել զօրաւոր էին ՚ի յաղթուածէ քան զբանակ համօրէն զօրաց իսրայէլի: Այսկայն և այսմ անարգուածեան տարաւ սքանչելի այրն ՚ոյ անխռով սրտիւ. և դարձաւ վերստին հարցանել զ՚ուր առ ՚ի տալ նոցա զվերջին պատասխանի: Ասաց նմա ՚ած՝ անսալ բանից նոցա և առնել անդիմադարձ զոր խնդրեն. եկն սամուէլ և ծանոյց նոցա ՚ի դիմաց ՚ոյ, թէ տացի նոցա թագաւոր, որովհետև այնչափ խստասրտուածէ պնդեալ են ՚ի նոյն. բայց ընտրուածէ նորա կալեալ կայ զ՚ոյ, զոր նա ինքն յայտնեսցէ յօրժամ հաձեսցի. առ ժամն պատուիրեաց նոցա երթալ իւրաքանչիւր ՚ի քաղաք իւր:

ԳԼՒԽ Լ.

Սաուղ ընտրեալ յ՚ոյ առաջին ընտաւոր իսրայէլի օծանի ՚ի Սամուէլէ: Ընդդէ ևս վիճակաւ ՚ի համագումար ժողովի ՚ի Մասեփաթ:

Սաւուղ որդի կիսեայ ՚ի ցեղէն բենիամինի փոքու գաւազանի ցեղիցն իսրայէլի, և ըստ իւրումն իսկ վկայուածէ՝ ՚ի յեսուին և յանուշան տոհմէ ցեղի իւրոյ, այր զօրաւոր՝ որպէս և կիս հայր նորա, անձնեայ և քաջրահասակ, և ամենայն մա-

սամբք անդամոց մարմնոյն համեմատ՝ վայելուչ և բարեհամբոյր, ելեալ ընդ միւսմ՛ի ծառայից՛ի խնդիր իշոց հօր իւրոյ կորուսեալոց, և զաւուրս եւրս յածեալ՛ի դաշտս և՛ի լերինս, հուսկ ուրեմն եհաս առ ոտս լերին, յորոյ վերայ էր քաղաքն ա. բիմաթեմ սիփայ. և չգտեալ զնշս՝ զոր խնդրէր, կամէր դառնալ անդրէն՛ի տուն՛ի գաբաա առանց իշոց, կասկածելով թէ հայր իւր մոռացեալ զնշս՝ հոգասցէ զնոցանէ սակս այնչափ յերկար յապաղմանն: Յորհուրդ ետ նմա ծառայն՝ փորձ մի և ս փորձել յառաջ քան զդառնալ. ահա ասէ հասեալ կամք մծա՛ի քաղաքս՝ ուր նստի այր ՚այ, որ զամենայն զոր ինչ խօսի՝ լինելով լինի. երթիցուք առ նա, գուցէ յայտնեսցէ մեզ ինչ վասն իրաց մերոց: Այտ պատասխանի սաւուղ, երթալ երթիցուք, այլ զի՞նչ տանիցիմք առն ՚այ, զի չէ՛ի ձահ ունայնաձեռն երևեալ առաջի նորա. և արծաթ չիք մեր, կամ այլ ինչ տանել նմա. քանզի և հացն ևս՝ զոր բարձաք, սպառեցաւ յամանոց մերոց: Այսէ ծառայն ահա գտանի՛ի ձեռին իմում չորրորդ մասն սկեղ արծաթոյ, զայն տացես առն ՚այ, հաձեցաւ սաւուղ ընդ խորհուրդ նորա:

Այս եղև մինչդեռ ելանէին ընդ զառ՛ի վեր երթալ՛ի քաղաքն, ընդ առաջ եղեն նոցա աղջկունք, որ ելանէին հանել ջուր. հարցին ցնոսա, եթէ՛ի քաղաքի ա՞նդ իցէ տեսանօղն. զի ընդ այն ժամանակս զմարգարէ տեսանօղ կոչէին. ետուն նոքա պատասխանի, թէ անդ է. փոքր մի յառաջ քան զձեզ ասեն եհաս՛ի քաղաքս՝ եկեալ՛ի հանդէս զոհի՛ի բամա, այսինքն՛ի բլուր բարձր, որ և բեմ. արդ արագեցէք, մինչչև երթեալ իցէ նորա՛ի բամա, զի գտանիցէք զնա: Այստ՝ արժան է գիտել, զի տուն սամուէլի թէպէտ՛ի քաղաքի անդ էր, բայց ինքն սովորաբար նստէր յանդին՝ որ կոչէր Նաւաւթ հանդերձ յաւետլուածովս հոգւոյ, կամ արեմնէնեմայ, յորոշումն յայլոց համանուն տեղեաց. զոր և միով անուամբ կոչէին նաւաթհոգեմայ: Այդ՝ սամուէլ անտի գնաց յաւուր յայնմիկ

'ի քաղաք անդր օրհնել զերկն և ուտել ընդ ժողովրդեան, զի առանց օրհնութեանն նորա և սեղա-
նակցութեանն ոչ ուտէր ժողովուրդն։

Ա՛ռեալ սաւուղայ զայս տեղեկութեանն յաղջկանց անտի, երագեաց զդնացս 'ի միասին ընդ ծառային. և իբրև մտին 'ի քաղաքն, տեսին զսամուէլ՝ զի ել-
լայր 'ի բլուրն 'ի տեղի զոհին. որով հայեցեալ յետ կոյս՝ ետես զսաւուղ զի գայր։ Ա՛յսով աւուրբք յառաջ քան զգալ սաւուղայ՝ էր ասն յայտնեալ սամուէլի, եթէ 'ի վաղիւ 'ի սոյն ժամու գայցէ առ քեզ այր մի յերկրէն բենիամինի զինեն առաքեալ, զնա օծցես թագաւոր 'ի վերայ ժողովրդեան իմոյ իսրայէլի. և 'ինքն պահու ասէ ցնա ահ. ահաւա-
դիկ է այրն, զորմէ ասացի քեզ՝ եթէ նա իշխեսցէ ժողովրդեան իմում։ Եւ սաւուղ յառաջ մատու-
ցեալ՝ եհաս առ սամուէլ 'ի մէջ քաղաքին. և զի անծանօթ էր նմա սամուէլ երեսօք, զի չէր նորա երբեք տեսեալ զնա, եհարց ցնա սաւուղ պարզ-
մտութեբ, թէ օր էցէ տուն տեսանողին. ասէ սա-
մուէլ. ես ինքնին եմ եւ եմ տեսանօղն՝ զոր խնդ-
րես. և ունիմ ինչ կարևոր յայտնել քեզ. այլ ել յառաջ քան զիս 'ի բլուրն, և կերիցես ընդ իս այ-
սօր, և 'ի վաղիւ արձակեցից զքեզ. և պատմեցից զամենայն զաղտնիս սրտի քո. և առ այժմն հան-
դուցանելոց զքեզ 'ի հոգոյդ վասն իշոց երեքօրից կորուսելոց, մի ինչ ածեր զմտաւ, քանզի գտեալ է զնոսա հայր քո. և յաւել ասել առ նա. և ո՞ր էցեն վայելչութիւնք իսրայէլի, եթէ ոչ՝ քո, և ամե-
նայն տան հօր քոյ։ Եւովին բանիւ ծածկաբար իմն յուշ արար նմա զփառս թագաւորութեանն իսրայէլի. զոր և մասամբ իմն իմացաւ սաւուղ. վասն այնո-
րիկ ասաց ցսամուէլ, ընդէ՞ր խոսեցար ընդ իս ըստ բանիդ ըստ այդմիկ. իբր առել, Թերևս ո՛չ ձանա-
չես զնուաստութեանն տան և տոհմի իմոյ, որ 'ի մէջ փոքու ցեղին բենիամինի կետին է քան զամենե-
սին. ուստի և հեռի է յինէն այդպիսի բան. ասէ սամուէլ. տեսցե՛ս յետոյ, այլ առ այժմ յառաջեա՛ քան զիս 'ի բլուրդ, զի և ես հասից անդ փութանակի։

Եւ սամուէլ ՚ի բլուրն կամ ՚ի տեղի բեմին, և իբրև կատարեաց զմատուցումն զոհից, ած զսաւուղ և զծառայն նորա և տարաւ ՚ի վանս իւր՝ ձաշել ՚ի միասին. և բազմեցոյց զսաւուղ և զծառայն նորա առ նովաւ ՚ի վերոյ քան զամենայն կոչնականս, որք էին արք իբրև երեսուն. և պատուիրեաց ցխոհակերն բերել զմանն, զոր յանձնեաւ էր նմա եփել ուրոյն. և նորա բերեալ՝ եդ առաջի սաւուղայ. ասէ սամուէլ ցսաւուղ, ահաւադիկ նչխար ընծայեալ քեզ ՚ի ժողովրդենէ առ ՚ի պահիւ: Եւ վաղիւ ձաշուն գնաց այր իւրաքանչիւր ՚ի տուն իւր. և սամուէլ առեալ զսաւուղ և զպատանի նորա տարաւ ՚ի քաղաքն ՚ի տուն իւր, և կոչեաց զսաւուղ առանձինն ՚ի տանիսն՝ ուր խօսեցաւ ընդ նմա երկար. այլ թէ զինչ, լռեն գիրք. բայց չիք տարակոյս՝ թէ մեկն յայտնեաց նմա զխորհուրդն այ ՚ի վերայ անձին նորա. և ուստի որ ինչ հարկաւոր էր նմա գիտել յաղագս հանդերձեալ թագաւորութեն: Եւ ետ սամուէլ արկանել անկողինս սաւուղայ. ուր և ննջեաց զայն գիշեր. և ընդ առաւօտն յարուցեալ յուղարկեաց զնա սամուէլ մինչև ցեզր քաղաքին. ուր իբրև հասին, ասաց ցսաւուղ՝ արձակել զծառայն անցանել յառաջ, և դու կացցես ասէ այսօր (ըստ այլ թարգմ. փոքր մի) ասա լսել զպատգամն ինն. և իբրև եղեն երկոքին միայն առանձինն, եհան սամուէլ զսրուակ իւղոյ, և եհեղ ՚ի գլուխ սաւուղայ. և համբուրեալ զնա՝ ասէ. ահա օծ զքեզ տէր իշխան ՚ի վերայ ժողովրդեան իւրոյ իսրայէլի, զի փրկեսցես զնա ՚ի ձեռաց թշնամեաց իւրոց շուրջանակի: Եւ զի մի՛ ինչ երկուանայցէ սաւուղ ՚ի վերայ ճշմարտութե՛ն իրացն, ետ նմա ՚ի հաստատութի՛ն երիս նշանս կախեալս լոկ զմարդկային ազատ անձնիշխանութե՛ն. զոր չէ հնար այլազգ գիտել, բայց միայն ՚ի յայտնութե՛ն այ. որք և յայնմ աւուր կատարեցան ըստ նախագուշակելոյ մարգարէին:

Առաջին նշան էր, թէ ՚ի հասանել նորա առ գերեզմանն հռաքելի՝ որ էր ՚ի վիճակին յուդայի,

բայց առ սահմանօք բեննիամինի, գտանիցէ անդ առս երկուս՝ որք վաղվաղիցեն. և առանց հարցա-նելոյ ինչ նորա ցնոսա, նոքա առաջեցեն նմա, մէ-գտան էշքն, որոց 'ի խնդիր երթեալ էր. և մէ-հօր նորա թողեալ զնորս իշոցն՝ հոգայ վասն նորա. ասելով, զինչ արարից վասն որդւոյ իմոյ: Երկ-րորդ նշան, թէ անտի յառաջ գնացեալ և հասեալ 'ի կաղնին դեբովրայ՝ գտցէ երիս ուխտաւորս եր-թալ 'ի բեթէլ առ Աստ, միոյն բարձեալ ուլս երիս, միւսոյն երիս անօթս հացի, և երրորդին տիկ մի գինւոյ. և ողջունեսցեն զնա. և տացեն նմա եր-կու գրտակս հացի, զոր առնուցու 'ի ձեռաց նոցա: Իսկ երրորդ նշան, թէ յառաջ քան զժամանել նորա 'ի գաբաա հայրենի քաղաք իւր, անցանիցէ ընդ բլուրն նուիրեալ Աստուծոյ. ուր կայ գունդ մի այլ-ազգեաց կարգեալ 'ի պահպանութեն սահմանաց. և 'ի մտանել նորա 'ի քաղաքն, ընդառաջ ելցէ նորա պար մարգարէից իջելոց 'ի բարձանց երգելով օրհ-նութիս Աստուծոյ 'ի ձայն ազգի ազգի նուագ արանաց. յայնժամ խաղասցէ հոգի Աստուծոյ ի նա և 'ի վերայ նորա, և սկսանիցի և նա մարգարէանալ երգելով զերգս գոհաբանականս առ Աստ, զոր չէ երբէք ուսեալ կամ լուեալ:

Այս 'ի կատարել այս ամենայն նշանաց 'ի վերայ նորա, ասաց նմա թէ այնուհետև մի՛ ևս ինչ երկ-ուանայցէ լինել թագաւոր իսրայէլի, և ունել իւր օգնական զԱստ. միայն փոյթ տարցի առնել զամե-նայն ըստ առաջնորդելոյ խոհեմութեանդ և հոգւոյն Աստուծոյ, զի զհաւատացեալն նմա զպաշտօն տարցի 'ի դլուխ ըստ կամացն Աստուծոյ անթերի: Այս ևս՝ թէ յոր-ժամ կամիցի մատուցանել ողջակէզս կամ զոհս Աստ, ազդ արասցէ նմա, և ինքն սաւուղ երթիցէ 'ի գաղգաղա յառաջ, և անդ սպասեսցէ նմա զեօթն օր, զի եկեալ ինքն սամուէլ արասցէ զզոհս, ըստ իշխանութեանն շնորհելոյ նմա 'ի Տէնէ: Զմանր ասէն, թէ այսու ազդ արար սամուէլ սաւուղայ՝ մի՛ երբէք ձեռներէց լինել զթագաւորական իշխանութիւնն խառնել ընդ քահանայութեանդ. զի սոքա այլևայլ

իշխանութիւնք էն. նմա եւ ոճ զթագաւորութիւն, այլ ոչ զքահանայութիւն. և որ ոչն ի թագաւորութենէ՝ ունի զամենայն իշխանութիւն հրամայելոյ թագաւորաց։

Օ այս պատուէր ընկալեալ սաւուղայ՝ ի սմուէլէ, իբրև դարձոյց զթիկունս՝ ի նմանէ երթալ՝ ի գաբաա, փոխեաց ոճ զսիրտ նորա, նոյնժամայն ազդելով նմա խորհուրդս բարձրագոյնս հաւատոյ մեծի իշխանութենն զոր պատրաստեալն էր վասն նորա։ Այսուհետև ոչ ևս մնախորհ լինէր՝ ի գործման անաւանոյ, կամ՝ ի մշակութիւն հողոյ. այլ թէ սրսիկս պարտ է առաջնորդել ժողովրդեան, զնոյնդ առնել իրաւունս և արդարութիւն. և մղել պատերազմ, և զոյս ոմանս կարգել զօրավարս, որ կիրթք իցեն յառաջնորդութիւն զօրու և այլն։ Այդ՝ յորժամ այսպիսի մտածութիւք գնացեր զձանապարհ իւր, եկին հասին նմա ամենայն նշանքն ասացեալք՝ ի մարգարէէն. յորս յաւէտ նշանաւոր եղև երրորդն, այսինքն անցանել նմա՝ ի պարս մարգարէից, և մարգարէանալ ընդ նոսա. ընդ որ՝ ի հիացումն ըմբռնեալ իւրոց քաղաքակցաց, որոց յերկիր և յեռանդն աւետաւ էր զնա այլ անպատճոյճ և աննշան, ասէին զարմացմամբ ցմիմեանս, զի՞ եղև որդւոյ կիսեայ. միթէ և սաւուղ՝ ի մարգարէս է ցկ։ Այս բան այնչափ նշանաւոր եղև, մինչև այնուհետև յաւակս լինել առ նոսա, ի տեսանել զոք ելանել արտաքոյ իւրոյ վիճակի՝ ասել վասն նորա, և սաւուղ՝ ի մարգարէս։

Սաւուղ վաղվաղակի սկսաւ՝ ի վար արկանել զերկու առաքինութիւնս կարևորագոյնս իշխանաւորաց, զհամեստութիւն կամ զցածութիւն ոգւոյ, և զպահպանութիւն գաղտնեաց։ Վասնզի այնչափ քաջայայտ նշանօք հաւաստեալ նորա ընդ թագաւորական բարձրութիւն, յոր արտաքոյ իւրոց և ամենեցուն կարծեաց՝ ընտրեցաւ լոկ՝ ի բացարձակ կամաց վերին տնտեսութէ, ոչինչ նշան անպիտանութեան կամ մեծամտութէ երևեցոյց յանձին. և՝ ի հարցանել ընտանեաց՝ և հօրեղբօր նորա ցնա, և ցծա-

ասէին նորա, Թէ յո՞ չոգան, կամ զի՞նչ արարին, և Թէ զի՞նչ ասաց նոցա սամուէլ, Թէպէտ զամենայն պատմեաց մի առ մի, բայց զբան Թագաւորութեանէ ոչ էհան նմա՛ի վեր։ Այլ կայր՛ի տան իւրում նովին խոնարհութեամբ և հնազանդութեամբ հօրն սրպէս յառաջագոյն. և պարապերը յիւր սովորականն վաստակս գաշտայինս, որպէս Թէ այն էր լինելոց նորա գործ զամենայն աւուրս կենաց իւրոց. և այնպէս ոչ ոք իմացաւ ինչ, կամ կարաց՛ի կարծիս լինել յաղագս նորա մեծութեանն։

Այսպա կամեցեալ սամուէլն՛ի գլուխ հանել զգործ իւր, կամ լաւ և աս ասել՝ զգործ նոն, ժողովեաց զամենայն խորհել առ նո՛ր՛ի մասնաւորի՝ տալ նոցա Թագաւոր, զոր այնչափ անձկանօք խնդրէին։ Այնտեղուրէք Թագաւորին Թէպէտ արդէն վճարեալ էր, բայց կամեցաւ նա, զի լինի վերստին վճռակաւ առաջի ամենայն ժողովրդեան. զի մի պատճառս առցեն նոքա հակառակութեանէ, որպէս Թէ սամուէլ ինքնին ըստ իւրոյ հաճոյից կայուցանէ նոցա Թագաւոր։ Այլ՝ նախ խօսեցաւ սամուէլ՛ի լուր համագումար ժողովոյն, յուշ առնելով հանդերձ զառաքեալսն զմեծամեծ բարութիւնսն, զոր նա Թագաւոր նոցա արար նոցա՛ի սկզբանէ հանելոյ զնոսա յերկրէն եգիպտացւոց մինչև ցայն վայր. և զնոցայն հեստութիւն՛ի նոնէ, զի Թողեալ զնա՝ խնդրեցին Թագաւոր. սակայն և այնպէս զիջանի նա կատարել զնդիր նոցա։ Այսպա հրամայեաց նոցա կալ մեկուսի՛ի միմեանց ուրոյն ըստ ցեղից, ըստ տոհմից և ըստ տանց. և արկ սամուէլ զվիճակ, և էլ վիճակն ցեղին բենիամինի. արկ զնոյն երկրորդ անգամ, ՚ի վերայ զանազան տոհմից այնր ցեղի. և էլ տոհմին ամատտարեայ. ապա մատոյց զտոհմն նորա ըստ տանց, և զտունս ըստ արանց տանն, և էլ վիճակն սաւուղայ որդւոյ կիսեայ։

Այն ժամայն խնդրեցաւ սաւուղ, զի հրատարակեսցի Թագաւոր իսրայէլի. այլ նա ոչ գտաւ՛ի մէջ բազմութեանէ ամբոխին. զի ոչ կամեցաւ առաջիկայ լինել այնմ վիճակընկեցութեանէ. քանզի Թե

պէտ գիտէր Հաւաստեաւ յաճախին յայտնութենէ զընտրութիւն իւր, այլ ոչ նոյնպէս գիտէր զմիտս և զսիրտ ժողովրդեան ՚ի վերայ անձին. զի որպէս կարելի դատէր, թէ յօժարամիտ ընդունիցին զնա, նոյնպէս և խնդայր՝ թէ գուցէ ընդդէմ դառնայցեն յաղագս նուաստութեանն տոհմի նորա. և յայնժամ դժուարին լինէր նմա յոյժ զերկս իրացն գտանել, զի մի երևեսցի՝ ոչ խօթասիրտ և երկչոտ ՚ի հրաժարիլն՝ առ երկիւղի տեղի տալով բազմութեանն, եթէ ոչ կամիցին ընդունել զնա. և ոչ փառամոլ՝ կամելով բռնի նուաճել զնոսա, որ դժուարագոյն և աս է: Իսկ հեռի գոլով նորա՝ յերանել վիճակին, հարկաւ ազդ արասցեն նմա, և յայնժամ կարէ հասու լինել մտաց և յօժարութեանն իշխանաց և ժողովրդեան վասն անձին իւրոյ. և երթալ կամ ոչ, ըստ որում յանկագոյն դատիցի յիւր օգուտ: Ի՛յր թէ այս էր կամ այլ ինչ խորհուրդ նորա, իբրև ոչ գտաւ անդ յերանել վիճակի նորա, եհարց սա մուել զնոր, եթէ գայցէ՞ նա անդ. ասաց ետր, թէ ոչ գայ ինքնին. բայց միանգամայն ծանոյց զտեղին ուր կայր թաքուցեալ: Իբրև թէ սաւուղ եկեալ էր ընդ այլոց ՚ի մասեփաթ, բայց ՚ի ժամու վիճակընկեցութեանն խոյս տուեալ ՚ի ժողովոյն՝ թաքեաւ անդ յանքոյթ ինչ տեղւոջ ոչ կարի ինչ ՚ի բացեայ, ուր պահէին կարասիք. որպէս յուցանէ մերս թարգմանութիւն համաձայն եբրայական բնագրին՝ յասելն. * Ի՛ստուիկ թաքուցեալ է ընդ կարասեաւ ‖. ուր լատինն ընթեռնու. * ՚ի տան ‖:

Իբրև իմացաւ սամուէլ զտեղին, ընթացաւ և առ զնա անտի, և ածեալ կացոյց ՚ի մէջ բազմութեանն ժողովրդեան. որոյ առ հասարակ զաչս ՚ի գեղապանծ դիտակ հասակի նորա յառեալ, որ ուսով չափ բարձր էր քան զամենեսին, զուարթացան ընդշքեղաշուք տեսիլ նորա: Իւ սամուէլ առ առաւել յարդոյ ընծայեցուցանելոյ զնա համօրէն ժողովոյն, ասէ. ահա այրն, զոր ընտրեաց ետր ձեզ թագաւոր. տեսանէ՞ք, զի ոչ գոյ նման դորա յամենեսին ՚ի ձեզ: Ի՛ւ այս բան նորա ՚ի մի ձայն աղաղա-

կեցին ամենեքեան, կեցցէ արքայ. որով և հանդէս ընկալան զնա՛ի թագաւոր իւրեանց: Այս այսպէս՝ քանզի եղև սաւուղ օրինօք ընտրեալ, օրինօք հրատարակեալ, և օրինօք ընկալեալ, ոչ ևս մնայր այնուհետև տեղի հակառակութե՛ն՛ի վերայ թագաւորութե՛ն նորա: Եւ մին իրի և սամուէլի՛ն՛ի սոյն միտս հաստատեալ, յառաջ քան զարձակել զժողովն՝ ՛ի լուր ամենեցուն նոցա հրատարակեաց զկրաւունս թագաւորի յերկուց կողմանց. այսինքն զպարտաւորութե՛ն թագաւորին առ ժողովուրդն, և ժողովրդեան առ թագաւորն: Այս զի մի՛ գինի ժամանակաց խռովութիք ծագեսցին՛ի նոսա՝ ՛ի կամել թագաւորաց առաւել ինչ իշխանութիւն գրաւել անձանց, կամ ժողովրդեան ընդարձակել զազատութե՛ն իւրեանց, զայն ամենայն զոր քանիւ հրատարակեաց նոցա, և զոր հանդիսիւ ընկալան թագաւորն և ժողովուրդն, արձանագրեաց՛ի մատեանի. և եդ՛ի պահեստի առաջի տեն, այսինքն՛ի խորանն վկայութե՛ն. յորմէ երևի թէ տապանակն տեն՛ի կարիաթարիմայ անդ՛ի մասեփաթե էր փոխադրեալ յայնժամ վասն այնր հանդիսի. որոյ առաջի կատարեցան այս ամենայն:

Այլ զինչ էին այն օրինք թագաւորութե՛ն, չէ յայտ. զի մատեանն՝ ուր գրեցան՝ չերևի ուրեք: Համանք համարին՝ թէ այն էր, զոր սամուէլ՛ի վեր անդր. ա. Թագ. Ը. 11. ըստ հրամանին Այեդ առաջի ժողովրդեան՛ի խնդրել նոցա թագաւոր՝ իբրև հիմնական օրէնս նոր թագաւորութե՛ն լոկ բանիւ. զոր աստ՛ի գիր արձանացոյց: Այլք՝ թէ նոր սահմանադրութե՛ս ինչ արար յայնժամ սամուէլ առ ուղիղ մատակարարութե՛ն թագաւորութե՛ն այլազգ քան զառաջինան, որք առաւել սպառնալիք էին և գուշակութիք, քան վաւերական օրէնք: Կատարել այսր ամենայնի՝ արձակեաց սամուէլ զժողովուրդն երթալ՛ի տեղիս իւրեանց մինչև սահմանեսցի օր առնելոյ զհանդէս թագաւորութեան. գնաց և սաւուղ՛ի տուն իւր՛ի գաբաա իբրև այր սոսկական՝ ոչինչ մեծութի՛ կամ իշխանութի՛ երևե-

ցուցեալ։ Սակայն յոլովք յարիադնէն երիտասարդաց յորդորեալք ՚ի բանից սամուէլի, և ՚ի յայտնի նշանաց ՚ածային ընտրութե՛ն, յուշարկեցին զնա առ ՚ի պատիւ մինչև ՚ի տուն նորա. և ընծայաբեր եղեն նմա իբրև թագաւորի ազգին ՚ի նշան կամակար հնազանդութե՛ն. նոյնպէս և սամուէլ դարձաւ ՚ի տուն իւր յարիմաթէմ։

Այս այն ինչ թուէր, եթէ իրք թագաւորութե՛ն վճարեցան խաղաղութե՛ք ըստ հաճոյից ժողովրդեան, ըմբռստացան արք ոմանք ժանտաբարոյք և յետսամիտք. քանզի առքա ՚ի սկզբան անդ ՚ի տեսանել զսաւուղ ՚ի մէջ մեծի ժողովոյն, միայն ՚ի վայելուչ դիտակ հասակի նորա ուշ եդեալ, ոչ յիւշեցին զտուն, զազգատոհմ և զգործ նորա. ուստի և միաձայն ընդ այլոց զկեցցէ՛ ալքայն աղաղակեցին։ Այլ իբրև առ սուղ ինչ հեռացաւ սամուէլ, ՚ի միտս եկեալ, և իբրև թէ ՚ի քնոյ զարթուցեալ, սկսան մտախոհ լինել, թէ զկնի այնչափ փութոյ պնդութե՛ն նոցա ՚ի խնդիր թագաւորի, ո՞ և ո՞րպիսի այր կացուցաւ նոցա թագաւոր։ Այո՛ է ասէին թագաւոր մեր՝ այր ապատոհմ, իշխալար և հողագործ. սա՞ լինիցի զօրագլուխ իսրայէլեան գնդին՝ փրկել զմեզ ՚ի թշնամեաց որ շուրջ զմեօք։ Այս այնպէս արհամարհեցին զնա. ոչ ընծայեցին նմա հպատակութե՛ն, և ոչ ըստ սովորութե՛ն պատարագս մատուցին նմա։ Այս ամենայն խռովայոյզ զբոյգք և արարք չէին ինչ զանխուլ ՚ի սաւուղայ. բայց նա կեղծեր լսել զնախատինս և չիմանալ զարհամարհանս. մնալով պատշաճ և դիպող առնի երևեցուցանելոյ զանձն ՚ի քաջագործութե՛ն իմիք, որ չէր իսկ հեռի։ Ո՞վ ի գիտեր ամենայն իսրայէլ զշարժուման նաասեայ արքայի ամմնացւոց, վասն այնորիկ իսկ փութացուցանէին զընտրութե՛ն թագաւորի. և ինքն առ ժամն ոչինչ փոփոխութիւն վիճակի յանձն իւր երևեցուցեալ՝ պարապէր խաղաղ ոգւով յիւր առաջին սովորական գործս՝ լծել եզինս յարօրագործութե՛ն հայրենի անդաստանաց։

Այս անհոգութե՛ն և լռութե՛ն սաւուղայ ոչ միայն

չբռաղմացոյց իւր հակառակորդս, այլև զառաջինսն զինաթափ արար. և թէ մարթ իցէ ասել՝ ննջեցոյց ի քուն խորին։ Օ՛ի չկարէր նորա իւր կուսակիցս ընդդէմ հակառակորդացդ, և ոչ նոքա խնդրեցին յաւելուլ զդիմմարտս. յորն բազմիլ նորա շքով յաթոռ թագաւորութե՛ն, ոչ ոք ձգեաց զձեռս ի վայր անտի ընկենուլ զնա։ Այր խնդրէ ժամանն լինել՝ի կատարած գժուարին իրացդ, չէ պարտ նմա կարի շտապել. զի արագութիւնն ոչ է յընթանալն, այլ յորն ժամավաճառ լինել. համբերութիւնն և երկայնմտութիւնն հատանէ ձանապարհ բազում, թէպէտ և հանդարտաքայլ, մինչ ժամն նակն չէ՝ի ձահ՝ի բռնութի՛ն ձեռնարկել։ Ի հրկիզութի՛ զոր չկայ մարթ վաղվաղակի շիջուցանել, բազումն լինի շահել, եթէ նահանջ արկցի՝ զի մի՛ և ևս ձարակեսցի։ Օ՛այս ձանապարհ կալաւ սաւուղ, որով եհաս՝ի վախձան իւր։

ԳԼՈՒԽ Ը.

Սաւուղ զօրաձողով լինէր ընդդէմ ամնաացոց. յաղթէ նոցա. ապաթէ պչաբէա գաղատացու. երիցուդ անգամ օձանի ըսգաւոր՝է գաղգաղա։ Սամուէլ անարատ վկայէ՝է ձողովըդենէ։ Ցանդիմանէ պատերազմողութի՛ն նոցա առ ած։ Տայ նշան չերկնից՝է վկայութի՛ն ճշմարտութի՛ն բանից իւրոց։

Այր իբր ամսօրեայ մի ժամանակ, զի ժողովուրդ որդւոց իսրայէլի կայր տարտամ և՝ի կախ. չէր հասարակապետուի, զի ընտրեցաւ նոցա թագաւոր. և ոչ միապետութի՛ն, զի սաւուղ չև էր մուծեալ հանդիսիւ՝ի ժառանգութի՛ն, զոր և ոմանք չկամէին ձանաչել թագաւոր. մինչև ընդառաջ եղև նորա դիպող առիթ որում կանխատես էր նա,

և որում որպէս ասացաք՝ միայն ՚ի հաստատել արդեամբ զԹագաւորութիւն իւր. յայնժամ ապա փառաւք նստաւ յաթոռ իւր: Այլ նախ նասա Թագաւոր ամենացւոց կամէր զբառամբ ածել զերկիւղն գաղատաղու՝ յոր վերայ հասարէր ունել իրաւունս, որպէս և նախնիք նորա ՚ի ժամանակս յեփթայեայ զնոյն պնդէին: Այլ անպատճառ. զի որդիքն իսրայէլի ոչ աւրէն զնա յամենացւոց, այլ ՚ի ձեռաց ամովրհայւոց արդար և օրինաւոր պատերազմաւ ժամանակօք մովսիսի: Այս յետ այնորիկ ՚ի ձեռն հռչակաւոր յաղթութեն յեփթայեայ ընդդէմ ամենացւոց կրկին իրաւամբք հաստատեցան որդիքն իսրայէլի ՚ի ժառանգութիւն երկրին: Ապա որոյ չուենէին ամենացիք բնաւ իրաւունս ինչ ՚ի վերայ գաղատաղու. որպէս ցուցաք յառաջագոյն ՚ի բանս դատաւորութեն յեփթայեայ:

Այլ որպէս և իցէ, եկն նասա զօրու ծանու, և ապաշարեաց զյաբէս ամրակուռ քաղաք գաղատաղու՝ կառուցեալ ՚ի վերայ լերին ՚ի վիճակի կիսոյ ցեղին մանասէի: Ընակիչք յաբէսի Թէպէտև զօրաւորք էին, այլ զօրութի նոցա անբաւական ընդդէմ սըրնդակազմ զօրուին ամենացւոց. նմին իսկ ոչ իշխեալով ՚ի մարտ ընդդէմ նոցա ձեռնարկել՝ առաքեցին հրեշտակս առ նասաս, և առաջի արարին նմա ուխտ խաղաղութե դնել ընդ նոսա՝ խոստանալով իբր դաշնակից ծառայել նմա: Ընդ այս վերամբարձ առաջարկութի գժգոհեալ նասասայ՝ ետ նոցա գոռոզ պատասխանի առակաբանութե. ուխտեցին ասէ ընդ ձեզ ուխտ, բայց առաջին պայմանն լինելոց է այս, զի հանիցէք (կամ ըստ այլ Թարգմ. զի հանից) զամենայն ակն ձեր զաջոյ, և եդից զձեզ նախատինս ՚ի մէջ ամենայն իսրայէլի. յայտ արարեալ Թէ, չեն նորա կամք ունել զնոսա իբր դաշնակից, այլ ստրուկս. Թէպէտ ոմանք կարծեն Թէ խորհուրդ նասասայ էր իրօք հանել զաջոյ ակն նոցա, առ անպիտանս առնելոյ զնոսա այնուհետև ՚ի գործ պատերազմի: Այլ եթէ այս և եթէ այն, խիստ էր պայմանն. վասն որոյ ընտրեալն էր սուր ՚ի

ձեռին մեռանել ՚ի մարտի՝ քան Թէ զմի ՚ի պայմանաց անտի յանձն առնուլ։ Ո՛այն անագորոյն պատասխանի լուեալ Ծերոց յաբիսայ, որք տեղեկացեալ գիտեին զընտրութիւնն սաւուղայ ՚ի թագաւոր ազգի իւրեանց, խնդրեցին ՚ի ձեռն հրեշտակաց իւրեանց ՚ի նաասայ դուլ աւուրս եօթն, զի առաքեսցեն հրեշտակս յամենայն սահմանս իսրայէլի խնդրել օգնութիւն, սովին պայմանաւ, զի Թէ ընդայն եօթն աւուրս ոչ ժամանեսցէ նոցա օգնութիւն, անձնատուր լինին ՚ի կամ նորա առնել նոցա զինչ և կամիցի. իսկ եԹէ գայցէ օգնութիւն, յայնժամ ելք պատերազմին վճարեսցէ զիրսն։

Ո՛իջաւ նաասայ անդիմադարձ առ այս առաջարկութիւնն նոցա. քանզի անհնարին համարէր, Թէ յայնչափ սուղ ժամանակի կարասցեն որդիքն իսրայէլի զօրաժողով լինել գունդ կազմել զօրաց՝ բաւական ՚ի դիմագրաւ լինել իւրում ահաւոր գնդի։ Այլ յիրաւի, զի հասարակութիւնն երբայեցւոց էր յայնժամ երկպառակեալ. սամուէլ ոչ ևս ունէր իշխանութիւնն հրամանատարութեան. սաւուղ անդոհնեալ կայր, բայց քանզի էր ընտրեալ յաւ և ՚ի ժողովրդենէ, ոչ ոք իշխէր ինքնագլուխ ձեռներէց լինել ՚ի հրամանատարութիւն ազգին, իբրև ասլըտամբ՝ անձամբ յանցաւոր զանձն երևեցուցանել։ Ոչ Թուի նաասայ մասին վրիպեալ ՚ի մարդկօրէն խոհեմութիւն. բայց խորհուրդ նորա նանրացաւ, քանզի ձեռն ՚ին զօրութեաց եղև յայս գործ։ Ընդ յաբիսայ արձակեցին վաղվաղակի հրեշտակս ՚ի գաբաա առ սաւուղ զեկուցանել նմա զաշխարեալն վիճակ քաղաքի իւրեանց. այլ զի նա ոչ գտաւ ՚ի ժամուն ՚ի քաղաք անդր, խօսեցան նոքա ՚ի հրապարակի յականջս ժողովրդեան, պատմելով զսպատնալիս նաասայ, և զվերջին աղէտ ժամադրութեան իւրեանց ընդ նմա։ Ընդ այն լուր դառնութեան յարտասուս հարեալ ժողովրդեան՝ որպէս Թէ անդարմանելի էր վտանգն, լային մեծաձայն։ Ո՛ն նմին պահու եՀաս սաւուղ դառնալով յանդէ հանդերձ եզամբք ՚ի գործոյ անդաստանաց. և տեսեալ զբա-

զաքն ՚ի մեծի շփոթումեան, եհարց հիացմամբ, զինչ իրք իցեն, զի լայ ժողովուրդն. պատմեցին նմա զամենայն զպատգամն արանցն յաբիսայ. և մինչ ունկն դնէր նա բանից պատմողացն, խաղաց հոգի ՚ի վերայ նորա. որով ՚ի սրտմտութիւն արդար վրէժխնդրութիւնէ վառեալ, մերկացոյց զսուր և անդէն առաջի բազմութիւնէ ժողովրդեան յօշեաց զերկու եզինս իւր. և կոտորեալ զնոսա՝ ՚ի բաղում մասունս՝ եւ ՚ի ձեռս սուրհանդակաց մի մի մնան, արձակեալ զնոսա սրաւարիլ յամենայն սահմանս և առ ամենայն ցեղս իսրայէլի, պատուիրելով ցուցանել զհատուածս արիւնաթաթաւ մնոյ, և ասել. որ ոք ոչ ելանիցէ ՚ի մարտ զհետ սաւուղայ և զհետ սամուէլի, ըստ այդմ օրինակի արասցեն զեզինս նորա։

Այս եղև առաջին պատուէր՝ զոր արար սաւուղ իբրև թագաւոր զկնի իւրոյ ընտրութէնէ. և առ ամրացուցանելոյ զպատուէր իւր՝ յաւել և զանուն սամուէլի. որպէս զի և ապստամբեալք որք ոչ ձա նայէին զնա թագաւոր, լուեալ զանուն մարգարէին օրինաւոր դատաւորի իւրեանց, որում պարտական էին հնազանդել, գայցեն անյապաղ։ Առաքեաց և առ սամուէլ առանձին հրեշտակ ՚ի քաղաք իւր յարիմաթեմ. և եկն նա վաղվաղակի ըստ ակնարկութէնէ արքային. և ինքն հանդերձ սամուէլիւ և արամբք որք ընդ նմա գտան՝ առ չկորուսանելոյ ժամանակ անդ ՚ի գաբաա սպասելոյ գումարելոյ զօրուին, արագեաց և անց զյորդանան, և գնաց ՚ի բեղեկ ՚ի լեառն։ Կալաւ առ իւր և զհրեշտակս յաբիսայ. մի՝ առ ՚ի մնորահոյզ տեղեկանալ ՚ի նոցանէ վասն հանգամանաց թշնամւոյն, թէ ուր և զիարդ կան բանակեալ. և վասն ձանապարհաց թէ ընդ ո՞ր մասին իցէ նմա յանպատրաստից հասանել ՚ի վերայ նոցա. և երկրորդ՝ զի ամենացիք տեսեալ զյապաղումն դարձի նոցա, դիցեն ՚ի մտի թէ նանրացան ՚ի յուսոյ գտանելոյ ուստեք օգնութէնէ, և այնպէս յանհոգս կացցեն. զի գեղեցիկ հնարագիտութէնէ է և պատրաստութէնէ առ յաղթութէնէ՝ վա-

ըիլ ընդ յանձնապաստան Թշնամւոյն այնպէս՝ զի մի կասկած պատերազմի առնուցու։

Ի հասանել սուրհանդակացն սաւուղայ յամենայն սահմանս իսրայէլի, փոխեաց ՚ած զսիրտս ամենայն ժողովրդեան՝ արկեալ ի նոսա ահ մեծ ի Թագաւորէն իւրեանց. որով ամենեքեան միամտութիւ հնազանդեալ խրախուսեցին միակամ համաչունչ իբրև զմի այր, և յամենայն կողմանց շուտափոյթ ընթացիւք հասին ի լեառն բեզեկայ. որ քան մղոնաւ և եթ հեռի էր յաբիսայ քաղաքէ, և տասն մղոնաւ ի բանակէ ամմնացւոց։ Ընդ հանդէս արար սաւուղ ամենայն արանց եկելոց, և գտան վեցհարիւր հազար յամենայն ցեղից իսրայէլի, և եօթանասուն հազար ի ցեղէն յուդայ։ Ինչև այս ամենայն իրագործութիւք կատարեցան, եհաս վեցերորդ օր եօթն աւուրց ժամադրելոց. ի նմին աւուր դարձոյց սաւուղ զհրեշտակս յաբիսայ, պատուիրելով ասել ցբնակիչս, թէ վաղիւ ի բարձրանալ արեգականն՝ եղիցի նոցա փրկութիւն ի Թշնամեաց. ընդ որ ուրախ եղեն նոքա յոյժ՝ իբրև ի մեռելութէ ի կենդանութիւն փոխեալ։ Այլ առ յանհոգս պահելոյ զԹշնամին չունել քնաւ կարծիս պատերազմի, ի նմին վեցերորդ աւուր ընդ երեկս՝ առաքեցին հրեշտակս ի ձև աղաչաւորաց տրտմեալս և խոնարհեալս, ասել ցնաասս, թէ ոչևս ակնունելով մեր հասանելոյ եղբարց մերոյ մեզ յօգնութիւն վաղիւ ըստ ժամադրութե մերում բացցուք զդրունս քաղաքի մերոյ, ելցուք առ ձեզ, և արասջիք ընդ մեզ որ ինչ հաճոյ իցէ առաջի ձեր։

Սաւուղ իբրև արձակեաց զհրեշտակս դառնալ ի յաբիս, բաժանեաց վաղվաղակի զզօրս իւր յերիս առաջս և գիշերային յառաջ խաղացեալ անձայն և անմռունչ, յառաւօտին պահուն՝ մինչ Թերևս որդիք ամմնայ պատրաստէին վտահութիւ մտանել տիրել յաբիսայ դաղատադու, հորդան ետ իւրոց զօրաց յեղակարծումն յերկուց կողմանց անկանել ի վերայ նոցա. և ինքն ի գլուխ երրորդ գնդին սրաւարեալ մխեցաւ ի մէջ բանակին ամմնացւոց. ուր

մինչև ցօր հասարակ անհնարին կոտորած գործե-
ցին ՚ի նոսա իսրայէլացիք, և գրեթէ զբովանդակ
բանակ նոցա անդէն առ ետեղ ՚ի սայր սուսերի
մնաւեալ տապաստ արկին մինչ զի սակաւք ոմանք և
եթէ մազապուրծ զերծան փախստեամբ. բայց և
նոքա այնպէս ցիր և ցան եղեն, զի ոչ ինացին ՚ի
նոցանէ երկու ՚ի միասին: Այս չքնաղ յաղթուԹի
հաստատեաց զսաւուղ մեծապանծ փառօք յաԹո-
ԹագաւորուԹէ իսրայէլի. և գԹուԹէն նորա զոր
զկնի սակաւուց երևեցոյց, և ևս բարձրացոյց զնա
առաջի ՚ի, և առաջի մարդկան: Վանզի զկնի
յաղԹուԹես մեծի՝ արք ոմանք ՚ի ժողովրդենէ տա-
րապայման նախանձայոյզք վասն նորա կամ Թերևս
և մարդահաճոյք, կարծելով հաճոյական զոհ առ-
նել նմա ՚ի լուանալ արեամբ եղբարց իւրեանց զսու-
սերս ԹաԹաւեալս յարիւն Թշնամեաց, մատեան
առ սամուէլ, և ասեն. Ո՞ք են նոքա՝ որ ասացին,
Մի Թագաւորեսցէ մեզ սաւուղ. տո՛ւր ՚ի ձեռս
զարսն, զի սպանցուք զնոսա: Ասէ սաւուղայ
զանազորոյն խորհուրդ նոցա, արգել զնոսա. Մի
ոք ասէ մեռցի յաւուր յայսմիկ. Մի խաւնեսցի տրխ-
րուԹիւն ՚ի ցնծուԹէ զուարԹարար աւուրս մեծի
հեղմամբ արեան եղբարց մերոց. ՚ի մոռացօնս դի-
ցին յանցանք ապստամբուԹեան նոցա, և միայն ողոր-
մուԹէն ՚ին պատմեսցի. զի այսօր արար ՚ին փրկու-
ԹիւնՀ իսրայէլի:

Այս կամեցեալ սամուէլ ամրացուցանել և ևս
զիշխանուԹէն սաւուղայ, զայն հասարակաց ուրու-
խուԹիւն՝ ժամ դիպող և պատշաճ վարկաւ իւրոց կա-
մաց կատարման. կոչեաց զզօրսն և զժողովուրդն
ամենայն, ՚ի գաղգաղա առնել նաւակատիս Թա-
գաւորուԹէ. անդ օծ հանդիսիւ միւսանգամ զսա-
ւուղ ՚ի Թագաւոր առաջի ՚ին, և համաշխունչ հա-
ւանուԹէ համօրէն ժողովրդեան հաստատեցաւ
ընտրուԹիւնն մատեփաԹայ. և զոհեցին ՚ին զոհս
խաղաղականս. և ուրախ եղեն անդ յոյժ սամուէլ
և սաւուղ և ամենայն ժողովուրդն. և յօրէ յայն-
մանէ սկսաւ սաւուղ տիրապէս Թագաւորել. յո-

բում և դատաւորական իշխանութիւն սամուէլի դա-
դարեցաւ ։

Եւ կատարիլ այսր ամենայնի՝ մինչեւ էր արձա-
կեալ ժողովոյն , կամեցաւ սամուէլ ընդ քննութիւն
արկանել զամենայն ժամանակ դատաւորութիւնէ իւ-
րոյ առաջի նորապսակ Թագաւորին՝ ի համագումար
ժողովի անդ որդւոցն իսրայէլի , զի մի յետ մահ-
ուան իւրոյ՝ զոր տեսանէր մերձեալ , զուր զրպար-
տութիւնք լինչ յոգեսցին՝ ի վերայ նորա՝ ի պատճառս
որդւոց իւրոց՝ իբր համախոհ և գործակից զօշաք-
ղութեանէ նոցա և զինքն առդնեալով ։ Խօսեցաւ առ
նոսա և ասէ · ահաւասիկ լուայ ձայնի ձերում, և
Թագաւորեցուցի ձեզ Թագաւոր · դա է այսուհետև
ձեր գլուխ և առաջնորդ · դա դատեսցի զդա-
տաստանս ձեր , դա տացէ հրամանն ամենայնի , և
ինքն ելցէ առաջի ձեր՝ ի պատերազմ · տեսիք զա-
րիութիւնէ նորա և զղինուորական ձարտարութիւնէ՝ ի
գործ պատերազմի յաբիսայ գաղաադու ընդդէմ
նաասայ ամմոնացւոյ ։ Իմս ծերացեալ եմ, և ժամա-
նակ իշխանութիւնէ իմոյ լցեալ · նստայց այսուհետև
հանդարտեալ ։ Ահաւադիկ կալայք առ իս յաղագս խո-
տորնակ գնացից որդւոց իմոց , ես զոր ինչ պարտն
էր նոցա առնել արարի · ՚ի քայ ընկեցի զնոսա ՚ի
գործոյ պաշտամանն , յոր կարգեալ էր իմ զնոսա ·
և եթէ տակաւին ունիցիք ինչ ամբաստանութիւն
զնոցանէ , աւասիկ ՚ի միջի ձերում էն , կարօղ էք
հանել զնոսա յատեան առաջի Թագաւորիդ · այլ
ես զանձնէ իմմէ խնդրեմ ՚ի ձէնջ պատասխանի ։
Իմս վարեցի առ ձեզ դատաւորական իշխանութիւնէ
՚ի մանկութենէ իմմէ մինչեւ ցայսօր · արդ աւասիկ
աստ եմ · տուք զինեն պատասխանի առաջի Տեառն և
առաջի Թագաւորիդ , եթէ անիրաւեցայ ինչ ՚ի
ձեզ զամենայն ժամանակս իմ · եթէ զեզն ուրուք
առի , կամ զէշ ուրուք վարեցի · կամ յաղթահարե-
ցի զոք ՚ի ձէնջ · կամ Թէ զրկեցի ինչ զոք · կամ
Թիւրեցի զիրաւունս զրկելոյն վասն կաշառաց , և
մեծացուցի զտուն իմ քրտամբ աղքատաց , կամ
պարգեւօք մեծատանց · տուք պատասխանի համար-

ձակ, զի պատրաստ եմ հատուցանել զամենայն։ Ա. ուստ բան մարգարէին, որոյ իմաստութիւն արդարութիւն և հանձար՝ ի հրամանատարուն յայնմ վերջին վայրկենի առաւելապէս բացածանուցաւ՝ մինչ՝ ի քաց թողոյր զայն, ամենեքեան՝ ի մի բարբառ աղաղակեցին. չունիմք ինչ ամբաստանութիւն զքէն. զի ոչ մեղար մեզ, և ոչ զրկեցեր զմեզ և ոչ նեղեցեր. և ոչ՝ ի ձեռաց ուրուք առեր ինչ։

Օ այս խոստովանութիւն առեալ սամուէլի՝ ի բերանոյ ժողովրդեան, վկայ կոչէ զնա և զթագաւոր նոցա, զի ոչինչ անիրաւութիւն գտին՝ ի նմա. որք են ձեռք նորա՝ ի կաշառայ, և անշաղակս յարեն՝ անմեղաց։ Ա. ոքա միահամուռ աղաղակեցին՝ ասելով, լեցի՛ վկայ։ Ա. պա սամուէլ ոչ ևս իբրև լոկ մարդ, այլ իբրև մարգարէ պատգամաւոր նմա՝ ի դատ կոչէ զնոսա, յուշ առնելով զբարեգործութիւն զոր արար նա ընդ հարց նոցա՝ սկսեալ՝ ի մտից յակոբայ յեգիպտոս մինչև զայն վայր, և զնոցայն ամբարշտութիւն ընդդէմ նմա և բարերարի իւրեանց։ Ա. այլ և այն. պէս ոչ կամեցաւ նա խոպան կորուսանել զնոսա, ըստ որում արժանի էին, և ըստ որում բազում անգամ սպառնացաւ։ այլ իբրև հայր գթած՝ ի խրատ և յուղղութիւն թոյլ ետ անկանիլ նոցա՝ ի ծառայութիւն այլազգեաց. և՝ ի նեղիլ իւրեանց յանբերելի ջղոյ անտի թշնամեաց, և յաղաղակել առ նա մեղայասացութիւն, առաքեաց նոցա ազատարարս, զկնի մովսիսի, ահարոնի, և յեսուայ որ եմոյծ զնոսա յայն երկիր աւետեաց, զբարակ, զաւոդ, զգեդէոն, զեփթայէ, զսամփսոն, և՝ ի վերջոյ զնա ինքն զսամուէլ։ Ա. այլ՝ ի վերայ այսր ամենայնի իրազեկ լեալ նոցա պատրաստուե նաստոյ ամենացեղոյ յառնել՝ ի վերայ իւրեանց, խնդրեցին թագաւոր ըստ օրինակի այլոց. որով մերժեցին զսամուէլ՝ որ չիշ կարգեալ էր իբր իւր անմիջական պաշտօնեայ. և այնու մերժեցին և զնա, մոռացեալ եթէ նա ինքն է նոցա թագաւոր և նախանձաւոր պահելոյ զնոքեան զայն հրամանատարուն. սակայն և յայսմ զիջաւ նոցա, և ետ նոցա թագաւոր։

Եւ ապա դարձուցեալ զընթացս բանից, խոստանայ նոցա և թագաւորի իւրեանց զպահպանողական հովանաւորութիւնն այ և զպաշտպանութիւն, եթէ երկնչիցին 'ի նմանէ այ իւրեանց, և զօրէնս նորա պահեսցեն, և զնա միայն պաշտեսցեն, և ոչ հետիցեն 'ի նմանէ. ապա թէ ոչ՝ յարէ զկնի սպառնալիս 'ի վերայ նոցա և 'ի վերայ թագաւորի իւրեանց: Եւ 'ի հաստատութիւն ամենայնի զոր խօսեցաւ, տայ նոցա նշան յերկնից. էր ժամանակն հնձոց ցորենոյ, յորում սովորաբար չլինէին յերկրին յայնմիկ ամպրոպք և անձրևք. և օրն էր պարզ ամենևին. ասէ ցնոսա. ԵՒ արդ կացէք և տեսէք զբանս զայս մեծ, զոր արասցէ ձեր առաջի աչաց ձերոց. ոչ ապաքէն հունձք ցորենոյ էն այսօր. կարդացից առ ձեր, և տայէ ձայնս և անձրևս. և գիտասջիք և տեսջիք, թէ մեծ է չարութիւն ձեր՝ զոր արարիք առաջի ինն խնդրել ձեզ թագաւոր յարհամարհութիւն ձերութիւնէ 'ի վերայ ձեր զոր ամենակալն ինքեան պահեալ էր: Արդ եկայց սամուէլ յաղօթս առ ձեր, և ահա արտաքոյ սովորութիւնէ և սկսկալութիւնէ՝ պատեցան երկինք ամպովք, և եղեն փայլատակմունք և որոտմունք ահեղաձայնք, և անձրևք յորդահոսք: Եւ ժողովուրդն առ հասարակ զարհուրեալ և 'ի զեղջ եկեալ, աղաղակեցին առ սամուէլ կալ յաղօթս վասն նոցա, զի մի մեռանիցին. արար սամուէլ. եկաց անձրևն, և երկինք դարձան յառաջին զուարթառարար պարզութիւն:

Ա. Սալի դնել զանազան կարծիք ՚ի վերայ ամաց Նագաւորե-
ցոյ սաւուղայ, ըստ դանիէլ ամս Նագաւորեցաց։

Յետ այսր երկրորդ հանդիսաւոր օծումն Ե-
սաւուղայ ՚ի գաղգաղա, որով և տիրապէս սկսաւ
Թագաւորել ՚ի վերայ ամենայն իսրայէլի, կամե-
ցեալ սրբազան մատենագրին պատմել զպատերազ-
մունս և զայլ գործս նորա՝ զոր սկսաւ առնել այ-
նուհետև իբրև Թագաւոր, զայս օրինակ սկիզբն
առնէ. * Որդի տարեւոր (այսինքն որդի միոյ տար-
ւոյ) էր սաւուղ ՚ի Թագաւորել իւրում, և երկուս
ամն Թագաւորեաց ‖. ա. Նագ. ժգ. ւ։ Որ Թէն է
յոյժ բանս և գժուարիմաց, որ և մեծապէս աշ-
խատ արար զմեկնիչս ՚ի պարզել և ՚ի բացայայտել
զհարազատ իմացուածս նորա։

Որպէս իմացան զայս ասացեալ յաղագս կե-
բուսէեայ որդւոյ սաւուղայ. զոր և պարզեն այս-
պէս. * էր որդի տարեւոր սաւուղայ՝ ՚ի Թագաւո-
րել իւրում, այն է՝ կեբուսէէ. որ յիւրում ժամա-
նակի Թագաւորեաց ամս երկուս ՚ի վերայ իսրայ-
էլի ‖։ Որ ասն զի ասեն, յայտնի է նախ՝ Թէ սա-
ւուղ ՚ի Թագաւորել իւրում ոչ էր տարեւոր կամ
միամեայ մանուկ. ապա ոչ խօսի առաք գիրն վասն
նորա։ Երկրորդ՝ սքեն պօղոս ասէ Թագաւորել
սաւուղայ ամն քառասուն. ապա նոյնպէս ոչ խօսի
վասն սաւուղայ, այլ վասն այլոյ ուրուք, որ Թա-
գաւորեալ իցէ ամն երկուս։ Որ երրորդ՝ զի ու-
նիմք ՚ի գիրս Ը. Նագ. Ը. 8. Թէ կեբուսէէ զկնի
մահուան սաւուղայ հօր իւրոյ քառասնամեայ գո-
լով Թագաւորեաց ՚ի վերայ իսրայէլի ամն երկուս։
Այլ այս կարծիք մերժի յամենայն երևելի մեկնո-
ղաց. և յիրաւի. զի առ ՚ի տալ սաւուղայ քառաս-
նամեայ Թագաւորութիւն, զորմէ խնդիր մեծ է, և

սակաւք են հաւանեալ ընդ այն, խանդարի իսպառ ոչ միայն զշարամանութիւն և զիմացուած բնաբանին. այլև զբովանդակ կարգ պատմութեն։ Այսպէս զի աստ. որպէս և ՚ի նախընթաց գլուխն՝ և յամենայն գիրս առաջին Թագաւորութեց, պատմին գործք և պատերազմունք սաւուղայ, ոչ ուրեք բնաւ յիշատակելով զկերուսիթ. զիարդ ապա մնասնէ նա աստ. զի՞նչ յարաբերութիւն նորա ընդ գործս սաւուղայ. կամ առ ի՞նչ պատմել զամն Թագաւորելոյ որդւոյն, յառաջ քան զնշանակել զժամանակ Թագաւորութե հօրն։

Այլք ասեն, թէ ՚ի խնդրելոյ որդւոյ իսրայէլի Թագաւոր մինչև ցայս երկրորդ օծումն սաւուղայ ՚ի գաղգաղա՝ անց իբր տարի մի. և զայն նա իսընթաց գործողութիւնն ըստ եբրայական ոճոյ՝ համարին իբր յղութի. և զԹագաւորել նորա ՚ի գաղգաղա՝ իբր ծնունդ. ուստի և զընաբանն պարզեն այսպէս. * Որդի տարեւոր սաւուղ. այսինքն Թագաւոր միամեայ ‖. զի էր իբր տարի մի, յորմէ հետէ ընտրեցաւ Թագաւոր, մինչև տիրապէս Թագաւորեաց ՚ի գաղգաղա. և երկուս ամն Թագաւորեաց. իբր ասել՝ և յերկրորդ ամի Թագաւորութե իւրոյ, (զբացարձակ Թիւդ երկու՝ առեալ փոխանակ դասականի, որ յաձախ է ՚ի նբ գիրս,) ընտրեաց իւր երիս հազարս և այլն. որպէս պատմի ՚ի յաջորդ համարն։

Այլ զի՞արդ մարդ իցէ հաւատալ, թէ սաւուղ զիտելով յածայինն յայտնութէ հաղորդելոյ նմա ՚ի սամուէլէ՝ զինքն ընտրեալ գոլ յիւր ՚ի փրկել զժողովուրդ իւր ՚ի թշնամեաց որ շուրջ զնոքօք. և ունելով յայնժամ պատրաստական բանակ վեցհարիւր եօթանասուն հազար արանց պատերազմողաց, որով արար անմիջապէս յառաջ քան զօծութէն իւր ՚ի գաղգաղա, զյաղթութէնն զայն մեծ. զոր ՚ի վեր անդր պատմեցաք՝ ընդդէմ ամմոնացւոց, չարաչար խորտակելով զնոսա, մինչ զի ընդ ամն բազումն ոչ զօրեցին գլուխ ամբառնալ. զիարդ ասեմ մարթէ հաւատալ՝ թէ շատանալով նորա ազատել ՚ի

պաշարմանէ զյաբիսա քաղաք, նստեաւ ինչ ընդ
ամն երկուս անդորձ ի գաբաա Հայրեհնի քաղաք
իւր, ունելով մօտ անդր ի լերինն զդունդ փղշատա-
ւոց ապականչաց երկրի իւրոյ. որպէս տեսցուք
առաւել։ Այժմ իբր մարթ իցէ հաւատալ, թէ յետ
զարթուցանելոյ և շարժելոյ զնոսա ի զէն յաղ-
թուելէն ամենացուոյ, կամեցեալ իցէ տալ նոցա
ժամանակս երկուց ամաց առնել պատրաստուելի
և զօրանալ դաշնակցութիւք ընդ այլոց Թագաւորաց
մերձակայից։ Այլ գիրն վկայէ, թէ առ կատաւա-
լութիւն Թագաւորութեանն իսրայէլի ոչ գոյր ի նմին
ժամանակի լաւ քան զսաւուղ. ա. Ընդ. ի. 2. և
սակայն, ասեն, եթէ յայն յաջող և ի նպաստաւոր
պարագայս, յորում էր նա յայնժամ, ամն երկուս
նստեալ իցէ յանհոգս առանց ձեռն ի գործ ար-
կանելոյ վանել զթշնամիս զապականիչս երկրի ի-
րում, ստիպիմք ղհակառակն ասել վասն նորա, թէ
ոչ գոյր իբրև զնա անպիտան առ այն իշխանութիւն.
որ ոչ գիտաց զայն պատեհ դիպողութիւն ի կիր ար-
կանել։

Յակ նախնիք ընդ սիմէաքոսի (զոր յառաջ բերէ
եւսեբիոս ի քրոնիկոնն) որպէս և բազումք յարդի
մեկնչաց յաւելուն ի բնաբանդ զնախդիրդ էջի.
զոր և պարզեն այսպէս. * Որ սաւուղ իբրև որդի
տարեւոր. այսինքն իբրև մանուկ միամեայ՝ բաւի,
պարզաւիտ, խոնարհ ի Թագաւորել իւրում ||. զի
ասեն, ի՝ որք գիրս յաշխարհս են այսպիսի բազդատու-
թիւք առանց ներդործութիւք դնելոյ զէջդ կամ
զդպչոդ. և երկուս ամն Թագաւորեաց՝ նովքին
պարզմտութիւք և անմեղութիւք. վասն զի յետ այնո-
րիկ յանցանել նորա զպատուիրանաւն, անարգե-
ցաւ ի նմանէ. և այնուհետև ոչ ևս էր Թագաւոր
առաջի ՚ՅՀ. նովին իրի մեռցեալ ամք Թագաւորու-
թեն նորա ոչ մտանեն ի հաշիւ։ Այլ այս մեկնու-
թիւն ասէ կալմիթ, մանաւանդ բարոյական է քան
Թէ ըստ գրոյն. և ոչ լուծանէ զդժուարութիւնն.
զի ոչ ցուցանէ Թէ զինարդ ձշմարիտ իցէ ըստ գրոյն՝
լինել սաւուղայ տարեւոր կամ միամեայ ի Թագա-

ւորել իւրում. և երկուս ամն և ԼԹ թագաւորել. քանզի բարոյական կամ այլաբանական իմաստն միշտ ենԹադրէ զգրաւորականն։ Այսպա ասել ԹԷ սակս պարզմտութեանն և խոնարհութեան սաւուղայ այսպէս խօսի. Է ասել ԹԷ այնու եղանակաւ խօսի, որ չիցէ իմանալի. ՚ի պարզ պատմական և ՚ի քնական վիպասանութենէ՝ յանկարծակի ՚ի զրոյցս փոխաբերականս և այլաբանականս անցանելով։

Այսք որք հիմնեալ ՚ի բան գրոյն՝ հաստատեն ԹԷ սաւուղ ամն երկուս ԼԹ թագաւորեաց և ոչ աւելի, ասեն ԹԷ * Որդի տարեւոր ‖ ասելով գրոյն զսաւուղ ՚ի թագաւորել իւրում, ցուցանէ զժամանակն պատրաստութենէ առ թագաւորութենէ, որ կատարեցաւ ՚ի գաղգաղա. և յարելով զկնի՝ և երկուս ամն թագաւորեաց, նշանակէ զչափ ժամանակի թագաւորութենէ նորա։ Այս ՚ի հաստատու ԹԷ այսմ՝ երկոտասաներորդ գլուխ առաջին թագաւորութեանց աւարտի ասէն ՚ի սպառնալիս. * ԵԹԷ խարդախութէ խարդախիցէք, դուք և թագաւոր ձեր սատակիցիք ‖։ Այսպա ՚ի յաջորդ գլուխն սկսանի ցուցանել, ԹԷ այն մարգարէութէ ՚ի սաւուղ կատարեցաւ. յասելն, որդի տարեւոր սաւուղ. այսինքն տարի մի ծախեցաւ ՚ի զանազան գործողութիս, մինչև եհաս սաւուղ ՚ի թագաւորել. և ապա յետ այնչափ քրտանց և աշխատութեց ոչ վարեաց զթագաւորութէնն աւելի, քան զամն երկուս ևԼԹ. յետոյ սկիզբն առնէ պատմել զգործսն, զոր գործեաց յայն երկու ամանն։ Այսք ԹԷ արդարև ամն երկուս ևԼԹ թագաւորեալ իցէ սաւուղ, ցուցանեն՝ ասելով։ Օ՞րք գիրն ըստ հանրական կանոնաց՝ պարտ է ՚ի գիւրիմաց և ՚ի քնական միտս իմանալ, յորժամ չգուցէ ծանր ինչ հարկ կամ երևելի հիմն յայլ միտս իմանալոյ. իսկ ասատ չիք այնպիսի հարկ և ոչ հիմն. ապա չէ պարտ յայլ օտար միտս իմանալ։ Այս զայս Հաստատեն այսու. ՚ի բովանդակ գիրս հին կտակարանաց չիք ուրեք նշանակեալ չափ ժամանակի թագաւորութեան սաւուղայ, բայց միայն ասատ. ուրեմն պարտ է կալ ՚ի

ամին. ապա թէ ոչ՝ հարկ էր ասել, թէ ՚ի գիրն որ նշանակէ զամն այլ ամենայն թագաւորաց Իսրայէլի, զսորայս ևեթ չիցէ ուրեք յայտնեալ. ուր այս առաւել հարկաւոր էր առ ժամանակագրութիւն թագաւորութեանց, գոլով սորա առաջին թագաւոր։ Այլ և զի ամենայն թարգմանութիւնք այսպէս ունին. զոր թէ յայս միտ ոչ առցուք, բռնադատիմք խիստ և օտար մեկնութիւնս տալ, ընդ որ դժուարաւ հաւանին միտք. որպէս տեսաք ՚ի վերոյ։ Իսկ առ բան ՚ի գրոյն Պօղոսի, որ յատենախօսութեան իւրում յանտիոք պիսիդեայ ասէ. * Եւ անտի յառաջ խնդրեցին թագաւոր, և ետ նոցա զսաւուղ որդի կիսեայ, այր յազգէ բենիամինի՝ ամս քառասուն ‖. գործ. ժգ. 21։ Զայն քառասուն ամին ասեն՝ վասն ամք երկոցունն, զորս յիշէ առաքեալն, այսինքն դատաւորութեանն սամուէլի. որ եղեն երեսուն և վեց կամ եօթն, որպէս նշանակեցաք ՚ի վեր անդր։ Զայս բան առաքելոյն այսպէս իմանան արդի մեկնիչք, քաց ՚ի սակաւուց ոմանց և եւսեբիոս միաձայնէ զայս կարծիս ընդ առաջնոյն՝ ասելով. * Զերկեամ միայն կալ յայնպիսի միտս (լաւութիւն սաւուղայ), և ապա եղծանիլ և լինել տարագիր յայ... վասն այնորիկ այլևս ամքն՝ սամուէղի համարեալ լինին. նմին իրի սամուէղի և սաւուղայ եղաք ես ամ ‖։ Զաւելուն յետինք, թէ սամուէլ մարգարէ՝ յետ անցանելոյ սաւուղայ զպատուիրանաւ նոյն, նոյնժամայն ազդ արար նմա իբր պատիժ ժամանակեան զկորուստ թագաւորութեան իւրոյ. որով յայտնի ակնարկէ զմերձակայ բարձումն կենաց և թագաւորութենէ նորա. զիա՞րդ ապա չչմարտեր այս մարգարէութիւն, եթէ յետ այնորիկ թագաւորեալ էր նա ամս քառասուն, և միշտ յաղթօղ յամենայն պատերազմունս իւր, քաց ՚ի վերջնոյ անտի յորում և մեռաւ։ Այլ ասեն՝ հաստատ է, թէ առաքեալն տայ ամս քառասուն երկուց կառավարութեց սամուէլի և սաւուղայ, և ոչ լոկ սաւուղայ։

Այլ և այս կարծիք եթէ զանազանեսցի յա-

առաջնոյն, կրե զժուարութիւն. քանզի Թո՛ղ զայլ պէսպէս ընդդիմութիւնս՝ զորս զժուարին է լուծանել, իբր անհնարին ինն երևի այնչափ պատերազմաց և այլ զանազան գործողութեց՝ զոր ընթեռնում արարեալ սաւուղայ՝ ի միջոցի երկուց ամաց, ելանել ի գլուխ: Սակայն պաշտպանք կարծեացս ջանան ցուցանել թէ ժամանակ երկուց ամաց բաւական եղև սաւուղայ առնել զոր ինչ արար. և կարօղ եղև առնել դիւրութիբ, որպէս ցուցցի ի կարգի պատմութեն նորա: Այլ ասեն՝ նախ որոշել պարտ է զպատերազմական գործողութիս նորա զոր արար իբրև Թագաւոր կարգաւորեալ բանակօք զօրաց, ի մասնաւոր գործոց անտի, զոր արար սակաւաթիւ արամբք յաւէտ իբր կալանաւորապետ ի Թափել զիւրոց առանձնական ախտաւոր կրից զգառնամաղձութի, քան թէ իբրև Թագաւոր. ի գործոց անտի են կոտորուածն քահանայից տեառն. աւերուածն նոմբայ քաղաքին. և հալածուածն դաւթի. մեղք մեծամեծք. բայց իրագործութիբ փոքունք և չնչինք ոչ ինչ յամեցուցիչք գործոյ պատերազմական գնդից:

Երկրորդ՝ գտանեմք ի գործս սաւուղայ պատերազմունս, արշաւանս, յարձակմունս, աւարառուս. բայց ո՛չ գտանեմք պաշարմունս քաղաքաց և ամրոցաց, որք իբր ի բազում երկար ժամանակաց պետս ունին. իսկ առաջինքն առօրեական են, զի ի մի կամ ի սակաւ աւուրս վճարին: Ո՛չ զի պատերազմունք սաւուղայ, բաց ի պատերազմէն որ ընդդեմ ամաղեկացւոց՝ եղեն միշտ ի մերձակայ վայրս անդ առ սահմանօք Թագաւորութե իւրոյ. նմին իբր չեղև նմա հարկ ընդ բազմօրեայ ձանձարպարհ խաղացուցանել զբանակ զօրաց իւրոց. զի երկու կամ երիւք ի՛ջևանօք հասանէր յասպարէզ մարտին:

Երրորդ՝ զի սաւուղ ոչ գտաւ անձամբ յամենայն պատերազմունս որք եղեն առ նովաւ: Եւ Թէպէտ ասէ գիրն վասն նորա, Թէ * տայր պատերազմ շուրջ ընդ ամենայն Թշնամիս իւր, և ընդ

մովաբայ, և ընդ որդիսն ամմնայ, և ընդ որդիսն Եդոմայ, և ընդ բեթովրայ, և ընդ Թագաւորին սուբայ, և ընդ այլազգիսն. այսինքն ընդ փղշտացիս ‖. ա. Նափ. ծբ. 47։ Այլ զայս չէ պարտ լմանալ, որպէս թէ սաւուղ անձամբ մղեաւ իսկ պատերազմունս ընդ սոսա. քանզի մովաբ, և ամմոն, և եդոմ, և Թագաւորն սուբայ էին յայնժամ ուժգին ժեռեալ ծովուն, և յորդանանու, և լերկին լիբանանու. իսկ սաւուղ զկնի Թագաւորելոյն՝ ի գաղգաղա ոչ երբեք էանց զյորդանան, կամ զլիբանան՝ առ որ և ոչ իսկ մերձեցաւ, այլ հանդէպ նոցա ամենեցուն ունէր գունդս զօրաց ընդ առաջ. նորդութիւք քաջ սպարապետաց բաւական առ ի զդեմ ունիլ նոցա, զի մի արշաւեսցեն յերկիր իւր, մինչ ինքն յայլ կողմն կայր պատաղեալ։ Այլ Թուի թէ չարարին նոքա նշանաւոր ինչ. զի ինչ ոչ պատմի ի ծր գիրս վասն նոցա։ Վասն նոյն իսկ պահպանութեի սահմանաց երկրին, և զդեմ առնել արշաւանաց շրջակայ թշնամեաց՝ է իբր մարտ լինի, որ և ընծայի սաւուղայ իբրև Թագաւորի. վասն զի իրագործութիւնք զօրաց սովորութիւք ընծային Թագաւորին որ գործէ նոքօք, Թէպէտ և անձամբ հեռի իցէ։ Ընդհեռնումք ի ա. Ճայց. Ը. 10. Թէ որդիք ռուբինի * յաւուրս սաւուղայ արարին պատերազմ ընդ բնակիչսն (ընդ Հագարացիս). և անկան ի ձեռս նոցա բնակեալքն ի խորանսն՝ մինչև յամենայն (կողմանս) յորևելից գաղաադ ‖։ Ահա այս պատերազմ եղև յաւուրս սաւուղայ, և սակայն յայտ է Թէ ինքն ոչ գտաւ անձամբ ի նմա. ապա նոյնպէս և ոչ ի նախագըրեալսն։ Վասնզի ինամով ընթերցեալ զբոլոր կարգ պատմութիւն սաւուղայ, ի չորս և ևթ պատերազմունս գտանեմք զնա անձամբ յետ Թագաւորելոյն ի գաղգաղա։ Այս՝ ի պատերազմին գաբաայ բենիամինի և մնքմասայ, որում սկիզբն արար յովնաթան իւրով հալած արամբք հարկանելով զպահակս այլազգեաց՝ որ պահէին զամրոցն գաբաայ, որ հր ի բլրին։ Երկրորդ՝ ընդդէմ ամաղեկացւոց

ւոց ։ Արբորդ՝ ՚ի սոկքով հրէաստանի, ուր եհար դաւիթ զգողիաթ ։ Ողրորդ՝ ՚ի լերինն գեղբուայ, ուր և մեռաւ իսկ ։

Ողրորդ՝ նկատելի է և այս, զի սաւուղ յաղաչ քան զհաստատուն թագաւորութիւնէ իւրոյ ՚ի գաղգաղա, յորժամ չև և այ էր երևեալ մանն ժողովրդեան հնազանդեալ նմա, իբրև լուաւ զպաշարումն յաբիսայ յամմնացւոց, կարօղ եղև բանակ կազմել վեցհարիւր եօթանասուն հազար արանց պատերազմողաց, և խորտակել զամմնացիս, և առնել զյաբիս քաղաք ՚ի միջոցի լոկ եօթն աւուրց ։ Օ՞ր ինչ ապա ոչ կարաց առնել յետ հաստատուն թագաւորութիւնէ իւրոյ՝ ունելով ՚ի ձեռին զանկապար հրամանատարութիւն միապետական իշխանութիւնէ ՚ի վերայ համօրէն ժողովրդեան որդւոց իսրայէլի ։

Օ՞այս այսպէս հաստատեալ սոցա, յետոյ առնեն տրամաբաշխութիւն ինն ժամանակի՝ բաշխելով ՚ի վերայ ամսոց և աւուրց զամենայն գործս և զամենայն անցս սաւուղայ, որք պատմին ՚ի գիրս առաջինն թագաւորութեանց. իբր ոչ եթէ կամելով առնել, թէ այս ինչ գործողութիւն յայս ինչ ամիս, կամ աւուր գործեցաւ, այլ միայն ցուցանել, թէ ՚ի միջոցի երկուց ամաց, կամ քան և չորս ամսոց մարթի էր այնր ամենայնի առանց ինչ գժուարութիւնէ ՚ի գլուխ ելանել ։ Արդ՝ ըստ այսմ զսկիզբն թագաւորութիւնէ ՚ի գաղգաղա՝ գնեն ՚ի սկիզբն յունիսի, ունելով այսմ հինն զբան սամուէլի մարգարէին՝ որ զկնի թագաւորեցուցանելոյ զսաւուղ ՚ի գաղգաղա, ՚ի խօսել իւրում առ ժողովուրդն, կամեցեալ տալ նշան ՚ի վկայութիւն ճշմարտութիւնէ բանից իւրոց, ասաց. * Արդ ապաքէն հունձք ցորենոյ են այսօր ‖. ա. Թագ. ժբ. 17. իսկ հունձք ցորենոյ սկսանէին ՚ի պենտեկոստէի կամ յամենեան որ համեմատի յունիսի հռովմայեցւոց. վասն որոյ և սոքա անտի սկիզբն արարեալ բաշխել զգործան սաւուղայ, ՚ի վերջն մայիսի կամ ՚ի սկիզբն յունիսի ամին երկրորդի թագաւորութեան նորա՝ գնեն զպատե-

բազմ գեղեցկայ, որ և եղև վերջին, զի ՚ի նմին պատերազմի մեռաւ, թագաւորեալ ամս երկուս։ Այլ զայս այսպէս դնել հարկաւոր է ասել. որպէս զի չորեքհարիւր ութսուն ամք նշանակեալք յայտնապէս ՚ի Ե. Ընդ. Ա. յԵլանելոյ որդւոյ Իսրայէլի յԵգիպտոսէ մինչև ցհիմնարկութիւն տաճարին ՚ի սոզոմոնէ յամի չորրորդի թագաւորութեանն նորա՝ անվրէպ լուսցի։ Այլ թէ ոչ, եթէ դիցի թագաւորեալ սաւուղայ՝ ուրոյն ՚ի հաշուէ ամաց սամուէլի՝ ամն քառասուն, կամ քսան, կամ ութսուն, և կամ վեշտասան որպէս դնեն ոմանք, դժուարին լինի պահել զնախագրեալ հաշիւ Ա՛ր գրոյն. Թէ՛ղ զի եօթանասունք՝ քառասնիւ չափ պակաս ընթեռնուն, այսինքն չորեքհարիւր քառասուն. առ որոյ համաձայնութիւն, հարկ է յանորոշ ամաց անտի դատաւորաց՝ և ևս նուազեցուցանել. Թէպէտ ըստ ասելոյ ոմանց՝ են օրինակք ինչ եօթանասից որք ըստ եբրայականին և ըստ վուլկատային լատինացւոց ընթեռնուն։ Այլ զայսմանէ լիապոյն ուսնիմք խօսել ստորև։ Այժմ մատիցուք անդրէն ՚ի կարգ պատմութեանն սաւուղայ։

ԳԼՈՒԽ ՀԱ

Ասանու յոշիաւնան գամրոյն գաբաաց ՚ի ՅԵՒսաց այլազգեաց։ Այլանեն այլազգիք ընդդէմ իսրայէլի անհամար բազմութիւք։ Ասաուաղ երկուցեալ մատուցանէ զհս, ոչ ծալրձիս քան ձամադրութիւնն գալոյ սամուէլի, որով և մեղաւ ՚ին։ Ապիչն և այնպէս օգնէ նմա ՚ին խորտակել զայլազգիս, որոմ սկիզբն արար յոշիաւնան որդի Նորա։

Երբև կատարեցաւ հանդէս օծութեանն սաւուղայ ՚ի գաղգաղա, որով և տիրապէս թագաւորեաց ՚ի վերայ իսրայէլի, առ ժամայն ընտրեաց սաւուղ ՚ի բազմութենէ անտի արանցն իսրայէլի զուսմարելոց անդր ՚ի գաղգաղա՝ արս երիս հազարս իւր թիկնապահս, զի իցեն միշտ առ նովաւ. յորոց զհազար մի ետ ՚ի ձեռս յոշիաւնանու որդւոյ իւրոյ. և առաքեաց զնա ՚ի քաղաք իւր ՚ի գաբաաս բենիամինի. իսկ ինքն երկու հազարօք անց ՚ի լեառն բեթելայ և ՚ի մաքմաս իբրև երիւք աշխարհս գրական մղոնօք և եթ հեռի ՚ի գաբաայ. և զինաց ցորդ ժողովրդեանն արձակեաց երթալ կիւրաքան չիւր բնակութենս։ Այդ՝ երթեալ յոշիաւնանու իւրով հազարօք ՚ի գաբաա, առաջին խորհուրդ նորա եղև թափել զամրոցն՝ որ ՚ի վերայ բլրին մծտ ՚ի քաղաքն՝ ՚ի ձեռաց փղշտացւոց այլազգեաց. զի խոչընդոտն էր այն յոյժ ոչ միայն գաբաացւոց, այլև շրջակայ վիճակի նորա, միանգամայն՝ և ոչ փոքր նախատինք թագաւորական քաղաքին՝ ունել առ ընթեր զմահուշտի թշնամին իսրայէլի։ Այս թէպէտ ցայն վայր չունէր յոշիաւնան զայլ փորձ կամ կրթութենի պատերազմի, բայց զայն զոր արաբեալ էր ՚ի մարտին յաբիսայ գաղաադու ընդդէմ ամմնացւոց, սակայն երևեցոյց վաղվաղակի զիւրն բնաձիր յաջողութենէ ՚ի զինուորութենէ. զարիութենէ, ասեմ, զհանճար և զզինուորական ձարտարութենէ

՚ի գիւտ հնարից ։ Ընդ այսց ձրից դերապոյն սպա-
րապետի՝ էր միանգամայն բարեբարոյ, ազատասիտ,
և խոհական յընտրութեի լաւաց. և որ պանծապոյն
է՝ ձիմարիտ ՚ծածապաշտ, և սիրօղ աղգին և հայրե-
նեաց ։ Ընդ՝ ապաւինեալ նորա յօգնականութիւն
՚ոն, մերձեցաւ գաղտաբար անձայն և անշշունչ ՚ի
մի կողմն ամրոցին՝ որ էր անպատսպար, յորժամ
պահապանքն քնաւ ակն ոչ ունէին, և յեղակար-
ծումն վիսեալ ՚ի ներքս իւրով հազարօք եհար և
կոտորեաց զղօրս ամենայն որ կային անդ ՚ի պահ-
պանութի և զղօրապետս նոցա միանգամայն, և
տիրեաց ամրոցին ։ Ընդ եօթանասունք, յորմէ և
մերս՝ ընթերցուն այսպէս. * Եհար յոշնաթան
զնասիբ այլազգի ‖. ա. Կռ. ժգ. 3 ։ Որ զբաւոգ նասէբ
ոմանք թարգմանեն իշխան, ոմանք զօրապետս.
իսկ վուլկատայն լատինացւոց կայան. քայց իմաստն
ամենեցուն ՚ի նոյն յանկի միտս, զոր եդաք ։

Ուր գործոյս քաջութի եհաս վազվաղակի առ
այլազգիս. իսկ սաւուղ որ նստէր ՚ի մնքմաս մօտ
՚ի գաբաա, նոյնհետայն արձակեաց սուրհանդակս
յայնկոյս յորդանանու, և ընդ ամենայն երկիրն իս-
րայելի, ՚ի ձայն փողոյ հրատարակել ամենայն ժո-
ղովրդեան եթէ էառ սաւուղ զամրոցն գաբաայ, և
յամօթ արար իսրայէլ զայլազգիսն. միանգամայն
և պատուիրեաց ժողովրդեանն փութանակի ժողո-
վիլ և գալ հասանել ՚ի գաղգաղա. գիտելով հա-
ւաստեաւ, թէ այլազգիք ոչ տանին զայն հարուած
լռութի ։ ՚Ի նմին ժամու առաքեաց և յարիմաթիմ
առ սամուէլ գալ ՚ի գաղգաղա, զի մատուսցէ ողջա-
կիզս ՚ոն ՚ով, խնդրելով զամենազօր օգնութի նո-
րա յայնմ առաջիկայ պատերազմի ։ Ու ինքն ՚ի մնք-
մասայ անցեալ ՚ի գաղգաղա՝ նստէր անդ իւրով
երկու հազարօք, ՚ինալով սամուէլի, և հաւաքելոյ
զօրաց իսրայէլի. իսկ յոնաթան իւրով հազարօք
՚ինաց ՚ի գաբաա ՚ի պահպանութի ամրոցին ։

Այս բարեյաջող և երջանիկ սկզբնաւորութի
փութով փոխեցաւ ՚ի վտանգ մեծ թագաւորին և
ժողովրդեան երկրին. քանզի այլազգիք մեծաւ ձե-

պով գումարեալ՝ կազմեցին բանակ ահաւոր երե-
սուն հազար արանց պատերազմողաց ՚ի կառաց, և
վեց հազար հեծելոց. իսկ Թիւ հետևակաց՝ անհա-
մար, կամ ըստ ոմանց կամեցեալ ասել՝ իբրև զաւազ
առ եզերբ ծովու բազմութիւն. որք ելեալ բանա-
կեցան ՚ի մաքմաս յանդիման բեթաւրոնէից ընդ հա-
րաւ մօտ ՚ի գաբաա և ՚ի գաղգազա։ Այնժամ ունէր
սաւուղ անդ առ իւր զբանակ զօրուն իսրայէլի ող-
ջոյն, չունէր այնչափ զանգիտել յերեսաց այլազ-
գեաց բայց գոլով նոցա յայնկոյս յորդանանու իբր
ինսունն մղոնաւ հեռի, և կասկածելով Թէ միևչեւ
իցէ նոցա ժամանեալ, յարձակեսցին այլազգիքն ՚ի
մարտ, զարհուրեցաւ յանձն իւր, ընդ նմին և քնա-
կիչք երկրին ահիւ մեծաւ ըմբռնեալ՝ Թողին զբնա-
կութիւն իւրեանց, և Թաքեան յայրս, և ՚ի գոմս,
և ՚ի քարանձաւս, և ՚ի խորխորատս, և յանջուր
ջրհորս. շատք ևս գաղթեալ յայնկոյս յորդանանու՝
անցին յերկիրն գադայ և գաղաադու. և որ չարու-
դոյն է, բազումք ՚ի զօրաց անտի սաւուղայ վտարան-
ջեալ ՚ի նմանէ, անցանէին և խառնէին ՚ի գունդս
այլազգեաց։

Այլ սաւուղ երկիւղ սաւուղայ ՚ի յամելոյ գալս-
տեան սամուէլի. էր արդէն օր եօթներորդ, զի
ինայր նմա, և նա ոչ երևէր. որչափ յապաղէր գա-
լուստ սամուէլի, այնչափ զօրանայր վտանգն սա-
ւուղայ, զի ժամ ՚ի ժամ Թօթափէր ՚ինմանէ ժո-
ղովուրդն։ Այսն որոյ առ նեղլսուԹենն ոչ կա-
րելով փոքր մի ևս երկայնամտել, անց զպատուի-
րանաւ տէն՝ յորժամ սակաւ ժամք մնացեալ էին առ
կատարեալ լրումն նորա. յանդգնեցաւ և մնտոյց
զողջակէզս և խաղաղականս որ չար Թուեցաւ յայս
տէն։ Խազումք ասեն, Թէ սաւուղ ոչ ինքնին մա-
տոյց, այլ ՚ի ձեռն քահանայից. սակայն նա զիրն
երևի ակնարկել զհակառակն. յասել սաւուղայ.
* Ատուցէք, զի արարից ողջակէզս և խաղաղա-
կանս ‖. և ապա անմիջապէս յարէ զկնի. * Այլ եհան
զողջակէզսն ‖. ա. Խագ. ՃՁ. 9։ Այլ Թէ ինքնին,
և Թէ ՚ի ձեռն այլոց իցէ մատուցեալ, հանց սաւուղ

զպատուիրանաւ ՚ին, զոր ՚ի սկզբան անդ զկնի ա-
ռաջնոյ օծութե՛ն նորա պատուիրեաց Նմա սամուէլ
՚ի դիմաց ՚ոյ, թէ ՚ի կամել նորա մատուցանել ող-
ջակէզս և զոհս խաղաղականս ՚ի գաղգաղա, ուր
էր յայնժամ տապանակ ՚ին, երթիցէ անդ յառաջ
քան զսամուէլ. և աւուրս եօթն ամբողջ դադա-
րեսցի անդ, մինչև եկեալ ինքն սամուէլ իւրով ձե-
ռամբ մատուսցէ. ա. Խագ. Ժ. 8։ Այս այն սղէտ
հանդիպեցաւ աւաղելի Թագաւորին, որ բազմաց
հանդիպի, կորուսանել զարդիւնս առաջնոց վաս-
տակոյ՝ յաղագս դոյզն ինչ անհամբերութե՛ն, կամ
վասն փոքր մի և ևս չտևելոյ ՚ի սկսեալն գործ։ Այլ
դէթ ժամ մի և ևս էր երկայնամտեալ սաւուղայ,
ասպաքէն երջանիկ լինէր. զի հաղիւ թէ կատա-
րեաց մատուցանել զողջակէզն, ահա ազդ եղև
նմա, թէ եհաս սամուէլ։ Յայնժամ ծանեաւ սա-
ւուղ զվրիպակն իւր մեծ. վասն այնորիկ էլ վաղ-
վաղակի ընդ առաջ նորա ողջունել զնա և մեծա-
րել, Թերևս զի քաղցրացուսցէ զնաստուի կշտամբա-
նաց, զոր ակն ունէր լսել ՚ի նմանէ։ Այլ սամուէլ
որ ՚ի գործս ՚ին անաչառ էր, և ոչ դիտէր առ-
նուլ ակն երեսաց, իբրև մերձեցաւ առ նա Թագա-
ւորն, ասէ ցնա. զի՞նչ գործեցեր դու. (կամ ըստ
այլ Թարգմ. անմտութի՛ գործեցեր)։ Ակսաւ սա-
ւուղ արդարացուցանել զանձն՝ պատճառելով զվե-
րսհաս վտանգն, և զյապաղումն նորին սամուէլի։
Ասէ ցնա սամուէլ. ՚ի զուր էն պատճառանքդ.
պարտ էր քեզ զամենայն վտանգ յանձն առնուլ,
քան անհնազանդել պատուիրանի ՚ին. Հապա այժմ
հաստատեր ՚ուժ զԹագաւորութի՛ քո ՚ի վերայ իս-
րայէլի մինչև ցյաւիտեան. այլ զի ոչ պահեցեր
զպատուիրանն իմ, զոր պատուիրեաց ՚որ, մի կաց-
ցե Թագաւորութի՛ քո։ Եւ յարուցեալ սամուէլ ՚ի
գաղգաղայէ՝ գնաց ՚ի գաբաա։ Ընդ փութանալն
հասանել և սաւուղ իւրովքն հանդերձ միանալ ընդ
ոտդեայ իւրում յոմխաթանու ՚ի պաշտպանութի՛ քա-
ղաքին յերեսաց այլազգեացն, զոր ՚ի հիւսիսոյ ար-
դէն մերձեցեալ էին ՚ի քաղաք անդր. այլ զնանա-

պարհայն եւ ընդառաջ նորա խումբ մի առապատա-
կաց այլազգեաց , զի սկսեալ էին նոքա սփռիլ և ՚ի
հարաւակողմն , ընդ որ երթայր սաւուղ՝ կալեալ
զձանապարհ լեռնային , և հարին զոմանս ՚ի վեր-
ջապահ զօրաց անտի նորա . սակայն և այնպէս
քաջութիւն անցեալ ՚ի միջոյ նոցա , եհաս ՚ի քաղաք
իւր ՚ի գաբաա բենիամինի . ուր հանդէս արարեալ
ինացելոցն՝ գտան արք վեցհարիւր և եւթ :

Այլ ոք ՚ի զօրաց անտի բաց ՚ի սաւուղայ և ՚ի
յոնաթանէ ունէր ՚ի ձեռին սուսեր և գեղարդն .
քանզի այլազգի փղշտացիք ՚ի զանազան շահատա-
կութիւն զբաղ առեալ արիական քաջութիւնք եբրայեց-
ւոց , որպէս թուի ՚ի ժամանակս սամփսոնի և հե-
ղինէոյ ընդ ծառայութիւն իւրեանց ունելով նուա-
ձեալ զնոսա՝ բարձին յամենայն երկրէ իսրայէլի
զդարբին երկաթագործ . ընդ նմին եղին սաստիկ
պատուէր իւրեանց վաճառականաց՝ մի՛ քնաւ վա-
ճառել եբրայեցւոց երկաթ անգործ , որ գայր ՚ի
ձեռս նոցա ՚ի միջերկրական ծովէ , առ որով ձգէր
երկիր փղշտացւոց . զի մի՛ կարիցեն առնել իւր-
եանց գեղարդունս և սուսերս և այլ զէնս , և զօ-
րանալ ընդդէմ նոցա : Այս ևս զի այս արգելումն
կարի շահաբեր էր այլազգեաց . քանզի զամենայն
կարևոր երկաթի գործիս ՚ի միակութիւն երկրի , և
՚ի գործս դաշտայինս ՚ի նոցանէ բռնադատէին
եբրայեցիք գնոյ առնուլ . և ոչ այս միայն , այլև
նորոգել զեղծեալն , թէքել զերանդիս , սրել նե-
րաքանչիւր զիւր մանգաղ , կամ զփոյտատ և զբր-
բիչ՝ հարկ էր առ նոսա դիմել : Այս թէպէտ առ
դատաւորութիւն սամուէլի ազատեցան ՚ի ծառայու-
թէ այլազգեաց , հարուածս չարաչարս ածելով
զնոքօք , մինչ զի ընդ ամն բազումն ոչ զօրեցին
պլուխս ամբառնալ . և այնուհետև յամենայն ժա-
մանակս սամուէլի խաղաղութիւն էին ընդ եբրայե-
ցիս , սակայն զայն առաջին զդուշութիւնն ոչ ՚ի բաց
թողին : Վասնզի ՚ի դարձուցանել զքաղաքս և
զամրոցս , զոր առեալ էին յորդւոց իսրայէլի ,
եղին պահապանս յայլ և յայլ ամուր տեղիս առ սահ-

մանօք երկրին իսրայէլի, (յորոց մի էր և ամրոցն գաբաայ, զոր առ՛ի ձեռաց նոցա յոշնաթան,) ՚ի պահպանութիւն և ՚ի զգուշութիւն առ ՚ի խափանել զմուտ դարբնութեանն առ եբրայեցիս։ Այսպէս ընդ այն ժամանակս զինք եբրայեցւոց էին բիր, աղեղն, նետ, պարսատիկ, բռնաքար. այլև գործիք երկրագործութեան, խոփ, խնդան եզանց, երեքժանի և այլն։

Յոսիփի սակաւաթիւ և անզէն արամբք նստէր սաւուղ ՚ի կողմն մի գաբաայ ՚ի գլուխ բլրին ընդ նռնենեաւն. ուր քնապիր եբրայեցւոց ընթերնու ընդ ռեմմոնաւ. որ նոյն է, զի ռեմմոն նշանակէ նռուն։ Գուցէ թէ այս տեղի է ուր վեց հարիւր արք որդւոց բենիամինի ապաւինեցան զերծեալք ՚ի սրոյ եղբարց իւրեանց որդւոց իսրայէլի. տպ. է. 47. զի մօտ էր և այն ՚ի գաբաա. և կոչէր վէմ ռեմմոնայ, այսինքն բլուր կամ ժայռ նռան. և էր քարանձաւ ընդարձակ բաւական վեցհարիւր մարդկան, և ինքնին անմատոյց։ Ընդ էր ընդ սաւուղայ աքիա, որ և աքիմէլէք քահանայ, որ կրէր զեփուտն, որդի աքիտովբայ, Թոռն փենեհեսի որդւոյ հեղեայ. (մերս ընթերնու ղևեայ. որ Թուի վրիպակ գրչաց։) և տապանակն ՚ի, զոր էտ սաւուղ բերել ՚ի բանակ անդր։ Իսկ այլազգիք վստահացեալք ՚ի զինս և ՚ի բազմութեն իւրեանց՝ ելին պատրաստեցան ՚ի մարտ. բաժանեցին զամենայն բազմութեն իւրեանց յերիս առաջս։ Առաջ մի բանակեցաւ յարևելեան կողմն, որ հայէր ընդ Ճանապարհ ութերայ կամ եփրայ։ Առաջ մի ընդ արևմուտս ընդ Ճանապարհ՝ որ հանէր ՚ի բեթորոն։ Եւ առաջ մի ՚ի հարաւակողմն ընդ Ճանապարհ, որ երթայր ՚ի ձորն անապատին, ուր էր երբեմն սաբայեին կամ սեբոյիմ քաղաք հրակիզեալ ընդ սոդոմայ երկնատեղւոց հրով. վասն որոյ և ՚ի ժամանակիս ոչ ևս գոյր. բայց ձորն ձգեալ առ մեռեալ ծովուն ՚ի նորա անուն կոչէր։ Այս երեք առաջք առպատակ տային յերկիրն իսրայէլի յայլևայլ կողմանս, և ոչ սակաւ ասպականութիւն գործէին. իսկ

մեծ բանակ նոցա եմուտ ՚ի մաքմաս, և անտի տա-
բածեր անդիմադարձ գրաւեալով զանապան տեղիս
շուրջ զգաբաաւ։

Յոմեանեան որդի սաւուղայ պատանի քաջասիրտ
բարի և նախանձայոյզ փառացն ՚ի, ոչ հանդուր-
ժելով տեսանել զայնչափ յոխորտ և աներկիւղ
յառաջադիմութեն Թշնամւոյն, և զտարտամութեն
արքայի հօր իւրոյ առ դիմադրաւ լինել նոցա,
խորհեցաւ ինքնին փորձ մի մեծ փորձել. որ ա-
պաքէն անընտրօղ յանդգնութեե մասին էր գրելի,
քան թե արիութեւան, եթե սքանչելի կատարած
գործոյն էր ցուցեալ հաւաստեաւ գլինել նորա
յՈծային առանձին ազդեցութենե շարժեալ ՚ի
նոյն։ Վասնզի ՈծասէՀ պատանին լի հաւատով ա-
պաւինեալ յամենազօր օգնութեն ՈՀն ՚ի իսրայէլի,
եւ գաղտաբար առանց ումեք ինչ յայտնելոյ և ոչ
իսկ արքայի հօր իւրոյ, և գնաց ընդ միով և եթե
իւրումն հաւատարիմ կապարձակրի վանել զպահա-
պանսն այլազգեաց ՚ի մերձակայ լեառնէ անտի։ Այս
նովին հաւատով յուսացեալ՝ թե յայտնեացէ նմա
ՈՀծ զկամն իւր յայն ձեռնարկ նշանաւ իւրք, յայտ-
նեաց կապարձակրին զնորհուրդ իւր՝ ասելով. Ե՛կ
անցցուք ՚ի տեղի անթլփատիցն այնոցիկ. գի ՚ի
միապէս դիւրին է յաղթել բազմաք, որպէս սակա-
ւուք. և համակամ գտեալ զնա, ասէ. այս եղիցի
մեզ նշան գիտել զկամն ՈՀն. ՚ի տեսանել զմեզ
պահապանացն, եթե ասիցեն ցմեզ, ՚ի բաց կացէք
այտի, մինչև պատմեսցուք ինչ ձեզ, (կամ ըստ
այլ Թարգմ. կացջի՛ք մինչև եկցուք առ ձեզ.)
դարձցուք յետս, գի այն եղիցի նշան թե չէ հաճ-
եալ ՈՀծ ընդ այս գործ մեր։ Այլ եթե ասիցեն,
ելի՛ք առ մեզ. երթիցո՛ւք, գի ՈՀծ ընդ մեզ է։

Այլազգիք կալեալ ունէին զգլուխս երկուց լե-
րանց, կամ լեռնացեալ քարաժայռից, որք ՚ի գա-
բաայ իբր անմատոյցք Թուէին. գի չերևէր ՚ի նո-
սա ոչ ձանապարհ և ոչ բնաւ շաւիղ կամ հետք
վերելից, այլ միայն խորտաբորտ պատառուածք
քարանց, և սեպք և ժայռք առատ անդ ցցուեալք.

մին ՚ի նոցանէ կոչէր բազէս ՚ի հիւսիսակողմն հան՚ դէպ մաքմասայ. իսկ միւսն սկնարա, կամ սեռնէ ՚ի հարաւակողմն յանդիման գաբաայ: Եւ՚ ընդ մին ՚ի լերանց անտի եւ յոմիսաթան և կապարձակիր նորա ընդ նմա բազում տարժանմամբ՝ մինչև ցասհմանաւոր վայր մի լերին. ուր իբրև տեսին զնոսա պահապանք այլազգեաց, ասեն ցմիմեանս հենգնելով, ահա եբրայեցիքն ելանեն ՚ի ծակուց իւրեանց, ուր էին թաքուցեալ, զի զլցոյս տեսցեն. և սպառնալով ձայնեն առ նոսա, եկայք ելէք առ մեզ, և ծանուցջուք ձեզ բանս, և գտջիք զոր խնդրէջդ: Յայնժամ ասացյ յոմիսաթան ցկապարձակիրն, Եկ զկնի իմ, զի մատնեացյ զնոսա ՚ի ձեռս իսրայէլի. և ինքն մագլցելով ոտիւք և ձեռօք ընդ ցցուեալ սեպս լերին, եւ՚ ի գլուխս անդր նորա ՚ի տափարակ դաշտի, և կապարձակիրն զկնի նորա. և սկսաւ հարկանել զնոսա նետիւք և բրունաքարամբք, զոր ստէպ տայր նմա կապարձակիրն. և սատակեաց ՚ի նոցանէ իբր քսան այր ՚ի նմին տեղւոջ. իսկ այլք ահիւ մեծաւ ըմբռնեալք՝ ՚ի փախուստ դիմեցին: Եւ՚ յս առաջին հարուած՝ զոր արարին երկու պատանիք, ելից արհաւրօք զբանակն այլազգեաց՝ որ էր ՚ի դաշտի, և դղրդեցոյց զամենայն երկիրն, զի եղև ահ ՚ի նոսա ՚ի վերայ նոցա. ոչ կարէին հաստու լինել թէ զինչ իրք իցեն. համարէին զամենայն իսրայէլ հասեալ ՚ի վերայ նոցա. յորմէ շփոթեալ և խառնակեալ՝ այսր անդր խուճապէին տագնապեալ. և կարծելով ընդ թըշնամիս մարտնչել՝ զմիմեանս կոտորէին, և դիակ կամքք իւրեանց զտեղին ընուին: Իսկ ապականիչք՝ որք սփռեալ կային յաստպատակութիէ, լուեալ զհաւոր գոչիւն աղաղակի բանակին, զարհուրեալ՝ դառնային ՚ի փախուստ, ոչ կամելով գալ և աշխատիլ յօգնութիէ. և այլք ՚ի բանակէն զկնի նոցա պնդէին: Եւ՚ յսպէս բովանդակ բանակն և երկիրն էր ՚ի մեծի խռովութիէ:

Վասն սաւուղայ ՚ի գաբաայ բենիամինի հայեցեալ յայն կողմն, ուստի գայր ձայն աղաղակի, և

տեսեալ զբանակն այլազգեաց խառնեալ, և զինա-
կունս աստ անդ անկեալ՝ ի գետնի, և զյայսկոյս
յայնկոյս խառնաթափումն զօրաց, աղդ սրաբին սա-
տուղայ, որ նատեր ընդ նոնենեաս վարանեալ՝ ի
խորհուրդս իւր, և նա նոյն ժամայն՝ ի կարծիս
անկաս, թէ գուցէ ոմանք յիւրոց արանց երթեալ
իցեն՝ ի վերայ այլազգեաց։ Հրամայեաց հանդէս
առնել ժողովրդեանն, իբրև գիտաց թէ որդին
իւր յոշխաթան և նորին կապարձակիր չէն անդ՝ ի
միջի, երկեաւ խառնեցաւ վասն որդւոյն. սասց
վաղվաղակի ցաքիա քահանայ՝ զգենուլ զեփուտ
առաջի տատանակի նոն, և հարցանել զնա, եթէ
ելցէ և ինքն զհետ որդւոյն՝ ի մղել զմարտն։ Ա-
յլ այն ինչ նա տայր պատուէր, և քահանայն արկա-
նէր զանձամբ զեփուտն, աղաղակ բանակին եր-
թալով երթայր և յաձախէր. սաւուղ յայնմանէ
կարևոր դատելով ոչ ևս յապաղել զգնալ իւր,
շատ է՝ ասաց ցաքիա, ամիոփեա զձեռն քո։ Ել
ինքն առեալ զիւր վեցհարիւր արսն, եկն մինչև
ցտեղի պատերազմին կատարել զյաղթութիւնն, զոր
նա ի ձեռս նորա։ Ի ինչ աղմուկն զօրանայր՝ ի
բանակին այլազգեաց, և կոտորածն յաձախէր՝ ի
նոսա՝ այր զընկեր իւր կոտորելով, եբրայեցիք որք
առ ահի կային թաքուցեալ՝ ի լերինս, տեսեալ
զփախուստ այլազգեաց. համարձակեցան ելին միա-
ցան ընդ սաւուղայ. և վտարանջեալքն յառաջա-
գոյն՝ ի նմանէ, որք էին՝ ի բանակի անդ այլազ-
գեաց, կոտորելով զառընթերակայս իւրեանց՝
դարձան և մտին անդրէն ընդ դրօշիւ սաւուղայ և
յոշխաթանու։ Ել այնպէս սաւուղ որ՝ ի սկիզբն
մարտին հազիւ վեցհարիւր զօրականս ունէր ընդ
իւրև. գտաւ յայնժամ՝ ի գլուխ իւր տասն հազա-
րաց։ Ա յս գործ սկսաւ՝ ի ծագել առաւօտու. որ-
պէս ասէ գիրն. * Ել եղև օր. և յոշխաթան ասէ
ցկապարձակիրն ‖. և այլն. և՝ ի սակաւ ժամս կա-
լաւ սաւուղ զբովանդակ զայն մեծն բանակի այլ-
ազգեաց, որ ձգեալ տարածանէր յարևելեան
կողմն գաբաայ մինչև ցբեթաւան. և զօրք նորա,

ոչք փոքր ու յառաջ չտունէին ի ձեռին ոչ սուսեր և ոչ գեղարդն՝ բայ ի սաւուղայ և ի յոնաթանէ բստ ասացելոցս, ամենեքեան զինեցան սուսերօք և նիզակօք թշնամեացն ի միմեանց կոտորելոց։ Եւ այնպէս քաջ սպառազինեալ՝ յարձակեցան առիւծաբար բստ անհրաժեշտ հրամանին սաւուղայ ի մեծ բանակն այլազգեաց ի մաքմաս՝ որ գեռ ևս կայր սնդակազմ. այլ ոչ կարելով նոցա զդէմ ունել յանդուգն արշաւանաց եբրայեցւոց, թողեալ ի տեղւոջ անդը զվրանս և զամենայն կահս և ըզկարասիս իւրեանց, ի փախուստ դիմեցին. և եբրայեցիք զհետ այնքեալ փախստէից կոտորէին զնոսա յանխնայ մինչև ցայեալոն քաղաք. որ էր ի մասին ցեղին դանայ առ սահմանօք յուդայի և բենիամինի, իբրև երեսուն մղոնաւ հեռի ի մաքմասայ. յորմէ մարթ է ի միտ առնուլ, թէ արբայի անկան յայլազգեաց ընդ այն ամենայն երեսուն մղոն ձանապարհ անընդհատ հարուածեալք եբրայեցւոց. իսկ ապրեալքն փախուցեալ զերծան յերկիրն իւրեանց, որ չէր լինչ հեռի։

ԳԼ. ԺՈ.

Սաւուղ հանէ հրաման չուտել ինչ զօրուն մինչև ցերեկոյ։ Յոնաթանայ անգիտաբար անոյեալ զհրամանատն՝ անկանի ի վանգ մահու. այլ ծողովուրդն ապրեցուցանէ զնա։

Յայնմ վայրի զտեղի առին զօրքն իսրայէլի, ոչ ևս զօրելով յայնմ աւուր յառաջ վարել զպատերազմ. քանզի վաստակեալ էին յոյժ և պարտասեալ յաշխատուէ ընթացից զհետ թշնամեացն՝ և ի ձգանց պատերազմի, միանգամայն և յանսուաղութէ նքոցէալ, և գրեթէ խափատ թափեալ ի զօրութէ։ Վասնզի կամեցեալ սաւուղայ յայնմ աւ-

ատր կատարել ՚ի գլուխ զյաղթութիւնն. և զի մի ՚ի պատճառս կերակրելոյ զօրուն՝ յապաղուսցի ինչ լինիցի, և կորուսանիցէ զղխպղութիւն ժամանակին սպառնպուռ խորտակելոյ զթշնամին, հրամայեաց ընդ նզովիւք չուտել ինչ բնաւ մինչև ցերեկոյ։ * Ընդհակառակ լիցի ասէ մարդն՝ որ կերիցէ հաց մինչև ցերեկոյ, մինչև խնդրեցից վրէժ ՚ի թշնամեաց իմոց ։ Յառաջ քան զայս բան ասէ՝ զի գիրն. (ըստ Թարգմ. Եօթանասն.) * Եւ սաւուղ անդէ տացաւ անդիտութիւն։ կամ ըստ այլ օրինակի, անկաւ յանդիտութիւն մեծ յաւուրս յայնմիկ. իբր ասել՝ անընտրողութիւք, կամ անխորհուրդ մտօք եւ սաւուղ զայն խիստ պատուէր յայնմ աւուր՝ և այնպիսի ժողովրդեան՝ յաղագս մի կամ երկուս ժամս շահելոյ ։ Վասնզի առ գործ պատերազմի սակաւ, մանաւանդ թէ ոչինչ իսկ օգնէ առաւելութիւն քանի մի ժամուց, յորժամ չգուցէ զօրութիւն ՚ի մարտիկս ։ Այլ և կորուստ ժամանակին, որ ծախի ՚ի դարմանն երիվարի. քանզի արագընթացութիւք ընդ զգակասութիւն յապաղմանն տուեալոյ նմա առ ՚ի բուռ ։ Այսմ ոչինչ միտ եդեալ սաւուղայ, միանգամայն գուցէ և անձին առաւել կամելով ընծայել զյաղթութիւնն՝ զոր ետ ՚ած ՚ի ձեռն յոշնաթանու, ինքնահրամանն գործ գործեաց անխմաստ, զի առանց բնաւ տալոյ դուլ զօրուն՝ հրամայեաց ստիպով յառաջ խաղալ ։

Եւ եղև անցանել նոցա ընդ անտառ մի, ուր անբաւ յաձախութիւք պարք մեղուաց էին գործեալ ՚ի փորոքս ծառոց որպէս ՚ի փեթակի խորիսխ մեղու, որ յառաւելութէ առատութէ հոսէր ՚ի վայր ։ Տեսանէին զայն զօրքն սովեալք, և անցանէին քրթմնջելով, բայց ոչ ոք իշխէր կարկառել ըզձեռն և դնել ՚ի բերան, երկուցեալ յերդմանէն ՚ած ։ Իսկ յոշնաթան՝ որ ոչ գիտէր, թէ երդմնեցոյց հայր նորա զժողովուրդն, զի յորժամ եդ զայն պատուէր հայր նորա, ինքն էր ՚ի բորբոք մարտի կռտորելոյ զայլազգիս, ձգեաց զգաւազան իւր ՚ի խորիսխ մեղու, և առեալ որչափ ինչ մածաւ անտի

՚ի ծագ գաւազանին՝ եդ ՚ի բերան. որով և փոքր
մի ոգի առեալ ՚ի յետին վհատութենէ՝ բացան աչք
նորա։ Եւ յաղդ առնել նմա ուրուքն ՚ի զօրուէ
անտի զսաստիկ պատուէրն հօր նորա, նա Թէպէտ
ոչ ևս կրկնեաց առնուլ ինչ ՚ի բերան, բայց առ
կարեաց քաղցու անզգոյշ գտաւ ՚ի բանս, զինուո-
րական լինն ջերմութենէ ստգտանելով համարձակ ՚ի
հրապարակի՝ զպատուէր հօր իւրոյ. * Որոյս ասէ
հայր իմ զերկիրս. զի Թէ տեսին աչք իմ, վասն
զի ձաշակեցի սակաւ մի ՚ի մեղուէս յայսմանէ. և
Թէ ուտելով կերբեալ էր այսօր ժողովրդեանն յա-
սարէ Թշնամեաց իւրեանց՝ զոր գտին, մեծամեծ
հարուածս առնէին յայլազգիսն ‖։ Եւ Թէպէտ ար-
դար խօսեցաւ յոնէսթանն, զի հրամանն այն էր
անխոհեմ և ապաժամ. բայց պակասեցաւ ՚ի պար-
տուպատշաճ հպատակութենէ առ արքայ հայր իւր.
զի չէր անկ որդւոյ՝ հրապարակապոյժ առնել զան-
խոհեմութիւնն հօրն. և ոչ իբր բարի հպատակի
վայել էր ՚ի լուր այլոց՝ անընտրօղ երևեցուցանել
զթագաւոր իւր։

Զորդ՝ հասեալ զօրուն յայէալոն քաղաք սովեալ,
իբրև երեկոյ եղև, ոչ ևս զօրելով տոկալ՝ յար-
ձակեցան ՚ի հօտս և յանդեայս և ՚ի ծնունդս ար-
ջառոց՝ զոր առին յաւարի, սպանանէին ՚ի վերայ
երկրի, և ուտէին հանդերձ արեամբ. զի ՚ի ստի-
պելոյ քաղցուն՝ ոչ ժնային, մինչև խոպառ հոսեալ
հեղանիցի արիւնն արտաքս։ Եւ այն էր ընդդէմ
պատուիրանի ՚ին. որ արգելոյր սաստիկ հրամանաւ
չուտել զարիւն ամենայն մսոյ մինոյ. զի ասէ, * ամե-
նայն որ ուտիցէ զայն՝ (զարիւն), սատակեսցի ‖.
ղեւտ. ժէ. 14։ Եւ այնպէս պահելով նոցա զպատ-
ուէր Թագաւորին, անցին զպատուիրանաւ ՚ին ՚ոյ
իւրեանց։ Զոր բան իբր աղդ եղև սաւուղայ,
խռովեցաւ յոյժ. անօրինեցայք ասէ, և առ կար-
ձեալոյ զնոսա ՚ի մեզաց, հրամայեաց Թաւալեցուցա-
նել ՚ի դիսան տեղւոջ վէմ մի մեծ, և ասաց ա-
մենայն ժողովրդեան՝ ՚ի վերայ այնր վիմի զենուլ
իւրաքանչիւր զոչխար իւր և զարջառ։ Զպա շի-

նեաց անդ սաւուղ սեղան ՚ի՛ն, ըստ ումանց զայն վէմ յորոյ վերայ սպանին զանասունս՝ կանգնելով. ՚ի վկայութի՛ւն ՚ի ձեռանէ սոյ ձանաչելոյ զյաղթութի՛ւնն։ Զայն սեղան նախ սկսաւ սաւուղ շինել ՚ի՛ն. զի ցայն վայր սամուէլ կանգներ սեղան՝ ուր պիտոյ լինէր։ Սաւուղ խորհէր յայնմ գիշերի սնդել զՀետ փախստէից մնացելոց, որպէս զի կալցի զառաջս ամենայն ձանապարհայ, և ոչ ոք ՚ի նոցանէ ողջանդամ զերծանիցի մինչև ցառաւօտ։ Ասէ՛ն որոյ ժողովեալ զզօրագլուխս՝ առաջի արար նոցա զխորհուրդ իւր. իսկ նոքա թէպէտ դիտէին, զի վաստակեալ ե՛ն զօրքն, բայց տեսեալ զթագաւորն վառեալ յոյժ առ այն, թողէն ՚ի հաձոյս կամաց նորա առնել որպէս զիարդ հաձոյ թուիցի նմա։

Զայս պատասխանի առեալ սաւուղայ, այն ինչ կամէր չու առնել, ասէ քահանայն, չէ պարտ գահավէժ գործել. մատիցուք նախ աստ առ ՚ած հարցանել և իմանալ զկամս նորա. հաձ՚եցաւ սաւուղ, և ինքնին մատուցեալ անկաւ առաջի տապանակի ՚ի՛ն, կամ ըստ ումանց՝ քահանայն ՚ի դիմաց նորա ևՀարոյ զ՚ած՝ եթէ իջանիցե՞ն զՀետ այլազգեացն. և թէ մատնեսցի՞ զնոսա ՚ի ձեռս իսրայէլի. այլ այս անդամ ոչ արար ՚ած նմա պատասխանի։ Զայնմանէ ծանեաւ սաւուղ, զի բարկացեալ է ՚ած. բայց ոչ կարաց գուշակել՝ թէ ո՞ր յանցանք իցէն, վասն որոյ ոչ ետ ՚ած նմա պատասխանի։ Զաստ դարձեալ նոր անխոհեմութէ՛ պարտաւորէ զանձն երդմամբ չափ, թէ ո՛ ոք և իցէ յանցաւոր, թէպետ և որդի իւր յոնաթանայ, մահու մեռցի։ Զի առաջին կոչեալ զառաջեաւ զգնացաւորս հաՀմօրէն ցեղից, կացոյց զնոսա ՚ի մի դաս ՚ի կողմն մի. և ինքն և որդի իւր յոնաթանայ կացին ՚ի միւս կողմն. և աղաչէր և ասէր. * Տէր ՚ած իսրայէլի. զի՞ է զի ոչ ետուր պատասխանի ծառայի քումմ յաւուր յայսմիկ. եթէ յիս իցէն այսօր, և եթէ ՚ի յոնաթանայ որդի իմ անօրէնութի՛ւնք, տո՛ւր յայտնութի՛ւն. և եթէ ՚ի ժողովրդեան քումմ իսրայէլի իցէ անիրաւութի՛ւնն, տո՛ւր քաւութի՛ւն։ Զետ այնորիկ ետ ար-

կանել վիճակ, և ժողովուրդն գտաւ անմեղ. ինաց երկբայութիւն ի վերայ երկոցուն նոցա՝ հօրն և որդւոյն. և այն շատ էր առ ի նահանջել զսաւուղ ի գահավէժ յանդգոյշ խորհրդոյն. մանաւանդ՝ զի տեսանէր և ժողովուրդն դժկամակ առ այն. բայց նա ոչ հանդարտեաց. վասն որոյ և ժողովուրդն ատիպեալ ի նմանէ, արկին ընդ նա և ընդ յոնէսաթան որդի նորա. և էլ վիճակին յոնէսաթանու:

Ա. Հա այս եղև ելք անխոհեմ երդմանն սաւուղայ. որով երկոքին անկան ի տադնապ մահու. հայրն՝ զի իւրով անընտրողութիւն կորուսանէր զորդին, լաւութիւն բարւոց և ամենայն առաքինի քաջողջութիւն գերազանցեալ. իսկ որդին՝ զի զուր տառապարտուց մեռանէր: Այլ սաւուղայ կամեցեալ երևեցուցանել զանձն առաւել թաղաւոր, քան թէ հայր, եհարց խստիւ ցնա՝ թէ զի՞նչ արար. իսկ նա խոստովան եղև և ասէ, Ճաշակելով Ճաշակեցի ծայրիւ գաւազանին որ ի ձեռին իմում՝ սակաւ մի մեղր յանցանել զօրուն ընդ անտառ մեղուաց՝ ոչ գիտելով զպատուէր քո. և միթէ վասն այնորիկ արժան էր թէ մեռանիցիմ ես: Ա. սէ սաւուղ. երդուայ միանգամ, և դարձեալ երդնում, պատուհասեսցէն զիս երկինք՝ եթէ ոչ մահու մեռանիցիս դու այսօր ըստ երդմանս իմում: Այնժամ ժողովուրդն ամենայն ի մի բերան ասեն. Այս զիա՞րդ հանդուրժեսցուք մեք տեսանել զմեծ ջնոյակասլ դիւցազնեայ սպարապետ մեր՝ մեռանել առաջի աչաց մերոց տարապարտուց. որում խոստովանիմք այսօր զփրկութիւն մեր և զյաղթութիւն: Այլ, ո՛չ տարցուք այդմ, կենդանի է նա՝ զոր պաշտեմք, և յոր երդնումք, եթէ պատրաստ եմք արեամբ չափ պաշտպանել կենաց յոնէսաթանու, որ արար այսօր զփրկութիւնս զայս մեծ իսրայէլի. այսինքն գործակից եղև ազատութիւնէ մերոյ և ողորմութիւնէ նա ի վերայ մեր: Այլ մեռցի, և ո՛չ մազ մի անկցի ի հերաց գլխոյ նորա յերկիր: Ա. յս հակառակութիւն հաճոյական էր սաւուղայ, զի ապրեցոյց զկեանս որդւոյ իւրոյ. որով և ինքն համարեցաւ

զանձն անպարտ յերդմանէ. քայց չունելով պատասխանի ՚ի նմանէ, ոչ ևս իշխեաց զհետ պնդիլ այլազգեաց. և նոքա գնացին ՚ի տեղիս իւրեանց՝ ապրեալք ՚ի սրոյն սաւուղայ։

Ալամեցաւ ՚ինձ այսմ այսպէս լինել՝ ՚ի պատժել զանզգոյշ համարձակութենէն յոյնեանսն ՚ի բանս ընդդէմ հօրն, և զանխոհեմ երդումն սաւուղայ, որում երեք ծանր վնասք զհետ եկին։ Մի՝ զի յաղթութենէն մեաց անկատար. քանզի հարուածք այլազգեաց թէպէտ մեծ եղև, բայց ոչ այնչափ, որչափ հանդերձեալ էր լինել, եթէ հաստատեալ էր զօրաց զսիրտս իւրեանց՝ առեալ կերակուր գոնէ յոտին, կամ յընթացս չուոյ իւրեանց։ Երկրորդ՝ զի յոյնեանսն իշխան և սպարապետ անզգուշական՝ անկաւ ՚ի վտանգ կորուսանելոյ զկեանս, և սաւուղ ՚ի լինել որդեսպան, եթէ չէր հեռացեալ ՚ի ձեռն ժողովրդեան, յաղագս բարեխաւսութենէ յոյնեանսն։ շատ համարեալ նմա ՚ի քաւութիւն՝ զսպառնալիս մահու։ Եւ երրորդ՝ զի եթ պատճառս զօրաց անցանելոյ զպատուիրանսն ՚ի, ուտելով հանդերձ արեամբ՝ առ բռնութենէ քաղցու։ Այս յայտ է՝ թէ ոչ վասն մեղացն յոյնեանսն չարար նմա ՚ինձ պատասխանի. քանզի յայնմ մասին անմեղ էր նա ամենևին, ոչ գիտելով զպատուէրն հօրն. այլ վասն մեղաց ժողովրդեան, որում պատճառս եթ սաւուղ անխոհեմ երդմամբ։ Խոկ ելանել վիճակին ՚ի վերայ յոնէնաթանու, եղև՝ որպէս ասացաք՝ ՚ի քաւութիւն անզգոյշ համարձակութենէ նորա ՚ի ստգտանել հրապարակաւ զպատուէրն արքային հօր իւրոյ. Թո՛ղ զի կամէր ՚ինձ յուցանել, թէ երդումն եղեալ յանուն իւր՝ որո՛վ օրինակաւ և լեալ էր, և պահելի. մինչ զի և սխալիլն ընդդէմ նորա անգիտութիւնք՝ անկցի ընդ ապաշխարութեամբ։

ԳԼՈՒԽ ԺՐ.

Աստուած ապրեցուցանէ զափափ ընտրեալ ամաղեկայ ընդդէմ յայտնի հրամանի ՚ին, զոր պատուիրեաց նմա ՚ի ջնջուն ամաւելէ : Այսն այսր, և վասն առաջին անհնազանդութե՛ն որ ՚ի զլխին, մերձիր աստուած ՚ի ընտրուե՛ն :

Յետ յառաջագրեալ հարուածոց այլազգեաց փղշտացւոց՝ դարձեալ սաւուղ զնէնս իւր ընդդէմ ջնջակայ Թշնամեաց իւրոց, մովաբացւոց, ամմնացւոց, եդովմայեցւոց, և Թագաւորին սուբայ, և հադարեզեր որդւոյ Ռհանղի գիտելով զանձն կարգեալ ՚ի ձեռն Թագաւոր ամենայն իսրայէլի՝ առ ՚ի վրկել զժողովուրդ իւր ՚ի ձեռաց կոխողաց և հարստահարողաց նոցա, զամենայն ժամանակս Թագաւորութե՛ն իւրոյ, ոչ երբէք կասեցաւ ՚ի պատերազմէ, կամ անձամբ, և կամ ուր ուրեք չէր կարօղ ժամանել ինքնին, գոլով յայլ կողմն պատազեալ ՚ի մարտ, ՚ի ձեռն իւրոց զօրավարաց. որպէս ՚ի վեր անդր ասացաք : Զօրավարքն նորա ՚ի սմին ժամանակի, զորս աստ յանուանէ յիշատակէ՝ զի գիրն՝ Լինն սոքա. յովնաթան, որ կարծի երիցագոյն, որ և Թողացոյց զայլազգիս. Թերևս և այլ երկու որդիք սաւուղայ յեսուբ. որ ՚է ա. ճառ. ը. 33. կոչի ամինադաբ. և մեղքիսաւէ. և աբենները որդի նեբեայ հօրեղբօր սաւուղայ սպարապետ զօրաց նորա, և այլք : Ռհանղի սաւուղ գոլով այր պատերազմող, զամենեսեան յորս տեսանէր ոգի պատերազմական, և սիրտ քաջ և պնդակամբ, ժողովէր առ ինքն. և կարգէր ՚ի վերայ գործոց պատերազմի :

Ընդ՝ ինամին յառաջնում ամի Թագաւորութե՛ն սաւուղայ, եկն սամուէլ առ նա, և յայտ արար նմա զդատակնիք ՚ին, զոր ըստ ոմանց՝ էրեք հարիւր և հօթանասուն և չորս ամօք յառաջ տուեալ էր նմա՝ վասն սպառսպուռ ջնջելոյ յերկրէ զԹագաւո-

թուԹի ամաղեկացւոց, մինչև չինալ յիշատակի նոցա ի նեղքոյ երկնից: Եւ յարեալով զկնի զպատճառն, ասէ· զի յերևանել որդւոց իսրայէլի յերգիպտոսէ երԹալ յերկիր աւետեաց, զոր կանխաւ խոստացեալ էր ՚ած հարցն նոցա, ելին նոքա ի Ճանապարհի ընդդէմ նոցա ծանր ամբոխիւ· և դարան գործելով նոցա, զբազումն ի վերջապահ զոքոյց իսրայէլի, որք քաղցեալ և վաստակեալ յաշխատուԹէ Ճանապարհին՝ ոչ զօրեցին ժամանել ի մեծ բանակն, հարին և կոտորեցին ընդդէմ ՚ած. այլն և ամենայն ազգային օրինաց և իրաւանց· Է· օրէն· ԻԵ· 17: Եւ յետ այնորիկ ընդ դարս իբր հինգ՝ ի չարեաց միշտ ի յոռեգոյնն դիմեալ ինքեանք և Թագաւորք նոցա, լցին զչափ անօրէնուԹեց իւրեանց· մանաւանդ ագագ արդի Թագաւոր նոցա, այր գազանամիտ արեանարբուշ՝ անեալ և պարարեալ անպարտ արեանց հեղմամբ: Զդի՝ եհաս ասէ՝ ժամ վրէժխնդրուԹե, ևան որոյ հրամանն ՚ած առ քեզ այս է· զի երԹեալ հարցես և ջնջեսցես իսպառ զամենայն ԹագաւորուԹի ամաղեկացւոց· մի ապրեցուցանիցես ոչ զիշխան և ոչ զսոսկական, և մի քնաւ զոք ի մարդկանէ· այլ սատակեսցես զամենեսեան ի Թագաւորէն մինչև ցսանդխայն, զայր և զկին, զծեր և զտղայ· և զանմեղայն անասուն նոցա՝ յարջառոյ մինչև ցոչխար, և յուղտուէ մինչև ցէշ, բովանդակ կորուսանիցես· և զտունս զաւանս զգեօղս և զքաղաքս և զամենայն ինչս նոցա և զկարասիս՝ հրոյ Ճարակ տացես· և մի քնաւ ագահեսցեն աչք քո առնուլ ինչ յիրացն նոցա, և մի մինչև ցասելն մի:

Վասուղ որ միշտ և յամենայնի երևեցուցանէր զանձն դիւրապատրաստ ի հնազանդուԹե, և փուԹաջան ի գործադրուԹե· բայց առ մտացն անհաստատուԹե՝ զկնի հրաշս դոգյես հնազանդուԹե ցուցանելոյ, կամ նշանաւոր արիական քաջուԹիս գործելոյ, ի կատարած՝ առ կարձմտուԹե, կամ առ տարադէպ ինն և ինքնահնար բարեպաշտուԹե, եղծանէր զամենայն արդիւնս վաստակոց

իւրոց։ Օ՛ի իբր կնիք էր նորա բուսոյ բարուց՝ ձանձրանալ զբարւոյ, և բարիոք սկսանիլ. այլ ոչ էր բնիք բարիոք կատարել։ Արդէս ունիմք տեսանել և յայսմ առաջիկայ գործառնութիւնէ. յորում եթէ հաւատարիմ գտեալ էր մինչև իսպառ՝ ի հնազանդութիւն հրամանի նորա՝ զոր պատուիրեաց նմա՝ ի ձեռն սամուէլի, թերևս ուղղեալ էր և զառաջինն անլսողութեան իւրոյ զսխալանս. որով վերստին գտեալ ընդհս առաջի նմա՝ զթագ թագաւորութիւնէ պահէր անխախտելի՝ ի տուընն և՝ ի տոհմին իւր։ Այլ զի՝ ի վերայ առաջնոյն, յաւել և զայս մեծագոյն անհնազանդութիւնէ, նմին իրի ընդ թագաւորութիւնէ՝ կորոյս և զկեանս իւր տարաժամ։

Վասնզի առեալ նորա զայս պատուէր ինն՝ ի ձեռն սամուէլի, վաղվաղակի հրամայեաց զօրուն՝ անյապաղ երթալ գումարիլ՝ ի գաղգաղա. և անդ հանդէս արարեալ նոցա՝ եգիտ չորեք հարիւր հազար կարգաւորեալ զօրաց. Թո՛ղ զերեսուն հազարս լոկ՝ ի ցեղէն յուդայ։ Այս առանց ժամանակաձառ լինելոյ՝ ի զանազան պատրաստութիւնէ զինուորական, զոլով հաւաստի թէ՝ ի մարտնչել հրամմանաւ ինն՝ չպիտի այլ ինչ առ՝ ի յաղթել, բայց միայն հնազանդութիւնէ, չու արար անդանդաղ յերկիր ամաղեկացւոց. որ՝ ի նոր գիրս կոչի և եդովմ, կամ երկիր եդովմայեցւոց, սկսեալ՝ ի սէյիր լեռնէն՝ որք յարևելից ձգին ընդ արևմուտս՝ ի հարաւակողմն ցեղին յուդայի, իբրև ութսուն մղոն հեռի՝ ի գաղգաղայէ։ Այս հասեալ մօտ յամաղեկ գլխաւոր քաղաք երկրին՝ ուր էր աթոռ թագաւորի նոցա, գիշերային գարանամուտ եղև՝ ի ձորն, կամ՝ ի ցամաք հեղեղատին մերձ՝ ի քաղաք անդր։ Ընդ այն կողմանս բնակիչն յայնժամ վրանօք կինեցիք՝ ի սերնդոց յոթորայ աներոյ մովսէսի, և որդւոյ նորա յոբաբայ, որ եղև առաջնորդ ժողովրդեան իսրայէլի՝ ի ձանապարհ անապատին. և յետ այնորիկ միշտ բարեկամ և դաշնակից էին երբայեցւոց և հաւատացեալ՝ ի ձշմարիտն ածծ։ Այսուհետ յիշելով զոր արարին նոքա ընդ ամենայն որ-

դիան խորհելի՝ յելանել նոցա յԵգիպտոսէ, մինչև
և էր ձեռնարկեալ ի հարուածս ամաղեկացւոց՝ ազգ
արար նոցա գաղտաբար, ելանել մեկնիլ վաղվաղա-
կի յերկրէ նոցա, զի մի խառն ընդ նոսա սատա-
կեսցին· զոր և յօժարութիւբ արարին նոքա։

Այս ապա յեղակարծումն յարձակեցաւ սաւուղ
ամենայն զօրութիւբ յերկիր ամաղեկացւոց, և եհար
քանզեաց զամենայն երկիր նոցա յԵւիլայ մինչև ի
սուր, այսինքն ի մտից երկրին մինչև ի սահմանս
Եգիպտոսի։ Կալաւ և զագագ Թագաւոր նոցա
կենդանւոյն· և զոր ըստ հրամանի Տեն պարտ էր
առ ժամայն սպանանել, ապրեցոյց զնա, կամ առ
բնական աղէտից կարեկցելով եղկելի Թագաւո-
րին, կամ նորոգ սովորութիբ իմն կամեցեալ մուծա-
նել ի պատերազմունս՝ ապրեցուցանել զայր Թա-
գաւոր ի պատիւ երեսաց նորա, որ Թերևս և ին-
քեան վիճակեսցի երբեք ի ձախողուածս· և կամ
առ մնափառութիբ կամեցեալ տանել զնա շղթայա-
կապ առաջի կառաց իւրոց իբր յաղթանակ։ Ոնոյն
իշխեցին առնել և զօրք նորա, ունելով օրինակ
զԹագաւորն իւրեանց՝ գուցե և հրաման ի նմանէ·
զի զընտիր ընտիրս արջառոց և խաշանց ապրեցու-
ցին· իսկ զվտիտս և զանպիտանս սատակեցին։
Այնգունակ ընտրութիբ արարին և ի կողոպուտն,
ի կահս, ի հանդերձս, ի զարդս, որպէս և յանդս
և յայգիս և յայլ իրս· զի որ ինչ ակնիւ և պատ-
ուական էր ի նոսա, ապրեցուցին· իսկ զայլ ամե-
նայն գործ անարդ և արհամարհեալ ջնջեցին առ
հասարակ· որպէս և զքաղաքս՝ զշէնս և զաւան։
և զամենայն դաստակերտ հրձիդ արարեալ յա-
ձիւն դարձուցին։ Ինչ ոչ յիշէ գիրն վասն դիմա-
մարտութիբ ամաղեկացւոց ընդդէմ սատակչաց իւ-
րեանց· յորմէ երևի թէ զարհուրեալ իմն երկիւղ
և արհաւիրս արկ ՚ած ի սիրտ նոցա, մինչև ձեռն
անգամ ամբառնալ ոչ իշխեցին։ Այլ յիրաւի, զի
այս ոչ էր պատերազմ քաղաքական, այլ վրէժ-
խընդրութիբ արդար դատաստանին ՚այ· առ որոյ
գործադրութիբ կարգեցաւ սաւուղ· վասն որոյ չու-

նէր նա իշխանութիւն մեղմելոյ կամ այլայլելոյ զդատակնիք ՚ին։

Այսր ամենայնի վերայ սաւուղ եդ ՚ի մտի, եթէ անթերի կատարեաց զՀրամանն ՚ին՝ որպէս պատուիրեցաւ նմա. որով և մոռացեալ զառաջինն խոնարհ և նուաստ ձանաչումն անձին, զոր բերանով իսկ իւրով խոստովան եղև առաջի սամուէլի, այնչափ բարձրացաւ սիրտ նորա, մինչև իշխել զինաւս մեծի յաղթութեանն՝ զոր ՚ի ձեռանէ ՚ին ընկալաւ, անձին վերապրել։ Վասնզի եկեալ ՚ի կարմելոս լեառն, (ոչ ՚ի հռչակաւորն այն՝ ուր նստեր եղիա մարգարէն, զի այն էր մերձ ՚ի ծովն միջերկրական, այլ ՚ի միւս համանուն լեառն, որ էր ՚ի նեղքս ՚ի ցամաքն ՚ի հարաւակողմն ցեղին յուդայի՝ առ սահմանօք եդովմայեցւոց. ուր նաբաղ այր աբիգեայ դարմաներ զՀօտս խաշանց իւրոց. ա. Ռաք. իե. 2.) անդ՝ եւ սաւուղ կանգնել կամար յաղթութեանն, կամ արձան առ ՚ի յիշատակ յաղթութեանն, որպէս թէ անձին քաջութեամբ գործեալ էր. ուր սովորութիւն էր առ իսրայէլացիս յամենայն յայսպիսի մեծագործութիւնս կատուցանել յաւէժական յիշատակարան ոչ անձանց, այլ ՚ին ՚ոյ զօրութեց. վասն աբիսողմայ միայն ընթեռնումք, թէ կանգնեաց արձան, զոր յիւր անուն կոչեաց * ձեռն աբիսողմայ ‖. Բ. Ռաք. ԺԸ. 18։ Այլ անշուշտ է հասարակաց առածն, թէ փառք փոխեն զբարս. և թէ մեծութիւն իշխանութեան արտայայտէ զգաղտնիս սրտի առն։

Այդ՝ մինչ սաւուղ մնապարծութիւնէ իւրոյ նշանակ կանգներ ՚ի կարմելոս, զթագ արքայութեանէ իսրայէլի վստահացեալ ժառանգել որդւոց յորդիս, ՚ին զդատակնիք բառնալոյ զթագաւորութենէն ՚ի տանէ նորա յայտնէր սամուէլի յարիմաթեմ. զի դարձաւ առ յինեն յետս, և զբանս իմ ոչ պահեաց։ Վնդ այս վճիռ ՚ին յանմիսիթար սուգ և ՚ի տրտմութիւն պաշարեաց սամուէլի՝ ոչ դադարեաց զդիշերն ամենայն աղաչել զ՚ին վասն մեղապարտ թագաւորին։ Վյօթք ՚որ ուղղեալք առ ՚ին վասն քարեկամաց

իւրեանց՝ միշտ հաճոյ և ընդունելի են ՚ի, եթէ յամառութիւն նոցա՝ որոց վասն աղօթեն, չդնիցէ արգելս ընդդէմ ՚ի։ Եւ ընդ առաւօտն կանխեալ սամուէլի՝ գնաց ընդ առաջ սաւուղայ ՚ի կարմելոս, եդեալ ՚ի մտի արժանաւոր ապաշխարութիւն դարձուցանել զաշխարհին Թագաւորն անդրէն ՚ի ընդհս ՚ի. և զձանապարհայն լուեալ, եթէ գնաց սաւուղ ՚ի գաղգաղա, դարձոյց զկառս իւր, և եկն եհաս անդ՝ ՚ի ժամուն, յորում սաւուղ մնստուցանէր յողջակէզ ՚ին զառաջինս աւարոյն՝ զոր աճ յամաղեկայ։ Եւ երկն սամուէլ առ նա, յառաջեաց սաւուղ ողջունել զնա՝ ասելով, ողջամբ եկիր օրհնեա՛լ դու ՚ի ՚ինէ. և որպէս գոզ սրտագոզ ըստ առակաց առակի՝ կասկածելով ՚ի սրտի լսել կըշտամբանս ըստ որում արժանի էր, նախ քան զհարցանել ինչ ցնա սամուէլն, ինքն ձնդապարեաց սաեղով, ահա կատարեցի զոր ինչ պատուիրեաց ինձ ՚ի։ Եւ պատասխանի սամուէլ, եթէ կատարեցեր որպէս ասեաց, զի՞նչ է ապա բարբառ հօտիցդ յականջս իմ, և ձայն արջառոց զոր ես լսեմ։ Եւ ՚ոչն հետայն իմացաւ սաւուղ զմիտս ձիշտ հարցաքննութեն, որում և խիղճ մտաց նորա վկայէր. նմին իրի կամեցեալ քերել յանձնէ զամբաստանութիւն՝ ջանացաւ զմեղն զժողովրդեամբն արկանել, միանգամայն արդարացուցանել և զգործ նոցա. քանզի նոքա ապրեցուցին ասէ զընտիրս արջառոց և խաշանց ամաղեկայ՝ զոհել զնոսա ՚ի գոհութիւն, ըստ որում պարտ էր և արժան։

Յածէր սաւուղ զմտաւ, թէ ընդ մարգարէի խօսի լուսաւորելոյ ՚ին, յորմէ ոչ ծածկին գաղտնիք սրտի. վասն որոյ անսա ինձ՝ ասէ սամուէլ ցնա, զի խօսեցայց և պատմեցից քեզ զոր խօսեցաւ ՚ինր ընդ իս յայսմ գիշերի. ասէ սաւուղ, խօսեա՛ց։ Յայնժամ փոխեալ սամուէլի զբարբառ իւր, խօսել սկսաւ իշխանաբար իբրև պատգամաւոր ՚ինն և ասէ. Վընկն գիր ինձ, և տո՛ւր պատասխանի. ո՞չ ապաքէն փոքր ես դու առաջի ՚ինն, և առաջի աչաց քոց ոչ ծածկի՝ զի որդի ես առն սոսկականի փո-

քու գաւազանի ցեղին իսրայէլի. և օծ զքեզ ՚ուր թագաւոր ՚ի վերայ իսրայէլի, և առաքեաց զքեզ ՚ի կատարումն տիրական դատակնքոյ իւրոյ, պատուիրելով մեզն և բացայայտ բանիւ. երթ սակ՝ և սատակեա զմեղանչականն յիս զամաղէկ. հարցես և կոտորեսցես զնոսա ՚ի սայր սուսերի առանց խնայելոյ, մինչև խափաւ վախճանեսցես զնոսա, և զամենայն ինչս և զտացուածս նոցա կորուսցես։ Այլ ընդ ինքր ոչ լուար ձայնի ՚ուն. այլ յարձակեցար յաւար. միթէ արժա՞ն էր քեզ յաղագս այդպիսի չնչին իրաց անցանել զպատուիրանաւ ՚ուն, և մեղանչել առաջի նորա։ Ասուղ փոխանակ խոստովան լինելոյ զմեղս իւր և ապաշաւելոյ մեղայսասցուցիչ, տակաւին հնարի արդարացուցանել զանձն, որով և և՛ս աձեցուցանէ զմեղսն. և առաւել անսաւժան ցուցանէ զանձն Թողուիչէ։

Այլ այդպէս է՝ ասէ ցսամուէլ, զի լուայ ձայնի ժողովրդեան, (ըստ այլ Թարգմանուիչ՝ ձայնի ՚ուն,) և չոգայ զձանապարհ յոր առաքեաց զիս ՚ուր. ջնջեցի իսպառ զամաղէկացիս. միայն զագագ Թագաւոր նորա աճի ընդ իս կենդանի, մինչև սահմանեցից և զնորայն տարազ մահու։ Այսպէսցոյց և ժողովուրդս յաւարէ անտի զընտիրս ՚ի հօտից և յանդեզոց, բայց ոչ վայրապար կամ առ ագահելոյ, այլ առ ՚ի զոհել ՚ուն ՚ի գաղգաղա իբրև առաջնապտուղ ՚ի բազմութենէ անտի զոր կոտորեցաք։ Այդ՝ այս ամենայն առաւել բարեպաշտութենէ և գործ, քան ամպարշտութենէ կամ անզգամութենէ։ Ասէ սամուէլ. խաբիս. ոչ է գործ բարեպաշտութենէ առ ՚ուծ այն՝ որ առնի ընդդէմ հրամանաց նորա. միթէ համարիցին գու եթէ առաւել հաճոյ իցէ ՚ուն ողջակէզ՝ քան ղլսել ձայնի նորա. բարի են զոհք և ողջակէզք, որով զնուաստութենէ մեր և զյարգութենէ առ ՚ուծ խոստովանիմք, բայց հնազանդութենէն՝ զոր պարտիմք ՚ույ, քանզի է ՚ի բնական իրաւանց, մեծ է քան զօրինս և քան զամենայն զոհս և ողջակէզս։ Ո՛ան որոյ լաւ է ունկնդրութենէ քան զզոհ ընտիր, և հնազանդութենէ քան զճարպ խոյոց. ուստի ան-

հնազանդութիւն, և հետեւել պատուիրանի նմա՝ և իբրև մեղք համայութիւն և կռապաշտութիւն, իբրոց համաց պաշտօն տանելով։ Այսչափ և այսպիսի է մեղք քո. բայց նմին աւադիկ այս է և պատիժն՝ որում արժանաւորեցար. փոխանակ զի արհամարհեցեր զբան նմա, արհամարհեսցէ զքեզ նա՝ չլինել թագաւոր ի վերայ Իսրայէլի։

Ի սպառնալեաց աստի երկուցեալ սաւուղայ՝ սկսաւ բանալ զաչս, և խոստովանել զանձն յանցաւոր, բայց ոչ անկեղծ և ուղիղ սրտիւ, որով և եթ լինի հանդիպել թողութիւն. մեղայ ասէ՝ անցի զբան նիւ նա. այլ զի՞նչ կարօղ էի ես առնել, ամենայն ժողովուրդս խնդրեր ապրեցուցանել զագագ արքայ, և իմ երկուցեալ յապստամբելոյ նոցա՝ լուայ ձայնի նոցա։ Արդ՝ դու խնդրեա՛ ի նմանէ վասն իմ ողորմութեան. զի զօրաւոր են աղօթք քո առ նմա. կամ գիտէ պատրուակեա՛ զանօրէնութիւնս իմ առաջի ժողովրդեանս, և դարձիր ընդ իս ի քանակն, զի երկիր պագից նմա նոյ քումբ։ Եւ պատասխանի տամուել. ոչ դարձայց ընդ քեզ, զի արհամարհեցեր զբան նմա, և նա արհամարհեաց զքեզ չլինել թագաւոր ի վերայ Իսրայէլի. վասն որոյ ոչ ևս կարեմ դարձակից լինել քեզ։ Ոյժ ասացեալ՝ դարձոյց տամուել զերեսս ի գնալ, տոպրակացեալ յապուշ անզգայութեամբ և յանհոգութեամբ թագաւորին։ Այլ սաւուղ որ քաջ տեսանէր՝ թէ քանի կարևոր էր նմա չերևիլ առաջի ժողովրդեան առանց մարգարէին, քուռն եհար զտնոյ վերարկուն նորա՝ կամեցեալ արգելուլ գնա, և պատառեաց գնա։ Ոյժ այն պատառումն իբր նշանակ առեալ տամուելի, ասէ ցնա. այսպէս պատառեաց նա զթագաւորութիւնդ ի ձեռաց քոց այսօր. և տացէ զայդ ընկերի քումբ լաւագունի քան զքեզ։ Եւ մի՛ կարծիցես թէ դառնայցէ երբէք թագաւորութիւնն ի տուն քո, զի ոչ եթէ իբրև զմարդ է նա՝ ի զղջանալ։ Ապա սաւուղ և առ այս յայտնի սպառնալիս անզգայացեալ, ասէ ցտամուել. Թէպէտ և մեղայ, սակայն և այնպէս թագաւոր եմ և հրամանատար ժողովրդեանս,

մինչև կամիցի ՚ի բառնալ զայն յինէն. դու առ այժմ մեծարեա զինս առաջի ծերոց ժողովրդեան իմոյ, և առաջի խրատ տուր. և մի տացես պատճառս ապստամբելոյ նոցա յինէն. ապա դարձիր ընդ իս, և պագիջ երկիր ՚ի նմ քում։

Ուստ սամուէլ բանից սատուղայ, մանաւանդ թէ ՚ներքին ազդեցութեանէ, որ ՚ի նմին ժամու ազդեցաւ ՚ի սիրտ նորա. գնաց զկնի սատուղայ, և երկիր եպագ ՚ի նմ. ապա դարձեալ առ ժողովուրդն՝ հրամայեաց աճել զառաջեաւ զագագ թագաւորն ամաղեկայ. որոյ եկեալ դողալով, և տեսեալ ըզսուրն մերկացեալ ՚ի ձեռին սամուէլի, աղաղակեաց ցատագին. ո՛չ գիտեի՝ եթէ այսպէս դառն իցէ մահ. ասէ սամուէլ ցնա, ա՛րդ գիտասցես. յո՛ւշ լիցի քեզ՝ եթէ քանի՛ քանի՛ մարս ՚ի կանանց որդեկոտոր առբար սուր քո. ահա եհաս ժամ, զի և մայր քո այսօր նոյնպէս որդեկոտոր լիցի ՚ի կանանց, և երթիցէ և լացցէ ընդ նոսա։ Այս ասացեալ՝ եհար և սպան զնա առաջի ՚ի նմանէ. և ինքն եղեալ ՚ի կառս իւր՝ գնաց ՚ի տուն իւր յարիմաթեմ տրխրեալ սրտիւ. նոյնպէս և սատուղ եմուտ ՚ի քաղաք իւր ՚ի գաբաա։ Եւ սամուէլ այնուհետև առանձնացեալ՝ ոչ ևս յաւել տեսանել զսատուղ մինչև յօր մահուան իւրոյ. զի սուգ ունէր ՚ի վերայ նորա, յոգւոյ ելանելոյ, լայր զցայգ և զցերեկ և աղաղակէր յերկինս առ ՚ած խնդրելով ողորմութիւն վասն սատուղայ։ Այսպէս ձգնին օգնել ՚ըզք ընկերաց իւրեանց, յորժամ տեսանեն զի խրատք ոչինչ օգտեն նոցա այսինքն դիմեն յաղօթս առ ՚ած. բայց ոչ միշտ լսելի լինին, յորժամ խիստ յամառութիւն մեղաւորաց ընդ մէջ անկանի։

ԳԼՈՒԽ ԺԴ

Պատուիրան օձանման ընագաւառը. եւ հոգին պան գայ ի նոսա: Ասէ ի սաւառուղ այս չար մտանէ եւ լլկէ զնա: Պատուիրան չաղչրաւ յայն չնարէրգուածքը գիւրէ նմա:

Վինչդեռ լայր եւ սգայր սամուէլ վասն սաւուղայ, ասէ ցնա Տէր. մինչեւ ցերբ սուգ առնուս ի վերայ սաւուղայ. ես անարգեցի զնա չթագաւորել ի վերայ Իսրայէլի. արդէն ընտրեալ է իմ ցյաջորդ նորա: Լըդ՝ լից զեղջիւր քո իւղով, եւ երթ մինչեւ ցբեթղեհէմ առ յեսսէ յազգէն յուդայ. եւ օծ զմի յորդւոց նորա ի թագաւոր Իսրայէլի, զոր ես ցուցից քեզ: Պատասխանի սամուէլ. Որ դու ինքնին գիտես, զի ես միշտ պատրաստ եմ առ ամենայն ակնարկութիւն քո. այլ յայս գործ զիարդ կասպիս թէ երթայց. գուցէ լուեալ սաւուղայ զերթիմ ի բեթղեհէմ, ի ցաստանէ նախանձուն սպանանիցէ զիս: Պնկալաւ Տէր զհրաժեշտ նորա, եւ զի մի անկցի յայն վտանգ յորմէ կասկածէր, ուստից նմա թէ զիարդ ունի երթալ: Պ՛ու ասէ ընդ քեզ երինջ մի յարջառոց քոց, եւ եթէ ոք հարցանիցէ ինչ քեզ, ասասցես երթամ ի բեթղեհէմ զոհել Տեառն. եւ կոչեսցես զյեսսէ եւ զամենայն որդիս նորա Ճաշել ընդ քեզ ի զոհից. եւ յայնժամ ցուցից զինչ առնիցես. եւ օծցես զոր ես ցուցից քեզ: Արա տուն առաքինորդ ոչ մերժէ զպատճառս հպատակին, յորժամ իրաւացի են, բայց եւ ոչ վաղվաղակի փոխէ զհրամանն, եթէ կարիցէ բառնալ հնարագիւտութիւնք իւիք զկոչընդակաց կատարման հրամանին: Պ՚Ծ յորոյ ի ձեռին են սիրտք թագաւորաց, կարող էր ասել ցծառայն իւր, երթ աներկիւղ, ոչ ապաքէն ես եմ որ առաքեմ զքեզ. բայց ոչ արար, այլ ուստից նմա հնարս մարդկօրէն խուսեալոյ ի վտանգէն յուսումն իշխանաց եւ ամենայն առաքինո-

պայ, մի՛ անընտրողաբար պնդիլ ՚ի հրամանս իւրեանց՝ ոչինչ հայեցեալ ՚ի դժուարութիւնս որք ընդառաջ ելանեն. այլ խմաստուքն խորհել հնարս հեռացուցանելոյ զարդելան, եթէ կարիցեն. զի չէն ամենակարօղ՝ առնել զոր կամիցին։

Կամուել արար զամենայն զոր խօսեցաւ ընդ նմա ՚ի՛ր, և եկն ՚ի բեթզէհեմ. այլ զի յետ թագաւորելոյ սաւուղայ՝ չունէր նա սովորութիւն առանց մեծ ինչ հարկի երևել ՚ի քաղաքս, ծերք քաղաքին իբրև տեսին զնա՝ խռովեցան, երկուցեալ թէ ձախողակս ինչ ունիցի գուժել նոցա. ընդառաջ եղեն նորա, հարցին ասելով, խաղաղութի՞ւն եկե արդեօք մուտք քո տեսանօղդ։ Նա պատասխանի սամուէլ. խաղաղութի՛ է. զի եկի զոհել աստ ՚ի՛ն. և ահա զոհդ՝ զոր տեսանէք ՚ի ձեռին իմում։ Հրամայեաց զի սրբեսցին ըստ օրինացդ. սրբեաց և զյեսսէ և զորդիս նորա. և կոչեաց զնոսա ՚ի զոհն։ Ի կատարել հանդիսի զոհագործութե՛ան՝ գնաց ՚ի տունն յեսսեայ զաշել անդ. և յայտնեաց ծածկաբար յեսսեայ զպատճառ գալստեան իւրոյ, զի յորդւոց նորա զոր ՚ի՛ր ցուցանիցէ նմա օծանել թագաւոր. զի մերժեաց ՚ած ՚ի թագաւորութե՛ն զտունն սաւուղայ։

Յեսսէ այր երկիւղած ՚ի ՚ի՛նէ՝ առաւել յօժարամիտ ՚ի կատարումն կամացդ ՚ի՛ն, քան ՚ի պարծանս փառաւորութե՛ն թագաւորահայր լինելոյ, յառաջ մատոյց զեղիւք զերիվց որդի իւր. զոր տեսեալ սամուէլի՝ ՚ի մեծահասակ մարմնոյն դիտակէ գուշակելով զոգւոյ նորա զմեծութե՛ն, ասաց ՚ի մտի. սա է թերևս զոր ընտրեաց ՚ի՛ր։ Այլ ետ նմա ՚ի՛ր պատասխանի, թէ ո՛չ. զի ոչ հայի ՚ած յարտաքինն տեսիլ մարմնոյ, որպէս հայինն մարդիկ, այլ ՚ի սիրտս և ՚ի ներքինն հանգամանս հոգւոյն։ Մատոյց զերկրորդն և զերրորդն. և ՚ի չհաճիլ սամուէլի ընդ նոսա, հուսկ յետոյ մատոյց զեօթանեսին միանգամայն. բայց և ոչ ընդ մի ՚ի նոցանէ հաճեցաւ սամուէլ։ Հարց ապա ցյեսսէ, եթէ կայցէ՞ նորա և այլ որդի. ետ պատասխանի, թէ կայ միւս ևս փոքրիկ ՚ի դաշտի, որ արածէ խաշն, և անուն նորա

դաւիթ. ասաց սամուէլ՝ ածել զնա վաղվաղակի, զի ոչ բազմեսցուք ասէ, մինչև՝ ի գալ նորա այսր։ Այլ եկն եհաս դաւիթ՝ պատանի կայտառ և առոյգ կարմրադէմ և աչօք գեղեցիկ, և ամենայն մասամբք մարմնոյն վայելուչ։

Այն նմին ժամու ազդեաց ՚ի միտս սամուէլի, և ասէ. արի օծ զդաւիթ, զի դա է բարի։ Ա՛ստ ասէ գիրն. * և առ սամուէլ զեղջիւրն իւղոյ, և օծ զնա ՚ի մէջ եղբարց իւրոց ‖. զոր բազումք լմնանան ՚ի բացատական հոլով, ըստ սովորական ոճոյ եբրայեցւոց յաձախելոյ ՚ի նոր գիրս, այսինքն ՚ի մէջ եղբարց իւրոց զնա օծ, բայց առանձինն ՚ի ծածուկ. վասն զի վտանգ մեծ կայր առաջի ոչ միայն դաւթի, այլև համօրէն տանն յեսսեայ, եթէ հասանէր յունկն սաւուղայ. և դժուարին էր ՚ի ծածուկ ճնալ, եթէ առաջի բազմաց եղեալ էր. զի բայ յորդւոցն յեսսեայ՝ կային անդ և այլք հրաւիրեալք ՚ի ճաշ զոհին։ Այժմ ասելի է, թէ եղբարքն ոչ իմացան զնորհուրդն, գուցէ և ոչ իսկ ինքն դաւիթ. ապա թէ գիտէին հաւաստեաւ, թէ հանդերձեալ է թագաւորել ՚ի վերայ իւրեանց, ոչ արդեօք իշխէին յետոյ այնպէս խոտիւ և արհամարհութիւք խօսել առ նա ՚ի բանակի անդ, ուր առաքեցաւ ՚ի հօրէն բերել ողջոյն զեղբարց իւրոց, որպէս աւեցուք ստորև։ Այս օծումն ոչ հանդիսացոյց զդաւիթ թագաւոր, այլ միայն սահմանեաց զնա ՚ի թագաւորութիւն, տալով նմա իրաւունս առանց՝ զոր ըստ ժամանակին հանդերձեալ էր ժառանգել։ Այլ՝ կատարեալ սամուէլի զգործն յանձնեալ նմա ՚ի տէրէ, գնաց յարիմաթեամ ՚ի տուն իւր. և այնուհետև ոչ ևս երևեցաւ առաջի սաւուղայ։

Այս է այր օծութիւն՝ ասէ գիրն, թէ * Այսպէս հոգի տէրն ՚ի վերայ դաւթի յօրէ յայնմանէ և առյապա ‖. իբր զի ՚ի նմին ժամու ձեռնադրոյց զնա ՚ի մեծ բազմապատիկ ձրիւք կարևորօք առ թագաւորութիւն. տալով նմա իմաստութիւն և հանճար ՚ի մատակարարութիւն կարգաւորապէս թագաւորական իշխանութեանն ՚ի վերայ մեծի ժողովրդեան. և խնամատարութիւն զի-

նուագական հրահանգաց. երկայնմտութեի և արիութեի սրտի. զօրութեի և այժ մարմնոյ գեր՝ի վերոյ քան զսովորականն. զոր՝ի բնէ ուներ, մինչև զառիւծ և զարջ սատակել։ Ընդ այսց ձրիւց ընկալաւ դաւիթ և զպարգև մարգարէութե. զի ըստ ոմանց՝ի հարց ՚ծըց՝ զկնի այսր օծութե սկսաւ դաւիթ զմարգարէահրաշ օրհնութիւնս իւրոց սաղմոսաց նուագել։ Ոմք յաղագս սաւուղայ ասէ գիրն, թէ * Հոգի տէն վերացաւ՝ի նմանէ. և խեղդէր զնա այս չար՝ի տնէ ‖. իբր ասել, ՚ի քայ թողաւ յառանձին խնամողական տեսչութե հոգւոյն ՚ծոյ. և ՚ի թոյլ տալոյ ՚ոյ հարաւ՝ի նա սատանայ՝ մտանելով՝ի նմա, որով և ձչմարտապէս այսահարեցաւ. և նա էր՝ որ լկկէր զնա և տանջէր և հեղձամղձուկ առնէր, և մերթ ընդ մերթ՝ի կատաղութե և՝ի մոլեգնութե ածէր։

Յասկէս իմանան զայս քան գրոյն նախնի հարք։ Ոմք ռաբբիք եբրայեցւոց, ընդ որս և յովհք յարդի մեկնչաց՝ զայս և զայլ ամենայն կէրս՝ որ պատմին՝ի գիրս վասն սաւուղայ, տան մասնաւոր իմն ախտի և հիւանդութե նորա, ՚ի սաստիկ բորբոքմանէ սևամաղձ հիւմթոց պատճառելոյ. թանձր զի և բնական խառնուած նորա էր սևամաղձային. ուստի և էր արդէն կասկածաւոր յամենայն իրս, յողոյողդ և փուփոխական. է՝ զի խրոխտ, և է՝ զի նկուն, տխուր և զուարթ, դաժան և համբոյր, յանդուգն և երկչոտ, գահավէժ և վեհերոտ, հպարտ և խոնարհ, եթէ խոնարհութի արժան իցէ կոչել զլքումն նորա և զնուաճումն ոգւոյ։ Յս ամենայն ևն ծնունդք սևամաղձ հիւմթոց խռովելոյ, և յաւէտ և նուազ վառելոյ. զոր առաւելուին և խայթ խղճի մտաց նորա, սպառնալիք սամուէլի, անպատասխանի մնալ յ՚ոյ, և հանապազորդ երկիւղ անկանելոյ՝ի թագաւորութէ։ Յլ ոմք զայդ ասեն, տակաւին խոստովանին, կամ պարտին խոստովանիլ և զայս՝ թէ այն ամբոխմունք հիւմթոց սաւուղայ՝ չէին անմահն՝ի ներգործութէեց սատանայի, որ առաւելապէս սաստկացուցանէր զամբո-

խուճն մտաց, զի մի զգաստացեալ գայցէ յողջմտու-
Թէ, գարձցի և ապաշաւեսցէ։

Ընդ այս դառնագին աղէտ վտանգի աչխարելի Թագաւորին կարեկցեալ պաշտօնէից նորա, յորդոր լինէին նմա ածել նուագածու երգել քնարաւ առա-ջի նորա ՚ի ժամու բորբոքման ախտին, կամ այսա-կան լկանաց. զի փոքր մի դիւր լիցի նմա, և հան-գիցէ յանբերելի տառապանաց և յանձկուէց սրտի։ Յայսմանէ երևի Թէ և առ եբրայեցիս յայտնի էր զօրութիւն նուագայ ՚ի զիջուցանել և ՚ի խաղաղել զնեղչին ամբոխմունս կրից հոգւոյ և մարմնոյ. զոր բազում պատճառաւք և օրինակօք ուսուցանեն պլու-տարքոս, սենեքա, բարսեղ, կասսիոդորոս, վալե-սիոս, և այլք յոլովք։ Ընդ նմին հնչիւն նուագայ սթափեցուցանեն և սփոփեն զոգիս. զիջուցանեն զվառումն արեան, խաղաղեն զամբոխումն հիւ-թոց. ցրուեն և փարատեն զսևամաղձ հիւթս դառ-նացուցիչս, և այնպէս արիւնն և այլ ամենայն մաղձային հիւթք՝ դառնան յառաջին և ՚ի բնական հաւասարակշռուի իւրեանց։ Վասն այսորիկ նուա-գարանք Թէպէտ ուղղակի ինչ ոչ զօրեն ընդդէմ դիւական ներգործութեանց, բայց զօրեն անուղ-ղակի, ցրուելով զժանտ հիւթս և խաղաղելով զամբոխմունս ոգւոյ, զոր այսն չար առնու իւր գործի ՚ի տանջել զնոսա՝ յորս տիրեալն է։

Ընդ՝ լուեալ սաւուղայ զառաջարկութիւն իւրոց պաշտօնէից, հրամայեաց խնդրել նուագածու քա-ջավարժ, որ գիտիցէ երգել քնարաւ, և ածել առ-նա։ Յայնժամ մի ոմն ՚ի ծառայից նորա ասաց. չէ՛ հարկ երթալ հեռի ուրեք ՚ի խնդիր առն, զի ահա գիտեմ ես պատանի մի ՚ի բեթղեհէմ դաւիթ անուն՝ որդի յեսսեայ, երաժիշտ քաջարուեստ, և գիտելով զյօժարութիւն սաւուղայ՝ որ սիրեր և ՚ի յարգի ունէր զարս հանճարեղս զկորովիս և զպատերազմա-կանս, յաւել ՚ի վերայ Թէ է և այր խմաստուն, այր պատերազմող, հանճարեղ և ձարտարաբան, միանգա-մայն և տեսլեամբ գեղեցիկ, և յամենայն գործս յաջողակ, զի ՚ուր է ընդ նմա։ Յայսպիսի գովութենէ

յորդորեալ սաւուղայ՝ նոյն ժամայն առաքեաց հրեշ
տակս առ յեսսէ՝ ի բեթղեհէմ, որ ւբրև քան
մղոնաւ և եթ հեռի էր՝ ի գաբաայ, և ածին զնա
յարքունիս։ Ա.յլ զի մի ուշանայնաձեռն երևեսցի
առաջի արքայի, յեսսէ հայր նորա պատրաստեաց
արդու մի հացի, և տիկ մի գինւոյ, և ուլ մի յայ
ծեաց, և առաքեաց սաւուղայ՝ ի ձեռն դաւթի որդ
ւոյ իւրոյ։ Փոքր էր պարգևս՝ առն թագաւորի,
բայց շատ էր՝ ի վկայութիւն անկեղծ բարեմտութե
և միամիտ սիրոյ առ թագաւորն։

Յորժամ եմուտ դաւիթ յարքունիս առ սաւուղ՝
ըստ հաշուի կեսարացոյն կաղինեան՝ էր իբր քսան և
հինգ ամաց. իսկ ըստ այլոց՝ որք երկարեն զժամա
նակ թագաւորութեանն սաւուղայ, չևևս էր ժա
մանեալ՝ ի քսաներորդ ամ հասակի իւրոյ։ Ա.յլ
զիարդ և իցէ, փութով գրաւեաց զսիրտ սաւուղայ
՝ի սէր անձին. զի էր պատանի կայտառ, առոյգանձն
գեղեցկադիտակ, տեսլեամբ ազնուական, աչքնո
րա իբրև երկու աստեղք՝ ի ձակատն. ձարտար՝ ի
նուագս, և քաղցրաձայն յերգս. գնացք նորա կամ
քաղաքավարութեամբ սքանչ, արթուն և խոհական.
միանգամայն և քաջք՝ համբոյր, անկեղծ և ան
խարդախ. բայց զոյգ ընդ նմին արիասիրտ, տեւօղ
՝ի վաստակս և քաջ պատերազմօղ. զոր և այնչափ
սիրեաց սաւուղ, մինչև առ չհեռանալոյ նորա յա
չաց իւրոյ, արար զնա իւր կապարճակիր, և ան
միջական անձնապահ անձին իւրոյ, զի միշտ և ընդ
ամենայն տեղիս առընթեր լինի նմա։ Այս առ հաս
տատելոյ զնա յայն չքեղ պաշտօնատարութե՝ առա
քեաց երկրորդ անգամ հրեշտակս առ յեսսէ հայր
նորա՝ ազդ առնել նմա, թէ կամի ունել զդաւիթ
առ իւր. զի եգիտ ասէ չնորհս առաջի աչաց իմոց։
Այս այսպէս սաւուղ յանգիտս գործակից լինէր
անտեսութեան նոյ, ինքնին մուծանելով զյաջորդն
իւր յարքունիս. և ունելով զնա միշտ առընթեր,
տայր նմա պարապ ուսանել զկանոնաման թագա
ւորի, և զնել և դիտել զգնացս արքունի պաշտօ
նատարաց, զիարդ ախուրեն զօրապետաց, զհսորա

մանկութի և զբարութի սպասաւորաց. այն ծանօթութիւք յետոյ պիտանի եղեն նմա ի մատուկարարութի թագաւորութե իւրոյ, ոչ անընտրողաբար վստահանալ ի նոսա: Ա. ժամն կայր ի սպասու սաւուղայ, և յորժամ հասանէր ի վերայ նորա դժնդակ ախտն իբր վերնոտութե, առնեալ ի ներգործութե այսուն չարի՝ ամբոխելով և խռովելով զներքին հիւթս մարմնոյ նորա, առնոյր դաւիթ զքնար իւր և քաջարուեստ հարկանելով միանգամայն և քաղցրանուագ ձայնիւ սաղմոսելով, ցըրուէր զսեաւ դառնամաղձ հիւթն, և զարեան բորբոքութն շիջուցանէր. և այնպէս ի խաղաղել ամբոխմանն հիւթոյ, և ի դառնալ նորա յառաջինն բնական բարեխառնութե, հանգչէր սաւուղ և դիւրանայր նմա. և այսն չար մեկներ ի նմանե:

Ակաց դաւիթ յարքունիս առ սաւուղ զամիսս ինչ, և գարձաւ անդրէն առ հայր իւր ի բեթղեհէմ արածել զոչխարս հօր իւրոյ: Ոմ յայտ պատճառն՝ որ վասն մեկնեցաւ դաւիթ ի սաւուղայ. են՝ որք ասեն, թէ գուցէ ձանձրացեալ նորա յաղմկալից կենաց անտի արքունեաց՝ գոլով սովորեալ ի խաղաղական դաշտային կեանս, միանգամայն և յամպարշտութե սաւուղայ տագնակացեալ, պատճառանօք խնդրեաց ի նմանե՝ թոյլ տալ նմա առ ժամանակ մի երթալ ի տուն իւր հայրենի: Ոմք սաւուղ թերևս թեթևացեալ յախտէն, կամ ըստ յեղյեղուկ անհաստատ բարուց իւրոց ցրտացեալ ի սիրոյ դաւթի՝ անդիմադարձ ետ նմա հրաման: Այլք (որ առաւել հաւանելի թուի,) ասեն՝ թէ յեսսէ ծերունի հայր նորա, որ կարի խանդակաթ էր առ նա իբրև առ կրսերագոյն որդի՝ զամենայն միխիթարութե իւր ի նա ունելով, խնդրեալ իցէ զնա ի սաւուղայ՝ ունել առ ընթեր իւր զօրավիգն և ցուպ ծերութե իւրոյ, տալով փոխանակ նորա զերիս երիցագոյն որդիս իւր, զեղիաբ զանդրանիկն, զամինադաբ զերկրորդ, և զսամմա զերրորդ, երթալ զհետ սաւուղայ ի պատերազմ:

ԳԼՈՒԽ ԺԴ.

Պատերազմ պարսից ընդ անանուն ինչ գաղթական։

Ընդ այն ժամանակս այլազգիք փղշտացիք անհաշիւ թշնամիք եբրայեցւոց, կամեցեալ հանել զվրէժ հարուածոց զոր ի նախանձեալ աւի ընկալան ի նոցանէ, զօրաժողով եղեն կազմեցին պատրաստեցին բանակ ահեղախրոխտ հզօրագոյն քան զառաջինն, և ելեալ գումարեցան պաշարել զսոկքովք քաղաք՝ որ ի ցեղին յուդայ առ սահմանօք բենիամինի, գրաւեալ զլեառն մերձ յափեսդոմին ընդ մէջ սոկքովայ և ազեկայ։ Լուեալ սաւուղայ զշարժուածն այլազգեաց, գումարտակ արար և ինքն զարս պատերազմօղս իսրայէլի, անցեալ անձամբ ի գլուխ բանակին. և եկն կալաւ զհանդիպակայեցեալ լեառն ընդդէմ այլազգեաց։ Եւ այնպէս երկու բանակք կային դէմընդդէմ միմեանց ձակատեալ, նոքա յայնմ կողմանէ ի վերայ լերինն, և սոքա յայսմ կողմանէ նոյն գունակ ի վերայ լերինն, և հովիտն կոչեցեալ կաղնւոյ՝ ի մէջ նոցա. հայէին ի միմեանս, բայց ոչ սոքա և ոչ նոքա իշխէին յառաջ խաղալ և ի դիմի հարկանել միմեանց. այլ միայն մերթ ընդ մերթ երևեցուցանէին սուտ շարժուածն իւրեանց և պատրաստութիւն ի մարտ. աղաղակէին և ընթանային իբր ի պատերազմ ձակատ առ ձակատ. բայց ի բանակէ իւրեանց ոչ հեռանային։ Օ՜այս կեղծեալ պատերազմ առնէին ի բազում աւուրս։

Ա՜պա այր մի զօրաւոր գեթացի դողիաթ անուն՝ վիթխարի հասակաւ, խրոխտ և ամբարտաւան, ի ձակատէ այլազգեաց յառաջ մատուցեալ ի ծայր լերինն՝ ետ նշան ի ձակատն իսրայէլի, իբր թէ ունի ինչ խօսել ընդ նոսա։ Օ՜հանգամանս յաղթահասակ դիտակի մարմնոյ առնս, և զսպառազինութիւնն նորա մանր ստորագրէ՝ թէ զիրն.

բարձրութիւն նորա ասէ՝ էր վէց կանգուն և թզաւ. այսինքն իբր ժէ ոտնաչափ և կէս, հաշուելով զկանգունն ունկի քան և կէս. ուստի և բարձրութիւն նորա էր հաւասար երկուց վայելչահասակ մարդոց։ Ի գլուխն ունէր սաղաւարտ պղնձի. և ի պահպանութիւն լանջաց զգեցեալ էր զրահս շղթայապործս. կշիռ զրահիցն նորա հինգ հազար սիկղ. (ըստ հռովմէական կշռոյ 208 լիպրէ, և ունկի 4. հաշուելով զմի լիպրէ 12 ունկի.) առնապանք նորա պղնձիք ի վերայ բարձից նորա. և վահան պղնձի ի վերայ թիկանց նորա. բուն գեղարդեան նորա իբրև զտաւրի ոստայնանկաց. և տէգ ի վեց հարիւր սկեղ երկաթոյ (այսինքն իբր 25 լիպրէ)։ Այս յայսպիսի սպառազինութիւն՝ միանգամայն և ի բուռն զօրութիւն բազկաց իւրոց վստահացեալ, էջ մերձեցաւ ի Ճակատն իսրայէլի, այնչափ զի լսելի լինի նոցա բարբառ նորա, և կապարճակիր նորա ընդ նմա. և յանդուգն ժպրհութիւք խնդրէր ի նոցանէ այր մի զի ոք և կամիցին՝ իջանել և մենամարտիլ ընդ նմա. զի մահուամբ միոյ յերկուց՝ վճարեսցի պատերազմ, և կողմն մեռեալն անկցի ի ծառայութիւն յաղթողին. * ընդէր ասէ ելանէք Ճակատել ի պատերազմ ընդդէմ մեր . . . ընտրեցէ՛ք ձեզ այր մի, և իջցէ առ իս. եթէ կարասցէ կռուել ընդիս և հարկանել զիս՝ եղիցուք մեք ձեզ ի ծառայս. ապա թէ ես յաղթեցից, և հարից զնա, եղիջիք դուք մեզ ի ծառայս, և ծառայեսջիք մեզ ։ Ո՛յս հրաւէր երկիցս յաւուրն առնէր ընդ առաւօտն և ընդ երեկս՝ աւուրս քառասուն. և առ առաւել զրդռելոյ և երգիծանելոյ զիսրայէլ, յաւելոյր ասել, ահաւասիկ ես նախատեցի զՃակատդ իսրայէլի յաւուր յայսմիկ. և դառնայր անդրէն ի բանակն իւր։

Այաւուղ Թէպէտ և քաջ սպարապետ և հզօր պատերազմող. որպէս և աբեններ, և այլ ընտիր ընտիր զօրավարք նորա որք անդ էին ընդ նմա, բայց լուեալ զխիզախուժն մեծաբանութիւնէ գողիաթու, զահի հարան և ոչ կարէին մարթել գտա-

նել հնարս ինչ, և ո՛չ ի նոցանէ ոք զօրաւորագոյն իշխեր փորձ փորձել ընդ նմա։ Վասնզի այլ է գիտել առաջնորդել զօրս ի պատերազմի, և այլ՝ գիտել գալ բազուկ առ բազուկ ընդ այնպիսի հրա կայազօր առն։ Վասնի ոչ գոտաւ յայնժամ անդ ընդ սաւուղայ. քանզի որպէս ասացաք ի վերոյ, դարձեալ էր ի բեթղեհէմ արածել զոչխարս հօր իւրոյ. այլ ոճ, որով կշռողութիւն ձեռին է յաղթութիւն, նման կամեցաւ տալ զմիջոցանակն յաղթութիւնէ յառաջել յամօթ և ի նախատինս ամբարտաւանին։ Ընդ այն աւուրս յեսսէ ծերունի հայր նորա՝ հոգալով վասն երից երիցագոյն որդւոց իւրոց՝ որք էին ընդ սաւուղայ ի բանակի անդ, կոչեաց զդաւիթ, և տուեալ նմա արդու մի փոխանդոյ, և տասն նկատնակս՝ տանել եղբարց իւրոց. և տասն բլիթս կամ գլուխս աղնիւ պանրոյ ընծայ հազարապետին՝ ընդ որով էին զինուորեալ եղբարք նորա, առաքեաց զնա ի բանակն, բերել նմա զլոյծ վասն նոցա, թէ զիարդ կան. և իմանալ թէ ունիցին պէտս իմիք։

Գնաց դաւիթ ըստ հրամանի հօրն իւրոյ. և եհաս ի բանակ անդր ի ժամուն, մինչ երկոքին կողմանք առնէին զսովորական շարժմունս սուտ պատերազմի, ընթանային հանդէպ միմեանց, փողս հարկանէին և աղաղակէին։ Այն գոչիւն փողոց և զաղաղակ նոցա և զշառաչիւն զինուց լուեալ դաւթի, եթող զամենայն զոր ինչ բերեալ էր ընդ իւր՝ ի ձեռս վանապանին, որ պահէր զկարասիս բանակին, և ինքն ընթացաւ ի Ճակատն հարցանել զդիմնուորսն վասն եղբարց իւրոց։ Եւ մինչդեռ նա խօսէր, ահա եկն դարձեալ գողիաթ, և սիգալով Ճեմ առեալ խօսէր ըստ առաջին մեծաբանութեանէ իւրոյ. զոր լուաւ և դաւիթ. խակ զօրք իսրայէլի զարհուրեալ յերեսաց նորա փախեան առ հասարակ ի բանակին իւրեանց։ Յայնժամ արքն ընդ որոց խօսէր դաւիթ՝ ասեն ցմիմեանս ի լուր դաւթի, տեսանէ՞ք զայրն զայն որ ելանէ նախատել զիսրայէլ. և չիք ոք՝ որ իշխեսցէ ընդդէմ ելա-

նել նմա. ուր խոստացաւ արքայ մեծացուցանել զնա յոյժ, և զդուստր իւր տալ նմա կնութեան, և զտուն հօր նորա առնել ազատ ի մէջ իսրայէլի՝ որ սպանանիցէ զայլազգին զայն։ Դաւիթ ոչ շատացեալ բանիւք նոցա, եհարց և այլոց վասն խոստմանցն արքային, միանգամայն և վստահացեալ յաջողութեան օգնականուն նորին, արհամարհելով զայլազգին ասէ. * Ո՞վ ինչ է այլազգին այն անթլփատ, զի նախատեաց զձնակատս ոյ կենդանւոյ ։

Այս բան դաւթի՝ եհաս ի վերայ եղիաբ երից եղբայրն նորա, բարկացաւ սրտմտութիւն դաւթի յանդգնական իմն անապարծութիւն համարելով զբանս նորա, խօսեցաւ նմա խոստոյնս և լի նախատանօք. * Ինդէր ասէ՝ բնաւ իջեր այսր, և յո՞ր ձեռն թողեր զսակաւ ոչխարսն յանապատի անդ. ես գիտեմ զհպարտութիւն քո՝ և զչարութիւն սրտի քոյ, զի վասն տեսանելոյ զպատերազմն իջեր ։ Նա ասէ դաւիթ, և արդ զի՞նչ արարի, ոչ ապաքէն լոկ բանք են ասացեալք. զայս ասացեալ՝ խոյս ետ անտի, և անց ի միւս կողմն, և խօսեցաւ ըստ նմին բանից՝ ցուցանելով զանձն պատրաստական եւանել ընդդէմ այլազգւոյն ։ Պատմեցան սաւուղայ բանք դաւթի. և ածին զնա առաջի նորա. և ասէ դաւիթ ցսաւուղ. * Մի՛ անկսկի սիրտ ոք ի վերայ իւր. ծառայ քո երթիցէ և մարտիցէ ընդ այլազգւոյն ընդ այնմիկ ։ Ասէ սաւուղ որ դեռ ցայնժամայր սիրէր զդաւիթ, խնայելով ի նա՝ ոչ կամէր թէ յայն վտանգ արկանիցէ զանձն. դու՝ ասէ, մանուկ ես, և նա այր պատերազմող ի մանկութենէ իւրմէ, գուցէ ոչ կարիցես երթալ կռուել ընդ այլազգւոյն ։ Ասէ դաւիթ առ բառնալոյ զամենայն կասկած սրտի արքային, ասէ թէպետ մանուկ եմ ես, բայց ցայսօր առանց զինուց լոկ ձեռօք իմովք պատառեցի արջս և առիւծս, և կորզեցի ի ժանեաց նոցա զոչխարս, զոր յափշտակէին ի հօտէ անտի իմոյ. եղիցի և այլազգին այն առաջի իմ իբրև զմի յառիւծոց անտի. և իբր ոչ երթայց և սատակեցից զնա, որ իշխեաց նախա-

տել զանակս այլ կենդանւոյ։ Տէր ինձ որ ապրեցոյց զիս ի ձեռաց առիւծուն՝ մինչ պատերազմէի վասն անբան հօտի հօր իմոյ, այժմ ի պատերազմել իմ վասն փառաց նորա, և ի բառնալ զնախատինս յիսրայէլ, ապրեցուսցէ զիս և ի ձեռաց գողիա։

Օ արմնցեալ սաւուղայ ընդ արիութեն պատանւոյն, և յաւէտ ընդ աներկմիտ վստահութեն յամենաղօր օգնականութեն ինն, երթ ասէ, և ասր եղիցի ընդ քեզ. և առ ի պատիւ՝ զգեցոյց նմա զիւր անձնական սպառազինութենին. զոր հանդերձեալ էր դաւիթ յաւուր միում կրել առիրաբար, և փառաք ի կիր արկանել. այլ զի չև էր հասեալ ժամանակն, և զի պարտ էր նմա զայն յաղթութեիւն վճարել ոչ զինուորական, այլ հովուական զինու և հանդերձիւ, վասն որոյ կամեցեալ նորա առնել քանի մի քայլ առ ի փորձ, եառես զի արգելք էին այն զինք ոտից նորա. զի չէր վարժ այնպիսի սպառազինութենէ զոր և պարզմտութենէ յայտ արար արքայի. ոչ կարեմ ասէ երթալ սոքօք, զի չեմ հմուտ. թող զի ես ըստ իմում սովորութենէ զինեցայց։ Օ այս ասացեալ՝ ի բաց եդ զայն ամենայն, և առ ի ձեռին զգուպ իւր. և ընտրեաց հինգ քարինս ողորկս ի հեղեղատէ անտի, և եդ զնոսա ի հովուական մախաղին, և զպարսն ի ձեռին իւրում ունելով, կէզ յաստպարէզ մարտին, մինչ այլազգին ձեմ առեալ՝ ունելով առաջի զվահանակիր իւր՝ զսովորականն մեծաբանէր բարբառ։

Երբև եառես գողիաթ զդաւիթ՝ զի գայր աներկիւղ, սկսաւ և ինքն հանդարտաքայլ մատչել ընդառաջ. երբև մերձեցաւ, և եառես զնա պատանի ծաղկահասակ, գեղեցկավարս, մեղուակն և քաղցրահայեաց, ցուպ ի ձեռին, և մախաղ ի գօտին, նախատինս համարելով անձին ընդ մանկան այնպիսւոյ կալ ի կռիւ, ասէ ցնա. զիարդ, միթէ շո՞ն ելեմ ես, զի ցպով և քարամբք գաս ի վերայ իմ. և նզաւ ի տեղւոջն՝ ինալով զի մերձեսցի։ Եւակ դաւիթ ետ պատասխանի, նա՝ վատթար ևս

ես քան զշուն : Եւ այն բան կատարեաւ այլազգւոյն , անէծ զդաւիթ անուամբ չինծոյ իւրոյ , և ասէ . Ելք առ իս , և տայ զմարմինդ քո թռչնոյ երկնից , և գազանաց երկրի : Ասէ դաւիթ . դու գաս ՚ի վերայ իմ սրով և գեղարդեամբ և ասպարաւ , և ես գամ ՚ի վերայ քո անուամբ տեն զօրուցն Ճակատուս իսրայէլի՝ զոր նախատեցեր այսօր . և փակեսցէ զքեզ տէր այսօր ՚ի ձեռս իմ , և սպանից զքեզ . և առից զգլուխ քո ՚ի քէն , և արարից յաւուր յայսմիկ կոտորած բանակի այլազգեացդ այնպիսի , զի թռչունք երկնից և գազանք երկրի գտցեն Ճարակ լինելիք ՚ի յագուրդ՝ ՚ի դիակունս ձեր : Եւ ծանիցէ ամենայն ժողովս այս որ տեսանէ՝ թէ գոյ տէր ՚ի մէջ իսրայէլի . որ չունի պէտս սրոյ և գեղարդեան ՚ի փրկել . զի տեն է պատերազմն , և մատնեսցէ զձեզ տէր ՚ի ձեռս մեր : Այսպէս խօսեցաւ ծածասէր պատանին՝ ոչ ինչ ընծայելով անձին , այլ զամենայն ՚ի բոլոր մասունս տեն նայ իւրոյ խոստովանելով գործ :

Յայս բան դաւթի՝ յարուցեալ այլազգւոյն մերձ ձեռաւ առ նա , յայնժամ առնապարեալ դաւթի՝ ընթացաւ ընդդէմ , և շարժեալ աջոյ ձեռամբ զսլարատաւիկ իւր՝ պարսաքարեաց և եհար կշռակի զձակատ այլազգւոյն , և ոչ ևս կրկնեաց , զի եմուտ քարն ընդ սաղաւարտն ՚ի ձակատն , և կործանեաց զահաւոր հսկայն . և ընթացեալ դաւթի ՚ի վերայ նորա , առ զսուսեր նորին , և նովին եհատ զգլուխ նորա : Տեսեալ այլազգեացն , զի մեռաւ զօրաւորն նոցա , զահի հարան , թողին զտեղի իւրեանց , և առ հասարակ ՚ի փախուստ դիմեցին : Եւ սկզբնք իսրայէլի աղաղակ բարձեալ պնդեցան զհետ նոցա մինչև ցդուռն գեթայ , որ հաներ ՚ի դաշտն , և մինչև ցմիւս դուռն՝ որ հաներ յասկաղոն , վասն որոյ և կոչեր դուռն ասկաղոնի . և զձանապարհայն հարին և կոտորեցին յայլազգեաց անտի . այլ երևի թէ անկեալքն չեղեն կարի բազում . մի՝ զի գիրն ոչ զթիւ անկելոցն նշանակէ , և ոչ ասէ թէ բազումք անկան . և երկրորդ՝ զի փութով անդրէն

դումարեցան ՚ի բանակ, և ոչ կասեցան ՚ի պատերազմել ընդդէմ սաւուղայ։

Այնչափեւ զօրք իսրայէլի գՀետ փախստէից պնդէին, դաւիթ առեալ զգլուխ այլազգւոյն, դարձաւ ՚ի բանակէտղ իսրայէլացւոց. և առեալ զնա աբենեերայ՝ եմոյծ ՚ի խորսնն առաջի սաւուղայ։ Այն զի յառաջ քան զայն՝ մինչ ետես սաւուղ, զի դաւիթ իբր առաջի աչաց իւրոց սպան զայլազգին, որով և ըստ խոստման իւրում պարտաւորեցաւ փեսայացուցանել զնա. կամեցեալ լիագոյն տեղեկանալ յաղագս ազգատոհմի նորա. եՀարց ցաբենները, Թէ յի՞նչ զարմէ իցէ. այլ նա ոչ ձանաչելով յայնժամ զդաւիթ, ասաց չգիտեմ։ Այնմ իրի ՚ի դառնալ դաւթի, աճ զնա առ արքայ, զի ինքնին տեղեկասցի ՚ի նմանէ. որպէս և եղև։ Օ ի եՀարց ցնա, Թէ ո՞ր որդի իցէ. (կամ ըստ այլ Թարգմ. յորմէ՞ զարմէ, կամ ՚ի տոհմէ իցէ.) ոչ խնդրեր սաւուղ՝ Թէ ո՞վ իցէ դաւիթ, զի ձանաչէր զնա. այլ զաղնուականութիւն ծնողին և նախնեացն, կամ զզարմ և զազգատոհմ նորա կամէր գիտել։ Այս յիրաւի. վասն զի այլ ծանօթութեի խնդրի զառնէն, զոր կամիցի ոք ունել լոկ իբրև նուագածու, և այլ յորժամ կամիցի փեսայացուցանել։ Յառաջնումն անդ եմուտ դաւիթ յարքունիս իբրև նուագածու. վասն այնորիկ իբրև լուաւ սաւուղ ՚ի ծառայէն՝ եԹէ որդին յեսսեայ բեԹղեհէմացւոյ քաջ հմուտ է յայնմ արուեստի, առաքեաց վաղվաղակի խնդրել զնա ՚ի հօրէ նորա, առանց այլևս նոր ծանօթութիս լինչ խնդրելոյ զվիճակէ հօր նորա, կամ զտոհմէ և զազգէ նորա. զի այն ծանօթութիք յայնժամ աւելորդ էին։ Այսոյ յետ վՀարելոյ դաւթի փառօք զգործ ընդ այլազգւոյն, կարևոր էր նմա յոյժ գիտել զվիճակ տան և զարմի նորա, որում ունէր տալ զդուստր իւր կնութիե. վասն այնորիկ ինքնին եՀարց ցնա, Թերևս ակնունելով՝ զի և առ յարգի երևեցուցանելոյ դաւթի զտուն իւր, փոխանակ անմիջական հօրն՝ կամ զոյգ ընդ նմա՝ անուանեսցէ զոք ՚ի նախնեաց իւրոց, որ նշա-

նաւոր և երևելի լեալ էին յիմիք. զի սովորական էր առ եբրայեցիս՝ ի տալն ծանօթութեի զանձանց՝ ի մէջ բերել զարս երևելիս ազգատոհմին իւրեանց. զոր յառաջ գտանեմք՝ ի ծնբ գիրս։

Այս արդարև կարօղ էր դաւիթ յառաջ բերել յազգատոհմէ իւրմէ արս նշանաւորս ոչ միայ քաջութեամբ. զբոոս, զսաղմոն, զնաասոն, զեսրոմն՝ այլովքն հանդերձ, առենեքեան արք երևելիք՝ ի զարմէ իւրմէ, որք եղեն իշխանք ցեղին յուդայի։ Այլ հասեալ պատանին՝ յորմէ հեռի էր ոգի սնափառութեե, և ոչ զմի ոք՝ ի սոցանէ յիշատակեաց, բայց միայն զհայրն իւր աննշան. որպէս եմ ասէ ծառայի քոյ յեսսեայ բեթղեհէմացւոյ։ Հանդերձ այսու ամենայնիւ, ոչինչ տատրադէպ թուի և ևս ասել, թէ գուցէ սաւուղ իսպառ մոռացեալ էր զդաւիթ, և ոչ ևս ձանաչէր զնա. և այս վասն ամբոխման յիշողականի նորա՝ ի յառաջ դիւականն լկանայ, և՝ ի սաստիկ խռովելոյ մելամաղձի նորա՝ մինչ էր դաւիթ յարքունիս անդ առնմա։ Այլ կամ սակս փոփոխուե զգեստուց. զի յառաջնումն էր զգեցեալ վայելչապէս ըստ այլոց արքունի պաշտօնէից. իսկ յերկրորդումն երևեցաւ առաջի սաւուղայ՝ ի հովուական հանդերձս գծուծս. ցպով, մախաղիւ, և պարսատկաւ, օտար գլխովին յառաջնոց կերպարանաց։ Այլ զնաւրդ և իցէ, թողեալ զայս՝ մատիցուք անդրէն՝ ի կարգ պատմութենն։

ԳԼ. ԺԱ.

Յոհաննան սերտ բարեկամութիւնք կապէ ընդ տաւնէ։ Այնոյ պարտուորս նուաճելով ղերգս յաղնութիւնէ ճեծայուցանելն ղբաւիլն ման զաւուղ։ Վանն այնորիկ խնդրէ սաւուղ սպանանել ղբաւիլն։ Աւուղ սպէ դաշինն, պի ճռնանակ երէց դոփերն, ղոր նոսպայա, պայ ղերկրորդ դուռդըր էր։

Յորժամ խօսէր դաւիթ առաջի սաւուղայ, անդ էր և յովնաթան. որոյ ուշ եղեալ համեստ և հանճարեղ բանից պատասխանուցն նորա, միանգամայն և դիւցազնական առաքինութիւնս նշմարեալ ՚ի նմա, յարեցաւ ՚ի սէր նորա։ Անաւանդ զի և կարի նմանութիւն բարուց և ոգւոյ և յօժարութիւն գոյր ՚ի մէջ երկոցունն, որ է զօրաւոր յօդակապ յանկուցիչ սիրոյ։ Օ՚ի երկոքին քաջք էին և կռուողք. երկոքին հայրենեաց, կրօնի, և խորայէլեան անուան և փառաց նախանձախնդիրք. երկոքին անկեղծք, արդարամիտք, անխարդախք և աննախանձք։ Ալ ման որոյ ոչ յովնաթանու անլուծանելի յօդիւ սիրոյ կապեցաւ ընդ ոգւոյն դաւիթ. և իբր թէ ոգեխառնեալ՝ եղեն մի սիրտ և մի ոգի յերկուս մարմինս։ Այս ուխտեաց յովնաթան ուխտ դաւիթ միջնորդենաւոր բարեկամութիւնք, սիրել զնա ըստ անձին. առ որոյ հաստատութիւն մերկացաւ յանձնէ զարքունի զզարդ և զզէնս մինչև գոտս սեր իւր և ցկտմար, և ետ զայն ամենայն սիրելւոյ իւրում դաւիթ. և այնուհետև կալաւ սաւուղ զդաւիթ առ իւր։

՚ի վաղիւ անդր դարձան զօրքն խորայէլի ապստակեալքն զհետ այլազգեաց, և եկին կալան զբանակետղ նոցա ժողովել զկապուտ կողոպուտ նոցա։ Լսեալ սաւուղայ տեսեալ՝ զի չկայր ինչ հարկ

կալոյ նորա ՚ի բանակի անդ, զարձ սրար ՚ի գա-
քաւս· որ իբր քան աշխարհագրական մլոնաւ հե-
ռի էր ՚ի տեղւոջէ անտի, ունելով ընդ իւր և զդա-
ւիթ։ Այս զձմեռնապարհային յաւետեան քաղաքաց ընդ-
որս անցանէր արքայ, ելանէին ընդ առաջ նորա
դաս դաս կանանց պարաւորաց Թմբկօք և ծնծղայ-
իւք, և պար առեալ նուագէին ցնծութիւն երգս
յաղթութեանն ՚ի գովեստ սաւուղայ, և դաւթի· ուր
թէպէտ զսաւուղ յառաջ դասէին, բայց զգովեստ
դաւթի քան զնորայն բարձրացուցանէին· քանզի
յաւարտ իւրաքանչիւր տան՝ մի դասն ձայնակցութիւն
ընկերաց իւրոց կրկնէր ասելով· * Այհար սաւուղ
զհազարս ‖· իսկ միւս դասն պատասխանէր· * և
դաւիթ զբիւրս ‖։

Ծանր էր և խոցոտիչ սաւուղայ այս անխոր-
հուրդ երգ գովեստի· քանզի ո՞ ոչ գիտէ՝ թէ քա-
նի՞ ծանր է և անբերելի առն թագաւորի, եթէ
ոք ՚ի հպատակաց իւրոց դիցի ՚ի համեմատութիւն
ընդ նմա· և գեր ՚ի վերոյ քան զնա դասեսցի։
Այս առ աւել սաւուղայ, որ սրդէն վարանէր կաս-
կածանօք վասն թագաւորութեանն իւրոյ, անջինջ
ունելով ՚ի սրտի զմարդարէութիւնն սամուէլի, թէ
* խնդրեսցէ իւր Տէր այր ըստ սրտի՝ իւրում· · ·
իշխան ՚ի վերայ ժողովրդեան իւրոյ ‖· ա· Ընգ·
ժէ· 14։ Զայն իրի դառնացաւ յոյժ վասն բանիցն
այսոցիկ, որք էին իբր մի մի սլաք ՚ի սիրտ նորա·
և ասէր ՚ի մտի, դաւթի ետուն զբիւրս, և ինձ
ետուն զհազարս· արդ զինչ ևս պակաս իցէ նմա,
բայց եթէ նստիլ յաթոռ թագաւորութեանն իմոյ, և
ինձ իշխանել ամենեցուն։ Անտանելի էին որք երգէին, վա-
որոյ չէր արժան մեծ ինչ գրել զբանս նոցա· բայց
դիւրին ևս էր բազմութեանն ունկն դնել նոցա սխորժ
հաճութեամբ։ Վասն էին բառքն, այլ վտանգաւորք,
յորոց մեծագոյն խռովութեանն մարթ էր յառնել։
Այրանալ ընդդէմ կանանց՝ ՚ի զուր էր· լռեցու-
ցանել զնոսա, կամ պատժել, էր գրգռել զարս և
զտհմայինս նոցա։ Վասն որոյ զամենայն զայրոյթ
սրտի դարձոյց սաւուղ ՚ի վերայ դաւթի· զոր թէ-

պէտ առ ժամն կամէր պատրուակել, զի ՚ի դիպոջ ժամու միանգամայն թափեսցէ ՚ի նա, այլ ոչ կա- րաց այնպէս ծածկել, զի մի զգայցէ դաւիթ. որ և յայն սակս խնդրեաց յարքայէ դառնալ ՚ի տուն իւր: Այլ նա յատահովագոյն ևս վասն անձին վար- կուցեալ պահել զնա մօտ առ իւր ընդ պատրուակաւ պատուոյ, ոչ ետ նմա դառնալ. բայց միայն եթող՝ զի տարցի զգլուխ այլազգւոյն յերուսաղէմ, հար- կանել ՚ի ցից ՚ի տես և յահարկութիւն յերուսացւոց, որք տակաւին ՚ի ձեռս իւրեանց ունէին զվէրին ամրոյն:

Եւ յաւուր երկրորդի զկնի դառնալոյ դաւթի յերուսաղէմայ՝ ջար և այսակիր ախան սաւուղայ յորմէ հանգուցեալ էր առ ժամանակ մի՝ անդրկն նորոգեցաւ. թերևս ՚ի յուզմանց չարանախանձ մնախանայ սրտին, և ՚ի դժոխային կատաղութենէ սրտմտութենէ. որք բանան ձանապարհ մտից այսոյն չարի: Զեմը ՚ի տան իւրում գեղարդն ՚ի ձեռին, երգելով երգս անճանօթս, գուցէ և ՚ի լեզու օտար, հանդերձ այլանդակ և անհեթեթ շարժ- մամբք զօրէն մնլեգնելոց և դիւահարաց: Եւ դաւիթ առ ՚ի սփոփել և հանգուցանել զնա, հար- կանէր զտաճնաղեանն իւր նուագարան, և երգէր առաջի նորա, որպէս սովոր էր հանապազ, մինչ այն ախտ հասանէր ՚ի վերայ արքայի: Այլ սա- ւուղ առաւել միտ դնէր դիւաշարժ գրգռութենէ ախտին նախանձու, քան քաղցրաձայն նուագե- դութենէ, յածեցուցեալ զմիտս ՚ի յուզմունս խոր- հրդոց կորուսանել զդաւիթ, ասելով՝ հարից կա- րեցից զդաւիթ գեղարդեամբս ընդ որմն: Ա՛յս հր- նարեր դիւրել սմա ՚ի դիւալլուկ տանջանաց. իսկ սա խնդրեր սպանանել զժիշկ իւր: Վանզի այն ինչ դաւիթ ուշ դնէր լաւ ևս գեղգեղել. և քաղց- բացուցանել զբարբառ իւր, ահա յեղակարծումն ձգեաց սաւուղ ամենայն զօրութիւք իւրով զգեղարդն ՚ի նա՝ բայց վրիպեցաւ, զի խուսեաց դաւիթ: Յայտ է թէ զայս փորձ միւսանգամ արար սա- ւուղ. զի ասէ գիրն վասն դաւթի, թէ խոյս ետ

յերեսաց նորա երկնից։ Զուցէ արդարամիտն դա-
վիթ՝ ըստ իւրում անմեղութեանէ, ըստ դիպաց իմն,
և ոչ՝ի սրտին չարութենէ համարելով զայն գործ
սաւազայ, ոչ հեռացաւ՝ի տանէն. կամ թերևս
նա ինքն սաւազ իւրոյ ախտին տալով զգործն ա-
կամայ, ոչ եթող զնա մեկնիլ. այլ նուագել ըստ
սովորութենն. և յայնժամ գուցէ փորձեալ էր
զերկրորդ փորձն. բայց և զայն՝ի զուր։ Այս եւ
գաւիթ յերեսաց նորա։

Այս կրկին վրիպակ գեղարդեան սաւազայ
արտաքոյ ակնկալութեան իւրոյ, զի չէր սովոր եր-
բեք վրիպել, եաս նման՝ի միտ առնուլ, թէ խնամ
ոմն է՝ի վերոյ գաւթի, և նա պաշտպանէ նմա։
Ահագնանայն և տեսեալ զնովին գործով յայտ-
նեցաւ չարութենէ սրտի իւրոյ ընդդէմ գաւթի, զոր
ըստ անձին չափելով կասկածէր թէ՝ի թշնամու-
թենէ նորա դարձեալ էր գաւիթ արդարն այն և
անյիշաչարն, երկեաւ այնուհետև առ իւր պահել
զնա։ Այլ առ երեսս կամեցեալ փառաց հեռացու-
ցանել զնա յիւրմէ, այլ իրաւ՝ի բերան սրոյ այլազ-
գեաց խորհելով մատնել, կացոյց զնա իւր հազա-
րապետ. տուեալ ընդ ձեռամբն նորա գունդ մի
հազար սրանց, և արձակեաց զնա երթալ մարտն-
չել ընդդէմ այլազգեաց, որք չև ևս էին գումա-
րեալ՝ի բանակ, այլ խումբ խումբ առապատակէին
՝ի սահմանս իսրայէլի։ Այդ՝ առեալ գաւթի ըզ-
հրամանատարութենէ՝ի վերոյ հազարացն, անդամ
գաղ միեցաւ՝ի գործ։ Այլաներ առ պիրն, և
մնաներ առաջի ժողովրդեանն. այս է՝ ոչ միայն
յօգուտ հասարակաց աշխատ լիներ՝ի բազում իրս,
այլև ելաներ ածելով զգունդն իւր՝ի մարտ ընդ-
դէմ այլազգեաց. հարկաներ զնոսա՝ ուր և գտա-
ներ, և փախստական առներ, և մտաներ դառնա-
լով յաղթանակաւ։ Ոչար՝ի շարժման կայր. ՝ի
բազումն և՝ի ծանուցանս ձեռնարկեր, բայց և բազում
իմաստութենէ և հասուն խորհրդով կշռեր և կար-
դեր զգործառնութենիս իւր. որով և միշտ գովեալ
և փառաւք հաներ՝ի գլուխս։ Այսպէս զի և ՚ոճծ յա-

ջողեր նմա, յոր ջամենայն յոյս իւր բովանդակապէս ունէր հաստատեալ։

Ա. Այս գեղեցիկ յաջողութիւն նորա, և արիական քաջութիւն և իմաստութիւն, ընդ որս և հեզահամբոյր քաղցր մարդասէր և հանճարեղ բարք և գնացք նորա, որ ոչ միայն զիւրոյ գնդին, այլև զամենայն ժողովրդեան զսիրտս յինքն գրաւեաց, զի ըստ գրոյն ամենայն իսրայէլ և յուդայ սիրեր զդաւիթ, յաւել զկասկած սրտին սաւուղայ, յոր սակս և նա յաւել զնախանձս կորստեան դաւթի։ Այլեայց զնա զառաջեաւ, գովեաց զքաջութիւն նորա և զմիամիտ ծառայութիւնն. և յիշեցուցեալ զխոստումն՝ զոր խոստացաւ, տալ զդուստր իւր կնութեան այնմ որ սպանանիցէ զգողիաթ, ասէ արդ ահաւասիկ դուստր իմ երէց մերովբ, տայց զնա քեզ կնութեան. բայց լեր դու ինձ յորդի զօրութեան, և մի դադար ըստ ցից պատերազմիլ զպատերազմս տեառն, և առնել քեզ անուն քաջութեան, որով և արդարացուսցես առաջի ամենայն իսրայէլի զընտրութիւն՝ իմ լինելով արժանաւոր փեսայ արքայի։

Ա. Յոպիսի գեղեցիկ յուսադիր քաղցրաբանութեամբ զնանրական նենգ խորհուրդ սրտին հնարեր պատրուակել. խոստանայր զդուստրն նմա՝ի կնութեան, և զփեսայն խնդրեր սպանանել։ * Արի եղիցի (ասէր՝ի սրտի իւրում) ձեռն իմ՝ի նա, այլ եղիցի՝ի նա ձեռն այլազգեացն ‖։ Պաւիթ չիմացաւ զնենգութիւն լեզու մղձկեալ սրտին սաւուղայ. վասն այնորիկ ըստ հեշտ և համբոյր բանից նորա պարզմտութեամբ արար պատասխանի. Արի եմ ես ասէ, և որ արդիւնք իմ առաջի արքայի. կամ զինչ վիճակ և պայման կենաց աղգատոհմի հօր իմոյ. ոչ նորա մեծութիւն կամ իշխանութիւն՝ի մէջ իսրայէլի, զի արժանացայց լինել փեսայ արքայի։ Սաւուղ անդրէն հաստատելով զբան իւր, եղիցիս ասէ ինձ փեսայ քոյովդ քաջագործութիւնք. և արձակեաց զնա։ Լսեալ դաւիթ երեսաց նորա՝ գնաց՝ի բանակն իւր, և մղեր քաջութիւնք զպատերազմ սաւուղայ վստահացեալ յանաղարտելի խոստումն նորա։

Այլ երբեմն եհաս ժամանակն պայմանադրեալ ի կատարումն խոստման արքային՝ տալոց զմերովբ դաւթի, ոտեաց սաւուղ դաշինն. գուցէ և զդուստր իւր զմերովբ խրատեալ էր չլինել հաճ ընդ դաւթի. ուստի մինչ ի բացեայ էր դաւիթ, փութացաւ սաւուղ և ետ զնա կնութեն եդրիհլի որդւոյ բերզելեայ մովղաթացւոյ:

Պաքէն անիրաւութի մեծ էր և դրժողութի՝ անվայել առն սոսկականի՝ թո՛ղ թէ թագաւորի, զկինն իրաւամբ պատերազմի ստացեալ, և բաղում անգամ ինքնայօժար առաջադրեալ ի նմանէ, յափշտակել գրեթէ ի գրկաց նորա, և տալ առն այլում: Այլ դաւիթ ըստ իւրում հեզահամբոյր բարոյից՝ տարաւ անխռով մտօք մեծի անիրաւութենէս և նախատանաց անձին, թողեալ զվրէժխնդրութին ոմ միայնոյ. զոր և ըստ ժամանակին արար արդար դատաւորն, յորժամ զհնգեսին որդիսն մերովբայ, զորս ծնաւ եդրիհլի մովղաթացւոյ՝ ետ կախել զփայտէ: Բ. Թագ. խ. 9: Այլ դաւիթ եհան այնուհետև իսպառ ի մտաց իւրոց մերձենալ յազգակցութի տանն և տոհմին արքայի. բայց ոչ նոյնպէս և սաւուղ: Այր նորա միւս էս դուստր՝ մեղքոզ անուն նորա. զորմէ ազդ եղև նմա, եթէ հարեալ է նա ի սէր դաւթի: Ուրախ եղև սաւուղ՝ ասելով ի մտի. տայ զնա նմա, և եղիցի նա ինձ դործակից ի կորուստ նորա: Ետ կոչել զդաւիթ, և ասէ ցնա. խոստացայ քեզ զերէց դուստր իմ, և կամի և տալ զնա քեզ. բայց թագաւորք ոչ միշտ կարեն առնել զայն ամենայն զոր կամին. այլ քաջալերեա՛ց, մի՛ անկցի սիրտ քո, ահա մեղքոզ երկրորդ դուստր իմ. զնա տայ քեզ, և կրկին իրաւամբք փեսայացիս դու ինձ, զոր յեթայ ծանուցից քեզ: Ընդ այս առաջարկութի երևի թէ ոչ հաւանեալ դաւթի, եւ յերեսաց նորա առանց տալոյ ինչ պատասխանի:

Յայնժամ պատուիրեաց սաւուղ ոմանց ի մտերմացն իւրոց ծառայից խօսել դաւթի լռելեայն, և ջանալ հաւանեցուցանել զնա փեսայանալ արքայի, ասելով ցնա, թէ ահա արքայ հաձեալ է ընդ

քեզ. և ամենայն արք նորա սիրեն զքեզ, և գոր ծակից լինին ի բարձրութիւն քո։ Այտ նոցա դաւիթ պատասխանի. Թեթև՞ իցէ յաչս ձեր փեսայանալ արքայի. քաջ գիտէ արքայ՝ զի ես այր մի տառապեալ եմ, և ոչ փառաւոր. եթէ պատերազմ և յաղթութիւն խնդրէ, զայն օգնականութիւնք ետուն ինձ իմոյ յուսամ՝ի գլուխ տանել. բայց եթէ արքայ վայել վարձանս կամիցի, առ այն անկարօղ եմ. իմ հարստութիւն բազուկք իմ են և սուսեր. այլ ոչ կարծեմ թէ բաւական իցեն այնոքիկ։ Պատմեցին վաղվաղակի սաւուղայ զամենայն զբանն զոր խօսեցաւ դաւիթ. իսկ նա առաքեաց անդրէն զնոսա՝ ասել ցդաւիթ, թէ արքայ ոչ կամի վարձանս, այլ երկու յաղթութիւնս. զինն որ էր մահ գողիաթու, զոր արդէն կատարեցեր. ձեայ երկրորդն, զի քերցես հարիւր անթլփատուիս այլազգեաց՝ առեալ վրէժ՝ի թշնամեաց արքայի՝ի վկայութիւն քումդ քաջութիւն։ Սաւուղ այսպէս խօսելով՝ խաբէր ոչ միայն զդաւիթ, այլև զծառայս իւր. չունէր նա կամն փեսայացուցանելոյ զդաւիթ, այլ արկանելոյ զնա՝ի ձեռս այլազգեաց՝ի կորուստ։ Այնին իրի խնդրեաց զանթլփատութիւնս նոցա, և ոչ զգլուխս. զի այն առաւել նախատական էր, ուստի և անհանդուրժելի այլազգեաց, քան զհատումն գլխոց. որ սովորական իմն է զինուորաց՝ի պատերազմի. իսկ այս՝ գործ գազանական, և կարի իմն թշնամանական էր. յորմէ առաւել զրգռին կենդանիք՝ի վրէժխնդրութիւն։ Այն որք ասեն՝ թէ ոչ խնդրեաց գլուխս, զի մի՛ ընդ խաբս ինչ գործեսցի, և գլուխք եբրայեցւոց բերիցին փոխանակ գլխոց այլազգեաց։ Հաճեցաւ և իցէ, սաւուղ կամեցաւ խաբել, այլ ինքն խաբեցաւ։ Հաճոյ թուեցաւ բանն յաչս դաւթի, ընկալաւ յօժարամիտ զպայմանսդրութիւն, և առեալ զդունդն իւր, յարձակեցաւ՝ի վերայ այլազգեաց, և մինչև էին լցեալ սաւուրքն սահմանեալք՝ի սաւուղայ, եհար յայլազգեաց անտի արս հարիւր. և բերեալ զանթլփատութիւնս նոցա, ելից թուով առաջի արքայի։ Յայնժամ

հարկեցաւ սաւուղ կատարել զնուր խոստումն. զի եւ զմեղքող զգուստր իւր դաւթի կնութիւն։

Այլ առաւելաւ երկիւղ արքայի ՚ի դաւթէ, տեսեալ յայտնապէս՝ զի ՚ի նմա է ընդ նմա. յորմէ զօրացաւ և նախանձն և ատելութիւն։ Այսու այնորիկ մինչ ՚ի քաղաքին գաբաայ առնէին խրախութիւն հարսանեաց, սաւուղ յապարանս իւր զայլ ինչ ոչ խորհէր, բայց եթէ զմահ փեսային։ ՚Ի նոյն աւուրս և իշխանք այլազգեաց միաբանեալ ելին ՚ի մարտ՝ խնդրել զվրէժ ՚ի նմանէ և մանաւանդ նահատանաց, զոր արար նոցա դաւիթ հատմամբ անթլփատութեց։ Այս պատերազմ բովանդակ ՚ի վերայ դաւթի անկաւ. զորմէ այլ ինչ ոչ կիշէ ՚ի գիրն, բայց միայն զբաջափայլ առաքինութիւնս, և զհանճար նորա, և զհեւամտութէն գործոց պատերազմի, զոր ընդ բոլոր ժամանակն այնր մարտի երևեցոյց դաւիթ առաւել քան զայլ ամենայն զօրավարս սաւուղայ. որով և անուն նորա ևս քան զևս փառաւորեցաւ ՚ի մէջ ամենայն իսրայէլի։

ԳԼ. ԻԹ.

Յոնաթանն լսափոխէ զդաւիթ առաջի հօր իւրոյ. և նա առ ձեռն երդմամբ չափ խոստանայ ոչ սպանանել զդաւիթ։ Այլ ապա առեալ երդմանն, անդրէն խնդրէ սպանանել զնա. բայց ղեղող կէն դաւիթ զերծուցանէ զնա գիշերայն։

Սաւուղ կիմարեալ մտօք, փոխանակ զօրաժողով լինելոյ ընդդէմ այլազգեաց՝ որք օր ըստ օրէ զօրանային, խնդրէր օգնութէն կիւրոց պալատակից նաց՝ զմեծ ախոյեանն և զաղատարարն իսրայէլի բառնալ ՚ի միջոյ։ Յօսեցաւ ընդ յոնաթանու որդւոյ իւրում, և ընդ մտերիմ զօրավարս և ընդ պաշտօնեայսն իւր՝ ազատել զնա յանբերելի տառա-

պանաց անձկութիւնէ սրտի՝ բառնալով զկեանս դաւ-
թի առելոյն իւրոյ։ Օ՜ արմանք են, զի վստահա-
ցաւ սաւուղ յայտնել զայս յոշխաթանու. զոր յօրէ
անտի յորում եբեր դաւիթ զգլուխ գողիաթու,
եաես անլուծանելի յօդիւ սիրոյ բարեկամութէ
կապեալ ընդ դաւթի, զոր մահն և եթէ կարօղ էր
հատանել։ Այլ սաւուղ հզօրագոյն կարծէր զա-
ռանձնական շահասիրութէնն, քան զսէր բարեկա-
մութէ։ Ահ դաւթի կարի ինն կարևոր թուէր
նմա առ ապահովել յոշխաթանու զյաջորդուն թա-
գաւորութեան։ Պատրաստական կարծէր զորդին
առ ոտն կոխել զամենայն օրէնս սիրոյ, յորժամ խոչ-
ընդոտն տեսանէր զայն իւրումն յառաջադիմութէ։
Այլ խաբեցաւ. վասն զի յոշխաթան թէպետև
ոչ ինչ պակաս՝ ի հօրէ իւրմէ քաջ նշմարէր զգա-
ւթի ընտրեալ յայ յաթոռ արքայութէ, այլ գոլով
ինքն երկիւղած, քան զսամենայն անձին փառաս-
րութի գեր՝ ի վերոյ դասէր զկամն այ. և հաստա-
տուն և հաւատարիմ գոլով՝ ի բարեկամութեան,
՝ի գլուխ իւր համարէր կրել զթագն արքունի, յոր-
ժամ՝ի գլուխ բարեկամին տեսանէր զայն հանգու-
ցեալ։ Այլ հալածեաց, ոչ սպանեաց զիրաւունս իւր,
և ոչ հետամուտ եղև սպատուոյն. սիրեաց, պաշտ-
պանեաց, յառաջացոյց զբարեկամն, յայտնի ձանա-
չելով զինեաս անձին։ Այս արդարև յայս ամենայն
անցս կամեցաւ ած՝ի յոշխաթան և՝ի դաւիթ յու-
ցանել զտարացոյց ձշմարիտ բարեկամութէ. որ
հաղիւ ուրեք երբէք երևի յաշխարհի։

Այդ՝ իբրև ծանեաւ յոշխաթան զայս անապա-
րոյն անօրէնն կամն արքայի, առ ժամայն յայտնեաց
դաւթի. և զգուշացոյց զինա՝ վաղիւ ընդ առաւօտն
չերևել՝ի հրապարակի, այլ նստել յանդի՝ի թա-
քըստեան, մինչև ինքն ազդ արասցէ նմա։ Օ՛ի ես
ասէ,՝ խօսեցայց վասն քո ընդ հօր իմում, և ջանա-
յայց ցածուցանել զցասումն նորա. և որպէս կիարդ
տեսից զինա, ծանուցից քեզ։ Այ նմին առաւօտու
խօսեցաւ յոշխաթան հօր իւրումն բանս բազումս բա-
րիս՝ի պաշտպանութէ դաւթի. առաջի դնելով

նմա զմիամիտ ղհաւատարիմ ծառայութիւնս նորա. զմեծամեծ վտանգս յորս եդ զկեանս իւր վասն թագաւորութե՛ սաւուղայ. զբազմապատիկ քաջագործութիւնն ընդդէմ այլազգեաց՝ անհաշա թիւնաւեաց նորա. և զփրկութի՛ն մեծ՝ թագաւորին և ժողովրդեանն իսրայէլի, զոր արար սպանմամբ գողիաթու յանդիման աչաց համօրէն բանակին, ընդ որ ուրախ եղև ամենայն իսրայէլ: Այսպա զի՛արդ ասէ սպանանիցես զայր այսպիսի՝ այնչափ բարերար քեզ և թագաւորութե՛դ, և մեղանչիցես յարիւն արդար: Ոչաւ սաւուղ բանիւ յոմիաթանաւ, և նենգեաց դաւթի՝ առ ժամն որպէս թուի ձշմարտասէս և՛ի սրտէ, երդուեալ՛ի կենդանին ՚ած՝ թէ ոչ մեռանիցի: Ուրախ եղև յոյժ յոմիաթան, և վաղվաղակի կոչեալ զդաւիթ, պատմեաց նմա զամենայն և առեալ ինքնին տարաւ զնա առ սաւուղ. զոր և նա հաշտ և խաղաղական դիմօք ընկալեալ, կամեցաւ զի կացցէ առ նմա որպէս յերեկն և յերանդն:

Ընոյն աւուրս յաւելին այլազգիք պատերազմաւ դիմել՛ի վերայ իսրայէլացւոց. դաւիթ անցեալ՛ի գլուխ զօրուն իսրայէլի՝ եւ ընդդէմ՝ նոցա, և եհար զնոսա հարուածս մեծամեծս յոյժ. և ինացեալքն զարհուրեալ յերեսաց նորա, փախեան և անկան՛ի քաղաքս իւրեանց: Եւ դաւիթ դարձաւ յաղթական առակաւ առ սաւուղ, զոր հաշտ և համբոյր թողեալ էր. յոյր սակս և ակն ունէր խնդալից ընդունելու՝ թէ գտանել՛ի նմանէ յաղագս փառաւոր յաղթութեանն, զոր արար վասն նորա: Այլ վրիպեցաւ. զի եգիտ զնա կատաղեալ վասն նոյն իսկ յաղթութե՛ն, զոր առ նախանձու որպէս քրէական յանցանս դատեալ սաւուղայ, մոլեգներ անդրէն յայսակիր սիրտ իւր. որ և յայնմ երեկոյի լի դառնութե՛ մտաձութե՛ն նստեր՛ի տան՝ գեղարդն՛ի ձեռին և դաւիթ երգեր տաղնաղեաւ առաջի նորա: Ոմանք պետև յիշելով դաւթի զառաջինն դիպուածն՝ կարեր զմտաւ ածել, թէ գեղարդն այն ոչ մեզմանայ՛ի ձայն տաղնաղի սաղմոսարանին իւրոյ. բայց որք յար-

քունիս են՝ գտանին երբեմն յայնպիսի հարկաւորու-
թիւ, զի և կասկած անգամ ոչ կարեն ցուցանել,
ուր յայտնի տեսանեն զվտանգ անձանց։ Պաւուղ
կամէր սիրովիւ քաղցրաձայնութիւ դաւիթ, և հարկ
էր դաւթի հնազանդել նմա. բայց մինչ մատունք
նորա հարկանէին զլարս, աչք նորա յառեալ հայէին
անթարթափ ի դեղարդն. զոր յանկարծակի ամե-
նայն զօրութիւք իւրով ձգեալ սաւուղայ՝ ընդ սիրտ
նորա կշռակի ունէր անցուցանել, եթէ չէր ի ժա-
մու տեսեալ զձգումն և խուսեալ, որով դեղարդն
հարաւ ընդ որմն. և դաւիթ զերծեալ խոյս ետ ի
տուն իւր. և այնուհետև ոչ ևս երևեցաւ առաջի
սաւուղայ։

Նոկ սաւուղ այս անգամ առաւել քան զառաջինն
գազանացեալ, խնդրէր ամենևին կորուսանել զդա-
ւիթ։ Յայնմ գիշերի առաքեաց խումբ ոմն ի թիկ-
նապահ զօրաց իւրոց ի տուն դաւթի, պահել զնա
զգուշութիւք. զի ընդ առաւօտն սպանցի։ Այլ ըն-
դէր արդեօք յայնմ գիշերի ոչ հրամայեաց սպա-
նանել զնա։ Գուցէ կասկածէր, զի մի զինուորքն
գիշերային զայլ ոք փոխանակ նորա սպանցեն. նմին
իրի աստ պահել զնա մինչև ցառաւօտ, զի ի լոյս
տունջեան ինքնին ականատես վկայ լիցի սպանու-
նորա։ Կամ՝ թերևս կամէր հանել զնա յատեան
դատաստանի, և ձանձրացարհաւ իրաւանց գտանել
ի նա պատճառս մահապարտութիւն։ Այլ կամ զի
երկնչէր թէ դաւիթ ի տան իւրում ամրացեալ,
պաշտպանեսցի անձին. և հարկ լինիցի զէն առնուլ
յորմէ թէ խռովութիւն ինչ յարիցի գիշերային ի քա-
ղաքի, մարթ էր բազում չարեաց յառաջ գալ ան-
որ։ Այլ զի՞ պիտի խնդրել թէ առ ինչ, կամ
զինչ խորհէր սաւուղ յայմ, ուր ամենայն գործք
նորա և գնացք անխորհուրդ էին ըստ վարելոյ ախտա-
ւոր կրից իւրոց։ Ակայն զինչ և խորհէր, ի դերև
ելին խորհուրդք նորա։

Վ[illegible]անդի զօրապետն որում յանձն եղև պահպա-
նութիւն տանն դաւթի, ածեալ զմտաւ՝ զի թէ ոչ
հնազանդեսցի հրամանին, յանցաւոր գտանի յատե-

նի արքային. իսկ Թէ հնազանդեսցի, նոյն օրինակ վտանգ կայ նմա առաջի՝ յատենի արքայորդւոյն յոշնաթանու, իբր սպարտաւոր անմեղ արեան իւրումն սրտակցորդ բարեկամի. այլև մեղքողայ դրստեր արքայի, իբր սպանօղ առն իւրոյ։ Ապա որոյ առ Ճողոպրելոյ զանձն յերկուց վտանգաց առտի, կանխեաց զգացոյց ծածկաբար զիրան մեղքողայ. և ինքն յապաղեաց զպաշարումն, տալով ժամանակ փախստեան դաւթի. զի մինչև ընտրեաց զինուորս, առ զնոս, եւ գնաց հանդարտաքայլ, և կացոյց պահապանս առ դրանն, մինչ այս մինչ այն՝ մեղքող յորոյց զդաւիթ յանկողնոյ, և՝ ի միւս կողմանէ տանն՝ իջուցեալ զնա ընդ պատուհանն, եւ նմա փախչել և ապրիլ։ Այս զի մի խնդրեսցի նա արտաքոյ տան իւրոյ, և զի ունիցի բաւական ժամանակ հասանելոյ՝ ի տեղի յապահով, համբաւ սփռեաց մեղքող՝ Թէ՝ ի ծանր հիւանդութիւն ըմբռնեալ է դաւիթ. և՝ ի մահիճս նորա յարմարեաց պաճուճապատանս, դնելով՝ ի կողմն գլխոյ՝ կծիկ պատեալ թաւամազ այծենեաւ, զի՝ ի բացուստ երևեսցի իբրև հերք գլխոյ խօթացելոյն, և լեարդ այծեայ, որ նորոգ հատեալ, դեռևս առ սուղ ինչ ժամանակ սովոր է բաբախել, առ լաւ ևս խաբելոյ. և ծածկեաց զնա հանդերձիւ, կամ վերմակաւ։

Ապա՛ւղ զգիշերն զայն ողջոյն ապագնապեալ՝ ի դիւաշարժ դառնամաղձութիւնէ, ընդ լուսանալ առաւօտու առաքեաց այլ զինուորս ունել զդաւիթ և ածել. և՝ ի դառնալ նոցա և յասել՝ Թէ անկեալ կայ նա՝ ի մահիճս խօթացեալ, դարձոյց անդրէն զնոսա պատուիրելով, զի Թէ չկոչէ կարօղ յառնել, ածցեն զնա մինչ՛ ի՛ առաջի իւր, զի ես ասէ սպասնիցի զնա։ Այլ մինչ սաւուղ խնդրէր զդաւիթ՝ ի գաբաա, նա մօտ էր՝ ի դուռն արիմաթեմ քաղաքի։ Իբրև յայտնեցաւ հնարագիւտ պատրանքն մեղքողայ, սաւուղ դառնացեալ ոգւով ասէ ցնա. զինչդ խրեցեր այսպէս խաբել զիս զհայր քո, և արձակել զթշնամին իմ, որով նա ապրեցաւ, և ես կամ՝ ի վտանգի։ Իսկ մեղքողայ երկուցեալ արդ ա-

բացուցանել զդաւիթ, զի մի առաւել գրգռեսցի ցասումն Հօր իւրոյ, շատացաւ զանձն զերծուցանել՝ ի վերայ դաւթի արկանելով զվնասն, ասէ. ինքն սպառնացաւ ինձ սպանանել զիս, եթէ ոչ արձակեցից զնա. և միթէ կարօղ էի ես միայնիկ ընդդէմ կալ նմա։ Ռեաց սաւուղ, զի կամ հաւատաց բանից նորա, կամ զի ընդաթոյս սէր դատէրն՝ ոչ եթող չար ինչ առնել նմա։

Իսկ դաւիթ փախուցեալ, գնաց առ սամուէլ յարիմաթէմ, որ իբրև երեսուն մղոնաւ հեռի էր ի գաբաայ. կամ ըստ ոմանց՝ ևս սակաւ. և պատմեաց նմա զամենայն ինչ զոր արարը նմա սաւուղ։ Սամուէլ վտանգաւոր համարեալով անդ ի տան իւրում պահել զդաւիթ, առ զնա ընդ իւր, և գնացին երկոքին ի մերձակայ աւանն կոչեցեալ նաւաթ հռամայ կամ արիմաթեմայ՝ յորոշումն յայլոց համանուն տեղեաց։ Ոյոյր անդ ուսումնարան, ուր բազ յայլոց արուեստից և գիտուենց՝ զոյգ ընդ կրթանոց ծածկապաշտ կարգաց և կրօնից, մանաւանդ պէս սրբազան բանաստեղծութենիս և երգս յօրհնութենէ և ի փառաբանութենէ նոյ ուսուցանէին։ Այսպիսի ուսումնարանք կամ դպրոցք բազում էին ի մէջ իսրայէլի, որք և անուանեալ կոչէին տունմարգարէից. և պատանիք անդ դաստիարակեալք՝ որդիք մարգարէից. իբր ոչ եթէ զի իրօք որդիք նոցա էին, այլ զի առ ոտս սրբազան երգասացց բանաստեղծիցն այնոցիկ վարժէին։ Առաջնորդ և դլուխ ուսումնարանին նաւաթայ էր սամուէլ. ուր առաւել ապահով կարէր դաւիթ կալ ի թաքստի, և հանդարտութեբ խօսել և խորհրդակցել ընդ սամուէլի։

Սաւուղ գիտէր զհետ էր գիտել, թէ ուր իցէ դաւիթ թաքուցեալ. և իբր ասացաւ նմա՝ թէ ի նաւաթ հռամայ է, վաղվաղակի առաքեաց զինուորս ունել զնա և կապել։ Այլ գտեալ սոցա անդ խումբ մի երգեցողաց, որք առաջնորդութբ սամուէլի՝ երգէին երգս մարգարէական նախասացմբով զհանդերձեալն, եհաս և ի վերայ նոցա հոգի մարգա-

քէսւթԷ, և՝ ի բաց եդեալ զգենս՝ ձայնակից եղեն և նոքա ընդ նոսա։ Ցեսեալ սաւուղայ՝ զի յամեաց դարձ նոցա, առաքեաց միւս ևս խումբ. և՝ ի յաՄել և նոցա, յաւել առաքել և զերրորդն. բայց որպէս՝ ի վերայ առաջնոց, նոյն գունակ և՝ ի վերայ սոցա ամենեցուն խաղայց հոգի մարգարէուԷ. որք և յաւելեալ՝ ի խումբ մարգարէից՝ երգէին ընդ նոսա առ ժամանակ մի, և ապա մեկնէին՝ ոչ ևս խնդրելով զդաւիթ։ Իբրև ետես սաւուղ զյաՄել նոցա ամենեցուն, կասկածեալ թէ վերստին պատրանօք ինն գերծեալ էին դաւիթ՝ ի ձեռաց նոցա, եԼ գնաց ինքն անձամբ՝ լի սրտմտուԹՔ. և հասեալ՝ ի ջրհորն մեծ՝ որ՝ ի սոկքով իբրև՝ ի կէս Ձանապարհին արիմաԹեմայ, և իմացեալ անդ՝ զի սամուէլ և դաւիթ են տակաւին՝ ի նաւաթ հռաՄայ, երագեաց զգնացս, ոչինչ զմտաւ ածեալ՝ Թէ՝ ի ձեռին Ցայ է ամենայն ինչ, և կեանք և մահ, և ոչ՝ ի ձեռս մարդոյ։ Իսւ ահա այն ինչ մերձեցաւ՝ ի նաւաթ հռամայ, խաղաց՝ ի վերայ նորա քուրն ոգի ինն մարգարէուԹԵ. որով մոռացեալ զդաւիթ և զսամուէլ, և զանձն իսկ գլխովին, երԹայր զՁանապարհ իւր երգելով տաղս մարգարէականս՝ մինչև եՀաս անդ. ուր իբր յայլոց խելս լեալ, ինքնին մերկացաւ յանձնէ զհանդերձս իւր, և տարածեցաւ՝ ի գետին, Թմբրեալ և սպշեալ, կամ նուաղեալ՝ զտիւն զայն ողջոյն և զգիշերն ամենայն։ Ցայնժամ յիշեցին որք անդն կային զհամանման գիպուածն, որ գիպաւ նմա յառաջագոյն՝ ի գառնալ իւրում՝ ի սամուէլէ. ուստի որպէս յայնժամ, նոյնպէս և այժմ ասէին, ահա և սաւուղ՝ ի Թիւս մարգարէից։

ԻԱ. ԺԱ.

Ղատէն դառնայ ի գաբաա առ յոշիաման։ Աբիէն և էրիէն հաւատացեն նմա եւ բարեխաւսեն առ Դիմանա՝ գաղտ ի սատուղայ ոտիկն դառնի։ Ղատէն երթայ ի նոմբա, և առնու զկին առաջաւորութեամբ ի պէտս էր և ընծեցայ էրդոյ։

Իսկ դաւիթ խրատեալ ի սամուելէ, դարձաւ ի գաբաա առ յոշիաման. և քանքարտալով առաջի նորա՝ ասէ. զինչ արարի, և զինչ մեղայ առաջի հօր քո, զի խնդրէ զանձն իմ. եդի բազում անգամ ի մեծամեծ վտանգս զկեանս իմ վասն հաստատելոյ զթագ արքայութեանդ ի գլուխ նորա. պահեցի փառաւք զպատիւ և զհամբաւ զինաւորական նորա. ոչ անցի երբեք զօրինաւք նորա կամ զհրամանաւ. եթէ յանցաւոր եմ, կամ միաբանեալ զիս յիմիք ձանձրացես, ահա կամ առ ոտս քո. դու իսկ սպան զիս, ոչ երկնչիմ մեռանել ի գթած ձեռացդ. բայց մի հատուցանիցես զիս յանգութեամբ ձեռս հօր քո։ Յոշիաթան ի սաստկակսկիծ մորմոք սրտի ըմբռնեալ ընդ դառնալիշտ սղէտ սիրելոյն իւրոյ, ասաց և խօսեցաւ որչափ ինչ գիտաց ի միխթարութեանդ և ի քաջալերութիւն նորա. ուր և ինքն նոյնօրինակ կարօտ էր միխթարութեանդ։ Յոստացաւ նմա զամենայն հաւատարմութեանդ իւր, և զկնարագիտութիւնն և զկարողութեանդ ի վար արկանել ի պաշտպանութեանդ նորա, վստահացոյց զնա ամենազգաստ արթնութեանդ հսկել և զինել միշտ զամենայն բանս և զշարժմունս հօր իւրոյ, և ծանուցանել նմա. զի ոչ առնէ՝ ասէ հայր իմ բան մի մեծ կամ փոքր, զոր ոչ յայտնէ յունկն իմ, զիարդ ապա յայդ ոճիր ձեռն արկէր առանց նախ ասելոյ ինձ ինձ. քաւ քեզ, ոչ մեռանիցիս. յիմ վերայ կեանք քո։

Այս պատասխանի դաւիթ. վստահ եմ՝ ի քեզ որպէս՝ ի վերայ անձին իմոյ. այլ դու առաւել քան զարժանն վստահացեալ ես՝ ի հայր քո. թերևս բարուքեն քո որ առ իս՝ ոչ նեղէ քեզ ձանձրանալ զնա: Այլ գիտէ, նա ևս գոհ ընդունի առաջի քո, և՝ ի վեր քան զարժանն պատուես զծառայ քո հաւատացեալ բարեկամութիւնդ մեծութեանդ. վասն որոյ ջանայ ծածուկ՝ ի քէն՝ զկամսն իւրոց կատարումն՝ ի գլուխ տանել, զոյգ ասէ ոչ կամիցի յոշխանեան, և խափանումն ինչ արասցէ. այլ կենդանի է տէր, և կենդանի է անձն քո, զի վճարեալ է ընդ իս և ընդ հայր քո մինչև ցմահ: Այսէ ցնա յոշխանեան, արդ՝ զի՞նչ ցանկայ անձն քո զի արարից քեզ. ասէ դաւիթ. փորձ մի և ևս փորձեսցուք՝ ի յայտնութիւն մտաց հօր քո վասն իմ: Այհա վաղիւ ամնամուտ է. և ըստ սովորութեանդ հարկ է և ինձ նստիլ՝ ի սեղան արքայի. աղաչեմ զքեզ՝ հրամանն տուր ինձ յերկու առաջինն աւուրս չտառել հաց ընդ արքայի, այլ առաքեսցես զիս՝ և թաքեայց՝ ի դաշտի ատտ մինչև ցերեկոյ աւուր երրորդի. և եթէ հարցանիցէ զինէն հայր քո, դու ասասցես, եթէ խնդրեաց յինէն երթալ մինչև ցբեթղէհէմ քաղաք իւր, զի զոհ է անդ ամենայն ցեղի նորա: Այեթէ հաւանեսցի ընդ այս պատասխանի՝ և ասիցէ, բարւոք է, եղիցի նշան թէ հաշտեալ է սիրտ նորա, և խաղաղութիւն է ծառայի քում: Այպա թէ բարկասցի և խստիւ տայցէ պատասխանի, գիտասջիր զի վճարեալ է չարութիւն առ՝ ի նմանէ, և ոչ ևս կայ յոյս հաշտութեան: Յոշխանեան երդմամբ խոստացաւ առնել ըստ բանից նորա, և ձգմարտութիւն՝ յայտնել նմա զամենայն եթէ բարի ինչ իցէ, և եթէ չար. և զի չէր մարթ զայն առնել՝ ի ձեռն ումեք՝ ի ծառայից, ուրջափ և հաւատարիմ իցէ, միայնեալ հաստատեցին՝ ի մէջ իւրեանց նշան ինչ, զոր ոչ ոք կարօղ իցէ իմանալ:

Այլեալ ծածկաբար երկոքեան՝ ի քաղաքէն՝ դընացին յանդն, նախ՝ զի մի գտցի դաւիթ՝ ի քաղաքի անդ, քանզի յայնմ առաւօտու միայնի դառ-

նալոյ սաւուղայ անդ ՚ի գաբաա. և երկրորդ՝ առ ՚ի նշանակել զտեղի Թաքսաեան դաւթի։ Եւ ՚ի դաշտի խոսեցաւ յոնաթան երկար ընդ դաւթի ցաւագին սրտիւ. կրկնեաց բազում անգամ զերդումն՝ ոգւով չափ պաշտպան լինել նմա. զուշակեաց ախորժ հաձումեաւ զթագ արքայութեան նմա։ Եւ ցոյց զանկեղծ ցանկութեան սրտին՝ տեսանելոյ զնա յաթոռ Թագաւորութեան. շատացեալ վասն անձին լինել ՚ի ներքոյ նորա, և առ նովաւ։ Եւ եթէ յառաջ քան զտեսանել իմ զքեզ ասէ՝ Թագաւորեալ, դու սիրելիդ իմ տեսանիցես զիս մեռեալ, մի բարձցես զողորմութեի քո ՚ի տանէ իմմէ մինչև ցյաւիտեան։ Եւ նստիցիս ՚ի գահոյս արքայութեան, իսկ ես ՚ի մէնին գերեզմանի. պահեսցես առ որդիս իմ զայն քաղցր սիրապատար բարեյօժարութեի, որ զսիրտ իմ քովանդակ գերեալ էր ՚ի սէր քո. գոցի անուն յոնաթանայ ՚ի տան դաւթի։ Եւ պա գարձեալ երդուաւ և վերստին երդուաւ, և Թուէր նմա ոչ գտանել բառ և բան բաւական ՚ի յայտնել զհաստատութեի և զգորովալիր սէր իւր առ նա։ Եւ նշանակեցին յանդի անդ տեղի Թաքստեան դաւթի վէմ մի մեծ կամ բլուր. ուր ասաց նմա յոնաթան յայն երիս աւուրս գալ օր ըստ օրէ և նստիլ ՚ի ծածուկ, դէտսակն ունելով նշանի փրքնոյն. զի Թէ վաղիւ՝ որ ամնամուտ է, ոչ կարացից ասէ իմանալ զմիտս հօր իմոյ, յերրորդ աւուր անտարակոյս իմացայց։ Եւ ելից ես միով պատանեկաւ աստ ձգել փքինս ՚ի նպատակ իբր առ ՚ի վարժութեիւն. և ՚ի յղել իմ զպատանեակն քաղել զփքինս, եթէ ասացից ցնա, ՚ի քէն և այսր է փքինն, դիտասջիր՝ զի խաղաղութեի է քեզ, չիք ինչ վտանգ, կենդանի է տէր։ Եւ պա եթէ ասացից, ՚ի քէն և անդր է փքինն, գնասջիր՝ զի արձակեաց զքեզ տէր։ Եւ ապա վերստին երդմամբ հաստատելով զխոստումն իւր, դարձաւ յոնաթան ՚ի գաբաա. իսկ դաւիթ ՚ի ժամուն գնաց ՚ի բեթզեհէմ քաղաք իւր, որպէս խնդրեացն ՚ի յոնաթանէ. և ըստ ժամադրութենն գայր ՚ի տեղի անդր,

և նստէր ՚ի Թաբաստի առ վիմանն, միալով յոմնա-
նանու. և ոչ եթէ յայն երից աւուրս հանապազ
նստէր անդ. ապա թէ ոչ՝ գրեթէ անհնարին էր
նմա ՚ի ծածուկ միալ։

Այլն սաւուղ ՚ի նմին աւուր ՚ի գաբաա. և ՚ի
վաղիւ անդր՝ որ էր ամսամուտ, եմուտ ՚ի սենեակն
ուտել հաց. և նստաւ՝ որպէս միշտ յանթոռ իւրում
կեցեալ յորմն. նստան ընդ նմա ըստ սովորութե
և մերձաւոր աղգականք նորա և սպարապետք զօ-
րաց. յոնաթանն յաջմէ արքային, և աբենները ՚ի
ձախմէ նորա. եառես արքայ՝ զի դատարկ էր տեղի
դաւթի. այլ կեղծեաց իբրև ՚ի չտեսս լինել, և
ինչ ոչ խօսեցաւ յաւուր յայնմիկ, զի ասէր ՚ի մտի,
դուցէ ՚ի սակս օրինական պղծութե ինչ՝ յորմէ չի-
ցէ սրբեալ, ոչ եկն ՚ի սեղան ուտել ՚ի զոհից։
Ընդ այն տեսեալ և յաւուր երկրորդի, զի չէր անդ
դաւիթ, եհարց ցյոնաթան արհամարհութե իմն.
զի՞ է զի ոչ եկն որդին յեսսեայ երէկ և այսօր ՚ի
քեզանս։ Այս պատասխանի յոնաթան հեղութե
բան նախագրեալ բանից հաստատելոց ՚ի մէջ իւր
և դաւթի. խնդրեաց ասէ լինել երթալ ՚ի բեթ-
ղեհէմ քաղաք իւր ՚ի զոհ ցեղի իւրոյ կոչեցեալ
յեղբարց իւրոց։ Սաւուղ՝ որ յարաժամ տապեր
չար նախանձու ընդդէմ դաւթի, որով և յամե-
նայն ՚ի կասկածոտ միտս էր, քաջ իմացաւ զնե
զու որդւոյն։ Սա՝ որոյ ՚ի սրտմտութե բարկուե
ջեռեալ՝ գառն և անպատեհ նախատանօք յարձա-
կեցաւ ՚ի վերայ նորա, մինչև պոռնկորդի կոչել
զորդի իւր, և թշնամանօք ՚ի դէմն ածեալ նմա
զբարեկամութե նորա ընդ դաւթի թշնամւոյ տան
և թագաւորութե նորա, հրամայեաց վաղվաղակի
արձակել զինուորս՝ ըմբռնել զնա և ածել առ ոտս
իւր, զի մահապարտ է նա՝ ասէ։ Այլ զի յոնաթան
երկիւղած արդար և հաւատարիմ՝ իշխեաց հանել
՚ի բերանոյ բան մի ՚ի պաշտպանութե անմեղին,
ընդ որ մեռանիցի ասելով, կամ զի՞նչ գործեաց,
հայր նորա՝ որ նստէր յորմոյեց, և գեղարդն նորա
առ նովաւ, զոր միշտ կամ ՚ի ձեռին ունէր, կամ

առընթեր, յափշտակեալ ի գազանային կատաղութենէ, վերացոյց զգեղարդն հարկանել ի յոշնաթան։ Այլ նա չէտ նման ժամանակ, զի եւ վաղվաղակի ի սեղանոյ անտի արտաքս լի բարկութիւն, և յանդիմանին խռովուեցեալ և ի տրտմութիւն վասն դաւթի՝ զայն օր ողջոյն, որ էր երկրորդ օր ամսամտին, ոչ էառ կերակուր։

Այլ ընդ առաւօտն առեալ ընդ իւր պատանեակ մի ևեթ, եւ ի դաշտ անդր մերձ ի տեղի թաքստեան դաւթի, որպէս ժամադիր եղեւ նմա. և կեղծելով իբր ի կրթուելոյ ձգել նետս ի նպատակ, ասէ ցպատանեակն. ընթա գտանել զփքինն զոր ձգեցից, և բեր առ իս. և մինչ մանուկն առնոյր զփքինն, յոշնաթան զերկրորդն հեռագոյն արձակէր, և զերրորդն և զչորրորդն միշտ մի քան զմի հեռի. և այն մինչ մանուկն առնոյր զնոսա քաղել զփքինսն, յոշնաթան ձայնէր զկնի նորա, ի քէն և անդր է փքինն, ի քէն և անդր է փքինն. փութա՛ արագեա՛ և մի կացցես. որով և ծանեաւ դաւիթ՝ եթէ վճարեալ է սաւուղ վասն նորա. և չիք ևս այնուհետև յոյս հաշտութեան։ Այլ շուրջ հայեցեալ յոշնաթանու, և տեսեալ զի յայնմ ժամու ոչ ոք ի մարդկանէ երևէր ի դաշտի անդ, ետ զազեղն և զնետս ի ձեռս պատանեկին, և ասաց ցնա տանել զայն ի տուն։ Այլ ի մեկնիլ նորա՝ եւ դաւիթ ի թաքստենէ. և անկեալ ի վերայ երեսաց իւրոց՝ երկիր եպագ երիցս անգամ ի շնորհակալութեի և ի մեծարանս յոշնաթանու իւրումն հաւատարիմ բարեկամի և բարեբարի, և խանդակաթ սիրով զլիմեամբք փարեալ, և համբուրեալ իւրաքանչիւր զընկեր իւր, լայնին երկոքին զօգուտ ժամ. որպէս թէ վկայեր սիրոյ նոցա, եթէ այն էր վերջին խօսիլ ընդ միմեանս ի վերայ երկրի։ Այլ ապա վերստին նոր երդմամբ հաստատեալով զնոստմունս, զոր յառաջնումն արարին, անբաժանելի սրտցաւութիւք մեկնեցան ի միմեանց. յոշնաթան դարձաւ ի գաթաա. իսկ դաւիթ զմտաւ ածեալ՝ եթէ վտանգ է նմա կալ ի հրէաստան

յերկրի տէրութեն սաւուղայ, կալաւ զՅանապարհ նոմբայ՝ անցանել անտի յերկիր այլազգեաց առ անքուս արքայ գեթայ. Թերևս ՚ի սամուէլէ խրատեաալ, ընդ որում գեթացիք սահմանակիցք արիմաթեմայ խաղաղութիւն էին ՚ի ժամանակս դատաւորութեն նորա, մինչաւանդ ՚ի վերջին ուղուտան ամին: Այլ Թէպէտ յայնժամ գեթացիք ՚ի պատերազմի էին ընդ սաւուղայ, բայց հասարակաց պատերազմ ոչ բառնայ զբարեկամութիւն անձնական. այն զի յայնպիսում ժամանակի դոյր առաւել ակնկալութիւն ընդունելութեի գտանել դաւթի առ գեթացիս իբրև վտարանդեալ ՚ի Թագաւորէ իւրմէ. զոր մեծ ինն որս համարէր անքուս արքայ, զայր այնպիսի՝ յոր բռնկեալ զօրութիւն զօրացն սաւուղայ էր հաստատեալ, և յորմէ դողային այլազգիք, յինքն յանկուցանել, և ունել զնա իւր զօրավիգն:

Իբրև եհաս դաւիթ ՚ի նոմբա, տեսեալ զնա աքիմելէք քահանայի՝ միայն և անզէն, զարհուրեցաւ յանձն իւր. քանզի և յայլ նուագս եկեալ էր դաւիթ առ նա հարցանել նմա ՚ի ՚ինէ, բայց միշտ ունելով ընդ իւր զինուորս և ծառայս, զառաջինն իբրև հազարապետ, և ապա իբրև փեսայ արքայի. եհարց ցնա և ասէ, զի՞ է զի դու միայն ես, և ոչ ոք է ընդ քեզ, գեթ ՚ի ծառայիցդ քոց: Այլ կամեցաւ դաւիթ յայտնել նմա զիրան, զի մի ՚ի վերստանգ ինչ արկանիցէ զնա առաջի սաւուղայ, իբր Թէ գիտելով զպախուստ նորա, ոչ յայտնեաց յունկն նորա. Թէպէտ և այնպէս ոչ զերծաւ աքիմելէք ՚ի վտանգէն: Այլ այլաբանութիւն ինն արար նմա պատասխանի. բան ինչ ասէ հրամայեալ է ինձ արքայի այսօր ասիպողական յոյժ, պատուիրելով զի մի ոք գիտասցէ զբանն՝ յոյր սակս առաքեաց զիս. նմին իրի և զծառայս իմ ոչ առի ընդ իս, այլ Թողի զնոսա ՚ի տեղւոջն փելմունի ելմունի, այսինքն յայս ինչ և յայս անուն տեղւոջ՝ անորոշ, Ճանալ անդ միոչէ դարձայց: Նմանատ այլաբանութեամբ այն էր, Թէ սաւուղ հրամայեաց սպանանել զիս, որով և ստիպեաց զիս փախչել յերեսաց նորա

գաղտաբար, զի մի ոք գիտասցէ, և մնտանեսցէ զիս նմա։ Եւ զի եդեալ էր ի մտի անցանել յերկիր կիւր այլազգեաց, վասնզի էր երևիլ անդ ընկերօք. վասն այնօրիկ բաժանեաց յիւրմէ զարսն իւր. և ինքն միայն գնաց։

Եւ յետ նախ խնդրեաց ի քահանայէն հարցանել ի տեառնէ վասն այնր ձանապարհի նորա, եթէ բարի իցէ. և ընկալեալ պատասխանի ընդհանուր՝ թէ կարէ երթալ անկասկած, ի վերայ հաճ գաւթի և ասէ ցաքիմելէք քահանայ. հրաման արքայի տասաւիկ էր ի վերայ իմ և շտապողական՝ մինչև չժամանել ինձ առնուլ պաշար վասն իմ և վասն տակաւ արանց իմոց. արդ՝ եթէ իցէ ի ձեռին քումմ պատրաստ հինգ կամ վեց նկանակ հացի, և կամ որչափ ինչ գտանիցի, տուր ի պէտս իմ։ Եւ պատասխանի քահանայն, տայի յօժարութիւն, այլ ի ժամուս չունիմ բնաւ հաց անդր ի ձեռին իմում, բայց միայն հաց սրբութեան. զայն տայի ուտել ձեզ, եթէ դու և արք քո ՚ոբ իցէք յերևելի օրինական անսրբութենէ, որպէս ի մերձաւորութենէ կանանց։ Եւ ասէ դաւիթ. երեք աւուրք են՝ զի մեկուսի եմք ի կանանց. յելանել ինձ ի ձանապարհ՝ սրբեցան և նոքա ընդ իս. և թէպէտ ձանապարհս իսկ՝ զոր առնեմք, ոչ է ՚ոբ, բայց այսօր սրբեցի գործովս իմով. զի հարկն անբաւիր առնէ զմեզ յամենայն պղծութենէց, վասն այնօրիկ սրբութիւն կերիցուք զհացդ։ Եւ յամ ըստ ումանց, եթէ ի ձանապարհի դիպեսցի մեզ պղծութիւն, նախ՝ փոյթ կալցուք սրբիլ լուացմամբ. և ապա կերիցուք։ Այս բան դաւթի վստահացեալ քահանային, եւ նմա ի հաց անտի առաքաւորութենէ. զոր յայնմ աւուր առեալ էր յերեսաց տեառն. այսինքն ի սեղանոյ որ առաջի տապանակին, և եդեալ ընդ այնր հաց ջերմ, օրինաւոր դատելով յայնպիսի ծանր հարկաւորութենէ ուտել և աշխարհականաց ի հացէ անտի։ Եւ յիրաւի, քանզի և քո զքաղց ևեթ դաւթի և որոց ընդ նմա էին՝ եղ բաւական պատճառ անբաւիր լինել նոցա ի մեղաց օրինազանցութենեան. Տաբև. ԺԲ. 3։

Ընդ՝ առեալ դաւթի զՀայ՝ ընդ որում և այլ պա-
շար կերակրոյ, խնդրեաց և զինս՝ եթէ գոյի. զի
զսուսեր իմ ասէ, և զկաղմած ոչ առի ընդ իս,
քանզի բանն արքայի ստիպեաց զիս: Ասէ քահա-
նայն. չիք աստ այլ ինչ զէն, բայց միայն սուսեր
գողիաթու, զոր սպաներ ի հովիտն ելայ. և ըզ-
սուսեր նորա դու ինքնին նուիրեցեր ՚ին. որ յօրէ
յայնմանէ կայ յետոյ վակասին պատեալ ձորձով.
ասէ դաւիթ, չիք իբրև զնա, տո՛ւր ցիս զայն:

Ընդ ի խորանի գտաւ ի ժամուն այր մի դոէգ
անուն, զոր եօթանասունք ասորի կոչեն, իսկ լա-
տին Թարգմանն՝ եդովմայեցի. (Թերևս զի դոյզն
տարաբերութիւն նշանագրոց ընթերցան զերբայա-
կանն անուն. առաջինքն Դարաամ, և յետինքն
Դետում.) որ դուցէ ծննդեամբ ասորի էր, կամ
եդովմայեցի, և սպա դարձեալ ի հրէութիւն. կամ
սզգաւ հրէայ գոլով՝ առ ժամանակ մի առ նոսա
բնակեցաւ: Նա էր յայնժամ ախոռապետ սաւու-
ղայ վերակացու ջորւոց նորա, և կայր անդ առաջի
տապանակի ՚ին՝ նեղեալ ի դիւական ախտակրու-
թէ, և եկեալ անդր ի գիւտ բժշկութէ, կամ ի
կատարումն ուխտի: Այս ետես, և լուաւ զամենայն
զոր արար և զոր խօսեցաւ ընդ դաւթի աքիմելէք
քահանայ. որ համարէր հաձոյական ծառայութի
արարեալ արքայի լցուցանելով զկարևոր պէտս նո-
րուն փեսայի յայնմ նեղ և ստիպողական ժամու.
և ոչ գիտէր թէ պարզմտութի իւր և հոգողութի
վասն իրացն արքունի՝ լինիցի նմա և տան նորա ի
կործանումն. որպէս և եղև իսկ ի ձեռն անօրէնն
մատնութէն դոէգայ:

ԳԼՈՒԽ ԺԲ

Դաւիթ փախչէ ՚ի գէթն. և անտի յայրն ոդողմայ։ Աստուած պայ հոգորել զչահանայսն ՚ի, և զամենայն բնակիչս նոմբայ չաղատէ չահանայից. ՚ի հինն աբիաթար որդի ախիմելէքայ չահանայապետի չերծեալ երթայ առ դաւիթն։

Դաւիթ հրաժարեալ յաքիմելէքայ, եկն ՚ի տեղին՝ ուր էին արք իւր, և տուեալ նոցա ՚ի հայել անտի առաջաւորութեանէ, և այլ ինչ պաշար զոր ընկալաւ ՚ի քահանայէն, եթող զնոսա անդ, և ինքն միայն փախեաւ և գնաց ՚ի գէթ։ Ընդ՝ որսիս եբրեւ ՚ի կարգէ պատմութենն, զառաջինն խօսեցաւ ընդ ումեք կամ ընդ ոմանց յիշխանաց անտի անքուսայ արքայի գեթայ. որոց խմացեալ զվտարանջել դաւթի ՚ի սաւուղայ թէհնամոյ իւրեանց, տարան զնա յարքունիս, և խօսեցան վասն նորա առաջի արքայի։ Ընդ՝ մինչ կայր դաւիթ արտաքոյ, լուաւ զի այլք ոմանք յիշխանաց և՚ի զօրապետաց խօսէին առ միմեանս, և ասէին. Ահա սա է դաւիթ հռչակաւորն այն, և իբր երկրորդ թագաւոր եբրայեցւոց, որ և սպան զանյաղթելին զմեռն գողիաթ. ո՛չ սմա նուագէին պարաւորքն՝ և ասէին, եհար սաւուղ զհազարս, և դաւիթ զբիւրս. զնոյն խօսեցան նոքա և առաջի արքայի։

Այս զրոյցք գովութեան լցին զսիրտ դաւթի կասկածանօք՝ չարի խիք մեծի հանդիպել անդէն. վասն որոյ առ երկիւղի վտանգին մոռացեալ զպատիւ անձին, խորհեցաւ յիմար ձևանալ, որպէս զի նոքա ինքնին ՚ի քաց վարեսցեն զնա իբրև զխելագար. որ և յաջողեցաւ նմա։ Ո՛ի այնպէս գիտաց ձևանալ, մինչև խաբել զամենեսեան. այլակերպեաց զերեսս դաժան և խոժոռատէմ երևեցուցեալ զոլն դիւահարաց. ծորեցուցանէր զլորձունս ՚ի վերայ մօրուաց իւրոց, ափսիթերս խաղայր և կա-

քաւէր և հարկանէր զդրունս ըստ օրինակի Թըմբ-
կահարաց յորժամ հարկանեն Թմբուկս։ Այս
ամենայն տեսեալ անքուսայ արքայի, ասէ զայրաց-
մամբ ցայնոսիկ՝ որք մուծին զդաւիթ առ նա. ոչ
տեսիք դուք զայրդ՝ զի մոլի է և խելագար, և ընդ
դէր մուծիք զդա առ իս. որպէս թէ կարօտ էին
էի ես այդպիսի այսահարօք բազմացուցանել զծա-
ռայս իմ. ահա մոցէ դա 'ի տուն, և ահա 'ի քաղաքիս
կացցէ։ Այս ասաց անքուս արքայ, բայց յայտնի
երևեցոյց չունել ընդդէմ անձին դաւթի Թշնա-
մութի 'ի սրտի. զի ոչ անկաւ 'ի կասկած՝ թէ գու-
ցէ կեղծաւորիցի նա զչիմարութի. և ոչ չար ինչ
խորհեցաւ վասն նորա, որպէս սպանանել, կամ 'ի
կապանս արկանել։ Այլ զի զկնի սակաւուց ու-
նիմք տեսանել զդաւիթ յապարանս անքուսայ ար-
քայի պատուեալ իշխանութիւբ, և պարգևեալ նմա
յարքայէ քաղաք մի։

Այսպիսի հնարագործութիւբ զերծեալ դաւթի
'ի գեթայ՝ դարձաւ յերկիր իսրայէլի, և գնաց ապա-
վինեցաւ յայրն ոդողոմայ յերկրին յուդայ՝ ոչ կարի
ինչ 'ի բացեայ 'ի բեթղեհեմայ։ Այլ ազգ արար 'ի
տուն հօր իւրոյ զդարձ իւր. եկին վաղվաղակի առ-
նա հայր և մայր նորա, և եղբարք, և ամենայն
մերձաւոր ազգատոհմն նորա և ծառայք, ընդ-
որս ցասմամբ մեծաւ էր սաւուղ զկնի փախստեան
նորա. նա զի և վտանգ մեծ էր, թէ յոչ կարել
սաւուղայ 'ի ձեռս բերել զդաւիթ՝ յազգատոհմն
նորա թափեսցէ զսրտմտութիւն գազանական կա-
տաղութիւն իւրոյ։ Ասաց յազգայնոց դաւթի ժողո-
վեցան առ նա յայրն անդ ոդողոմայ և այլ արք
վշտատեսք, և պարտապանք և ցաւագնեալք ոդ-
ւով, ընդ ամենայն արք իբրև չորեքհարիւր. և ա-
մենեքին զինեալք՝ կամակար անձնատուր եղեն
նմա։ Այս թէպետ փոքր էր այս գունդ հանդէպ
պնդակազմ զօրուն սաւուղայ Թշնամւոյ և հալած
չի իւրեանց, բայց ունելով սոցա ապաւէն զմեծա-
մեծ այրս և զանձաւս, և զանապատս, և զամուրս
լերանց և զմայրիս, որք յաձախ են յերկրին հրե-

աստանի, դիւրին էր ամենայն ուրեք գտանել ա-
պաստան, և տեղի Թաքստեան. և այնպէս պաշտ-
պանել անձանց ընդդէմ հնարից սաւուղայ։ Այլ
մեծապոյն հոգ և տագնապ սրտին դաւթի էր վասն
հօր և մօր իւրոյ՝ որք էին ծերացեալ, և անկա-
րօղ տանել այնչափ նեղութեանց և չարաչարութեանց,
զոր տեսանէր դաւիթ Թէ հարկաւ ունի կրել սաս-
անդ՝ խոյս տալով յերեսաց սաւուղայ. վասն որոյ
հաստատեաց զմիտս իւր անցանել յերկիրն Մով-
բացւոց, և յանձն առնել զծնօղս իւր արքային Մո-
վաբայ։ Ապա որոյ առեալ զնոսա և զիոքբրիկ
դունդ իւր, անց ցյորդանան, և գնաց ՚ի Մասե-
փաթ Մովաբայ. և աղաչեաց զարքայն վասն քնա-
կելոյ ծնողաց իւրոց ընդ հովանեաւ պաշտպանու-
Թեան նորա, մինչև գիտացից ասէ՝ Թէ զինչ արասց-
ցէ ինձ Աստ։ Ընկալաւ արքայն զնոսա բազում
մարդասիրութեամբ, զի Թշնամութեամբ էր ընդ սա-
ւուղայ։

Ապակաւ աւուրս եկաց դաւիթ յերկրին Մով-
բացւոց. վասն զի Աստ ՚ի ձեռն գադայ մարգարէին
ազդ արար նմա՝ մի նստիլ անդ յանձաւին Մով-
բայ, այլ երթալ յերկիրն յուդայ։ Ապանզի կամէր
Աստ յայտնապոյն և յուցանել զնախախնամութիւն
իւր ՚ի վերայ սիրելի ծառային իւրոյ դաւթի։ Ապա
մէր խելամուտ առնել սաւուղայ՝ Թէ ոչինչ զօրեն
Թագաւորք, եԹէ զբազուկ ՚ին չունիցին օգնա-
կան։ Այս ևս կամէր անդ յերկրին յուդայ ՚ի գործ
արկանել ՚ի զանազան դիպուածս՝ զսիրալի առա-
քինութիս դաւթի. և յառաջ քան ընդ նորին հրա-
մանատարութիւն արկանել զժողովուրդն, որոյ ընտ-
րեալ էր զնա Թագաւոր, տալ զնա նոցա օրինակ
քաղցրութեանց, վեհանձնութեանց, անյիշաչարութեանց,
համբերութեանց և հաւատարմութեանց։ Որդ՝ ըստ հրա-
մանի ՚ին եկ դաւիթ իւրով գնդաւ յերկրէն Մով-
բայ, և եկն նստաւ ՚ի քաղաքին սարիթ. կամ ըստ
այլ Թարգմ. ՚ի մայրին սարիթայ կամ հարեթայ։
Ապակ վասն ծերունի ծնողաց նորա Թէ գիրն այսչափ
ինչ ասէ, Թէ բնակեցին առ արքայն Մովաբայ զա-

Մեծայն աւուրս՝ մինչև էր դաւիթ յանձաւին անդ. յորմէ երևի թէ յելանել դաւթի յերկրէն մովաբացւոց՝ եհան և զնոսա. և գուցէ առ և ևս հեռացուցանելոյ ՚ի ցասմանէն սաւուղայ, տարեալ էցէ առ նաաս արքայ ամմնայ: Վասնզի ընթեռնումք յերկրորդ գիրս թագաւորաց. Ա. 2. ասել դաւթի՝ թէ նաաս արքայ որդւոց ամմնայ սպառ ողորմութիւն ընդ նմա. յայտ է թէ ՚ի նեղութեան նորա մինչ ՚ի հալածանս էր, և ոչ յետ թագաւորելոյն: Վասն ողորմութի՝ զոր ընդհանրապէս և եթէ յիշէ դաւիթ, չէք ուրեք ՚ի գիրս. ապա կարի հաւանելի է, թէ նաաս թշնամի սաւուղայ զկնի պատերազմին յաբիսայ գաղաադու՝ էցէ հրաւիրեալ զդաւիթ առ ինքն. իսկ նա փոխանակ անձին իւրոյ, զծնօղս իւր էցէ յանձնեալ նմա ՚ի պաշտպանութի. և ինքն հանդերձ գնդաւն իւրով անցեալ յերկիրն յուդայ ըստ հրամանի նոն:

Յետ մեկնելոյ դաւթի յայրէն ողոզոմայ՝ լուաւ սաւուղ, թէ երևեցաւ նա աստ վտարականն ընդ արանց սպառազինելոց, բայց ոչ կարաց ձշգրտիւ գիտել, թէ ուր արդեօք հաստատեալ էցէ զկռիւ ոտից իւրոց. և ոչ թէ ուրչափ էցէ թիւ արանց որ ընդ նմա: Վասն զի քաջութիւք ՚ի զօրուն իւրմէ վտարանջեալ էն, և ոչինչ երկբայէր՝ թէ էցեն նոքա երթեալ զկետ դաւթի և միաբանեալ ընդ նմա, և թէ ձեռն յաշխատանու ևս էցէ ընդ նոսա. ուստի և կասկածէր յարուժամ, թէ դաւիթ ՚ի զօրանալն յարիցէ ՚ի վերայ իւր առնուլ զթագաւորութի. Թէ նորա: Յաւուր միում մինչ նստէր ՚ի բլրին ՚ի նեբքոյ հովանաւոր ծառոյ ՚ի դաբաա բենիամինի ՚ի սովորական տեղի զուարճութեան, ունելով զղեղարդն ՚ի ձեռին, խօսել սկսաւ դառնացեալ ոգւով առ իշխանս և առ զօրապետս՝ որք կային չուրջ զնովաւ, և ասէ. լուարուք որդիք բենիամինի, դուք ամենեքեան միաբանեալ կայք ընդդէմ անձին իմոյ. նա՝ և որդին իմ գլխովին ապստամբեաց լինէն. և չէք ոք ՚ի ձէնջ որում ցաւէր վասն իմ, և յայտնէր յունկն իմ ՚ի դնել որդւոյն իմոյ ուխտ

ընդ որդւոյն յեսսեայ. և յարուցանել զծառայն իմ Դաւնամի ՚ի վերայ իմ, և ոչ Թէ ուր Թափառիցի նա, կամ ուր իցէ Թագուցեալ։ Այլ զի չիք որ ՚ի ձէնջ ինձ կարեկիցց, այլ ամենեքեան մատնիչք, երթայք ապա և դուք և միաբանեցէք ընդ որդւոյն յեսսեայ, և տացէ ձեզ անդս և այգեստանս. և զամենեսին զձեզ առնիցէ հազարապետս, և հարիւրապետս. և յասելն զայս՝ Թուէր փոքր միւս ևս ձգել զգեղարդն ՚ի նոսա առ յետին յաւասահատուԹեան։

Այս պատասխանի դովեկ ասորի՝ զոր ՚ի վեր անդր յիշեցաք, և ասէ. տեսի զորդին յեսսեայ եկեալ ՚ի նոմբա առ աքիմելէք քահանայ. և հարցանէր նա նմա ՚ի տնէ, և ետ նմա հաց և զսուսերն գողիաԹու։ Օ այն իբրև լուաւ սաւուղ ՚ի գազանային կատաղուԹէ վառեալ՝ առաքեաց վաղվաղակի, և կոչեաց զաքիմելէք և զամենայն քահանայս առ իւր ՚ի գաբաա։ Այս դարձուցեալ զաչս դաժան հայեցուածով յաքիմելէք քահանայապետ, ասէ ցնա արհամարհանօք, լուր որդի աքիտովբայ. ետ պատասխանի քահանայապետն, ահասիկ կամ, խօսեաց ՚ինր. ասէ ցնա սաւուղ, զի՞ է զի միաբանեցայք դուք և որդին յեսսեայ հակառակ ինձ, տալ նմա հաց և սուսեր, և հարցանել նմա յայ։ Այժան ինչ էր քեզ քահանայապետիդ այ կենդանւոյ զինել զայր ապստամբ, և զօրացուցանել զնա և յարուցանել ՚ի վերայ իմ՝ իւրուն օրինաւոր տէն և Թագաւորի։ Աքիմելէք ամենևին անդէտ անցիկ ոչք անցին ընդ աչքայ և ընդ դաւիԹ, վասն որոյ և գըլխովին անմեղ և արդար յայնմ մասին յամենայն յանցանաց, ետ պատասխանի լի զարմացմամբ, և ասէ համարձակ. զինչ խօսիս աչքայ՝ որպէս եԹէ ծառայ քո իցէ միաբանեալ ընդ դաւԹի հակառակ քեզ, և ԹէՀ տուեալ իցէ զնոս ՚ի ձեռս առն ասպատամբի. և ո՞վ է յամենայն ծառայս քո հաւատարիմ առ քեզ իբրև զդաւիԹ փառաւոր ՚ի տան քումմէ, փեսայ աչքայի, և իշխան զօրաց քոց. և մԹէ այս առաջի՞ն իցէ ինձ՝ հարցանել նմա ՚ի տնէ յայսպիսի

դիպուածս ։ Ցա ասաց ցիս՝ եթէ փութայ հասանել ուրեք ի կատարումն ստիպողական գործոյ առ ի յարքայէդ յանձնելոյ նմա · վասն որոյ որպէս առ վոր էր՝ ասաց հարցանել ի ձեռն վասն ձանապարհի իւրոյ ։ Այս մի երբեք դիցէ արքայ ի վերայ ծառայի քո այդպիսի բան , և ի վերայ տան հօր իմոյ · զի ոչ գիտէ ծառայ քո յամենայնի յայդմիկ բան մի մեծ կամ փոքր ։

Սաւուղ՝ ի յետին մոլեգնութէն ըմբռնեալ , ուսաւ և ոչինչ միտ եդեալ անկեղծ պատասխանւոյ քահանայապետին , որոյ արդարութէին քան զարեգական լոյս պայծառ փայլէր , գոչեաց մեծաձայն , մահո՛ւ մեռցիս սքիմելէք՝ դո՛ւ և ամենայն տուն հօր քո ։ Այս դարձեալ առ սուրհանդակսն որ կային շուրջ զնովաւ , մատիք ասէ և սպանէ՛ք զքահանայսն ահն , զի ձեռն նոցա ընդ դաւթի է · զի գիտացին՝ եթէ փախչի նա , և ո՛չ յայտնեցին յունկն իմ ։ Ոստահկնիք սաւուղայ յայտնի անօրէնն էր · յանցանքն՝ զոր ի վերայ դներ այլոց , սուտ՝ կամ գոնէ անհաւաստի · ամբաստանեալքն՝ մեծարգոյ · վասն այնորիկ ոչ ոք ի սուրհանդակաց անտի սաւուղայ իշխեաց շաղախել զձեռս յարիւն անմեղ , և մեղանչել ի քահանայս ահն ։ Այլոյն անօրէնն դոէգ ասորի , որ նախ եղև մատնիչ , ապա ժպրհեցաւ լինել և դահիճ նոցա՝ մի առ մի կոտորելով զամենեսին ըստ հրամանին սաւուղայ , սկսեալ ի քահանայապետէն աքիմելեքայ՝ արս երեքհարիւր հինգ , ըստ եօթանասնից · իսկ ըստ վուլկադային լատինացւոց ութսուն և հինգ · զոր կամեցեալ ոմանց միաբանել ասեն , Թէ վուլկադային զնոսա և եթէ նշանակէ , որք անդ ի գաբաա կոտորեցան առաջի աչաց սաւուղայ · իսկ եօթանասունք առնուն ի միասին և զնոսա որք ի նոմբա քաղաք կոտորեցան՝ ընդ ամենայն երեք հարիւր հինգ · կամ ըստ յովսեպոսի՝ երեքհարիւր ութսուն և հինգ · ամենեքեան նոքա ասէ գիրն՝ կրէին զեփուսան կտաւի · զի կամ իրօք յայնժամ զգեցեալ էին զեփուսան , որպէս զի Թերևս ի քահանայական զգեստէ անտի պատկա-

ուեալ սաւուղայ մի ինչ չար արասցէ նոցա. և կամ զի Թէպետ չէին զգեցեալ, ուր ըստ սովորութեանն զգենուին զեփուտն միայն յորժամ կայցեն ի սպասաւորութեի քահանայական պաշտամանն, այլ սակայն ամենեքեան էին ժամանեալ յայն հասակ, յորում արդէն վարէին զպաշտօն քահանայութեանն:

Սաւուղ այնչափ անսպարտ արեանց հեղմամբ ոչ շատացեալ՝ առաքեաց զօրս ի նոմբա քաղաք քահանայից, և եառ ի սայր սուսերի կոտորել զամենայն այր և զկին, զծեր և զտղայ մինչ ցստնդեաց առհասարակ, և զարջառ և զէշ մինչև ցոչխար, և չթողուլ ինչ բնաւ՝ որ ունիցի շունչ կենդանութեան: Ի միայն որդի աբիմելեքայ, անուն նորա աբիաթար, զերծեալ ի համայնաջինջ կոտորածէ անտի՝ փախեաւ զհետ դաւթի, ունելով և զեփուտն քահանայապետական ընդ իւր, և պատմեաց նմա եթէ կոտորեաց սաւուղ զամենայն քահանայս տեառն: Ասէ դաւիթ՝ ստոյգ յայժ ի սրտի իւրում. կասկածէի ասէ յաւուր յայնմիկ, եթէ դուիեկ ասոր պատմելով պատմէ սաւուղայ. ես եմ պարտական որդւոց տան հօր քոյ. նիստ առ իս, և մի երկնչիր. զի ուր խնդրեցից անձին իմոյ տեղի՝ խնդրեցից և քումն անձին. և առ գնա առ իս:

Դաւիթ ապաւէն ընդէր լինի: Նախ քան զելոհեալ երկնից ամբա-
նայ ի մարդ լեառն անապատին ընդէր լինի. ուր հանդիպի նմա
յոխելանն. և զան ինձանց ընդերձին ողջոյնն հրաշագործեան:
Ընդէր ասէր առն անձանէ սատուղայ: Դաւիթ անցանէ
յանապատն գազրոյ: Նոր յայրին սատուղ յանգիպս անձա-
նի ի ձեռս գաւիթ. այլ նա չար ինչ ոչ առնէ նմա:

Զինչ նատեր գաւիթ ի մայրին առ սարիթ
կամ հարիթ քաղաքաւ յերկրին յուդայ իւրովք չո-
րեքհարիւր արամբք, եկին յօդնականուն նմա յորդ-
ւոցն բենիամինի և յուդայ՝ արք իբրև երկերիւր
սպառազինեալք, ամենեքին արք ընտիրք, և զօրա-
ւորք ուժով, և քաջ պատերազմականք. որպէս
պատմի ա. ծնող. ԻԵ. 8. 16. 17. և ընդ ամենայն եղեն
ընդ դաւիթ արք իբրև վեցհարիւր: Ընդ եղև նմա,
թէ այլազգի փղշտացիք յարձակեցան պատերազմաւ
ի կէիլա, որ էր ի վերջին սահմանս երկրին յու-
դայ իբր քսան և երկու աշխարհագրական մղոնաւ
հեռի յանտառէն նարիթայ, ուր ամրացեալն էր
դաւիթ. և յափշտակեալ զարմախս, որք դեռևս
էին ի կալորայս ի բացի, պաշարեցին առնուլ և
զքաղաքն: Ոչ առեցաւ ոգի դաւիթի երթալ հասա-
նել յօգնութիւն տառապեալ կէիլացւոց. զմտաւ ա-
ծեալ՝ զի թէ յաջողեսցի նմա հարկանել զայլազգիս, և ազատել զքաղաքն, աւար ոչ սակաւ ունի
ի ձեռս բերել, որում կարօտ էր յայնմ ներգութիւն
իւրում. միանգամայն և զքաղաքն զայն ողջոյն
ստանայ իւր նպաստաւոր: Այլ գործն մեծ էր և
վտանգաւոր առ համեմատութեամբ սակաւաթիւ
արանց իւրոց. դիմեաց ըստ սովորութեան իւրում
հարցանել յայն ի ձեռն աբիաթարայ քահանային.
և ասէ երթ երթայց և հարկանիցեմ զայլազգիսն
զայնոսիկ. ետ նմա ած պատասխանի, երթ և հար-

կանիցես և փրկեսցես զկէհէլա ։ Ա.յլ քանզի աղք նորա երկիւղ ինձ ցուցին, ասելով՝ ահա մեք առաւէն ի մէջն իբրև ի կեդրոն հրէաստանի գոլով՝ տակաւին յերկիւղի եմք յայլազգեաց. և զիարդ լինիցի եթէ երթայցեմք ի կէհէլա, որ է յեզեր երկրին առ սահմանօք այլազգեաց. վասն այնորիկ յաւել դաւիթ միւսանգամ հարցանել ի նմանէ. և զնոյն պատասխանի ընկալաւ հանդերձ յաւելուածով։ Ա.ւ այնպէս քաջալերեաւ, խաղացին ի կէհէլա. ուր գտեալ զայլազգիս սփռեալ ի կալորայս, յարձակեցան ի վերայ նոցա. և հարին կոտորեցին զբազումս ի նոցանէ, և զայլս ի փախուստ դարձուցին. և առ դաւիթ զանասունս նոցա, և զամենայն աւար զոր եգիտ, և փրկեաց զկէհէլա։

Ա.յսպիսի չքնաղ յաղթութիւնէ չէր մարթ ինալ ի թագուն. եհաս վաղվաղակի լուր առ սաւուղ, եթէ եկն դաւիթ ի կէհէլա. ընդ որ ուրախ եղև նա, եդեալ ի մտի, թէ դաւիթ ինքնին անկեալ և ըմբռնեալ իցէ իբր յանել գառապղի ։ Ա|ասն որոյ հրամայեաց ետ զօրաց իւրոց պատրաստ լինել առ իջանել ի կէհէլա, և ըմբռնել զդաւիթ և զարս որ ընդ նմա։ Ա.մացեալ դաւիթ ի ձեռն լըրտեսաց իւրոց զպատրաստուածն սաւուղայ գալ ի պաշարումն քաղաքին, ասաց ցաբիաթար քահանայ զգենուլ զեփուտն ինն. և դաւիթ ինքնին եհարց ցՏէր, և ասէ ։ Տէր Աստ իսրայէլի, լուաւ ծառայ քո՝ թէ խնդրէ սաւուղ գալ ի վերայ կէհէլայ, և ապականել զքաղաքս վասն իմ, յայտնեա ծառայի քումմ, եթէ իջանիցէ այժմ այսր, և պաշարիցի քաղաքս։ Ա.տ պատասխանի Տէր ի ձեռն աբիաթարայ և ասէ, պաշարեսցի. ասէ դաւիթ. եթէ մատնեսցեն զիս կէհէլացիք և զարս իմ ի ձեռս սաւուղայ. ասէ Տէր, մատնեսցեն եթէ չիասցես աստ ։ Ո այս պատասխանի առեալ դաւիթ ի Տեառնէ՝ եւ փութանակի ի կէհէլայ հանդերձ վեցհարիւր արամբք իւրովք ։ Ա.ստ եօթանասունք՝ յորոց և մերն զթիւ արանց դաւթի դնեն չորեք հարիւր, որպէս ի սկզբան անդ մինչ եր յայրին ոդողոմայ. զի թուեն միայն զարսն՝ որք

միշտ զՀետ յոքան դաւթի· ասացեալ ոչ՝ ա· Նահ· իե· 13· ուր պատմի պատրաստուելի դաւթի երթալ ՚ի վերայ նաբաղայ, մեկին ասէ գերն· * Նա եւ ելին զՀետ դաւթի իբրև արք չորեքհարիւր· և երկեբիւրն ևս անդէն նստան առ կարասին‖· յորմէ յայտ է թէ ՚ի փախչել դաւթի ՚ի կէիլայ՝ վեցհարիւր էին ընդ նմա, որպէս ասացաք։

Նորդ՝ ելեալ դաւթի ՚ի կէիլայ, և շրջեալ աստ և անդ Թափառական, եկն յետոյ և ամրացաւ ՚ի գԺուարամատոյց լեառն անապատին զիփայ· որ կոչի լեառն մռայլ, և երկիր մՁին, Թերևս սակս ծառախիտ անտառաց որ ՚ի նմա։ Լուեալ սաւուղայ՝ եԹէ փախեաւ դաւիթ ՚ի կէիլայ, դադարեաց առ ժամն ՚ի պնդելոյ զՀետ նորա։ Այլ ոչ նոյնպէս և յոնաԹան· քանզի մշտավառ բորբոք սիրոյ նորա ոչ եԹող զնա չՀնդրել զսիրելին։ Ուներ յոնաԹան՝ որպէս և դաւիթ, ծառայս հաւատարիմս· և նոքօք աղդ առնէին միմեանց զոր կամէինն։ Նորդ՝ իմացեալ յոնաԹանու զտեղի Թագստեան դաւԹի, յարեաւ և յուղի անկաւ՝ գուցէ ընդ պատրուակաւ որսոյ, կամ որպէս Թէ ՚ի լրտեսել զընԹացս այլազգեաց որք Թշնամութեամբ էին ընդ սաւուղայ, և կամ այլ ինչ պատճառանօք, որով գիտեն իշխանք պատրուակել զՀմարիտ վախճան գործոց իւրեանց, և այնպէս չոգաւ առ դաւիթ ՚ի նորն անուանեալ վայր ամուր ՚ի մռայլ Լերինն զիփայի· (ուր փոխանակ նորոյ վուլկատայն ընԹեռնու՝ անտառ· և Եբրայականն՝ ամրութի)։ Նոր յոնաԹան և դաւիթ երկոքին մտերիմ բարեկամք արտակարգ սիրով Հանդիպեալ միմեանց, Հաստատեցին զերդումն, զոր արարին յառաջագոյն յանուն Տեառն· և յոնաԹան կրկին ևս քաջալերեաց զդաւիթ, մինչև մեկնեցան արտաստուալից ՚ի միմեանց· յոնաԹան գնաց ՚ի տուն իւր· իսկ դաւիթ եկաց յանտառի անդ։

Այլ ոչ միայն երկար ՚ի ծածուկ Թագուստնորա ՚ի զիփացւոց· և զի գիտակ էին նոքա անցից՝ զոր անցոյց սաւուղ ընդ քաղաքն նոմբայ ՚ի պատճառս

դաւթի, ապա զի մի և ընդ նոսա զնոյն արասցէ, միանգամայն և կամեցեալ զնորին գտանել առաջի սաւուղայ, եկին առ նա ի գաբաա ի բլուրն, և պատմեցին նմա իբր հաճոյական աւետիս տալով, թէ դաւիթ կայ թագուցեալ առ նոսա յապահովացեալ յանքոյթ վայրս անտառին ի բլուրն եբեղատու, որ է ընդ աջմէ անապատին զիփայ. և յորդորէին զնա իջանել ընդ նոսա՝ խոստանալով մատնել զդաւիթ ի ձեռս նորա։ Ուրախ եղև յոյժ սաւուղ. և գովեալ զնոսա, զի հաւատարիմ գտան առ նա, պատուիրեաց երթալ և լաւ ևս զննել զտեղին ուր իցէ թագուցեալ, և դառնալ առ նա հաւաստի տեղեկութիւք. և ապա երթիցուք ասէ ընդ ձեզ. և եթէ իցէ ղօղեալ ի հող երկրի, և անդ խուզեցից զնա բազմութիւք զօրաց իմոց։ Եւ դարձան զիփացիք ի սաւուղայ. բայց ոչ ևս գտին զդաւիթ անդ ի մեայլ լերին զիփայի, զի յառաջագոյն իմացեալ նորա եթէ գիտաց սաւուղ զտեղի թագստեան իւրոյ, և թէ գայ բազմութիւք զօրաց սպաշարել զնա, փոխեաց զտեղին, և էջ յանապատն մաոնայ ի դիւրի ընդ աջմէ յեսեմոնայ։ Ընդ այն ուղղեաց և սաւուղ զդնացս իւր. որ իբրև ազդ եղև դաւթի, թէ գայ սաւուղ յանապատ անդր զհետ նորա, փութայր երանել ի վէմն ի գլուխ բարձր և ապատաժուտ լերին։

Եւ մինչ ինքն ընդ արտնոյ իւրոց երթայր ընդ մի կողմն լերին, եհաս և սաւուղ՝ և երթայր ընդ միւս կողմն, և զօրք նորա բազմութիւն սփռեցան և պատեցին զլեառն, և ի մէջ առին զդաւիթ և զարս նորա. մինչև չթողուլ բնաւ ձանապարհ զերծանելոյ դաւթի ի ձեռաց նոցա. ուստի հարկ ի վերայ կայր կամ անձնատուր լինել նոցա, և կամ անդ յանձուկս լերին սովամահ կորնչել։ Մինչդեռ յայնմ յետին վտանգի կայր պահել դաւիթ, յորմէ ոչ փախստեամբ, և ոչ պատերազմաւ հնար էր նմա ապրել, ահա ի խնամոյ բարձրելոյն՝ եկն եհաս շտապ տագնապաւ հրեշտակ առ սաւուղ, գոյժ ետ նմա և ասէ, փութա՛ եկ, և մի յամես.

ցես, զի այլազգիք արշաւեցին յերկիրս քո, և չունե-
լով դիմակալ առաջի իւրեանց՝ իբրև հուր ընդ
եղէգն ընթանան ապականել զերկիրն։ Վասուղ
անբուժելի ախտիւ ատելուք կուրացեալ ընդդէմ
դաւթի, մեծագոյն ՚ի նմա համարիմք կորուսանել
զայն դիպողուն զբռամբ ածելոյ զատելին իւր՝ զոր
արդէն իբր ՚ի ձեռին ունել կարծեր, քան զինեա
այլազգեաց. բայց զօրապետք և զօրք նորա, որք
չունէին ինչ ընդդէմ դաւթի, յայլ միտս էին, առ
ոչինչ դրեալով զայն կարծեցեալ յաղթութի սաւու-
ղայ, հանդէպ ինեասն երկրին և տանց և ընտա-
նեաց իւրեանց։ Վասն որոյ և սաւուղ ակամայ
կամօք ստիպեցաւ թողուլ ՚ի ձեռաց զօրսն, և եր-
թալ ընդդէմ այլազգեաց. և յայնմանէ տեղին այն
կամ ժայռն կոչեցաւ. * Վեմ բաժանեալ կամ բա-
ժանիչ։ Իբր զի ժայռն այն էր խաւրոց բաժանման
կամ անջրպետ ՚ի մէջ փոքու գնդին դաւթի, և
զօրացն սաւուղայ՝ որոյ չինայր այլ ինչ, բայց միայն
անցանել զժայռն առ ՚ի ըմբռնել զդաւիթ. Կամ՝
ասացաւ * վեմ բաժանեալ։ զի անդ էթող սա-
ւուղ զդաւիթ, և բաժանեցաւ ՚ի նմանէ. կամ
ըստ այլոց՝ զի անդ բաժանեցան միտք և դատումն
սաւուղայ և զօրաց նորա, թէ ո՞ր լաւ իցէ, յօդ-
նուելիւն հասանել երկրին, եթէ պնդել զհետ
դաւթի։

Իբրև մեկնեցաւ անտի սաւուղ՝ երթալ ընդ-
դէմ այլազգեաց, դաւիթ ազատեալ ՚ի վտանգէն,
յարեաւ գնաց անտի, և նստաւ յայրի յանապատն
դադայ։ Իսկ սաւուղ յետ վանելոյ զայլազգիս,
իբրև դարձաւ ՚ի նոցանէ, լուաւ եթէ դաւիթ
թագուցեալ կայ յանապատին դադայ։ Ընտրեաց
վաղվաղակի ՚ի զօրուէն երիս հազարս, թողեալ
զայլս ՚ի պահպանութի երկրին ընդդէմ այլազ-
գեաց, զի մի՛ անդրէն արշաւեսցեն, և ել նոքօք ՚ի
խնդիր դաւթի, և յածեալ շրջեցաւ ընդ դաշտս և
ընդ անտառս, ՚ի լերինս և ՚ի քարաժայռս սեպհա-
գեալս, ուր հազիւ այծեմուխք և եղջերուք ելա-
նեն. եկն ՚ի վերջոյ և ՚ի մակաղատեղս հօտից որ

առ Ձանապարհաւն։ Իսկ անդ քարայր մի մերձ ՚ի ծովին մեռեալ. բերան նորա կամ մուտն՝ անձուկ, այլ ներքին կողմն որ մտանէր ՚ի մէջ լերինն՝ ընդարձակ էր յոյժ. որ ձգեալ տարածէր ՚ի զանազան ստորերկրեայ շաւիղս, ունելով՝ որպէս Թուի, անցս և յայլ կողմանս։ Ընդ նստէր դաւիթ և ամբ նորա ընդ նմա իբրև յամուր ակաստանի. իսկ սաւուղ յանցանելն ընդ այն՝ ոչ կարաց բնաւ կարծել, Թէ յայնպիսի յայտնի տեղւոջ ՚ի վերայ հասարակաց Ձանապարհի իցէ դաւիթ ապաւինեալ, ուր դիւրին էր գալ ՚ի յայտնութիւն. նաև բերան այրին որ հայէր ՚ի Ձանապարհն գոլով փոքր, ոչ տայր կարծիս ումեք Թէ հնար իցէ բազմաց ՚ի ներքս անդ պատսպարիլ։ Ընդ եմուտ և տաւուղ հանդչէր. (կամ ըստ այլոց՝ նստէր ՚ի կարիս որովայնի. յերբայականն ասի, ՚ի ծածկել զոտս իւր.) և զի մնեալ էր ՚ի լուսոյ ՚ի խաւար, ոչ կարաց նշմարել զտարածութիւն տեղւոյն. և ոչ զդաւիթ կամ զարս նորա տեսանել, զի էին ՚ի խորագոյն կողմն. բայց նոքա որք ՚ի խաւարէ ՚ի լոյս հայէին, տեսին և ծանեան զնա։ Եւ զի գոյր առ նոսա մարգարէութիւն ինչ Թերևս ՚ի նախայիշատակեալ դաւայ մարգարէէ, Թէ յաւուր միում մատնեսցէ Տէր ՚ի ձեռս դաւթի զթշնամի նորա, արքն որ ընդ նմա՝ համարեցան Թէ այն էր ժամն. վասն որոյ մատամբ ցուցանելով զարքայն, ասէն ցդաւիթ, ահա այս օր է, զորմէ ասաց Տէր ցքեզ մատնել զթշնամիս քո ՚ի ձեռս քո։ Յառաջ մատեաւ դաւիթ՝ Թերևս ՚ի սկզբան անդ դնելով ՚ի մտի ՚ի վերջ հասուցանել զխալածութիւն անձին, բառնալով զկեանս հալածչին իւրոյ։ Այլ իբրև մերձեցաւ առ նա, յիշելով եթէ օծեալ Տեառն է, ոչ իշխեաց միտել զձեռս իւր ՚ի նա. բայց միայն գաղտաբար եհատ զծայր վերարկուի նորա. սակայն յետոյ և ընդ այն ստոքացաւ. Թէպէտ ոչ առ Թշնամութեամբ զայն, այլ զի տայցէ սաւուղայ ՚ի միտ առնուլ զհաւատարմութիւն իւր առ նա, և գուցէ դադարեսցի ՚ի հալածելոյ զնա տարատարտուց. բայց

հարկ եղև նմա բազում աշխատիլ յորդոր բանիւք, մինչև համձեաց զարս իւր չսպանանել զնա, որպէս կամէին։

Եւ այնպէս զերծեալ սաւուղայ ի վերահաս վտանգէն կենաց առանց գիտելոյ իւրոյ, եւ յանհոգս յայրէն, և կալաւ զձանապարհ իւր։ Երբև փոքր մի հեռացաւ, եւ և դաւիթ զկնի նորա ի գուբս յայրէ անտի. նախ յիծ ապաւինեալ, և ապա յապահովութի կայանէն վաճահացեալ, ուր գիտէր թէ ոչ ոք համարձակի զինու յարձակիլ ի վերայ նորա ի նեղքս ի խաւարային յայրն անդ։ Երկու և եթ հնարիւք մարթ է յաղթել ամրացեալոց յայնպիսի տեղիս. կամ խցանելով զելս, զի սովամահ մեռցին. և կամ հրով, զի ի ծխոյ հեղձամուղձ լիցին։ Ասայց որպէս ասացաք, ունէր այրն անցս և յայլ կողմունս ստորերկրեայ ձանապարհաւ, ընդ որ կարէր փախչել. ապա թէ ոչ՝ զիարդ վտանգեալը յայնպիսի յայտնի տեղի ի վերայ հասարակաց ձանապարհի լինել ապաստան։ Այլ որպէս և իցէ. դաւիթ՝ որ համարձակեցաւ եւ յայրէ անտի, ձայն բարձեալ աղաղակեաց զհետ սաւուղայ, ասէ իւր և արքայ կոչելով զնա։ Ո՞կայ էառ սաւուղ ի ձայն նորա անկարծելի, դարձաւ և հայեցաւ ի թիկունս իւր. յայնժամ անկաւ դաւիթ ի վերայ երեսաց իւրոց, և եպագ նմա երկիր։ Եւ մինչ սաւուղ կայր ապշեալ ընդ անակնուներ դիպուածն, ասէ դաւիթ. Ընդ իմ ընդէր ունկն դնես բանից բանսարկուաց, որ ասեն քեզ, թէ դաւիթ խնդրէ զանձն քո։ Ահա յաւուր յայսմիկ տեսին աչք քո, թէ ո՞րպէս մատնեաց զքեզ ընդ այսօր ի ձեռս իմ յայրի անդ. և արդարև ի սկզբան անդ եղև ի սրտի իմում սպանանել զքեզ. այլ ոչ կամեցայ, զի խնայեցի ի քեզ, ասելով ի մտի, ոչ ձգեցից զձեռն իմ ի ընդ իմ, զի օծեալ տեառն է նա։ Հայեաց հայր իմ և տես ի ձեռին իմում զտտուն լօդկի քո, որ է նշանակ յայտնի, թէ ոչ լուկ ի հանդերձից՝ այլև յանձն քո կարօղ էի ի կիր արկանել զսուսեր իմ. և ահա կենդանի ես, զի ոչ կամեցայ տեսանել

զքեզ մեռեալ։ Եւդ՝ ծանիր և տես, զի ոչ գոյ ի ձեռին իմում չարութիւն, ոչ արհամարհութիւն անձինդ, և ոչ ամպարշտութիւն. այլ մեղայ քեզ, և դու լարես ինձ որոգայթ առնուլ զկեանս իմ։ Ընդ եղիցի դատաւոր ընդ իս և ընդ քեզ, ինքն առցէ զվրէժ իմ ի քէն. ի նմանէ երկիցես, և մի յինէն. զի ձեռն իմ ոչ երբէք եղիցի ի քեզ։ Վասն յինէն լինել անօրէն, քաւ լիցի թէ ելցէ միտս ի ձեռաց իմոց, ըստ հին առասպելին՝ թէ յանօրէնն ձեռաց ելցէ միտս։ Եւ արդ՝ զի՞ր զհետ եղեալ ես արքայդ իսրայէլի, և զո՞ հալածես, զայր մի տառապեալ անզէն և անզօր, անարդ և անօգնական. որ չար ինչ առնել քեզ ոչ զօրէ, որպէս շուն մեռեալ՝ որ ոչ կարէ խածանել, կամ լու մի չքոտի՝ որ մատամբ ձմլի։ Վարձեալ բողոքեմ յերկինս. ընդ եղիցի դատաւոր և իրաւարար ընդ իս և ընդ քեզ. տեսցէ և դատ տեսցի զդատաստանս իմ. նա փրկեսցէ զիս ի տառապարտ հալածանաց քոց։

Այս բանք դաւթի համարձակ և խոնարհ, լի յարգութիւք, բայց անյողդողդ. ոչ երկիւծանօղ, բայց բովանդակ յանդիմանութիւն, մանաւանդ մեծ յարուցին ի նեղբին կիրս սրտին սաւուղայ, և փոխեցին ի ժամուն զսիրտ անապօրոյն բռնաւորի ի սիրտ գորովական հօր։ Վանզի յողոքական միանգամայն և յարդար և յիրաւացի բանից աստի զլճեալ և մեղմացեալ սաւուղայ ի խստասրտութէն, խօսեցաւ առ դաւիթ ոչ իւր առ ոխերիմ թշնամի, այլ իբրև առ բարերար և երախտաւոր փեսայ իւր՝ ասելով գորովանօք։ Եւդ քո՞ ձայն էր զոր դաւիթ. զայս ասացեալ լռեաց առ վայր մի զի ի փղձկել գթոյն՝ ոչ կարաց խօսել, այլ ամբարձ զձայն իւր և եկաց։ Ապա զկնի սակաւ միոյ խօսեցաւ, և ասէ ցդաւիթ. բռնադատեաս զիս խոստովան լինել զանօրէնութիս իմ, և դատանել զարդարութիւն քո. այո՛ արդար ես դու քան զիս. մանաւանդ թէ ես միայն եմ անօրէն. զի դու արարեր ինձ բարիս, և ես հատուցի քեզ չարիս։ Վակեաց զիս որ այսօր ի ձեռս քո, և դու

խնայելով ոչ սպաներ զնա. զայսպիսի պանծալի անոխակալութենէ քո գործ, որ պատակէ զամենայն առաքինութենիս՝ որով փայլեցար ի մանկութենէդ քումմէ, ո՞ այլ ոք կարէր առնել, քան թէ դաւիթ. գտանել զհալածիչ իւր ի նեղուէ, և արձակել զնա բարեաւ ընդ ձանապարհ: Ա՛յ անկանի զարժանաւհասն տրիտուր այսպիսի չնաշխարհիկ առաքինութէ հատուցանել. նա հատուսցէ քեզ բարիս, որպէս դու արարեր ինձ այսօր: Այս արդ՝ գիտեմ զի թագաւորելով թագաւորեսցես, և հաստատեսցի ի ձեռս քո թագաւորութենին իսրայէլի. արդ՝ երդումիր ինձ ի տէր, մի սատակեսցես զզաւակ իմ զկնի իմ, և մի եղծցես զանուն իմ ի տանէ հօր իմոյ:

Դաւիթ բարեսիրտ և բարեխնդիր առ ամենեսին, յորմէ հեռի էր ոգի վրէժխնդրութենէ, երդուաւ նմա ի կողմանէ իւրմէ. նմին իրի յորժամ եհտ դաւիթ ի ձեռս գաբաւոնացւոց ի սպանումն զամենայն որդիս սաւուղայ, ոչ գործեաց ընդդէմ երդմանն. զի ոչ եթէ ինքն արար զայն ի վրէժխնդրութենէ անձին, այլ նա ի պատիժ անիրաւութենն սաւուղայ, զոր գործեաց ընդդէմ գաբաւոնացւոց: Արդ սաւուղ շատացեալ երդմամբ դաւթի, փող եհար և դարձաւ ի գաբաա: Նակ դաւիթ ոչ ինչ վստահացեալ ընդ այն բանն՝ ցուրտ և վայրկենական հաշտութենէ, յարեաւ յայրէն գադգայ ընդ արանց իւրոց, և էջ յանապատն մաոնայ, կամ ըստ վուլկատային՝ յանապատն փառանու. զի այս անապատք կից են միմեանց՝ ձգեալ ի հարաւային եզերս երկրին յուդայ առ սահմանօք մադիանացւոց արաբիոյ, և ամաղեկացւոց, և իսմայելացւոց, և սէյիր լերանց. անդ էր և լեառն կարմելոս, ուր էին հօտք նաբաղու: Դաւիթ փոխեցաւ ի կողմանն յայնոսիկ, զի ի պնդել սաւուղայ միւսանգամ զկնի նորա՝ դիւրաւ մարթասցի գտանել իւր տեղի ասպարէնի յերկրին այլազգեաց:

Ամօթալինէ ըզանկալի կեանս իւր։ Եւաբաղ մերձէ անաբ գաբար ըզտուրն։ Եբեգեա կին նաբաղայ արգելու ըզտուրն վոբել կենաց յարիւն անպարտ։ Եւաբաղ հարեալ ի տունէ մեռանէ։ Եբեգեա լինի կին դաւրի։

Յաւուրսն յայնոսիկ՝ մինչ դաւիթ պանդխտեր յանապատն մաոնայ. մեռաւ սամուէլ՝ եւ մարդաբէն, կնքեալ ըզանկալի կեանս իւր՝ ի բարւոք ծերութէ եւ լի արդեամբք յարիմաթեմ. յամի արարչութէ աշխարհի ըստ հաշուի կեսարու կաղինոսի 3114. իբր լինն ամսովք յառաջ քան զմահ սաւուղայ։ Եւ ժողովեցան յամենայն կողմանց որդիքն իսրայէլի լացին և կոծեցան զնա որպէս զերկրորդ մովսէս սուրբ բաղումն, և թաղեցին մեծահանդէս փառաք անդ՝ ի յարիմաթեմ յիւրում ագարակի։ Յայնժամ բացան աչք ապաշնորհ ժողովրդեան, և տեսին թէ յումմէ զրկեցան, որոյ բարութէնք միահամուռ յուշ եղեն նոցա։ Եւ իւրեանցն նորա՝ ի պաշտօն խորանի ձեն՝ ի տղայութէ հոտակի։ Նախանձ վաստակ նորա՝ ի մատակարարութէն դատաւորական իշխանութէնէ ընդ ամն իբր երեսուն և ութ։ Ընդարութէն նորա՝ ի դատաստանի։ Եւ ախանձ նորա վասն փառացն ոյ՝ ի նորոգումն ծաղկաշտութէ, և՝ ի բարձումն զերծմանց և անօրէնն կռապաշտութէց որ յաձախեալ էր առ նոսա։ Հրաշալի զօրութէ աղօթից նորա առ ած։ Նվիրեալ կատարումն մարգարէութէց նորա։ Նախատոր ուղղութէն նորա յամենայնի, որ ոչ դիտեր երբէք առնուլ ակն երեսաց։ Զատադէմ համարձակութէն նորա առաջի թագաւորին և առաջի ժողովրդեան՝ ի խօսել առ նոսա՝ ի դէմս ոյ, և՝ ի կշտամբել զամպարշտութէնս նոցա։ Նկեղծ սէր և հայրագութէ խնամք՝ ի վերայ նոցա։ Օ՜ այս ամենայն և զայլ սոցին սակի բարու-

թէ նորա յայնժամ անագան ուրեմն ծանեան մինչ ոչ ևս կարէին վայելել ՚ի բարուքէ նորա. քանզի այս է պայման ապաշնորհ մարդկան, ձանձրանալ զյարգ բարւոյն, յորժամ կորուսանեն զնա։

Ընդ աւուրան ընդ այնոսիկ մինչդեռ էր գաւիթն և վեցհարիւր արք նորա ընդ նմա յանապատին մառնայ, դէպք ինչ ընդառաջ եղեն նորա, որով փոքր մի ևս ոչ սակաւ նսեմացուցանէր զփայլ պայծառութենէ ամենայն առաքինագործութենց իւրոց։ Վասնզի էր այր մի ՚ի մանն՝ անուն նորա Նաբաղ, այր մեծատուն, այլ ըստ բուսոյ բարուց ժանտ՝ վայրենամիտ, ագահ և տմարդի։ Որ նորա ոչ խարք երեք հազարք, և այծք հազար, որք արածէին ՚ի կարմելոս, ուր շրջէր գաւիթ. բայց ոչ ինքն և ոչ արք նորա նեղուքեն ինչ կամ ՚ի նա եբեք հասուցին հովուաց՝ կամ խաշանց նորա, զամենայն աւուրս որչափ եղեն ընդ նոսա անդ ՚ի կարմելոս. այլ մանաւանդ պահէին ՚ի ինասուց օտարաց, լինելով իբրև պարիսպ նոցա զցայգ և զցերեկ ընդդէմ գազանաց և գողոց և աւազակաց։ Վասն եղև նաբաղայ գալ անդր ՚ի կարմելոս ՚ի կտուրս խաշանց իւրոց. այն աւուրք էին առ նոսա խրախուքէ և առատ խրախճանուքեամբ, և լինէին ատեպ հրաւէրք բարեկամաց և ծանօթից ՚ի ձայն և ՚ի խնջոյս ուրախուքէ։ Ոյն յորժամ լուաւ գաւիթ, ժամ պատշաճ և դիպող վարկաւ իբրև դրացի և իբրև բարեկամ երախտաւոր նաբաղայ ՚ի պահպանուի հօտից նորա, առաքել յողջոյն նմա, վստահացեալ եթէ յայն խրախուքենց աւուրս ոչ դարձուսցէ զհրեշտակս իւր ձեռնունայն։ Վասն որոյ ընտրեալ յարանց անտի իւրոց տասն երիտասարդս խոհականս և աչալուրջս՝ առաքեաց զնոսա առ նաբաղ, պատուիրելով մի ահարկու երևիլ առաջի նորա, և մի սպառնալեօք խնդրել ինչ ՚ի նմանէ. այլ յաւէտ սիրալիր և համբոյր բանիւք հարցանել յանուն իւր զողջունէ նորա և ամենայն տան նորա. և պատմել առաջի նորա զբարութենէն զոր արարին յանապատի անդ ընդ հովիւս և ընդ

հօտս նորա, ոչինչ իւիք խօսելով զնոսա կամ նեղելով։ Այլ ապա առանց զայս կամ զայն յանուանէ խնդրելոյ ի նմանէ, Թողուլ ի կամս նորա, զոր ինչ ինքնակամ յօժարեսցի տալ. և առ առաւել յօժարամիտ առնելոյ զնա, չտալ ինքեան անուն փառաւոր, այլ որդի նորա անուանել. այսպէս ասելով. * գոցեն մանկունքդ ընորհս առաջի աչաց քոց, զի ի բարի աւուր եկիցեն. և արդ տացես որչափ ինչ և գոցէ ձեռն քո ծառայից քոց, և որդւոյ քում դաւթի ||։

Օ այս հրեշտակութիւն կատարեցին արք դաւթի ամենայն պատշաճաւոր մեծարանօք՝ հանդերձ վայելուչ զինուորական ինն համարձակութիւք. որ սիրելի է յոյժ և հաճոյական ազատամիտ անձանց մեծամեծաց։ Այլ ի բերտ յագահ և ի վայրենի սիրտ նաբաղայ ոչինչ ազդեցին. զի պատասխանի նորա եղև ըստ իւրում վայրագ և խժդժական մտաց։ Ո՞ է դաւիթ, ասէ խրոխտալով, կամ ո՞ որդին յեսսեայ. ոչ այլ ինչ տեսանեմք այսօր, բայց ծառայս փախստականս իւրաքանչիւր յերեսաց տեն իւրոյ. որոց ոչ շատացեալ թօթափել զլուծ նոցա ի պարանոցէ իւրեանց, խնդրեն և տիրել ի վերայ տեարց իւրեանց։ Արդ՝ կարծիցէ՞ դաւիթ թէ առնուցում զկայ իմ և զգինի և զընկնլիս իմ, զոր պատրաստեցի կտրողաց իմոց, և տայցեմ փախստականաց, զորս ոչ գիտեմ թէ ո՞ւր ծնան, և ուստի՞ երևեցան յերկրի իմում։ Այս է իմ պատասխանի, զոր տարջիք առ որ առաքեաց զձեզ։ Որչափ բառք ի սմա, նոյնչափ նախատինք անբերելիք առն սպարապետի, մանաւանդ թէ թագաւորի ընտրելոյ առ յոյն։ Օ արմանք էն, զի լռութեամբ տարան արքն այսպիսի դառն նախատանաց, և ոչ անդէն և անդ առին ի ժանտէն զքէն վրիժուն. վասն զի այնպէս պատուէր ունէին ի դաւթէ, խաղաղութիք վճարել զհրեշտակութիւն իւրեանց։

Այդ այսպէս անարգաբար արձակեաց զնոսա այրն վայրենամիտ. Թերևս ի բազմութիւն հովուաց և ծառայից իւրոց վստահացեալ, չունէր ինչ կար-

ծիս երկիւղի ՚ի տասն զինուորաց. և զայն զմտաւ ոչ ածէր անմիտն, Թէ դիւրին էր նոցա դառնալ անդրէն բազմաթիւ, և բնաջինջ կորուսանել զնա, և զամենայն տուն նորա: Այր և անշուշտ ՚ի գլուխ ելանէր, եթէ կնոջ նորա չէր ՚ի ժամու իմացեալ զնրան, և խափանեալ իւրով իմաստութիւ զչարիս, որ ունէին հասանել ՚ի վերայ ամենայն տան նորա: Այանգղ յառնուլ դաւթի զայն պատասխանի նաբաղայ, նոյն ժամայն հրամայեաց արանց իւրոց ածել ընդ մէջ իւրաքանչիւր զսուր իւր, և ինքն նոյնպէս սպառազինեալ ՚ի գլուխ չորեքհարիւր արանց, Թողեալ զերկերիւրն անդէն առ կարասին ՚ի պահպանութիւն, եւ ՚ի ձանապարհ ասելով զուր ուրեմն պահեցի զամենայն ինչ նաբաղայ յանապատի անդ մերում. ՚ի ձեռին իմում էին ամենայն հօտք նորա, և ես բազում անգամ կարօտ պաշարի, բայց և այնպէս ոչ միայն չմերձեցայ առնուլ ինչ յամենայնէ որ նորա էր և ոչինչ, այլև պահեցի զնոսա ՚ի թշնամեաց, որով և ոչ մի յոչխարաց նորա կորեաւ: Այժ արդ՝ այսչափ երախտեաց իմոց հատուցումն այսպիսի ընդունիմ. այսպէս և այնպէս արասցէ ինձ ած, եթէ Թողից յամենայնէ նաբաղոյ մինչև ցառաւօտ, որ ունիցի չունչ կենդանութիւն:

Այլ յետ արձակելոյ նաբաղայ զհրեշտակսն դաւթի, մի ոմն ՚ի հովուաց նորա աձապարեաց ընթացաւ առ կինն նորա, զի ՚ի ժամուն յոր եկին հրեշտակքն, նա ոչ գտաւ անդ. և պատմեաց նմա զամենայն երախտիս զոր ցուցին նոցա յանապատի անդ դաւիթ և արք նորա, և զտմարդութիւն նաբաղայ Թէ զիա՛րդ անարդաբար մերժեաց զնոսա յերեսաց իւրոց: Այժ արդ՝ գիտասցես ասէ և տեսցես Թէ զի՞նչ գործեսցես, զի վճարեալ է կործանումն ՚ի նմանէ մերում և ամենայն տան նորա. և փոքր միւս ևս տեսցես զդաւիթ և զչօրս նորա աստ ՚ի տան քումմ. ոչ գոյ ժամանակ յերկարաձգելոյ, և ոչ իսկ խօսելոյ ընդ ՚ի՛ն մերում, զի նա այր ժանտ է և գազանաբարոյ, և ոչ գիտէ անսալ բանի: Այսկ կինն որում անուն էր աբիգեա, կին ժրագլուխ

զգաստ հանձարեղ և առատ իմաստութիւք, միանգամայն և տեսլեամբ գեղեցիկ, որ որպէս երևի էր անգէտ թէ ո՛վ էր դաւիթ, և զինչ հանդերձեալ էր լինել, իբրև լուաւ զայն, առանց ասելոյ ինչ առն իւրում, ետ նոյնհետայն բառնալ 'ի վերայ իշոյ երկերիւր նկանակ հացի, և երկուս ամանս գինւոյ, և հինգ ոչխար եփեալ, և հինգ արդու փոխնդոյ, և կալաթ մի չամիչ, և պաղատիտս թղոյ երկերիւր. և արձակեաց զնոսա երթալ յառաջագոյն. ապա և ինքն ելեալ յէջն՝ գնաց զկնի. և յիջանել նորա ընդ զառ 'ի վայր կարմելոս լերին, ահա և դաւիթ և արք նորա իջանէին 'ի հանդիպոյ 'ի լերանցն փառանու ընդ առաջ նորա. և դիպեցան միմեանց 'ի ձորն որ 'ի մէջ երկուց լերանց։

Իբրև ետես աբիգեա զդաւիթ, փութացաւ և էջ յիշոյն, և անկաւ առաջի դաւթի 'ի վերայ երեսաց իւրոց, և երկիր եպագ նմա. և ապա յառաջ մատուցեալ տարածեաց զանձն առ ոտս նորա, և առեալ 'ի բերանոյ նորա զբանս ապաւնալեաց, զոր առաքին խօսեր դաւիթ առ զինուորս իւր վասն ապերախտութեանն նաբաղայ, ասէ աբիգեա. ես եմ ինասապարտ անիրաւութենն, յիմ վերայ եղիցի պատիժն. բայց նեղեա՛ զի խօսեսցի աղախին քո յականջս քո, և լուիցես բանից աղախնոյ քո։ Այս ցաւագին սկզբնաւորութենի բանից վշտահար կնոջն՝ ետ դաւթի զկայ առնուլ։ Ապա սկսաւ աբիգեա ցուցանել զնաթաղ զայր իւր յաւէտ կարեկցութենէ արժանի, քան թէ վրէժխնդրութենէ. զի ըստ անուանն նորա ասէ՝ և ինքն է յիմար և խելացնոր. նաբաղ անուն նորա, և անզգամութենի և յիմարութենի ընդ նմա. վասն որոյ չէ արժան գրել ինչ զբանս և զգործս առն որ ոչ գիտէ թէ զինչ խօսի և զինչ գործէ։ Յետոյ առ արդարացուցանել և զանձն՝ ասէ. իմ թշուառութենի այն է, զի ոչ գտայ ես անդ, և ոչ տեսի զկրեշտակս քո զոր առաքեցեր՝ ընդունել զնոսա ըստ արժանեաց ձեռդ իմոյ։ Այս կամեցեալ արդեամբք հաւաստել զանհնազանդութենէն բա-

նից իւրոց, աղաչէ ընդունել զպարգևսն զոր եբեր, և բաշխել զօրացն որ ընդ նմա էին. Թողուլ զյանցսուածս իւր։ Եւ յարէ. բայց արդ որպէս ճշմարիտ է Թէ կենդանի է տէր, և կենդանի է անձն քո, նոյնպէս ճշմարիտ է Թէ ես առաքեաց զիս արդելուլ զքեզ չգալ յարիւն անպարտ. զի ոչ կամի տէր Թէ շաղախեսցին անարատ ձեռք քո յարիւն եղբարց քոց։ Եւ ապա մնդղէ՝ միանգամայն և գուշակէ հաստատուԹի տան նորա, և յաջողուԹի պատերազմաց նորա, և Թագաւորել՝ի վերայ իսրայէլի. և յընԹացս բանից իւրոց ուրեք ուրեք մեղմով ինչ զգուշացուցանէ չգործել ինչ ընդդէմ նմա, չարուԹեասկ՝ մի երբէք գայցի՝ի քեզ։ Եւ որ սահմանեալ ես՝ի տնէ առաջնորդ լինել իսրայէլի, մի ընդ ձնասպարհ անպարտ արեանց հեղման մատիցես յայն սԹոռ. որ լինիցի քեզ՝ի միտնջենաւոր զեղջ և՝ի հեծուԹ և՝ի տագնապ սրտի անփարատելի։ Վասզի տես ասէ տէն զվերէժխնդրուԹի արդարուԹէ քո. զի եԹէ գայցի ոք հալածել զքեզ, և խնդրել զանձն քո, նա պաշտպանեսցէ քեզ, և պահեսցէ զքեզ իբրև զանձ պատուական՝ի ծրարի կենդանեաց, որք կենդանի են յաւծ. և նա զօրացուսցէ պարտաքարել զԹշնամիս քո։ Եւ կնքէ զբանս իւր ասելով, յորժամ բարի արասցէ տէր տեառն իմում, յիշեսցես զաղաչիկն քո՝ բարի առնել նմա։

Ասպիսի խոնարհ և հանձարեղ փաստաբանուԹԲ գրաւեաց աբիգեա զսիրտ դաւԹի բովանդակ. առ որ բնուԹի և ընորհք միանգամայն զուգընԹացան։ Վասզի տեսանել առ ոտս խոնարհեալ պատագին զայնպիսի մեծարու տիկին որոյ իմաստուԹի, բարեպաշտուԹի, համեստուԹի, առատաձեռնուԹի, լեզու անկեղծ, և գեղ երեսաց առհասարակ փաստաբանելին, բնապէս զինջոյց զառաջին բռնուԹի յարձակման բարկուԹե։ Եւ տեսանել՝ զի խօսի ոչ այնչափ յօգուտ և՝ի փրկուԹի տանն նաբաղայ, քան Թէ նորին իսկ դաւԹի՝ արգելուլ զնա՝ի մեղայ ընդդէմ բարձրելոյն, իսպառ խաղաղացոյց զնա։ Վասնեաւ դաւիԹ զմեծուԹի չարեաց, յոր

մղէը զնա տարապայման վառուցն բարկութէ. վասն այնորիկ օրհնեաց զնոր՝ ած իսրայէլի, որ առաքեաց զնա ընդառաջ նորա. օրհնեաց և զնա ինքն զաբիգեա, և զխորհուրդ և զիմաստութէն նորա, զի արգել զնա յիւր անձնական վրէժխնդրութէ և յայնչափ արեանց հեղմանէ, ըստ որում եղեալ էր ի մահ՝ չթողուլ նաբաղայ մինչև ցլոյս առաւօտու, որ ունիցի շունչ կենդանութէ յերնգունս մինչև ցշուն մի: Այս այնպէս խաղաղացեալ ոգւով առ ախորժ հաճութէ զամենայն ինչ զոր եբեր նմա. և յարձակէըն զնա ասէ. Ել՝ ի տուն քո խաղաղութէ, և մի ինչ կասկած երկիւղի ունիցիս, զի ոչ հասցէ յինէն չար և ոչ մի, ոչ քեզ և ոչ տան քումդ. տես զի լուայ ձայնի քումդ, և ակն առի երեսաց քոց: Այս գնաց աբիգեա ուրախութէ՛ ի տուն իւր. և դաւիթ նոյնպէս դարձաւ գոհութէ՛ յանապատ իւր, ոչինչ խղձելով սակս չկատարելոյ զերդումն ջնջելոյ զտունն նաբաղայ. զի գիտէր, թէ զերդմունս որ տանին՝ ի մեղս՝ աշխարել պարտ է, և ոչ արդեամբք՝ ի գործ արկանել:

Իբրև դարձաւ աբիգեա՝ ի տուն իւր, եգիտ՝ զի՝ ի ժամուն յորում ինքն կայր անկեալ արտասուագին առ ոտս դաւթի խնդրելով գթութէ՛, նաբաղ այր նորա ոչինչ հոգացեալ ոչ վասն անձին, և ոչ վասն կնոջն՝ խրախանայր ընդ բարեկամս՝ ի սեղան մեծահաց իբրև՝ ի խրախութէն թագաւորի, և էր ինքն արբեալ յոյժ: Այսին իբրև առ ժամն լուեաց և ինչ ոչ խօսեցաւ նմա. զի առաջին կանոն գիտելոյ բարւոք խօսել՝ է գիտել զժամանակն խօսելոյ: Այսպա ընդ առաւօտն իբրև սթափեցաւ նաբաղ՝ ի գինւոյ անտի, զմտաւ ածեալ աբիգեայ՝ թէ այն գործ զոր արար ոչ՝ ի ծածուկ, այլ յայտնի հանդերձ գործակցութէ՛ բազմութէն ծառայից, միանգամայն և պակասութէն այնչափ ուտելեաց՝ ոչ կարեն ընդ երկար մնալ՝ ի թագուն, և զի յայսպիսի իրս լաւ ևս է՝ զի նա որ արարն՝ լինի առաջին պատմող, քան թողուլ զի յայլոց պատմեսցի այլով կիսանկար խմն գծագրութէ՛, զի առաջին

տեղեկութիւն կարի լաւ տպանայ ի սիրտ՝ մանաւանդ խստաբարոյից, վասն այնորիկ աճապարեաց աբիգէա, և ինքնին պատմեաց նմա զամենայն որ անցին ընդ նա: Այն իբրև լուաւ նաբաղ, ի յանկարծահաս երկիւղէն կորոյս միանգամայն զամենայն զգայարանս իւր, հատաւ բարբառ ի բերանոյ նորա, և եկաց անշարժ իբրև զքար. և ի տասներորդ աւուր հարեալ ի վրէժխնդիր ձեռաց ոմն ամենակալի՝ մեռաւ, կամ կաթուածով, և կամ այլ ինչ գաղտնի պատուհասիւ:

Իսկ այսր չարախտաւատ մահուն նաբաղայ՝ վազվազակի հնչեցաւ ընդ երկիրն: Լուաւ և դաւիթ յանապատի անդ, և օրհնեաց զնոր գոհանալով զնմանէ. ես ասէ կամիմ առնուլ զվրէժ իմ ի նաբաղայ, և ոչ յիշեի թէ այս իրաւունք պահեալ են ոմն, և թագաւորաց, որք նորա պաշտօնեայք են, յոր չև է իմ հասեալ. նորա ողորմութիւնն պահեաց զիս ի յանցմանէ անտի, և արդարութիւնն խնդրեաց զվրէժ նախատանաց իմոց. արդեւ զձեռն իմ չհեղուլ զարիւն, և ինքն զչարութիւն նաբաղայ դարձոյց ի գլուխ նորա: Եւ նոյն ժամայն եղ ի մտի, թէ բառնալով ոմն զկնեանս նաբաղայ, զաբիգէա զկին նորա, որում չէր նա արժանի, նմա պատրաստեաց ի կնութիւն: Յուսեր պէտս դաւթի յայլոց տեղեկանալ զլաւութէ նորա. զի աչօք ետես զնա, և անձամբ խօսեցաւ ընդ նմա, և ծանեաւ զիմաստութէն և զհանճար նորա: Այլ թոյլ ետ անցանել ի վերայ՝ աւուրց, որչափ ըստ սովորութէ պատեհ և պատշաճ էր համեստութէ աշնուական կնոջ կալ իբրև սգաւոր յայրիութէ. և ապա առաքեաց առ նա ի կարմէլոս ի գլխաւորաց անտի արանց իւրոց՝ յայտնել նմա զկամս իւր, թէ խնդրէ առնուլ զնա կնութեան: Եւ աբիգէա զպատգամ դաւթի, յարեաւ երկիր եպագ ի վերայ երեսաց իւրոց առաջի պատգամաւորաց նորա, զնա ինքն զդաւիթ պատուելով ի նոսա. և ասէ, ասասջիք ոն իմում, թէ ահաւասիկ կայ աղախին քո ի ստրկութէ լուանալ

լոյ զոտս ծառայից նոյն իմոյ : Առեալ պատգամաւորաց զայս խոնարհ պատասխանի աբիդեայ , որով յայտ առնէր զհաւանութիւն կամաց իւրոց , դարձան առ դաւիթ : Եւ աբիդեա փութացեալ պատրաստեաց զանձն , և առեալ ընդ իւր հինգ աղջիկ յաղախնեայց անտի իւրոց , եկ յիշ և գնաց . և փոքր մի յետոյ զկնի պատգամաւորացն եհաս առ դաւիթ . և եղև նորա կին : Նմին դաւիթ և այլ երկու կանայք , մեղքող դուստր արքային սաւուղ այ . և աքինոամ ի քաղաքէն յեզրայելի որ էր ի բաժնին յուդայի . այլ զմեղքող եւս սաւուղ փաղտիելի որդւոյ յեմեսսեայ ռումմացւոյ , ոչ յօրինաւոր կնութիւն , այլ ի չնութիւն . զի դաւիթ ոչ էր արձակեալ զնա , և ոչ տուեալ նմա գիր ապահարզանի , որպէս զի ըստ օրինաց կարիցէ լինել առն այլում : Եւ այնպէս սաւուղ առ դժոխային ատելութիւն զոր կրէր ընդդէմ դաւթի , ոչ ամաչեաց առակ նշաւակի աշխարհի կացուցանել զդուստր իւր ի հանապազորդ չնութիւն մատնելով զնա , ի նախատինս անձին և դստերն և ամենայն տան նորա :

ԳԼ. ԻԵ.

Դաւիթ վերստին գայ յանապատն ջիփայ : Սաւուղ մատնուիլ ջիփացւոց՝ հասանէ անդ զկնի նորա , և մատնի դարձեալ ի ձեռս դաւիթ . այլ սա խնայէ ի նա , և խոյս տայ ի գէթ :

Յետ այսորիկ հանգիստ գտեալ դաւիթ առ ժամանակ մի ի հալածանացն սաւուղայ , վստահացաւ մերձենալ ի սահմանս երկրին յուդայ , առ հեշտեաւ գտանելոյ սարէն արանց իւրոց . զի յանապատին մաոնայ կամ փառանուն թէպէտ աներկևան էր ի սաւուղայ , բայց պաշար դժուարաւ

գտանէը ։ Ալ ասն որոյ էլեալ անտի , եկն ՚ի բլուրն եքեղատու՝ հանդիպ եսեմինայ առ սահմանօք անա պատին զիփայ մեայլ լերին . ակն ունելով՝ թէ տե սեալ զիփացւոց ակն յանդիման զաքանչելի նախա խնամութէին ՚ոյ ՚ի վերայ անձին իւրոյ , թերեւս ՚ի կողմն նորա միտեացեն , կամ գէթ չար ինչ ոչ խոր հեացին նմա ։ Այլ վրիպեցաւ . զի նոքա կամ յեր կիւղէ սաւուղայ , և կամ յահէ նորին իսկ դաւթի , որում միանգամ մատնիչ եղեն , երկուցեալ թէ ՚ի զօրանալ նորա , հանցէ զվրէժ անօրէնն մատնուէն ընդ կառափին նոցա , կամ էին ամենայն իրօք կորու սանել վնաս ։ Նորին աղագաւ իբրև տեսին զնա միւսանգամ ՚ի սահմանս իւրեանց , վաղվաղակի աղդ արարին սաւուղայ ՚ի գաբաա ՚ի բլրին ։ Նսկ սաւուղ եթէ մոռացաւ զնախընթաց փորձս , զոր այնչափ տաժանմամբ փորձեաց վայրապար , կամ զապաշաւն իւր և զարդարութէն աստէղոյն իւրոյ՝ զոր ինքնին բերանով խոստովան եղև , գէթ պարտ էր յուշ ածել զվտանգն իւրոց կենաց , յոր անկաւ միանգամ ։

Նայց գազանացեալ կիրք նորա չետուն նմա ՚ի թէ զայսոսիկ խորհել , այլ և ոչ իսկ զկարևոր զգուշութէնն առնել յապահովութէի անձին , որպէս արար այլ անգամ . այլ հակառակ ամենայն կանո նաց խոհեմութէե ՚ ՚ի լսել անդ ՚ի զիփացւոց զյայտ նել դաւթի ՚ի սահմանս նոցա , նոյնժամայն յարու ցեալ էառ երեք հազար զինուորս յարանց ընտրե լոց յամենայն իսրայէլ , որք էին նորա թիկնա պահ , և խաղացեալ հասչեալ ընթացիւք՝ ՚ի ջա նապատն զիփոյ . և բանակեցաւ ՚ի բլրին եքեղա տու , զի ընդ երեկս էր . և զօրն պարտասեալ յաշ խատութէ բուռն ընթացից . եդեալ ՚ի մոխ անդ ուռկանել զդաւթէ և զամենայն արս նորա միա համուռ ընդ նմա . այլ ինքն անկաւ յուռկանն դաւ թի ։ Վանզի խմացեալ դաւթի հաւաստեաւ ՚ի լրտեսաց իւրոց զլինել սաւուղայ անձամբ անդ ընդ զօրու իւրում , եկն գաղտաբար մերձեցաւ ՚ի տեղի անդր լրտեսել զդիրս բանակին , և զտեղի խորա

նին սաւուղայ. ունելով ընդ իւր զերկու ՚ի զօրաւորաց արանց իւրոց, զաբիմելէք քեհատացի, և զաբեսսա որդի շարուհեայ զեղբայրը յովաբայ. եւ՝ զի խորանն սաւուղայ էր ՚ի մէջն բանակին, և առնովաւ վրանն աբեննեերեայ որդւոյ նեերեայ, որ անձնասպահապետ և զօրավար էր սաւուղայ, և զօրն ամենայն բանակեալ էր շուրջ զնովաւ, և առնէքեան ՚ի քուն խորին ընկղմեալ։ Այրև եհաս ՚ի վերայ խաւար գիշերոյ, ասէ դաւիթ ցարան որ ընդ նմա, ո՞ ՚ի ձէնջ մտցէ ընդ իս առ սաւուղ ՚ի բանակն. երկոքին պատրաստաք էին, այլ աբիմելէք եթող աբեսսայ, զի նա կանխեաց և ասէ, ես մտից ընդ քեզ։

Ա՛տին դաւիթ և աբեսսա ՚ի բանակն, և անցեալ ընդ մէջ զօրաց, եկին և մեղմով լինն մտին ՚ի՞ խորանն սաւուղայ. տեսին զի ննջէր նա ՚ի քուն թանձրութե՛ ՚ի գահոյս. և գեղարդն ցցեալ ՚ի գետին ՚ի մնարից նորա, և կուժ ջրոյն առ նովաւ։ Ասէ աբեսսա ցդաւիթ. ահա ժամ գիսլօղ բառնալ զքշնամին քո, զոր փակեաց ՚ետ այսօր ՚ի ձեռս քո. եթէ դու խղձես, տո՛ւր ինձ հրամանն՝ զի հարից զսա գեղարդեամբս յերկիր միանգամ, և ոչ կրկնեցից։ Ասէ դաւիթ, զգո՛յշ լեր. ո՞վ լոկ որ ձգիցէ զձեռն իւր յօծեալ տէն, և անպարտ լինի ՚ի քրէական մեղաց. կենդանի է տէր թէ շաղախեցից զձեռն իմ յարիւն դորա. բայց եթէ տէր ինքնին հարցէ զդա, կամ բնական օրհասաւ մեռցի, և կամ ՚ի պատերազմի. այլ ես ոչ երբէք ձգեցից զձեռն իմ յօծեալ տէն. բայց արդ՝ առ զգեղարդնդ ՚ի մնարից դորա, և զկուժ ջրոյդ, և գնասցուք ՚ի մեզ։ Եւ այնպէս թողեալ զնա ՚ի քուն, գնացին. և ոչ ոք ՚ի բազմութե՛ն անտի, և ոչ իսկ աբեննեեր որ էր անդ մերձ՝ գիտաց ինչ. զի ամենեքեան ՚ի քուն խորին խորդացին։

Ո՛վ մարդ բանիւ արտայայտել, թէ յո՛ր վտանգ կորստեան արկ դաւիթ զանձն իւր. Սաւուղ ննջէր ՚ի մէջ բանակի երից հազարաց. և աբեննեեր անձնասպահապետ առ նովաւ. արդ անցանել նորա

ի միջոյ այնչափ բազմութիւն, մտանել ի խորանն սաւուղայ, և անդ մերձ առ գահոյս նորա, այնչափ վիճել ընդ աբեսսայ, և բառնալ զգեղարդն նորա և զկուժ ջրոյն, անլուր համարձակութիւն է արտաքոյ ամենայն կանոնաց խոհեմութեանն, եթէ չիցէ յանդգնութիւն։ Վասնզի շատ էր միւսմ և եթ յայնչափ բազմութիւն զարթնուլ, և զբանակն ողջոյն ի գլուխ վառել, և անդէն զերկոսին միանգամայն կոտորանել։ Վասն որոյ ասիցէ ոք, թէ դաւիթ տեղեակ բնաբոյս բարուց զօրաց իւրոյ ապգին, որք միշտ բանակ հարեալ ուրեք յերկրի իւրեանց՝ չունէին կասկած երկիւղի յարտաքին թշնամեաց, ոչինչ փոյթ առնէին յաղագս գիշերապահ զգուշութեան։ Այլ ինքն իրի և յայնժամ առ ոչինչ դրեալով զսակաւաթիւ զօրս դաւթի, ննջէին յանհոգս առանց գինուորական գիշերային պահպանութեան. ուր ըստ գինուորական օրինաց հանապազ հարկաւոր է պահպանութիւն, թէպետ և աւելորդ թուիցի։ Այլ և գիտեր դաւիթ, եթէ որովհետև զօրք սաւուղայ յաշխատութիւն ձեռընթաց ձանապարհորդութեան զօրն ցերեկ՝ վաստակեալ լուծեալ էին, հարկաւ քուն նոցա յայնմ գիշերի ուներ լինել խորին յոյժ. և յայս վստահացեալ արար զայն փորձ։ Այլ ոչինչ յայսցանէ բաւական է ցուցանել հաստուն խորհրդով ձեռնարկել դաւթի յայն փորձ։ Այլ քանզի դաւիթ յամենայն գործս և ի գնացս իւր արթուն էր յոյժ և զգաստ և ամենայն իրօք զգուշաւոր, վասն որոյ կարի հաւանելի է, թէ նաև յայս գործ ոչ ինքնագլուխ յերիտասարդութիւն ջերմութիւն վարեալ մինեցաւ, որպէս համարեցան ոմանք, այլ ի շարժութիւն վերնոյն՝ յառաւել լուսափայլութիւն աքանչելի անյիշատարութիւն նորա. զոր թուի ակնարկել և գիրն՝ յասել անդ. * Վասնզի թմբրութիւն ի ՚ներ անկաւ ի վերայ նոցա ‖։ Այլ այլք ասեն, թէ այս բան ըստ ոձոյ ՚որ գրոց՝ ցուցանէ զսաստիկ խորութիւն քնոյ նոցա ձևով ընդլայնման. որպէս ասի լեառն ՚այ, ծառք ՚այ և այլն, զմեծութիւն նոցա ցուցանել կամելով. և սակայն յայտնի ևս

երևի նշանակել՝ եթէ գիրն թէ՝ ած կալաւ զնոսա՝ ի քուն, ի հանդէս սխրալի առաքինութեանէ ծառայի իւրում դաւթի՝ ըստ ասացելոցս. զոր և յաջողակ ելք իրացն հաստատեն։

Լուդ առեալ զգեղարդն և զկուժ ջրոյն սաւուղայ՝ գնացին անտի, և անցեալ յայն կողմն ձորոյն՝ եկին ի հանդիպահայեաց լեառն, ուր կային արք դաւթի սպառազինեալք։ Լսկայ դաւիթ ի գլուխ լերին, ունելով ի միում ձեռին զգեղարդն սաւուղայ, և ի միւսումն զկուժ ջրոյն. և ըստ օրինի զօրավարաց յորժամ ի զէն խրախուսեն զզօրս, բարբառեցաւ ի բանակն սաւուղայ. ապա առ աբենեներ՝ յանուանէ կոչելով զնա. աբենները ոչ տաս պատասխանի. ի ձայն անուան իւրոյ զարթուցեալ աբենեներայ, ով ես դու ասէ՝ որ կոչես զիս առ արքայ. (կամ ըստ վուլկատային, որ աղաղակես և անհանգիստ առնես զարքայ)։ Լսէ դաւիթ. ես եմ որ խօսիմ առ քեզ աբենները. ոչ ապաքէն այր քաջ ես դու. և ով է իբրև զքեզ ի մէջ իսրայէլի զօրավար փորձ և իմաստուն. այդպէս հսկես ի պահպանութեի անձին տեն քումմ արքայի. զի ահա եմուտ ոմն ի զօրուէդ սպանանել զտէր քո զարքայ. ոչ բարւոք վարես զպաշտօն քո. կենդանի է տէր, զի որդիք մահու եք դուք ամենեքին, որք կարգեալդ եք ի պահպանութեի արքայի։ ԼՈ՛ւր ի խորան արքայի, և տե՛ս՝ ո՞ւր է գեղարդն նորա. և ո՞ւր կուժ ջրոյն որ ի սնարս նորա կային։ Լի ձայնէ անտի զարթուցեալ սաւուղայ, և ի լոյս ձրագի զոր ուներ ի խորանի անդ իւրում, տեսեալ զի ոչ գեղարդն և ոչ կուժ ջրոյն կային անդ, գիտաց եթէ եմուտ ոք անդր. ել ի խորանէն, այլ ի մթան գիշերոյ ոչ կարելով նշմարել՝ թէ ով է որ խօսի ի բացուստ, ծանեաւ զձայնն՝ զի էր ձայն դաւթի. և լմնցաւ, զի և այս անգամ նմա պարտական է խոստովանել զկեանս իւր։ Լու յայնմանէ ի գուէթ հարեալ, ասէ գօրավարաց, այդ ձայն քո է որդեակ իմ դաւիթ. ետ պատասխանի դաւիթ, այո՝ ծառայ քո եմ տէր իմ արքայ. ընդէր է տէր իմ, զի

մտեալ ես զկնի ծառայի քո. զինչ մեղայ քեզ, և զինչ գտաւ յիս փնաս. եթէ այլ շարժեալ է զքեզ խնդրել զանձն իմ, յաջողեսցի քեզ, պատրաստ եմ լինել զոհ ՚ի ձեռաց քոց. իսկ եթէ որդւոց մարդկան, անիծից արժանի են դոքա առաջի նոր, որ շարժեն զքեզ տարապիր առնել զիս յիմոյ հայրենեաց ՚ի ժառանգութէ նոր յերկիր այլազգեաց ՚ի վտանգ ծառայելոյ աստուածոց օտարաց: Եւ արդ մի հեղգի արիւն իմ ՚ի քէն առաջի երեսաց նոր. որ է վկայ իմոյ անմեղութէ և վրէժխնդիր. զի չէ վայել Թագաւորի հալածել զայր մի տառապեալ, զորօրինակ Թռչուն յափշտակիչ հալածիցէ զագռաւ ընդ լերինս:

Յայսպիսի խոնարհ բանից դաւթի սիրտ սառուցեալ, որ արդէն զինջեալ մեղմացեալ էր, խոպատ յաղթեցաւ. խոստովան եղև՝ եթէ մեղաւ. խոստովան եղև՝ եթէ զուր տարապարտուց հալածեաց զնա. վասն որոյ աղաչէ զի դարձցի: Արդեաւկ իմ դաւիթ՝ ասէ, դարձիր զի ոչ արարից քեզ չար. փոխանակ զի պատուական է անձն իմ առաջի աչաց քոց: Այլ դաւթի ոչ վստահացեալ, զի և կարէր իսկ ոչ վստահանալ ՚ի Թերահատար խոստմունս նորա, ասացեալ ցարքայն՝ առաքել զմի ոք ՚ի զինուորաց իւրոց առնուլ զգեղարդն նորա և ըզկուժ ջրոյն, զի մի երևեսցի պահել զայն իբր աւար Թշնամւոյ. միանգամայն և կամեցաւ ցուցանել զհաւատարմութէն, և զանխարդախ սիրտ իւր առ նա. զոր և ՚ի սրտապետն ածէ առնել ապաստան՝ հատուցանել երկոցունց ըստ իւրաքանչիւր արդարութէց և ըստ հաւատարմութէ: Ասէ, այս երկրորդ անգամ մատնեաց զքեզ տէր ՚ի ձեռս իմ, և ոչ կամեցայ ձգել զձեռն իմ յօծեալ տեառն. արդ զորօրինակ արարի ես քեզ այսօր, այնպէս արասցի և ինձ տէր. և ապրեցուսցէ զիս յամենայն նեղութէ: Ի բանից աստի քաջ ծանեաւ սաւուղ Թէ դաւիթ ոչ ևս հաւատայ նմա. և ստիպեցաւ խոստովանել ՚ի սրտի իւրում, Թէ ունի իրաւունս չհաւատալոյ. վասն որոյ հատեալ զլոյս իւր ՚ինքեան,

օրհնեաց զնա, և դուշակեաց զղօրանալ նորա և զթագաւորել։ Այս այնպէս բաժանեցան՝ ի միմեանց, դաւիթ գնաց՝ ի բլուրն եբեղատու, իսկ սաւուղ դարձաւ՝ ի գաբաա։

Յետ այնորիկ մտախոհ եղև դաւիթ՝ ի սրտի իւրում, թէ կալով անդ յերկրին իսրայէլի՝ ի հանապազորդ հալածանս, անհնարին է նմա միշտ այնպէս արթուն և պատրաստ կալ և զգուշանալ անձին, զի վաղ կամ անագան ոչ անկանիցի՝ ի ձեռս սաւուղայ։ Զայն որոյ առ ամենայն իրօք աներկիւան լինելոյ՝ ի նմանէ՝ լաւ համարեցաւ անցանել յերկիրը փղշտացւոց առ անքուս որդի մաւքայ արքայ գեթայ. որ էր մի՝ ի թագաւորաց փղշտացւոց անհաշտ թշնամեաց սաւուղայ, առ որ դիմեաց միանգամ՝ ի սկզբան անդ՝ ի փախչել իւրում յերեսաց սաւուղայ. ուր զգացեալ զվտանգ անձին՝ զյիմարութիւն կեղծաւորեցաւ, որով և զերծաւ անվնաս։ Այլ զչափ էառ և ծանեաւ՝ զի անքուս և ժողովուրդ նորա բնակիչք գեթայ չէին ըստ այլոց փղշտացւոց ժանտաբարոյք և ոխակալք. որ անտի յայտնի եղև, զի մինչ՝ ի ձեռին ունէին զնա, և կարօղ էին սպանանել՝ ի վրէժխնդրութիւն մահու գողիադու հռչակաւոր զօրավարի իւրեանց, միանգամայն և՝ ի բառնալ յիսրայէլէ զայնպիսի այր քաջ որ դողացոյց զամենայն բանակ իւրեանց. սակայն և այնպէս ոչ սպանին, այլ արձակեցին երթալ խաղաղութիւ։ Զայն այնորիկ կարի հաւանելի է թէ զկնի դառնալոյ դաւթի՝ ի գեթայ, տեսեալ եթէ չիք յոյս հաշտութիւն սաւուղայ ընդ նմա, խօսեալ ինչ՝ ի ձեռն հրեշտակութիւն ընդ անքուսայ, և ուխտ խաղաղութիւն հաստատեալ ընդ նմա, որպէս զի՝ ի լինել հարկի՝ կարիցէ միւսանգամ դառնալ անկասկած առ նա՝ ի գէթ։ Զանգի գիտէր անքուս զզօրութիւնն դաւթի, և արանցն որ ընդ նմա, որք էին ընտրելագոյնքն յիսրայէլէ. նմին իրի մեծ ինչ վարկանէր բաժանել զնա՝ ի սաւուղայ, ընդ որում ունէր յայնժամ պատերազմ. և ամենայն իրօք հնարել, զի մի այնուհետև եր-

բէք կարիցէ դառնալ՝ի հնորհս Թագաւորին և ժո-
ղովրդեան իւրոյ. ակն ունելով թէ դաւիթ յաւէտ
հաւատարիմ լիցի ինքեան՝ որ պաշտպան էր նմա,
քան անհաշտ ընդ հնամէնն իւրոյ՝ որ յամենայն ժամ
խնդրէր սպանանել զնա: Նաբուս և դաւիթ եր-
կոքին խնդրէին զօգուտ իւրեանց. դաւիթ խնդ-
բէր յապահովացուցանել զանձն, հատանելով զա-
մենայն յոյս սաւուղայ ոչ ևս պնդելոյ զհետ նորա.
իսկ անբուս խնդրէր տկարացուցանել զղօրութիւն
իսրայէլի, յափշտակելով՝ի նոցանէ զդաւիթ հան-
դերձ վեցհարիւր արամբք զօրաւորօք, և՝ի կողմն
փղշտացւոց ձգելով զնոսա: Այն դաշնադրութէն
հաստատեալ դաւթի՝ դնաց համարձակ և անկաս-
կած՝ի դէթ լինքն և վեցհարիւր արքն որ ընդ նմա.
և երկու կանայք նորա աքինովամ յեզրայէլացի,
և աբիգեա կին նաբաղայ. զոր իբրև լուաւ սա-
ւուղ, ոչ ևս յաւել խնդրել զդաւիթ:

Իբրև եհաս դաւիթ՝ի գէթ, բաղում պատ-
ուասիրութբ ընկալաւ զնա անբուս, յիւր արքունիս
տուեալ նմա տեղի բնակելոյ իշխանական շքով՝
հանդերձ կանամբք և ամենայն ընտանեօք իւրով-
նոյնպէս և արանց նորա ետ պատշաճական բնա-
կարան՝ի քաղաքի անդ իւրաքանչիւր ըստ իւրում
աստիճանի: Նա տեսեալ նոցա, զի անբուս միամիտ
և անխարդախ հաւատով գնայ ընդ նոսա, ածին
և նոքա անդ զկանայս և զամենայն ընտանիս իւր-
եանց. զի մի յերկրին իսրայէլի լինիցին՝ի վտանգի
թափելոյ սաւուղայ՝ի նոսա զկատաղի սրտմտութի-
իւր՝ վասն արանց նոցա որ չոգան զհետ դաւթի.
զի չէր տակաւին բարձեալ՝ի յուշոյ նոցա անցք,
զոր անցոյց սաւուղ ընդ քահանայս և ընդ նոմբա
քաղաք նոցա: Ամաստուն անկեղծ և բարեհամբոյր
քաղաքավարութէն դաւթի այնպէս յինքն յանկոյց
զսիրտ Թագաւորին, մինչև անձնասպահապետ ան-
ձին կացուցանել զնա. զի առաւել վստահացեալ
էր՝ի նա՝ քան յիւր բնիկ համազգի պաշտօնեայս:
Այլ սիրտ դաւթի չէր լիով հանգուցեալ. քանզի
զմեռաւ ածէր՝ թէ կարի լինի դիւրին էր, զի ումբ

՚ի զօրաց իւրոց, որք ամենեքեան ջերմ էին և պա-
տերազմական, կռիւ կամ զժուարութի՛ն դիպեսցի
ընդ ումեք ՚ի բնակչաց անտի, և յայնմանէ խոռ-
վութիւն ելցէ ՚ի քաղաքին ՚ի վտանգ ամենեցուն։
Օ՛ի բազում անգամ շատ է անխոհեմութի՛ն միոյն
առնել և ՚ի վտանգ արկանել զամենեսեան։
Այլ մեծագոյն քան զայս վտանգ վասն արանցն
դաւթի՛ էին կուռք գեղոյ յամենայն անկիւնս քա-
ղաքին կանգնեալք ՚ի պաշտօն, և զեղծ կեանք
բնակչաց, զոր բերէ կռապաշտութի՛ն, առ սակաւ
սակաւ և նոցա ՚ի նոյն գարշելի՛ն ձգելոյ։

Այլ՛ն իբրև կամեցեալ դաւթի հեռացուցանել
զնոսա ՚ի վտանգաց անտի, խօսեցաւ ընդ անքու-
սայ, խնդրելով ՚ի նմանէ հնարհել նմա տեղի ՚ի
միում յանշնաւ աւանաց երկրի իւրոյ բնակել անդ
ընդ իւրոց արանց. պատձառելով, թէ չէ արժան
առն օտարի նստել իշխանական շքով ՚ի թագաւո-
րեալ քաղաքի առաջի աչաց արքայի։ Այնքուս ըղ-
սիրէր զնա ՚ի սրտէ, ոչ անտես արար զխնդիրն նո-
րա, այլ հնարհեաց նմա զսիկեղակ քաղաք փոքրիկ,
որ էր ՚ի սահմանս երկրին իսրայէլացւոց, ՚ի բաժ-
նին շմաւոնի. զոր կալան որդիքն իսրայէլի ՚ի ժա-
մանակս յեսուայ, և տուաւ յայնժամ յուդայի,
և ապա շմաւոնի. զոր յետոյ առին փղշտացիք, և
անկաւ բաժին թագաւորին դեղեայ։ Այլ դոլով
սրտաքոյ սահմանաց երկրի իւրոյ, ոչ բնակեցոյց
՚ի նմա յայլազգեաց, ուստի դրեթէ ամենայն բը-
նակիչք նորա եբրայեցիք էին։ Օ՛այն քաղաք ետ
անքուս դաւթի իբրև բարեկամի. ակն ունելով ա-
ռաւել շահել այնու, զի պարտաւորէր նովաւ ըզ-
դաւիթ լինել միշտ իւր օգնական, քան յառաջա-
գոյն մինչ ընդ իւրով անմիջական իշխանութի՛ն էր.
ուր բռնագատէր կարգել զինուորս ՚ի պահպանու-
թի՛ն. որոց ծախք առաւելուին քան զշահ զոր հա-
նէր ՚ի քաղաքէ անտի։ Օ՛այն քաղաք պահեաց դա-
ւիթ նաև զկնի թագաւորելոյ ՚ի վերայ ամենայն
իսրայէլի, իբրև սեպհական ստացուած անձին և
տան իւրոյ։ ՚Ի վերայ ժամանակին նստելոյ դա-

Թի՛ի գէթ յերկրին փղշտացւոց, անհամաձայն էն ընթերցուածք գրոյն. եբրայականն դնէ. * աւուրք և ամիսք չորս ‖. զոր ոմանք իմանան, սա՛մ մի և ա՛միս չորս. իսկ վուլկատայն և եօթանասունք՝ լոկ ամիս չորս: Ի մեզ գրի * աւուրք չորից ամաց ‖. և՛ի լուսանցս, * աւուրք երկուց ամաց ‖. բայց ուղիղ ևս երևի ընթեռնուլ * աւուրք չորից ամանց ‖:

Ընդ յերկրին փղշտացւոց՝ ի գէթ, կամ որ առաւել հաւանելի է՝ ի սիկելակ, սկսաւ դաւիթ՝ ի գործ արկանել զծածատուր իշխանութիւնն իւր՝ ի վերայ այլազգեաց թշնամեաց ժողովրդեան իւրոյ, ասպատակելով վերհարիւր արամբք իւրովք յերկիրս նոցա: Եւ մերձենայր յերկիրս փղշտացւոց. զի մի՝ ի թշնամութիւն ընդդէմ անձին իւրոյ դարձուսցէ զարքայն գէթայ զբարերարն իւր, ընդ որոյ հովանաւորութիւնք կայր յոյնժամ յապահովացեալ, որ նոյնպէս փղշտացի էր, և դաշնադիր ընդ այլոց նախարարաց փղշտացւոց. վասն որոյ և ծանր լինէր նմա տանել, զի դաւիթ անպատճառ չարչարեսցէ զհամազգի դաշնակիցս իւր: Եւ յարձակեր յերկիրս գեսեբացւոց, և գիզերացւոց, և ամաղեկացւոց. երկու առաջինքն քնաքէին՝ ի հարաւակողմն հրէաստանի, յերկրին որ անկանի՝ ի մէջ նեղոսի և երկրին փղշտացւոց՝ ի սուրայ մինչև ցեգիպտոս. և էին՝ ի սերնդոց անտի քանանացւոց, (որպէս յայտ է յեսու. գլ. ժգ. 2.) նզովելոց՝ ի յոնէ, որպէս և ամաղեկացիք: Ի վերայ նոցա արշաւէր դաւիթ. բայց ոչ մերձենայր՝ ի քաղաքս կամ յայլ մարդաշատ տեղիս, այլ՝ ի գեօղս, և մանաւանդ յանապատս՝ ուր արածէին հօտք և անդեայք էշք և ուղտք. ուր մարդ սակաւ, և աւար բազում. զմարդիկ առ հասարակ կոտորէր զայր և զկին և զտղայ՝ ոչ ապրեցուցանելով զոք, զի մի եկեալ պատմեցեն՝ ի գէթ զգործս նորա. իսկ զանասունս նոցա և զհանդերձ առեալ՝ դառնայր՝ ի տեղի իւր: Եւ մերթ ընդ մերթ դայր յայցելութիւն անբուսայ արքային. և՛ի հարցանել նորա զդաւիթ, թէ արարը՝ ի նմին աւուր արշաւանս ինչ, և յորո՞ւմ կողմանս.

դաւիթ ծածկել կամեցեալ զձշմարտութիւնն՝ բայց առանց ստելոյ, ասէր. ՚ի հարաւոյ հրէաստանի, և երբեմն ՚ի հարաւակողմն յերամեղէ, և երբեմն ՚ի կողմանս կենեզայ։ Յերամեղ էր փոքր տարածութիւն երկրի ՚ի բաժնին յուդայի ՚ի հարաւակողմն. նոյնպէս և երկիրն կենեզայ էր ՚ի հրէաստան ընդ իշխանութիւնք սաւուղայ. նմին իրի անքուս կարծէր թէ յերկրին իսրայէլի աստպատակէ, և անտի ածէ զաւարն։

Աստանօր կարևոր համարիմ հարևանցի ազդառնել ընթերցասիրաց, որք տեսանեն յաշխարհացոյցս հրէաստանի զԵսոր նշանակեալ ՚ի հիւսիսային ծայր երկրին աւետեաց՝ յարևելեան կողմն նորա յոտս երմոնայ լերին առ սահմանօք ասորւոց ոչ կարի բայագոյն յաբանայ գետոյ. ուստի դաւիթ թագաւոր սո՛ւ ՚ի կնութիւն զմաաքա դուստր արքային գեսուրայ, որ ծնաւ նմա զաբիսողոմ, ուր և փախեաւ նա առ արքայ հաւ իւր, զկնի սպանանելոյ զամնն զեղբայր իւր։ Աստ ոչ է բանն յաղագս այնր գեսուրայ. զի յայտնի իսկ է՝ թէ անհնարին էր դաւթի ՚ի սիկելակէ, կամ ՚ի գեթայ անցանել ընդ երկայն զամենայն հրէաստան, և աստպատակութիւնք հասանել ցայնչափ հեռաւորութիւն։ Այլ գեսուրն աստ յիշատակեալ, որպէս և երկիրն կենեզայ՝ էին տեղիք անննշանք, յաւետ ապնապատք և աւօտք անասնոց, քան թէ քաղաքք կամ աւանք մարդաշատք ձգեալ ՚ի հարաւակողմն հրէաստանի. նորին աղագաւ սովորաբար ոչ նշանակին ՚ի յաշխարհացոյցս։

Այլ զարմանք մեծ այն է, թէ զիարդ կարաց դաւիթ զայս գործ իւր այնպէս թագուն պահել յանքուսայ ընդ այնչափ ժամանակս, մինչև չիմանալ նմա բնաւ զպատրանս, և կարծիս անգամ չանկանել ՚ի միտս նորա։ Աու որ զայս ևս թէ ունիմք ասել, թէ անքուս կարի լինն հաւատացեալ դաւթի. այն զի՝ թագաւորք և իշխանք սովորաբար յորժամ միանգամ զչափ առնուն հաւատարմութեան ուրուք, և կապին ՚ի սէր նորա, այնուհետև կարի դիւրա-

հաւան էն առ այնպիսին. ոչ ևս զկետ լինին խոս-
զել զգործս և զգնացս նորա, և կասկածանաց
իսկ չտան տեղի թէ գուցէ խաբեսցին: Այլ ևս՝ զի
դաւիթ յառաջագոյն յերկար մնախոհութիւն կար-
գեաց՝ ի մոլ, թէ յոր կողմն և զիարդ առնիցէ
զարշաւանս իւր, զի մի՝ ի յայտ գայցէ անքուսայ.
և որովհետև աչք նորա էին յաւար անասնոց ար-
ջառոյ և ոչխարի և այլն. որք յանապատ տեղիս
դարմանին, ուր որպէս ասացաք՝ բնակութիւն մարդ-
կան սակաւ է, դիւրին էր նմա գիշերային յեղա-
կարծումն պաշարել զիոքրիկ բնակութիւն նոցա, և
կոտորել զամենեսին, մինչև չտալ ումեք տեղի փա-
խստեան, զի մի եկեալ՝ ի գէթ, ասիցեն թէ զայս
ինչ գործէ դաւիթ: Այլ գուցէ եղէն և այլ
պարագայք մեզ անծանօթք, որով մարթացան թա-
գուն ինալ այն գործք դաւթի յանքուսայ:

ԳԼ. ԻՌ.

Ընդուս կամ փանել զդաւիթ՝ ի պաշէրապ ընդդէմ ե-
բայելի: Դաւիթ առ երեսս յուսանէ յօժարութիւն. այլ՝
արթ էրէ փափաղ մեծ: Չակատակութիւն նախարարաց ապաք
չնա: Դաւիթ ըսպ հրամանին անչուսայ պատնայ՝ է չաղաչ
էր՝ է սիրելոյ. զոր գիտանէ այրեցեալ, և զբնակիչս նորա գե-
րեալ ընդ երիս կանայս էր: Չասանէ զհետ գերելոյ,
հոտոտէ զնոսա, և զամենայն գերին և զաւարն առնու:

Ապն ինչ դաւթի իւրով սակաւաթիւ արամբք
յայսպիսի ասպատակութիւնս պատահէր, համօրէն
երկիրն փղշտացւոց, և ամենայն հրէաստան առ-
նէին պատրաստութիւն մեծ յոյժ հանրական և որո-
շիչ պատերազմի ընդդէմ միմեանց: Ընդքուս կա-
մէր ոչ միայն անձամբ երթալ ընդ զօրս իւր, այլև
տանել՝ ի միասին զդաւթի քաջակորով. քանզի ե-

դեաւ էր ՚ի մտի, Թէ դաւիթ ՚ի սահմանս իսրայէլացւոց ասպատակելով, և այնչափ չարիս գործելով նոցա, ոչ երբեք կարիցէ դառնալ առ նոսա, ուստի և միշտ հաւատարմութիւք կացցէ ինասցէ առ նմա, յորմէ ունէր զամենայն մեծութիւն իւր։ Ի սոյն որոյ կոչեաց զնա, և կացուցեալ անձնասպահանդետ գլուխ և հրամանատար իւրոց թիկնապահ զօրաց, ասէ ցնա, պատրաստ լեր զի ընդ իս եկանելոց ես ՚ի պատերազմ, դու և արք քո։ Նա պատասխանի դաւիթ, այդպէս լիցի. արդ գիտասցես զինչ գործեսցէ ծառայ քո։ Ումասա պատասխանւոյս ըստ բառիցն, և ըստ պարագայից ժամանակին, և անձին ընդ որում խօսէր, այս է. այժմ յայսմ պատերազմի ցուցից քեզ արդեամբք զհաւատարմութիւն իմ և զսէր որ առ քեզ. զոր և անքուն այնպէս իմացաւ. յասելն, այդպէս լիցի. իբր ասել՝ զայդ ինամ տեսանել ՚ի քէն։ Այլ զիարդ հնար էր՝ Թէ դաւիթ այր արդարակորով ածապաշտ և հայրենասէր, զէն վերացուսցէ ընդդէմ իւրոց հայրենեաց և եղբարց և Թագաւորի իւրոց, որ ոչ միայն բնական օրինաց հակառակի, այլև ըստ խիք ածային պատուիրանաց, որ ՚ի ձեռն մովսիսի պատուիրեալով պատուիրեաց որդւոց իսրայէլի՝ միշտ Թշնամութիւք լինել ընդ այլազգիս։ Այլ և ոչ կարեմք հաւանել Թէ դաւիթ խորհէր ՚ի պատերազմի անդ անցանել ՚ի կողմն իսրայէլի, դարձուցանելով զսուրն ընդդէմ այլազգեաց. զի այն բաց յապերախտութիւն՝ լինէր մատնութիւն և դրժել ուխտի հաւատարմութեան առ անքուն բարերար իւր։ Այլ երևի Թէ դաւիթ ՚ի կնճիռն անլուծանելի կայր յայնժամ կաշկանդեալ. յորմէ միայն ամենահնար ձեռն ՚ին կարօղ էր զնա արձակել. որպէս և արձակեաց իսկ բնական Ճանապարհաւ։

Վասնզի եկեալ անքուսայ հանդերձ գնդաւ զօրաց իւրոց, ընդ որս և դաւիթ և արք նորա՝ յաբեկ, ուր կային ժողովեալ համօրէն բանակք փղշտացւոց. իբրև հանդէս առնէին ամենայն զօրաց, դասակարգելով զնոսա ՚ի դունդս գունդս ընդ հա

բիւրապետօք և ընդ հազարապետօք, տեսեալ նախարարաց զպաւիճ և զվեցհարիւր արս նորա, որք յետոյ երթային ընդ անքուսայ. ասեն ցնա, ո՞ են դոքա որ անցանեն. ասէ անքուս, ո՛չ դիտէք զի դաւիճ է, զօրավար սաւուղայ յորմէ հալածեալ եկն առ մեզ ապաւինեցաւ: Եւ առ բառնալոյ ի նոցանէ զամենայն կասկած զդաւիճ, ասէ. ահա այս երկու ամք են, կամ ըստ եօթանասնից՝ այս երկրորդ ամ է, զի առ մեզ է, և ոչ դտի ի դմա ստուեր ինչ անհաւատարմութեան, կամ այլ ինչ յանդուգն: Սակայն նախարարքն ոչինչ համոզեցան ի քանից նորա, ընդդէմ խոհեմութեան զինուորական զգուշութեան վարկանելով՝ արս կասկածաւորս ունել ի բանակի իւրեանց: Զանգի ասէին, թէ քնաւորեալ են այդպիսի փախստականք խնդրել միշտ հնարս դառնալոյ անդրէն ի տնօրէն քնիկ թագաւորի իւրեանց. և զինչ առ այն առաւել համառօտ և արահետ ձանապարհ, քան թէ ի խառնիլ պատերազմին՝ դարձուցանել զսուրն ընդդէմ ինքեանց. և այնպէս գլխով իւրեանց յանդիման լինել սաւուղայ: Ոչ այդ դաւիճ է ասէին՝ որ յառաջնում պատերազմի անդ՝ գլխով անյաղթելի զօրավարին մերոյ գողիադու, եգիտ շնորհս առաջի սաւուղայ. որում նուագէին ի պարս, և ասէին՝ եթէ եհար սաւուղ զհազարս, և դաւիճ զբիւրս. այժմ դարձեալ մեօք խնդրիցէ գտանել շնորհս առաջի նոն իւրոյ: Եւդ՝ դարձո՛ զայրդ ի տէղի իւր, ուր կացուցեր զդա. մի եկեսցէ ընդ մեզ ի պատերազմ, զի մի լինի դաւաճան բանակիս:

Այս քան նախարարաց խիստ թուեցաւ անքուսայ, զի չունէր ինքն քնաւին այնպիսի ինչ կասկած զդաւիճ. բայց առ պահելոյ զմիաբանութիւն ընդ իւրն՝ ստիպեցաւ ակամայ կամօք արձակել զդաւիճ: Գնեաց գնա, և յառաջ քան զյայտանել նմա զիրսն՝ ջանացաւ հեշտ և անուշակ բանիւք պատրասել զսիրտ նորա, երդմնմբ ի տէր ամէնակալ նոյն հաստատելով՝ թէ չունի ինչ ձախող կասկած զնմանէ. մանաւանդ յամենայնի ուղիղ, բարի և հաւա-

տարիմ Ձանաչէ զնա. այլ լոկ վասն բանի նախատրա-
բացն բառնագատի արձակել։ Լոկ դաւիթ Թէպէտ
սրտիւ յօժար էր առ այն, նա զի ուխտիւք իսկ խնդ-
րել պարտ էր նմա Ձողոպրել զանձն առանց ան-
պատուութեանց յերկասլրի սրոյ անտի, սակայն եթէ
անդիմադարձ առանց գժգոհութեան ինն ցուցանելոյ՝
յանձն առնոյր զդառնալն, ոչ միայր զերծ՝ի կաս-
կածանաց հաւատարմութեան նորա. նմին իրի առ
բառնալոց զսմենայն կասկած, զկերպարանն զոր
՝ի սկզբան անդ զդեցեալն էր յանկանել իւրում առ
անքուս, այլով օրինակաւ և այժմ յանձին բերեալ՝
կեղծել խոժոռիլ վշտանալ և տրտմիլ ընդ բառնիլ
՝ի նմանէ զիպաղուեցեն, յորում կամէր արդեամբք
ցուցանել զքաջագործութեն իւր վասն անքուսոյ։
Լուսոյ իբրև զրկեալ և անիրաւեալ ՝ի նմանէ,
զինչ ասէ արարի քեզ, և զինչ գաեր ՝ի ծառայի
քում յօրէ յորմէ հետէ էի առաջի քո մինչև ցայս
օր, զի ոչ գայցեմ պատերազմել ընդ Թշնամիս
ձեր իմոյ արքայի։ Անքուս զարձեալ նոյնօրինակ
քաղցր և քաջալեր բանիւք արգահատեալ զդաւիթ
չդնել կարծիս ինչ յոռւոռե ՝ի սրտի իւրում, զի բար-
ւոք Թուիս գու ասէ յայս իմ իբրև գՀրեշտակ ՝այ,
Հրամայեաց նմա կանխել ընդ առաւօտն ինքն և
արք նորա, և երթալ ՝ի տեղին, ուր կացոյց զնոսա
՝ի պահպանութեն երկրին փղշտացւոց։

Անդ՝ ըստ Հրամանին անքուսայ՝ դաւիթ և արք
իւր ընդ արշալոյսն անկան ՝ի Ձանապարհ. և Ձեռ-
ընթաց քայլիւ յաւուր երրորդի հասեալ ՝ի սիկե-
լակ, որ իբր 90 աշխարհագրական մղոնաւ հեռի
էր յաբեկայ, եգիտ զքաղաք իւր՝ ոչ օրպէս Թո-
ղեալն էր աւուրբք ինչ յառաջ. այլ հրկիզեալ և
ամայի ՝ի բնակչաց, բայ ՝ի սակաւուց ոմանց, որք
փախուցեալ էին, և իբր ՝ի նմին ժամու դարձեալ
անդրէն՝ արտասուալից հեկեկանօք պատմեցին նմա
զսմենայն անցս իւրեանց։ Իբր զի ինացորդք ամա-
ղեկացւոց, որք զերծեալք էին փախստեամբ ՝ի լե-
րինս և յանապատս ՝ի համայնաջինջ կոտորածէ ան-
տի սաւուղայ, որ երբարձ զթագաւորութեն նոցա,

և այրեաց զքաղաքս և զամենայն չինս նոցա, միա-
բանեալ ՚ի միասին՝ յարձակեցան առաքատակութիւն
՚ի հարաւակողմն սիկելական ՚ի սահմանս յուդայի և
քաղեբայ, ՚ի մասին ինչ երկրին փղշտացւոց. հա-
սին և ՚ի սիկելակ. և իմացեալ ՚ի ձեռն լրտեսաց
իւրեանց, եթէ անպատռպար է քաղաքն, մտին ՚ի
նա. զքաղաքն հրձիգ արարին, և զամենայն ինչս
զոր գտին՝ յաւարի առին. և չգտեալ անդ դիմա-
դարձութիւն, ՚ի բնակչաց նորա ոչ զոք ապանին, այլ
զամենայն այր և զկին ՚ի փոքուէ մինչև ցմեծ գե-
րեցին, ընդ որս և զերկոսին կանայս դաւթի զաքի-
նովամ յեզրայելացի, և զաբիգեա կին նաբաղու
կարմելացւոյ: Ա.յս աղէտ յանկարծահաս՝ ելից
դառնութիւն զգաւթի և զարս նորա, որք ձայն բար-
ձեալ լացին յոյժ, մինչև ոչ ևս գոյր ՚ի նոսա զօրու-
թիւն լալոյ, ո՛չ այնչափ ընդ այրումն քաղաքին, քան
թէ ընդ գերութիւն կանանց և ուստերաց և դստե-
րաց իւրեանց. և առ զայրոյթ սրտից իւրեանց՝
բազումք յարանց անտի դաւթի սկսան զաչս ՚ի քար
յածեցուցանել քարկոծել զզօրագլուխս իւրեանց,
իբր պատճառ այնչափ չարեաց. որպէս թէ զուր
տարապարտուց վարելով զնոսա ՚ի ծառայութիւն ան-
քուսայ՝ եթող զքաղաքն անպատռպար:

Դաւթի անկաւ ՚ի տագնապ մեծ, այլ ոչ չփո-
թեցաւ, դիմելով ըստ սովորութեան իւրում նոյնժա-
մայն առ մի միայն ապաւէնն իւր Ա՛ծ. ասաց ցա-
բիաթար քահանայ զգենուլ զեփուտն, և հարցեալ
՚ի նմանէ՝ ընկալաւ պատասխանի սիրել զհետ աւա-
զակացն այնոցիկ, զի անշուշտ ունի հասանել զկնի
նոցա, և թափելով թափեացէ ՚ի ձեռաց նոցա զա-
մենայն աւարն: Սովին վստահութիւն եւս դաւթի
յայնմ գիշերի փոքր մի հանգիստ զօրաց իւրոց, և
ընդ արշալոյսն եկ ՚ի ձանապարհ. այլ հասեալ ՚ի
հեղեզատն բոսորայ քսան աշխարհագրական մղոնաւ
հեռի ՚ի սիկելակայ, երրորդ մասն զօրաց իւրոց ար-
դէն վաստակեալ ՚ի նախընթաց երեքօրեայ բուռն
ընթացից՝ գտաւ այնչափ լուծեալ և պարտասեալ,
մինչ ոչ ևս զօրել յառաջ խաղալ: Սակայն և այն-

պէս դաւիթ ոչ վհատեցաւ. այլ լի հաւատով ՚ի խոստումն նոյն, եթող զկարասին իւր յայնկոյս հեղեզատին, և առ նովաւ զերկերիւր այր ՚ի զօրաց անտի իւրոց, որք վաստակեալ էին ՚ի պահպանութիւն. իսկ ինքն չորեքհարիւր սրամբք անց զհեղեղատան. և ոմանք ՚ի զօրաց նորա ըստ դիպաց ինն գտին այր մի անկեալ իբր կիսամեռ ՚ի քաղցոյ ՚ի մերձակայ անդի. զոր բարձեալ աճին առ դաւիթ յաւէտ վասն ողորմութեանն ՚ի կազդուրուիմն եղկելոյն, քան ակնկալութեանն օգուտ ինչ գտանելոյ ՚ի նմանէ: Սակայն արտաքոյ ակնկալութեանն իբրեանց օգուտ բազում գտին, առ ՚ի չյաճախելոյ աստ անդ վայրապար ՚ի գիւտ աւազակացն: Ետուն նմա հաց և կերաւ, և ջուր ըմպելոյ, և պաղատիտս և չամիչ. որ էին սովորական պաշար զինուորաց ՚ի չուս իբրեանց: Ապա իբրև ոգի առ, և զօրացաւ պատանին, եհարց ցնա դաւիթ, թէ ո՞վ է և ուստի՞. նա պատմեաց միամտութեանն զամենայն, եթէ եգիպտացի է՝ ծառայ առն ամաղեկացւոյ, թողեալ ՚ի հանէ իւրմէ անդ անխնամ, առ չզօրելոյ երթալ ընդ նմա ՚ի ձանձապարհ սակս տկարութեանէ իւրոյ. և արդ երեք տիւ են և երեք գիշեր, զի անդ կայ անսուաղ և նքողեալ: Ապա եհարց ցնա դաւիթ թէ կարօղ է առաջնորդել նմա և ինքուցանել ՚ի աեղի հինին այնորիկ. եւ պատասխանի, թէ այո՛. բայց երկու պայման խնդրեաց ՚ի դաւթէ երդմամբ. մի՝ չսպանանել զնա, և երկրորդ՝ չմատնել ՚ի ձեռս անգութ տեն իւրոյ. երդուաւ նմա դաւիթ, և ստացաւ ուղեցոյց յաջող և աներկևան:

Ի նմին ժամանակի՝ մինչ տակաւին կայր դաւիթ առ հեղեղատին բոսորայ, ՚ի յաջողելոյ տեն հասին առ նա չորք զօրապետք՝ եղնայ, յովսաբադ, եղիու, և սաղթի ՚ի ցեղէն մանասէի՝ ամենեքեան արք բաջք զօրաւորք ուժով, վտարանջեալք ՚ի բանակէն սաւուղայ, հանդերձ այլովք ընկերակցօք. որպէս պատմի. ա. Ճոպ. ԺԲ. 20: Ոչքօք զօրացուցեալ դաւթի զփոքրիկ գունդն իւր՝ չու արար փութանակի, և առաջնորդութեամբ եգիպտացի պատան-

Այն դէպ ուղիղ հասեալ ՚ի վերայ հինէն, մինչ սփռեալ էին նոքա ընդ երեսս ամենայն երկրին, և ուտէին և ըմպէին ուրախութիւն, և տօն ցնծութիւն առնէին ընդ մեծամեծ աւարն զոր կուտեցին, յարձակեցաւ ՚ի նոսա, և եհար զնոսա յայգուէ մինչև ցերեկոյ, և ՚ի վաղիւ անդր ընդ ժամ իբրև երեսուն և վեց անընդհատ ՚ի հարուածս սատակիւս. զի ՚ի բազմութենէ անտի չորեք հարիւր պատանեակք և եթե ՚ի սկիզբն մարտին հեծեալ յուղտս փախուցեալ ապրեցան. իսկ այլք առհասարակ ՚ի սայր սուսերի կոտորեցան։ Այս ա՛ւ դաւիթ զամենայն աւար նոցա. և զերկոսին կանայսիւր, և զամենայն արս և զկանայս. և ոչ պակասեցաւ ՚ի նոցանէ և ոչ մի, ՚ի փոքուէ մինչև ցմեծ յուստերաց և ՚ի դստերայ. և ոչ յաւարէն զոր առին ՚ի սկզբանէ կորեաւ ինչ։ Այրևի թէ թոյլ ետ ած ժողովել նոցա ՚ի զանազան կողմանց աւար բազմահարուստ, որպէս զի յետոյ զայն ամենայն պանձ Ձոխութիւն միանգամայն թափեսցէ ՚ի ծոց դաւթի. որում անուն կոչեցին՝ *թէ այս աւար դաւթի է ‖. զոր յերգս առեալ նուագէին իբր յաղթահարի երդ ՚ի դաւիթ։

Այ դարձաւ դաւիթ եկն առ հեղեղատն բոսորայ առ երկերիւրսն, զորս առ չզօրելոյ երթալ ընդ նմա՝ թողեալ էր անդ ՚ի պահպանուի կարասեաց. որք խնդութիւն ելին ընդ առաջ նորա, և զօրսն որ ընդ նմա։ Այսպա ՚ի կամել դաւթի բաժանել զաւարն, ամենայն արք ժանտք և անզգամք յարանց պատերազմողաց՝ որք երթեալ էին ընդ դաւթի, պնդէին չհանել բնաւ բաժին յաւարէ անտի երկերիւր արանց, որք ոչ գնացին ընդ նոսա ՚ի մարտ. բայց եթե իւրաքանչիւր զկին և զորդիս առցեն, և գնասցեն ՚ի բաց։ Ընդ այսպիսի անիրաւ և յանդուգն պահանջումն նոցա գժտեցաւ դաւիթ. բայց զի մի առաւել ժանտանայցեն, և նոր ինն աղմուկ յարուսցեն, ոչ խստիւ խօսեցաւ առ նոսա, այլ նախ ամոք բանիւք և իբր աղաչելով հնարեցաւ խաղաղել զնոսա, և ապա մեղմով ինն խելամուտ

արար գնոսա, թէ վանապանք որք պահեն զկարա-
սի զօրուն, ոչինչ ընդհատ ի պատերազմողաց ու-
նին իրաւունս բաժանորդ լինելոյ աւարին։ Այլ
զի ազատեն զպատերազմողս ի ծանրաբեռնուԹէ,
որ ոչ փոքր խոչընդոտն և արգել լինէր նոցա ի
պատերազմի։ Արկրորդ՝ զի և նոքա չեն յապահովի
ի վտանգէ Թշնամեաց յարձակելոյ ի նոսա. յորմէ
և ստիպին հսկել և կալ հանապազ կազմ և պատ-
րաստ վասն կարասեաց նոցա, զոր կենօք չափ
պարտապան են պահպանել։ Այ երրորդ՝ զի որպէս
պատերազմողք ըստ հրամանի սպարապետին մնա-
նեն ի մարտ, նոյնպէս և նոքա՝ նորին հրամանաւ
կան ի պահպանուԹէն, և ոչ ինքնակամ ընտրուԹէ
առ հրաժեշտ տալոյ յաշխատուԹէ մարտին. և այ-
սու լինին կցորդ յաղԹուԹէ վինուորակցաց իւ-
րեանց. ապա իրաւունք են զի և աւարին լինիցին
բաժանորդ. ապա Թէ ոչ՝ ո՞ է որ յանձն առնոյր կալ
ի պահպանուԹէն կարասեաց, եԹէ չունէր մասն
յաւարէ իւրոց ընկերաց։ Վասն այսորիկ սահմա-
նեաց դաւԹ, Թէ * Այսպէս մնասին երԹեղոյն ի պա-
տերազմ, նոյնպէս եղիցի մասն վանապանին, ըստ
նմին օրինակի բաժանեսցին։ Այս սահմանա-
դրուԹէն դաւԹի հիմնեալ ի բնական օրէնս՝ եղև
այնուհետև իբրև օրէնք և իրաւունք ի մէջ ին-
րայելի։ Օ այս այսպէս հաստատեալ նորա, եկն ի
սիկեղակ. և զի ի բազում ժամանակաց ցանկայր
ցուցանել զիւր երախտագիտուԹէն առ բարեկամն
և առ բարերարս իւր, այժմ դիպողուԹէն գտեալ,
ի բազմահարուստ աւարէ անտի, որ անկաւ նմա
բաժին, առաքեաց պարգևս երևելիս առաւել քան
յԵրկոտասան քաղաքս իսրայէլացւոց՝ ասելով, այդ
ձեզ օրհնուԹէն յաւարէ Թշնամեաց տան։ Օ նոյն
երախտապարտուԹէն եցոյց առատ պարգևօք և առ
նոսա ամենեսին, որք ի ժամանակս հալածմանն իւ-
րոյ և փախստեան եւուն նմա տեղի ապաւինի,
կամ այլով իւիք իրօք ձեռնտու եղեն նմա։

Գլ. ԻԹ.

Պատերազմ գեղբուայ. ուր ելանեն սատուղ, և երբեք որդիք նորա յոշնանան, ամենազաւք, և մեղչիսաւեք:

Յորժամ դաւիթ զայսոսիկ գործեր ՚ի սիկեղակ, զօրք այլազգեաց՝ որք զառաջինն գումարեցան յաբեկ ըստ ասացելոցս, ելեալ անտի՝ եկին բանակեցան ՚ի սովման յայնկոյս ձորոյն յեզրայելի յանդիման սյենդովրայ, ուր էր բանակն սատուղայ: Տեսեալ սատուղայ զհաւաւոր բանակ նոցա, երկեաւ զարհուրեցաւ յոյժ, և խաղացոյց զբանակ իւր ՚ի լերինս գեղբուայ ՚ի տեղի անբոյթ, ուր դժուարին էր այլազգեաց կառօք և երիվարօք հասմարձակ խաղալ: Այլ թէպետ զերբք տեղւոյն յապահովի էր և դժուարամատոյց, բայց հիւսիսակողմն երկրին խորայելի բաց էր և անպատսպար ՚ի զօրաց. նոյնպէս և բանակ նորա ՚ի սկզբան անդհզօր և պնդակազմ, բայց յետոյ օր քան զօր տկաբանայր. զի բազումք վտարանջեալ ՚ի նմանէ՝ ոչ միայն ՚ի սոսկականաց, այլև ՚ի զօրապետաց, յորոց մի էր և առեսա՝ երկրորդ զկնի աբենեերեայ առաջինն զօրավարի խորայելի, անցանէին ՚ի սիկեղակ առ դաւիթ, ա. Թագ. ԻԹ. 18. տեսեալ զձախող վիճակ սատուղայ, յորմէ հեռացեալ էր աճ. և զյաջողութիւն դաւթի, որով և գուշակէին ընդ հուպ ՚ի ձեռս նորա անցանել թագաւորութիւն խորայելի:

Սատուղ յայսպիսի յետին թշուառութիւն հասեալ, ոչ գիտէր՝ յո՞ դիմեսցէ, կամ յումմէ՞ խորհուրդ հարցանիցէ, զի չուներ, և առընթեր ուչ եփուտ, ոչ քահանայ, և ոչ մարգարէ: Այլ կարի յիրաւունս. փոխանակ զի զքահանայս ինն ըստ առաւելս մասին սրով կոտորեաց, և զայլս տարագիր արար յիւրմէ ՚ի մոլեգնութիւնէ իւրում: Այսպա ինքնին եհարց ՚ի ինէ՝ լոյս ինն խնդրելով, այլ ոչ ընդ

կալաւ պատասխանի։ Ապա որոյ ի յետին յուսահատութեի ըմբռնեալ, որ եղև լրումն ամենայն մեղայ նորա, դարձաւ ապաստան եղև առ դիւթս և առ վհուկս. զորս իւր իսկ ըստ կարի բարձեալ էր յերկրէն Իսրայէլի ըստ հրամանի օրինաց. և այն՝ ըստ ոմանց յառաջ քան զմահ սամուէլի. իսկ ըստ այլոց՝ զկնի մահուան նորա, ոչ առնախանձու օրինադատ ՚ն, այլ առ գառնութեէ սրտին. քանզի և նա՝ որպէս և ՚ամ մարդ, յարտաքին պարագայից վհատեալն սաւուղ՝ գուշակէին փութով առեսանել զթագ արքայութե ՚ի գլուխ դաւթի։ Ապ էր անգիտ սաւուղ, թէ արչափ և զհետ պնդեացէն թագաւորք բառնալ զազգ ինչ մարդկան չարագործ ծաց, ո՛չ երբէք յաջողի նոցա խոպառ հեռակորոյս առնել զնոսա ՚ի թագաւորութե իւրեանց։ Ո՛ի պաշտպանութե մեծամեծաց, անհաւատարմութե դրծակալաց, գաղտնի տեղիք թագստեան, բռնութե կաշառաց միշտ յիմիք մասին ՚ի դերև հանեն զպատուէր թագաւորաց։ Ա՛հա ՚ի նոյն իսկ արքունես սաւուղայ գոյր՝ որ գիտակ էր, թէ կայ անդ մերձ այնպիսի կին, այլ ՚ի ծածուկ պահէր. մինչև ՚ի նմին հարկաւորութե պահու յայտնեաց. զի ՚ի հրամայել սաւուղայ խնդրել նմա կին մի վհուկ այսակիր, նա յառաջ մատուցեալ ասէ ահա է կին մի յայենդովր։

Ապ յոյն ժամայն փոխեաց սաւուղ զհանդերձս իւր՝ զի մի ծանիցի, և առեալ ընդ իւր արս երկուս ՚ի բանակէն՝ եկն գիշերայն ՚ի քաղաք անդր ՚ի տուն կնոջն. և ասաց ցնա դիւթել և հանել նմա զոր ասացէ։ Ո՛ առաջինն ընդդէմ դարձաւ կինն՝ ասելով, ահա դու ինքնին իսկ գիտես՝ զոր ինչ արար սաւուղ, որպէս սատակեաց զվհուկս և զգետս, և արդ ընդէր որսաս զանձն իմ սպանանել զնա. երդուաւ նմա սաւուղ ՚ի տէր, թէ ոչինչ չար պատահեսցէ նմա յայնմանէ. զինքն նմա կինն և ասէ, զո՞ հանից քեզ. իսկ նա ասէ, հան ինձ զսամուէլ ասա ՚ի սենեկին։ Ապ այն ինչ պատրաստէր կինն սկսանել զսովորական դիւթութե՝ն,

ձաճ որ կամէր տալ և զայս վերջին օգնութեն սաւ-
ուղայ առ ՚ի դարձ նորա ՚ի յետին յայնմ պահու
կենաց նորա, կանխեաց նախ քան զդիւթել կնոջն
առնել աքանչելիս, զոր վհուկն ամենայն դիւական
արուեստիւ ոչ երբէք կարօղ էր առնել։ Վասն
կարէր ՚ի ձեռն սատանայի կեղծել ստուեր իմն,
կամ ուրուական նմանութեն ինչ սամուէլի. բայց
ամենայն զօրութեն դժոխոց ոչ հասանէ հանել զՀո-
գիս մեռելոց ՚ի տեղւոյն ուր և իցեն. և ոչ խակ
կարօղ են երբէք նախապատմել անվրէպ զապա-
գայս, որ կախեալ են զազատ որոշմանէ մարդոյ,
թէպէտ թէ այդ։

Այլ թէ այն երևումն եղև ՚ի հրամանէ այ, և
ոչ ՚ի հմայութենէ կնոջն, յայտ անտի է, զի հազիւ
թէ սկսեալ էր կինն կարգել զգործիս հմայութեն,
ահա յեղակարծումն ետես ծերունի մի փառահեղ
արկեալ զիւրև կրկնոց. յորմէ զարհուրեցաւ կրկին
երկիւղիւ. մի՝ զի ետես զնա յառաջ քան զկատա-
րումն դիւթութենէ իւրոյ, որ չէր լոկ ստուեր իմն
ուրուական, որպէս սովոր էր տեսանել յայլ հմայ-
ութիս՝ յորժամ դևք երևեցուցանէին. այլ էր այն
ջահի պայծառ և փառացի տեսլեամբ, մինչև ՚ի ձաճ-
ային իմն կարծել կնոջն. երկրորդ՝ երկեաւ, զի
այնպիսի այր փառաւոր ոչ երևի, բայց եթէ յաղագս
մեծի իմիք հասարակաց հարկաւորութեն. յորմէ
կինն ՚ի կարծիս եղև և զուշակեաց խակ, թէ այրն
որ խնդրէր տեսանել զսամուէլ՝ իցէ նա ինքն սա-
ւուղ, թէպէտ ոմանք համարին թէ դևն յայտնեալ
իցէ նմա։ Այլ յերկիւղէ անտի ՚ի չինչ քարձեալ մե-
ծաձայն, ասէ ցսաւուղ, ընդէ՞ր խաբեցեր զիս, և
դու սաւուղ ես։ Ասէ ցնա արքայ. մի երկնչիր. և
զի գիտաց՝ եթէ ետես նա ինչ նորատեսիլ արտա-
քոյ սովորութենէ, ետ հարց ցնա, զո՞ տեսեր. ասէ
կինն. տեսանեմ աստուածս ելեալ յերկրէ. յոր-
նակի խօսի ըստ եբրայական ոճոյ առ ՚ի ցոյց մե-
ծութենէ և փառաւորութենէ երևելոյն, որ էր միայն
սամուէլ. որպէս յանապատին ասացին վասն ոսկե-
ձոյլ որթուն, այս են աստք քո իսրայէլ։ Ասէ ցնա

սաւուղ. ոչխարի ինչ է տեսիլ նորա. ասէ կինն. այր ուղղորդ (ըստ լատ. այր ալևոր) ելեալ յերկրէ, և արկեալ զիւրև կրկնոց։ Վասն այսորիկ սաւուղ եթէ սամուէլ է նա, և վաղվաղակի անկաւ ի վերայ երեսաց իւրոց և երկիր եպագ նմա յերկիր. յայնժամ կինն և երկու ծառայքն սաւուղայ ելին արտաքս, թողեալ զնա միայն ընդ սամուէլի։

Յամառօտ եղև խօսրհրդակցութիւնն, բայց որոշիչ. սամուէլ ոչ միայն զի սաւուղ հարցանիցէ ինչ, այլ ինքն յառաջեայց և ասէ ցսա. զի՞ երկիր անհանգիստ առնես զիս. ընդէ՞ր բռնադատեցեր զիմ հրամայել ինձ այս մի անգամ ևս երևեալ քեզ։ Վասն պատասխանի սաւուղ. և զի՞նչ կարօղ էի առնել, կամ յումմէ՞ ունէի խնդրել ինձ օգնութիւն յայս յետին նեղութեանս իմում. այլազգիք անողորմ թշնամիք պատերազմին ընդ իս ահաւոր զօրութեամբ. և ոճ հեռացաւ յինէն. աղաչեցի զնա, այլ ոչ լուաւ ինձ, ոչ մարգարէիւք, և ոչ երազովք. և այս պէս անօգնական գոլով յամենայն կողմանց՝ դիմեցի առ քեզ առ մի միայն ապաւինիդ իմ, ցուցանել ինձ թէ զինչ գործեցիցէ։ Վասն սամուէլ. ի զուր է քեզ ակն ունել օգնութեան. զի հնաբեալ է վձիռ ի վերայ քո, որպէս կանխաւ խօսեցաւ քեզ ինչ յիմ ձեռն. պատառեսցի՛ զթագաւորութիւդ յերկուս, զմի մասն տացի ընկերի քում դաւթի, իսկ զմիւս մասն թողցի՛ առ սուղ ինչ ժամանակ որդւոյ քում յեբուսեթեայ. և ապա միացուսցի զբովանդակ թագաւորութիւդ ի դաւիթ։ Վ՛այս ամենայն ի պատիժ անհնազանդութեան քո, փոխանակ զի ոչ լուար ձայնի տեառն, և ոչ արարեր զսրտմտութիւն բարկութեան նորա ջնջել զամաղէկ, որպէս պատուիրեաց քեզ. այլ զկամս քո կատարեցեր՝ ապրեցուցանելով ընդ որս հաձեցաւ սիրտ քո, և ապաւինեցար առ վհուկս. այս են մեղք քո։ Վրդ՝ լուր և զգաստակնիք քո. վաղիւ՝ դու և որդիք քո ընդ քեզ անկցին, և զբանակն իսրայէլի մատնեսցէ տեր ի ձեռս այլազգեաց. զայս ասացեալ անյայտ եղև սամուէլ։

Իսկ աշխարհելին սաւուղ փոխանակ ձշմարիտ

ղղջման և յանձնառութե՛ վճռոյ եմն՝ զարհուրեալ և յերկիւղ մահու ըմբռնեալ, միանգամայն և յանսուաղութի՛ նուաղեալ, ոչ և այս կարելով յոտն կալ՝ անկաւ ՚ի գետին· զի վնախընթաց գիշերն ամենայն յորում եղ ՚ի բանակի, և զտիւն զայն ողջոյն՝ ոչ էր կերեալ ինչ։ Այնուհետև կինն ՚ի սենեակ անդր, և տեսեալ զնա ՚ի գետնի ՚ի տապնապ մահու, համարեցաւ եթէ լոկ յերկար անսուաղութի՛ իցէ թաւկացեալ· սկսաւ աղաչել զնա և թախանձել՝ զի յարուցեալ կերիցէ ինչ, զոր խոստանայր վազվաղակի պատրաստել, զի զօրասցի, և ապա երթիցէ զձանապարհ իւր։ Այ առաջինն ոչ կարէր յառնել և ոչ առնուլ կերակուր, մինչև ուր ուրեմն բերեալ ՚ի ծառայից իւրոց՝ յաթեաւ· և կնոջն անուցեալ էր որթ մի ՚ի տան, փութացաւ եփել զնա, եփեաց և բաղարջ, և մատոյց առաջի սաւուղայ, և առաջի ծառայից նորա· կերան և յարուցեալ գնացին գիշերն զայն ՚ի բանակն։ Բաղումք ոչ հաւանին՝ թէ երևեալն սաւուղայ էր սամուէլ, այլ սատանայ ձևացեալ ՚ի կերպարանս նորա· սակայն ՚ըստ գիրն այնպէս խօսի եթէ՛ աստ և եթէ՛ ՚ի գիրս սիրաքայ վասն այսր երևմանն, որպէս թէ էր նա ինքն Ձմարիտն սամուէլ, մինչ չէ մարթ առանց բռնազբօսելոյ զգիրն իմանալ սատանայ կամ հրեշտակ· ահա բան սիրաքայ· * Այլ յետ այսորիկ ննջեաց (սամուէլ), և յայտնեաց Թագաւորի, և եցոյց նմա զվախձան կենաց նորա· և բարձրացոյց զբարքառ իւր յերկրէ մարգարէութի՛ ջնջել զամբարշտութի՛ ազգի ‖· Ել· 23։

Այհաս սաւուղ ՚ի նմին գիշերի ՚ի բանակ իւր· և ՚ի լուսանալ առաւօտու՝ գրոհ տուեալ այլազգեաց անհամար բազմութի՛ յարձակեցան ՚ի լերինս գեղբուայ· յորոց զարհուրեալ որդւոց իսրայէլի, զի արդէն նուաղեալ էր թիւ նոցա ՚ի վտարանջելոց ՚ի նոցանէ այնչափ բազմութե՛ արանց զօրաւորաց, դարձան ՚ի փախուստ· իսկ այլազգիքն զհետ փախստէից անդեալ՝ կոտորելով ՚ի նոցանէ զձանապարհայն, հասին ՚ի գունդն սաւուղայ, և հարին

պյոշնաթեան և զամինադաթ և զմեղքիսաւէ զոր-
դիս սաւուղայ զրեթէ առաջի աչաց հօր իւրեանց,
և զգօրս նոցա ցրուեցին։ Եւ այնպէս թովանդակ
ծանրութեն պատերազմին անկաւ ՚ի վերայ սաւու-
ղայ. քանզի և այլազգիք զնա խնդրէին զբռամբ
ածել կենդանի կամ մեռեալ, վասն այն զամենայն
գօրութեն իւրեանց ՚ի նա դարձուցին։ Իսկ սաւուղ
թէպէտ տեսանէր զանձն զուրկ յամենայն օգնա-
կանութենէ, զի որպէս երևի նաև ՚ի թիկնապահ
գօրացն նորա սակաւք էին ճնացեալ առ նմա, սա-
կայն և այնպէս ոչ դարձոյց թիկունս, այլ մար-
տեաւ քաջութեամբ ցյետին շունչ կենաց իւրոց,
մինչև ՚ի բազմութենէ անտի նետից ոլոք հասանէին ՚ի
վերայ նորա յաղեղնաւորացն այլազգեաց, միոյն
անցեալ ընդ կարաւանդան զրահիցն զոր զգեցեալն
էր, մեռեալ ՚ի մնակուշտ նորա, և խոցեաց զնա
ևս ՚ի մահ։ Զպա տեսեալ սաւուղայ, զի չիք այ-
նուհետև նմա յոյս վերծանելոյ ՚ի ձեռաց թշնա-
մեաց, ասաց ցկապարձակիր իւր, որ գուցէ յայնմ
վերջին պահու նա միայն էր ճնացեալ առ նմա,
մերկել զսուր իւր և սպանանել զնա, զի մի կեն-
դանի անկցի ՚ի ձեռս թշնամեաց ՚ի ծանակումն և
՚ի խայտառակութեն անձին։ Բայց երկեաւ կապար-
ձակիրն՝ յարիւն ՚ին իւրոյ արքայի շաղախել զձեռս
իւր. յայնժամ դարձուցեալ սաւուղայ զծայր սրոյ
իւրոյ յանձն իւր, անկաւ ՚ի վերայ նորա ամենայն
ծանրութեք մարմնոյն, և այնպէս ցցեալ ՚ի սուսեր
իւր՝ տարածեցաւ ՚ի գետնի մեռեալ։ Տեսեալ
կապարձակրին՝ զի մեռաւ ՚ին իւր արքայ, օրինակ
առեալ ՚ի նմանէ՝ անկաւ և նա ՚ի վերայ սուսերի
իւրոյ և մեռաւ. կամեցեալ լինել ընկեր և ՚ի մա-
հու ՚ին իւրոյ, որպէս եղև միշտ ընդ նմա ՚ի պատե-
րազմի։

Պատերազմն առ օրին վճարեցաւ. չինաց ուրեք
՚ի լերինս գեղջուայ յոտին այր յիսրայէլէ, բայց
միայն դիակունք սփռեալք ՚ի վերայ երկրի. քան-
զի ապրեալքն փախեան, և ընդ ամենայն տեղիս
ընդ որ անցանէին՝ զգոյժ մահուն սաւուղայ և

կոտորածի բանակին իսրայէլի սփռէին. յորմէ ահիւ մեծաւ ըմբռնեալ բնակչաց՝ որ յայնկոյս ձորոյն եզրայէլի, և որ շուրջ զբերամբք գեղջուայ ի հանգրուանան էին, և յայլ հեռագոյն տեղիս, թողին զքաղաքս իւրեանց և փախեան. իսկ այլազգիք դատարկ ի բնակչաց գտեալ զնոսա՝ մնին անարգել և բնակեցան ի նոսա։ Եւ ի վաղիւ անդր եկին կողոպտել զդիակունսն. ուր գտեալ զդի սաւուղայ, մերկացուցին զնա ի հանդերձից և ի զինուց. հատին զգլուխ նորա, և առաքեցին յերկիր իւրեանց՝ տալ աւետիս յամենայն քաղաքս և ի տունս կռոց իւրեանց ի գոհութիւն յաղագս մեծի յաղթութենէ, զոր նոցին օգնականութիւք համարեին արարեալ. վասն այնորիկ զզէնս նորա եդին ի տան աստարովթայ աստուածոյն իւրեանց, և զգլուխ նորա ի տան դագոնայ. իսկ զմարմինն նորա, և զմարմինս որդւոց նորա կախեցին զպարսպին բեթսանայ ի ներքին կողմանէ՝ ի հրապարակ քաղաքին. որպէս յայտ է. Բ. Նագ. Ի. 12։ Եւ ուեալ բնակչաց յաբիսայ գաղաադացւոց՝ զոր լուան զոր ինչ արարին այլազգիք ընդ սաւուղ, յիշեցին թէ զիարդ նա ի սկզբան թագաւորութենէ իւրոյ, փրկեաց զնոսա ի ձեռաց նաասայ ամմնացւոց արքայի, նմին իրի առ բառնալոյ զնախատինս նորա, յարեան ամենայն արք զօրաւորք՝ գնացին զգիշերն ամենայն, առին զմարմին սաւուղայ, և զմարմինս որդւոց նորա, և բերին յաբիս. զիս մարմինսդ՝ որ նեխեալ էր՝ այրեցին, իսկ զոսկերս նոցա թաղեցին ի մայրի յանդին յաբիսայ ընդ կաղնեաւ, որ էր տեղի նշանաւոր. ուստի զկնի ժամանակաց եհան դաւիթ զոսկերս նոցա, և ետ թաղել յերկրին բենիամինի մերձ ի գերեզմանն կիսեայ հօր սաւուղայ. Բ. Նագ. Ի. 13։

Ա. Հա զայսօրինակ մեռաւ սաւուղ. զոր պատմեաց գիրն ի լա գլ. առաջին Թագաւորաց. և ի Ա. գլ. առաջին Սիացորդաց. այլ խնդիր է առ ոմանս, թէ ի մեռանել սաւուղայ մարմնով, մեռաւ արդեօք և հոգւով ի յաւիտենական գատա-

պարտուԹէ։ Պաբթիք եբրայեցւոց նկրտին արդա-
րացուցանել զինա։ Յովսեպոս այր զօրավար՝ ըստ
օրինակի արտաքին քաջաց իմանալով՝ այսպէս խօսի
վասն նորա։ * Պանխապետ՝ ի մարգարէին վասն
մահուն իւրոյ, սակայն և այնպէս ոչ կամեցաւ խու-
սել (՝ի մահուանէ), և առ ցանկուԹէ կենաց՝
մատնել զզօրս իւր Թշնամւոյն. և այսու զարքայա-
կանն մեծավայելչուԹիւն առնել անպատիւ։ Պայ-
որդւովք և ամենայն տամբ՝ ի վտանգ արկեալ
զանձն, գեղեցիկ համարեցաւ՝ ի պատերազմի վասն
իւրոյ ժողովրդեան մարտուցեալ՝ անկանել, և զոր-
դիս նմին գովուԹեան կցորդս առնուլ, քան Թէ
Թողուլ կենդանի՝ անստոյգ գոլով Թէ զի՞նչ լինե-
լոց են. զի համարեցաւ փոխանակ յաջորդուԹեան
զաւակաց՝ զյաւէժական գովուԹի, և զանմահա-
կան յիշատակ ժառանգել։ Պայս բանք յովսեպո-
սի ոչ այլ ինչ ցուցանեն, բայց միայն զքաջասրտու-
Թիւն նորա, և զփառասիրուԹիւն, կամեցեալ անուն
քաջուԹեաց Թողուլ զկնի, զոր և առ հեԹանոս գոյ
տեսանել. ուր ոչինչ հետք ապաշաւանաց երևին։
Ցուի Թէ կամի յովսեպոս համեմատել զսաւուղ
յայսմ մասին՝ անձնասպանուԹեանն հռաքսի. զորմէ
՝ե Ա. Մակ. ԺԲ. 37, պատմի։ Պայց զանազանուԹիւն
մեծ է ընդ նա, և ընդ սա. զինա բազում գովու-
Թիւք յիշատակէ՝ զոր գիրն ոչ միայն ըստ քաղա-
քական մասին, այլև ըստ ընծայաշնուԹեանն, և կրօնից
սրբուԹեան, մինչև ցյետին շունչ կենաց իւրոց.
որով և տայ մեզ հին հաստատուն, ասել՝ Թէ անմե-
ղադրելի անդիտուԹիւք, և կամ ընծային ազդեցու-
Թիւք արարեալ իցէ նորա զայն գործ. որպէս ունիմք
հետաքննել յիւրում տեղւոջ։ Պակ զսաւուղայ ընդ
հակառակն ընԹեռնումք, զի զկնի կրկին անհնա-
զանդուԹեց իւրոյ առ Հրամանս մարգարէին և
՝ոյ, որով և անկաւ յերեսացն ՝ոյ, այնուհետև ա-
մենայն կեանք նորա էր ծրդեալ՝ ի չարիս ծանր
ծանր և անբերելի անօրէնուԹեանց. զոր կնքեաց
կրկին մեծագոյն անօրէնուԹիւք, ապաւինեալ՝ ի
դևս, և յուսահատուԹիւք սպանանելով զանձն։

Սակայն տակաւին են ոմանք և ի նոր մեկնչաց քրիստոնէից, որք առ տարապայման գԹոյ ոչ իշխեն ասել համարձակ զսաւուղ դատապարտեալ։ Վասնզի ասեն, անձնասպանութիւն Թէպէտ մեղք մեծ է և մահու չափ, բայց չէ հաւաստի Թէ նա յայնժամ մահու չափ մեղուցեալ էր։ կարէ լինել Թէ նա անյաղԹելի տգիտութիւք՝ ոչ համարէր գործ մեղանչական, փութացուցանել զմահ առ վայրկեան մի այնմ՝ որ լի մահացու խոցուածովք զմահ առաջի աչաց տեսանէր, և չէ լինչ անհաւանելի Թէ նա այր պատերազմական և անուսումն՝ այնպէս համարեցաւ հաստատուԹիք։ Այլ և այս կարի հաւանելի է Թէ յայնմ մեծի շփոԹութեան, և ի դառնացեալ կսկիծ սրտի ի տեսանել զերեսին որդիս իւր մեռեալ առաջի աչաց, զբանակն իւր խորտակեալ և ցրուեալ, զանձն մահացու վիրաւորեալ, և զբազմութիւնն նեռից զիւրև ԹօԹափեալ, և գունդ մի Թշնամեաց ի վերայ իւր հասեալ, ցնորեալ էին ի մտաց. և այնուհետև որպէս Թէ՝ զոր լինչ և գործեաց, ոչ բարի և ոչ չար համարիցի բարոյապէս, իբր առանց գիտութիւնէ և ընտրութիւն գործեալ։ Այլազգ եղեն ասեն անօրէնութիւք սաւուղայ, զորոց ուներ տալ համար յատենի ոչ. բայց զքննութիւն նոցա պահեաց ած հանդերձեալ ատենին. դատապարտութիւն նորա ի մահ՝ եղև վասն մեղաց անհնազանդութիւնէ ի գործադրութիւնէ անդվձռոյն ոչ ընդդէմ ամաղեկայ. և զի ի յետին անձկութիւնէ իւրում փոխանակ առ ած ապաւինելոյ, ի կախարդս եղև ապաստան։ Այնէ չէր գործեալ սաւուղայ զառաջինն մեղս, ոչ մերժէր զնա ած այնպէս փութով ի Թագաւորութիւնէ. և եԹէ չէր գործեալ զայս երկրորդ մեղս, ոչ դատապարտէր զնա յայսպիսի անարգ և յաշխարհելի մահ։ Այլ յայսմանէ ոչ հետևի ասեն, Թէ էին դատապարտեալ։ Ողբագործք՝ որք յարդարուէ ի մահ դատապարտին, չոչ ածին ի մահ առ ի պատիժ չարագործութիւնէ իւրեանց. սակայն ոչ ամենեքին կորնչին հոգւով զկորուստն անեղրական. նա՝ զի ընդ ձա-

նապարհ մահուն մարմնոյ՝ յոլովք ածին ՚ի փրկու-
թիւն յաւիտենական : Նոյնպէս մահ սաւուղայ
եղև վասն անօրէնութեանց նորա . եթէ անսպասաւ
մեռաւ , անօրէնութիւնք նորա ածին զնա ՚ի կորուստ
յաւիտենից . իսկ եթէ ՚ի գոյժ մահուն իւրոյ
ապաշաւեաց և հաշտեցաւ ընդ նմա կամակար յանձն
նառութիւք առաջնկայ մահուան ՚ի պատիժ մեղաց
իւրոց , հանդիպեցաւ ողորմութիւն : Որպէս և առ
այն՝ զի ասաց ած դաւթի . Ը. Նաթ . Է. 15 . Թէ
զողորմութիւն իւր ոչ մերժեսցէ ՚ի սողոմոնէ , որպէս
մերժեաց ՚ի սաւուղայ , զոր պատասխանի . այս
բան ասեն՝ ըստ համօրէն մեկնչաց՝ իմանի վասն
մարմնաւոր թագաւորութեանն , և ոչ վասն հոգւոյն
փրկութեանն . ապա թէ ոչ՝ հաւաստի լինիցի փրկու-
թիւն սողոմոնի . սակայն ստոյգ է , թէ զօրութիւն բա-
նիս ոչ հաւաստէ զայն : Որպէս խօսին ոմանք
երկբայաբար վասն սաւուղայ՝ յեցեալ ՚ի վուլկա-
գայն , ուր ա . Ցամ . Ձ . 13 . ասի , * Որ մեռաւ սա-
ւուղ վասն անօրէնութեանց իւրոց ‖ . այլ քննագիր
երբ . որպէս և եօթանասունք՝ ասեն . * Որ մեռաւ
յանօրէնութիւնս իւր ‖ . որ բառնայ զամենայն տա-
րակոյս զդատապարտութենէ նորա . զոր և համօրէն
հարք և մեկնիչք՝ բաց ՚ի սակաւուց ոմանց միաբան
հաստատեն : Որ սաւուղայ ըստ հաշուի կեսա-
րոսի կաղինեան՝ եղև յամի աշխարհի 3115 :

ԳԻՐՔ ԻՆՆԵՐՈՐԴ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ

ԳԼՈՒԽ Ա.

Պատուիրէ պայ սպանանել զամաղէկացին, որ առայ ընէ ինչն սպան զսաուղ։ Պղէս առնու՝ ի վէրայ սաուղայ և յոխերնանու։ Ծանի՝ ի դեբրոն ընտիւոր՝ ի վէրայ ուեղէն յուդայ։

Պատերազմ գեղբուայ վճարեցաւ՝ ի նմին աւուր, յորում դաւիթ դառնայր՝ ի սիկելակ մեծաւ յաղթութիբ ընդդէմ ասպատակաւորացն ամաղէկացւոց։ Յետ երկուց աւուրց եհաս առ նա անդ՝ ի սիկելակ գոյժ աղետալի՝ ի ձեռն առն միոյ, որ համարէր աւետաստու լինել դաւթի, վասն որոյ և մեծաց վարձուց արժանի առ՝ ի նմանէ։ Այլ զգուշացաւ այրն չերևել մարդելոյզ կերպարանաւոր, կամ պարզապէս ուրախութիւն ցուցանել յանձին ընդ այնպիսի ձախող անցս զոր թէպէտև ըստ իւրոց կարծեաց հաձոյական համարէր դաւթի, սակայն և այնպէս եգեալ էր՝ ի մտի՝ թէ դաւիթ քաղաքականօրէն գէթ առ երեսս ունէր ցուցանել ցաւ և տրտմութիւն ընդ այնչափ կոտորած ժողովրդեանն ՚այ. ուր՝ ի սրտի ցնծայ ասէր՝ ՚ի լուր մահուն սաւուղայ իւրումն անհաշտ թշնամւոյ, և առաւել՝ ի տեսանել զնշանակս թագաւորութե՛ն, զթագն սաւուղայ և զապարանջանս նորա՝ նման մա-

տուցանել ։ Ապա այնուրիկ եկն առ նա Հոզ զդևսով, և ի հանդերձս պատառեալս առ ի ցոյց մեծի սրտցաւութեանն, որպէս յատուկ է շողոմարար մարդահաճոյից ի գոռանալ զսիրտս անզգուշաբար ։ Նա առ առաւելուլ զարդիւնս իւր առաջի դաւթի, եցոյց թէ ինքն եղև սպանօղ սաւուղայ՝ թէպետ ոչ յիւրոյ կամաց, այլ ի խնդրոյ նորա ։

Ել էսկ սա և ուսաի, չունիմք ուսուեք գիտել. սասց զանձն լինել որդի առն ամաղեկացւոյ պանդխտելոյ յերկրին իսրայէլի. և այժմ փախուցեալ գամ առեր ի բանակին իսրայէլի, զի խորտակեցաւ բանակ նոցա. և անկան բազումք ի նոցանէ. ընդ որս և սաւուղ և յոնաթան որդի նորա մեռան ։ Նա ի հարցանել դաւթի, թէ զիարդ գիտայ՝ եթէ մեռաւ սաւուղ և յոնաթան, ասէ ըստ գիպացն ինն եկեալ ի լեառն գեղբուայ՝ տեսի զսաւուղ, զի նուաղեալ և յոգիս ապաստան ի հարուածոց նետից, զոր ընկալաւ ի պատերազմի, կայր յեցեալ ի նիզակն իւր. և մինչ կառք և ախոյեանք հեծելոց թշնամեացն գային ի վերայ նորա, հայեցաւ ի թիկունս իւր, և տեսեալ զիս՝ կոչեաց և ասաց, զի սպանից զնա. քանզի գոլով վիրաւորեալ ի մահ, էր ի տանջանս անհնարինս, և հոգին ոչ ելանէր ի մարմնոյն ։ Ուստի ես ստիպեալ յաղաչանաց նորա, գիտելով եթէ ոչ է ապրանայ, յարեայ և սպանի զնա. և առեալ զթագն ի գլխոյ նորա, և զապարանջանս ի բազկէ նորա՝ բերի ահա հիմա այսր ։ Ա՛ստուածութիւն յօդեաց այսր զստաբանութիւն իւր, զի հաւատարիմ արասցէ ։ Ապաւուղ տակաւին էր հանապազ ի ձեռին կրել զնիզակն իւր, վասն որոյ յասել նորա թէ եգիտ զնա յայնմ կետին անձկութեանն իւրում յեցեալ ի նիզակն իւր, հաւանեալ առնէր զբան իւր առաջի դաւթի. և յասել զանձն ամաղեկացի, ցուցանէր թէ չէ ի ժողովրդենէ սաւուղայ, զի մի երևեսցի սպանօղ ահա իւրում արքայի. և պատմելով զինդիր թագաւորին այլովքն հանդերձ, ցուցանէր զսպանութիւն իւր գործ սիրոյ և ողորմութեան, առ ի վաղագոյն ազատել զնա ի

տանջանաց անտի՝ յորմէ արդեն մեռանելոց էր։ Ա.սաց փախուցեալ ՚ի բանակէն, առ ՚ի չերևել անապարձ. բայց յարելով զկնի՝ թէ սպան զսաւուղ՝ և առ զթագաւորական նշանակս նորա, մինչ գունդ հեծելոց թշնամեաց ՚ի վերայ գային, եցոյց թէ եկաց հաստատուն մինչ ՚ի կատարած պատերազմին, արիագոյն քան զամենայն իսրայէլացիս գտեալ. և մատուցանելով դաւթի զթագ և զապարանջանս սաւուղայ իբրև արժանաւորի թագաւորութե՛, կամ՝ր յայտ առնել զյօժարամտութե՛ իւր առ նա. որով և մեծաց բարեաց ակնունէր առ ՚ի նմանէ։

Պատուհի պատմութե՛ս ըստ առաւել մասին՝ յայտ յանդիման նշաւակի ՚ի բանից անտի ՚որ գրոց, զոր ՚ի վեր անդր նշանակեցաք. բայց չկային անդ վկայք ՚ի յանդիմանել զստախօսն, որ ձարտարէր գՀաւանելին իբրև հաւաստի ճշմարտութե՛ երևեցուցանել։ Վասն կարի ինն գժուարին է բազում առութե՛ս ՚ի մի կուտել, և այնպէս գունագեղել, զի և ոչ միոյն երևեցի բնիկ տգեղութե՛ իւր. որպէս ահա սա ՚ի պատմութե՛ իւրում յաւել պարագայ մի, որ այն միայն շատ էր անհաւատարիմ առնել զամենայն պատմութե՛ն նորա։ Ա.սաց ըստ պատահման զինքն եկեալ ՚ի լերինն գեղբեայ. և ՚ի աճ զմտաւ, թէ այն էր յայնժամ ասպարէզ ահարկու պատերազմի. ուր էր մարթ ումեք իբր վայրապար շրջելոյ աղագաւ հանդիպել ըստ պատահման։ Դաւիթ իշխան աչալուրջ՝ նոյն ժամայն ծանեաւ, զի միտք ամաղեկացւոյն էր բերել նմա լուր հաճոյական՝ ոչինչ կարծիս ունելով թէ ՚ի քննութե՛ արկցին բանք իւր, երբ բարձեալ բերէր ՚ի ձեռին զթագաւորական նշանակս։ Այլ դաւիթ ուսոյց նմա, թէ սուտակասպաս մարդահաճութե՛ն էր ձանձապարհ գտանելոյ ընդ ճշմարտին առաջի նորա։ Ո՛չ արար երկար քննութե՛ բանից նորա. ոչ պահեաց զնա ՚ի կալանս մինչև հաւաստեաւ հասու լինի ճշմարտութե՛ իրացն. այլ ՚ի խոստովանութե՛ն անտի բանից բերանոյ նորա իրաւամբք գատեաց և դատապարտեաց զնա ՚ի մահ իբրև սպանօղ թագա-

ւորի ազգին իւրոյ. զիա՞րդ ասէ ոչ երկեաւր ձգել զձեռն քո ապականել զօծեալն նորա. իսկ նա՝ որ այնպէս ձարտար էր՝ի յօդել զստուերն, ոչ գիտաց բան մի տալ պատասխանի. վասն որոյ ըստ հրամանի դաւթի մի ումն՝ի զինուորաց նորա եհար զնա անդէն և սպան։

Ա.յլ թէ զիա՞րդ անկան՝ի ձեռս առնդ այդոքիկ թագ և ապարանջանք սաւուղայ՝ չէ՛ յայտ քնաւ։ Կազումք՝ի ռաբբիից երբայեցւոց ասեն զնա որդի լինել դովեկայ, որում ասեն յանձն արար սաւուղ զնշանակս թագաւորութե՛ն՝ի ծպտիլ իւրում երթալ առ կինն վհուկ. իսկ թալմուտեանք յայլ զանազան ինքնաստեղծ կերգիս դեգերին։ Ա.յլ թողեալ զհրէական առասպելս, եթէ օրէն էր գուշակել ինչ զայսմանէ, մնորթ է ասել՝ թէ յիրաւի էր սա որդի առն ամաղեկացւոյ, (ապա թէ ոչ՝ խօսք իւր և եղանակ արտասանութե՛ն նորա յայտ առնէր զնաբէութե՛ն նորա,) զինուորեալ՝ի գունդս այլազգեաց փղշտացւոց, և մի՝ի պահապանացն կարգելոյ՝ի պահպանութե՛ն անկելոյ՝ մինչ այլք զհետ սպդէին փախստէից, որպէս զի յետոյ եկեալ հողոպտեացեն զնոսա որպէս արարին յաւուր երկրորդի։ Այս չէ ինչ անհաւանելի՝ թէ՝ի շրջել սոքա անդ՝ի մէջ դիականց, դիպեալ իցէ մարմնոյ սաւուղայ, և գիշերային փոխանակ պահելոյ զնա՝ առեալ իցէ զնշանակս թագաւորութե՛ն նորա, և վտարանդեալ՝ի զօրուէն այլազգեաց՝ եկեալ իցէ առ դաւիթ, ակն ունելով՝ի վարձս մեծի պարգևին, իչխանութե՛ն իմիք հասանել յարքունիս դաւթի։ Պարթ է և աս ասել, թէ բնակելով սորա՝ի մէջ իսրայէլացւոց՝ երթեալ իցէ և ինքն ընդ զօրս սաւուղայ՝ի պատերազմ. և՝ի ցրուել բանակին իսրայէլի, սա՝ի կողմանն յայնոսիկ ուրեք թագուցեալ, գիշերայն՝ մինչ այլազգիքն հալածէին զփախստեայս, իցէ արարեալ զայն։ Ա.յլ թէ՝ Ձմարիտ կամ կեղծեալ ամաղեկացի էր, և թէ՝ի զօրաց իսրայէլի էր՝ կամ այլազգեաց, և թէ՝ որ՝ի բանից նորա ստոյգ էր կամ սուտ, ոչինչ է փոյթ մեզ գի-

տել։ Այս ինչ յայտնի է, զի փոխանակ վարձուց՝ որում յանիրաւի ակնունէր, կորոյս զկեանս իրաւամբք. և դաւիթ խորհրդով և իրաւամբք սրար զոր սրար, եթէ՝ ի դիմաց ժողովրդեան իսրայէլի՝ ի վրէժխնդրութիւն Թագաւորի նոցա, և եթէ՝ ի դիմաց իւրոց, զի էր օծեալ՝ ի տէնէ, և՝ ի մանկ ինչ ժողովրդեան արդէն ծանուցեալ Թագաւոր, և էր յիւրում քաղաքի, ուր վարէր զԹագաւորական իշխանութիւն. Թէպէտ զի այրն ըստ իւրում խոստովանութեանն՝ գոլով ամաղեկացի, էր՝ ի նզովեալ ազգէ անտի։

Այլ սիրտ դաւթի՝ ի սուգ մեծ պաշարեցաւ ընդ չարաշուք գոյժն, զոր լուաւ. վասն զի թէպէտ և ազատութիւն նորա՝ ի սաւուղայ հալածչէն իւրմէ՝ թէթևութիւն ինն էր նմա, բայց չարաչար մահ նորա, և մահ յոնաթանու, զոր ըստ անձին սիրէր, խորտակումն բանակին, անարգութիւն ազգին իւրոյ, և պարծանք թշնամեաց՝ ի վերայ ժողովրդեանն այ՝ անբերելի կակիճ էին քաղցր և գԹոտ սրտի նորա։ Պատառեաց զհանդերձս իւր, և՝ ի նմանէ օրինակ առեալ՝ զնոյն արարին ամենայն արք որ ընդ նմա. ելայ և կոծեցաւ, և պահեաց մինչև ցերեկոյ։ Այս առ յաւէժացուցանել զյարգութիւն իւր՝ զոր անկեղծ մտօք կրէր առ սաւուղ, և զերախտապարտութիւն առ սիրեցեալն իւր յոնաթան, ըզ որմէ յափշտակութիւն մտաց՝ ալար՝ ի վերայ նոցա ողբ դամբանական ցաւագին և գորովալիր, յոմ բարձրագոյն, գերազանց այլաբանութիւք, և գեղեցիկ նկարագրութիւք փառաւորեալ. որոյ համեմատ ուր ուրեմն է գտանել յարտաքին բանաստեղծս. զոր կոչեաց Աղեղնաւորութիւն. իբր զի աղեղն յոնաթանու յիշատակի՝ ի նմա։ Զատանին և առ արտաքինս այսպիսի անուանք եղեալք բանաստեղծական տաղից. որպէս տաղաչափութիւնն, ուր Եսիոդոս ստորագրէ զվահանն Հերակլեայ՝ կոչի Ասպար. սոյնպէս և այլք յայլ անուանս, յորոյ վերայ յածի տաղաչափութիւնն նոցա։ Այս ասաց ուսուցանել որդւոցն յուդայ զայն աղեղնաւորու-

թէ. զոր ոմանք յայլ միտս առնուն. որպէս թէ ասացեալ էր գաւթի կրթել զորդիս յուդայ ի պատերազմ, և մանաւանդ ի նետաձգութէն, առ ի առնուլ զվրէժ յայլազգեաց թշնամեաց իւրեանց. բայց անյարմար երևի:

Ի սկիզբն տաղին ձայնէ զժողովուրդն իսրայէլի ի վերայ բլրոցն գեղբուայ, արձանանալ զկայ առնուլ հիացմամբ՝ թէ զիարդ այնպիսի զօրաւոր քաջամարտիկք յայնմ սուղ ժամանակի միանգամայն վիրաւորեալ անկան մեռեալ: Ի պատմէք ասէ ի գէթ, և մի տայք աւետիս ի սահմանս փղշտացւոց. զի մի ուրախ լինիցին ի վերայ չարեաց մերոց. և մի դատերք նոցա յերգս և ի պարս առեալ զյաղթանակ նոցա՝ նշաւակեսցեն զմեզ: Յօսի և բացադարձութէ առ լերինս գեղբուայ, անէծս կարդալով, զի մի իջցէ ի նոսա ցօղ, և մի շահեկան անձրև, և մի լինիցին երբեք անդաստանք արդիւնարար պտղոց. վասն զի անդ ապականեցաւ ասպար զօրաւորացն՝ սաւուղայ և յովնաթանու, որք էին վահան ամենութէ ժողովրդեան իսրայէլի: Այս հարցանէ. միթէ վահան սաւուղայ և այլ զէնք նորա չէին այժմ օծեալ կամ ժանգահարի էին առ ի չներգործել ի թշնամիս. ուր յայլ նուագս ազգն և նետ յովնաթանու ոչ դարձաւ երբեք յետս անթաց յարեանն վիրաւորաց, և անշաղախ ի ճարպոյ զօրաւորաց. նոյնպէս և ոչ սուր սաւուղայ դատարկ ամենևին եցաւ ի պատեան: Ապա առնու ի դովեստ զառաքինութէնս յովնաթանու հակադրութէ ձևով. հատոյց սաւուղայ իբրև հօր, և իբրև թագաւորի իւրոյ, զոր ինչ պարտական էր նմա. բայց և զպարտս հաւատարիմ բարեկամութէ ոչ մոռացաւ. յամենայնի գործակից եղև նմա մինչև ի մահ, սաւուղ և յովնաթան չմեկնեալք ի կենդանութէ, ոչ մեկնեցան և ի մահուան իւրեանց. բայց յանիրաւութէնէն սաւուղայ՝ որ առ դաւիթ, որում ոչ երբեք գտաւ կամակից յովնաթան. այլ պահեաց անարատ զուխտ հաւատարմութեան առ բարեկամն իւր: Ապա զսաստկակիզիծ

ցաւ սրտի իւրոյ առանձինն ի վերայ յոշխաթանոյ յայտնելով, դուչէ բացագանչութիւնն ձևով. Ցաւ է ինձ ի վերայ քո եղբայր իմ, բարեկամ իմ, սիրելի իմ յոնաթանայ, զարմանալի եղև սէր քո ինձ, քան զսէր մօր առ միածին որդի, և քան զսէր կնոջ առ այր իւր կամ առն առ կին իւր: Նա կնքէ կրկնելով զսրտակէզ հառաչանս. Ո՛հ զիա՞րդ անկան զօրաւորքն, և կորեան առնօթքն պատերազմականք:

Երբև կատարեաց դաւիթ զամենայն զոր ինչ վայել էր իւրաքանչիւր բարեպաշտութիւնն, և անկեղծ սրտցաւութիւնն վասն սաւուղայ և յոնաթանոյ, և վասն խորտակման ժողովրդեան նոյ, սկսաւ այնուհետև խորհել յաղագս անձին, թէ զի՞նչ արասցէ. այդեօք անցանել անձամբ ի մի ի քաղաքացն յուդայ, և սկիզբն առնել ժողովել առ ինքն զցրուեալ զօրսն իսրայէլի, թէ միաւլ անդ ի սիկեղակ, և ի հեռուստ դէտսակն կալեալ կալ ի զնին, թէ զի՞նչ որոշիցէ ժողովուրդն: Դաւիթ ի ձեռն ուղնէր զթագ թագաւորութիւնն, բայց չէր պարտ նմա դնել զնա ի գլուխ իւր, զի չուներ ի ժողովրդենէ, այլ յումեմնէ անճանօթ ամաղեկացւոյ. զոր կարէր նա առաջի առնել նմա, այլ ոչ կարէր առնել զնա թագաւոր: Անցանել ի ձեռաց զայն, և առաքել առ որդին սաւուղայ, կամ առ իշխանս ժողովրդեան՝ երկար և հասուն խորհրդոց պէտք էին. զի թագն արքայական զոր ոք ունիցի ի ձեռին, եթէ թողցի ելանել ի ձեռաց, դժուարաւ դառնայ, եթէ կամիցի միւսանգամ ունել զնա: Դաւիթ զի օճեալ է ի սամուէլէ. և ունէր նշանս բազումս յաջողելոյ նմա նոյ ի թագաւորութիւնն, բայց ոչ գիտէր թէ այն իցէ ժամանակն սահմանեալ առ ի նմանէ: Վասն որոյ ըստ իւրում սովորութիւնն՝ որ յամենայն այսպիսի ծանր իրս խնդրէր խմանալ զկամս նոյ, եհարց ի ձեռն աբիաթարայ քահանայի ի տնէ, եթէ ելանիցէ՞ յերկիրն յուդայ, և յո՞ր քաղաք. ետ որ պատասխանի, ելանել ի քեբրոն, որ էր քաղաք ամուր իբր ի մի

ջակէտ անդր ցեղին յուդայ առ երուսաղէմաւ , ուր տակաւին տիրէին յեբուսացիք :

Ա՟յս պատուէր ընկալեալ դաւթի՝ եւ ’ի սիկելակայ , և գնաց ’ի քեբրոն , առեալ ընդ իւր և զերկոսին կանայս իւր՝ զաքինովամ յեզրայելացի և զաբիգեա կին նաբաղու կարմելացւոյ , և զվեց-հարիւր արս , որք ցանկ ընդ նմա եղեն ’ի հալածանս նորա՝ հանդերձ ամենայն ընտանեօք նոցա : Ա՟յլ և զսիկելակ ոչ եթող առանց պահպանութե . զի ունիմք ’ի ’ոբ գիրս , եթէ պահեաց զայն միշտ իբրև իւր սեպհական քաղաք . վասն որոյ կարի հաւանելի է , թէ եթող անդ ’ի պահպանութե՝ զնոսա , որք վտարանջեալ ’ի սաւուղայ՝ յառաջ քան զպատերազմ գեղբուայ , անցին առ նա ’ի սիկելակ : Ա՟յեղև հարկ դաւթի արամբք սպառազինելովք ելանել ’ի քեբրոն . զի որովհետև ցեղն յուդայ յօժարամիտ էր առ նա , և ցանկացող ունել զնա իւր թագաւոր , չէր խոհեմութե տալ նոցա պատճառս դնել ’ի մտի , թէ բռնութեամբ խնդրէ թագաւորել ’ի վերայ նոցա , և կամի բառնալ զազատութե իւրեանց : Ա՟յլ յիրաւի , զի ահա առանց ահարկութե զինուց՝ իշխանք ցեղին յուդայ յամենայն քաղաքաց ինքնայորդոր եկին ’ի քեբրոն . և հանդիսիւ օծին զնա երկրորդ անգամ թագաւոր ’ի վերայ ցեղի իւրեանց :

Յեհովան որդի սատուղայ նագաւորէ՝ ի Մանայեմ՝ ի վերայ Ռեփսեան ցեղից Իսրայէլի հնարագործութիւ աբեննե-բայ սպարապետ։

Յետ այնորիկ մինչև էին մեկնեալ անտի իշխանք յուդայ, պատմեցին ոմանք դաւթի՝ թերևս՝ ի փորձել և յիմանալ զկորհուրդ սրտի նորա՝ ի վերայ սաւուղայ, եթէ արք յաբիսայ գաղաադացւոց՝ որ յայնկոյս յորդանանու, պատուով թաղեցին զսաւուղ և զորդիս նորա. որպէս ասացաք՝ ի վեր անդր։ Ընդ այն բան հաճեցաւ յոյժ դաւիթ. և կամեցեալ նովին առթիւ քանալ դուռն առ յինքն յանկուցանելոյ նախ զդաղաատացիս, որք տեղեաւ հեռի էին՝ ի նմանէ, գոլով նոցա յայնկոյս յորդանանու, և յարեալ՝ ի տունն սաւուղայ, նոյնժամայն հրեշտակս արձակեաց՝ ասել ցնոսա, թէ կատարի ինձ հաճոյ եղև դաւթի ողորմութիւնն, զոր արարին սաւուղայ թագաւորի իւրեանց օծելոյ ՚ն։ Յայր սակս և ՚ն՝ որ ողորմած է արդար և ճշմարիտ, ոչ անվարձ թողիցէ զայն գործ ողորմութիւնե նոցա։ Ապա ըստ որում էին խրատեալ հրեշտակքն՝ ի դաւթէ, յաւելին ասել, թէ զկնի ՚ն՝ և նա ինքն դաւիթ ունի հատուցանել նոցա բարիս փոխանակ բարութիւնն այնորիկ. ուր ոչ կարեն ակնուանել իմիք՝ ի մեռեալ թագաւորէն։ Զան որոյ զօրացին և լինին որդիք զօրութիւ, մի՝ երկիցեն՝ ի փղշտացւոց, կամ յամմնացւոց, և կամ յայլոց շրջակայ այլազգեաց, որպէս թէ՝ ի մեռանել սաւուղայ անտերունչ և անօգնական մնացեալ իցեն. գիտասցեն՝ զի տունն յուդայ զնա ինքն զդաւիթ ՚ն՝ ի թագաւոր իւրեանց. որ և պատրաստ է հզօր ձեռամբ պաշտպանել նոցա։

Այս հրեշտակութիւ դաւթի ըստ այսմ մասին

առ ժամն անգործ մնայ. վասն զի աբեղաները խոթամանկ հնարագիտութիւք արդելս արկ ի միջի։ Կղձալն էր ժողովրդեան՝ զի համձրկին խորայել միասցի ի մի թագաւորութիւն դաւթի. որպէս զի միացեալ զօրութիւք, փութով մարթասցին նուաճել զյանդգնութիւն փղշտացւոց։ Այլ աբեղաները այր ինքնահաճ կամեցաւ զկողմն ունել տանն սաւուղայ՝ առ ի ցուցանել զանձն որպէս տեղապահ թագաւորին մեռելոյ, և գլուխ բանակի. և արդարև էր ինքն պատերազմող հզօր, զօրավար քաջակրթի և մեծահանձար, միանգամ յաջողակ ի գործն և ի խորհուրդ։ Այլ էր ի սակի այնոցիկ արանց, զորս տայ ած յարքունիս թագաւորաց ի պատիժ ժողովրդեան, որք յառեալ ունելով զաչս իւրեանց յառանձնական բարիս՝ ընդ ոտիւք կոխեն զամենայն բարի և զլաւ հասարակաց։ Վասն որոյ ես, զի թէ ամենայն իսրայէլ միասցի ի դաւիթ, իշխանք յարքունիս և ի զօրս նորա՝ նոքա լինելոց են, որք եղեն ընդ նմա ի նեղութիւն նորա, որով և գերադոյն սպարապետութիւն զօրաց՝ յայլոց ձեռս ունի անցանել։ Ել կարէր ակնունել զթագ թագաւորութիւն կրել յիւր գլուխ, սակայն գէթ ցանկայր դնել ի գլուխ այնպիսի, որ շատացեալ անուամբ թագաւորի՝ նմա թողոյ զանտեսութիւն թագաւորութիւն, թէ ոչ բովանդակապէս, գէթ ընդարձակ իմն իշխանութիւք հրամանատարութիւն։ Ցեսաւնէր զյեբուսեայն ի յաջորդութիւն և ի ժառանգութիւն թագաւորութիւն սաւուղայ՝ ամենայն իրօք յարմար իւրոյ խորհրդոյ. մանաւանդ զի և արիւնակից էր նմա. զի յեբուսեայ էր որդի սաւուղայ, և սաւուղ որդի կիսեայ. իսկ կիս՝ եղբայր էր ներեայ հօր աբեններայ. ուստի և յեբուսեայ հօրեղբօր որդի աբեններայ։

Այլ յայնժամ յեբուսեայ երեսուն և հինգ ամաց։ որ էր հասակ բաւական առ թագաւորութիւն, բարեսիրտ էր, հանդարտ և ցուրտ բարուց վիճակեալ, և զուրկ յիշխանական քաջամտութենէն։ Այլ կենդանութիւք հօրն՝ որպէս երեւի՝ չէր մտեալ

'ի գործ ինչ քաղաքական, և ոչ 'ի պատերազմ, նմին իրի չուներ Թշնամի. բայց և ոչ անուն քաջութե: Սակայն քաջութի հօրն, և երից եղբարց նորա, որք մեռան 'ի պատերազմի 'ի պաշտպանութե Թագաւորութե իսրայէլի, հաղորդէին և նմա արդիւնս ինչ առաջի ժողովրդեան: Ոչ սա կամեցաւ աբեններ ամբառնալ յաթոռ Թագաւորութեան, ակնկալութի Թէ յերբեմն լինիցի Թագաւոր. բայց աբեններ վարեցոյց զԹագաւորութին: Այլ չէր Թեթև ինչ գործ՝ հանել 'ի գլուխ զխորհուրդ իւր: Վասնզի նախ՝ չարաչար կառավարութե սաւուղայ՝ ատելի արար ժողովրդեան ոչ միայն զտունն սաւուղայ, այլև զանուն Թագաւորի: Երկրորդ՝ զի ցեղն յուդայ նախապատիւ և հզօր յամենայն ցեղսն իսրայէլի՝ կացոյց Թագաւոր զդաւիթ. առ որ յամենայն ցեղից բազում զօրապետք և իշխանք օր ըստ օրէ անցանէին. և կարի հաւանելի էր, Թէ և այլք յօրինակ նոցա յորդորեալք՝ երթայցեն զկնի նոցա: Յե երրորդ՝ զի կարի հարկաւոր էր չբաժանել Թագաւորութեն, զի մի տկարացեալ՝ ընդ զնուք փղշտացւոց իսպառ նուաճեսցին: Այս ամենայն տայր իշխանաց և գլխաւորաց ցեղից՝ որք խոհականագոյն էին և յառաջատես, քաջ խորհել և յերկար՝ առ 'ի զԼս գտանել այսչափ դժուարութեանց:

Այլ աբեններ ոչ յայս և ոչ յայն հայեցեալ՝ կալաւ Ճանապարհ համառօտ, և առ ժամն յաջողեցաւ նմա: Ոչ 'ի գոլով գերագոյն սպարապետ Թագաւորութեան իսրայէլի, յորոյ 'ի ձեռին էին զօրքն, առաջին փոյթ նորա եղև ժողովել զնոսա վաղագոյն 'ի մանայեմ քաղաք յայն կոյս յորդանանու, 'ի տեղի անբոյթ. ուր աներկեան մարթ էր զօրաց մատչիլ յամենայն կողմանց. և այսպէս երբակի օգուտ եղև նմա: Նախ՝ զի կալաւ զձախակողմն եղերաց յորդանանու գետոյ, որով դիւրին էր նմա զգեմ ունել փղշտացւոց, և զօրուն դաւթի, եթէ միւն կամ միւսն ելանիցէ 'ի վերայ նորա: Երկրորդ՝ զի հատանէր 'ի դաւթէ զՀաղորդութե ցեղից

Իսրայէլի եղելոց յայնկոյս Լերանց գեղջուայ. քանզի փղշտացիք յետ յաղթուելոյն գեղջուայ՝ սփռեալ կային ի ծովէ ի վեր կոյս ընդ ձորն յեզրայելի, և ընդ Լերինս գեղջուայ, մինչև ցյորդանան, անցանելով ընդ մէջ երկրին հրեաստանի. որով հատանէին զամենայն հաղորդութիւն հիւսիսային ցեղից ընդ հարաւայինսն։ Ի թէ կամէին յօգնութիւն հասանել միմեանց՝ առանց անցանելոյ ընդ զօրս փղշտացւոց, մի միայն Ճանապարհ մնայր նոցա ի հիւսիսային կողմն անցանելոյ զյորդանան. և անտի իջանել գալ առ Ճախակողմեան ափամերձ գետոյն ի հարաւ՝ ուր չէր ժամանեալ զօրն փղշտացւոց, անդրէն անցանել զգետան. իսկ զայս Ճանապարհ անցանելոյ և անդրէն անցանելոյ զյորդանան՝ փակեալ էր աբեններ։ Եթէ միւն իրի եթէ հիւսիսային ցեղք կամէին անցանել առ դաւիթ, պարտ էր նոցա անցանել կամ ի միջոյ զօրաց աբեններայ, և կամ փղշտացւոց։ Եւ այսպէս՝ որք միանգամ կարօտ գտանէին օգնականութիւն, եթէ հիւսիսայինք և եթէ հարաւայինք, միայն յաբեններայ կարէին ակն ունել։ Յորորդ օգուտ՝ զոր ունէր աբեններ ի դրից տեղւոյն առ ի գլուխ տանել զնորհուրդ իւր, էր գտանիլ նորա յերկրին գաղտագոյց. զի նոքա միայն էին յարեալ ի տունն սաւուղայ՝ յաղագս բարեացն զոր արար նոցա սաւուղ ազատելով զյաբիս մայրաքաղաք նոցա։ Եւ ասն այնորիկ ակն ունէր աբեններ անդիմադարձ ընդունել նոցա զկերակուրն ի թագաւոր։ Այսպէս և այլ ցեղք լոկ անցանելով զյորդանան, կամ զծովն գենեսարեթայ, կարէին յամենայն կողմանց գալ միանալ ընդ կերակրեալսն՝ անարգել ի զօրաց դաւիթ կամ փղշտացւոց։

Այսպէս կարգեալ աբեններայ զիրսն, փոխանակ ի խորհուրդ մտանելոյ ընդ իշխանս ցեղիցն՝ որոնցաւ զսիրտս զօրաց, գիտելով զնա ի ձեռս նոցա և թագաւորութիւնն. և առեալ զկերակուրն տարաւ ի բանակն, և յաճեցոյց զնա ի մէջ զօրուն. ամենեքին միաբան ընկալան զնա ի թագաւոր։

Բայց ոչ այնպէս փութով յաջողեցաւ աբենների որսալ զցեղն իսրայէլի. այլ առ սակաւ սակաւ, և իբրև մի առ մի. մինչև հազիւ զկնի հինգ ամաց էհաս յեբուսեթեայ Թագաւորել՝ի վերայ ամենայն իսրայէլի: Վաղապագիք եղեն առաջինք, որք անձնատուր եղեն նմա. ապա Թասիրացիք կամ դեսուրացիք, որք էին՝ի ցեղին մանասէի յայնկոյս յորդանանու. յետոյ յեզրայելացիք. և ապա երկու ցեղք եփրեմի և բենիամինի. և հուսկ յետոյ՝ զկնի հինգ ամեան հնարագործութեց աբենների, ամենայն ցեղք իսրայէլի, բայց՝ի տանէն յուդայ՝ որ եկաց մնաց միշտ հաւատարիմ դաւթի, ծանեան զյեբուսեթէ Թագաւոր իւրեանց: Որ նա յայնժամ քառասուն ամաց. այլ՝ի սակաւ ժամանակս ժառանգեաց զԹագաւորութիւն իւր. քանզի յետ երկուց ամաց սպանաւ դաւաճանուբք. որպէս ասաց ցուք զկնի: Այս է՝ զոր ասէ գիրն.* Այս էր ամաց քառասնից յեբուսեթէ որդի սաւուղայ՝ յորժամ Թագաւորեաց՝ի վերայ իսրայէլի. և երկուս ամն Թագաւորեաց ‖. Բ. Խագ. Բ. 10: Վասպէտ ոմանք զայս բան գրոյն այլազգ իմանան, զորմէ ստորև ունիմք խօսել:

Յետ հինգ ամաց, յորս երկոքին կողմանք դաւթի և յեբուսեթեայ պարապ առեալ՝ի պատերազմաց օտարաց՝ միտ դնէին կարգել յարդարել զկրօղութիւնս նորոգ վիճակի իւրեանց, միանգամայն և ամենազգաստ արթնութբք դէտակն կալեալ դիտէին զգնացս միմեանց, աբենները Թերևս վստահացեալ՝ի բազմութիւն իւրոյ կողման՝ եղև առաջին՝ի գրգռել մարտ՝ի մէջ իսրայէլի, և տանն դաւթի: Վաբաւոնացիք Թէպետև էին՝ի բաժնի ցեղին բենիամինի, բայց դառնացեալ սակս հարուածոյ՝ զոր գործեաց՝ի նոսա սաւուղ ընդդէմ երդմանն, զոր երդուաւ նոցա յեսու, էին՝ի կողմն դաւթի: Զմին իրի առեալ աբենների գունդ մի յիւրոց ընտրելագոյն զօրաց՝ել՝ի մանայեմայ երթալ պաշարել զդաբաւոն մայրաքաղաք նոցա, ի նուաճել զնոսա՝ի հնազանդութիւն յեբուսեթեայ:

Կայր են որք համարին, թէ խորհուրդ աբեղնե-
րայ յայս չու՝ այն էր, զի թէ հնար իցէ՝ ուխտ խա-
զաղութե՛ հաստատեսցէ՛ ի մէջ երկուց թագաւո-
րաց՝ յերջուսղէմայ և դաւթի. ապա թէ ոչ՝ պատե-
րազմաւ վճարել զիրան։ Յովաբ զօրավար դաւթի՝
միշտ ուշադիր յամենայն շարժմունս զօրուն իսրայէ-
լի, եւ և ինքն՛ ի քերբոնէ չափաւոր գնդաւ. և
դիպեցան միմեանց՝ ի վերայ աղբերն գաբաւոնի,
զտեղի առեալ զնովաւ՝ նոքա անտի, և սոքա աս-
տի։ Երկու զօրավարքն յովաբ և աբեղներ չև ևս
յայտնի թշնամիք միմեանց՝ կամէին արդեօք պատ-
րուակել զձեռնարկ պատճառ չուոյ իւրեանց. բայց
՛ի վեր հանին փուքոյ ըստ օրինակին ըստ այսմիկ։
Աբեղներ հրաւիրեաց զյովաբ՝ հրամայել զօրացն
առնել առաջի իւրեանց խաղարկուքի՛ ինն զինուո-
րական առ՛ի փորձ քաջուքե՛, ելանելով յասպա-
րէզ երկոտասան քաջաց՛ ի միոյ կողմանէ, նոյնչափ
թուով և՛ ի միւս կողմանէ։ Զայս հրաւէր՝ ՛ի վե-
րին երեսս խաղարկուքի՛ անուանեալ, բայց իրօք
մենամարտուքի՛ առ՛ի մահ, քաջ՛ ի միտ էառ յո-
վաբ, և սակայն յանձին կալաւ առանց ընդ քանս
ինչ ածելոյ։ Ասան որոյ անցին՛ ի հանդէս երկո-
տասանք՛ ի բենիամինեանց՛ ի զօրացն աբեղնեերայ.
և երկոտասանք՛ ի յուդայեանց ըստ ընտրուքեան
յովաբայ։ Խաղարկուքի՛ նոցա՛ ի կարճոյ վճարե-
ցաւ, զի՛ ի հանդիպել միմեանց՝ նոյնհետայն կալան
այր իւրաքանչիւր միով ձեռամբ զվարսից գլխոյ,
(կամ ըստ այլ թարգ. զկզակէ) ընկերի իւրոյ, և
միւսովն սուր՛ ի կուշտ ընկերին մխեալ՝ այնպիսի
վարեցան զուգակշռուքե՛, զի ամենեքեան միան-
գամայն՛ ի միում վայրկենի անկան՛ ի գետին մե-
ռեալ։ Այս դիպուած այնչափ հռչակաւոր եղև,
մինչև անուանիլ տեղւոյն այնուհետև Ասճակ փա-
ճանայ. կամ ըստ հբր. Ասպարէզ զօրաւորաց։

Յայնժամ յայտնեցաւ խորհուրդ երկուց զօրա-
վարացն, որ ոչ էր խաղ զինուորական, այլ խնդ-
րել պատճառս պատերազմի. որպէս և եղև։ Ի
անտի գրգռեցաւ պատերազմ սաստիկ և ահագին.

մինչև արք իսրայէլի չարաչար հարուածեալ և պարտեալ՝ ստիպեցան Թիկունս դարձուցանել՝ ի փախուստ, և աբեններ ընդ նոսա. բայց պահելով զարիսական վէհանձնութեն, զի՝ ի վերջոյ այլոց լքեալ վերջապահ երթայր աներկիւղ՝ ի հետամտաց. Թերևս ունելով՝ ի մտի, ի ժամանել՝ ի դիպօղ ինչ առեղ՝ անդէն զկայ առնուլ և ձակատ յարդարել ընդդէմ հետամտաց: Այրևի Թէ գունդ յուվաքայ՝ ի նախընթաց ձանապարհորդութէ վաստակեալ էր. զի ոչ ընթանայր զհետ փախստէից նուվինն արագութէբ՝ որով նոքա ընթանային: Ընդ էին և երկու եղբարք յուվաքայ աբեսա և ասայէլ. և զի ասայէլ էր մէջ միայն զօրաւոր, այլ և թեթևընթացոյժ՝ ըստ գրոյն իբրև զմի յայծեմանց՝ ի դաշտի, պնդեցաւ զհետ աբեններայ անխոտոր՝ ի հետոց նորա: Աբեններ ոչ կարէր տանել այնչափ յանդգնութէ նորա. բայց և ոչ իշխէր հարկանել զնա՝ ի մահ, զի մի՝ ի թշնամութէն անձնական անկցի ընդ յուվաքայ. Հայեցաւ բազում անգամ՝ ի թիկունս իբր, և ասաց ցասայէլ՝ խոտորիլ՝ ի հետոց իբրոց. այլ նա ոչ կամեցաւ. խրատեաց զնա կրկին և երեքկին հանդերձ սպառնալեօք՝ խոտորիլ՝ ի նմանէ, զի մի ասէ հարից զքեզ ընդ գետին, և անհաշտ թշնամութէն առթեցից ընդ իս և ընդ յուվաբ. և ոչ լինիցի մեղն. դարձիր առ եղբայր քո. ապա թէ չկամիս դառնալ առանց սպանանելոյ զոք, մարտիր ընդ միոյ՝ ի զինուորացդ իմոց. և եթէ յաղթեսցես նմա, առ դու քեզ զսպառազինութիւնս նորա, և շատացիր այնչափ յաղթանակաւ. կամ Թէ քաջ սպառազինեալ՝ յետոյ ևկ մրցիլ ընդ իս: Այլ յոխորտ պատանին վստահացեալ՝ ի մանկական զօրութէ իւր. և ոչ ածելով զմտաւ Թէ ընդ ոմ կամի մաքառիլ, որ՝ ի զինս ծերացեալ է, ոչ կասեցաւ յընթացից: Յայնժամ առեալ աբեններայ, զի չէք հնար նմա պահել զպատիւ և զկեանս իւր՝ ի ձեռաց յանդուգն պատանւոյն, դարձաւ և եհար զնիզակն՝ ի սնակուշտն, և ել նիզակն ընդ գլխատ նորա, և անկաւ անդէն մեռեալ:

Ոմն ասայելի յամեցոյց առ փոքր ի յընթացից ղջօրս յովաքայ. քանզի ամենեքին որք հասանէին անդ, զտեղի առնուին առ դիտակամբ նորա, և հայէին ի նա ցաւակցաբար: Յայնմ պահու աբենները և արք նորա արագեալ յընթացան ընդ ձորն անասպատին գաբաւոնի, հասին ի բլուրն ամանայ. ուր իբրև յապահով վայրի զկայ առին, և կարդեցան ի ձակատ՝ մնալով թշնամւոյն հանդերձ ահիւ մեծաւ: Յովաբ իւրով գնդաւ եհաս ի մուտս առևու ի մօտակայ դաշտ անդր. և այն ինչ կամէր սկիզբն առնել երկրորդ կռուոյ, աբենները ի բլրոյ անտի բարբառեցաւ առ նա, և ասէ. Ոյդ՞ քո տակաւին յագեալ արեամբ. չատանաս ընդ այսչափ կոտորած եղբարդ քոյ. միթէ խոպան կամիցիս ընկղել զնոսա: Ո՞չ գիտես՝ զի չար է վերջին յուսահատութիւնն, որ բազում անգամ գիտէ յաղթանակել իւրում յաղթողի: Ո՞ինչև ցե՞րբ յապաղես փող հարկանել՝ զի դարձցին արքդ ի հետոց եղբարդ իւրեանց. չէ այդ գործ խոհական և ընտրօղ զօրաւարի: Յովաբ բաւական յաղթութիւն համարեալ անձին զնոնաարհել ոտիկին և խնդրել դադարումն զինուց, ետ պատասխանի երդմամբ, զի եթէ չէր խօսեցեալ աբենները՝ ընդ առաւօտն իսկ ի ծագել լուսոյ անդրէն ունէր նորոգել ընկուիւն վարելով զամբոխ իւր զհետ եղբարդ իւրեանց: Ուր ի լատինն ասի. * Եթէ էր քո խօսեցեալ, յայգուէ իսկ դարձեալ էր ամբոխդ ի պըղնդելոյ զհետ եղբարդ իւրեանց ‖. այսինքն մինչև էին միեալ ի մենամարտութիւն: Եւ այնպէս փող եհար յովաբ, և մեկնեցան ժողովուրդն ամենայն. աբենները և արք նորա չոքան ընդ արևելս (կամ՝ ըստ եօթանասնից՝ ընդ արևմուտս) զգիշերն զայն ողջոյն, անցին ընդ յորդանան. և գնացեալ ընդ ամենայն դաշտաւայրն որ ընդ մէջ գաբաւոնի և յորդանանու, եկին ի մանայեմ, ուր էր աթոռ յեբուսթեայ: Եւ յոյնպէս և յովաբ իւրով գնդաւ եկն ի քեբրոն. հանդէս արարին երկոքին, և եգիտ յովաբ անկեալ յիւրոց արանց ինն և տասն

ևեթ. բայց յասայելէ, զոր բարձին և Թաղեցին՝ի դերեզմանի հօր իւրոյ՝ի բեթզահէմ. իսկ՝ի զօրացն աբենների անկան երեք հարիւր վաթսուն այր։

Ա.յս կռիւ որ ըստ դիպաց իմն Թուեցաւ, է. բայց դուրն հանապազորդ մրցմանց՝ի մէջ տանն դաւթի և տանն սաւուղայ, ոչ այնչափ զինուք, (զի զինի նախադրեալ կռուոյն աբենների և յովաբայ, այլ ինչ պատերազմ ոչ ընթեռնումք,) քան որչափ հնարադրութիք որսալոյ ժողովուրդ և զօրացուցանելոյ իւրաքանչիւր զիւր կողմն, պահելով միշտ սպառազինեալ կազմ և պատրաստ զզօրս, որպէս որք կան՝ի պատերազմի ընդդէմ միմեանց. թէպէտ չէ ինչ անհաւանելի, թէ պիպեալ իցեն և մանաւոր մրցմունք զինուց, զոր որոշ ոչ յիշէ՝ոք գիրն։ Ա.յս թշնամութեի ձգեցաւ ընդ ամն երկուս. յորս միշտ նուաղէր ժողովուրդ յեբուսթեայ. զի սնցանէին առ դաւիթ. որով օրըստօրէ զօրանայր կողմն դաւթի, մինչև զինի երկուց ամաց՝ի մեռանել յեբուսթեայ՝վերջ եղև ամենայն հակառակութեց. զի՝ի միջոցի վեց ամսոց համօրէն տունն իսրայէլի միացաւ՝ի մի թագաւորութեի դաւթի։ Ա.սա. Ը. Ռաք. Ձ.՝ի պատմել գրոյն զզօրանալ տանն դաւթի ոչ միայն՝ի ձեռն ժողովրդեան, որք վտարանջեալ՝ի յեբուսթեայ՝անցանէին առ նա, այլև՝ի ձեռն որդւոց, զի բազմութեի որդւոց հաստատեն զտունս, յանուանէ յիշատակէ զորդիս՝որք ծնան նմա՝ի քեբրոն ընդ այն եօթն ամս։ Ա.նդրանիկ նորա ամմոն՝ յաքինոամայ յեզրայելացւոյ. երկրորդն դաւիա կամ դաղուիա. ե. Ծաց. Ձ. 1. (զոր վուլկադայն կոչէ քեղէաբ) յաբիգեայ կարմելացւոյ. երրորդն աբեսաղոմ,՝ի մաաքեայ դստերէ Թաղմեայ արքայի գեսուրայ. չորրորդն ադոնիա, որդի ադիթայ. հինգերորդն սափատիա, որդի ամիտաղայ. վեցերորդն յեթրամ, յեգղաթայ կնոջէ դաւթի։ Սոքա են ծնունդք դաւթի՝ի քեբրոն։

Ա փարանջուրէ աբէննէրայ, և ուխտ նորա ընդ գաւ-
ըէ։ Ա՝ահ նորա. և մահ յերուսաղէմայ. և ըէ չանչ ամ
ըագաւորէայ յերուսաղէ։

Ա՝բենները նեցուկ հաստատութէ էր յերուս-
թեայ. և ցորչափ հաւատարիմ եկաց առ նա,
թէպէտ բազումք յայլևայլ ցեղից վտարանջէին և
անցանէին՝ի կողմն գաւթի, բայց հաստարակութէն
իսրայէլի ոչ եթող և ոչ մեկնեցաւ՝ի թագաւորէ
իւրմէ։ Ապայն հուսկ յետոյ և նա ինքն աբէններ
նչկահեալ, անց առ գաւիթ. լուկ պատճառ ապըս-
տամբութէն նորա այս եղև։ Ի՝ր սաւուղայ հարճ
մի, կամ երկրորդական կին՝ կոչեցեալ ռիսփա
դուստր յուղայ, աբէններ սկսաւ յայտնի համար-
ձակ մտանել առ նա, կամ՝ի կոյր տուփանաց, և
կամ զի որպէս համարին բազումք՝ կամէր առնուլ
զնա կնութէ առ բանալոյ ինքեան ձանապարհ՝ի
թագաւորութէն։ Ո՛չ ընդ այն ժամանակս հաստա-
տակ սովորութէն էր ոչ միայն առ եբրայեցիս, այլև
առ այլ ժողովուրդս. զի կին մեռեալ թագաւոր
մի, ոչ երբէք լինէր առն սոսկականի. ապա թէ
ոչ՝ որ առնոյր զնա, նովիմբ ստանայր իրաւունս
առ թագաւորութէն. որպէս յայտ է՝ի պատասխան
ւոյ անտէ, զոր ետ սողոմոն բերոաբեայ մօր իւ-
րում, ՝ի խնդրել նորա տալ զաբիսակ սունեցի ըզ-
կին դաւթի՝ ադոնիայ կնութէ. գ. Թագ. Բ. 20։

Ե՞րեսնթէ թէպէտ ակարամիտ, բայց էր այն-
չափ ասուչ՝ մինչև չիմանալ զայս խորհուրդ ա-
բէննեբայ, կամ գէթ չանկանիլ՝ի կասկած. զոր
յայտնի երևեցոյց՝ի հարցանել զնա. Թէ զի՞նչ
կամի, կամ զի՞նչ դիտէ նովին աերտ ընտելութէ
ընդ հարճի հօր իւրոյ։ Ա՝բենները՝ որ գուցէ ոչ
կարծէր, Թէ Թագաւոր իւր ցայն վայր արհնաւ-

թէ կարիցէ ժամանել, իբրև ետես զի յայտնեցաւ խորհուրդ իւր, վառեցաւ ՚ի սրտմտութիւն բարկու թէ. և գիտելով եթէ ընդ վատասիրտ թագաւորի է բան իւր, որ գլխովին զնմանէ կայր կախեալ, ՚ի ծայր յանդգնութեան հասոյց զպատասխանի իւր։ Ո՞ինչ ասէ, զի՞նչ կարծիցես դու զկինն, միթէ այնչափ անարգ և անպիտա՞ն իցեմ, մինչև իբրև գլուխս շան մեռելոյ առ ոտն հարկանել զիս, որ արարի ողորմութիւն ընդ քեզ՝ պահելով ցայսօր ըզթագաւորութիւնդ քո. և չէղէ անձնատուր ՚ի տունն դաւթի. (կամ ըստ վուլկադային՝ չետու զքեզ ՚ի ձեռս դաւթի.) և յետ այսչափ երախտեաց առ քեզ և առ տուն հօր քո՝ խնդրես յինէն այսօր վրէժ կնոջ միոյ։ Այսպէս և այնպէս արասցէ ինձ ած, եթէ ոչ՝ որպէս երդուաւ ՚ի ր դաւթի, այնպէս ա րարից նմա, բառնալ զթագաւորութիւնն սաւուղայ, և կանգնել զթագաւորութիւնն դաւթի ՚ի վերայ ա մենայն իսրայէլի, ՚ի դանայ մինչև ցբերբսաբեէ, և չթողուլ տանն սաւուղայ և ոչ թզսչափ մի տեղի ՚ի կռիւ ոտից։ Յերբուսթէ սասանեաւ յերկիւղէն՝ ոչ ետ նմա պատասխանի բան մի. զի և չէր իսկ կարօղ ասել ինչ՝ յետ ընդ ամն եօթն տալոյ նմա ընդարձակութիւն ամրացուցանելոյ զանձն, և ՚ի գլուխ ժպրհութեանն ժամանելոյ։ Վասն որոյ է իշխանացդ թօթափել զլուծ օտար թշնամեացդ՝ քան զիւրեանց պաշտօնէից, յորժամ տան նոցա տեղի դնել ՚ի մէնջ՝ եթէ հարկաւոր են, մինչև առանց նոցա ինչ ոչ զօրել իշխանին. որով առ սակաւ սակաւ յայն բռնաւորութիւն ժամանեն, մինչև ահարկու լինել և ՚ին իւրեանց, և յերեսս իսկ սպառնալ նոցա։

Սպառնալիք աբենններայ չէղև շառաչիւն իմն անգործ. զի կուրացեալ ՚ի մոլեգին սրտմտութէ ոչ ած զմտաւ, եթէ մեծագոյն եղիցի կորուստ իւր քան զկորուստ յերբուսթեայ, եթէ ՚ի դաւթի ան ցուսցէ զթագաւորութիւնն. զի ունէր գիտել զյաղթայ սպարապետի նորա զառ ինքն ոխակալութէ և զմախանս։ Յայնմ ջերմութէ հրեշտակս արձա-

կեաց առ դաւիթ՝ ուխտ ընդ նմա հաստատել, խոստանալով առնա դարձուցանել զամենայն տունն իսրայէլի, եթէ անկեղծ սրտիւ ընդունիցի զնա։ Այս հրեշտակութիւն կարի հաճոյական եղև դաւթի. բայց պայման ի մէջ եդ՝ ի միջի յառաջ քան զուխտադրութիւն իւր։ Վաղուց ցանկայր դաւիթ ունել զմեղքդ զառաջինն օրինաւոր կին իւր, զոր սաւուղ հայր նորա հանեալ՝ ի նմանէ տուեալ էր առն այլում կնութիւն։ Դաւիթ թէպէտ բազմացուցեալ էր զկանայս առ՝ ի բազմացուցանել և զազգականութիւն ընդ զանազան տէրութիւնս, յորոց արդէն ունէր վեց որդիս յասպահովութիւն յաջորդութիւն թագաւորութեան յուզայ, բայց տակաւին ունէր միշտ՝ ի սրտի՝ զի ինն նախանձ հանել զկնի իւր՝ ի չնութենէ. միանգամայն և յաղագս հաստատակայ բարւոյ թագաւորութեան՝ կարևոր ձանաչէր ունել որդի և՝ ի մեղքդ։ Մինչև յայնժամ ոչ խնդրեաց զնա, քանզի քաջ գիտէր, թէ ոչ լինի լաւլի. զի աբեններ որ ակնարև տեսանէր զիսրայէլ հակամիտ առ դաւիթ, ոչ երբէք հաւանէր, թէ դուստր սաւուղայ դառնայցէ առ նա, զի թէ որդի լինէր՝ ի նմանէ, ամենայն իսրայէլ յայն կողմն անցանէր, կէս մի՝ ի յօժարութէ առ դաւիթ, և կէս մի՝ ի բնական բերմանէ առ սաւուղ հաւանական։ Այս պայման եդ դաւիթ իբր նշան հաւատոյ՝ լիմանալ զխորհուրդ սրտին աբեններայ. զի եթէ ուղիղ սրտիւ խնդրէր զթագաւորել դաւթի՝ ի վերայ ամենայն իսրայէլի, դարձուցանէր անսպատճառ զմեղքդ. իսկ եթէ յապաղէր և պատճառանս կցկցէր ցուգանել զդժուարութէ, յայտնի լինէր խարդախութէ նորա։ Ի նմին ժամու՝ յորում զայս պատգամ յղեաց դաւիթ առ աբեններ, ի չահ վարկաւ առաքել հրեշտակս և առ յեբուսթէ իբրև առ թագաւոր և առ եղբայր կնոջն՝ խնդրելով զնա՝ ի նմանէ. զի մի ծանր թուեսցի նմա, եթէ առանց ծանուցանելոյ ինչ նմա, իբրն վճարեսցին. և զի մի՝ ի յայտ գայցէ ուխտադրութէ իւր ընդ աբեններայ։ Ղրկեն պէտք աբեններայ

երկար աշխատութեաց ՚ի հաւանեցուցանել զթագաւորն. քանզի բաց յամենայն արդար իրաւանց, և երկիւղն դաւթի բռնադատեր զնա ՚ի հաւանութեի։ ՚Լոյնգունակ և ՚ի կողմանէ մեղքողայ չէզև ինչ գժուարութեի, զի սիրեր զդաւիթ. և գիտեր՝ զի ՚ի դառնալ իւրում առ օրինաւոր այր իւր, մեծագունի փառաց ուներ հասանել։

՚Լռաքեաց յերուսաղէմ վաղվաղակի զաբեններ ՚ի բաւուրիմ քաղաք, որ էր ՚ի ձախակողմն Ջանապարհին, որ յերուսաղէմայ հաներ յերիքով. և անաի փոքր մի խոտորելով լիներ մտանել յարքունի Ջանապարհ, որ հաներ ՚ի քեբրոն։ ՚Լառ աբեններ ՚ի բաւուրիմայ զմեղքող. իակ փաղաքիել այր նորա որ շնութեբ ուներ զնա ՚ի կին, երթայր գՀետ նորա և լայր. այլ իբրև սաստեաց նմա աբեններ՝ դարձաւ նա անկին ՚ի տուն իւր. զմեղքող յանձն արար աբեններ հրեշտակացն դաւթի, որք տարան զնա ՚ի քեբրոն։ ՚Լակ լինքն սկսաւ խօսել ընդ ծերս իսրայէլի, և յաւէտ ընդ որդիս բենիամինի, զորս դժուարին էր հաւանեցուցանել և դարձուցանել առ դաւիթ. յուշ առնէր նոցա զբան նն, զոր խօսեցաւ ցան դաւթի, եթէ ձեռամբ նորա փրկեսցի պիտոյէ՚ի ձեռաց այլազգեացն, և՚ի ձեռաց ամենայն թշնամեաց նոցա։ ՚Լպա իբրև ետես աբեններ զամենայն ինչ կազմ և պատրաստ, գնաց անձամբ ՚ի քեբրոն հանդերձ քսան արամբք ընդ իւր. զորս քաջութեամ մարդասիրութեբ և մեծահաց խրախնաեցուցեալ մեծարեաց դաւիթ. և աբեններ պատմեաց համառօտիւ արքային զոր արար, և զոր ուներ առնել. և փութացաւ երթալ՝ առ վաղագոյն հանելոյ ՚ի գլուխ գործն, զոր խոստացաւ։

՚Լնդ նմին ժամու եհաս յովաբ յաղթանակաւ՝ հանդերձ բազում աւարաւ, զոր առ յասպատակաց, որք մտեալ էին ասպատակութեբ յերկիրն յուդայ. ազգ եղև նմա գալուստ աբեննեերայ, և ծածուկ խօսակցութեի նորա ընդ դաւթի։ ՚Լնուն աբեննեերայ ատելի էր յովաբայ վասն մահու ասայելի եղբօր իւրոյ. իակ այժմ այլ ինն նոր կասկած յաւելաւ ՚ի

սիրտ նորա, թէ գուցէ և զսպարապետութիւնն առ նուցու ի ձեռաց իւրոց: Այժմուտ առ դաւիթ լի բարկութիւբ, զի՞նչ ասէ գործեցեր զայդ, զի եկն աբեններ առ քեզ, և ընդէ՞ր արձակեցեր զնա խաղաղութիւբ. եթէ ո՞չ գիտիցես զչարութիւն աբեննեբայ. զի խաբել զքեզ եկն, և իմանալ զմուտ և զել քո, և տեղեկանալ ամենայնի զի՛նչ և գործեսցես: Այլ տեսեալ՝ զի ոչինչ կարաց վնաբել բանիւք, քանզի դաւիթ չէր ի սակի այնց իշխանաց, զոր դիւրաւ մարթ էր ջընջել ըստ կամի, եդ ի մտի խորհուրդ անօրէն. և ելեալ վաղվաղակի յերեսաց արքայի՝ արձակեաց հրեշտակ զկնի աբեննեբայ յանուն արքայի դարձուցանել զնա, որպէս թէ ունիցի արքայ բան ինչ կարևոր յոյժ ծանուցանել նմա: Այնպես հրեշտակն առ նա ի ջրհորն սերիմայ իբր հինգ մղոնաւ հեռի ի քեբրոնէ: Աբեններ ոչ ինչ կասկած չարի ունելով ի մտի՝ դարձաւ միամտութիւբ. և առ դրան քեբրոնի յովաբ եւ ընդառաջ նորա կեղծ քաղցրութիւբ, և խոտորեցուցեալ զնա ի կողմն դրան մեկուսի յարանց նորա, որպէս թէ բան ինչ ծածուկ ունի խօսիլ նմա, արագութիւբ ինն հանեալ զթերաքամեալ սուրն զոր ունէր ածեալ զմիջով, մխեաց ի մնակուշտ նորա, և ընկէց զնա մեռեալ ի գետին առանց միւսանգամ կրկնելոյ զհարուածն:

Այս աբեննեբայ արդարև դառն եղև յեբուսթեայ. որոյ ինչ ոչ գիտելով վասն ուխտադրութիւն աբեննեբայ ընդ դաւթի, ակնունէր թէ ցասումն և սպառնալիք նորա զնջեալ իցեն. այլ իբրև լուաւ զմահ նորա, որ էր մի միայն նեցուկ հաստատուէ թագաւորութեան իւրոյ, լուծանն լքան ձեռք նորա զուրկ յամենայն օգնութենէ: Այլ դառնագոյն ևս եղև դաւթի, զի կորոյս զօրավար քաջ յաջողակ և պատրաստական ի միացուցանել զամենայն իսրայէլ ի մի թագաւորութիւն իւր: Այլ որ առաւել տագնապէր զսիրտ նորա՝ այն էր զի տայր կարծել ամենեցուն՝ եթէ նորա գաղտնի հրամանաւ եղև մահ աբեննեբայ. որով սիրտ իսրայէլացւոց, ոչք պատ-

բաստեալ էին անձնատուր լինել նմա, ցրտանայր ոչ ևս հաւատալով նմա, ի լսել թէ այնպիսի քաջ զօրավար իւրեանց վստահանալով ի նա՝ դաւաճանեցաւ և մեռաւ ի քերքոն։ Զոր բառնալոյ դաւթի զայսպիսի ձախող կարծիս յանձնէ՝ արար զամենայն զոր ինչ կարօղ էր առնել. անէծ զմարդախոշոշ դաւաճանն անէծս ցաւագինս. և հրամայեաց նմա և ամենայն զինուորակցաց նորա պատառել զհանդերձս, և քուրձ սգոյ զգենուլ, և կոծ առնուլ առաջի աբենների. և ինքն արքայ երթայր զհետ դագաղաց նորա. զոր թաղեցին անդ ի քերքոն։ Եւ ելից արքայ մեծաձայն ի վերայ գերեզմանի նորա՝ ողբս առեալ ի բերան. Մինչեւ ասէ որպէս մեռանիցի անզգամ, մեռաւ աբենների. եթէ ըստ մահուանն նաբաղայ մեռաւ աբենների. (կրկնումն է այս առաջնոյ բանին, ուր անզգամ ասելով իմանայ զնաբաղ. որպէս ունին եօթանասունքն, առ որս չիք առաջին առողն.) ձեռք քո ոչ կապեցան ի մարտս ընդդէմ թշնամեաց. և ոտք քո ոչ աղխեցան ի շղթայս գերութեանէ. ոչ մատեար՝ չետուր անզգամութեանէ պատճառս մահու իբրև զնաբաղ, այլ անկար՝ որպէս անկանիցի ոք առաջի անիրաւ դաւաճանողաց։ Օ այս ողբ ամենայն ժողովուրդն ողբաց ի միասին ընդ արքայի ի վերայ աբենների։ Պահեաց արքայ զայն օր ողջոյն և ոչ եկեր հաց մինչև ի մուտս արեգական. և յայտ արար հրապարակաւ մահու արժանի գոլ զյովաբ. այլ եցոյց թէ չէ դեռ ժամ վհատել զձեռս յարիւնն նորա, զի չունի ինքն դեռևս զօրութեանէ բաւական, չևևս ամրացեալ յաթոռ թագաւորութեանէ. լաւ համարեցաւ լռել՝ քան վաղվաղել ի պատուհաս, և զբարն բորբոքել. զի որդիք շարուհեայ քեռ իմոյ ասէ բրուհնագոյն քան զիս են. և եթող ի հատուցանել չարին ըստ չարութեանէ իւրում։

Յայսչափ և յայսպիսի հրապարակական սգոյ արքայի՝ հաւատաց ամենայն ժողովուրդն, եթէ չունի արքայ մտան ինչ ի մահուն աբենների։ Վասն յետ այսր ամենայնի կասկած կուսակցացն աբենների

բայ՝ որք բազում էին յայժ յիսրայէլ, ոչ բարձաւ խսպառ. որով որք հակամէտ էին ի դաւիթ, ցըրտացան ի նմանէ. Թուլացաւքն օտարացան. օտարացեալքն հաստատեցան, և ամենեքեան խռովեցան, սակաւ ինչ էր առաջի նոցա լինել արքայի հաւատարիմ և արդար, յորժամ պաշտօնեայք նորա էին դաւաճանք։ Այս յիրաւի, զի այն ինչ համօրէն իսրայէլ կայր ի վերջին պատրաստութեան միանալ ընդ դաւթի, այս դիպուած յաջողեցոյց զգործադրութիւնն յամիս վեց. մինչև այլ դաւաճանութիւն անկարծելի, և քան զայս աղետալի՝ որ գրեթէ ի նոյն ժամանակի գործեցաւ յապարանս արքային իսրայէլի, եբարձ զամենայն զխոչ և զխոսք միանալոյ երկուց թագաւորութեց։ Ախիտոփէլ այս ինչ էր։ Եթէ պատերազմին գեղբուայ ի փախչել բնակչաց բերդվթայ քաղաքին ի գեթթայի կամ ի գէթ յահէ փղշտացւոց, որք դատարկ գտեալ զքաղաքն՝ բնակեցան ի նմա առ ժամանակ մի, բանսա և ոխքաբ որդիք ռեմմնայ բերդվթացւոյ յորդւոց բենիամինի անցին ի կողմն յերբուսաղեայ. և տեսեալ աբենների՝ զի էին երիտասարդք զօրաւորք, աչալուրջք և գործունեայք, կացոյց զնոսա գլուխ երկուց գնդից թիկնապահաց յերբուսաղեայ. կամ ըստ ումանց՝ ասպատակաւոր գնդից, որք ասպատակէին ի սահմանս այլազգեաց առաւ հարկանել զանդս նոցա. (սոցա նպաստէ լատին թարգմանութիւնն, որ իշխանս աւազակաց կոչէ զնոսա. սակայն լատին անուանդ լաւդրօ, որ առ մեզ աւազակ լսի, ի գիրս նոցա բազում անգամ՝ ի կիր ածի փոխանակ գլխաւորի կամ իշխանի գնդի զօրաց, ուստի և համաձայնի եօթանասնից։)

Արդ՝ լուեալ սոցա զմահ աբենների, և տեսեալ զիսրայէլ յօժարամիտ առ դաւիթ, խորհեցան թէ ի մեռանել յերբուսաղեայ՝ ոչ միայն այլ ինչ խոչընդոտն ի միանալ ամենայն իսրայէլի ի մի թագաւորութիւն դաւթի։ Վասնզի մեմփիբոսթէ որդի յոնաթանու, որ էր մի միայն ժառանգ մնացեալ սաւուղայ, հաշմէր ոտիւք. զի ի փախուցա-

նել զնա դայեկին մանուկ հինգամեան, յորժամ եհաս գոյժ մահուն սաւուղայ և յոշնաթանու, ի փութալն անկաւ և կաղացաւ, վասն որոյ և անպիտան գտաւ ի թագաւորութէն ազգի պատերազմողս: Բանաւ և ռիքաք եդին ի մեր գործ հաձոյական գործել դաւթի, և մեծաց վարձուց առ ի նմանէ հանդիպել, եթէ տանիցին առ նա զգլուխ յեբուսթեայ հակառակորդն նորա: Օ այս չարաչար խորհելով, յաւուր միում ի ժամընակի հնձոց ցորենոյ՝ ի տօթաժամու հասարակ աւուրն, մինչ յեբուսթէ ննջէր ի գահոյս իւրում ի սենեկի, սոքա երկու եղբարք տեղեակք ելից և մտից տանն արքայի՝ քարձին հասկս ցորենոյ, (որպէս ունի եբրայականն,) իբր առ ի տանել ի շտեմարանս թագաւորին. զի ընդ այն ժամընակս առ լաւ ևս և ընդ երկար պահպանութէն ցորենոյ յատկանուէ, հասկաւ ժողովէին ի շտեմարանս. որպէս յիշեցաք և ի խօսել մեր վասն յովսեփայ յեգիպտոս. և այնպէս եկին գաղտաբար յարքունիս. և մինչ աղջիկն գռնապան սենեկին արքայի, որ նստեալ յարտաքին սենեակ անդր մաքրէր զցորեան ի խձից, և յորմանց և յայլոց օտար սերմանց, որպէս ծուլութէն է կանանց ի ժամ պարապոյ, յափշտակեալ ի քնոյ ննջէր, սոքա մտին անշշունջ ի ներքին սենեակ անդր՝ ուր ննջէր յեբուսթէ. մխեցին զսուրն ի սիրտ նորա, և անդէն յանկողնի սպանին զնա. և հատեալ զգլուխ նորա՝ առին գնացին զտիւն զայն և զամենայն գիշերն ընդ արևելս, կամ ըստ եօթանասնից և ըստ եբրայականին ընդ արևմուտս. և ընդ առաւօտն հասեալ ի քեբրոն, մտին առ դաւիթ իբր աւետիս լինի մեծ տալ նմա, ահա սպանեալ գլուխ յեբուսթեայ որդւոյ սաւուղայ թշնամւոյ քո, որ խնդրէր զանձն քո. և ետ ինն մերում արքայի վրէժխնդրութէն ի թշնամեաց իւրոց, և պատմեցին նմա թէ զինարդ սպանին զնա:

Բայց խաբեայն յակնկալութէն իւրեանց. զի գտին թագաւոր արդարակորով, զգուշաւոր, և յառաջատես, յորմէ հեռի կր հաճ և հաւան ցու-

ցանել զանձն ընդ այնպիսի անօրէնն դաւաճանուճի. Այանզի իբրև ետես դաւիթ զգլուխս յեբուսեթեայ, և լուաւ ի բերանոյ նոցա զօրինակ սպանուիթե, առ սաստկակսկիծ ցաւոց սրտին՝ ասէ զայրացմամբ, կենդանի է ՚ին՝ որ փրկեաց զանձն իմ յամենայն նեղուէ, զի որ պատմեաց ինձ թէ մեռաւ սաւուղ՝ իբր աւետիս տալով, կալայ և սպանի զնա ՚ի սիկեղակ. որում օրէն էր ինձ տալ աւետչեայ. և արդ դուք ա՛րք չարք և անօրէնք՝ սպանիք զայր արդար ՚ի տան յանկողնի իւրում։ Այս նոյնհետայն հրամանն ետ իւրոց սպասաւորաց, և սպանին զնոսա. և կտրեալ զոտս և զձեռս նոցա՝ կախեցին ՚ի վերայ ջրբղխին ՚ի քեբրոն ՚ի տես ամենայն աշխարհի. զի գիտասցեն ամենեքեան, թէ որպէս ՚ի մահն ա բենիերայ չունէր դաւիթ մտանն, նոյնպէս և առաւել և՝ և ոչ ՚ի մահ արքային իսրայէլի. զի յոյժ կամի ունել զթագաւորութիւնն ուղիղ և արդար ձեռնտ պարհաւ, և ոչ ՚ի սատանայէ ՚ի ձեռն երկուց մարդահոշոշ աւազակաց։ Այս ապա ետ հրամանն թագղել զգլուխն յեբուսեթեայ ՚ի գերեզմանի աբենիներայ անդ ՚ի քեբրոն։

Այ վերայ ժամանակի թագաւորութիւնն յեբուսեթեայ զանազան կարծիք են մեկնչաց. զի որովհետև յեբուսեթէ թագաւորեաց ՚ի մինայեմ մինչ դաւիթ թագաւորեր ՚ի քեբրոն, երևի թէ թագաւորեալ իցէ ամս իբրև եօթն. բայց եթէ գիրն ամս երկուս և եթ նշանակէ։ Այ ասն որոյ ոմանք յեհնուն ՚ի գիրն. և նոյնչափ ամս տան նմա, այլք գիմեն ՚ի կանոնս մեկնութիւնէ, և ասեն թէ ամս երկուս թագաւորեաց խազազութիւն՝ յառաջ քան զնա խազրեալ մարտն աբենիներայ և յովաբայ առ աղբերն գաբաւոնի։ Այստի և ասեն թէ այս է թուական այնր պատերազմի, զոր աստ պատմէ գիրն. և ոչ թիւ ամաց թագաւորութիւն յեբուսեթեայ. իբր ասել յետ երկուց ամաց թագաւորութեան յեբուսեթեայ՝ եկ աբենիներ որդի ներեայ, և այլն որ ըստ կարգի։ Այակայն այլք ձշտիւ քննեալ զամենայն բառս գրոյն ըստ ձառին և ըստ սուաջին

տեսուԹԵ, յորմէ չէ պարտ հեռանալ առանց հարկի, ոչինչ մԹուԹԻ գտանեն ՚ի բնագրի անդ։ Այս ասեն Թէ յեբուսԹէ արդարև երկու ամն Թագաւորեաց ՚ի վերայ ամենայն իսրայէլի, բայց ՚ի տասնէն յուդայ, որ էր վհետ դաւԹի. այլ նախ քան զայն երկու ամն՝ հինգ ամօք յառաջ սկսեալ էր Թագաւորել ՚ի վերայ մասնաւոր գաւառաց. և այնպէս ընդ ամենայն ամն եօԹն, յորչափ դաւիԹ Թագաւորեաց ՚ի քեբրոն։

Վասնզի յետ սակաւ աւուրց զկնի պատերազմին գեղբուայ աբենները ժողովեալ զիսխստական զօրս սաւուղայ ՚ի մանայեմ, տարաւ զյեբուսԹէ անդ ՚ի բանակ զօրացն, և կամակցուԹԵ նոցա Թագաւորեցոյց զնա ՚ի վերայ գաղաադու. ահա բան պրոյն. Ը. Ռագ. Ը. * Այս աբենները որդի ներեայ զօրավար սաւուղայ ամ զյեբուսԹէ որդի սաւուղայ, և տարաւ զնա ՚ի բանակն. և Թագաւորեցոյց զնա ՚ի վերայ գաղաադացւոցն ‖. և այլն։ Այլ Թէ արդարև էին անցեալ չորք կամ հինգ ամք զկնի մահուն սաւուղայ, աբենները ոչ ևս կոչիւր զօրավար զօրաց սաւուղայ, այլ իսրայէլի. ապա մահ սաւուղայ նոր էր. զի տակաւին զօրքն և զօրավար նոցա ՚ի նորա անուն կոչէին. ապա յայտ է Թէ զկնի մահուն սաւուղայ փուԹով Թագաւորեաց յեբուսԹէ ՚ի մանայեմ. որպէս և դաւիԹ ՚ի քեբրոն։ Այսք եԹէ ՚ի սկզբան անդ Թագաւորեալ էր ՚ի վերայ իսրայէլի, զինչ պիտեր ասել Թէ Թագաւորեաց ՚ի վերայ գաղաադացւոցն, որ էր մասն մի ցեղին մանասէի. և ՚ի վերայ Թասիրայ կամ գեսուրայ, և ՚ի վերայ յեզրայէլի, և ՚ի վերայ եփրեմի և ՚ի վերայ բենիամինի. և ապա ՚ի վերայ ամենայն իսրայէլի։ Այս զինչ անուանել զյեզրայէլ, որ էր մասն ցեղին զաբուղոնի, եԹէ բուանդակ ցեղն Ճանաչէր զնա Թագաւոր։ Այլ աղագաւ յանուանէ յիշատակել լոկ զցեղն եփրեմի, և բենիամինի, եԹէ ամենայն ցեղք բայց ՚ի յուդայէ ունէին զնա Թագաւոր իւրեանց։ Այսպա երևի Թէ Ըբ գիրն պահէ ասա զկարգն, որով ցեղք խո-

ցայելն հետ զՀետէ անցին ՚ի կողմն յեբուս-
թեայ ։

՚Այս գաղատացիք , զի անդ ՚ի գաղատ էր
մանայեմ քաղաք առ հեղեղատաւ յաբոկայ , կամ
ինքնաբերաբար , և կամ յահէ զօրաց իսրայէլի
անձնատուր եղեն . ապա թասխրացիք կամ գեսու-
րացիք , որք հարկատու էին սաւուղայ . զորս նովին
իրաւամբք աբեններ արար հարկատու որդւոյ նո-
ըա ։ Զետ սոցա յեզրայելացիք , որպէս երևի նորոգ
ժողովեալ անդ . քանզի զկնի պատերազմին գեղ-
բուայ՝ յահէ փղշտացւոց երկուցեալ փախեան ,
թողեալ անմարդի զքաղաքս իւրեանց , և նոքա
եկեալ բնակեցան ՚ի նոսա . և սպա կամ ինքնին
մեկնեցան՝ երկուցեալ թէ ՚ի մէջ առցին յերից
կողմանց ՚ի դաւթէ , և ՚ի յեբուսթեայ , և յայ-
լոց ցեղից իսրայէլի , և կամ աբեններ եհան
զնոսա անտի ։ Զկնի յեզրայելի առաջին եղև ցեղն
եփրեմի՝ որ անց ՚ի կողմն յեբուսթեայ . և յետ
նորա համօրէն ցեղն բենիամինի ՚ի բնաբոյս բեր-
մանէ յարեցաւ ՚ի տունն սաւուղայ իբր ՚ի համա-
ցեղ իւր . այն՝ որ յառաջ ոչ իշխեաց կուսակից
երևել յեբուսթեայ , զի զդաւիթ ունէր սահմա-
նակից . այլ սպա վստահացեալ յօրինակն եփրեմի՝
յայտնի արար զնեբքին յօժարուն սրտին ՚ի տունն
սաւուղայ ։ Եւ այսպէս ընդ ամն հինգ ընդարձա-
կեցաւ թագաւորութիւնն յեբուսթեայ ՚ի վերայ ա-
մենայն իսրայէլի , բաց ՚ի տանէն յուդայ ։ Եւ ասէ
գիրն , թէ յեբուսթէ թագաւորեաց միայն ամն
երկուս . և ոչ թէ քառասուն ամաց էր յորժամ
սկսաւ թագաւորել . այլ թէ քառասուն ամաց էր
մինչ սկսաւ թագաւորել ՚ի վերայ ամենայն իս-
րայէլի . և թէ թագաւորեաց ՚ի վերայ նոցա ամն
երկուս . * Եւ էր ասէ ամաց քառասնից յեբուսթէ
որդի սաւուղայ՝ յորժամ թագաւորեաց ՚ի վերայ
իսրայէլի , և երկուս ամն թագաւորեաց . բաց ՚ի
տանէն յուդայ՝ որ էին զՀետ դաւթի ։ Զայսմա-
նէ յայտ է թէ յեբուսթէ յորժամ սկսաւ թագա-
ւորել , էր երեսուն և հինգ ամաց . և քառասնա-

մեայ գոլով սկսաւ թագաւորել՝ի վերայ ամենայն իսրայէլի. և քառասուն և երկու ամաց սպանաւ։

Գ Լ. Գ.

Հանդիսաւոր օծումն դաւթի՝ի հեբրոն՝ի ընտիր ամենայն իսրայէլի։ Ի՞նչպէս պատերազմ նորա ընդդէմ յեբուսացոց յերուսաղէմ։

Յետ մահուան յեբուսթեայ, որով և բարձաւ միջնորմն բաժանման թագաւորութենն իսրայէլի, յամենայն ցեղից զօրավարք և զօրք ընտրելագոյնք՝ որոց յառաջնմէ իսկ սիրտ՝ էր ընդ դաւթի, եկին դունդապունդ ինքնայօրդոր՝ի քեբրոն դարձուցանել զթագաւորութենին սաւուղայ առ նա. որպէս պատմի ա. ծամոյ. ՃԲ. 23. և գնէ։ Ի ցեղէն յուդայ վեց հազար և ութ հարիւր վահանակիրք և տիգաւորք զօրաւորք՝ի պատերազմի։ Ի ցեղէն շմաւոնի եօթն հազար և հարիւր քաջալանջք և քաջամարտիկք։ Յորդւոցն ղևեայ չորք հազարք և վեց հարիւր. Թ՛ղ զյուդաս, կամ ըստ ընթերցուածոյ եօթանասնից՝ զյովադաս իշխան յորդւոց ահարոնի, ունելով ընդ իւր երեք հազար և եօթն հարիւր արս ընտիրս։ Սադովկ պատանի աչալուրջ և կորովի, և ընդ նմա այլևս իշխանք՝ի տոհմէ նորա քսան և երկու։ Ի ցեղէն բենիամինի յեղբարցն սաւուղայ՝ առ ժամն երեք հազար և եօթ. զի առաւելագոյն մասն նոցա երևեր տակաւին յօժարեալ՝ի տունն սաւուղայ. բայց զկնի սակաւուց միացան և նոքա ընդ այլոց, և քան զայլ ամենայն ցեղս անանձնատ յարեցան՝ի տունն յուդայ։ Ի ցեղէն եփրեմի քսան հազար և ութ հարիւր զօրաւորք, ամենեքեան արք անուանիք՝ի տոհմի իւրեանց։ Ի կիսոյ ցեղէն մանասէի յայսկոյս յոր-

դանանու ուԹուտան հազար, առաքեալք ՚ի դի-
մաց ցեղի իւրեանց կատարեալ իշխանուԹիւն ձանա-
չել զդաւիԹ Թագաւոր։ Յորդւոյն խոաքարայ
երկերիւր իշխանք տոհմից՝ ամենեքեան ականա-
ւորք, ըստ հերոնիմոսի՝ վարդապետք հմուտ հաշ-
ուարարք ժամանակաց ՚ի հաշուել զժամանակս տօ-
նից Թէ երբ, և արկէս պարտ է կատարել ըստ
օրինացն. և իմաստուն խորհրդականք ՚ի քաղաքա-
կան և ՚ի զինուորական գործառնուԹիւն։ ՚Ի ցե-
ղէն զաբուղոնի չիսուն հազար պատերազմականք
սպառազինեալք գործեաւ պատերազմի երկին օգնել
դաւԹի՝ ուր ունայնաձեռն. (ուր վուլկատային ըն-
Թեռնու * ոչ երկդիմի սրտիւ կամ կեղծաւորու-
Թիւ ‖. բնագիրն եբրայական, * ոչ սրտիւ և սրտիւ ‖.
որ ՚ի նոյն յանկի։) ՚Ի ցեղէն նեփԹաղիմայ երե-
սուն, կամ ըստ վուլկատային երեսուն և եօԹն
հազար վահանաւորք և տիգաւորք. և ՚ի վերայ
նոցա զօրավարք հազար։ ՚Ի ցեղէն դանայ քսան և
ուԹ հազար և ուԹ հարիւր պատերազմականք։
՚Ի ցեղէն ասերայ քառասուն հազար։ Նահացին եր-
կու ցեղք ռուբինի և գադայ ընդ կիսոյ ցեղին
մանասէի. բայց և ՚ի նոցանէ եկին հարիւր քսան
հազար՝ ամենեքեան արք պատերազմողք։ Ընդ ա-
մենայն երեք հարիւր քառասուն հազար և չորեք
հարիւր քսան և երկու։

Ապա ամենեքին, յորս բռնանդակէր զինուորա-
կան զօրուԹիւն եբրայական ՚որուԹենն, անկեղծ
մտօք և կատարեալ սրտիւ եկեալ ՚ի քեբրոն,
ասեն. ահաւասիկ ոսկերք քո և մարմինք քո եմք.
ո՛չ այսօր միանգամ տեսանել զքեզ գլուխ և առաջ-
նորդ մեզ, զի և ՚ի ժամանակին մինչ էր սաւուղ
Թագաւոր ՚ի վերայ մեր, զքեզ տեսանէաք առաջ-
նորդ զօրուն իսրայէլի. դու ածէիր ՚ի պատերազմ,
և դու դարձուցանէիր յաղԹանակաւ։ Վ՚իտեմք,
զի ասաց ՚ուր. ընտրեցի զքեզ լինել հովիւ և գլուխ
ժողովրդեան իմոյ։ Ապա եկին ծերք և իշխանք
ցեղից, և ՚ի դիմաց ամենայն ժողովրդեան ուխտե-
ցին դաւԹի յանուն ՚ան հաւատարմուԹիւն և հնա-

զանդուածէ. նոյնպէս և դաւիթ վկայութիւն այ
խոստացաւ նոցա ձշմարտութիւն և ուղղութիւն ըստ
օրինաց ՚ոն առաջնորդել նոցա, և մարտնչել ամե-
նայն զօրութիւն ընդդէմ թշնամեաց ժողովրդեան
այ: Այս ապա աբիաթար քահանայապետ, և այլ
զևտացիք՝ որք անդ գտան, օծին զդաւիթ մեծա-
վայելուչ հանդիսիւ թագաւոր ամենայն ժողովր-
դեան իսրայէլի: Այս այն ամենայն բազմութիւնն
կացին անդ աւուրս երիս ՚ի խնջոյս խրախութիւն,
ուտէին և ըմպէին և ուրախ լինէին ՚ի տէր, զի էտ
նոցա թագաւոր զդաւիթ. զի ծառայք դաւթի
որդւոյ յուդայ պատրաստեցին որչափ ինչ ձեռնհաս
էղէն. յոր չափելին առատութիւն ոչ միայն մծտաւոր
ցեղքն սահմանակիցք քեբրոնի, այլև հեռաւորքն,
որպէս իսաքար, զաբուղոն, և նեփթաղիմ. յորոց
անդադար հասանէին ուղտուք, և իշովք և ջոր-
ովք և եզամբք կերակուր, ալիւր և թուզ և չա-
միչ, և գինի և ձէթ, և զուարակ և ոչխար բա-
զում յոյժ. զի էր հասարակաց ուրախութիւն ամե-
նայն իսրայէլի:

Յետ այսր ամենայնի ունելով դաւիթ յայնժամ
առ ընթեր զայնչափ հազարաւոր զօրս սպառազի-
նեալ, խորհեցաւ զակիզքն թագաւորութիւնէ իւրոյ
փառաւոր առնել ծանր իմն և դժուարին ձեռնար-
կութիւն: Այրուսաղէմ քաղաք ականաւոր կառու-
ցեալ լեր ՚ի միջակէտ անդր երկրին հրէաստանի,
ուր երկու ցեղք բենիամինի և յուդայի միանային,
և այլ տասն ցեղք շուրջ զնովաւ պսակաձև ձգեալ
տարածէին սահմանակիցք միմեանց, ունելով յա-
մենայն կողմանց ձանապարհ արահետ երթևեկի,
էր քաղաք ընդարձակ՝ և յարմար և ևս ընդարձա-
կելոյ ՚ի բնակութիւն բազմութիւնէ, և ամրացուցանե-
լոյ այնպէս՝ զի չունիցի պէտս բազմութիւնէ պահ-
պանաց ՚ի պաշտպանութիւն յերեսաց թշնամեաց:
Այրդ նորա վայելուչ՝ մասամբ իմն ամբարձեալ ՚ի
բլուրս, և մասամբ իմն իջեալ ՚ի ձորս և ՚ի դիւր
տափարակի. որով և էր բաժանեալ յերկու քա-
ղաքս ՚ի վերին և ՚ի ստորին: Այ վերին մասին ու-

Նէր ամրոց Հաստակառոյց, անջրպետեալ ՚ի քաղաքէն ՚ի ձեռն խորայատակ ձորոյ, վասն որոյ և անմատոյց և անառիկ համարեալ։ Ա՛ւ յերաւի. քանզի չորեքհարիւր ամք էին և առաւել, յորմէ հետէ մինն որդիք Իսրայէլի յերկիր աւետեաց, և կալան զամենայն սահմանս նորա, որչափ ինչ խոստացեալ էր ՚ի ձեռ տալ նոցա, ընդ որս և զտոմրին քաղաքն Երուսաղէմի. ուր և բնակէին որդիք բենիամինի և Յուդայ. բայց զվերին ամրոց նորա ոչ յեսու, և ոչ որ զկնի նորա դատաւորք զօրեցին առնուլ երբէք. այլ մնաց միշտ ՚ի ձեռս յեբուսացւոց նախկին բնակչաց նորա մինչև ցայնժամ ՚ի նախատինս ժողովրդեան նոյն. զի ուր զամենայն երկիրն ժառանգէին, անհետ արարեալ անտի զամենայն կռամունս աղգաս, նոքա միայն որջացեալ յամրոց անդր կային անաերկիւղ։

Ա՛րդ՝ առեալ դաւթի զզօրս իւր՝ գնաց յերուսաղէմ, և պաշարեաց զամրոցն. այլ մինչև էր ձեռնարկեալ ՚ի մարտ, խօսեցաւ ընդ ամրականս խաղաղութիւն գալ ՚ի հնազանդութիւն. ըստ որում պատուիրեաց մովսէս ՚ի պաշարել զքաղաքս, զի նախ հրաւիրեսցեն զբնակիչս ՚ի հնազանդութիւն. եթէ անսայցեն, մի ինչ չար առնիցեն նոցա, այլ եղիցին նոցա հարկատու. ապա թէ ըմբռստասցին, ՚ի սայր սուսերի կոտորեսցեն զնոսա։ Ա՛յսպէս արար դաւիթ յեբուսացւոց. քանզի նորա վստահացեալ յամրուն տեղւոյն՝ եւտուն լիրբ և յանդուգն պատասխանի հանդերձ անբերելի այպանութիւն. Ո՛չ մոցես դու ասեն ցդաւիթ՝ այսր. զի և կոյրք և կաղք մեր ոչ կամին թէ մոցէ այսր դաւիթ։ Այլ ասել, ահա կամք մեք ՚ի պաշտպանութիւն ամրոցիս ցհեղուլ մինչև զյետին շնթ արեան մերոյ. բայց և յայնժամ մի կարծիցէ դաւիթ մտանել այսր, զի թէ միայն կոյրք և կաղք մնայցեն յամրոցիս, նորա բաւական են ՚ի տանեաց և ՚ի պարսպաց քարամբք վանել զնէ։ Այն ևս որք ասեն, թէ յեբուսացիք ցուցանեն կամելով թէ առ ոչ ինչ դրեն զայն ամենայն զօրուն Իսրայէլի, հանին կացուցին ՚ի վերայ պարսպաց և

տանեաց հանդերձ պատրաստութիւբ քաղմութեան քարանց՝ զկաղս, զմիականիս, և զայլ խեղանդամս անպիտանս՝ ի գործ պատերազմի՝ ի պաշտպանուբն ամրոցին. յայտ արարեալ, թէ սոքա և եթ շատ էն զդէմ ունել ձեզ. ապա զիաՀրդ ակն ունիք դուք յաղթութիբ ընդդէմ այլոց ողջանդամ քաջաց մեռոց, որք աստ որջացեալ կան իբրև առիւծունս ահեղիս։

Դաւիթ Թէպէտ առ ոչինչ համարեր զնոցայն յանդուգն խիզախուբն, այլ տեսաներ, զի չէր Հնար մուտ գտանել յամրոց անդր, բայց միայն ելանելով ընդ պարիսպն. որ դժուարին էր յոյժ. զի չուներ մանգլիոնս և այլ գործիս՝ ի խրամատուբեի պարսպաց։ Այլ զի գիտէր՝ թէ չիք ինչ դժուարին և անմատոյց, յոր ոչ ձեռն արկանիցէ փառասիրութիբն, ետ քարոզ կարդալ՝ ի բանակին, թէ որ ոք նախ ելանիցէ յամրոցն, և մատիցէ սրով սուսերի՝ ի կաղս և՝ ի կոյրս յատեալիս անձին դաւթի, որք կան՝ ի վերայ պարսպաց և տանեաց, եղիցի իշխան և զօրավար, այսինքն սպարապետ՝ ի վերայ ամենայն զօրուն իսրայէլի. զի ցայնմայր չև էր դաւթի կացուցեալ սպարապետ, որպէս էր աբենների առ յերբուսեցեաս։ Այս խոստումն արքայի գրգռեաց զամենեսին, և առաւելապէս զգունդն կոչեցեալ երեսուն զօրաւորացն դաւթի. այլ յոմանք որ խնդրէր դիպողութիբ նշանաւոր քաջագործութիբ իւիք գառնալ՝ ի չնորհս դաւթի, յորմէ անկեալ էր՝ ի պատճառս անօրէն սպանութիբ աբենների, միանգամայն և՝ ի ցուցանել համօրէն իսրայէլի զքաջութիբ իւր, յառաջեաց քան զայլս, եւ ընդ պարիսպն և եհար սատակեաց զկաղս և զկոյրս, և այլք զկնի նորա հասեալ՝ սպառ սպուր կոտորեցին զյերբուսացիս։ Այս յովաբ ընկալաւ զնոստացեալ մրցանակ մեծի քաջագործութիբն. զի կաւ ցուցաւ իշխան և սպարապետ համօրէն զօրացն դաւթի։

Այսպա եմուտ դաւիթ յաղթանակաւ յամրոց անդր, կոչեաւ զնա, և ձեռնամուխ եղև՝ ի շինուբիւն

ամրացուցանել և ընդարձակել. կառոյց նոր պա-
րիսպ շուրջանակի զսիոն լերամբ՝ սկսեալ ի միոյ
ծագէ մեղոն կոչեցեալ՝ լայն և խորայատակ խրամոյ
կամ ձորոյ, որ անջրպետեր զլեառն սիոն ի տաճարին
քաղաքէ, մինչև ցմիւս ծագ նորա ըստ ոմանց երե-
սուն և հինգ ասպարէզ չրջապատութիւն. և սկսաւ
անդ շինել նոր քաղաք, զոր յետոյ տաղտկանն որդի
նորա լրացոյց. որ և յանուն ձորոյն կոչեցաւ Միլ-
լոն. Գ. Նագ. Ե. 15: Իսկ յամրոցի անդ ի սիոն
լերին շինեաց դաւիթ մեծակառոյց հոյակապ ար-
քունի ապարանս. և շուրջ զնովաւ շինուածս մե-
ծամեծս ի բնակութիւն զօրավարաց, և արքունի
պաշտօնէից, և վանս զօրաց. և առ պարսպօք ա-
խոռս վասն արքունի երիվարաց՝ փոքր ևս ի քա-
ղաքէն ի բնակութիւն, ի զգուշութիւն ի հրկիզուէ:
Այս ամենայն պարագայք չեն յայտնի նշանակեալ
ի նոր գիրս, բայց աւերակք նոցա ետուն լոյս բաւա-
կան, որոց գրեցին զպատմութիւնն: Եւ այսպէս
յարդարեալ դաւիթ և շքեղազարդեալ, և ամրա-
ցուցեալ զամրոցն սիոնի, անդ հաստատեաց զաթոռ
թագաւորութիւն իսրայէլի, և կոչեաց զնա յիւր ա-
նուն *աղաղ պաւիթ:

Այս ամենայն մեծագործութիւս մեծապէս ձեռնտու եղև դաւթի ի վայելչութիւն և ի փառաւորութիւն շինուածոց՝ արքային դիւրոսի քիրամ: Որպէս ուրուքին էր ծանիզերեայ, իսկ ի ցամաքի ձգէր ցլերինս լիբանանու, յարևմտից՝ և մասամբ լինի յարևմտեան հիւսիսոյ՝ սահմանակից երկրին իսրայէլի: Այս մեծ լինի և կարևոր համարէր յօգուտ և ի բարեզարդութիւն թագաւորութիւնն իւրոյ, կալ խաղաղութիւն ընդ սահմանակից թագաւորաց: Եւ զի յերկրի իւրում առատութիւն էր մայր փայտից և մարմարիոն քարանց, վասն այնորիկ և քաջահմուտ արուեստաւորք ի գործ փայտից և քարանց բազում էին առ տիւրացիս: Որդ՝ երբև գիտաց քիրամ զթագաւորել դաւթի յերուսաղէմ, և զձեռնարկել նորա ի շինուածս մեծամեծս, ի ձահ առեալ զայն՝ ձգել զդաւիթ յիւր բարեկամութիւն՝

կարևոր վասն ի խաղաղութեանէ պահելոյ զիշխութեան իւր, ընդ նմին և յոգնաշահ ժողովրդեան իւրում, առաքեաց հրեշտակս յերուսաղէմ առ դաւիթ ի խնդակցութեան նորատպակ թագաւորութեանէ նորա ի վերայ ամենայն իսրայէլի, և ի հաստատել բարեկամութեան ընդ նմա. խոստանալով տալ նմա մայր փայտս որչափ և կամիցի՝ յանտառաց իւրոց, և ընտիր ընտիր քարինս ի քարահանքաց. և քաջարուեստ հիւսունս փայտից, և ձարտարապետս քարանց։ Նկալաւ դաւիթ ախորժ հաճութեամբ զհրեշտակութենին քիրամայ, և զյօժարակամ առաջարկութեան նորա վասն նիւթոյ և ձարտարաց. և նոքօք շինեաց զարքունիս իւր յամրոյ անդր սիոնի։ Սակ քիրամ նովին հրեշտակութեամբ կրկին բարիս շահեցաւ. մի՝ զբարեկամուն այնպիսի հզօր թագաւորի իւր սահմանակցի. և երկրորդ՝ զգազմաշահ վաճառուածն իրաց զոր բերէր երկիր իւր. թո՛ղ զօգուտ արհեստաւորացն։ Եւ այսու անդիմադարձ փորձիւ եցոյց թէ թագաւորութիւնք առաւել հարստանան ծաղկեցուցանելով զվաճառականութիւն երկրի իւրեանց խաղաղութիւնբ և բարեկամութիւնբ ընդ այլոց թագաւորութեանց, քան թէ խնդրելով ընդարձակել զիշխուն իւրեանց սրով և պատերազմաւ։

Ընդբերլափոյն զօրավարք պատերազմի, նշանաւորք ձեռնամեծ յաջողութեամբ: Յերկիրս հարկանելն պատերազմի զայլազգիս ընդ բազում խորհուրդովք պնոսա:

Յետ մահուանն սաւուղայ՝ յորչափ ժամանակս ազգ եբրայեցւոց էր բաժանեալ յերկուս հակառակ թագաւորութիւնս, որոց իւրաքանչիւր ջանայնար լինէր զիւր կողմն պաշտպանել և ամրացուցանել, է՝ զի այսպէս հնարատրութիւնք, և է՝ զի ներքին պատերազմաւ, փղշտացի այլազգիք անհաշտ թշնամիք եբրայական ազգի դադարեալ՝ի պատերազմէ՝ կային՝ի գնին, ակն ունելով թէ ժողովուրդն իսրայէլի միմեանց կոտորմամբ օր ըստ օրէ տկարանայցեն. և յայնժամ յաջողեսցի ինքեանց յառնել՝ի վերայ նոցա, և իսպառ ընդ ձեռամբ իւրեանց նուաճել զնոսա: Այլ իբրև տեսին զմիանալ երկուց թագաւորութեանց՝ի գաւիթ, որոց մեծամեծ և աքանչելի քաջագործութիւնք՝ զորոց բազում անգամ և ինքեանք զփորձ առին, անջնջելի կայր տպացեալ՝ի միտս նոցա, սկսան բանալ զաչս, և ստրջանալ ընդ էօթնամեան անհոգութիւն իւրեանց՝ի տալ դուռ նոցա: Այս առաւել զօրացաւ կասկած վտանգին, յորժամ լուան թէ այր գաւիթ զամբոցն սիոնի անմատչելի և անառիկ կարծեցեալ, և կոտրեաց զբեաց զբերութեամբ: Այնմ իրի գումարեցան վաղվաղակի ամենայն զօրութիք՝ի պատերազմ ընդդէմ նորա, մինչեւ իցէ և և զօրացեալ. և եկին՝ի հովիտան տիտանեան կամ սկայից՝ պաշարել զգաւիթ՝ի նոր քաղաք նորա յերուսաղէմ, մինչ հազիւ թէ սկսեալ էր ամրացուցանել զնա:

Գաւիթ՝ որ նախ հզօրացեալ անվեհեր կայր հոգւով, և յորժամ ակն ունէր յաղթել ամենայնի, ունէր և բանակ ահեղ, որ ոչինչ զանգիտէր՝ի պատերազ-

մաց. ունէր և զօրավարս քաջակորովս հռչակաւորս
՚ի քաջագործութիւնս զինուց. յորոց առաւելապէս
պատճառս առին յետոյ հելլենական առասպելք
փոխելով զանուանս նոցա, մեծացուցանել ստութիւն
զզօրավարս իւրեանց։ Ասաց ՚ի յովաքայ՝ որ անտա-
րակոյս գերազանցեր զամենեքումբք իշխանութիւն
և արդեամբք, էին երեք զօրավարք առաջնոյ կար-
գի և այլևս երեք՝ երկրորդ կարգի, կարօղք՝ միայն
ընդ միայն մարտնչել ընդդէմ բազմութեան։ Այս և
ունէր երեսուն զօրավարս կարգեալս ընդ միմեամբ.
որոց անցնիւր յայն կարգ էր ժամանեալ ՚ի ձեռն
նշանաւոր գործոց քաջութեան։ Որքա գրեթէ ամե-
նեքին էին ընտրեալ ՚ի գնդէ անտի վեցհարիւրոց,
զոր ունէր դասիթ ընդ իւր յանապատին և ՚ի սի-
կելակ. որովք մեծամեծ արուեստիս քաջութեամբ ընդ-
դէմ փղշտացւոց և ամաղեկացւոց գործեաց։ Ոչ
նոցանէ էր իշբաամ որդի աքամանի առաջին երիցն
առաջնոյ կարգի, սա անձամբ և եթե մարտուցեալ՝
սուր ՚ի ձեռին ընդդէմ գնդի միոյ այլազգեաց,
ընկէց ՚ի նոցանէ յասպարիզի անդ երեք հարիւր
ընդ մեռեալ և ընդ վիրաւոր։ Աղեազար որդի
դոդդայի. որ ՚ի Ա. Թագ. ԺԷ. 9. կոչի եղէանան
որդի հօրեղբօր. (ըստ Թարգմանութեանն Յովհ. բառին
եբրայեցւոց, որ առ նոսա հօրեղբայր լսի.) մի յե-
րիցն առաջնոյ կարգի. սա գտեալ ՚ի դաշտին փա-
սոդոմին, և տեսեալ զի զօրք իւր փախչին յահ
բազմութեան այլազգեաց, որք գային աւար հարկա-
նել զդաշտն որ անդ լի գարեաւ, անսպարտելի քա-
ջութեամբ դիմագրաւ եղև նոցա. յորմէ քաջալերեալ
զօրաց նորա, դարձան և վճարեցին զմարտն, հար-
ուածս մեծամեծս գործելով ՚ի թշնամին. և արար
ՏԵՐ յաւուր յայնմիկ փրկութիւն մեծ։ Այբեսսա եղ-
բայր յովաբայ իշխան երիցն երկրորդ կարգի. բայց
ոչ ժամանեաց լինել չորրորդ երիցն առաջնոյ կար-
գի. սա ՚ի միւսմ պատերազմի եհար յայլազգեաց
արս վեցհարիւր, (ըստ վուլկատային երեքհարիւր)
ընդ մեռեալ և ընդ վիրաւոր։ Անհեաս որդի յովի-
դայեայ որդի առն զօրաւորի, անուանի ՚ի մէջ եր-

կուց երից զօրաւորաց, քան զերեսունն փառաւորապոյն, բայց ոչ ժամանէր ՚ի կարգ երիցն։ Այս եհար և կոտորեաց զերկուս որդիսն ադրիէլի մեհաբացւոյ հզօրս իբրև զառիւծ. Ա. Ընդ. ԻՁ. 20. ուր վուլկատայն ընթեռնու զերկուս առիւծունս մովաբայ. զոր ոմանք մեկնեն նմանութիբ, այսինքն ՚ի վերայ որդւոց ադրիէլի՝ ըստ եօթանասնից։ Այս զօրացաւ մենամարտիլ ընդ առիւծու յանձուկ գբի միւսմ, յաւուր ձեան ասէ գիրն. յորմէ երևի թէ բերան գբոյն գոլով ձեամբ ծածկեալ, յանցանել ընդ այն առիւծուն՝ անկեալ էին ՚ի նմա, զոր տեսեալ արիասիրտ զօրապետիս, էջ զկնի նորա, և անդ ՚ի մէջ գբոյն սատակեաց զամենի գազանն։ Այս եհար և զերեւելի հսկայն եգիպտացի հինգկանդնեան բարձրութիբ. և նիզակ ձեռին նորա իբրև զտտորի ոստայնանկաց, կամ իբրև զփայտ կամրջի. էջ առ նա բանեցաս բրաւ և եթ. և յափշտակեալ ՚ի ձեռաց հսկային զնիզակն, սպան զնա նորին նիզակաւ։ Այս ընդ անխորտակելի արիութիբ՝ էր և հանճարեղ և խոհական. վասն այնորիկ արար զնա դաւիթ իւր նեղբին խորհրդական. Բ. Ընդ. Բ. 18։

Այլ ՚ի սոցանէ ունէր դաւիթ իննսուն զօրավարս նշանաւորս ՚ի քաջութիբ. որք յանուանէ յիշատակին ՚ի գիրս առաջին մնացորդաց. գԼ. ՃԾ. և ՃԲ։ Այս յովաափաթ որդի աքիլովթայ սոյր խմաստուն խորհրդական դիւանադպիր դաւթի. և սուսայէ կամ սուդայէ դպրապետ ՚ի վերայ նամակաց. և երկու իշխանք քահանայից՝ սադովկ յորդւոց եղիազարու, և աքիմելէք ՚ի սերնդոց իթամարայ. ընդ նոսա և նաթան մարգարէ. զորս միշտ առ ընթեր ունէր դաւիթ. և ՚ի ձեռն նոցա առնոյր պատասխանի ՚ի տէրէ ՚ի գործս իւր ծանուցանս։ Այս ևս որոշեալ դաւթի ՚ի զօրուէ իւրմէ զընտիր ընտիրս՝ կացոյց երկուս ղեգեոնս կամ գունդս անմիջական թիկնապահս անձին և տանն արքայի. և կարգեաց նոցա զօրավար ոչ զյովաբ, և ոչ յորդւոց իւրոց զոք, կամ զայլ ոք յազգականութենէ իւրմէ, որոց

մարթ էր աչս արձակել ՚ի թագաւորութիւն, այլ զբանեա սրդի յովիդեայ. վստահացեալ յանկեղծ և ՚ի կատարեալ հաւատարմութիւն նորա: Այս երկու գունդք ՚ի ՚ոբ գիրս կոչին Վերբերին և Փելեթերին. կամ ոփելեթերին. որ թարգմանի հանդա և կեցայ, կամ կարօղ, և ապրեցուցիչ. զի նոքա պահեալ կային վասն վերջին վտանգի առհասանեալ յօգնութիւն:

Արդ՝ մինչ այսպիսի և այնչափ զօրաց պատրաստութիւն կայր դաւիթ յերուսաղէմ, եկին այլազգիքն անհամար բազմութիւն և սիրեցան ՚ի հովիտն սկայից կամ տիտանացւոց: Իսկ դաւիթ առ չդնեցոյ զքաղաքն, զոր չևևս էր լիով ամրացուցեալ, և մանաւանդ զամրոցն սիոնի նորոգ ստացեալ՝ ՚ի վտանգ ինասուց ՚ի պաշարմանէ անտի այլազգեաց, եթող անդ գունդ մի զօրաց ՚ի պահպանութիւն, և ինքն հանդերձ մնացեալովքն խոյս ետ ՚ի վէմն ոդողոմայ, և կալաւ զայրն և զլեառն. ուր և կարգեաց զզօրս իւր դիտել զչարժմունս այլազգեաց. ՟Ա. Ինպ. ԺԱ. 15: Այսր ցանկացաւ դաւիթ ջրոյն բեթղեհէմի. ո՞ արբուցանէր ասէ՝ ինձ ջուր ՚ի ջրհորոյն բեթղեհէմի, որ առ դրանն. զոր լուեալ երից զօրավարաց յերեսանից անտի որք կային առընթեր, նոյն հետայն զատուցեալ ՚ի բանակէն՝ իջին ՚ի լեառնէ անտի, և սուր ՚ի ձեռին բացեալ ձանապարհ ընդ մէջ վրանացն այլազգեաց հասին ՚ի ջրհորն, հանին ջուր. և ընդ նոյն ձանապարհ դարձ արարեալ բերին մատուցին արքայի: Հիացաւ արքայ ընդ այնչափ քաջասրտութիւն նոցա. հաձեցաւ ընդ նուէրն, բայց կամեցեալ ցուցանել թէ ձանաչէ զյարգ մեծի արիութիւնէ նոցա, ոչ կամեցաւ ըմպել զջուրն, որ յայնպիսի վտանգ արկ զարիւն նոցա. զի ոգւովքն իւրեանց ասէ բերին. այլ նուիրեաց պատարագ տեն:

Յետ այնորիկ եհարց դաւիթ ՚ի տեն, եթէ ելանիցէ՞ ՚ի վերայ այլազգեաց, և ընկալեալ պատասխանի՝ ելանել աներկբայ, զի մատնեսցէ տէր զնոսա ՚ի ձեռս նորա. էջ դաւիթ ՚ի լեառնէ անտի

ոդ ողոմայ ընդ զանազան խրամատս նորա. և յայլ և այլ կողմանց յարձակեալ ի վերայ Թշնամւոյն ի հովիտն անդ՝ եհար զնոսա ի հարուածս մեծա մեծս, և միացեալքն մազապուրծ ձողոպրեալ փախեան տապնապաւ, Թողեալ անդ ի տեղի մարտին զվրանս և զամենայն կարասին, ընդ որս և զկուռս իւրեանց. զորս ըստ հրամանի դաւթի այրեցին առք նորա հրով. և զտեղին կոչեաց դաւիթ Բաղ ֆարսէհ, այն է բաժանումն և խրամատուԹիւն, կամ ըստ մերումն՝ ի վերայ խրամատից, առ յիշատակ բարեբարուԹեանն ոյ, որ խրամատեալ խառնակեաց զբանակ Թշնամւոյն: Այս հարուած ոչինչ լքոյց զսիրտ այլազգեաց, և ոչ զչոխորտ յանդգնուԹիւն նոցա խորտակեաց, այլ առաւել արծարծեաց. քանզի գիտէին, զի եԹէ տայի դաւԹի ժամանակ կատարել զամրուԹիւնս երուսաղէմի զոր սկսեալն էր, այնուհետև ոչ երբէք ելանիցէ ի ձեռաց իսրայէլացւոց այն քաղաք: Վասն այնորիկ փուԹացան՝ դարձեալ զօրաժողով եղեն յամենայն սահմանաց իւրեանց. և եկին սիւռեցան ի նոյն հովիտն սիտանաց: Այլ այս անգամ զպաշարումն ոչ սկսան ի հարաւոյ ի կողմանցն քեԹղեհէմի, որպէս յառաջնումն, այլ ի հիւսիսոյ ի կողմանց դաբաայ՝ ձգեալ ընդ արևմուտս ի կողմն գաբաւոնի, ուր և պատնէշ կանգնեցին. որով ցուցանէին ԹԷ ընդ այն կողմն ունին առնել զառաջինն յարձակումն ի վերայ ամրոցին սիոնի:

Ա՛հարց դաւիթ ըստ իւրում սովորուԹեան ի տէն, եԹէ ելանիցէ՞ ի վերայ նոցա. և ընկալաւ պատասխանի՝ ԹԷ ոչ. այլ դառնալ ի նոցանէ, և ի Թիկանց եկեալ զտեղի առնուցու յետ կոյս անտառի միոյ տանձենեաց, որ կոչէր անտառ լալօնից. (ԹուխԹ ԹԷ այս այն տեղի իցէ, որ լալեցաղ կոչի պաք. Ե. 1.) և յորժամ առանց քաղհմանն հողմոյ լսիցէ զշշունն տերևոցն տանձենեաց, յարձակեսցի ի վերայ Թշնամւոյն. զի յայնժամ ելցէ ՏԷր առաջի նորա կոտորել զնոսա: Պարտ էր ամենակալն պարգևել դաւԹի զյաղԹուԹիւն՝ առանց

յառաջոյ կամ յետ կուսէ յարձակմանն. բայց ընդ յաղթութեանէ՝ կամեցաւ ուսուցանել նմա և զյետնակ և զկնարս պատերազմի, թէ չէ պարտ յարձակիլ՝ի վերայ թշնամւոյն յայնմ կողմանէ, ուր ըստ բնական կարգի՝ բազում լինին արեան ձախաղիք, յորժամ սակաւ խոտորմամբ մարթ իցէ առաւել յապահովս յայլմէ կողմանէ հասանել՝ի վերայ. միանգամայն և փորձիւ ցուցանել, զի թէպէտ զբոլոր բանակ թշնամւոյն ունիցի ձակատեալ՝ի հանդիպոյ, սակայն և այնպէս մի՛ անփոյթ լիցի զթիկանց. այլ ունիցի միշտ վերջապահս՝ի պահպանութեի բանակին՝ի թիկանց. զի թշնամին սովորաբար յայն կողմն դիմէ, ուր չգուցէ քաջ պահպանութեի: Ընդ որ դաւիթ ըստ հրամանի նոյն. զի թողեալ գունդ մի յիւրոց զօրաց հանդէպ պատնըշափակ թշնամւոյն, ինքն մեղմով ինն խաղաց մեծագոյն բանակաւ յետ կոյս ասացեալ անտառին. և՝ի լինել նշանի շարժմամբ տերևալից ոստոց տանձենեաց, զձախ թև զօրուն արձակեաց՝ի վերայ գնդին այլազգեաց, որք էին բանակեալ յերկրին գաբաոն. իսկ զաջ թևն՝ի վերայ նոցա որք կային մերձ՝ի գաբաւոն. և այնպէս յերկուց կողմանց՝ի վերայ հասեալ, եհար և ցրուեաց զնոսա կոտորելով մինչև ցգաւազերա քաղաք սահմանագլուխ փղշտացւոց. որ է մերձ՝ի հեղեղատն գառազայ: Ուլկադայն ասէ յիշէ միայն զգաբաա. եթ թանատունք միայն զգաբաւոն. բայց չէն հակառակ միմեանց. մանաւանդ թէ միաբանեալ՝ տան մեզ իմանալ, թէ կոտորածն սկսաւ յերկուց բանակաւորեցաց. որքաջ համաձայնի դրից բանակի այլազգեաց. որոց՝ի փախչել յայլևայլ տեղեաց, միացան ամենեքեան առ դրունս առաջնոյ սահմանագլուխ քաղաքի իւրեանց:

Դաւիթ ընծայեաց զաւուրս հանէ պատանեկ ոն ՚ի պանէն ամենապատեայ : Ալա պատճէ Նահաւանդ վասն մերչենալոյ չէաւանդ ՚ի պապանային . ուստի չարժի լինել դաւիթ առ ձեռն պնէ պապանային ՚ի տուն աբեդդարայ գեղեացւոյ :

Յետ կրկին հարուածոց հետ գհետէ եղելոց կասեցաւ անհանդարտ ազգ փղշտացւոց յարշաւանաց ընդ բազում ժամանակս . որով և եղև դաւթի դիւրութի ՚ի գլուխ տանել զամբութիս քաղաքին . և կատարել զշինուածս նորոյ սիոնի . ուր առանց յայտնելոյ ումեք զնորհուրդ իւր՝ կառոյց և շինուած լինն , ուր առ ժամն մարթ էր զետեղել զտապանակն ոն վայելչապէս . զի անյապ փափաքմամբ ցանկայր զգանձն զայն ոծային ունել անդ ՚ի քաղաքի իւրում : Այլ խիթայր , թէ գուցէ չհաձիցի ժողովուրդն հանել զնա ՚ի տանէն ամինադաբայ որ ՚ի բլրին , ուր այնչափ սքանչելեօք փոխադրեցաւ յերկրէն այլազգեաց փղշտացւոց . կամ գուցէ ընտրեսցեն տանել ՚ի սելով , ուր եդաւ ՚ի ժամանակս յեսուայ . և եկաց անդ ընդ ամս իբրև չորեքհարիւր . և կամ ՚ի նոմբա քաղաք քահանայից , ուր էր յայնժամ խորանն : Ալ ասն այնորիկ արար դաւիթ ժողով մեծ , կոչելով զամենայն իշխանս ցեղից , և զհազարապետս և զհարիւրապետս , որպէս զի հասարակաց հաւանութիւնբ արասցէ զոր խորհէր , զի մի նոր խռովութի ինչ եղցէ ՚ի ժողովրդեան : Ասացաւ առ նոսա , և ասէ . յաւուրցն սաւուղայ ոչ խնդրեցաք զտապանակ ոն ոչ մերոյ . քանզի գոլով ժողովրդեան իսրայէլի բաժանեալ յերկուս թագաւորութիս , չէր ՚ի ձահ յայս գործ ձեռնարկել և ածել զնա ՚ի քեբրոն , զի մի երևեցոյց իբր սեպհականել ցեղին ևեթ յուդայի զայս գերագոյն գանձ ոծային , որ էր հասարակաց հա-

մօրէն ցեղից իսրայէլի։ Իսկ այժմ զի ՚ի հանէ այս մերմէ յաջողեցաւ միանալ ամենայն իսրայէլի ՚ի մի մտրմին, եղև ՚ի սրտի իմում, եթէ իցէ ձեզ հաճոյ, և համարիցիք գործ հաճոյական այս, փոխադրել զնա ՚ի քաղաք թագաւորութեանն իսրայէլի. որ է իբր սիրտ ՚ի մարմնի համօրէն հրէաստանի. ուր և առաւել յապահովի լինի, և մեծագոյն վայելչութեամբ և յարգանօք պահպանի։ Ամենայն ժողովին միաբան հաւանութեամբ ընկալաւ և գովեաց ընդ մի բերան զառաջարկութիւնն արքային։

Յայնժամ ժողովեաց դաւիթ զամենայն իսրայէլ ՚ի սահմանաց եգիպտոսի ՚ի հարաւոյ դաւառին բերսաբէի՝ մինչև յեմաթ ՚ի հիւսիսոյ, և այնպէս անհամար բազմութեամբ եկեալ ՚ի բլուրն կարիաթարիմայ՝ կոչեցեալ գաբաա, և հանեալ զտապանակ տեն այս, յորոյ վերայ կոչեցաւ անուն նորա՝ ՚ի տանէն ամինադաբայ, եդին ՚ի վերայ սայլի նորոյ. և որդիք ամինադաբայ եղբարք ոզայ վարէին զսայլն. իսկ ոզա երթայր առ ընթեր սայլին. և յառաջոյ և զկնի դաս դաս նուագածուաց աղգի աղգի նուագարանօք, տաւղօք, և քնարօք, և սրընդօք, և թմբկօք, և ծնծղայիւք, և փողովք. ընդ նոսա և արքայ դաւիթ տաննաղեաւ և երգովք սաղմոսաց՝ երթեալ խաղային ցնծութեամբ առաջի տապանակի տեն։ Եւ եօթանասուն հազար, կամ ըստ բնագրին եբրայեցւոց՝ երեսուն հազար զինուորք երիտասարդք ընտիրք կէս մի յառաջոյ՝ կէս մի զկնի երթային զինուորական կարգաւ ընդ հազարապետօք և ընդ հարիւրապետօք։ Եւ զևտայիք և քահանայք իւրաքանչիւր զգեցեալ ըստ կարգի պաշտամանն իւրեանց աստի և անտի սայլին. և զկնի նոցա անթիւ բազմութեամբ ժողովրդեան։ Եւ այն ինչ այսպիսի աշխարհաժողով չքնաղ հանդիսիւ և ցնծալից ուրախութեամբ հասին ՚ի կալն ամինադաբայ, կամ քելոնխայ, (որպէս ասի ա. Ճոպ. ԺԳ. 9. կամ ըստ եբրայականին նաքոնխայ, ըստ ոմանց որդւոյ քելոնխայ.) անդ ըստ վուլկատային՝ զտեղի առին զուարակքն և աքացէին, իսկ ըստ եօթա-

նամանից՝ Թիւրեցին զասլն, մինչ փոքր մի ՚ի կողմն մի սայլին միտել տապանակին: Յայնժամ ոչա որ երթայր առ ընթեր, ձգեաց զձեռն իւր, և կալաւ զտապանակն, զի մի՛ անկանիցի. և ահա անդէն առ նմին անկաւ ՚ի գետին առ ոտս սայլին, և մեռաւ:

Ասա տագնապին մեկնիչք ՚ի գուշակել զպատճառս սպասիսի յանկարծահաս մահուան ոչայ: Ոմանք ասեն՝ Թէ զի չէր նա ՚ի կարգէ ղևտացւոց, վասն այնորիկ յանցանք մեծ էր նմա հպիլ ՚ի սրբազան տապանակ նոն. յոր և ոչ իսկ ամենայն ղևտացիք կարէին մերձենալ, այլ միայն որդիք կահաթու. բայց և նոքա ոչ ՚ի մերկուց, այլ երեք կուղեան նուաստանօք ծածկեալ: Այլ սակայն եթէ չէր նա ղևտացի, անշուշտ ղևտացիք՝ որք կային ՚ի հանդիսի անդ, ոչ թոյլ տային նմա երթալ անմիջապէս առ տապանակին, ուր և արքայն պաւիթ ոչ իշխէր մերձենալ: Ոմանք ասեն՝ Թէ զի ոչա ետ խորհուրդ դնել զտապանակն ՚ի վերայ սայլի, և տանել զուարակօք. ուր քահանայից անկ էր բառնալ զնա յուս իւրեանց. զի զկնի մտից որդւոց իսրայէլի յերկիրն աւետեաց՝ այս պաշտօն քահանայից եղև սեպհականեալ. և զի զայս խորհուրդ՝ ետ ասեն ոզա, զնա միայն պատժեաց ՚ած, խնայելով յայլս: Այլք ասեն՝ Թէ զի ձգելով ոչայ զձեռն ունել զտապանակին, Թերահաւատու Թի՛ նմին երևեցոյց ՚ի գայթակղուԹի՛ ժողովրդեան. որպէս Թէ ՚ած չէր կարօղ առանց նորին օգնական նուէ պահել զտապանակն յանկանելոյ: Այն ևս՝ որք հայեցեալ ՚ի բան գրոյն, Թէ եհար ՚ած զոզա վասն յանդգնուԹե՛ն, երևի ասեն, Թէ ՚ի Թիւրել զուարԹական զսայլն՝ ոչ դոյր վտանգ անկանելոյ տապանակին, իսկ նա գուցէ սնափառուԹի՛ նմին առ ՚ի ցոյց փուԹոյ բարեպաշտուԹե՛, յանդգնեցաւ ձգել զձեռն իւր, և ունել ՚ի մերկուց զտապանակն առանց հարկաւորուԹե՛: Այլ այս գործ վայրկենական երևի գործեալ առանց կատարեալ խորհրդածուԹեան. վասն այնորիկ Թէպէտ ծանր ՚ի

գործն, այլ թեթև ՚ի սրտի կամ ՚ի հոգի· որ և պատժով յանկարծահաս մահուան համարի քաւեալ· նմին իրի համօրէն մեկնիչք քաջայոյս են վասն յաւիտենական փրկութեանն հոգւոյն նորա: Բայց ահա կամեցաւ սովին ահարկու օրինակաւ ՚ցնծի երկիւղ, և յարգութեի և պատկառանս առ իրս ահաւասիկ տպացուցանել ՚ի սիրտ ժողովրդեան, և իւրոց պաշտօնէից: Այս յիրաւի· քանզի այս ահաւոր արկած՝ յորմէ և տեղին կոչեցաւ խրամատուն թի կամ հարուած ոզայ՝ սասանեցոյց զբովանդակ ժողովն· և դաւիթ իսկ այնչափ զարհուրեցաւ, մինչև չիշխել առ ժամն տանել զնա ՚ի տուն իւր: ‖ Ո՛չ ոք ասէ՝ տարայց առ իս զտապանակն այ ‖· և խոտորեցոյց զնա ՚ի տունն աբեդդարայ գեթացւոյ: Այս աբեդդար վուլկատային կոչէ աբեդդոմ· զորմէ ոմանք ասեն լինել ղևտացի· զի ՚ի գիրս ա· ճադ· գլ· ձե· ձշ· և էշ· յիշատակի ոք նովին աբեդդոդոմ կամ աբեդդոմ անուամբ ՚ի կարգս ղևտացւոց· և կոչի սահեն գեթացի, զի գուցէ անդ իցէ ծնեալ· կամ թերևս ընդ բազում ժամանակս բնակեցաւ ՚ի գեթ քաղաք փղշտացւոց: Այլ ՚ոք գիրն պարզապէս գեթացի կոչէ զնա, և չտայ բնաւ նշան ինչ լինելոյ նորա ղևտացի, և չէր իսկ հարկ· զի տալ նորա զտուն իւր յիջևան տապանակի ՚ին՝ ոչ էր գործ ղևտական պաշտամանն· վասն որոյ չերևի լինել ղևտացի: Այլ թէ գոլով փղշտացի, զիա՞րդ տպա բնակէր մերձ յերուսաղէմ, հաւանական կան երևի՝ թէ բարեկամացեալ ընդ դաւթի՝ մինչ էր նա ՚ի գեթ, յետոյ ՚ի լսել զթագաւորել նորա յերուսաղէմ ՚ի վերայ ամենայն իսրայէլի, եկեալ իցէ առ նա, և ընկալեալ զերկպտուիթն՝ իցէ յաւելեալ ՚ի ժողովուրդ եբրայեցւոց· որպէս յոլովք յանթլփատից արարին· քանզի չէ բնաւ հաւանելի՝ թէ դաւիթ զգանձն զայն սրբազան հաւատացեալ իցէ առն անթլփատի:

Դաւթէն հանէ զպատանեակ սուն ՚ի պանէն աբեղդարայ, և նախատբեալ պանծալէ հանդիսից պանի ՚ի սեղն նոր չաղաւ, և հանգուցանէ յատարանս իւր ՚ի մեծափորձ խորանի։

Այլոց տապանակ ՚ին ամիաս երիս, ՚ի տանն աբեղդարայ. և վասն տապանակին օրհնեաց ՚ած զնա, և զամենայն ինչս նորա, տալով նմա և ընտանեաց նորա աւուրջուքի, և անդոյ նորա պտղաբերուքի, և անասնոց նորա բեղմնաւորուքի, և ամենայն գործոց նորա յաջողուքի։ Այս տեսեալ դաւթի, զի տապանակն փոխանակ մահ կամ այլ ինչ արկած ածելոյ ՚ի տունն աբեդդարայ՝ առաւտացոյց ՚ի նա զօրհնուքի, քաջալերեցաւ յանձն իւր, և ժողովեաց զարձեալ զամենայն իսրայէլ ՚ի դանայ մինչև ցբերասաքէկ հանել անտի զտապանակն. բայց այս անգամ առաւել զգուշացաւ, զի մի ինչ գործեսցի արտաքոյ օրինաց ՚ան։ Այնմ իրի կոչեաց զսադովկ և զաբիաթար, և զամենայն իշխանս ղևտացւոց. և պատուիրեաց նոցա սրբել և պատրաստել զանձինս՝ առ ՚ի բառնալ և բերել ՚ի վերայ ուսոց իւրեանց զտապանակ ՚ան՝ ըստ պատուիրելոյ մովսիսի բանիւ ՚այ. * ոչ ապաքէն (ասէ դաւիթ ցգլխաւորս ՚ի քահանայից,) զի էիք դուք յառաջ, խրամատեաց ՚ած ՚ի մեզ. վասն զի ոչ խնդրեցաք իրաւամբք զնա ‖ ա. ճառ. ծէ. 13։ Այս ցիշխանս ղևտացւոցն հրամայեաց կարգել զերգարս իւրեանց, որք հմուտ են երգել սաղմոս, նուագարանօք, և քնարօք, և ծնծղայիւք. զոր և արարին նոքա՝ կարգելով եօթն դասս։ Այս ինքն դաւիթ քաջալարժ մանաւանդ թէ հեղինակ՝ յերգս սաղմոսաց և ՚ի նուագարանս, միաբանեաւ ընդ նոսա՝ հարկանէր զտաւիղ, և երգէր ցնծութիւն զերգս օրհնութիւն ՚ի բարձունս առ ՚ած։ Այս առ

խոնարհութիւնէ սրտին՝ ի բաց եդեալ յանձնէ զարքայական փառաց հանդերձս, եր զգեցեալ լոկ պատմուճանն սպիտակ բեհեզեայ. (կամ որպէս դնի Ե. Ղուկ. Ի. 14. պատմուճանն հանդերձեալ. ուր վուլկատային ընթերցուածն՝ եփուտ):

Եւ այնպէս հանին զտապանակ ոսկի ի տանէն աբեդդարայ հռչակաւ և ձայնիւ փողոյ, և ազգի ազգի նուագարանաց: Ո՛չ Ջանապարհային՝ ընդ որ անցանէր տապանակն, յամենայն վեց քայլափոխս՝ ըստ վուլկատային՝ զենուին զուարակ մի և խոյ մի. ընդ ամենայն եօթն զուարակս և եօթն խոյս մատուցին զոհ խաղաղական: Իսկ դաւիթ յառաւելութիւնէ ցնծութիւնէ սրտին ընդ փառսն ոչ, միանգամայն և ի խրախոյս ժողովրդեան առ այն հասատակաց ցնծութիւն, երթայր խաղալով և կաքաւելով առաջի տապանակի ոսկի, մինչև հասին ի լեառն սիովն. և անդ յարքունի ապարանսն ի վայելուչ տեղւոջ եդին զտապանակն ի մէջ մեծագին խորանի, զոր պատրաստեաց նմա դաւիթ, որ և մատոյց ողջակէզս խաղաղականս, և զոհս փրկութեանց առաջի տապանակին. և օրհնեաց զժողովուրդն յանուն տեառն. և բաշխեաց ամենեցուն բլիթ մի հաց, և պատառ մի ի կասկարայից, և քսքար մի ի տապակէ. և դնաց ամենայն ժողովուրդն իւրաքանչիւր ի տուն իւր:

Ի մտանել տապանակին ի սիոն ի քաղաք դաւթի, մեղքոյ դուստր սաւուղայ կին դաւթի կացեալ առ պատուհանի ապարանից ի զնին մեծի հանդիսին, և տեսեալ զդաւիթ արքայ՝ զի կաքաւէր ի հրապարակի և նուագէր առաջի տապանակի տեառն ի զգեստս անպաճոյճս, անդոսնեաց զնա ի սրտի իւրում. որպէս թէ մոռացեալ զպատիւ թագաւորութեան՝ յիշեցուցանիցէ առաջի աշխարհաժողով բազմութեան զառաջին նուաստութիւն ապգատոհմի իւրոյ: Ո՛ի անմտան գոլով նորա ի հոգւոյ ամբարշտութիւնէ դաւթի՝ ոչ կարաց ի միտ առնուլ, թէ յորմէ հոգւոյ շարժեալ դաւթի ցուցանէր զայն արտաքին նշանս ցնծութեան: Եւ եղև

’ի դառնալ դաւթի ’ի տուն իւր, եւ մեղքոյ ընդ առաջ նորա. և ասէ հեգնելով՝ քանի՞ փառաւորեաւ էր այսօր արքայ իսրայէլի, որ հոլանեցաւ այսօր առաջի աղախնեաց և ծառայից իւրոց, զոր օրինակ հոլանիցի հոլանեւլով մի ոք ’ի կաքաւեցաց։ Այլ ընկալաւ պատասխանի արժանաւոր իւրումն յանդգնութենէ. Կաքաւեցից ասէ դաւիթ՝ առաջի նոյն, որ ընտրեաց զիս քան զհայր քո և քան զամենայն տուն նորա. և կացոյց զիս առաջնորդ ’ի վերայ ամենայն ժողովրդեան իւրոյ իսրայէլի։ Այլ խաղացից և կաքաւեցից, և մերկացայց սոյնպէս և առ քան զիս, և եղէց անպիտան յաչս քո, (’ի վուլկատային՝ յաչս իմ.) և ընդ աղախնայս ընդ որս ասացեր փառաւորել՝ փառաւորեցայց. որով և խափան կարկեցոյց զլեզու նորա. և նա ի սակ պատժեաց զնա մշտնջենաւոր ամլութիւն։

Յայնժամ նորոգեաց դաւիթ զամենայն կարգս պաշտամանց նոյն՝ ըստ ամենայնի, որպէս գրեալ է յօրէնսն, զոր պատուիրեաց նա որդւոցն իսրայէլի ’ի ձեռն մովսիսի ծառային իւրոյ, զի խանգարեալ էր յոյժ ’ի ժամանակս սաւուղայ։ Որոշեաց զպաշտամունս քահանայից և զևտացւոց. կացոյց երգիչս և նուագածուս երգել և օրհնել զնոր նա ձայնիւ և նուագարանօք առաջի տապանակի կտակարանաց նոյն։ Արար և սաղմոս խոստովանութեան և օրհնութեան. ’ի սկզբանն եւ ասել երգով զսաղմոն՝ որ սկսանի. * Խոստովանեցարուք նմա, և կարդացէք զանուն նորա ||. որ գրեալ է. ա. Ճառ. գլ. ծշ. որպէս և այլ ամենայն կարգաւորութիւնք զոր արար յայնժամ, ընդարձակ գրեալ են անդ։ Խորհեր շինել և տաճար մեծաշէն, որոյ զուգական մի գոյի ուրեք յաշխարհի, և անդ հանգուցանել զտապանակն նոյ։ Յայտնեաց զխորհուրդ իւր նաթանայ մարգարէի. * Հաւասիկ ասէ՝ ես բնակեալ եմ ’ի տան եղևնափայտից. և տապանակն նոյ չրջիցի ’ի մէջ խորանին ||. Ը. Ռթ. Է. 2։ Այլ նաթան զառաջինն գովեաց զառաջարկութիւն արքայի իբր գործ հաճոյական նոյ. * Ամենայն

ասէ որ ինչ լսէ ՚ի սրտի քումմ, ելցէ և արա՛. զի ոչ ընդ քեզ է ։ Այսպէս խօսեցաւ իբրև այր խորհրդական լոկ ըստ առաջնորդելոյ ուղիղ բանի, և ոչ որպէս մարգարէ լուսաւորեալ ՚ի ՚Ան։

Ա՛ գիշերին յայնմիկ խօսեցաւ Տէր առ Նաթան, և պատուիրեաց ասել ցդաւիթ, Թէ հաձեալ է ընդ գեղեցիկ խորհուրդ նորա. վասն որոյ տայցէ նմա վարձս, անուանի առնելով զնա ըստ անուանց մեծամեծաց որ ՚ի վերայ երկրի. և հաստատելով ՚ի տունն նորա զթագաւորութիւնն իսրայէլի մինչև ցյաւիտեան ։ Այլ ոչ կամի Թէ ձեռք նորա շինեսցեն նմա տաճար խաղաղութեանն, որք յայնչափ կռիւս մարտի այնչափ ուղիս արեանց դնացուցին ։ Այն դունի զնա յանկութիւն նորա. բայց զխաղաղականն գործադրութիւնն ընկալեցի յորդւոյ նորա սողոմոնէ՝ զոր խոստանայ տալ նմա ։ Այսոսիկ խոստմունս ՚Ան են ինչ ինչ, որք ըստ Ճառին Թէոփէտ՚ի դաւիթ հայեին և յորդի նորա սողոմոնէ, բայց ըլ Ճշմարտութե՛ ղհանդերձեալ մեսիայն ակնարկեն ։ Ընդ այս աւետաւոր պատասխանի նաթանայ լցեալ դաւիթ ցնծութեբ, և ՚ի խոր խոնարհեալ ՚ի սրտի խրատ, եմուտ ՚ի խորանն, և նստեալ առաջի տապանակի ՚Ան, եռացեալ սրտիւ մատոյց գոհութիւն ՚Ան այ յաղագս այնչափ մարդասիրելոյն առ նա ։ Արպէս գրեալ է. Ք. Ռագ. Ք. Ե ա. ՃԱՑ. ԺԷ ։

Ա՛ն լինով յայտնի ժամանակն՝ յորում յայտնեցաւ զառաջինն յիսրայէլի նաթան մարգարէ. աստ սկսանին յիշատակել զնա գիրք. որ և ըստ որում հաւաստեն գործք նորա, էր այր զգաստ, խոհական, իմաստուն և հմուտ ՚ի բարեխառնել և ՚ի մեղմել հեզութիւն և հանձարով զխստութիւն կշտամբութիւն՝ յորժամ դէպ լինէր զոք կշտամբել առ ուղղութիւն ։ Արթուն էր ՚ի քաղաքավարել ընդ թագաւորս և ընդ մեծամեծս. և գիտէր վարիլ նոցին բարեկամութիւն. որով սիրելի՝ միանգամայն և յարգոյ եղև միշտ յաչս դաւթի ։

ԳԼՈՒԽ Ը.

Պատերազմունք դաւթի արտաքոյ հրէաստանի : Նուիճե-
նէ զանան արտաքոյ ամենայն յաղագս նախապատմացն՝ զոր արար
հրեշտակն էրոյ , զորս առաքեաց ՚ի մխիթարել զնա վասն
մահու հօր նորա նաասայ բարեկամի էրոյ :

Երկիրն աւետեաց խռոտացեալ ՚ի ձեռն որդ-
ւոց իսրայէլի ընդարձակագոյն էր յոյժ , քան զայն՝
յոր ցժամանակս դաւթի տիրեցին երբայեցիք :
Եւդ՝ կամեցեալ դաւթի խնդրել զիրաւունս իւր ,
զոր ունէր յայ ընդ իւրև գրաւեալ զայն ամենայն
տեղիս , յարոյց պատերազմ ընդդէմ թագաւորաց՝
որք ունէին զնոսա . սկիզբն արարեալ նախ ՚ի
փղշտացւոց սահմանակցաց երկրին հրէաստանի .
եհար զնոսա , և քակեաց զամենայն ամրոցս երկրի
նոցա . զգէթ մայրաքաղաք նոցա միայն պահեաց ,
ունիլ զնա ՚ի ձեռին՝ առ ՚ի նուաճուել պահել զննա-
կիչս , և ՚ի հանել զտարեկան հարկ ՚ի նոցանէ :
Այս էր խորհուրդ դաւթի՝ յամենայն տեղիս որոց
տիրէր , քակել զամրոցս , զի յապստամբիլ ժողովր-
դեան՝ նորոգ ընդ իւրև նուաճելոյ , մի գացի նո-
ցա տեղի ապաւինի ամրանալ ՚ի նմա . և մի ինքն
բռնադատեսցի զօրս պահել ՚ի բազում տեղիս , և
այնու զծախս բազմացուցանել ՚ի ՀՀաս իւրոյ բնիկ
ժողովրդեան : Յամենայն Թագաւորութիւնս զոր առ-
նոյր , մի կամ երկու ամրոցս պահէր . և ՚ի նոսա
կացուցանէր չափաւոր գունդ մի զօրաց , որչափ
բաւական համարէր երկիւղ արկանել ժողովր-
դեան , և հանել ըստ ժամանակին զսահմանեալ
հարկն :

Ի փղշտացւոց հանց առ մովաբացիս . ա՛ռ զեր-
կիր նոցա , և զամենայն գերեալսն տարաճեաց
՚ի գեանի՝ յերկուս դասս որոշեալ , զմին մահու ,
և զմիւսն կենաց . և արկեալ վիճակ ՚ի վերայ նո-

ցա, յորոյ վերայ եւ վիճակն մահու, եւ երկաթա-
պատ սայլս շրջեցուցանել՝ ի վերայ մարմնոյ նոցա,
մինչեւ խորտակիլ ամենայն ոսկերաց, եւ այնպէս
չարաչարեալ մահու կորոյս զնոսա. իսկ զերկ-
րորդ գան զոր ապրեցոյց՝ արար հարկատու։ Ա. յս
է զոր ասէ գիրն. * Լինար դաւիթ զմովաբ, եւ չափ-
եաց զնոսա պարանօք. և գառացոյց զնոսա յերկիր.
և եղեն երկու պարանքն սպանանելոյ, և երկու
պարանքն ապրեցուցանելոյ ‖. Է. Ռաջ. Ը. 2։
Ամենք զայս բան գրոյն առակաւ ասացեալ իմա-
նան. իբր թէ այնչափ բազմութի՛ւն և այնպէս կո-
տորեաց դաւիթ՝ ի մովաբացւոց, զի որպէս անդք
ոչ մի առ մի՝ ի թիւս արկանին, այլ պարանօք չա-
փին, և ոչ ընդդէմ դառնան չափողաց. այսպէս
դաւիթ ոչ մի մի՝ ի թիւս արկանէր զմեռեալս, և
զսահմանեալս՝ ի մահ, այլ միահաղոյն իբրև կիսով
չափ սպան՝ ի նոցանէ. ըստ ոմանց՝ զերկու մասն
յերից։

Ա. յս գարձոյց դաւիթ զգէնս իւր՝ ի վերայ
ադրաազարայ արքայի սուբայ յերթալ նորա առ-
նուլ զքաղաքս, որք էին առ եփրատաս՝ ի կողմն
հրէաստանի։ Ա. յս գետ էր Ճշգրիտ սահման՝ ի
հիւսիսոյ երկրին աւետեաց. այլ ոչ երբէք հասին
անդր գէնք երբայեցւոց, որք հազիւ ցստորոտս լե-
բանոյ լիբանանու ժամանեցին։ Իսկ թուեցաւ
առաջի դաւթի՝ թէ արքայն սուբայ բռնակալեսցի
զքաղաքս զնոստացեալս որդւոց իսրայէլի։ Ա ան
որոյ եւ ընդդէմ նորա, եհար զնա և խորտակեաց.
և առ զնորա հազար կառս. և գերեաց եօթն հա-
զար հեծելոց, և քսան հազար հետևակաց. զկառն
քակեաց, հարիւր ևեթ թողեալ՝ ի նոցանէ իբր՝ ի
նշանակ յաղթութե՛ն, և զերիվարս կարթակոտոր
արար. որպէս պատուիրեաց ՅԱԾ՝ ի ձեռն մովսիսի.
Է. օրէն. ԺԷ. 16։ Լինար դաւիթ յայնժամ և զար-
քայն դամասկոսի, որ եկեալ էր յօգնութի՛ ադրաա-
զարայ. կոտորեաց յարանց նորա քսան և երկու
հազար. և առ զապարանջանան զոսկիս, կամ զմա-
նեական. ա. Ժամ. ԺԸ. 7։ Ուր վուլկատային ընթեռ-

նու՝ զգէնս ոսկիս. ասորին՝ զկապարձն. արաբուցին՝ զկամարս. քաղդէացին՝ զվահանս, որք էին ի ծառայն աղրասազարայ. առ և պղինձ բազում, և եբեր յերուսաղէմ։ Եւ հանդէպ դամասկոսի եթող քաղաք մի քաջ ամրացուցեալ. և ի նմա պահակս զօրաց ի նուաձումէն երկուց գաւառաց ասորւոց՝ սուբայ, և դամասկոսի. զորս հարկատու, կամ ըստ գրոյն՝ ծառայս պատարագաբերս կացոյց դաւիթ։ Վասն քաղթութեանց դաւթի ևս առաւել բարձրացաւ, զի մինչ ինքն դառնայր քաղթանակաւ ի հիւսիսոյ, աբեսսա որդի շարուհեայ մի յերևելի զօրավարաց նորա արար ի հարաւակողմն յաղթութեի մեծ ընդդէմ եդովմայեցւոց ի հովտին եղովնայ, այն է ձորն աղտից առ մեռեալ ծովու. ուր եհար և հոտորեաց ի նոցանէ ութհուտասն հազար. և ամենայն եդովմայեցիք եղեն հարկատու դաւթի. ա. ԹԱԳ. ԺԲ. 12։

Ամաստուն քան զամենայն թագաւորս այլազգեաց գտաւ թովու արքայ եմաթայ. որ այն ինքն է եմեսա քաղաք հռչակաւոր յասորիս առ որոնտես գետով։ Ուեալ սորա՝ եթէ եհար դաւիթ զադրազազար, առաքեաց զեղդուրա, (կամ որպէս գրի՝ ի ա. ՇԱՑ, զդուրամ, զոր վուլկադայն ընթեռնու յովրամ) զարքայորդի իւր հանդերձ պատարագօք ոսկեղէն և արծաթեղէն և պղնձի անօթոց՝ ի խընդակցութեի մեծի յաղթութենէ նորա. և՝ի չնորհակալութեի սակս խորտակելոյ զամբարտաւանութեի ադրազազարայ իւրումն անհաշտ թշնամւոյ, որ յար անհանգիստ առնէր զինա. միանգամայն և խնդրել՝ ի դաւթէ հաստատել խաղաղութեի ընդ նմա։ Զնկալաւ դաւիթ պատուասիրութեի զհրեշտակութենին թովուայ. կատարեաց զխնդիր նորա, և արձակեաց արժանաւոր պատուով զորդի նորա, որպէս վայել է որդւոյ թագաւորի. և եղև այնուհետև միշտ խաղաղութի ընդ նմա։

Ընդ այն ժամանակս լուաւ դաւիթ եթէ մեռաւ նաաս արքայ որդւոց ամմնայ. և թագաւորեաց անոն՝ որ և անան՝ որդի նորա ընդ նորա։

Նէ յուշ ածեալ դաւթի զողորմութիւնն, զոր արար նմա և տան նորա նասս ՚ի ժամանակին՝ մինչ փախուցեալ լերեսաց սաւուղայ, ստիպեցաւ ապաւինիլ առ այսպիսիս. և հալածական շրջիլ ՚ի լերինս և յանմարդի անապատս, առաքեաց առ անան հրեշտակս մխիթարել զնա վասն մահու հօր նորա, միանգամայն խնդակից լինել նմա յաղագս բարձրանալոյ յաթոռ թագաւորութեանէ փոխանակ հօրն, կամեցեալ պահել և ընդ նմա զնոյն խաղաղութիւնն և զբարեկամութիւնն՝ զոր ունէր ընդ հօր նորա։ Այլ ժառանգք թագաւորաց ոչ միշտ ժառանգեն զիմաստութիւնն և զիսոհական գնացս ծնողացն։ Ետասամիտ իշխանք անանայ ցանկացօղ ՚ի կռիւ մարտի ընդդէմ թագաւորութեանէ իսրայէլի ելանել, շրջելոյին զմիտս մանկահասակ արքային՝ էհաւատալ հրեշտակութեանն դաւթի. զի ո՛չ եթէ ասեն ՚ի բարեկամութեանէ սակս, և ՚ի մխիթարութեանէ եկին նոքա, այլ լոկ ՚ի գննել և ՚ի լրտեսել զքաղաքս և զերկիրս և իմանալ զել և զմուտ նորա։ Վասն զի քաղաքք և խորհրդականք ոչ երբեք անկանին ՚ի մեծագոյն վտանգ սխալելոյ, քան յորժամ վստահանան յանձինս լինել կարի իմն արիւնն և յառաջատես։ Ընդարև մարթ էր նոցա կասկածիլ վասն դաւթի՝ տեսանելով զանընդհատ պատերազմունս նորա, և զմեծամեծ յաղթութիւնն. բայց այլ է կասկածիլ, և այլ է վճռել, և զկասկածն ՚ի գործ դնել։ Կասկածիլ կասկածիլ ըստ ժամանակին՝ է առաջինն խոհեմութիւն և հանճար խորհրդականաց, բայց վճռել յառաջ քան զժամանակն՝ բազում անգամ ՚ի մեծամեծ վտանգս արկանէ։ Եթէ կասկածէին զհրեշտակացն դաւթի լինել լրտեսս, կարէին և ինքեանք որոնել և գննել զնոսա. կարէին՝ որպէս արժան իսկ էր, բազում պատուով և շնորհակալութիւք ընդունել և մեծարել զնոսա. և ապա ընդ պատրուակաւ սիրոյ և բարեկամութիւն՝ քաղել բանս ՚ի բերանոյ նոցա, և դիտել զգուշութիւն զամենայն գնացս նոցա. միանգամայն և ինչ ինչ ՚ի գինուորական զօրութիւնէ իւրեանց, որպէս կառս գերան-

դաղէնս, գունդս հեծելոց և հետևակաց այլովքն հանդերձ ցուցանել նոցա. յորս դժուարին երևի՝ թէ չտային նոքա նշան ինչ, եթէ ստուգութիւն՝ ի լրտեսել և եթ եկեալ էին։ Այլ և յայնժամ չէր պարտ նոցա եղծանել զազգային հասարակաց իրաւունս, յետին անարգութիւն տալ գերծուլ զդլուխ նոցա, և զկէս մօրուացն, և հատանել միջով չափ կամ՝ ի միջոյ և՝ ի վայր զդրօշակս հանդերձից նոցա. և այնպէս եռասպատիկ նախատանօք անարգեալ՝ արձակել իբրև զվատանուն լրտեսս զայնպիսի արս ազնուականս՝ ի հզօր ինքնակալէ առաքեալս՝ ի դեսպանութիւն։ Այդ արարին նոքա վաղվաղակի դաւթի զամենայն անցս՝ զոր անցոյց ընդ նոսա ազնան արքայ ամմնայ. և ընկալեալ պատասխանի՝ ի նմանէ՝ մի գալ յերուսաղէմ, այլ նստիլ յերիքով՝ մինչև ածէացին ըստ պատշաճի հերք և մօրուք նոցա։

Յետ գործելոյ որդւոց ամմնայ զայս անբերելի անիրաւութիւն՝ բացան աչք նոցա, բայց անագան, և տեսին զի այն գործ ոչ վճարի առանց յորդառատ արեան ձեռնադրեաց։ Այսին իբրև վաղվաղակի զօրաժողով եղեն յամենայն սահմանաց տէրութիւնն իւրեանց. այլ կասկածելով թէ նոքօք և եթ ոչ կարիցեն զդէմ ունել մեծազօր արքային իսրայէլի, հրեշտակս արձակեցին յաստրխս առ արքայն ռովբայ և առ արքայն սուբայ, և՝ ի վարձու կալան զօրս յօգնականութիւն, հազար տաղանդ արծաթոյ ծախելով՝ ի նոսա։ Յերկուց թագաւորութեց աստի ընկալան երեսուն և երկու հազարս կառաց, և քսան հազար հետևակաց. յորս յաւելաւ անձամբ արքայն մաաքայ հազար արամբք, և արքայն ստովբայ երկոտասան հազարօք ընդ հեծեալ և ընդ հետևակ։

Լուեալ դաւթի զայն ահեղ պատրաստութիւն նոցա՝ առաքեաց զյովաբ զսպարապետ իւր և զամենայն զօրն զօրաւոր ընդ նմա, այլ՝ ի մերձենալ նորա՝ ի ռաբաթ մայրաքաղաք ամմնացւոց, եգիտ զթշնամին յայնպիսի քաջադէպ դիրս բանակեալ,

պի դժուարին էր նմա յոյժ յարձակիլ՝ի նոսա։ Արդիք ամենայ կային ձակատեալ՝ի մարտ արտաքոյ պարսպաց քաղաքի իւրեանց. իսկ օգնական բանակք ասորւոց հանդերձ Թագաւորօք և զօրավարօք իւրեանց էին յանդիմման մեդաբայ՝ի դաշտին. ուստի եթէ կամէր յովաբ՝ի մարտ ձեռնարկել, հարկ էր նմա միջամուխ ընդ մէջ երկուց ձակատուց լինել, և ունել յառաջոյ և՝ի թիկանց զթշնամին։ Այլ արի զօրավարն՝ որ քաջավարժ էր յարձակիլ և յաղթել, և ոչ երկնչէր՝ի վտանգաց, բաժանեաց զզօրս իւր յերկուս դասս՝ թիկնապարձոյցս իրերաց, այսինքն զերեսս ունելով միոյ դասուն յայսկոյս, և միւսումն յայնկոյս. որով և միանգամայն ձևացան երկու ձակատք. մին ընդդէմ ամնացւոց, զոր ետ՝ի ձեռս աբեսսայ եղբօր իւրոյ. իսկ միւսն ընդդէմ ասորւոց, զոր ինքն կալաւ, այսպիսի պայմանաւ. զի թէ զօրասցին ասորիք ընդդէմ միոյն, և կամ թէ ամնացիք ընդդէմ միւսոյն, օգնեսցեն միմեանց. և դունդն որ կայր՝ի մէջ երկուցն պահեալ, հասցէ յօգնութիւն տակաւրացեալ կողման։ Այս խրախուսեալ և քաջալերեալ յովաբայ զանձն և զեղբայրն և զամենայն զզօրն յուսով վերին օգնականութենն՝ քաջութիւն պատերազմիլ վասն ժողովրդեան, և վասն քաղաքաց ՚ին ՚ոյ իւրեանց, գրոհ ետ, և բուռն զօրութիւն յարձակեցաւ ընդդէմ ասորեաց. որք շփոթեալ և խառնակեալ դարձան՝ի փախուստ յերեսաց յովաբայ, ընտրելով յաւէտ զանձինս ապրեցուցանել՝ քան յօգնութիւն հասանել իւրեանց դաշնակցաց։ Իբրև տեսին որդիք ամնայ՝ թէ փախեան ասորիք, թիկունս դարձուցին և նոքա յերեսաց աբեսսայ, և մտին ամրացան՝ի քաղաքն։

Այս խայտառակ պարտութիւն ասորւոց առաջի իսրայէլի՝ դարձեալ գրգռեաց զնոսա՝ի նոր պատերազմ, ՚ի սրբել զնախատինս առաջնոյ ամօթապարտութենէ, և՝ի թօթափել զլուծ հարկաց՝ զոր պարտաւորեցան տալ իսրայէլացւոց։ Ընդրեցին և ընկալան օգնութիւն յասորեաց, որք էին յայնմ

կողմանէ քաղամակ գետոյն. և կալան իւրեանց զօ-
րավար զսովփաք, որ'ի հերուն հետէ առաջնորդէր
զօրաց ադրասազարայ արքայի: Իսկ ազգ եղև
դաւթի, եթէ յաձախեաց ասորին զզօրս, և խա-
զայ ընդդէմ իսրայէլի, բազմացոյց և նա զիւրսն,
անց ընդ յորդանան. և եկեալ անձամբ 'ի քաղա-
մակ գետ, միացաւ ընդ յովաբայ՝ ածեալ ընդ իւր
նոր գունդ զօրաց. և'ի գիմի հարաւ ասորեաց ա-
հաւոր զօրութիւն. որում ոչ կարելով նոցա երկար
զդէմ ունել՝ խնդրէին փախստեամբ ապրեցուցա-
նել զանձինս. բայց և այնպէս հարուածս չարա-
չարս ած զնոքօք դաւիթ. զի կոտորեաց 'ի նոցանէ,
եօթն հազար կառաց, և քառասուն հազար հե-
տեւակաց. որպէս գրի 'ի ՝ա. Թագ. է. 18: Իսկ'ի
գիրս երկրորդ Թագաւորաց. ը. 18. ընթերնումք
թէ կոտորեաց դաւիթ յասորւոցն եօթն հարիւր
կառս, և քառասուն հազար հեծելոց:

Զոր'ի միաբանել զայս երկու երևեալ ներհա-
կութիւն, առ առաջինն մարթ է ասել, թէ 'ի յեօթն
հարիւր կառսն, որք յիշատակին 'ի գիրս Թագա-
ւորաց, էրէն եօթն հազար պատերազմականք.
յիւրաքանչիւր կառն տասն այր, որք մարտնչէին
'ի կառաց: Իսկ առ երկրորդն ասելի է, թէ գիրք
Ճառագործաց որ է յաւելուած գրոցն Թագաւորաց,
ընդ զթիւ քառասուն հազար հետևակաց, որ զանց
արարաւ 'ի գիրս Թագաւորաց. որով տայ մեզ
իմանալ, թէ կոտորած ասորւոց եղև քառասուն
հազար հետևակաց, և նոյնչափ հեծելոց. այլև
եօթն հազար արանց, որք ելանէին 'ի կառս և ան-
տի մարտնչէին. և այսպէս թիւ կոտորելոցն եղև
ընդ ամենայն ութասուն և եօթն հազար: Զոր որք
ոչ հաւանեալ ընդ այս մեկնութիւն, զի ոչ կարեն
հաւանիլ թէ կոտորած այնչափ հետևակաց էին
զանց արարեալ'ի պատմութեանդ Թագաւորաց,
և ոչ իսկ կարելի'ի մի կառս տասն արանց մարտն-
չիլ, ասեն՝ թէ յառաջին յարձակմանն զդաւթի
կոտորեցան եօթն հարիւր կառք, և մարդիկ և ե-
րիվարք որք'ի նոսա մեռան առհասարակ. ահա այս

է ասեն, որ ՚ի գիրս Թագաւորաց ասի՝ Թէ * Կո-
տորեաց գաւիթ յասորւոցն եօթն հարիւր կառս ||։
Նա ապա յանհնարին խառնակութէ անտի շփո-
թեալ և խառնակեալ ճեացեալ կառացն և հեծե-
լոց՝ մինչ ոչ զօրել ՚ի համարձակ մարտնչել, և ոչ
ելս փախստեան գտանել, իջին յերիվարաց ՚ի վայր,
և այնպէս ըստ մասին մարտնչէին, և ըստ մասին
՚ի փախուստ Ճեպէին՝ ոչ ևս ՚ի կառս և յերիվարս,
այլ հետի։

Նա ահա այս պարագայ է ասեն, զոր բացատ-
րեն մեզ գիրք ճեացորդաց. ուր ՚ի սմ ասի, Թէ * Կո-
տորեաց գաւիթ եօթն հազար կառս ||, որպէս ՚ի
գիրս Թագաւորաց ասի՝ * եօթն հարիւր կառս ||.
այլ * Նաօթն հազար կառաց ||, այսինքն աթս կար-
գեալս վասն կառաց՝ անտի մարտնչել. Թէպէտ
բազումք յայնմ մեծի շփոթութէ իջեալ էին ՚ի
կառաց. որպէս և հեծեալք կարգեալք յօդնութէն
կառաց՝ իջեալ յերիվարաց իւրեանց, ոմանք պա-
տերազմէին, և ոմանք հետիոտս փախչէին։ Ալ ասն
որոյ գիրք Թագաւորաց տայ մեզ իմանալ, Թէ
այն քառասուն հազար մեռեալք էին ՚ի հեծելոց.
իսկ գիրք ճեացորդաց յուցանէ՝ Թէ կոտորեցան
մինչ էին յոտին իբրև զհետևակազօրս։ Նա ևս
կարի հաւանելի է ասեն, Թէ հետևակ զօրք ասոր-
ւոց տեսեալ զի ՚ի կառն կոտորին, նոքա եղեալ
իցեն առաջին ՚ի փախչիլ և խուսեալ ՚ի պատերազ-
մէ. իսկ հեծեալք առ ՚ի ընուլ զտեղի նոցա՝ իցեն
ստիպեալ լինել յերիվարաց և հետի մարտնչել.
որպէս և այժմ ՚ի մերում ժամանակի յայսպիսի
ձախող պատերազմունս՝ յորժամ հարկն ստիպէ ՚ի
խառնիլ Ճակատուց ընդ միմեանս, հեծեալք իջա-
նեն յերիվարաց։ Յայսմանէ յայտ է Թէ ըստ կար-
ծեաց սոցա՝ քառասուն հազար հեծեալքն նոյն էն
ընդ քառասուն հազար հետևակաց. ուստի և մե-
ռեալքն եղեն քառասուն հազար ևեթ. իսկ Թիւ
մարտուցելոց ՚ի կառաց ըստ սոցա է անորոշ. զի
ասեն Թէ բազումք ՚ի նոցանէ փախեան։ Ալակայն
որպէս յայտնի երևի ՚ի գրոյն՝ այս հարուած ասոր-

ւոց եղև սաստիկ յոյժ, մինչև քանադատիլ նոցա ՚ի բաց կալ ՚ի դաշնակցութենէ ամենացւոց, և ուխտել ուխտ ընդ իսրայէլի լինել հարկատու և ծառայել նոցա։ Ասա վուլկադայն յաւելու թէ ասացիք.* Արկեան, և փախեան յիսուն և ութ հազար առաջի իսրայէլի՝. որ ոչն գտանի ո՛չ ՚ի քնարկիր եբրայեցւոց, ոչ առ եօթանասունս, և ոչ ՚ի հին թարգմանութենէ հերոնիմոսի։

Գլ. ԼԱ.

Գնութիւնէ գաւառի առ մեմֆիբոսթէ որդւէ յոնաթանու։ Անկուածն գաւառի ՚ի ձեղս ընութենէ և մարդասպանութենէ։ Ապաքէն գարչ և ապաշխարութենէ նորա։

Պաւիթ ՚ի զբաղմունս մեծամեծ պատերազմաց ընդ արտաքին տէրութենէց՝ ոչ անփոյթ լինէր զներքին տնտեսութենէն ժողովրդեան իւրոյ՝ առնել իրաւունս։ Յաւուր միում յուշ աճեալ զառաջինն մեերիմ բարեկամութենէ իւր ընդ յոնաթանու, և զբազում երախտիս նորա, յորդորեցաւ սիրտ նորա ՚ի չնորհս սիրելոյն իւրոյ յուշանալ առնել ողորմութենէ՝ որոց մնացեալ էին ՚ի տանէն սաւուղայ։ Արդ ցսիբա՝ որ ծառայեալ էր երբեմն յարքունիս սաւուղայ, եթէ էր ոք մնացեալ յարքունի զարմէ անտի. իսկ նա ետ ծանօթութենէ արքայի վասն մեմփիբոսթեայ որդւոյ յոնաթանու. որ էր յայնժամ ՚ի տան մաքիրայ որդւոյ ամիէլի, առն ողորմածի, ՚ի լոդաբար քաղաքի, արտաքոյ հայրենի ցեղի իւրոյ՝ յայն կոյս յորդանանու, ոչ կարի ինչ բացագոյն ՚ի մանայեմայ յարևելեան կողմն. ուր զառաջինն փախուցաւ ՚ի հասանել գումժի մահու հաւուն և հօր իւրոյ։ Արդ անդ եկաց մինչև յայն օր ՚ի յետին անչքութենէ մի միայն ժառանգն

արքայութիւնէ տանն սաւուղայ. որ ի դպրոցս նեղութենէ ընդ բազում ամս ուսեալ՝ քաջուսումն գտաւ ի խոնարհութենի, ի հեզութենի և ի դիւցազնական ժուժկալութենի:

Այն իբրև գիտաց դաւիթ, առ ժամայն առաքեաց և ետ ածել զնա յիւր արքունիս. իսկ նա եկեալ՝ անկաւ ի վերայ երեսաց իւրոց, և երկիր եպագ արքայի: Եւ դաւիթ միխիթարելով զնա՝ խոստացաւ առնել ընդ նմա ողորմութիւն, վասն յոնաթանայ հօր նորա, դարձուցանելով նմա զամենայն անդս հօր իւրոյ, և կարգելով զնա հանապազ ի սեղան իւր: Եւ այսպիսի գթալից հայրական խոստմունս արքայի՝ կրկին երկիր եպագ մեմփիբոսթէ, և ասէ. ո՞վ է ծառայ քո՝ զի հայեցար ի շուն մի մեռեալ նմանօղ ինձ: Եւ զի մեմփիբոսթէ կաղ էր յերկուց ոտից, և ոչ կարէր անձամբ իւրամբ տանել իրաց իւրոց, և ըստ արժանեաց սնուցանել զմիակ որդեակ իւր՝ կոչեցեալ միքա, կացոյց դաւիթ հազարապետ տանն մեմփիբոսթեայ զսիբա. որոյ էին հնգետասան որդիք, և քսան ծառայք, որով և կարօղ էր անխափան ի գլուխ տանել զամենայն յանձնեալս նմա: Եւ ասէ արքայ ցսիբա, դո՛ւ գործեացես զերկիր և խնամ ունիցիս ամենայն իրաց մեմփիբոսթեայ, որ այսուհետև եղիցի ուր քո, և մուծցես ի տուն ուն քո հաց՝ պատրաստել սեղան փոքրիկ որդեկին իւրոյ: Եւ մեմփիբոսթէ որդի ուն քո յոնաթանայ կեցիցէ հաց հանապազ ի սեղանի իմում իբրև զմի յորդւոց իմոց: Եւ պատասխանի սիբա ցարքայ. ըստ ամենայնի զոր հրամայեաց տէր իմ արքայ ծառայի իւրում, այնպէս արասցէ ծառայ քո: Եւ յայնմհետէ մեմփիբոսթէ բնակէր յերուսաղէմ, զի հանապազ ի սեղանոյ արքայի ուտէր:

Ընդ այն աւուրս՝ յետ վճարելոյ պատերազմին ընդդէմ ասորւոց, որ ըստ ակնարկելոյ գրոյն եւ զև ի վերջին աւուրս աշնայնոյ, ետ դաւիթ դուլ և դադար զօրաց իւրոց զայն ձմեռն: Այլ չէր մոռացեալ զանիրաւութենին ամմնացւոց, զոր անիրա-

ւեցան՝ ինա, այնպէս անարգելով զՀրեշտակս իւր. յոր դարձեալ նոր անիրաւութեի յաւելին՝ յարուցանելով զասորիս ընդդէմ նորա. և թեթև ինչ էր զոր կրեցինն ի նախընթաց պատերազմի. զի՝ ի դարձուցանել դաւթի զամենայն զօրութիւն իւր ընդդէմ ասորւոց, ամենայնիք չընկալան զարժանաւոր հատուցումն, այլ դոյզն հարուածով վերծեալ՝ ի ձեռաց աբեսսայ՝ խոյս ետուն՝ իքաղաք իւրեանց։ Ալ ասն որոյ՝ ի դառնալ յաջորդ գարնան, յորում ժամանակի սովորութի էր թագաւորաց ելանել՝ ի բանակ զօրաց իւրեանց, և սկիզբն առնել պատերազմի, առաքեաց դաւիթ զյովաբ և ընդ նմա զամենայն զզօրս իսրայէլի ընդդէմ ամմնացւոց՝ պաշարել զռաբաթ մայրաքաղաք նոցա. իսկ ինքն արքայ դաւիթ նստեր յերուսաղէմ։ Լոկ՝ թէ անձամբ երթեալ էր՝ ի բանակ անդր, և այնպէս հեռի՝ ի դատարկութենէ՝ չէր արդեօք անկեալ զանկումն զայն արտասուելի։

Վ[անդի յաւուր միում, մինչ զկնի միջօրէական քնոյ յարուցեալ ընդ երեկս յանկողնոյ իւրմէ՝ ըզգնայր՝ ի վերայ տանեաց թագաւորին, ի հայել նորա այսր և անդր՝ ետես՝ ի տանեացն կին մի հանդիպ իւր, զի լուանայր՝ ի տանիս տան իւրոյ, ըստ սովորութէ եբրայեցւոց՝ որք բազում անգամ լուանային զմարմինս իւրեանց՝ ի սրբութէ յօրինաւկան պղծութէնց. և կինն էր գեղեցիկ տեսլեամբ յոյժ։ Այս առաջին հայեցուած ըստ դիպաց իմն եղև, վասն որոյ և անմեղ. բայց՝ ի յառել անընդդուշութէ զհայեցուածն՝ սկիզբն եղև մեղաց, զի վառեցաւ անտի՝ ի սբ և՝ ի մաքուր սրտին դաւթի հուր ցանկութենէ այնպէս, զի ոչ պատիւ անձինն, և ոչ երկիւղն ՚ի՝ յոր՝ ի մանկութէ՝ նեալ և հաստատեալ էր, զօրեցին շիջուցանել։ Այնդրեաց՝ թէ ո՞վ էր կինն. իբրև ասացաւ նմա, թէ՝ ի բերսաբեէ դուստր եղիաբայ՝ կինն ուրիայ քետացւոյ, առաքեաց հրեշտակ առ նա. գուցէ զինա ինքն, որ իբրև դիտակ ետ զպատահանին. որ և կամ առաւել ընդոհս գտանելոյ առաջի արքային, և կամ

առ երկիւղն չանկանելոյ ՚ի ցասումն նորա, գտաւ պատրաստական ՚ի գործակցութիւն մեղաց նորա. զոր ապաքէն կարօղ էր խափանել, եթէ արհամարհեալ էր ակնածութիւնք ինն առաջի դնել արքայի զանպատեհութիւնն հրամանին, և զծանրութիւնն մեղացն։ Այն զի սիրտ դաւթի թէպէտ ՚ի ժամուն բորբոքեալ էր, բայց ՚ի քնուստ բարի էր, և միշտ ՚ի բարին յօժարեալ, որով և յուսալի էր սակաւ բանիւք համեստ աղդարարութիւն ածել զնա ՚ի զգաստութիւն. որպէս արար աբիգեա կին նաբաղոս, որում յետոյ ընորհս կալաւ դաւիթ, զի արգել զնա ՚ի չարեաց, զոր ՚ի բորբոքմանն սրտմտութեան իւրոյ հանդերձեալ էր գործել։ Այլ ըստ սովորականն ասից՝ այս միայն է թագաւորաց և իշխանաց, զի չեն պակաս ՚ի տունս նոցա մարդահաճոյ շողոմարարք, որք պատրաստ են և յանկարգս և յանպատեհ իրս հաձեցուցանել զտեարս իւրեանց. որպէս արար նա՛ ոք և իցէ, յորոյ ձեռն ած դաւիթ զբերսաբեէ ՚ի տուն իւր՝ թերևս գիշերային, և կատարեաց ընդ նմա զմեղսն. և դարձաւ բերսաբեէ ՚ի տուն իւր, և գտաւ յղացեալ. զի էր նա ասէ գիրն՝ սըրբեալ ՚ի դաշտանէ իւրմէ։

Այլ նորա ուրիա՝ կոչիւր քետացի, զի կամ առ ժամանակ մի բնակեալ էր ՚ի գիթ ինքն կամ նախնիք նորա, և կամ զի ծննդեամբ քետացի գոլով դարձեալ էր ՚ի հրէութիւն ՚ի պաշտօն այ ձշմարտի. և էր մի յերևելի զօրապետացն դաւթի, զի ՚ի գիրս. Բ. Ընդ. իգ. 39. և ա. Ճառ. ձա. 41. ՚ի կարգս նշանաւոր զօրավարաց դաւթի յանուանէ յիշատակի և ուրիա քետացի։ Այնդ այն աւուրս ուրիա էր յերկրին ամմնաացւոց ՚ի բանակն ընդ յովաբայ՝ ՚ի պաշարումն ռաբաթ քաղաքին նոցա։ Այլև ազդ եղև դաւթի յղութիւնն բերսաբեէ, կամեցեալ պահել զպատիւ անձինն և զնորա, վաղվաղակի հրեշտակ արձակեաց առ յովաբ ՚ի բանակն՝ պատուիրելով նմա առաքել զուրիա յերուսաղէմ։ Այնր ուրիա, եհարց նմա դաւիթ վասն զօրուն իւրոյ, և վասն ամմնաացւոց և վասն այլոց իրաց՝ որչափ ինչ

բաւական համարէր առ հաւատացուցանել ուրիայի, Թէ պատճառ կոչէլոյ զնա արքայի էր լոկ յաղագս տեղեկանալոյ զհանգամանաց պատերազմին։ Այլ ապա ասաց նմա երթալ ի տուն իւր և լուանալ զոտս ըստ սովորութեանն այնց ժամանակաց՝ և հանգչիլ. և առ ի ցոյց սիրոյ որ առ նա առաքեաց զկնի նորա մեծախորտիկ ընթրիս։ Այլ ուրիա այր պատերազմական՝ փոխանակ ննջելոյ ի տան իւրում, եկն և ննջեաց առ դրան արքայի ընդ այլ թիկնապահ զինուորս նորա. որ իբրև ծանուցաւ դաւթի, կոչեաց զուրիա, և իբր խնայելով ի նա ասէ, ոչ ի ձանապարհէ եկեալ ես դու, ընդէր ոչ իջեր ի տուն քո փոքր ինչ հանգիստ առնուլ յաշխատութենէ։

Այս պատասխանի քաջ զօրավարն արժանի իւրումն գովանի արիութենէ. Այնմ մեծ և ինձ ասէ, մտանել ի տուն իմ ուտել և ըմպել և ննջել ընդ կնոջ իմում. ուր տապանակն ՅՀՎ, և իսրայէլ և յուդա բնակեալ են ի վրանս, և տէր իմ յովաբ և այլ զօրավարք տեն իմոյ կան ի բացի գետնախշտի. կենդանի է անձն քո՝ Թէ արարիս զբանդ զայդ։ Այս վսեմական խորհուրդք քաջ զօրապետիս բարձրացուցանէր զյարդ նորա ի միտս արքայի, այլ ի ժամուն ոչ ախորժէր նա լսել զայն. բայց և այնպէս անկ էր դէթ առ երեսս ցուցանել հաճութենէ, ընդ որ ի սրտի դժուարահաճ էր։ Վասն որոյ ասաց ցնա մնալ անդ զայն օր. և ի վաղիւն կոչեաց զնա ի սեղան իւր, և ետ նմա ուտել և ըմպել առաջի իւր և արբեցոյց զնա, ակնուանելով Թէ յարբեցութենէ մոռանայցէ զերդումն զոր երդուաւ առաջի դաւթի, և երթայցէ ի տուն իւր. բայց նա անագան ուրեմն եղեալ ի սեղանոյ՝ ննջեաց յանկողնի իւրում անդ առ դրան արքայի ընդ այլ զինուորս նորա. և ի տուն իւր ոչ էջ։ Այս ամենայն հնարէր դաւիթ՝ ցուցանել կամելով աշխարհի, Թէ զաւակն յղացեալ՝ էր ի հարազատ յօրինաւոր հօրէ նորա։

Այլ իբրև ետես՝ զի ոչ յաջողեցաւ խորհուրդ

իւր, յայլ ինչ յոռեգոյն մտաբերեաց. զի ՚ի վաղիւ ընդ առաւօտն գրեաց հրովարտակ առ յովաբ, պատուէր տուեալ նմա կացուցանել զուրիա ՚ի ձակատ՝ ուր առաւել իցէ վտանգն. և ՚ի սկսանիլ մարտին՝ յետս դարձցին ՚ի նմանէ, թողեալ զնա միայն ընդդէմ թշնամեաց, զի հարցի և մեռցի: Ով զիարդ բազում անգամ խորք զևորս կարդան, որպէս ՚ի սահիլ միանգամ ոտից ընդ գառ ՚ի վայր՝ այնուհետև ՚ի վէմ ՚ի վիհ գահավիժ բերի ոք անդնդասոյզ լինել: Ո՞չ այս այն դաւիթ է այրն ըստ սրտին իմոյ, ամենայնիւ առաքինին հեզն և անօխակալն, որ չհշխեաց երբէք ձեռն միել ՚ի սաւուղ մահուչափ թշնամին անձին նորա, զոր երկիցս մատնեաց ՚ի ձեռս նորա. այն զի և ընդ կտրել զգրատ վերարկուին սաւուղայ՝ զղջացոյց զնա սիրտն իւր: Ապա ուստի՞ եղև նմա զայսպիսի քաջ և հաւատարիմ զօրավար՝ առանց այլ ինչ յանցանաց, բայց զի կին գեղեցիկ էր նորա, անխիղճ ՚ի մահ դատակնքել. յայտ է թէ ՚ի բռնացեալ ցանկութենէ. որ տայ անցանել ընդ ամենայն անօրէնութիս, որք ձահաւոր թուխցին ՚ի մնուցանել, և կամ ՚ի ծածկել զղազրալին զայն կիւրս: Այլ մեծագոյն յանդգնութենէ դաւթի այն եղև, զի նմին իսկ ուրիայէ յանձնեաց տանել առ յովաբ զգիրն՝ որ ունէր զդատակնիք մահուն իւրոյ:

Յովաբ գոլով ՚ի պաշարման անդ քաղաքին՝ կատարեաց անյապաղ զպատուէրն արքային. կացոյց զուրիա ՚ի գլուխ գնդի միոյ, և առաքեաց զնա յարձակիլ ՚ի խրամատ լինչ պարսպաց քաղաքին, ուր գիտէր թէ արք զօրաւորք կան ՚ի պահպանութենէ խրամատին. գնաց ուրիա, և իբրև մերձեցաւ ՚ի պարիսպ անդր, նետք ամենայնոյ իբրև տարափ թօթափիէին ՚ի պարսպայ անտի. միանգամայն ՚ի նմին ժամու և ՚ի քաղաքէն բուռն զօրութիւն ելին, և անդ առ պարսպօք գեւնդն ուրիայ չունելով օգնութենէ ՚ի յետուստ, պաշարեցաւ ՚ի թշնամեաց. ուր և անկաւ ինքն, և բազումք ՚ի գնդէ անտի նորա: Այս կարգադրութենէ չէր ըստ հրամանի արք

քային, զի կամք նորա էին՝ Թէ ուրիա միայն Թողցի ի վտանգ, զի մեռցի. ոչ եթէ զի այնչափ արք ի զօհ մատնեսցին վասն նորա։ Այլ զի երևի Թէ չէր փոքր հարուածն. ընդ որ և յովաբ ինքնին կասկածէր՝ Թէ բարկանայցէ արքայ. վասն այնորիկ խրատ ետ հրեշտակին, զոր առաքեաց տանել զբոյց արքայի, Թէ ի պատմել զամենայն անցս պատերազմին, եթէ տեսանիցէ ելանել ցասմանն արքայի, վաղվաղակի յարեսցէ զկնի, Թէ և ուրիա քետացի մեռաւ. գիտելով զի հաճութիւն ընդ մահ միոյն՝ մեղմեսցէ զցաւ մահուն այլոց։

Այնմ հրեշտակն յերուսաղէմ, և մտեալ առաքայ՝ պատմեաց նմա զամենայն ինչ, զոր պատուիրեաց նմա յովաբ. բարկացաւ արքայ և ասէ. ընդ ի՞ր մերձեցայք դուք ի քաղաքն մարտնչել. ո՞չ գիտէիք Թէ ի վերուստ ի պարսպացն նետաձիգ լինին. և ո՞չ յիշեցիք զաբիմելեք զորդի յերոբաղայ, զոր սպան կին մի՝ բեկոր երկանի ընկեցեալ ի վերայ նորա ի վերուստ ի պարսպէն. և ընդէր մօտեցայք ի պարիսպն։ Այժ պատասխանի հրեշտակն զի արք քաղաքին ելեալ արտաքս յարձակեցան ի վերայ մեր. և մեք վանեալով զնոսա՝ հասաք ի վերայ նոցա մինչև ի դուռն քաղաքին. և նոքա նետաձիգ եղեն ի ծառայքս քո ի վերուստ ի պարսպէ անտի. և մեռան ի ծառայից արքայի. ընդ որս և ծառայ քո ուրիա քետացի մեռաւ։ Այն իբրև լուաւ արքայ, նոյն հետայն զկնի բարկութիւն նորա, զուարթացան երեսք նորա, փոխեցաւ և բարեառնորա. զի փոխանակ կշտամբանաց՝ բանս քաջալերութիւն առաքէ յովաբայ ի ձեռն հրեշտակին ասել ցնա, դիպուածք պատերազմաց անհաստատ են, յաղթութիւնք երբեմն յայս կոյս և երբեմն յայն կոյս դառնան. մի՛ անկցի սիրտ յովաբայ ի դիպուածոյ այսի, այլ զօրացուսցէ զանձն, և սաստկացուսցէ զպատերազմն, և կործանեսցէ զքաղաքն։

Այսպէս երկու մեծամեծ վրիպակք գործեցան. մին Թերևս կամաւոր ի չարութիւն յովաբայ. իսկ միւսն ակամայ յանզգուշութիւն դաւթի. որք բա-

ական եղեն ՚ի հրատարակել զգաղտնին, զոր այնչափ զգուշութ՚ ջանահնար լինէր դաւիթ ծածկել։ Օ ի արթնամիտ պատգամաւորն խրատեալ ՚ի յովաբայ՝ ցածուցանել զցասումն արքայի, ընդ առնէն թէ մեռաւ ուրիա՝ տեսանելով զարքայն ՚ի լուր այնր մահու խաղաղիլ, կարօղ էր վաղվաղակի ՚ի միտ առնուլ, թէ ուրեմն մահն այն էր ՚ի հրամանէ արքայի. և թէ այլք զոհեցան լուկ վասն միոյն այնորիկ. ապա թէ ոչ՝ մանաւանդ առաւելոյր զբարկութիւն նորա մահ ուրիայի այնպիսի հաւատարիմ զօրավարի՝ քան թէ ցածուցանէր։ Դաւիթ ընդ յանկարծական լուր մահուն ուրիայ յափշտակեալ ՚ի յուշոյ՝ ոչ զգուշացաւ ՚ի չյայտնել արտաքս զնեղութին հաճութի՛ իւր. բայց յովաբ երևի թէ չարութ՚ խօսեցաւ, զի հրատարակեսցի ծածուկն։ Դաջ գիտէր նա, թէ բոլոր բանակն ունէր ստգտանել զանխոհեմ կարգաւորութիւն նորա՝ այնչափ զօրս մատնելով ՚ի յայտնի վտանգ կորստեան առանց ստիպող ինչ հարկի, և առանց բաւական օգնականութե՛. յորմէ չունէր այլազգ արդարանալ, եթէ ոչ յայտնելով զպատուէրն տուեալ նմա յարքայէ։ Դուրին է զինչս, մանաւանդ թէ և զկեանս իսկ դլխովին տալ և զոհել վասն թագաւորին, քան թէ զպատիւ անձինն։ Յովաբ իբրև հպատակ հնազանդեցաւ թագաւորի իւրոյ. բայց իբրև զօրավար չէաւ յանձն զփառս զինուորութե՛ իւրոյ զոհել ծածկութի՛՝ նմա յանձնելոյ յարքայէ։ Այն ոմանք որք հաստատեն, թէ բազմաց ՚ի բանակին ցուցեալ էին յովաբ զհրովարտակն արքայի. այլ չէք ՚ի գիրս նշանի ինչ այդպիսի. և չէր իսկ հարկաւոր, զի խրատն զոր ետ հրեշտակին, բաւական եղև հրատարակել զայն ՚ի բանակին։ Այս անհաւատարմութի՛ յովաբայ ՚ի գաղտնիս արքայի՝ կարծի ըստ ոմանց լինել մի յերից յանցանաց նորա, յորս սակս մահու արժանի գտաւեցաւ զնա դաւիթ. զգործադրութի՛ն յանձն արարեալ որդւոյ իւրում սողոմոնի. որպէս տեսցուք յիւրում տեղւոջ։

Իբրև լուաւ բերոսաբէէ, եթէ մեռաւ ուրիա

այրն իւր, սակս առ ի վերայ նորա ըստ սովորութե՛ երթայեցւոց աւուրս եօթն. և ի կատարել աւուրցն՝ վաղվաղակի առաքեաց դաւիթ, և հրապարակաւ ած զնա ի տուն իւր. և եղև նմա կին։ Այսմ՝ ևս վրիպեցաւ դաւիթ թերևս յափշտակեալ ի կոյր ցանկութե՛, այսպէս փութացուցանելով զամուսնութի՛ն. զոր անտի ունիմք իմանալ, զի ի յանդիմանել նաթանայ զմեղսն արքայի՝ յանդիմանէ և զայս ամուսնութի՛, որ ըստ ինքեան չէր մեղանչական. այլ զի փութացոյց յառաջ քան զպատշաճն, որով և յայտնի արար եթէ չիւրմէ առնեցաւ մահ ուրիայ ի պատճառս կնոջ նորա, ի գայթակղութի՛ մեծ ժողովրդեան։ Ոչ յայտ ձշտիւ, թէ որչափ ժամանակս եկաց դաւիթ յայն մահահրաւէր քուն թմրութե՛ հոգւոյ. ոմանք դնեն ամիսս ութ կամ ինն. այլք տարի մի, ջափելով ի յղութե՛ բերսաբէի մինչև ցծնանել զորդին, որ ըստ եօթանասնից և վուլկատային համնձայն բնագրի երթայեցւոց՝ եղև յառաջ քան զգնալ նաթանայ առ դաւիթ. զի ի յանդիմանել զնա, ասաց. * Արդ ինն քո, զոր ծնաւ քեզ՝ մահու մեռցի։ Թէպէտ արաքացին և ասորին՝ յորմէ և մերս ապառնի ընդ եեանուն * զոր ծնանեցոց է քեզ։

Այլ եթէ այսպէս և եթէ այնպէս, այն հաւաստի երևի, թէ ընդ ամիս ինչ յապաղեաց դարձ դաւթի. մինչև ՚ած՝ որոյ ողորմութե՛ չիք չափ և սահման, գթացեալ ի նա՝ առաքեաց զնաթան մարգարէն, որ դիտելով զարդարութի՛ և զիրաւսիրութե՛ արքային՝ պատրաստեաց զոգի նորա առ դառն ինն ձշմարտութի՛ հանձարեղ առակաբանութե՛ն. Արքայ, (ասէ խօսելով առ նա,) արք երկու էին ի մի ի քաղաքաց թագաւորութե՛ քո, մին մեծատուն, և միւսն աղքատ. մեծատանն էին հօտք և անդեայք բազումս յոյժ. իսկ աղքատին և ոչինչ, բայց որոջ մի փոքր, զոր ստացեալ և ապրեցուցեալ և սնուցեալ էր ի տան առաջի աչաց իւրոց ի միասին ընդ զաւակս իւր. մինչ զի ի հացէ նորա ուտէր, և ի բաժակէ նորա ըմպէր, և ի ծոց

նորա ննջէր. և էր նորա իբրև դուստր։ Եւ՝ յաւուր միում եկն հիւր անցաւոր առ այրն մեծատուն, և նա՝ (Հաւատաց արքայ,) խնայեաց առնուլ ի հօտից իւրոց և յանդիւց պատրաստել կերակուր հիւրոյն անցաւորի, այլ յափշտակեաց զմիակ որոջ տառապեալ աղքատին, եղեն և նովաւ կերակրեաց զհիւրն եկեալ առ նա։ Եւ ահա էր ձշգրիտ նկատագրութիւն գործոցն արքայի, այլ նա ոչ իմացաւ. նմին իրի ի սրտմտութիւնն բարկութիւնէ վառեցաւ ընդդէմ առն անիրաւի. և անուամբ օտարի զանձն իւր դատապարտեաց. * Կենդանի է Տէր ասէ, զի որդի մահու է այրն որ արար զայն և զորոջն տուժեսցի եօթնապատիկ, զի ոչ խնայեաց։

Իբրև հաւ մարգարէն ի բերանոյ նորա զդատակնիք անձին նորա, եբաց զպատրուակն, և ասէ ցնա. դո՛ւ ես այրն, որ արարեր զայն։ Եւ՝ դու լո՛ր զոր ասէ ցքեզ Տէր Աստուած իսրայէլի. Ես եմ որ օծի զքեզ թագաւոր ի վերայ ամենայն իսրայէլի. ես փրկեցի զքեզ ի ձեռաց սաւուղայ թշնամւոյ քոյ. ես ետուր քեզ զամենայն ինչս և զդահձս նորա. և Թողի քեզ զկանայս նորա, ընտրել ի նոցանէ ընդ որ հաճեսցի անձն քո. և ետուր քեզ զիսրայէլ և զյուդա. և Թէ այս ամենայն սակաւ իցեն, յաւելից քեզ դոյնչափ և աս։ Իւ դու ընդէր անարդեցեր զօրէնս Տեառն՝ առնել չար առաջի աչաց նորա. զուրիա քետացի զայր արդար և անմեղ մատնեցեր սրոյ որդւոցն ամմնայ, և նորին անպարտ արեամբ գնեցեր քեզ ազատութիւն՝ առնուլ զկին նորա քեզ կնութեան։ Եւ՝ լո՛ր և զպատիժն քո. այսպէս ասէ Տէր, սուրն վրէժխնդիր մի՛ հեռասցի ի տանէ քումմէ մինչև յաւիտեան. յարուցից ի տանէ քումմէ պատճառս վրէժխնդրութեան իմոյ ի վերայ քո։ Առ զացուցից զի առաջի աչաց քոց առցին կանայք քո և խայտառակեսցին յանդիմանս արեգականս այսորիկ։ Դու արարեր զայդ ի ծածուկ ի խաւարի ի տան քումմ, և ես Թոյլ տաց զի նախատինք քո լինի ի հրապարակի յանդիմանն ամենայն իսրայէլի։

Ասէ մարգարէն խօսեր զայսոսիկ, բայան աչք

հոգւոյն դաւթի ծանեաւ զաշխարելի վիճակ անձինն առաջի ՚ի, խոնարհեցաւ, պատկառեցաւ, և ՚ի խոց անողջանալի խոցեցաւ սիրտ նորա և հոգի. մինչև կարկիլ լեզուի նորա, և չզօրել ասել ինչ, բայց միայն ՚ի ձեռն գրոյ։ Այլ զի այս խոնարհ և սրտառուչ խոստովանութեի յաւաջ գայր ՚ի զղջացեալ և ՚ի բեկեալ սրտէ՝ հանդերձ աներկբայ յուսով յանսպառ ողորմութեի ՚ի, սրտագէտն ՚ի՛ծ տեսեալ զկատարեալ ապաշխարութեի նորա՝ մխիթարեաց զնա ՚ի ձեռն մարգարէին, եթէ եթող զմեղս նորա, և զպատիժն յաւիտենական որում արժանի գտաւ. իսկ զաստի կենաց ժամանակեանն պատիժ՝ թէպէտ թեթեւացոյց, զի մի մեռցի վաղաժամ, բայց ոչ եբարձ. և զի դու ասէ մարգարէն՝ քոյովդ գայթակղութեք ետուր պատճառս հեթանոսաց թշնամեացն ՚ի՛ հայհոյել զանուն ՚ո՛ր նորա, կամի ՚ի ձեռն պատժոց քոց դարձուցանել զպատիւն իւր. և առնել, զի որք ծանուցեալ զմեղս քո՝ հայհոյեցին զնա. տեսեալ զպատիժ քո՝ օրհնեսցեն զնա։ Այս այն եղիցի սկիզբն գործադրուե պատժոցդ. մանուկդ՝ անհարազատ զոր ծնաւ քեզ բերսաբեէ կինն ուրիայ, մահու մեռցի։ Ա՛յս ասացեալ եթող զնա մարգարէն, և գնաց ՚ի տուն իւր. իսկ դաւիթ եմուտ ՚ի սենեակ իւր լալ և աշխարել. քանզ ձանձրացեալ էր կարի ինն վայելուչ էն արտասուք ևս և յաչս թագաւորաց, յորժամ սիրտք նոցա ետուն տեղի մեղաց։

Ի՛ յանդիմանութե ասաց նաթանայ՝ երկու ինչ կայ, զոր արժան է քննել։ Առաջինն է՝ թէ վասն ի՛ր ՚ի յանդիմանել նորա զարքային վասն մեղաց, ոչ յիշէ զընութեին, որ եղև առաջին մեղք, և պատճառ այլոց մեղաց. այլ միայն զսպանութե՛ին ուրիայ, և զառնուլ զկին նորա իւր կնութե. զոր և երկիցս յիշէ. ուր այն ամուսնութե՛ի չէր մեղանչական, թէպէտ չար ձանապարհաւ եղև. զի զկնի մեռանելոյ ուրիայ, անայր ինձալով կնոջն՝ կարէր ըստ օրինաց ամուսնանալ ընդ ումէ և կամէր. վասն որոյ և դաւիթ կարօղ էր առնուլ զնա օրինաւք ՚ի կնութե. զու-

յե և պարտական իսկ էր, վի յղացոյց զնա։ Ա.ա այս սովորաբար ասէն մեկնիչք, Թէ՝ ի դէմն ա ծելով դաւթի զառնուլ զկինն ուրիայ, ոչ եթէ զամուսնութիւնն ընդ կնոջն յանդիմանէր, այլ զընութիւնն. յորմէ բերաւ՝ ի մարդասպանութիւն. վասն որոյ առ այն բան գրոյն, Թէ * չար թուեցաւ բանն՝ զոր արար դաւիթ, յաչս տեառն։ զոր յարէ զկնի պատմելոյն, Թէ առաքեաց դաւիթ յետ մեռանելոյն ուրիայ, և ամիուսեաց զբերսաբեէ՝ ի տուն իւր, և եղև նմա կին, ասեն՝ չար թուեցաւ, ոչ վի առ զբերսաբեէ կնութիւն, կամ վի՝ ի տուն իւր ամիուսեաց զնա. յորմէ ոչինչ օրինաց արգելուին զգաւթի, մանաւանդ վի այնու ծածկէր զանարդանս կնոջն, և ազատէր՝ ի քարկոծմանէ, առ որ պարտաւոր էր ըստ օրինացդ. այլ չար թուեցաւ ընութեան նորա, յորմէ առնեցաւ և մահն ուրիայ։ Ա.յլ կեսարիոս կաղինոս, որ գուն գործէ յամենայնի զնան պրոյն ըստ Ճառին առնուլ, և ըստ այնմ յարմարել զպատմութեանն իւր, նորալուրս բարբառի՝ ասելով. ոչ կիշեաց նաթան զընութենին, քանզի կարի հասանելի երևի, Թէ՝ ի կատարել դաւթի զգործ ընութեան, նոյն ժամայն հարեալ՝ ի խղճի. և՝ ի միտ առեալ զծանրութեան մեղացն, ստիպացեալ եղե՝ ի բուղոր սրտե, և ջերմ ապաշխարութեամբ քաւեալ։ Իմն այսպիսի մեկնութեան նորա այս է. զի յետ առաքնոյ գործոյն, զոր գործեաց՝ ի ծածուկ, այլ ոչ ևս կրկնեաց ասէ զնոյն, ոչ յառաջ քան զկոչել զուրիա՝ ի բանակէն, և ոչ զկնի դարձուցանելոյ զնա անդրէն՝ ի բանակն. զոր ապաքէն կարօղ էր առնել, ունելով զամենայն դիւրութեանն առ այն. որ է նշան Ճշմարիտ ապաշխարութեան։ Այս չէ ինչ ընդդէմ այսմ մեծաջան փոյթ նորա՝ ի ծածկել զանկումն իւր, զոր կարէր սրբութեամբ առնել առ՝ ի պահել զպատիւ իւր, և զպատիւ կնոջն. այն զի և պարտապան իսկ էր գուն գործել, զի մի մեղքն գաղտնի գործեալ՝ հրապարակեսցի՝ ի գայթակղութիւն։ Ա.ան որոյ ամենայն հնարք զոր հնարեցաւ առ այն ծածկութեան, մինչև էր եկեալ՝ ի յետին յուսահատ

տուԹի՝ տալով զդատակնիք մահու ուրիայ, բարի էին. նմին իրի և նաԹան ոչ յիշեաց զընուԹին, զի քաւեալ էր այն առաջի ՅՍ. այլ միայն զմարդասպանուԹին, և զփուԹանալն առնուլ զկին նորա ՚ի գայԹակղուԹի աչխարհի. զի այնու յայտնի արար ԹԷ յիւրմէ եղև մահ ուրիայ ՚ի սակս կնոջն. և եկաց մնաց ՚ի նմին մեղս մինչև ցյանդիմանուԹիւնն նաԹանայ։ Ա.յս մեկնուԹի՝ որ է ըստ առանձինն կարծեաց կաղինոսի, անլուր է առ այլս, և չէ զերծ յընդդիմուԹեց. իսկ առաջինն հասարակ է գրեԹէ ամենայն մեկնչաց, և համեմատ տեսուԹե բանին ՏԲ գրոց։

Երկրորդ քննելին այս է, ԹԷ նաԹան մարգարէ մտերիմ դաւԹի, և առաջնորդ նմա յիրս ծառնուն. և նախանձայոյզ ՏԾայնն օրինաց՝ ընդդէմ այնչափ ժամանակս յապաղեաց զյանդիմանուԹինն։ Ա.ռ այս ոմանք ասեն, ԹԷ՚ի սկզբան անդ ոչ նըշմարեր ՚ի դաւԹի յօժարուԹի և պատրաստուԹի սրտի ընդունելոյ զյանդիմանուԹինն ՚ի բարի, և պատուդ արժանաւոր ապաշխարուԹե բերելոյ։ Ա.յլ այս չերևի հաւանելի. քանզի դաւիԹ անդստին ՚ի քնե գոլով հեզ և քաղցրաբարոյ, և միշտ պատրաստ և յօժարամիտ ՚ի բարին, զոր և նաԹան այնպէս Ճանաչէր, չկայր ՚ի նմա աեղի այդպիսի կասկածանաց։ Ի ման որոյ այլք ասեն, ԹԷ գուցէ ոչինչ գիտեր նաԹան զանցից անցելոց, զորմէ ԹԷպետ բազումք խօսէին, բայց գաղտ և յունկանէ, զի մի հասանիցէ յականջս արքային. և կարի հաւանական է ԹԷ ոչ ոք իշխեաւ իցէ խօսել զայնմանէ ընդ նաԹանայ, գիտելով զնա բարեկամ արքայի։ Ա.ւ կամ ԹԷպետ գիտէր, բայց գուցէ հաւատայր ԹԷ դաւիԹ ղղջացեալ և ապաշխարեալ իցէ. և արտաքին պատՃառն իսկ գայԹակղուե բարձեալ էր. զի ուրիա մեռեալ էր, զոր դաւիԹ ոչ կարէր դարձուցանել. և հետագայ ամենանուԹիւնն օրինաւք էր եղեալ, զոր չէր պարտ լուծանել։ Ա.յսպիսի կարծեաւք եկաց մնաց նաԹան, մինչև ՏԾ ինքնին յայտնեաց նմա զիրսն, և առաքեաց զնա առ ար-

քայ ՚ի դարձումն նորա։ Այլ թէ առ ինչ ՚ած այնչափ յամեցոյց զյայտնուիլն իւր առ մարգարէն, մեզ չէ՛ անկ քննել, այլ խորին խոնարհութիւք երկիր պագանել գաղտնի դատաստանաց նորա։ Այլ հաւատամք թէ կամեցաւ մեզ ուսուցանել, միշտ և հանապազ արթնութիւք հսկել ՚ի վերայ անձանց մերոց, և չվստահանալ թէ ՚ի մեղանչելն կարիցեմք վաղվաղակի յառնել։ Օ՛ի թէպէտ ազատ իցեմք առ ապաշխարութիւն, թէպէտ խրատեալ և լուսաւորեալ, թէպէտ բարեկրօնութիւք կեցեալ, և յառաքինութիւնս արմատացեալ, և ՚ի մեղաց բացէ ՚ի բաց հեռացեալ, սակայն և այնպէս յանկանիլ մեր՝ ոչ կարեմք խոստանալ մեզ արագ ապաշխարութիւք դառնալ անդրէն ՚ի ընդրկս ՚այ։ Օ՛ի ահա օրինակ առաջի աչաց ունիմք զմեծն և զքաջանչելին ՚ի սրբութիւնէ զայրն ըստ սրտին ՚այ, որ առ դոյզն ինչ անզգուշութիւն՝ պարտաւոր գտեալ երկուց սոսկալի մեղաց, եկաց մնաց ՚ի նոսա անապաշխար ընդ ամիսս ինն կամ տասն. ոչ յարեաւ, ոչ ապաշխարեաց, եթէ ոչ՝ արտաքոյ կարգի առանձին օգնութիւք ՚ան ՚այ։ Այդ՝ եթէ այն օգնութիւն այսչափ անագան տուաւ դաւթի, ո՞վ վստահանայցէ՝ թէ ոչ միայն փութով առնուցու, այլ թէ կարիցէ՞ արդեօք երբէք առնուլ. քանի՛ քանի՛ անձինք այսպիսի յուսով մեղան, և անյոյս կորեան։ Այլ որ ամենեցուն է գիտելի, փութասցին մեղուցեալք նմանօղ լինել ապաշխարութիւնն դաւթի և որպէս գիտացին անկանել որպէս գնա, ուսցին և կանգնել որպէս գնա ողորմութիւք ՚ան, ՚ի ձչմարիտ սրտէ երկրորդելով գնորայն հեծութիւն. * Ողորմեա՛ ինձ ՚ած ըստ մեծի ողորմութիւն քումմ. և որ ՚ի կարգին։

Ա՛ահ անդրանիկ որդւոյ բերաբերէ : Ծնունդ Սողոմոնի : Ընտրեալ մայրապաղատի ամենայնից և խիստ հարուածք նոցա :

Յետ յանդիմանութեանն նաթանայ մարգարէի , կայր ըզ արքայն ապաշխարող ի ծուփս երկուց հակառակ խորհրդոց . յիշատակ մեղացն իւրոց ծածկէր զնա ամենայն , և գթութեի ինն հաշտեալ ընդ նմա՝ ընդայր զսիրտ նորա ուրախութիւք : Ապառնալիք մարգարէին դողացուցանէին զնա . և յոյսն՝ թէ ապառնալիքն այն իցեն ընդ պայմանօք , զորս թերևս գառնութեամբ ցաւոց , և արտառուչ պաղատանօք առ ած՝ կարիցէ հեռացուցանել յիւրմէ , սիրելիք զնա : Յայսպիսի խորհուրդս էր գաւիթ , յորժամ ազդ եղև նմա , թէ մանուկն զոր ծնաւ նմա բերաբաթէ հիւանդացաւ հիւանդութեամբ մահաբեր . զոր իբրև լուաւ՝ նոյն ժամայն սուգին յուսով եմուտ մեկուսացաւ ի սենեակ իւր . անկաւ տարածեցաւ ի գետին , լայր և պաղատէր առ ած , և պահօք և անտուտաղութիւք ձգնէր վասն մանկանն ողջութեան : Այլ թէպէտ իշխանք և պաշտօնեայք նորա յորդոր մատուցեալ աղաչէին զնա խնայել յանձն , չափ դնել անպայման տրտմութեանն , յառնել և առնուլ կերակուր . բայց նա ոչինչ անսաց նոցա , ոչ յարեաւ ի գետնոյն , և ոչ եկեր ընդ նոսա . այլ եկաց միշտ ի պաղատանս և ի հեծութիւնս և ի լալիւն մինչև ի մեռանիլ մանկան . որ եղև յաւուր եօթնեերորդի ծննդեան կամ հիւանդութեանն նորա : Այլ ոք իշխէր զայս ցաւագին գոյժ տալ արքայի , որ դեռևս էր ի գետնի յարտասուս և յողբս համակեալ . զի ասէին իշխանքն ցաւակցաբար ցմեռանս , այժմ զի հաւատայ թէ տակաւին կենդանի է մանուկն , այսչափ տառապի և սգայ , զի՞նչ արասցէ եթէ լսիցէ զմեռանիլ նորա :

Առաւ դաւիթ զշընչիւն նոցա, և ծանեաւ յայլայլութիւնէ երեսաց զնեերքին խռովութիւն նոցա. եհարց՝ եթէ մեռեա՞լ իցէ մանուկն. նոքա ոչ թագուցին. այո՛ ասեն, մեռաւ։ Գաւիթ զկնի ցուցանելոյ զգուշութիւն գորովական հօր, աստ երևեցոյց զանընկճելի արիութիւնն սքանչելագործն. զի՝ ի զարմացումն ամենեցուն՝ որոց անդն կային՝ յարեաւ վաղվաղակի՝ ի գետնոյ, լուացաւ և օծաւ, յարդարեաց զհերս գլխոյն, փոխեաց զհանդերձս, և արքայական շքով եմուտ՝ ի տուն տեառն, և երկիր եպագ նմա, որ յամենայնի՝ ի յաջողն և՝ ի ձախողն միապէս երկրպագելին է։ Ապա եկեալ՝ ի տուն իւր, ասաց պատրաստել կերակուր. և նստաւ ուտել, ծայրագոյն անդորրութիւն ցուցեալ՝ ի բանս, և՝ ի դէմս. ընդ որ զարմացեալ պաշտօնէից նորա՝ համարձակեցան հարցանել զնա, թէ ուստի՞ իցէ՝ ի նմա այն խաղաղական անդորրութիւն զկնի մեռանելոյ մանկանն. ուր մինչդեռ կէնդանին էր ասեն՝ պահի՛ր և լայիր, և տքնեիր. և իբրև մեռաւ, յարեար կերար և արբեր։ Նա պատասխանի դաւիթ արժանի իւրումն գերազանց՝ ածպաշտութիւնէ. պահելի սակ և լայն՝ ի հիւանդութենէ մանկանն, զի այն էր մի միայն օգնութիւն՝ զոր կարէի մատուցանել նմա, դիմել առ ածային ողորմութենին պարգևել նմա կեանս. արդ զի մեռաւ մանուկն, ոչինչ օգուտ է լալ և պահել, որովհետև չեմ կարօղ դարձուցանել զնա այսրէն՝ ի կեանս. ես առ նա երթալոց եմ, և նա առ իս ոչ դարձցի։ Ահա այս է պատճառ խաղաղութենէ իմոյ՝ նուիրելով զանձն իմ բոլորովին հաճոյից կամաց տեն։

Ոյր այսպէս դիւրին մխիթարել և սփոփել զբերեսաբեկ. թէպէտ էր նա կին ժրագլուխ և երկիւղած. սակայն կին էր, միանգամայն և մայր էր, և զորօրինակ սէր մեր առ որդին առաւել գորովական է, նոյնպէս և ցաւն ընդ կորուստն առաւել դառն է և դժուարակիր. այն զի՝ գիտէր բերասաբեկ, թէ՝ ի կորուսանել զորդին՝ կորուսանէր զմի՝ ի զօրաւորագոյն յօդից կապելոյ զսէր

ամուսնոյն առ ինքն։ Ամուսնացեալ դաւիթ առ նա, և միխոլարեաց զնա այնու, որով և ինքն միխոլարեցաւ, կատարեալ ապաշխարութիւք հպատակ կալ յամենայնի ածային տնտեսութեանն. և առ ապահովել զնա՝ եւս նմա զամենայն նշանս ամուսնական սիրոյն իւրոյ առ նա։ Այլ ածք իսկ միխոլարեաց զնա, պարգևելով նմա երկրորդ որդի, ի լնուլ զպակասութիւն մեռելոյն. որ նա ինքն է սողոմոն. և մինչդեռ կրեր զսա յարգանսն, եղև ի նմանէ յայտնութիւն առ դաւիթ վասն նորա. ա. Թագ. Ժբ. 9. (զոր կարի հաւանելի է՝ թէ առ առաւել քան զալերութիւն բերսաբէի, յայտնեալ էր նմա դաւիթ) այսինքն՝ թէ որդին որ ծնցի ի նմանէ, եղիցի ի հանգստեան և ի խաղաղութիւն, ապատ ի պատերազմական տաժանմանց. զի հանգուսցէ զնա ինքն ի թշնամեաց շուրջանակի. նմին իրի կամի ածն, զի կոչեսցի անուն նորա Սողոմոն կամ սողոմոն, այն է խաղաղարար։ Այլ ապահովեաց զնա, թէ յամենայն որդւոց իւրոց, զոր ծնանի նմա կանայքն իւր, սա ընտրեսցի յաջորդ թագաւորութեանն յետ նորա։ Ըստ ժամանակին ծնաւ բերսաբէէ որդի կայտառ և գեղեցիկ. զոր դաւիթ՝ ուսեալ ի յայտնութենէ ինն, կոչեաց Սողոմոն. իսկ ածն առաքեաց զնաթան մարգարէ կոչել նմա և մականուն Յեդեդէի, այն է՝ սիրելի ինն, կամ վասն ինն. Բ. Նահ. ԺԲ. 25։ Այլ կատարեցան ի նա խոստմունք ինն. և որպէս եւս զնա բերսաբէէ ի գիրկս իւր մանուկ մատաղ, նոյնպէս յետոյ եւս յաթոռ թագաւորութենէ ի նորածաղիկ հասակի. և ինքն յամենայն կանանց դաւթի եղև տիրապէս թագուհի, և մայր թագաւորին իսրայէլի։ Ուստի և արդ մեզ դառնալ ի կարգ պատմութենէ պատերազմին ընդդէմ ամմնացւոց։

Այլ նախ զի այս նախագրեալ իրք լինէին յերուսաղէմ, բանակ դաւթի առաջնորդութիւք յովաբայ կայր ի պաշարումն ռաբաթայ արքայանիստ քաղաքի ամմնացւոց. որ երկարեաց իբրև տարի մի։ Ոչ որպէս երևի ի կարգէ և ի բնական դասա-

ւորութէ պատմութեան, առումն ռաբաթայ եղև զկնի մեռանելոյ առաջնոյն որդւոյն բերսաբէի։ Այս չէն ինչ զարմանք ընդ այսչափ յապաղումն. քանզի արքայն ամենայ անդ ժողովեալ էր զամենայն զօրութիւն Թագաւորութեանն իւրոյ, և քաղաքն բաց ի հաստահիմն ամրակուռ պարսպայ՝ ունէր շուրջանակի այնչափ խրամն ջրալիցս և ձահիճս, (Թէպէտ գյաբոկ գետն, որ ընդ մէջ քաղաքին անցանէր,) մինչ կոչիլ առասպական անուամբ ծովակ ջրոյ. յորմէ սակս գժուարին էր մերձենալ առ նա. և ոչ գոյին յայնժամ թնդանօթք հրազէնք՝ ի բացուստ հարկանել և քանդել զպարիսպս։ Այլ հարկ էր փոխել զգնացս ջուրց. ցամաքեցուցանել զձահիճս, լնուլ զխրամն մեծամեծս, որպէս զի կարիցեն մերձենալ ի պարիսպս. առ որ բազում և երկար և տարժանելի աշխատութեանէ պէտք էին, և բազում զգուշութեանէ. զի չէին դատարկք ի նետից աղեղնաւորք ամենացեղ կարգեալք ի պահպանութիւն պարսպացդ, նմին իրի հարկ էր երկարել գործոյն։ Ոչուցէ վասն այսորիկ ոչ գնաց գաւիթ անձամբ՝ի քանակ անդր. զի ոչ վարկաւ վայելուչ անձին ընդ այնչափ ժամանակս դեգերիլ՝ի պաշարման անդ։ Այլ չիք քաղաք՝ որ իցէ անառիկ, յորժամ ընդ զօրութեանէ և քաջասրտութեանէ պաշարողացդ՝ գտցի միաբեալ առաջնորդութեանէ իմաստուն, և երկայնամիտ առնականութեանէ։

Յորմէ յայն սահման հասոյց զքաղաքն, զի ոչ ևս կարէր տոկալ պաշարման. վասն որոյ թէպէտ չև էր արարեալ զվերջին յարձակումն, բայց ձշմարտութիւնքն կարօղ էր ասել՝ թէ իւր է. զի՝ի պատրաստի էր տիրել նմա ևրբ և կամէր։ Այս զայս յայտ առնէ նա ինքն յորմէ յառաքել հրեշտակս առ գաւիթ, թէ պատերազմեցաւ ընդ ռաբաթայ, և եհաս առնուլ զքաղաքս ջրոց. և հրաւիրէ զարքայն գալ անձամբ՝ հանդերձ նոր գնդաւ զօրաց, և առնուլ զնա. զի փառք վերջին յաղթութեանէ մի անձին, այլ արքայի տացի։ * Այս արդ՝ ասէ ժողովեա՛ զմնացորդս ժողովրդեանդ, և բանակեսցես

զքաղաքաւս, և առցես զսա. զի մի ես առից զքաղաքաս, և կոչեսցի անուն իմ՝ ի վերայ սորա ‖ : Յո-
վաբ յայս հրաւէր երևի կարի ինն նուրբ խորագիտութիւն վարել ընդ արքայի. զոր այսպէս ընդլայնեն կաղինոս : Վասն զիտեր ասէ զանձն յանցաւոր առաջի նորա՝ որպէս այլով մեսամբ, նոյնպէս և յայտնելով զգաղտնիս նորա վասն մահուն ուրիայ. արդ կամեցեալ սովին դիպողութիւն դառնալ ի ընդրկս նորա, զփառս յաղթութիւն՝ զոր բազմամեայ աշխատութիւն լըր արդէն ի ձեռին ունէր, կէզծեալ ինն խոնարհութիւն երևեցուցանէ արկանել առ ոտս արքայի. բայց իրօք զբովանդակ արդիւնս յաղթութիւն ի նոյն իսկ ի հրաւիրմանն՝ պարծանաք անձին սեպհականէ. Եկ ասէ, զի հասի առնուլ, կամ ըստ եօթանասնից՝ զի առի զքաղաքս : Վասն թէ ոչ՝ եթէ անկեղծութիւն կամէր զլրումն յաղթութիւն ընծայել արքայի, պարտ էր յառաջ քան զհասուցանել զքաղաքն յայն վերջինն սահմանի, (յորում և յետինն ի զինուորաց տեսանէր թէ ոչ մտանէ ի նա, զի ոչ կամի,) հրաւիրել զարքայն. պարտ էր հրատարակել ի բանակին, թէ առ կատարումն գործոյ պատերազմի, հարկ է զի արքայն անձամբ գայցէ հանդերձ միացեալ զօրօքն յօգնութիւն. և զնոյն բան գնել ի բերանս հրեշտակացն, թէ ինքն բազում ինչ արար, բայց դեռևս բազում ինչ կայ առնել ի պաշարման անդ, զոր չէ մարթ ի վերջ հասուցանել, եթէ ոչ գայցէ արքայն գլուխ իւրով. և ծածուկ դրով յայտնել զիրսն ձշմարտութիւն արքայի. որպէս զի ի գալ նորա, կարիցէ վատահութիւն առնել զվերջինն յարձակումն և առնուլ զքաղքն. որով երևեցուցանէր աշխարհի թէ արքայն ի սակաւ աւուրս գործեաց զայն, որում առանց նորա՝ ընդ այնչափ ամիս չէզև հնար ի գլուխ ելանել : Այս էր եղանակ վարելոյ յովաբայ, որպէս զի յաղթութիւնն ձշմարտութիւն տացի արքայի. բայց յովաբ ոչ կարէր տանել, զի փառք իւր այլում տացի : Վասնզի տայր, և կամէր ցուցանել բազում տալ. և զայն ոչ գիտէր, թէ առաջի մեծամեծաց

Նաև բազումն միշտ առ ոչինչ համարեալ է, եթէ տուօղն մնապարծութեամբ տայցէ, և կամիցի թէ պարգևատուն ցուցանիցէ մեծ ինչ առնուլ։ Պարզևք կորուսանեն զարդ իւրեանց, յորժամ մնափառութիք ընծային. մեծադոյն յարդ պարգևին է համեստութիւնն պարգևատուին. որչափ նա փոքրկացուցանէ, այնչափ առօղն առաւել ախորժանօք ընդունի։ Պաւիթ չէր այնչափ ապուշ մինչև չիմանալ զխորհուրդ յովաբայ. այլ չիմանալ երևեցուցանէր, զի՝ ի ժամուն այնպէս ուսուցանէր խոհեմութիւնն. բայց զկնի ժամանակաց՝ յորժամ պատուիրեաց որդւոյ իւրում սողոմոնի թէ զինչ առնիցէ յովաբայ, եցոյց թէ սովին կեղծեալ մեծարանօք ոչ պատրեցաւ ինքն առ՝ ի ներել նմա զքրիստական յանցանս գայթակղեցուցիչս մեծի և փոքու։

Այլ թէ այս՝ կամ այլ ինչ էր միտ յովաբայ, դաւիթ ըստ բանի նորա ժողովեալ վաղվաղակի ստուար գունդ մի զօրաց՝ դնաց յարձակեցաւ համագունդ համօրէն բանակաւն, և էառ զրաբաթ. և զանազան չարաչար տանջանօք կորոյս զբնակիչս նորա։ Այսն զի հանեալ զնոսա արտաքս, և զմանս սփռեալ ընդ երեսս դաշտի, ընթացոյց՝ ի վերայ նոցա կամնասայլս երկաթապատ սղոցաձև անուօք՝ ի ջախջախումն ամենայն ոսկերաց. զոմանս քերանօք և ուրագօք յօշատեաց. զայլս յետ քարշելոյ՝ ի վերայ բեկորաց աղիւսոց, արկ՝ ի հնոց աղիւսարկուաց. և զայս արար ոչ միայն ընդ ռաբբաթ, այլև ընդ այլ ամենայն քաղաքս որդւոցն ամմնայ՝ որոց տիրեաց։ Այս գործ դաւիթ երևի անցանել քան զսահման հեզութեանն նորա, և քան զբնաւն պատերազմի. նմին իրի բազումք, որք զայս գործ տարապայման անգթութեի համարին, յայն միտս են, թէ առումն ռաբբաթայ՝ յառաջ քան զդարձն դաւթի եղև. ՝ի ընութէ ասեն՝ անցեալ ՝ի մարդասպանութէն, որով շաղախեալ միանգամ զձեռս յարիւն անմեղին, յայնմանէ յետոյ յայսչափ և յայսպիսի ոճիրս բերաւ։ Այլոց հայեցեալ՝ ի բնական կարգ պատմութէն, ըստ որում աւանդի՝ ի՛ զբ

դիրս, երևի եղեալ զկնի դարձի նորա. իսկ հատուածն ամենացւոց եղև գործադրուի վրէժխնդիր արդարութե՛ն, և ոչ գործ անգթութե՛ն։ Զանը էր յոյժ և ընդդէմ ազգային օրինաց և իրաւանց՝ նախատինք զոր արարին ամենացիք հրեշտակացն դաւթի, վասն որոյ և պատժոյն արժան էր լինել արտաքոյ սովորական օրինաց պատերազմի։

Զոր զի՛ ի վերայ այնորիկ յաւելին ամենացիք նոր և ս անօրէնութի՛ն, զայնչափ ազգս յարուցանել լով ընդդէմ դաւթի. յորում ամենայն ժողովուրդն գործակից գտաւ ոչ միայն զինու, այլև դրամովք՝ առ ամենայն կատաղութի՛ն յառաջ վարելոյ զպատերազմին, և հաստատելոյ զնախատինն։ Ա՛յս և ս՛ի պատերազմի անդ ելին ամենացիք ըստ սահմանի զինուորական դիմամարտութե՛ն, զի ոչ երբեք խօսեցան ՛ի խաղաղութի՛ն, Թէպէտ և տեսանէին զքաղաք իւրեանց ՛ի վերջին վտանգ հասեալ. և ոչ յայլոց քաղաքաց եցոյց ոք նշան ինչ խոնարհութե՛ն, և անձնատուր լինելոյ։ Զեսին զի առաւ ռաբբաթ, մեռաւ անոն Թագաւոր իւրեանց. սակայն և այնպէս պնդեցան ՛ի յամառութե՛ն։ Ա՛պա առ ՛ինուաձել զայսպիսի ազգ կատաղի, միանգամայն ՛ի դողացուցանել զշրջակայ ազգս, որք չէին ինչ ընդհատ ՛ի գազանութե՛ն ամենացւոց, հարկաւոր էր արտաքոյ սովորական կարգի խստութե՛ն ցուցանել ՛ի պատիժն։ Զամենայն գործս դաւթի՝ ուր ուրեք մեղաւ, կամ կայր ՛ի վտանգ մեղանչելոյ, գտանեմք ՛ի ՚ոբ գիրս իբր յանցանս նշանակեալ։ Արպէս ՛ի դիմել նորա ցասմամբ ՛ի վրէժխնդրութիւն նաբաղայ, ուր ընդ մեղապարտին ունէր կոտորել և զանմեղս ըստ երդման իւրոյ. մինչ զի և ինքն օրհնեաց զաբիգեա՝ զի արգել զնա չերթալ յարիւն, որ էր մեղք ծանր։ Ո՛չ թուեալ զժողովուրդն՝ ինքնին խոստովան լինի, թէ մեղաւ։ Ա՛ եղքն զոր գործեաց յուրիա՝ ոչ ՛ի մի՝ այլ ՛ի բազում տեղիս յիշատակին. բայց վասն հարուածոյ ամենացւոց և ոչ նշանախեցիւ գտանեմք ուրեք նշանակեալ թէ ևս մեղուցեալ։ Ա՛ւ Թէպէտ ՃշմարիտԷ, թէ ՛ի

կոտորածի անդ յանցաւորաց կարելի է՝ թէ գտան և անմեղք, բայց յարդար վրէժխնդրուէ ընդդէմ հասարակութեանէ իմիք՝ ոչ նոքա միայն են պատժապարտ, որք ձեռն գործեցին, կամ կամակից եղեն գործողաց, այլ ամենեքին որք կացուցանեն զայն հասարակութեան ըստ որում անդամք միոյ մարմնոյ՝ կցորդ համարին յանցանաց հասարակութենէն. վասն որոյ և իրաւամբք պատժին ընդ նմա: Յաւելում ասել, թէ անշուշտ կային և այլ պատճառք, որ չեն մեզ յայտնեալ. վասն որոյ ուր գիրն ոչ դատապարտէ զայս գործ դաւթի իբրև անգթութեան արտաքոյ օրինաց պատերազմի, ապա և ոչ մեք կարեմք դատապարտել:

Ասարն զոր եհան դաւիթ 'ի ռաբաթայ և յայլոց քաղաքաց որդւոցն ամմնայ, բաղում էր յոյժ և հարուստ. բայց յամենայնի 'ի նոսա նշանաւոր էր թագն արքայական, զոր գիրն կոչէ պսակ մեղքոմայ. յորմէ ոմանք համարեցան թէ այն պսակ էր 'ի գլուխ մեղքոմայ կռոց չաճոյն ամմնայեցոց: Այլ զի մեղքոմ, կամ որ նոյն է մոլոք անուանդ՝ նոյն է ընդ մեզնէք, որ նշանակի թագաւոր, նմին իրի բազմաց ոչ հաւանին ընդ այն. այլ ասեն, էր պսակն բուն իսկ թագաւորի նոցա. զոր հաստատեն 'ի վուլկատայէն. որ 'է Ը. Ռաբ. ԺԸ. 30. ունի այսպէս: * Եւ էառ (դաւիթ) զպսակ թագաւորին նոցա 'ի գլխոյ նորա ‖. ուր չէք լինչ յիշատակութենէ զմեղքոմայ. 'է ա. Ճամ. Ը. 2. այսպէս. * Եւ էառ դաւիթ զպսակն մեղքոմայ 'ի գլխոյ նորա ‖: Այր յառաջնումն, թարգմանութենէն անուանն առաջի դնի. և յերկրորդումն՝ անուանն: Իսկ մերս ընթերցուած զերկոսին միանգամայն նշանակէ՝ այսպէս ունելով. * Եւ առ դաւիթ զպսակն մեղքոմայ թագաւորին նոցա 'ի գլխոյ նորա ‖. իբր ասել. մեղքոմայ այսինքն թագաւորի նոցա: Այնու պսակին էր տաղանդ մի ոսկւոյ. որ առնէ լտերս 125. և էր զարդարեալ ակամբք պատուականօք. բազմաք համարին թէ այս 125 լիտր ոսկւոյ ոչ էր ծանրութենին, այլ գին նորա, սակս մեծագին

ականց. զի անհնարին երևի յանձն առնուլ առն Թագաւորի այնչափ ծանրութիւն կրել ՚ի գլուխն. և սակայն ասէ գերն, Թէ դաւիթ սո՛ւտ զնա ՚ի գլխոյ Թագաւորին ամենայցոյց, և եդ ՚ի գլուխ իւր: Իսկ այլք յայս միտս են՝ Թէ ոչ Թագաւորն ամենայցոյց, և ոչ դաւիթ կրէին զնա ՚ի գլուխ իւրեանց, այլ հաստատեալ կայր ասեն պսակն այն ՚ի վերայ արքայական գահին, ուր մինչ նստէր արքայ՝ ունէր զնա ՚ի վերայ գլխոյն: Երկոքին այս կարծիք հաւանելի են, բայց երկրորդն առաւել քննական Թուի և առաւել համեմատ գրոյն՝ որ ասէ, * Եւ եր ՚ի գլուխ դաւիթի ‖. ուր վուլկատայն ընթեռնու. * Եւ եդաւ ՚ի վերայ գլխոյ դաւիթի ‖: Եւ այսպէս մեծաւ յաղթութեամբ, և բազմահարուստ աւարաւ՝ դարձաւ դաւիթ և ամենայն զօրն ընդ նմա յերուսաղէմ. ուր հասին ՚ի վերայ նորա նոր պատերազմունք ոչ յօտարաց, այլ ՚ի տանէ իւրմէ և յորդւոց իւրոց, ըստ սպառնալեացն նաթանայ՝ Թէ սուր ՚ի տանէ նորա մի պակասեսցի. որպէս տեսցի յառաջիկայդ:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Ոսկին աղէտ և վնաս դաւիթի: Ամոն բռնաբար պղծէ զքոյր՝ զխամարայր խոյր աբեսողոմայ: Աբեսողոմ դառնանուանէ սպանանէ զամոն զերբէց եղբայր իւր:

Այր օտար՝ եղև սկզբնապատճառ մեղացն դաւթի, և նոյն սէր եղև առաջին սկզբնաւորիչ աղետից և վշտաց նորա: Ոչ դաւթի դուստր հասակաչափ օրիորդ ազնիւ, գգաստ, համեստ և տեսլեամբ գեղեցիկ յոյժ. անուն նորա Թամար համամայր աբեսողոմայ, զոր ծնաւ նմա մաաքա դուստր Թողմեայ արքային գեսուրայ: Ի սէր նորա

հարաւ ամին անդրանիկ որդի դաւթի յայլմէ մօրէ, այնչափ բորբոքմամբ՝ մինչև՛ ի սաստկութէ տուփական ցանկութեանն օր քան զօր հաշիլ և ծիւրիլ։ Ունէր ամին յարքունիս անդր իւր ներքին բարեկամ, և խորհրդակից գաղտնեաց նորա զյոշխաբ զորդի հօրեղբօր իւրոյ սամսայ. իմաստուն ըստ աշխարհի, այլ անբաժ՛ ի ձշմարիտ իմաստութէ, որ առաջնորդէ մարդոյ լինել յարդոյ ոչ միայն առաջի ՚ոյ, այլև առաջի աշխարհի։ Այս տեսեալ զամին զորդի արքայի օր ըստ օրէ հիւծիլ և նուազիլ, եհարց ցնա զպատճառն. իսկ նա զի սովոր էր չթագուցանել ինչ՛ ի նմանէ՝ թէպէտ և յամօթալեաց, յայտնեաց պարզմտութէ, սէրն ասէ թամարայ քեռ աբեսողոմայ եղբօր իմոյ հալէ և մաշէ զիս։ Յոյժագաբ եթէ արդարև ունէր գնշոյլ իմն ձշմարիտ իմաստութէ, աստ պարտ էր՛ ի վեր արկանել զամենայն հանձար իւր՛ ի խոտորեցուցանել գնա յախտակիր խորհրդոյն. այլ նա գհակառակն սրար. զի ուսոյց նմա հնարս գամագիւտ լինել՛ ի լրումն ազգասպիղծ տուփանացն. որով և լցոյց զտունն դաւթի խռովութէ։

Վանգի խրատ ետ նմա անկանիլ կեղծեօք՛ ի մահիձս, և զխօթուն ձևանալ. և զի գիտէր նա թէ դաւիթ սիրէր յոյժ զամին՝ իբրև անդրանիկ որդի իւր. վասն որոյ՛ ի լսել գհիւանդութէն նորա՝ գայց ցէ վաղվաղակի տեսանել գնա. յայնժամ ասէ՝ ՚ի հարցանել հօր քո թէ կամիցիս ինչ՛ ի նմանէ, խնդրեսջես զի առաքեսցէ զթամար քոյր քո՛ ի սենեակ անդր, առնել առաջի աչաց քոց կերակուր, զի կերիցես՛ ի ձեռաց նորա։ Գնաց դաւիթ յայցելուն ամնոնայ. և նա խօսեցաւ առ հայր իւր որպէս խրատեալ էր՛ ի բարեկամէն. իսկ արդարամիտ հայրն ոչինչ կասկած չարեաց ունելով զորդւոյն վասն անձուկ արենակցութեն քեռ ընդ եղբօր, արար զոր խնդրեաց որդին։ Գնաց թամար ըստ հրամանի հօրն առ ամնոն, արար նմա կերակուր, և մատոյց առաջի նորա. բայց նա ոչ կամեցաւ ուտել, այլ հրամայեաց ամենեցուն որք անդն կային ելանել արտաքս՛ ի նմանէ.

նէ. և յայնժամ ասաց ցԹամար տալ զխորտիկս, զի կերայց ասէ ՚ի ձեռաց քոց. իբրև մերձ եղև նա ՚ի գահոյս, բռնեն եհար ամուն զնմանէ և բռնադատեր զնա ՚ի գործ։ Տեսեալ պարկեշտասուն օրիորդին զպատիւ համեստուհե իւրոյ անզերծ մնանելոյ ՚ի բարեմտութենէ հօրն, ջանահնար եղև ամենայն իրօք որչափ ինչ կարօղ էր պաշտպանել անձին, ա զաչեր, սպառնայր, և զամուսնուհի իւր ընդ նմա առաջի առնէր. ահ եղբայր իմ ասէր, մի տառապեցուցաներ զիս. մի առներ զայդ նախատինս ինձ և քեզ և ամենայն տան հօր մերոյ, երբ, կամ ուր եղև երբէք լսելի ՚ի մէջ իսրայէլի գործ այդպիսի և զինքդ երևեսցիս առաջի ժողովրդեան. և ես յո՞ տարայց զնախատինս իմ. ինձ ոչ ևս լինի կեալ. և դու լինիցիս իբրև անզգամ մի ՚ի մէջ իսրայէլի. և արդ խօսեաց ընդ արքայի, և ոչ արգելու զիս ՚ի քէն։ Այս ասաց Թամար՝ կամ զի ոչ գիտէր Թէ արգելեալ է յօրինաց ամուսնուհի եղբօր ընդ քեռ, Թէպետ և չիցեն ՚ի նոյն մօրէ. և կամ զի հնարեր այնու Թափել զանձն անարատ ՚ի ձեռաց նորա։

Այլ ոչ աղաչանք, ոչ պատիւ անձինն, և ոչ սպառնալիք վատ անուան՝ զօրեցին սանձել զանառմօթ պատանին ՚ի կատարելոյ զկամս պիղծ ցանկութենէ։ Զետ այնօրիկ յայլ ինչ մեծագոյն յանդգնութիւն վիեցաւ. որ ապաքէն անհաւատալի էր, եթէ չէր յայտ՝ Թէ կոյր ցանկութենին յորժամ ՚ի ծայրն հասանէ, ոչինչ աճէ զմտաւ, և առ ամենայն ինչ յանդգնի։ Եղեալ ամենայն Թերևս սակս անընդհատ դիմամարտութենէ համեստ օրիորդին ՚ի պահպանութենէ պարկեշտութենէ իւրոյ, ջեռաւ ՚ի ցասումն բարկութենէ, և անկարգ սէր նորա ՚ի միում վայրկենի յանհնարին ատելութենէ փոխեցաւ. մինչ զի առանց տալոյ նմա վայրիկ մի ՚ի յարդարել զհանդերձս, և փոքր մի գէթ առ երեսս հանդարտիլ յամբոխմանէ և ՚ի խռովութենէ սրտին, հրամայեաց նմա նոյն հետայն ՚ի բաց գնալ յերեսաց իւրոց։ Այլ Թամար սկսաւ ցաւագին քանքարտալ գառն

արտասուօք, և ասել. զի՞նչ իցէ այդ, զի իբրև զկին մի վատանուն հալածես զիս ՚ի քէն. փոքր ի՞նչ է քեզ, զի խայտառակեցեր զիս, և արդ հրապարակագոյժ և առնել կամիս զնախատինս իմ, և ՚ի ցաւս և յաղետս իմ յաւելուլ. մեծ են չարիքս այս քան զայն՝ զոր արարեր ընդ իս։ Զինչ անսաց անպատկառ պատանին ողբական բանիւ ցաւագին օրիորդին, այլ կոչեալ զսենեկապանն իւր, կամ ըստ գրոյն զվերակացու տան իւրոյ, որ գուցէ գի. տակ իսկ էր գործոյն նորա, ասաց ցնա. Հան զդա յինէն արտաքս, և փակեա՛ զդուրսդ զկնի դորա. զոր և արար նա վաղվաղակի. որով և հրատարա. կեցաւ գործն ընդ ամենայն արքունիս։

Իսկ Թամար զգեցեալ ՚ի վերայ այլոց հանդեր. ձիւ պարեգօտ երկայն պճղնաւոր համակ ծաղկեայ ասղնագործ. զոր կրէին միայն կոյս օրիորդք զըս. տերք Թագաւորաց՝ իբր արտաքին նշան կուսութե. ան. որ շատ էր տալ սենեկապանին ամենայ այլազգա. գոյն վարիլ ընդ նմա, որպէս վայել է դստեր Թա. գաւորի. և ոչ իբր զանարգ աղախին հանել զնա ՚ի տանէ, և փակել զդուրան զկնի նորա։ Զնաց Թամար լի ամօթով և գառնութբ ուղիղ ՚ի տուն աբիսողոմայ եղբօր իւրոյ. և անդ պատահեալ յանձ. նէ զպարեգօտն կուսական, և հող զգլխով ար. կեալ, և զձեռս ՚ի վերայ գլխոյ իւրոյ եդեալ, լայր գառնագին հեծութբ։ Զանեաւ աբեսողոմ զնորան նոյն հետայն. միթէ ասէ՝ ամնոն եղբայր քո եղև ընդ քեզ. այլ առ ժամ միթէ արեաց զնա, և քաջալերեաց և խրատ ետ լուել, չհանել ումբք ՚ի վեր զբանն. և ոչ իսկ յարքայէ խնդրել իրա. ւունս. զի ասէ՝ ամնոն եղբայր քո է, և որդի դաւ. թի, զի՞նչ արասցէ հայր ընդդեմ որդւոյն. և դու իմ իմիք կարիցես ակնուանել. ապա լաւ և ս է նե. րել նմա, զի մի՛ չարն և ս քան զիս հրապարակեսցէ ՚ի նախատինս ոչ միայն գործողին, այլ նաև կրո. ղին։ Դարձաւ Թամար, և նստաւ այրուձեամբ ՚ի տան աբիսողոմայ եղբօր իւրոյ զամենայն աւուրս կենաց իւրոց. որ որպէս կարծի՝ ոչ երկարեաց,

այլ յանքերեալ ցաւոց սրտին վաղաժամ մեռաւ։

Օ՜այս իրաւ ետ աբխազոմ քեռ իւրոյ, ոչ եթէ զի կամէր անպատիժ մնալ ամենայն, այլ զի գիտէր՝ թէ՝ ի դիմել նորա առ արքայ՝ ինչ ոչ շահէր. որպէս և իրօք տեսաւ. զի իբրև ծանեաւ արքայ զիրան, թէպէտ բարկացաւ յոյժ, այլ զի մի տրտմեցուսցէ զսիրտ սիրեցեալ որդւոյ իւրոյ, և ոչ իսկ բանիւ յանդիմանեաց զնա՝ որ այնպիսի քարուկանս գործեաց. իսկ յայտնել նմա, թէ ինքն ունի առնուլ զվրէժ յամենայն, ոչ իշխէր, կասկածելով թէ գուցէ ոչ կարիցէ թագուն պահել, և այնպէս՝ ի դերև ելանիցէ խորհուրդ իւր։ Օ՜նոյն զգուշութիւն արար և ընդ ամենայն. ոչինչ նշան ոխութիւն եցոյց նմա. և ո՛չ երբէք խօսեցաւ ինչ ընդ նմա վասն այնր բանի ոչ չար և ոչ բարի. որպէս թէ չէր ինչ բնաւ անցեալ՝ ի միջի նոցա։ Այնունք համարին թէ աբեսողոմ առ սաստիկ ատելութիւն՝ խոպառ դարձոյց զերեսս յամենայն. և յայս միտս՝ ոչ չար և ոչ բարի խօսեցաւ այնուհետև ընդ նմա, յայտ առնելով զիշնամութիւն իւր։ Այլ յաջորդ բանք գրոյն ցուցանեն մեզ, թէ ըստ բերելոյ դիպողութիւն կենակիցն ընդ նմա և խօսէր զայլոց իրաց, բայ՝ ի բանի քեռն. զորմէ զգուշանայր չհանել բան՝ ի բերանոյ. ապա թէ ոչ՝ եթէ յայտնի ցուցեալ էր զիշնամութիւն իւր, դաւիթ ոչ երբէք թոյլ տայր ամենայն երթալ ընդ նմա, և ոչ իսկ ինքն ամենայն այնչափ անզգոյշ լինէր, մինչև հեռանալ՝ ի քաղաքէն և երթալ՝ ի կռչունս՝ ի տուն թշնամւոյն իւրոյ։

Աբեսողոմ լինէր այր անզուգական, եթէ գիտացեալ էր այնպէս նուաճել զկիրս իւր, որպէս գիտէր ծածկել զնոսա. գիտէր ցուցանել զանձն անհոգ և անզգայ, յորժամ առաւել բորբոքեալ էր՝ ի սրտի։ Ծածկէր, բայց ոչ շիջուցանէր զհուրն, այլ մանաւանդ տածէր՝ ի գաղտնիս սրտի, մինչև գոյէ ժամ դիպողէ. յայնժամ ապա յանկարծ ինն՝ ի դուրս զեղոյր միանգամայն զամենայն հրդեհ, մինչ չունէր ուստեք կասկած երկիւղի։ Ընդ ամ երիս, կամ ըստ վուլկատային երկուս՝ լռեաց. այն խորհն

լուսոյն և առ երևոյթ անզգայութեի պարտ էր լինել հանապազորդ աղղուամն ամենայն առ ի զգուշութեի անձին։ Արկածեալն որ սպառնայ, չէ այնչափ ինչ երկիւղալի. բայց միշտ երկնչելի է՝ յորժամ լսէ, զի թէ սպառնայ, ցուցանէ զնեան, յորմէ դիւրին է զգուշանալ. բայց ոչ նոյնպէս յորժամ լսէ. զի չէ դիւրին զնորհուրդ սրտի նորա դուշակել։ Աբեսողոմ այսպիսի եռամեան լռութիւք իբր ի քուն նիրհեցոյց ոչ զամէն և եթ, այլև զարքայ զհայր իւր. և յորժամ եհաս զնոսա չունիլ բնաւ կասկած չարի զնմանէ, ժամ դիպող և պատշաճ գոլ վարկաւ զչարիմացութիւնէ խորհուրդ իւր ի գլուխ տանել։

Վներ յաւուրսն յայնոսիկ աբեսողոմ կտուրս խաշանց իւրոց ի գեօղն իւր ի բեթմարոն, իբր քսան և երկու աշխարհապրական մղոնաւ հեռի յերուսաղէմայ՝ մերձ յերիքեմ. և զայն աւուրս ըստ սովորութեի՝ ուրախութիւք և խրախճանութիւք կատարէին հրաւիրելով զազգատոհմն և զբարեկամն ի խրախակցութիւն։ Պատրաստեաց և աբեսողոմ անդ ի բեթմարոն խրախութիւն արքայավայել, մանաւանդ թէ սպանդանոց որդւոյ արքայի. կարգելով և սպասաւորս արիւնրուռւշտ խրախճանութիւն՝ զբրիկայս ոմանս, ըստ լերանոսի և այլոց՝ օտարազգիս յերկրէն Թողմեայ արքային գեսուրայ հաւատ իւրոյ. որոց պատուէր ետ յառաջագոյն ի ժամու խրախութիւն դէտակն ունել առ նա, զի յորժամ զուարթասցի ամեն ի գինւոյ, և ինքն ասիցէ ցնոսա հարկանել և սպանանել զնա, արասցեն վաղվաղակի. և մի ինչ երկիցեն. զի ոչ ապաքէն ասէ ես լցեմ որ պատուիրեմ ձեզ. իբր ասել՝ յիմ վերայ եղիցի վտանգն, ես հատուցից զամենայն ինչս։ Խորհրդով ընտրեաց աբեսողոմ ի սպանումն եղբօր զբեթմարոն. զի որպէս ասացաք գոլով քսան և երկու մղոնաւ հեռի յերուսաղէմ անվտանգ լինի փախուստ իւր և իւրոց արքանեկաց ի գեսուր։

Այս ամենայն այսպէս կարգեալ և պատրաս-

տեաւլ՝ հրաւիրեաց զարքայ զՀայր իւր, և զամենայն որդիս նորա զեղբարս իւր երթալ ընդ նմա ՚ի կո-
չունս իւր. դաւիթ հրաժարեցաւ. մի որդեակ իմ
ասէ, մի երթիցուք ամենեքեան մեք. և մի այսչափ
բազմութիւն ծանրաւոյք քեզ. և թէպէտ աբեսա-
ղոմ կրկին թախանձեաց, բայց արքայ ոչ կամեցաւ
երթալ: Այսպա ասէ, եթէ արքայ ոչ հաճի անձամբ
պատուել զխորհուրդն մեր, գոնէ ամենեղբայրս
իմ եկեսցեն. զայլս ոչ յիշէ աստ, այլ միայն վասն
ամենայ թախանձէ, ՚ի ցուցանել յայլս դաւթի չու-
նել ատելութիւն կամ ոխս ընդդէմ նորա. միանգա-
մայն և ՚ի մեծարել զնա իբրև անդրանիկ ՚ի միջի
իւրեանց՝ երթ նորա համարեսցի իբրև ՚ի ընուլ
զտեղի արքայի: Դաւիթ զառաջինն ոչ կամէր թո-
ղուլ զամենն, թերևս կասկած ինչ ունէր զնմանէ
վասն բանին թամարայ. այլ յետոյ բռնադատեալ
՚ի թախանձանաց նորա՝ արձակեաց զնա, և զամե-
նայն որդիս իւր երթալ ընդ աբեսողոմայ:

Այսմ ամենայնի թոյլ ետ ած երկու մեծա-
մեծ վրիպակս գործել դաւթի. որպէս զի յաղե-
տալի ելիցէ իրացն ուսցին առաջնորդք զուսումն
կարևոր ՚ի տնտեսութիւն հնազանդելոց իւրեանց:
Առաջին վրիպակն եղև, զի լռեաց ամենևին՝ ան-
պատիժ թողեալ զանօրէնն գործ ամենայ. այնպէս
իմն ցուցանելով զանձն՝ որպէս թէ չէր ինչ բնաւ
իմացեալ. զի որովհետև սիրէր զնա իբրև անդրա-
նիկ իւր, ոչ կամեցաւ տրտմեցուցանել զոգի նորա:
Մեծամեծ անիրաւութիւնս, յորժամ դատաւորն
ոչ առնէ արդարութիւն՝ տալով զարժանահաս պա-
տիժ գրկողին, կարի իմն դիւրին է թէ գրկեալն
անձամբ առնուցու զվրէժ իւր, ոչ ընտրողութիւն
ըստ օրինաց, որպէս առնէր դատաւորն, այլ անընտ-
րողաբար ըստ բերելոյ գազանական կրից: Այթէ
դաւիթ արգելեալ էր առ ժամանակ մի զամէն ՚ի
տան իւրում իբրև ՚ի պատուաւոր դիպահոջ ընդ
պահպանութիւն զինուորաց, որպէս սովորութիւն է
պատժել զպղնուատկանս. կամ գէթ բանիւ յանդի-
մանութիւն խստութիւն իմն ցուցեալ էր նմա՝ ՚ի գգու-

չուԹէ այլոց, գուցէ չատանայր նովաւ աբեսողոմ։ Երկրորդ վրիպակն եղև Թողուլ զամին երԹալ ընդ աբեսողոմայ ՚ի գեօղ նորա. զի որչափ Թախանձեր նա վասն ամինայ, այնչափ առաւել պարտ էր խրԹալ. և Թէպէտ երկու կամ երեք ամք էին անցեալ զկնի բռնաբարուԹեանն զոր արար ամին քեռ նորա. բայց պէտք էին յուշ ածել, Թէ են ոխուԹիք ինչ, որոց առ ՚ի ջնջիլ ՚ի յուշոյ յիշատակաց՝ դարք չեն բաւական, Թող Թէ երկու կամ երեք ամք. մանաւանդ զի հանապազ զբոյրն իւր ունէր առաջի աչաց։ Աբեսողոմ ոչ երբէք երևեցոյց զանձն վիրաւորեալ. բայց հաւաստի էր, զի յանհնարինս վիրաւորեալ էր, և ոչ երբէք հաշտեալ փոխարինուԹիք իւիք։ Այս զի մարդիկ սովրաբար բնաւորեալ են զհետ կրից ցաւման երԹալ, քան Թէ առաջնորդուԹէ ուղիղ բանի, վասն այնորիկ յայսպիսի դիպուածս բազում արԹնուԹիւն պիտի առաջնորդին՝ առ ՚ի պատշաճաւոր զգուշուԹիք խափանել զկասկածեալ չարիս։ Վրիպեցաւ մեծապէս և ամին երԹալ ՚ի կոչունս եղբօրն. քանզի գիտէր զանձն պարտաւոր մեծի անիրաւուԹեանն առ նա. ապա պարտ էր նմա ունել ՚ի մտի միշտ և զհատուցումն. կամ գոնէ բազում արԹնուԹիք և խոհեմուԹիք զգուշանալ անձին։ Այլ նա ոչ յայս և ոչ յայն հայեցեալ՝ գնաց միամտուԹիք. վասն զի ՚ի ձեռն այնմ արդարուԹիւնն ածէր զնա ՚ի սպանդ, սակս խնայելոյ մարդկային արդարուԹեանն տրտմեցուցանել զոգի նորա։

Զարար աբեսողոմ սեղան մեծահայց եղբարցն իւրոց. և այն ինչ էին ՚ի մեծի խրախուԹիւնն զուարԹացեալք ՚ի գինւոյ, առաւելապէս ամին, ասաց ցծառայս իւր որք կային անդ պատրաստ. ժամ է արդ հարէ՛ք և սպանէ՛ք զամին. զոր նոյն ժամայն կատարեցին նոքա, անդ ՚ի բազմականի առաջի աչաց եղբարցն խողխողելով զեղկելին։ Այն աղետ դառնագին տեսեալ նոցա, և երկուցեալ Թէ գուցէ յանդրանկանէ սկիզբն արարեալ ՚ի կրսերագոյնն ունի աւարտել՝ զամենեսեան առ ետեղ

կոտորելով, ամենապարեցին ելին ի մահահոտ սեղանոյ անտի, և հեծեալ իւրաքանչիւր ի ջորւոջ իւրում՝ փախեան տագնապաւ։ Իսկ զինչ այս միոյ այն՝ զոյժ եհաս կանխագոյն առ դաւիթ, թէ կոտորեաց աբեսողոմ զամենայն որդիս արքայի. և ոչ եթող ի նոցանէ և ոչ մի։ Ոչ յայտ՝ թէ զիարդ կամ յումէ հնչեցաւ այն համբաւ յերուսաղէմ. զի անհաւատալի երևի, թէ ոք կարօղ եղև յառաջ քան զորդիս արքայի, որք անհնարին խուճապանօք փախեան, ժամանել յերուսաղէմ։ Իսկ ուստի և էցէ, դաւիթ արքայ ի լուր այնր գուժի՝ իբրև շանթ թիւր հարեալ յերկնից, եկաց առ վայր մի սասանեալ. ապա պատառեաց զհանդերձս իւր և անկաւ ի գետին ի վերայ երեսաց. յուշ եղեն նմա մեղք իւր, և սպառնալիք երկնից. ծանեաւ զարդարութիւն ան այ իւրոյ, և երկիր եպագ ձեռին որ հարկանէր զնա։ Այնպէս և իշխանք և պաշտօնեայք նորա առ հասարակ պատառեալ զհանդերձս իւրեանց, կային ի սուգ ծանրաթախիծ։ Իսկ ի միայն յոմնեցւոյ եղբօրորդի դաւթի, պատճառ այս ամենայն չարեաց իւրով անօրէնն խորհրդով զոր ետ ամենայ որպէս տեսաք ի վեր անդր, գուշակեաց զչմարտութիւնն իրացն. և առ ի մխիթարել զդաւիթ՝ ասէ, մի հաւատասցէ արքայ՝ եթէ մեռան ամենայն որդիք արքայի. զի ամէն միայն մեռաւ. և այս էր խորհուրդ աբեսողոմայ յօրէ յօրէ տառապեցոյց զթամար զքոյր նորա։ Այսպէս խօսեցաւ յոմնեցւոյն, իբր ոչ եթէ զի գիտէր ինչ զխորհրդոյն աբեսողոմայ. զի չէր նա այնչափ միամիտ, մինչև զդաղտնիս սրտի իւրոյ՝ զոր և քեռւ իւրում ոչ պատմեաց, նենգին բարեկամին ամենայն յայտնեսցէ. այլ ի լսել անդ զբան սպանութիւն որդւոց արքայի, գոլով այր խորագէտ և արթուն՝ նոյնժամայն խնայեաց եթէ լոկ վասն սպանութիւն ամենայ արար աբեսողոմ զայն խրախուսիւք հեռի յերուսաղէմայ։ Եւ այն ինչ նա խօսէր առ արքայ, ազդ արար գնան թէ ժողովուրդ բազում երևի ի կոչնել առ կողմամբ լերին ի ձանաապարհին որ ընդ

ասէ յոմնադաբ. տեսեր արքայ, զի Ձիգրտեցաւ քան ծառայի քո, փոքր միւս ևս՝ և ահա տեսցես զամենայն որդիս քո առաջի քո: Եւ յայն քան հասին որդիք արքայի, և լալով մեծաձայն պատմեցին զամենայն անցս, զոր անցոյց ընդ նոսա աբեսողոմ. և արքայ և ամենայն իշխանք նորա լացին լալիւն մեծ յոյժ:

ԳԼՈՒԽ ԺՌ.

Ընբեսողոմ փախստական անկանի առ արքայ գեսուրայ, և դառնայ յերուսաղէմ գԸնդդուքէ յովաբայ:

Ապա ինչ համօրէն արքունիք դաւթի խռովեալ՝ յողբս և՝ ի լալիւն կային համակեալ վասն մահուն ամենայ, աբեսողոմ գիպողութիւն գտեալ փախաւ՝ անց զյորդանան, և փախեաւ գնաց ապա վինեցաւ՝ ի Թողմի կամ Թողմելեմ արքայ գեսուրայ հաւ իւր: Ընդ ապիրատին դժուարահաճ կանխատես այն հարկ փախստեան. քանզ գիտէր նա, զի ժամանակաւ մեղմանան ցաւք, զինջանին քարկուԹիք. խաղաղին մարդկային ատեանք, և առաւել ատեան հօր ընդդէմ որդւոյ: Ո՞ատ համարէը անձին, զի եՀան զերեքամեան ոխուԹենն զվրէժ. և գուցէ առաւել քան զվրէժխնդրուԹին՝ համարեր զայն, զի՝ ի մեռանել ամենայ՝ ինքն համարիւր այնուհետև անդրանիկ, ուստի և ժառանգ աԹոռոյ հօր իւրոյ: ԴաւԹի իբրև Թագաւոր եղոյց՝ ի սկզբան անդ արդար ցասումն ընդդէմ եղբայրասպան եղեռնաւորին. այլ Թէ զինչ արար, չէ յայտ. զի գիրն զայս և եԹ ասէ. * Եւ դադարեաց արքայ դաւԹի յելանելոյ՝ ի վերայ աբեսողոմայ ‖. որով յայտ առնէ՝ Թէ վառեցաւ ընդդէմ նորա, և ինչ ինչ արար, որք առ աչս ժողովրդեան

Թերևս մեծ իմն երևէին, բայց արդեամբ ինչ ոչ վճարէին. որպէս սպառնալ սաստկութիւն, ատեան կազմել, խիստ քննութիւն առնել, զինուորս արձակել ի խնդիր յանցաւորին անդ ուր ոչ էր. և ի հրատարակիլ փախստեան նորա առ արքայն գեսուրայ, պահանջել զյանցաւորն ի նմանէ դատաստանաւ: Իսկ արքայն գեսուրայ պաշտպան կացեալ Թոռին իւրում աբեսողոմայ յապաղէր տալ զնա, միանգամայն միջնորդ լինէր հաշտութեանէ, խնդրելով չնորհել նմա զյանցանս. զոր անպատճառ կամ ի կոյր ցասմանէ ոչ գործեաց, այլ ի վրէժխնդրութիւն պատուոյ քեռ իւրոյ, որ նոյնպէս Թոռն էր Թողմեայ արքային ի մնաքայ դատերէ նորա. և Թէպէտ երևի Թէ դաւիթ սպառնայր մարտիւ առնուլ զնա, բայց սպառնալիքն առ երեսս լեռնէին: Իսկ այնպէս արքայն գեսուրայ կալաւ զաբեսողոմ առ իւր ամս երիս. յորս առ սակաւ սակաւ զիջաւ և ջնջեցաւ ի սրտէ դաւթի ցաւ որդւոյն մեռելոյ, մինչ ոչ ևս յիշել զնա. և նորոգեալ արծարծեցաւ հայրական սէր և կարօտ առ որդին կենդանի հեռացեալ յաչաց իւրոց, մինչև յայտնի խակ երևեցուցանել զգորով գթոյն առ տարագրեալն:

Օ՜այն խնացեալ յովաբայ, որ ոչ ինչ երկուանայր, Թէ աբեսողոմ ժառանգեսցէ զաթոռ հօր իւրոյ, ոչ միայն զի անդրանիկ էր, այլև զի նաև ի կողմանէ մօր էր ի Թագաւորական զարմէ. նմին իրի կամեցեալ չնորհս առնել աբեսողոմայ առ յինքն գրաւելոյ զսիրտ նորա, և զիշխանութիւն իւր հաստատելոյ՝ ի Թագաւորել նորա, փոյթ կալաւ հաշտեցուցանել զնա ընդ հօր իւրում: Եւ ի դէպ վարկաւ անձամբ խօսիլ առ արքայ. այլ առաքեաց ի Թեկուէ քաղաք փոքրիկ ի վիճակի ցեղին յուդայ մերձ յերուսաղէմ. և առ անտի կին մի խնաստուն՝ զգաստ և ձարտարաբան. որոյ եկեալ և ընկալեալ խրատ ի յովաբայ, Թէ զինչ առնիցէ և զինչ խօսիցի, եմուտ առ արքայ ի հանդերձս սգոյ իբրև կին Թախծալից ի վերայ որդւոյ

քազմօրեայ մեռեալոյ. և անկեալ ՚ի վերայ երեսաց իւրոց ՚ի գետին առաջի արքային, ձեւացոյց՝ թէ էին նորա երկու որդիք, որոց ՚ի կռուելն ընդ միմեանս՝ սպան միմն զմիւսն. և այժմ ասէ յարուցեալ է առնայն ազգն ՚ի վերայ աղախնոյ քո, և խնդրեն զսպանօղն եղբօր իւրոյ՝ սպանանել և զնա, առ ՚ի չթողուլոյ առն իմում մնացորդ և անուն ՚ի վերայ երեսաց երկրի։ Այնու հանձարեղ գիտաց ձեւացուցանել զիրսն. և այնչափ եւաց, և խօսեցաւ, և թախանձեաց, մինչև կորզեաց յարքայէն ներումն սպանողին։ Յայնժամ եբաց զպատրուակն, և յայտնեաց թէ վասն այր էին այն պաղատագին առաքաւոր աղերսանք։ Արքայ ՚ի վերջին քանից անտի կնոջն իմացաւ, եթէ հնարք յովաբայ էր այն ամենայն, և ՚ի նմանէ խրատեալ խօսեցաւ զոր խօսեցաւն. որպէս և նա ինքն կինն խոստովան եղև պարզմտութիւնն ՚ի հարցանելոյ ցնա արքային։

Զի թանզի արդէն ինքնայօժար էր դարձուցանել զորդին, նմին իրի այս հնարագիտութիւն յովաբայ չէզև նմա դժուարահաճ. բայց ոչ կամեցաւ՝ զի քանիւ կնոջն վճարիցին իրքն, զի մի յանպատուաբիւն իւրումն թագաւորական անուան՝ ասիցի, թէ առ ՚ի գտանել չնորհս յարքայէ, պարտէ զմիջնորդութիւնն կանանց ՚ի կիր արկանել. և մի տացին պատճառք քրիստոնէից հրոց ծառայից և զօրապետաց, թէ հարկ եղև արքայորդւոյն զքարեխօսութիւն կնոջ ՚ի մէջ առնուլ առ դառնալոյ ՚ի չնորհս արքայի. որպէս թէ առաւել զօրիցեն առաջի նորա քաղցրաբանութիւնք կանանց, քան զարդիւնս քաջութիւն ՚ի պատերազմունս և ՚ի յաղթութիւս։ Զայն այնորիկ արձակեաց զկինն թեկուաց առանց յայտնելոյ նմա զորոշումն իւր. և կոչեալ զյովաբ՝ այնպէս խօսեցաւ առ նա, զի ծանիցէ թէ ոչ կնոջն, այլ նմա կամի առնել զչնորհն։ Հաւասիկ ասէ լուայ աղաչանաց քոց, և արարի ըստ բանի քում. արդ՝ երթ դու անձամբ ՚ի գեսուր, և ած զաբեսողոմ յերուսաղէմ։ Այլ կամեցաւ, զի այլևս ժամանակ մի կացցէ ՚ի պատժի. վասն

որոյ և հրամայեաց չերևիլ յարքունիս առաջի այլոց իւրոց, այլ նստիլ ի տան իւրում. * Վարձկի առ ի տուն իւր, և զերեսս իմ մի տեսցէ ||:

Այս նստաւ աբեսողոմ ի տուն իւր իբրև ի դիպահոջ ամն երկուս: Այլ այն առանձնական քնաւութիւն մեծապէս խափանումն լինէր գործադրութեանն նորին ամբարտաւան բարձրահայեաց խորհրդոյն՝ զոր եդեալ էր ի մտի, յափշտակել զթագաւորքայութիւնն ի գլխոյ հօր իւրոյ: Վասնզի առ ի պատրաստել զսիրտ ժողովրդեան յապստամբութիւն՝ հարկ էր որսալ զնոսա ի սէր անձին. և այս դժուարին էր առանց երևելոյ իւրոյ ի հրապարակի: Այր նա այնչափ դեղեցիկ և ընտրհաշտք, զի և լոկ տեսութիւնն բաւական էր ի սէր նորա ձգել զամենեսեան. զի ըստ գրոյն՝ ի թաթից ոտից իւրոց մինչև ի գլուխ իւր՝ ոչ գոյր ի նմա արատ, որ իւիք իրօք մեայլ արկանիցէ շքեղապանծ դիտակի նորա: Այլ առաւել նշանաւոր էին ի նմա վարսք գլխոյ նորա ոսկեփայլ և նրբաթել. զոր հարկ էր ամ ամի փոքրել, զի կարի ծանրանային ի վերայ նորա. և կշռէր ասէ գիրն՝ զհերս գլխոյ իւրոյ երկերիւր սիկղ, որ է հարիւր ունկի. զոր բազումք յերևելի մեկնչաց իմանան ոչ ըստ ծանրութեան, այլ ըստ յարգի արժողութեանն. զի անհաւատալի ինձ է ասեն՝ այնչափ ծանրութիւն լինել ի տարեկան հերս մարդոյ, որչափ ոչ գոյ ի գազաթս երկուց ոչխարաց կամ այծից: Այլ որպէս և իցէ, այս յայտ իսկ է, զի ըստ վարսից գլխոյ նորա որպէս և ըստ այլ ամենայն մասանց վայելչագեղ բարեմոյն հասանէին մարմնոյ նորա ոչ գոյր զուգական նմա այր յամենայն խորհելի: Այլ նորա և երեք ուստերք փոքրիկք, և դուստր՝ մի գեղեցիկ յոյժ տեսլեամբ. որ և այն ոչ սակաւ նպաստեր նմա հաճոյ լինելոյ ժողովրդեան ի տեսանել նոցա յերիս որդիս նորա զյաջորդութիւն թագաւորութեանն:

Այլ առ ի զօշտել գեղոյ նորա զաչս ժողովրդեան, հարկ էր երևեցուցանել զանձն. և առ յափշտակել զսիրտս նոցա, կարևոր էր փաղաքշել

զնոսա. զոր չէր կարօղ ՚ի գլուխ տանել, ցորչափ կայր արգելեալ ՚ի տան իւրում: Այսպէս յետնատեղոյ յերուսաղէմ զամն երկուս, յորս զերեսս արքայի ոչ եաես, զմտաւ էած թէ առ ջնջելոյ խոպառ զնէթ ՚ի սրտէ արքայի հօր իւրոյ, և ՚ի կատարեալ հաշտութեի ածելոյ զնա, չիք այլ ձանապարհ յանկագոյն, քան առաքել առ նա պատգամաւոր ի խառնարհ խոստովանութեք յանցաւորութեե անձին, և պատրաստութեք առ ամենայն պատիժ, զոր կամիցի տալ նմա: Այս առ այն պատգամաւորութեի ՚ի ձահ դատեցաւ զյովաբ. որ գոլով այր հնարագէտ և զօրաւոր առաջի արքայի, որպէս սկսաւ զբանն հաշտութեե, նոյնպէս նա ինքն կարօղ է կատարել: Այսն որոյ առաքեաց միանգամ և երկիցս կոչել զնա, բայց նա ոչ կամեցաւ երթալ. կամ զի գուցէ չևևս նշմարէր յարքայն յօժարութեի և պատրաստութեի սրտի առ ընդունելութիւն աբեսողոմայ, ուստի և կասկածէր թէ մերժեսցի յարքայէ, և այն ծանր էր իւրումն մեծութե. և կամ յապաղեր երթալ, զի տացէ աբեսողոմայ լաւ ևս ձանաչել զյարգ անձին նորա, և զիւր կարօտութեի առ նա. և այնպէս միայր զի երբորդ անգամ կոչեսցէ զնա:

Այլ աբեսողոմ այլ ինչ ձանապարհ կալաւ, որով ակամայ կամօք ստիպեսցի յովաբ երթալ առ նա: Վասնզի առաքեաց զծառայս իւր յագարակն յովաբայ լի գարւով, սահմանակից իւրոց կալուածոց, և գարին ՚ի հունձս հասեալ, և հրամայեաց այրել զնա հրով: Այն իբրև լուաւ յովաբ, գնաց վազվազակի առ աբեսողոմ, բողոք կալեալ վասն զնաստուն զոր արարին ծառայք նորա: Աբեսողոմ ձևացոյց չիմանալ զբողոք նորա, և զգալուստ նորա համարիլ որպէս թէ վասն կոչելոյ իւրոյ զնա առաքել առ արքայ. որով նուրբ ինն հնարագիտութեք զերծոյց զանձն ՚ի պարտուց յանդիմանելոյ զնա վասն չհնազանդելոյ ՚ի կոչ նորա. միանգամայն փակեաց առաջի նորա զդուռն երկար գանգատանաց յաղագս անիրաւութենն եղելոյ առ նա: Կոչեցի զքեզ ասէ, զի յղեցից առ արքայ, ասել ցնա

'ի դիմաց իմոց : Ցկը իմ դու գԹացեալ լիս գալ. ձուցեր զիս 'ի գեսուրայ , ոչ 'ի ԹեԹևացուցանել զպատիժ իմ, այլ առ առաւել տանջելոյ զիս . զի մօտ գոլով՝ զուրկ լցեմ 'ի միտկ միխԹարուԹէ , որ տայր ինձ յոգւոց ելանել անձկանօք սրտի յաղագս գարձի իմոյ : Արկու ամք են զի նուաղիմ առ չտեսանելոյ զՀայրդ իմ: Ա առ էր ինձ ՃՃալ տարապիր յերկիր օտար , քան ԹէԹ նստիլ 'ի հայրենիս իմ այսպէս 'ի հանապազորդ անձկուԹիս սրտի : Գիտեմ զի յանցաւոր եմ. եԹէ տակաւին պահէ արքայ 'ի սրտի՝ զիւր արդար ցասումն 'ի վերայ իմ, խնդրեմ առնել ինձ զայս ընդհ , բառնալ յաւէտ զկեանս իմ, քան այլևս յապաղել լինիլն զիւր արքայական և հայրական տեսուԹիւն : Ա. յայս խօսեցաւ աբեսողոմ. բայց և յովաբ որ չէր ինչ նուազ խորագէտ գիտել պատրաստակել զկիրս իւր , տեսեալ զանդէպ պատասխանի նորա , իմացաւ զլեզու նորա , և լռեաց . պահելով 'ի սրտի զընկալեալ անիրաւուԹիւն :

Յայսմ գործողուԹէ մեծապէս սխալեցաւ աբեսողոմ. զի 'ի մեքենայել նորա յառաջ քան զժամանակն յափշտակել զԹագաւորուԹիւն , չէր պարտ նմա զայրացուցանել զմեծ սպարապետն՝ յորոյ 'ի ձեռին էր զօրն . կամ գոնէ զկնի զայրացուցանելոյ՝ ջանալ ամենայն իրօք շահել զնա քաղցրաբան նուէք , և կրկնապատիկ վճարելով ՃնաՏուն : Յորժամ ՃՃ կամի յայտնապէս երևեցուցանել զինքն իշխան տէրուԹիւն իւր , ամենայն մարդկային հնարք նանրանան չքացեալ . և ինքն տայ զԹագաւորուԹիւնն ում և կամի . բայց յորժամ կամի Թոյլ տալ ընԹացիկ ազատ և քնական պատճառաց , 'ի հակառակուԹէ՝ նա 'ի վերջոյ լինի ՃՃր ԹագաւորուԹէ , որ իցէ տէր զօրուն . և արդարև ունիմք տեսանել 'ի մօտոյ յաբեսողոմ, ԹԷ քանի՞ ՃՃաս եղև նմա չառնել իւր բարեկամ զյովաբ : Ա՛կայն և այնպէս կատարեաց յովաբ զպատգամաւորուԹիւնն : Գնաց առ դաւիԹ , և եգիտ զնա առաւել պատրաստական և կաԹողին առ որդին , քան զայն զոր

որդին նենգաւոր կեղծիր ունել առ Հայրն։ Վասն զի արքայ անդիմադարձ, մինաւանդ թէ ախորժաւնօք՝ լուաւ զաղաչանս որդւոյն ի բերանոյ յովաբայ, և կոչեաց զնա վաղվաղակի. որոյ եկեալ՝ եմուտ առ արքայ, երկիր եպագ նմա անկեալ ի վերայ երեսաց իւրոց առաջի նորա. և արքայ գիրկս արկեալ նմա՝ համբուրեաց զնա հայրական գթով. զսրմէ չէր ինչ փոյթ աբեսողոմայ. և ետ նմա հաստարձակ մուտ յարքունիս, գալ և երթալ և վարիլ անարգել ընդ ամենեցուն. և ահա այն էր՝ զոր խնդրէր աբեսողոմ։ Այսպէս ամբարիշտ որդին ընդ պատրուակաւ կեղծեալ խոնարհութեանն ծածկեաց զխորհուրդն անօրէնութեան. և արդարամիտ որդեսէր հայրն խաբեաւ՝ ետ նմա ընդարձակութիւն ի մեքենայել զաւարսափելի ապստամբութիւն, բայց ի կորուստ իւր, և ի բարձրութիւն հօրն։

ԿԱ. ՀՈԿ.

Ապստամբութիւն աբեսողոմայ։ Վախուտաց արտացին դատաստանք աբեսողոմայ։

Իբրև հաշտեցաւ աբեսողոմ ընդ հօր իւրում արքային, և ընկալաւ ի նմանէ կատարեալ ազատութիւն, սկսաւ այնուհետև պատրաստել անձին շուք և փառաւորութիւն մեծ, կամեցեալ տալ ժողովրդեան յայտնի ձանաչել զնա յաջորդ թագաւորութիւն իսրայելի։ Արար իւր կառս հոյակապս. կարգեաց և խումբ ոմն հեծելոց իւր թիկնապահս, և յիսուն այր սուրհանդակ երթալ առաջի նորա, յորժամ հանդիսիւ ելանէր ի դուրս։ Այս արտաքին շքեղութիւն և հանդէս՝ երկու ինչ կարևոր իրում դիտաւորութիւն ներգործէր ի ժողովուրդն. մի՝ վարժել և ընդելացուցանել զաչս նորա տեսա-

նել զնա յայնպիսի արքայավայել փառաւորութիւն, միանգամայն և ակնածել ի նմանէ։ Երկրորդ՝ առնել զնա առաւել սիրելի, մինչ յետոյ տեսանիցեն զնա խոնարհեալ անպատմելի մարդասիրութիւնբ և գգուանօք վարիլ ընդ ամենեսին ընդ մեծի և ընդ փոքու։ Կանգն ելեալ ընդ առաւօտն ըստ ժամանակի, կայր ի գաւիթ անդր արքունեաց առ դրան. և զամենեսին որոց էր դատ և գային առ արքայ, կոչէր քաղցրութիբ առ ինքն, հարցանէր մտերմութիբ թէ յորմէ՞ ցեղէ և յորմէ՞ քաղաքէ իցեն, և զի՞նչ իրք իցեն յոյր սակս եկին առ արքայ, և՝ի պատմել նոցա զկարիս իւրեանց, նա անձանձրոյթ ունկն դնէր. և ամենեցուն տայր իրաւունս, ահա քանք քո ասէր բարի են և դիւրինք. և ապա՝ի վերայ բերէր. այլ զի՞նչ օգուտ ասէր, զի չիք առ՝ի յարքայէ կացուցեալ պաշտօնեայ արդար և արթուն և ժրաջան՝ առնել իրաւունս և արագ վճարել զդատ նոցա. և երբէք երբէք յոգւոց ելանէր իբր առ կարեկցութիբ տառապանաց ժողովրդեան՝ի հեռուստ եկելոց, անդ անգործ դեգերիլ՝ի պատճառս յապաղելոյ դատից իւրեանց. ո՞ կացուցանէր զնոս ասէր դատաւոր՝ի վերայ երկրիս. և առ նս գայր ամենայն այր՝ որոյ իցէ հակառակութիբ և դատաստան. զի ես փութով առնեմ իրաւունս, և արձակէի զամենեսին շատացեալ խաղաղութիբ՝ի գործս իւրեանց։ Իւ յորժամ ոք մերձենայր յարգել զնա, թուէր թէ ամենեքին եղբարք իւր են, ձգեալ զձեռն՝առ ինքն մատուցանէր զնա, և գիրկս արկեալ նմա՝ համբուրէր զնա։ Կնպէս առնէր ընդ ամ չորս՝ ամենեցուն որք գային՝ի դատաստան առ արքայ. և զոզանայր զսիրտս ամենայն արանց խորհելի։

Իբրև համարեցաւ լիով տիրապետեալ՝ի վերայ սրտից ժողովրդեան, եդ այնուհետև՝ի մտի տիրել և թագաւորութիբ, յայտնելով զանձն թագաւոր խորհելի. բայց ոչ յերուսաղէմ, երկուցեալ՝ի զօրութիբ հօրն։ Կան որոյ խորամանկ պատահինն՝որ գիտէր պատրել և որսալ զսիրտս խօսելով

քստ մնի իւրաքանչիւրոց, խորհեցաւ ածպաշտու-
թեան պատրուակաւ խաբել զծածասէր հայրն, և
առնուլ ի նմանէ հրաման՝ առ սուղ ինչ ժամանակ
հեռանալ յերուսաղէմայ։ Այսեաւ առ նա և ա-
սէ, մինչ էի ի գեսուր յաստրիս՝ ուխտեցի ես,
զի թէ դարձուսցէ զիս յերուսաղէմ առ հայրդ իմ
և թապաւոր, մատուցից ես զոհս ի քեբրոն. և
ահա կատարեաց ես զխնդրուածս իմ. արդ հրա-
ման տուր, զի երթայց և հատուցից զուխտս իմ,
զոր ուխտեցի ես, ի քեբրոն։ Պուրեն հայրական
ոչ եթող որդեսէր հօրն խնամով նկատել և քըն-
նել զգուշութիւն զգնացս փառամոլ որդւոյն. ուր
պէտք էին նմա ի միտ առնուլ, կամ գէթ կաս-
կածիլ՝ թէ այն ամենայն փառաւորութիւնք և փայ-
փայմունք, զոր առնէր ժողովրդեան, յայլ ինչ ոչ
հայէին, քայց որսալ զնոսա, և նոքօք բռնանալ և
առնուլ զթագ թագաւորութեան ի գլխոյ նորա։
Այսու նոյն իսկ պատրուակն սուտ բարեպաշտութիւնէ
երթալոյ ի քեբրոն, կարէր կասկած ի սիրտ նորա
արկանել. զի քեբրոն թէպէտ ի յարգի էր առ
եբրայեցիս՝ վասն անդ լինելոյ գերեզմանաց աբրա-
համու և սահակայ, քայց պատշաճապոյն տեղի զո-
հից և ողջակիզաց էր յայնժամ երուսաղէմ. զի
անդ էր խորանն վկայութիւնէ, և ատապանակ նոն։
Այո ինչ ապա յաղագս զոհելոյ երթալ ի քեբրոն,
եթէ ոչ՝ զի անդ օծաւ և հայր իւր. և տեղին՝
ամրոց հզօր ի վերայ լերինն. և առ նուազ այլևս
միագօտի լերինք գժուարամատոյցք՝ բաւականք
զբազում գունդս զօրաց աշխատ առնել։ Այս էր
որ վարէր զաբեսողոմ երթալ ի քեբրոն. միանգա-
մայն և առ ի դիւրութիւն կուսակցաց իւրոց անդ
հաւաքիլ առ նա. և տեսանել թէ ոյք, և որչափ
լինիցին թիւ բազմութիւնէ նոցա. զի ըստ այնմ կար-
դեսցէ զգործառնութիւնէ իւր։ Սակ դաւիթ ոչինչ
այսպիսի կասկած առեալ, հաւատաց բարեմտու-
թիւնէ սուտ բարեպաշտութիւնէ որդւոյն, և արձակեաց
զնա երթալ խաղաղութիւնէ։

Ընկալեալ աբեսողոմայ զայս հրաման, եւ յե-

բուսաղէմայ՝ առեալ ընդ իւր քայ ՚ի սովորական Թիկնապահաց իւրոց և սուրհանդակաց՝ այլևս արս երկերիւր, որք պատրեալք ՚ի նմանէ՝ երթային միամտութեբ, ոչ գիտեալով ամենևին զխորհուրդ նորա։ Իբրև եհաս ՚ի քեբրոն, հրեշտակս արձակ կեաց յամենայն ցեղս իսրայէլ. և՚ի վերայ լերանց կարդեաց փողահարս ՚ի զանազան աեղիս՝ սահմանեալ հեռաւորութբ ՚ի միմեանց. որպէս զի ՚ի լսել միոյն զձայն եղջեր փողոյն քեբրոնի, հաղորդեսցէ միւսոյն, և նա այլում, և այնպէս ՚ի սակաւ ժամս լսելի լիցի ձայն այնր առաջնոյ փողոյ ընդ համօրէն հրեաստան։ Նոքա հրեշտակացն պատուիրեաց, զի ՚ի լսել զհնչումն փողոց՝ յոր քաղաք և գտցեն, աղաղակեսցեն և ասասցեն, եթէ Թագաւորեաց աբեսողոմ ՚ի քեբրոն։ ՚Ի նմին ժամանակի առաքեաց ՚ի դաւիթ, այն է՝ Թե կուա քաղաք, և կոչեաց զաքիտոփել զմեծանուն խորհրդականն դաւիթ, բայց յայնժամ Թշնամի նմա՝ վասն նախատանացն, զոր արար դաւիթ աղգատոհմի իւրում յանձն բեբրսաբեայ, որ էր Թոռն նորա, դուստր եղիբայ որդւոյ աքիտոփելայ. ա. ԹագԻ. ի՟. 3։ Օ այս ամենայն այսպէս կարգեալ աբեսողոմայ, իբրև եհաս աքիտոփել, սկսան քահանայք մատուցանել զղօհս, և ինքն կայր ՚ի վերայ զօհից, որպէս և փոքահարք հնչեցուցանել զփողս ՚ի վերայ լերանց զօրին արձագանգաց հնչեալ ՚ի լեռնէ ՚ի լեառն, որով ՚ի սուղ ժամանակի լսելի եղեն յամենայն ցեղս իսրայէլ։ Եւ անդ ՚ի քեբրոն գաղտնի խորհրդակիցք աբեսողոմայ սփռեալ աստ և անդ ՚ի մէջ ժողովրդեան, աղաղակեցին, կեցցէ աբեսողոմ արքայ. զնոյն աղաղակեաց և բազմութիւն ամբոխին, և հնչեցաւ բարբառն ընդ երկիրն իսրայէլ. և յամենայն կողմանց եկին դունդ դունդ, և եղև ժողով սաստիկ։ Օ այն ինքնայօրդոր եկաւորութիւն ժողովրդեանն՝ առեալ աբեսողոմայ, ուրախ եղև յոյժ. զի համարէր արդէն ՚ի ձեռին ունել զթագաւորութիւնն. և յայն ոչ գիտէր՝ եթէ յերկնից դատաստանն հասեալ է ՚ի վերայ նորա։

ընդ նոյն ձանապարհ՝ որով կարծէր հասանել նրա-
ւել յաթոռ թագաւորութեանն, աճելով զնա ի կա-
խաղան չարախտաւոյա մահու. ի խրատ և յուսումն
իշխանաց և սոսկականաց, եթէ մարդկային հնա-
րագործութիւնք թէպէտ և թուեսցին յաջողութիւն
ի գլուխ ելեալ, միշտ կասկածելի են, եթէ յաջո-
ղութիւն նոցա է երկն և ծնունդ անօրէնութեան:
Վանի խմաստութիւն և խորհեսցի, միշտ չարաչար
խորհի, և խորհի յիւծ մեղանչելով:

Որպէս այն ժողով լինէր ի քեբերոն, եհաս գու-
կան առ դաւիթ, եթէ սիրտ ամենայն արանց իս-
րայէլի եղև զհետ աբեսողոմայ թագաւորեցուցա-
նել զնա: Ընդ այն գոյժ կարեվէր խոցեցաւ դա-
ւիթ, այլ ոչ չփոթեցաւ. զի ծանեաւ առ ժամայն՝
եթէ տէր հարկանէ զնա ի ձեռն որդւոյն, ըստ
սպառնալեաց նաթանայ մարգարէին, եթէ սուր
ի տանէ նորա մի հեռասցի: Ապայց կամեցեալ
խնայել ի ժողովուրդ իւր, զի մի ի պատճառս նո-
րա նոքա զմիմեանս կոտորեսցեն, զի որպէս ոչք յե-
րուսաղէմ էին ընդ նմա, նոյնպէս և սպստամբք՝
ոչք զհետ աբեսողոմայ չոքան, ժողովուրդ իւր
էին, և ամենեքեան որդիք իսրայէլի. վասն այնորիկ
առաջին խորհուրդ նորա՝ զոր առաջի արար իւրոց
զօրավարաց և այլոց ոչք առ նմա էին, այս եղև,
փութալ եւանել մեկնիլ յերուսաղէմ քաղաքէ. զի
մի ասէ յեզակարծուն ի վերայ հասեալ աբեսողո-
մայ, արկանիցէ ի վերայ մեր չարիս, և հարկանի-
ցէ զքաղաքս սրով սուսերի: Ամենեքեան գովեցին
զխորհուրդ արքայի. և ել արքայ, և ընդ նմա կա-
նայք նորա և որդիք ամենեքեան հետիոտս. պատ-
ուէր տուեալ իւրոց թիկնապահաց, և ամենայն
զօրուն, որք ընդ նմա էին յայնժամ յերուսաղէմ,
մինչ նաև սովորական պահապանաց քաղաքին,
չուել զկնի նորա. իսկ ի պահպանութէ իւրոց ար-
քունեաց՝ եթող միայն տասն կին յերկրորդական
կանանց անտի իւրոց. այլ ոչ զինուորս, զի մի գա-
զանացեալ պատանին ի մարտ մատուցեալ ընդ նո-
ա՝ հրձիգ արասցէ զարքունի ապարանս. որպէս

զի Թէ յաղթեսցէ ապստամբացդ, որպէս ակն ունէր, և դառնայցէ Երուսաղէմ, անարատ գոցէ զտուն իւր։

Եւրդ՝ ելեալ դաւթի՛ի քաղաքէն, եկաց՛ի տեղւոջ ուրեք՝ հանդէս առնել զօրուն որ ընդ նմա. էանց նախ ամենայն տունն արքայի, և ծառայք նորա, և ամենայն զօրքն։ Եւր ընդ նոսա և գունդ մի վեցհարիւր արանց գեթացւոց՝ ամենեքին քաջ պատերազմողք. և զօրագլուխ նոցա մի ոմն այր զօրաւոր անուանեալ Եթթի՝ նոյնպէս գեթացի, սակաւ ժամանակաւ յառաջ ինքնայորդոր եկեալ՛ի գեթայ քաղաքէ. որ ընդ այն ժամանակս էր ընդ տէրունէքն դաւթի, և բնակէջաց նորա ընկալեալ զօրէնս եբրայեցւոց՝ մտեալ էին՛ի ծառայութիւն նորա։ Եւ նոսա տեսեալ դաւթի երթալ ընդ նմա, զարմացաւ ընդ միտս իւր, դարձաւ և ասէ ցեթթի ցզօրագլուխ նոցա, ընդէ՞ր գաս դու ընդ իս, ուր ես իսկ չգիտեմ յո՛ երթալոց եմ. ո՛չ ապաքէն այր օտար ես դու, և խնդրեցար ելեր՛ի տեղւոջէ քումմէ, և այն ինչ եկեալ հասեալ առմէզ՝ առ՛ի մե՛ր դարձեալ թափառիցիս ընդ իս։ Ահաւասիկ ես զոր արարեր, որով լիալիր ցուցեր զմիամիտ սէր քո և զանկեղծ հաւատարմութիւն քո առմէզ. զոր ոչ թողցէ քեզ տէր անվճար։ Եւրդ՝ ժողովեա զընկերս քո, և դարձիր ընդ նոսա յերուսաղէմ. և բնակեա՛ ընդ նորոյ արքայի. և մի՛ ինչ դիցես՛ի մտի, Թէ համարիցիս յինէն՛ի Թիւ ապստամբացն։ Ահա պատասխանի արի զօրավարն, կենդանի է տէր, և կենդանի է տէր իմ արքայ, ուր և երթիցէ տէր իմ արքայ՛ի մահու և՛ի կեանս, անդ եղիցի և ծառայ քո եթթի անանձնաբար քայէ. և տեսեալ դաւթի զհաստատութիւն նորա՝ առ ընդ նմա ընդ իւր։

Համարումք համարին, Թէ այն վեցհարիւրք՝ զորս տէր գիրն աստ գեթացիս կոչէ, ոչ էին բնիկ գեթացիք, այլ այն վեցհարիւրքն էին՝ որք՛ի ժամանակի փախստեան դաւթի յերեսաց սաւուղայ եղեն ընդ նմա ուր և երթայր. և զի առ սուղ ինչ

ժամանակ նստան և՛ի գէթ, յայնմանէ գեթացի կոչեցան։ Այլ այս մեկնութիւն ամենևին օտար և բռնական երևի։ 'Ալա' զի եթէ՛ ի բնակութենէ տուեալ էր նոցա անուն, յաւէտ սիկէլականացիս պարտ էր կոչել զնոսա, քան գեթացիս. զի առաւել ընդ երկար նստան նոքա՛ ի սիկէլակ, քան թէ՛ ի գէթ. ոչ ապաքէն և յովաբ և այլ զօրավարք դաւթի եղեն ընդ նմա՛ ի գէթ, սակայն ոչ ուրեք գտանեմք՛ ի գիրս կոչել զնոսա գեթացի։ Այրկրորդ՝ զի՛ ի ժամանակէ անտի մինչև ցայսր՝ ըստ ձիշտ ժամանակագրութեանն՝ էին անցեալ ամք երեսուն և եօթն. ապա չէ հաւանելի, թէ այն վեց հարիւրք, որք յայնչափ պատերազմունս մտին, ամենեքին ծերացեալ իցեն կենդանի մինչև ցայս ժամանակ։ Այս ևս զի զօրագլուխ այս վեց հարիւրոց էր եթէի գեթացի նորոգ յարեալ՛ ի դաւիթ, որպէս ասացաք համաձայն երևելի մեկնչաց. ապա չէ բնաւ հաւանելի, թէ այնպիսի հին և բազմաղիւն գնդի, որ յամենայն վիշտս նորա ընդ նմա տառապեցան, զօտարական ոմն կացուցեալ իցէ զօրագլուխ. Թո՛ղ զի դաւիթ զեթեթի և զընկերս նորա օտարս կոչէ, և նորոգ խախտեալ՛ ի տեղւոջէ իւրեանց։ Այլ այայտ է թէ բնիկ գեթացիք էին նոքա. զորս առ դաւիթ ընդ իւր. և կացոյց զնոսա յառաջապահ. զկնի նոցա զքերեթին և զփելեթին զգունդս ինքնագրաւ շահատակաց, և՛ ի մէջ նոցա երթայր ինքն արքայ, և ամենայն տուն նորա կանայք և որդիք. և յետ նոցա վերջապահ զօրքն, և ամենայն ամբոխն որ եւ զկնի նորա յերուսաղէմ։ Այմենեքին երթային հետիոտս, և ընդ այնպիսի դառնագին աղէտս արքայի լային մեծաձայն։ Այբրև հասին՛ ի հեղեղատն կեդրոնի, զտեղի առին. և ահա եհաս անդ սադովկ քահանայ, և ամենայն ղևտացիք ընդ նմա. որոց բարձեալ զտապանակ ուխտին Տեն՛ ի սիւնէն՝ բերին և կացուցին՛ ի պատշաճական վայրի ուրեք, մինչ էանց ամենայն ժողովուրդն՝ որ ելին զկնի տապանակին. եւ ընդ նոսա և աբիաթար քահանայապետ

զգեցեալ զեփուտ։ Ա՛սաս. Բ. Ընտ. ԺԵ. 24. փոխանակ աբիաթարայ, սովորական օրինակք եօթանասնից, որպէս և մերս թարգմանուելի՝ ընթերցուն, աբօ բէնաբ. այսինքն՝ է բէնաբայ, արտաքոյ ամենայն թարգմանուելոյ, որք միապէս աբիաթար ընթերցուն. ուստի կամ վրիպակ գրչաց է ասելի, և կամ ըստ յունաց բաց յանուանէ տեղւոյն բնթացեալ՝ պահելի և անուն աբիաթարայ։

Ա՛խիթարուելի մեծ եղև դաւթի՝ ի տեսանել զայնչափ սէր և զյօժարուելիւն ժողովրդեան առանձն իւր, և մանաւանդ զիոյթ և զեռանդն քահանայից և զևտացւոց պաշտօնէից նոն. բայց անպատեհ վարկաւ ընդ իւր շրջեցուցանել զգանձն զայն ածային. միանգամայն և երկեաւ, թէ գուցէ՝ ի բազմադիմի անցս փախստեան իւրոյ՝ անկցի ուրեք՝ ի վտանգ ինչ անարգուելոյ։ Ասին իւրմէ ասաց ցսադովկ դարձուցանել զնա յերուսաղէմ. եթէ ասէ գտից շնորհս առաջի նորա, դարձուսցէ զիս, և ցուցցէ ինձ զդա և զվայելչութիւնն դորա։ Ապա թէ չիցէ տր հաճեալ ընդ իս, և ասասցէ ինձ, չեմ այսուհետեւ թագաւոր, պատրաստ եմ երկիր պագանել վճռոյ արդարութեանն նորա, և հրաժարել յաթոռոյ, ի թագէ, և ի կենաց իսկ ի լուացումն աղտոյ մեղացս։ Ա՛րթամ և չգիտեմ զինչ լինելոց եմ. բայց երթամ կամակար յանձն առեալ զամենայն, զոր ինչ անօրինեացէ նա ինձ ի վերայ իմ։ Ասէ դու սադովկ քահանայ նոն դարձիր խաղաղութե՛ ի քաղաք, դարձցի և աբիաթար քահանայապետ ընդ քեզ. և հանգուսջիք զտապանակ ուխտի նոն ի խորանի իւրում ի սիովն. մի կարծիցէք, եթէ մեկնելով ձեր յինէն՝ սէր ձեր և նախանձ անգործ մնասցէ. աբիմաաս որդի քո, և յովնաթան որդի աբիաթարայ գարձցին և նոքա ընդ ձեզ. և ի ձեռն նոցա ածդ ասասջիք ինձ զամենայն որ ինչ լինիցի յերուսաղէմ։ Ա՛ս ոչ կարի ինչ հեռացայց, այլ նստայց բանակաւ իմով ի դիւրի անապատին, որ է յարևելեան կողմն ի մէջ երուսաղէմի և եբիքովայ, մինչև առից զբոյց ի ձէնջ։

Դարձան նոքա ըստ բանի արքային, և դարձու-
ցին զտապանակ Տեն յԵրուսաղէմ. իսկ դաւիթ, և
զօրք նորա, և ամենայն ժողովուրդն որ էին ընդ-
հետ նորա՝ ամենեքեան սգագղեստք և բոկոտն իբրև
մեզապատք, որք աճին ՚ի տանջանս մահու, եր-
թային լալով և ծածկեալ գլխով, և անցին գՀե-
դեզատան կեդրանի։ Իբրև եւանէին ընդ զառ՚ի վերն
ձիթենեաց լերինն, ազդ եղեւ դաւթի՝ եթէ և աքի-
տոփէլ է ընդ աբեսողոմայ. նոր տագնապ եհաս ՚ի
նա. և զի գիտեր եթէ ՚ած միայն կարօղ է խափա-
նել զչար հեռանաս խորհրդոյ ամբարիշտ խորհր-
դականին, խնդրեաց ՚ի նմանէ ցաւագին սրտիւ
ցրուել զխորհուրդ նորա։ Հասեալ արքայի ՚ի գլուխ
լերինն՝ դարձաւ ՚ի կողմն երուսաղէմի, և անկեալ
՚ի վերայ երեսաց իւրոց՝ երկիր եպագ ՚ած։ ՚Ի նմին
ժամու եհաս քուսի արուքացի պատառեալ զպատ-
մուճան իւր, և հող ՚ի գլուխ. էր սա խորհրդա-
կան դաւթի՝ որպէս և աքիտոփէլ, բայց անյողդ-
յողդ բարեկամ և ձշմարիտ հպատակ. ոչ գտաւ
նա յերուսաղէմ, յորժամ արքայ մեկնեցաւ անտի.
այլ իբրև լուաւ զփախուստ նորա, աձապարեաց և
եհաս առ նա ՚ի լեառն ձիթենեաց. ասէ ցնա ար-
քայ. եթէ գայցես ընդ իս, բեռն լինիս ինձ. զայս
ասաց, զի գուցէ քաջագոյն էր նա ՚ի խորհրդակա-
նութէն, քան ՚ի զինուորութէն. որ և յայտ անտի
է, զի դիմագրաւ աքիտոփէլայ կամեցաւ դաւիթ
կացուցանել զնա՝ ցրել զխորհուրդ նորա։

Եւ ասէ ցնա, մեծագոյն ծառայութի՛ւն
առնես ինձ, եթէ դառնայցես յերուսաղէմ, և
խոհական հնարագիտութի՛ւք մտցես ՚ի ծառայութի՛ւն
աբեսողոմայ, ասելով նմա, որպէս ցարդ ծառայե-
ցի հօր քումմ, արդ իրաւունք են՝ զի ծառայեցից
քեզ որդւոյ նորա արքայ. ապա թէև կացից առա-
ջի քո՝ որպէս էի առ հօր քումմ։ Եւ պարզաբար՝
ցուցցես զքեզ մտերիմ բարեկամութի՛ւք յարեալ ՚ի
նա, որպէս զի մի՛ ինչ ՚ի գաղտնեաց իւրոց ծած-
կեսցէ ՚ի քէն. և դու արիացուն կայցես ցրել զխոր-
հուրդ աքիտոփէլայ, զոր տայցէ յիմ ՚ձեռս։ Եւ

ահա սաղմոսիկ և աբիաթար քահանայք են յերուսաղէմ. զոր ինչ լսիցես ՚ի խորհրդարանի արքային, ազդ արասցես նոցա. և նոքա ՚ի ձեռն որդւոց իւրեանց աբիմաասայ և յոնաթանու հասուցանեն ինձ յանապատ անդր՝ ուր կայցեմ։ Ղեւաւ քուսեայ զայս պատուէրն՝ դարձաւ յերուսաղէմ. ուր այն ինչ ինքն մտանէր ընդ մի դուռն. աբեսողոմ եմուտ ընդ այլ դուռն մեծաշուք փառօք և անհամար բազմութիւք։ Գաւիթ ՚ի դարձուցանել զքուսի յերուսաղէմ առ աբեսողոմ, արար զոր սովոր են առնել զօրավարք ՚ի ժամանակս պատերազմի, առաքելով լրտեսս ՚ի բանակ թշնամեաց ՚ի ծածուկ՝ իմանալ զոր ինչ գործի անդ ՚ի զգուշութիւն իւրեանց՝ կամ զոր առնեն թագաւորք գաղտ պահելով բարեկամս յարքունիս այլոց թագաւորաց, առ ՚ի գիտել զխորհուրդս թշնամեաց, և ՚ի խափանել ըզչնաս որ անտի մարթի հասանել նոցա։ Եւ այս ոչ ի դաւաճանութիւն կամ մատնութիւն, այլ զինուորական հնարագործութիւն, զոր ամենայն թագաւորք գիտեն և առնեն. վասն որոյ և ամենեքեան զգուշանան անձանց. զնոյն զգուշութիւնն անկ էր ունել և աբեսողոմայ։

Յետ արձակելոյ դաւթի զքուսի՝ ինքն կալաւ զճանապարհ իւր, և այն ինչ իջանէր ՚ի լեռնէն ձիթենեաց, իբրև սակաւիկ մի հեռացեալ էր ՚ի գլխոյ լերինն, ահա եկն ընդառաջ նորա սիբա ծառայ մեմփիբոսթեայ որդւոյ յոնաթանու. որում յերեանել դաւթի յերուսաղէմ՝ պատուիրեաց մեմփիբոսթէ կազմել ձիս իւր, զի հեծեալ ՚ի նա՝ գընայցէ ընդ արքային. քանզի գոլով հաշմ ոտիւք՝ ոչ կարէր հետի ընթանալ։ Սակ սիբա այր աչալուրջ և խորամանկ, ՚ի պարագայից իրացն՝ որպէս երևի՝ դուշակեալ զձախող կատարած աբեսողոմայ, և զդարձ դաւթի անդրէն յաթոռ թագաւորութեանէ իւրոյ, կամեցեալ ընդ նոսին գտանել առաջի նորա ընչիւք ՚ի նէն իւրոյ, գնաց և կազմեաց զինն՝ ոչ վասն ՚ի նէն իւրոյ, այլ վասն անձին. ընդ նմին առեալ և պաշար բեռինս երկուց իշոց, երկերիւր նկանակ

հայի, և հարիւր չամչեայս, և հարիւր ողկոյզս արմաւոյ, կամ հարիւր չափ թարմ պտղոյ, և մար մի գինւոյ, եւ նոքօք ընդ առաջ դաւթի։ Ասէ ցնա արքայ. վասն որո՞ է այդ ամենայն պատրաստութիւն. ետ պատասխանի սիբա, էշքդ նստեալոց արքայի, և պաշարդ՝ ի կերակուր և յըմպելի ծառայիցդ աշխատելոց և լքեալոց յանապատի ասաց։ Ասէ ցնա արքայ. դու խօսիս ընդ իս՝ ի դիմաց քոց, և ինչ ոչ ասես վասն որդւոյ Սաւն քոյ. ուր է նա, և զի՞նչ խորհի. յայնժամ անօրէնն ըստ մտի բանս յօդեաւ զրպարտութիւնե՝ ասէ, ահա նստի նա յերուսաղէմ գուարձացեալ, ակն ունելով՝ ի պղտորութիւնե աստ յայսմիկ՝ ի ձեռս բերել զթագ հաւուն իւրոյ աւուրցայ. այսօր ասէ դարձուսցեն ինձ տունն իսրայէլի զթագաւորութիւնե հօր իմոյ։ Ովանդակ զոր ասաց՝ սուտ էր, կամ գոնէ կէղակարծ դատուցին չարաչար. այլ դաւիթ հաւատաց նմա. զի չիք ինչ յանձնապատ ոյն՝ ի մարդկային դատողութիւնս, յորում սխալեցին նաև արք զգաստք և արդարակորովք, որպէս հաւատաւ կասկածոտ մտօք իբր ձշմարիտ զայն՝ որ ունիցի զկերպարանս իմն ձշմարտութե։ Ասա ամբաստանօղն էր բազմամեան ընտանի ծառայ տանն սաւուղայ միշտ հաւատարիմ համարեալ. ամբաստանեաւն Թոռն Թագաւորի, որում ըստ կարգի հասանէր Թագաւորութինն. ժամանակն՝ ապստամբութե. դաւիթ՝ փախստական յաթռոյ. և՝ ի յուզմունս զանազան խորհրդոց ծըփեալ, որք չեաւն նմա պարապ՝ ի միտ ածել զգատաւորական պարտիս՝ լսել և հակառակ կողմանն, կամ գոնէ զկանոն հասարակաց օրինաց, ըստ որոյ՝ չէ ընդունելի՝ ի դատաստանի վկայութե ծառայի զնոնէ։ Ասա միայն՝ ի ժամուն եկն՝ ի միտս նորա, վարձատրել զկեղծեալ քարեկամն, և պատժել զկարծեցեալ թշնամին, զրկելով զնա յամենայն հայրենի ընչից, և տալով զայն՝ ի վարձ անօրէնն մատնողին. ահա ասէ դաւիթ ցսիբա, քեզ լիցի ամենայն ինչ՝ որ է մեմիբեոսթեայ. դու ծառանգեսցես զնա՝ ի պարզև յինէն։ Ասա և զոր

ինդրեր նենգաւորն. վասն որոյ և վաղվաղակի երկիր եպագ՝ ասելով, զտի չնորհս առաջի քո տէր իմ արքայ:

ԳԼՈՒԽ ԺԶ.

Դաւթի համբերութեամբ պահէ զառն անէծանաց սեմէյ: Աբիսա արտասցի ցդէ զչաղ նորհրդոյ աքիտոփելայ:

Ոյս վրիպակ ներբելի, յոր յայն դառն և դժպատեհ պարագայս պաշարեցաւ դաւիթ, փութով սրբեաց առաջի ՚ն յայնմ ձանապարհորդութե՝ դերազանց իմն առաքինութիւք արիական համբերութե. զոր միայն դաւիթ, կամ այլ ոք մեծահաւատ ասպաշնարհոզ նման դաւթի՝ կարօղ էր առնել: Վասնզի ՚ի դիմել նորա յանապատն կոյս՝ երթալով առ ատորոտով լերինն, յորոյ վերայ էր բառուրիմ կոչեցեալ քաղաք ցեղին բենիամինի ՚ի հիւսիսակողմն երուսաղէմի, ունելով արքայի յաջմէ և յահեկէ զզօրապետս իւր, և զկնի զամենայն ժողովուրդն, որ զՀետ նորա չոքան. ահա էլ ՚ի քաղաքէ անտի այր մի յազգականութէ տաւուղայ՝ անուն նորա սեմէի որդի գերեայ, միշտ անհաշտ թշնամի դաւթի. և երթալով ընդ կողայ լերինն ոչ կարի ինչ ՚ի բացեայ յարքայէ, անիծանէր զնա անէծս ցաւագինս. էլ էլ ասէր, փախիր յարքայականքաղաքէդ այր արիւնըռուշտ, այր անօրէն. դաճոյց ՚ի քեզ տէր զամենայն արիւնս տանն սաւուղայ. զոյ. զինչս նորա յափշտակեցեր, և զթագաւորութիւնն քոնականեցեր. և ահա արդ ետ տէր զայն ՚ի ձեռս աբեսողոմայ որդւոյ քոյ. և եցոյց քեզ զչարիս քո, զի այր արեանց ես դու: Ոյս և զայլ սոցին նման լուտանս՝ որ ինչ գայր ՚ի բերանն, լուտայր ընդդեմ արքայի: Այլ այնու ոչ կարելով ըզ-

մոլեգին կատաղութեն իւր յապեցուցանել, որչափ
ինչ քար ի ձեռս նորա գայր, արձակէր ի նա. և
ուր քար ոչ գտանէր՝ ձգէր զձեռն ի հող և ցանէր
ի վերայ: Ա.մենեքին որք էին ընդ արքայի սրտմըտեալ կրձտէին զատամունս. միայն արքայն երթայր
զձանապարհ իւր լուին և խաղաղական ոգւով:

Ա.պա աբեսա որդի շարուհեայ ոչ ևս կարեցող
հանդուրժել՝ ասէ ցարքայն. ո՞ կարէ տանել այդմ,
զի շուն մի մեռեալ այդպէս անիծանիցէ զարքայ.
Թո՛ղ տուր ինձ, զի անցից և դարձայց առժամայն՝
բերելով զգլուխ անօրինին: Ա.տ պատասխանի դարձուածն. զի՞ է ձեզ որդիք շարուհեայ, զի այսպէս սիրտ
ձեր միշտ հակառակ է սրտի իմոյ. Թո՛ղ տուք նմա
անիծանել. զի ՚ներ աստ ՚ի ձեռին զչարաբան լեզուս
նորա հարկանել զդաւիթ, կամեցեալ ՚ի վերայ ա.պստամբութեն որդւոյ իմոյ յաւելուլ և զնոցուածս
սայրատուր լեզուի անկշան սուրկիդ իմոյ. և ո՞վ եմ
ես կամ դուք, զի յանդգնիցիմք համար խնդրել
առ ՚ի բարձրելոյն՝ թէ ընդէր այդպէս արարեր:
Ա.հաւասիկ տեսանէք. զի որդի իմ որ ելեալ է յորովայնէ իմմէ, խնդրէ զանձն իմ, որչափ ևս որդին
յեմինեայ. Թո՛ղ տուք նմա անիծանել ՚ի յապուրդ
թշնամութեն իւրոյ. որով թերևս առաւել բարիս
արասցէ ինձ քան զոր մնորթ իցէ կարծել. զի ո՞
գիտէ, թերևս տեսեալ ՚ներ զտառապանս իմ՝ ողորմեսցի և հատուցանիցէ ինձ բարիս, զանէծս նորա
յաւուր յայսմիկ յօրհնուի իւրոյ առատութեն շնորհելով: Ա.յսպիսի ՚ներ ձայնակոչ արիական խորհրդով
երթայր դաւիթ զձանապարհ իւր, և սեմէի ընդ
նմա ընդ լանջակողին լերին, մինչև էանց զբաւուրիմ, և եկն ՚ի սահմանեալ անապատն յաին յորդանանու. և անդ ետ հանգիստ զօրացն իւրոց, զի կէին
աշխատեալ յոյժ ՚ի բուռն գնացից ձանապարհի.
մինչև ընկալցի լուր յերուսաղէմ, ըստ որում էր
եգեալ բան ընդ քուսեայ և ընդ քահանայից:

Ա.ինչ դաւիթ և ամենայն զօրք նորա նստեալ
յանապատի անդ հանգիստ առնուին, աբեսողոմ
իբր թագաւոր յաղթական մեծաշուք փառաւք եմուտ

անդիմադարձ յԵրուսաղէմ. բայց գտեալ զամենայն դրունս քաղաքին առաջի իւր. եր ընդ նմա և մեծ խորհրդական նորա աքիտոփէլ: Ի նմին ժամու և քուսի հասեալ յԵրուսաղէմ, աձապարեաց գնաց ընդառաջ աբեսողոմայ, երկիր եպագ նմա և ասէ, կեցցէ՛ արքայ. տալով նմա զարքայական անունն ըստ ըղձից ամբարտաւանին: Աբեսողոմ զառաջինն կասկած կալաւ զնմանէ, զի գիտեալով զնա միշտ մտերիմ բարեկամ հօր իւրոյ, ոչ կարէր հաւատալ, թէ՝ ի ծերութենէ իւրում այնչափ փոփոխեալ իցէ՝ մինչև այնպէս անարգաբար վտարանջել՝ ի նմանէ: Այլ կամեցեալ իմանալ զպատճառն, ՚ի դէմս ածէ նմա զարբազան օրէնս բարեկամութենէ. այդ գո՞ւթ էր քո՝ ասէ, ընդ բարեկամին քում. արդարև ես քնաւ ակն ոչ ունէի տեսանել զքեզ այժմ ասա, այլ ասէի ՚ի մտի, թէ ՚ի թողուլ ամենայն իսրայէլի զդաւթի՝ գո՛ւթ քուսի հին բարեկամ նորա գտցի նմա հաւատարիմ, և կացցէ առ նմա ՚ի միխիթարել զնա ՚ի թշուառութենէ նորա: Այս այսպիսի յանդիմանութիւն հեգնական ազնիւ այլայլեցաւ քուսի, և ոչ փոխեաց բնաւ զդէմն երեսաց. այլ համարձակ արար պատասխանի, ոչ սուտ լինչ յօգելով. և ոչ ՚ի պատեհ յարգութենէ օրինաւոր թագաւորի իւրոյ դաւթի պակասեալով. Այլ այդպէս ե՞ ասէ. երախտագիտութենին և բարեկամութենին ունին սահման, զորով անցանել յանցանք են, և ոչ հաւատարմութենի: Ո՞հետ այնորիկ երթայր, և նորա եղէց, և ընդ նմա նստայց, զոր ընտրեաց նա՝ և ժողովուրդս այս՝ և ամենայն այր իսրայէլի. Թո՛ղ տուր աղաչեմ, զի ասացից. ո՞ւմ ծառայեմ ես՝ ՚ի ծառայել քոյին մեծութենէ. միթէ՞ ապստամբ իցեմ ՚ի հօրէ, զի ծառայեմ որդւոյ նորա: Այս համարիմ զանձն իմ հաւատարիմ անդրդուելի հաստատութենէ, յորժամ որպէս ծառայեցի հօր քում, նոյնպէս ծառայեցից քեզ որդւոյ նորա անսայլայլելի հաւատարմութենէ:

Ընկալաւ զնա աբեսողոմ յարքունիս իւր սիրով. բայց՝ տակաւին ՚ի սկզբան անդ՝ յորժամ ասաց յա-

քիտոփել խորհուրդ ի մէջ առնուլ առ յաջողութ
յամբոկ գործոյն ժամանելոյ, երևի թէ ոչ եմոյծ
զնա ի խորհուրդ։ Ա.յս աքիտոփել էր մի ի դըժ-
ուարագիւտ արանց անտի՝ որք միշտ գտանին յար-
քունիս Թագաւորաց, այր խորագէտ, արթուն,
աչալուրջ և յառաջատես, ի կշռուիս իրաց ճշգրիտ,
ի տրամաբանութենէ իւրում արագամիտ, ի նպա-
տակն՝ յոր դիտէր սրատես. ի գործադրութենէ յա-
ջողակ. և միանգամայն ասել՝ ի խորհուրդ և ի
կառավարութենէ իբր անհամեմատ, մինչև բաղդա-
տել գրոյն զխորհուրդ նորա մարգարէական պատ-
գամաց. խորհուրդ աքիտոփելայ ասէ զոր խորհէր,
այնպէս էր, որպէս թէ հարցանիցէ ոք բան յ՚ոյ։
Ա.այց ջունելով սանձ անձին՝ ոչ ուղիղ գիտակցու-
թի մտաց, ոչ զերկիւղ ՚ոյ ի սրտի, և ոչ գէթ
ամօթ մարդկային յերեսս, յընտրութի միջնորդաց
պատրաստ էր առ ոտն կոխել զամենայն արդարու-
թի զհաւատս և զօրէնս իսկ ՚ոյ գլխովին, միայն թէ
անվրէպ հասանիցէ ի նպատակն իւր։ Ա.ինչ ընդ-
դաւթի էր, հսկէր արթնութենէ չհանել ի բերա-
նոյ խորհուրդ ամպարշտութենէ, քաջ գիտելով ան-
կանիլ առ ժամայն ի չնորհայ նորա։ Ա.յլ յոր-
ժամ էանց ի կողմն աբեսողոմայ, եբարձ յերեսաց
զպատրուակ կեղծաւորութենէ, ոչ սոսկացաւ և ոչ
ամաչեաց տալ նմա խորհուրդ անօրէն, զոր այլ ոք
ոչ կարէր խորհիլ, և ոչ իսկ ընդ միտս անցուցա-
նել՝ բաց յաքիտոփելայ՝ զի գիտէր ոչինչ խղձել
ամպարշտին աբեսողոմայ ի գործ դնել, ծրչափ և
անպատեհս թելադիր լինէր նմա. Ա.՛րքայ, ասէ,
բարի է և յաջող սկզբնաւորութենիդ. բայց կատա-
րումն ոչ նոյնպէս եղիցի, եթէ ոչ առնայն իրօք
վստահացուսցես զժողովուրդն ոչ երբեք գալ ի
հաշտութենի ընդ հօր քումմ։ Ոքա արդարև ինքնա-
յօրդոր եկին զհետ քո. բայց որպէս երևի ինձ՝
տակաւին չեն անկասկած, թէ ի պատահել քեզ
անյաջողութենէ իմիք, զու որ քաջ ճանաչես զսիրտ
հօր քո, և վստահ ես միշտ գտանել ներողութենի ի
գթութենէ նորա, հաշտեսցիս ընդ նմա, և ժողո-

վուրդն իբր տպատամբ մատնեսցի ՚ի ցասումն արքայի։ Պա առ բառնալոյ զամենայն կասկած ՚ի սրտէ նոցա, հարկ է այնպիսի ինն նախատինս առնել հօր քումմ, զի ամենեքեան լինիցին հաւատարիմ՝ եթէ չիք և չիք այսուհետեւ հնար հաշտութեան։ Կամ եթող հայր քո տասն կին ՚ի հարճից իւրոց պահել զտունն, մնաւ առ նոսա ՚ի գործ պղծութեանն հրապարակաւ յանդիման համօրէն երուսաղէմի. զի լսիցէ ամենայն իսրայէլ, և հաստատեսցին ՚ի միտս իւրեանց, թէ ոչ ևս մնայ տեղի հաշտութեան. և յայնժամ զօրասցին ձեռք ամենեցուն որ ընդ քեզ են։

Ուրհնեալդ, զոր գուցէ և ոչ սատանայ կարօղ էր հնարել, լի անօրինութեամբ առ ինձ. որ սատիկ պատուիրանաւ հրամայէ յօրինս նոցա՝ մի ապրեցուցանել զայնպիսի եղեռնագործ. գՂեւ. ե. 11։ Կամ լի անամօթութեամբ առ մարդիկ. զի ո՞վ ոք ՚ի մարդկանէ, որ գէթ գոյզն լինչ նշոյլ բանի ունիցի ՚ի տաղտկացի յայնպիսի անասնական գարշութենէ։ Այլ լի էր և յետին յիմարութեամբ, որչափ զի յետին անմտութեամբ է պատերազմողին անհնարաւոր առնել զհաշտութենէն. զի դիպուածք պատերազմաց պէս պէս են, որոց չէ մարթ լինել յառաջատես. քանզի անդամ պատահի՝ զի որ կարծէր օրինս տալ իւրում դիմամարտի, ինքն ստիպի օրինս առնուլ ՚ի նմանէ։ Յաղթութենէն չէ երբէք հաւաստի. և եթէ դիպեսցի խորտակումն լինչ մեծ, հարկ է ՚ի յուսահատութեն անկանիլ այնմ, որ գժուարացոյց զհաշտութենէն։ Որ այնպէս անզօր կողմն դաւթի, մինչև չլինել ակնածելի. աբեսողոմ արդարև ունէր ընդ իւր զբազմութեն, այլ դաւիթ ունէր գունդ կրթականաց. զինուորք աբեսողոմայ էին մարդիկ հաւաքածոյք, այլ դաւթի էին երևելի սպարապետք գնդից, և ընտրելագոյնք ՚ի զօրապետաց, և արիագոյնքն ՚ի պատերազմականաց։ Ականաւորն գլխաւոր էր դաւիթ յերուսաղէմ, այլ պարտ էր քաջ խորհրդատուին զմտաւ ածել, կամ գէթ կասկածել թէ գուցէ յասպարիզի անդ մարտին ոչ սա-

կաւք անցանիցեն ՚ի կողմն դաւթի. և եթէ յաղթեսցի աբեսողոմ, որով դիմօք երևեսցի առաջի դաւթի, բարձեալ ունելով յանձին՝ բաց յանօրէնն ապստամբութէ, նաև զաշխարհալուր նախատինս՝ զոր արար հօր իւրում, ՚ի կանայս նորա անօրինելով։

Ա.Ը ՚ի խորտակել զեղջիւր ամբարտաւանութէ այսպիսեաց, քաղցմ անպատմ թոյլ տայ կուրանալ մտաց նոցա, և այնպէս՝ ՚ի կարծելն հակել աչօք բացօք, ըմբռնիլ յորոգայթ, և ՚ի լոյս տունջեան խարխափել իբրև ՚ի մթան գիշերոյ։ Ա.թէ անդէր գտեալ քուսեայ, կարծեմ թէ ՚ի խորհրդարանի անդ յամօթ արարեալ էր զաքիտոփել լսել անդամ ոչ հանդուրժելով, թէպէտ թէ հաւանիլ ընդ այն անաստնական պիղծ թէլադրութէն նորա. զոր յայնժամ միայն գիտաց, մինչ ետես զգործն։ Ա.անզի անպատկառն աբեսողոմ անդիմադարձ հնազանդեալ զաղբալի առաջարկութէն խմաստուն խորհրդականի իւրում, հրամանն ետ վաղվաղակի վրան հարկանել ՚ի վերայ տանեաց արքունի պալատան, ուր ՚ի լոյս արեգականն յանդիմանն ամենայն իսրայէլի եմուտ ինքն, և ընդ նմա տասն կանայք հօր իւրոյ։

Օ.ղնի այսր նշաւակութէն՝ վերստին ՚ի խորհուրդ մտին. խօսեցաւ աքիտոփել, և ասէ ցաբեսողոմ. չէ պարտ ժամավաճառ լինել, այլ փութալ վաղվաղակի յայսմ իսկ գիշերի զհետ պնդիլ դաւթի, և ցորչափ է նա յաշխատութէ ձեռընթաց փախստեան վաստակաբեկ, և ՚ի տրտմութէ և ՚ի խորհրդոց շփոթմանէ լքեալ և սրտաթափ, հասանել ՚ի վերայ նորա։ Ա.ՀԷ ասեմ զի դու երթիցես, զի քեզ որդւոյդ չէ անկ այս գործ. այլ ես ինքնին ընտրեցից ինձ երկոտասան հազար արանց, և հասեալ զցայգս ՚ի վերայ նորա՝ երբ ակն ոչ ունիցի, զարհուրեցուցից զնա՝ և զորս ընդ նմա, և փախիցէ զօրն ՚ի նմանէ. և սպանից զարքայ միայն, և դարձուցից զամենայն զօրն առ քեզ, զոր օրինակ դառնայցէ հարսն առ այր իւր. և այնպէս

դու միայն Թագաւորեսցես, և ամենայն զօրն եղիցի ՚ի խաղաղութիւն: Այս խորհուրդ պատերազմական՝ քաջ էր և դիպաւոր ամենայն իրօք. որ Թէ ՚ի գործ եդեալ էր, ոչ գոյր զերծուածն դաւթի: Նաւանեցաւ աբեսողոմ և ամենայն ծերքն, մինչ զի փոքր միւս ևս և տալոց էր աբեսողոմ հրամանաբեւտուիելայ՝ առնել զոր խորհեցաւ:

Այլ այս էր ժամն որոշիչ՝ սահմանեալ ՚ի վերին նախախնամութենէ ապրեցուցանել ՚ի վերահաս վտանգէ զծառայն իւր զդաւիթ, ըստ սրտառուչ պաղատանաց նորա առ Տէր ամէն իւր, ցրել ՚ի նմանէ զխորհուրդ աբիտոփելայ: Զանգի աբեսողոմ Թէպէտ հաձեցաւ ընդ խորհուրդ աբիտոփելայ, բայց հայեցեալ ՚ի վտանգ առաջիկայ գործոյն՝ կամեցաւ լսել և զխորհուրդ քուսեայ. վասն որոյ մինչեւ էր արձակեալ ժողովոյն, ետ կոչել զնա ՚ի ներքս, և առաջի արարեալ նմա զխորհուրդ աբիտոփելայ՝ հրամայեաց ետ ասել համարձակ և զիւր խորհուրդ, եթէ այլազգ ինչ Թուիցի նմա: Ասէ քուսի. ոչ գոլեմ այս անգամ զհմաստուի աբիտոփելայ, նախանձաւորուի նորա վասն քո՝ արքայ, մոլորեցոյց զնա: Զու ինքնին գիտես զդաւիթ զհայր քո և զարս որ ընդ նմա. ամենեքեան են զօրականք քաջք, աներկիւղ ՚ի մահուանէ՝ դառնացեալք ընդ նախատինս արարեալ արքայի իւրեանց և լի ցասմամբ իբրև զարջ որդեկոտոր ՚ի վայրի: Զու հայր քո այր հզօր պատերազմող, որ չէ սովոր Թիկունս դարձուցանել ՚ի մարտի. քաջահմուտ ՚ի հնարս պատերազմի, անխոնջ ՚ի վաստակս: Ցեղեակ է և ամենայն հանդամանաց երկրին, գիտէ զամենայն վայրս Թաքստեան. գուցէ և այժմ իսկ իջեալ զօրեալ ՚ի միում ՚ի յանձաւաց և յայրից, որք պատսպարան եղեն նմա ՚ի հալածմանէնս սաւուղայ: Օ՜ զրաւարք նորա և Թիկնապահք արիւնք և աչալուրջք և ջեռեալք սրտմտութեամբ ցյետին ձիգն մարտնչել. որ ոք զառաջինն ՚ի դիմի հարկանիցի նոցա, դիցէ ՚ի մոխ սպանդ երթալ. և այն շատ եղիցի զամենայն զօրն ահաբեկ առնել, և ցիր և

ցան կացուցանել, և հռչակել թէ եղև խորտա-
կումն ժողովրդեան որ զկնի աբիսողոմայ։ Ոչաւիթ
հայր քո այր զօրութեամբ է, սիրա նորա իբրև զսիրտ
առիւծու վառեալ, և արք զօրութեամբ ընդ նմա. եր-
կոտասան հազարք չեն բաւական ընդդէմ նոցա։
Ապա ես այսպէս տամ քեզ խրատ. ժողովեսցի
ամենայն այր իսրայէլի ՚ի դանայ մինչև ցբերսաբեէ
իբրև զաւազ առ եզր ծովու բազմութեամբ. և դու
երթիցես ՚ի գլուխ նոցա. և պատեսցուք զարամբք
որ առ նովաւ իցեն, և ոչ ապրեցուսցուք զնորա և
ոչ զոք. և դաւիթ եթէ մտցէ և ամրասցի ՚ի միում
՚ի քաղաքաց, ասէ բազմութիւն պատերազմականացս
պաշարեսցուք զնա. որպէս թէ պարանաւ կապել
չուրջանակի զպարիսպս, և քարշել զքաղաքն ողջոյն
հանդերձ տամբք և բնակչօք ցհեղեղատս. և մի
մնասցէ անդ՝ և ոչ քար մի։

Ամենայն դիտումն քուսեայ էր տալ ժամանակ
դաւթի, զի կարիցէ յապահով տեղւոջ ուրեք ամ-
րանալ, և մարթասցին ՚ի զանազան կողմանց հա-
սանել առ նա զինուորք, որք հաւատարիմ էին
նմա։ Այս թէպէտ կասկածաւոր էր քուսի առաջի
աբեսողոմայ, բայց ետ նմա ՚ի ընդհս խօսելոյ այն-
պիսի ձարտարութեամբ, և այնպիսի ազդու և զօրաւոր
բանիւք, մինչև ինքնին խոստովանել աբեսողոմայ և
ամենայն ծերոց իսրայէլի, եթէ քա՛ջ է խորհուրդ
քուսեայ արաքացւոյ քան զխորհուրդ աքիտոփելայ։
Վասն որոյ ըստ խորհրդոյ քուսեայ արար աբեսո-
ղոմ. որով և խոպառ կործանեաց զդործառնութիւն
իւր, զոր այնչափ յաջողութեամբ սկսեալն էր. վասն զի
՚ի ետ հրաման ցրել զքաջ խորհուրդն աքիտոփե-
լայ, զի ածցէ ՚ի վերայ աբեսողոմայ զամենայն չա-
րիսն։ Իսկ աքիտոփել դառնացեալ ընդ ամաչան
լինել խորհրդոյ իւրոյ՝ յայտնի գուշակեաց, Թէ
խորհուրդ քուսեայ զոր անմտութեամբ ընտրեաց աբե-
սողոմ, ՚ի կորուստ ածէ զնա, և այնուհետև զինքրդ
երևեսցի ինքն առաջի դաւթի. վասն որոյ կազմեաց
վաղվաղակի զէշ իւր, և յարեաւ գնաց ՚ի տուն իւր
՚ի Թեկուէ, և ՚ի կարգի եդեալ զընտանիս և զա-

մենայն իրս տան իւրոյ, խեղդ արկ անձին՝ և մեռաւ, և թաղեցաւ ի գերեզմանի հօր իւրոյ։ Այս եղև կատարած մեծանուն առն խորհրդականի, որ գիտաց տալ այլոց խորհուրդ քաջ. իսկ վասն անձին այսպէս չարաչար խորհեցաւ. և եթող ամենայն խորհրդականաց և իմաստնոց աշխարհի օրինակ աւաղելի՝ թէ ոչ գոյ խորհուրդ բարի, ուր չիք օգնականութիւն առ յայլ։

Ի վճարիլ խորհրդոյն, առաքարեաց քուսի զամենայն իրսն պատմել ցսադովկ և ցաբխաթար քահանայս, և կասկածելով թէ գուցէ այն զուարթագին հաւանութիւն աբեսողոմայ ընդ խորհուրդ իւր՝ առ երեսս և եթէ իցէ՝ ի խաբել զնա, և նովաւ զդաւիթ. իսկ ինքն եղեալ իցէ ի մոխ զխորհուրդ աքիտոփելայ ի գլուխ տանել. ասաց ցնոսա վաղվաղակի զեկուցանել դաւթի զբան խորհրդոյն. և փութացուցանել զնա՝ յայնմ իսկ գիշերի անցանել զյորդանան. գուցէ յանպատրաստից ի վերայ նորա հասեալ աքիտոփելայ երկոտասան հազարաւ՝ կլանիցէ զարքայ, և զամենայն ժողովուրդն որ ընդ նմա։ Այլ դժուարին էր զբանն հասուցանել առ դաւիթ ի բանակ անդր, քանզի յոմնաթան և աքիմաաս՝ որք առ այն կարգեցան, ոչ կարեալով երևել ի քաղաքին, կային զօղեալ արտաքոյ պարսպաց նորա՝ առ աղբերն ռոգէլայ, որ կոչէր և ջրմուղ Թափչաց. զի անդ Թափիչք սակաւակացուցանէին կտաւս. յորմէ և տեղին, ուր սփռէին զկտաւսն՝ կոչեցաւ ագարակ Թափչաց. Բ. Թագ. Է. 3։ Սակայն գտին և առ այն հնարս. զի առ բառնալոյ զամենայն կասկած պահապանացն, առաքեցին նուաստ աղախին մի, բայց հաւատարիմ և հանձարեղ. որ ըստ հերոնիմոսի բարձեալ ուռնելով ի վերայ գլխոյն խուրձ մի կտաւոյ՝ էանց համարձակ ի միջոյ՝ պահապանաց իբր երթալ յաղբիւր անդր ի լուանալ, և պատմեաց զբանն երկուց Թագուցելոց։ Սակ նոքա եւին փութանակի ի ձանապարհ ծածկաբար որչափ ինչ հնար էր. բայց և այնպէս ետես զնոսա պատանեակ մի, որ

և ընթացաւ ձեռով և պատմեաց աբեսողոմայ. և նա նոյն հետայն արձակեաց խնդրակս զկնի նոցա. զոր իմացեալ փախստէից՝ եթէ զհետ նոցա պըն-դեալ էն, աճապարեցին մտին ՚ի բաւուրիմ քաղաք, և ապաւինեցան ՚ի տուն առն միոյ կուսակցի դա-ւթի. որոյ էր ցամաք գուբ մի հանդէպ դաւթի տանն, և ահա անդր իջոյց զնոսա կին տանուտեառն. և սիրեաց պատառ ՚ի բերան գբոյն, իբր չորա-յուցանել ՚ի վերայ նորա յարևուտ գարի կամ յորե՛ան մանրեալ և այլ արմտիս, և պատուղս՝ թուզ, նուռն և այլն. զի երբայական բառդ ապբոմ զայս ամե-նայն նշանակէ: Լսեալ խնդրակաց աբեսողոմայ ՚ի տուն անդր, հարցին ցկինն եթէ ո՞ւր իցէն նոքա. ետ պատասխանի կինն, մտին աստ և ձաշակեցին սակաւ մի ջուր, և անցին գնացին. նոքա հաւա-տացեալ բանի կնոջն՝ սպնդեցան զհետ նոցա, և չգը-տեալ ուրեք՝ դարձան յերուսաղէմ:

Լ,պա եւեալ նոցա ՚ի գբոյ անտի՝ դիմեցին շտա-պաւ ՚ի բանակ անդր. և պատմեցին զիրան դաւթի. զոր լուեալ նորա, փութացաւ ինքն և ամենայն ժողովուրդն որ ընդ նմա, մինչև ՚ի լուսանալ առա-ւօտուն անցին ամենեքեան զյորդանան. և խաղա-ցեալ ընդ հիւսիս՝ եկին ՚ի բանակն, այն է՝ մա-նայեմ քաղաք. ուր զկնի պատերազմին գեղբուայ և մահուան սաւուղայ՝ թագաւորեցոյց աբենների զկեբուսթէ: Իբրև լու եղև ՚ի գաղատ գալուստ դաւթի, առ ժամայն երևեցան անդ երեք իշխանք երևելիք բարեկամք նորա: Ի եսբի, կամ սուբա յառաքաձայ յորդւոց ամմնայ, զոր դաւիթ ՚ի չնորհս հօր նորա նաասայ ամմնայեցոյ արքայի երբեմն իւ-րումն բարեկամի և բարերարի՝ թագաւորեցոյց փո-խանակ եղբօր նորա անմնայ, զոր սպան ՚ի վրէժխնդ-րութիւն նախատանաց՝ զոր արար իւրոց հրեշտա-կաց: Ի՝աքիր որդի ամիհլի մի յականաւորաց լադա-բարայ քաղաքի. որ ՚ի տան իւրում սնոյց զմեմփի-բոսթէ զորդի յովնաթանու, մինչև էր առեալ զնա դաւթի յիւր արքունիս: Ի,ս բերզելի գաղատա-ցի ՚ի յոգելիմայ քաղաքէ պատուական ծերու-

նի մեծատուն։ Ոքա երեքին եկին լիաձեռն, և լցին զամենայն պէտս դաւթի, որ կարօտ էր ամենայնի. քերին անկողինս հանդերձ ամենայն կազմածովք, և օթոցս, և սանս պղնձիս, և անօթս կաւեղինս ի պէտս սեղանոյ. և ցորեան, գարի, ալիւր և փոխինդ, ոլոռն և ոսպն, մեղր և կոպի, և պատրուճակս և որթս դիեցիկս. և միանգամայն ասել, զամենայն պարկնս և կահս կարևորս ոչ միայն ամենայն զօրուն բաւական, այլև յաւելուածով. զի գիտէին՝ եթէ քաղցեալ և ծարաւի և լքեալ էին յանշէն անապատի անդ։

Գ Լ. ԺԱ.

Ողբալոր մահ աբեսողոմայ. և հոծ պատերազմ ի վերայ նորա։

Աբեսողոմ նստեր յերուսաղէմ, միաբանով ըստ խորհրդոյն քուսեայ՝ հաւաքելոյ զօրաց, որք օր ըստ օրէ գային և բազմանային յոյժ. իբրև բաւական դատեցաւ զայն բազմութիւն, կացոյց ի վերայ համօրէն զօրուն սպարապետ փոխանակ յովաբայ՝ զամեսայի զորդի յոթորայ կամ յեթրեայ, զոր ծնաւ նմա աբիգեա քոյր դաւթի և շարուհեայ մօր յովաբայ (Ա. Ֆ. Ե. 17.)։ Եւ այնպէս բազմութիւնք զօրաց եկ ի խնդիր հօր իւրոյ. անց գյորդանան, եմուտ ի գաղաադ. ոչ գիտելով եղկելոյն, զի անձամբ զանձն արկանէր յանզերծ արգելան, ուր յառաջ քան զվճարումն մարտին՝ ինքն վճարեսցի ի կենաց արեւէ։ Իբրև ազդ եղև դաւթի ի մանայիմ, եթէ էանց աբեսողոմ գյորդանան, և գիտաց զանխոնարհելի կամն նորա՝ չմատուցանել երբեք ունկն գալ ի հաշտութիւն, պատրաստեցաւ և ինքն ի մարտ. հանդէս արար զօրուն որ ընդ նմա. և բաժանեալ զնոսա յերիս գունդս, գյառաջապահ գունդն ետ ի ձեռս յովաբայ, պահելով

զսպաբապետութիւն նորա. զմիջինն ի ձեռս աբեսասայ եղբօր նորա. իսկ զվերջապահ գունդն եթագեայ գեթացւոյ. որ ընտրեաց երթալ ընդ նմա ի փախստեան նորա՝ քան նստիլ ի հանգիստ յերուսաղէմ, որպէս յորդորէր զնա դաւիթ. և ընդ նոքօք կացոյց հազարապետս և հարիւրապետս:

Այսպէս կարգեալ զամենայն՝ կամեցաւ և ինքն արքայ անձամբ ելանել ի գլուխ զօրուն և երթալ ի մարտ. ոչ իբր առ յապահովացուցանել զյաղթութիւն, զոր ակնուներ յօգնականութէ վերնոյն, և յանվեհեր արիութէ զօրացն իւրոց, այլ ի մեղմել և ի չափաւ պահել զհրաբորբոք եռանդն վրէժխնդրութէ իւրոցն ընդդէմ թշնամեացն, զի եղբարքն նոցա էին, և հրամանատարն նոցա՝ իւր երէց որդի: Այլ զօրքն միաբան ընդդէմ դարձան նմա. չէ և չէ ասեն արժան ելանել այսօր արքայի ընդ մեզ, և երևել ի բանակին. զի աչք ապստամբաց ի քեզ են. զքեզ խնդրեն ունել. եթէ կիսոյ կիս ի մէնջ փախչիցիմք կամ մեռանիցիմք, առ ոչինչ համարեսցեն նոքա զայն յաղթութէն, եթէ դու կենդանի իցես. զի դու միայն առաւել քան զտասն հազար ի մէնջ ես. վասն այնորիկ եթէ ելցես ընդ մեզ, բովանդակ ուժգնութէն պատերազմին ի վերայ քո ծանրասցին: Այլ լաւ է թէ դու ի քաղաքի նստիցիս, զի լինիցիս մեզ յօգնականութէն՝ եթէ ձախողութէ իմիք հանդիպեսցուք: Ուստի դաւիթ բանից նոցա. և կացեալ յեց առ դրան քաղաքին, արար անցանել առաջի իւր ամենայն զօրուն ի գունդս գունդս ըստ հարիւրաւորաց և ըստ հազարաւորաց: Եւ ետ պատուէր նոցա ամենեցուն, քայց առաւելապէս երից սպարապետաց՝ յովաբայ, աբեսսայ, և յեթթեայ, խնայել ի կեանս աբեսողոմայ որդւոյ իւրոյ. զի մահ նորա յայնմ ապստամբութէ՝ դառնագոյն էր նմա քան զամենայն չարիս ողք հասին ի վերայ նորա. նմին իւրն զպատուէրն ետ ի լուր ամենեցուն, զի մի և ի սոսկական զննուորաց ոք անգէտ հրամանի արքային՝ ի խռովութէ անդ պատերազմին դիպեալ

ուրեք աբեսողոմայ՝ ի մահ հարկանիցէ զնա։

Յովաբ բազմամեան զօրագլուխ փորձ և քաջահմուտ ի հնարս պատերազմի, կշռեալով ի միտս իւր զանհամար բազմութիւն ապստամբաց, և զիւրս տեղեաց կողմանցն այնոցիկ, ոչ ի դէպ դատեցաւ ի դաշտի ձակատիլ ընդդէմ նոցա։ Այլ եմուտ ամրացաւ յանտառ մի մեծ, ոչ կարի բացագոյն ի մանայիմայ՝ ուր նստէր դաւիթ։ Նտառն այն թէպէտ հեռի էր ի վիճակէ որդւոյ եփրեմայ, գոլով յայնկոյս յորդանանու յերկիրն գաղաադու, սակայն և այնպէս կոչէր Նոռո եփրեմայ. Թերևս ի կոտորածէ անտի, առեալ զայն անուն զոր ապարսին գաղաադացիք ըստ հրամանի յեփթայեայ՝ քառասուն և երկու հազար արանց կոտորելով յորդւոց եփրեմայ յարուցելոց յանիրաւի ի վերայ յեփթայեայ, սկսեալ յանտառէ անտի մինչև ցյորդանան. որպէս պատմի ի դատ. ԺԲ. 6։ Իսկ աբեսողոմ հասեալ ի տեղին, և կամեցեալ առ օրինն վճարել զպատերազմ, իւրով ջերմ և անխորհուրդ խրոխտանօք վարեաց զզօրս իւր յանտառ անդր. ինքն ևս ընդ նոսա մեծաց։ Այլ յայնմ պատնչի գործելոյ ի բնութիւն լոկ վասն գաղանաց արջուց և առիւծոց, տեսան երկու բանակք յետին կատաղութիւն մարտնչիլ ընդ միմեանս։

Պատամբք ի խումբս խումբս բաժանեալք յարձակէին ի զանազան տեղեաց, ուր կարծէին շաւիղս մտից գտանել. այլ Թուխք անտառամոլք, և փուշք Թանձրախիտք, և մացառք, և բունք և ոստք ծառոց անկելոց՝ զոմանս տապաստ արկանէին, զոմանս անձողոպրելի կաշկանդէին, զոմանք պատատեալ զինազերծ առնէին։ Իսկ զօրք դաւթի փոխանակ ի հուիս մարտի ելանելոյ՝ պատաղէին ի կոտորել զըմբռնեալսն ի մացառուտ փշոց, և յանտառացեալ Թփոց. ուստի ոչ փախչիլ կարէին, և ոչ օգնութիւն ուստեք ընդունել, զի ցրուեալ էր բանակ նոցա ընդ ամենայն անտառն, և այլ իւրաքանչիւր ելս անձին խնդրէր։ Այսպէս և աբեսողոմ մնացեալ այնուհետև զպատե-

բազմ, զանձն ևեթ ապրեցուցանել խնդրելը. և մինչ այսր անդր ընթանայր գտանել ուրեք շաւիղ ելից ՚ի դժոխեալանելն անտառէ անտի, դիպեցաւ խնդրողաց անձին իւրոյ, և որպէս թէ ՚ի բերան անկաւ զօրացն դաւթի. քանզի այն ինչ մտրա կեաց ուժգին զջորին՝ յոր հեծեալ էր, դարձու ցանել զնա յայլ կողմն, ՚ի սաստիկ արշաւանաց ամբարձեալ վարսից գլխոյ նորա՝ պատեցան զոս տովք կաղնւոյ միոյ, ընդ որով անցանէր. և ջորին իւրով գահավէժ ընթացիւք անցեալ ՚ի ներքոյ նո ր ա, կախեցաւ եղկելին ընդ օդս զվարսից գլխոյն։

Այնմ ՚ի զինուորաց դաւթի տեսեալ զնա անդ կախեալ զկաղնւոյն, ընթացաւ պատմեաց յովաբայ. ասէ ցնա, յովաբ, ահա տեսեր զնա, և ընդ դէր ոչ սպաներ նոյն հեռացն և ես տայի քեզ այսօր յիսուն սիկղ արծաթոյ, և սուսեր մի, կամ ըստ այլոց կամար գօտի մի։ Այս պատասխանի այրն. եթէ կշռեալով տայիր ինձ հազար սիկղ արծաթոյ, ոչ ձգէի զձեռն իմ յորդի արքայի. զի ՚ի լուր մեր ամենեցուն՝ պատուիրեաց արքայ քեզ և աբեսողոմայ և եթթեայ՝ զգոյշ լինել պատանեկին աբեսողոմայ, մի ինչ վնաս առնել անձին նորա։ Այդ եթէ ես ըստ բանի քումդ յանդգնէի գործել զոմիրդ, դու թերևս խնդայիր ՚ի սրտի, բայց արդեօք պաշտպան լինէիր ինձ ազատել ՚ի ցասմանէ արքային, թէ լռեալ ՚ի բաց կայիր, գուցէ և դատապարտէիր։ Այս յովաբ. վասն այդորիկ իսկ աճ զնա առ նա, և ես առաջի աչաց քոց սպասնից զնա. գնաց և եհար ՚ի սիրտ նորա երիս նետս, բայց ոչ այնու իսպառ անշնչացաւ. ապա տասն զինուորք ՚ի զինակրաց յովաբայ յարեան ՚ի վերայ նո ր ա, և սպանին զնա։ Այս նոյն ժամայն ետ յովաբ հարկանել զփող՝ եղջերեայ, դադարել իւրոց զո ր ա ց ՚ի պնդելոյ զհետ իսրայէլի, զի խնայեաց նո ց ա, գիտելով թէ ՚ի մեռանել աբեսողոմայ՝ ամենեքեան ունին դառնալ առ դաւիթ։ Իսկ զդի աբեսողոմայ ետ արկանել ՚ի վիհ մի մեծ և խորին յոյժ՝ յանտառի անդ, և (որպէս յաւելուն այլ ըն-

(Թերցուածք) կուտել ՚ի վերայ նորա կարկառ մեծ քարանց։

Յայնժամ մատեաւ աքիմաաս որդի սադովկայ, և խնդրեաց ՚ի յովաքայ հրաման տալ նմա ընթանալ տանել արքային զաւետիս յաղթութեանն. այլ յովաքայ զի սիրէր զնա, և քաջ գիտէր՝ զի ոչ ախորժ հաձութեամբ լսիցէ արքայ զայն յաղթութիւնն խառն ընդ դառն աղէտս մահուան իւրումն սիրեցեալ պատանեկին աբեսողոմայ, արգել զնա, և փոխանակ նորա առաքեաց զոմն ՚ի զօրապետաց քուսի անուն՝ պատմել արքային զոր ինչ ետես։ Իբրև գնաց նա, յաւել աքիմաաս և ևս աղաչել և թախանձել, մինչև ընկալաւ ՚ի յովաքայ հրաման. և կալեալ նորա զկարճոյ ձանապարհ կեքարայ, և երագեալ յընթացս, անց զքուսեաւ։ Իսկ դաւիթ նստեր յայնժամ ընդ իւրոց թիկնապահաց ՚ի վերնատան՝ որ ՚ի մէջ երկուց դրանց քաղաքին. յորոց մին հայեր ՚ի դաշտ, և միւսն ՚ի քաղաք անդր, ճնալով առնուլ լուր զպատերազմին. իսկ դէտն կայր ՚ի տանիս արտաքին դրանն ՚ի վերայ պարսպին. և հայեցեալ ՚ի դաշտակողմն, ետես զի այր մի ընթանայր հանդէպ իւր, և ազդ արար արքայի. որոյ լուեալ թէ միայն է այրն, աւետիք են ասէ ՚ի բերան նորա. քանզի եթէ ձախող ինչ էր դիպեալ իւրոց զօրաց, ոչ մի, այլ բազումք գիր և ցան ընթացեալ աձապարէին պատսպարիլ ՚ի քաղաք անդր։ Ոչինչ սակաւուց դարձեալ աղաղակեաց դէտն, տեսանեմ ասէ միւս ևս այր ընթացեալ միայն. ասէ արքայ. և նա աւետաւոր է։

Իբրև մերձեցաւ առաջինն, ծանեաւ զնա դէտն, զի էր աքիմաաս որդի սադովկայ. ասէ արքայ. այր բարի է նա, և բարի աւետեաք գայ։ Յայն բան եհաս աքիմաաս, և ազաղակեաց խընդալից առ արքայ, ողջո՛յն է. և եկեալ առաջի նորա՝ երկիր եպագ ՚ի վերայ երեսաց իւրոց յերկիր, և ետ զաւետիս յաղթութեանն։ Դաւիթ վաղվաղակի եհարց զողջունէ մանկանն իւրոյ աբեսողոմայ. այլ պատանին արձանամիտ ոչ կամէրսւ զու-

քուխարաբար աւետիսն ՚ի սուգ և ՚ի տրտմութիւն փո-
խեալ, արար պատ ՚ի պատ պատասխանի. տեսի ասէ
խումբ մի մեծ ՚ի տեղին, ուստի առաքեաց զիս
յովաբ. այլ թէ զի՞նչ էր անդ՝ ոչ գիտացի. զայս
գիտեմ, զի հարան խապտռ ապստամբքն, զայլ
ինչ իրաց չունիմ ծանօթութիւն. ասաց նմա արքայ՝
կալ ինալ անդ, մինչև եկեսցէ և միւսն: ՚Ի նմին
պահու եհաս և քուսի, ցոր ՚ի հարցանել արքայի
զողջունն մանկանն իւրոյ աբեսողոմայ, նա յայտնի
անպատրուակ ասաց, եղիցին իբրև զաբեսողոմ
թշնամիք ՚ին իմոյ արքայի, և ամենայն յարու-
ցեալքն ՚ի վերայ քո ՚ի չարութիւն: ՚Այս բան բա-
ւական եղև ընդուել զսիրտ դաւթի դառնութիւք, և
զաչս նորա արտասուօք. եւ նոյն հետայն ՚ի վեր-
նատունն՝ որ ՚ի վերայ դրան, լայր և ողբայր ան-
մխիթար, յամենայն բանս կրկնելով, որդեա՛կ իմ
աբեսողոմ, աբեսողոմ որդեա՛կ իմ. ո՞վ թէ ես էի
մեռեալ փոխանակ քո աբեսողոմ որդեա՛կ իմ,
որդեա՛կ իմ աբեսողոմ, ես փոխանակ քո աբես-
ղոմ որդեա՛կ իմ: Յետ ընդերկար լալոյ ՚ի վեր-
նատան անդ, էջ յատարանս. և մեկուսացաւ ՚ի
ներքին սենեակ իւր, ուր կական բարձեալ ՚ի
ձայն մեծ լայր, և զնոյն կրկներ միշտ յողբս իւր,
աբեսողոմ որդեա՛կ իմ, որդեա՛կ իմ աբեսողոմ:
՚Այս անմխիթար կոծ դաւթի ոչ էր՝ որպէս թէ
ոչ ձանաչէր նա, թէ քանի՛ բարիք ՚ի մահուանէ
անտի ծագին անձին իւրոյ և թագաւորութիւն, և
սրչափ չարիք խափանին. զի որչափ կենդանի էր
աբեսողոմ, ոչ դադարէր ՚ի նոր խռովութիւս յու-
զելոյ: ՚Այլ սգայր անմխիթար զյաւիտենից մահ
հոգւոյ նորա. զի այնպիսի զաւակ անզուգական
ըստ աշխարհի՝ զկնի ամենայն չարեաց զոր գոր-
ծեաց, մեռաւ չարաչար յապստամբութիւն անդ, յո-
րում անլուր անօրինութիւք խնդրեր ոչ միայն զթագ,
այլև զգլուխ հօր իւրոյ:

Կոծ դաւթի լսելի եղև ընդ քաղաքն. պատ-
մեցաւ և յովաբայ, սփռեցաւ և ՚ի բանակին ողջոյն,
որով ուրախութիւն շքեղ յաղթութեանն դարձաւ ՚ի

տրամուԹէ ամենայն զօրուն : Ա՛նգղ անբերելի Թուէր նոցա զկնի մեծի յաղԹուԹենն զոր կանգնեցին , վատԹարադոյն քան զՀարուածեալս և զփախուցեալս ՚ի պատերազմ՝ երևիլ առաջի արքայի . վասն որոյ և ոչ իսկ ՚ի քաղաքն մտանել կամէին : Այլ՝ միայն , որ ԹԷոփէտ առաւել քան զամենեսին , մանաւանդ ԹԷ ինքն միայն ՚ի մէջ ամենեցուն ունէր երկնչիլ երևելոյ առաջի արքայի , զի ինքն էր նորայն կսկծագին աղէտից պարտաւոր , սակայն իշխեաց աներկիւղ մտանել առ արքայ , և խիստ բանիւք յանդիմանել զտարադէպ սուգ վըշտահար արքային : Այսմ՛Ծ արարեր ասէ այսօր զերեսս ամենայն հաւատարիմ ծառայից քոց . որք առ ապրեցուցանելոյ զքեզ , և զուստերս և զդստերս քո , և զկանայս և զՀարճս քո , եդին զանձինս ՚ի վտանգ : Տեսաք զի սիրես զատելիս քո , և ատեաս զսիրելիս քո . ուստերեր այսօր՝ ԹԷԹԷ ոչինչ համարիս զիշխանս քո և զծառայս քո . և ստուգեալ դիտեմ այսօր , զի ԹԷԹԷ աբեսողոմ կենդանի էր , մեք ամենեքեան մեռեալ էաք . և գուցէ այն էր քեզ հաճոյ : Ա՛րդ՝ Թո՛ղ զկոծդ , փոխեա՛ զերեսսդ ԹԷ երեսացդ , ել ՚ի դուրս , և խօսեա՛ց ընդհատարար գովուԹի՛ ՚ի հաճոյս զօրուն , որք քաջուԹի՛ ծառայեցին քեզ . ապա ԹԷ ոչ՝ երդնում ՚ի Տէր , զի ԹԷ զօրք քո տեսցեն զքեզ այդպէս ցուրտ առնոսա , և անձանաչօղ արդեանց նոցա , յայսմ իսկ գիշերի ամենեքեան վտարանջէն ՚ի քէն մինչև չմնալոյ առ քեզ և ոչ միոյ ուրուք՝ և չար լինիցի քեզ այն՝ քան զամենայն չարիս որ եկին ՚ի վերայ քո ՚ի մանկուԹէ քումմէ մինչև ցայժմ :

Ա՛յսպէս խօսեցաւ յովաբ առ արքայ , զոր ԹԷ խօսեալ էր եԹԷԹԷ , կամ այլ ոք ՚ի զօրապետաց և կամ յիշխանաց՝ ՚ի դէպ էր արդեօք , և դաւԹ ունէր երախտապարտ լինել առ նա . զի էր յանդիմանուԹի պատեհ . և խորհուրդ օգտակար և կարի կարևոր ՚ի ժամուն : Իսկ յովաբայ , որոյ ձեռք դեռևս էին շաղախեալ յարիւն աբեսողոմայ որդւոյ արքայի , պարտ էր երևել առաջի նորա

խոնարհ և ցաւագին դիմօք, և ոչ յոխորտ սպառնալեօք։ Պարտ էր արդարացուցանել զդաւն զայն գործ, ցուցանելով թէ չէր հնար այլազգ հաստատել զթագ արքայութեանն՝ ի գլուխ դաւթի, և տալ երկրին զխաղաղութիւն։ Պարտ էր խոստովանել զանձն մեղապարտ առաջի արքային, զի անց զպատուիրանաւ նորա, վասն որոյ և պատրաստ առ ամենայն պատիժ մինչև դնել զպարանոցն ընդ սրով դահճի. բայց միանգամայն աղաչել զարքայ, զի ելցէ և զուարթագին ցուցանիցէ զերեսս իւր հաւատարիմ զօրանակաց իւրոց, որք կենօք չափ պատերազմեցան յապահովել զկեանս և զթոռ արքային։ Այլ այսպիսի խոնարհ մտածութեանն հեռի էր՝ ի բարձրամիտ սպարապետէն, որ թէպետև միշտ քաջ էր և արի, միշտ յաղթօղ, միշտ հաւատարիմ առ արքայ, բայց ոչ երբէք խոնարհ. զոր և յերեսս իսկ ոչ գիտաց երբէք կեղծել գեթ՝ ի հարկաւոր ժամու առ՝ ի փրկութիւն անձին։ Սակայն և այնպէս լուաւ դաւիթ բանից նորա. և՛ նստաւ՝ ի դրան քաղաքին. և ետ հրամարակել թէ եկ արքայ՝ ի հրապարակ, և ահա նստի առ դրանն։ Յայնժամ ապա ամենայն զօրապետք, և ամենայն զօրն մտին առաջի արքային. և նա ընկալաւ զնոսա քաղցրութիւք ուրախ և զուարթագին դիմօք առ՝ ի ցոյց ընդհանրական հաւատարիմ ծառայութեանն նոցա։ Եղև հարկ սուրհանդակս արձակելոյ՝ ի հրաւիրել ընդ ամենայն հրեաստան զհորտակումն ապստամբացն, զի նոքա փախուցեալ այր իւրաքանչիւր՝ ի բնակութիւն իւր, պատմեցին լիով զիրս յաղթութեանն ցեղս իսրայէլի։

Քեռողոմ առ կենդանութիւք իւրով արար իւր արձան. զոր ոմանք խմանան սիւն քրդաձև կամ կոթող, ոմանք կամար յաղթութիւն, կամ արձանապիր, այլք շիրիմ մեծագործ, կէսք առնապատկեր կամ անդրի նմանատիպդիտ ակն իւրոյ. և կանգնեաց զնա՝ ի հովիտն Թագաւորաց. (ուր կայ՝ ի մեզ և բառդ յաբէն, առեալ՝ ի յունական ձայնէս լալին, որ է առնուալ. բայց չէն միօրինակ աստանօր և

ձեռագիրք յունաց.) և էր անուն արձանին կանգնելոյ, կամ արձանագիրը նոր Ղեռն աբեսողոմայ. զի այսպէս կոչեաց նա զարձանն՝ ի յաւէժական յիշատակ անուան իւրոյ, առ՝ ի չգոյէ նորա որդւոյ՝ որ յիշեցէ զանուն նորա. յորմէ յայտ է թէ մեռեալ էին երեք ուստերք նորա յիշատակելք է. Ռաթ. ԺԲ. 27: Այս հովիտ էր ձորն կեդրոնի կամ յովասափատայ, որ ընդ մէջ երուսաղէմի և լերինն ձիթենեաց. որ՝ ի ԺՆ. ԺԲ. 17. կոչի. Ձոր ղառէ, այսինքն է դաշտ թագաւորաց. ուր կոմպղոտեան օրինակն յունաց ընթեռնու. * Դաշտ թագաւորին մելքիսեդեկի ‖. Թերևս զի անդ էլ մելքիսեդեկ ընդառաջ աբրահամու հացիւ և գինեաւ յետ դառնալոյ նորա՝ ի կոտորածէ թագաւորաց:

Ահա զայս օրինակ վճարեաց աբեսողոմ զկեանս իւր. որոյ ապիրատութենն զուգական սակաւս մնրթէ գտանել՝ ի սրբազան և յարտաքին պատմութիս: Ա՛ա յաչս քաղցրագութ հօր իւրոյ դաւթի սիրելի քան զամենայն որդիս նորա, արհամարհեալ զգութ հայրենի, և զներողամտութիւնն որով վարեցաւ ընդ նմա, նոր և անլուր ամպարշտութիւ՛ զկնի վերացոյց ընդդէմ նորա. վտարեաց զնա յաթոռոյ թագաւորութենէ, յետին նախատանօք անարգեաց զնա. և՝ ի լրումն համարկն չարեաց՝ խնդրէր և զգլուխ նորա բառնալ: Այլ ծածկին արդարադատ վրիժխնդրութենն, որ ոչ թողու անպատիժ զչարագործս, կենդանւոյն կախեաց զնա զծառոյն ընդ երկին և ընդ երկիր՝ իբր երկոցուն ատելի: Այս որ կանգնեաց իւր արձան մեծագործ՝ ի յաւերժայուցանել փառաւք զյիշատակ անուան իւրոյ, չէ՛ղեալ արժանի գնել հասարակաց գերեզմանի՝ ի վիհ խորանդունդ յանշէն անտառի քարամբք ծածկեցաւ. որով և կատարեցաւ՝ ի նա պատիժ պատուիրեալ յօրինաց, զորդի որ խեթ իցի, և անբազդամ անլսօղ հօր և մօր իւրոյ՝ քարկոծ առնել ամենայն ժողովրդեան. Ե. օրէն. Ի. 21:

ԳԼ. ԺԲ.

Ա՛մենայն ցեղք իսրայէլի գան ՚ի հնազանդութիւն դատաստանի. և դառնայ դատել զաւուրս յերուսաղէմ։ Որ ապստամբութիւն իսրայէլի. որ խաղաղի տհաճութեամբ սաբբաթայ որդւոյ բոխորայ։ Ա՛հ ամենայն դատաճանութիւնք յովաբայ։ Ա՛ղաւէ յաբէլ չաղաչ ՚ի պաշարմանէ ՚ի յեռն հնարեցոյ ելմասուան կնոջ։

Յետ մահուան աբեսողոմայ ՚ի ցրուիլ ամենայն ժողովրդեան յիւրաքանչիւր տեղիս, երևի թէ չինայր դաւթի այլ ինչ, բայց իբրև յաղթօղ դառնալ փառօք յերուսաղէմ յաթոռ թագաւորութեան իւրոյ։ Ա՛յլ խոհական և անխուճապ երկայնմտութի՛ն նորա յամեցոյց զնա առ ժամանակ մի անդ ՚ի մանայիմ յայնկոյս յորդանանու, տեսանել թէ զինչ առնիցէ ժողովուրդն, որով և խմանայցէ զմիտս նոցա։ Ա՛յս յապաղումն ՚ի դէպ յաջողեցաւ նմա. քանզի թէպէտ իբր հասարակաց էր ապստամբութի՛ն, զի ըստ գրոյն՝ ամենայն իսրայէլ չորքաւ զՀետ աբեսողոմայ, սակայն յամենայն ցեղսն կային տակաւին բազումք սրտիւ յարեալք ՚ի դաւիթ. որոց ժամանակ դիպօղ գտեալ՝ խօսեցան առ իշխանս ցեղից, ամօթ մեծ է ասէին՝ զի ցարդ ոչ առաքեցաք հրեշտակութի՛ս առ արքայ, հայցել ներումն ապաստաւորութե՛ն մերոյ ՚ի վտարանջել մեր ՚ի նմանէ, և նոր երդմամբ ուխտել նմա անդրդժելի հաւատարմութի՛ն։ Ո՞հ երդ այսպէս արագ մոռացաք զերախտիս նորա. ոչ արքայ դաւիթ փրկեաց զմեզ յամենայն թշնամեաց մերոց. ոչ նա եբարձ զծանր լուծ այլազգեաց ՚ի պարանոցաց մերոց. նմա ունիմք խոստովանել զինչս, զազատութի՛ս, և զկեանս իսկ մեր։ Այլ նա աւասիկ փախստական է յերկրէս և ՚ի թագաւորութէ իւրմէ. և

աբեսողոմ երիտասարդ անփորձ՝ զոր օծաք մեզ, մեռաւ ի պատերազմի. և արդ դուք զի՞ լռեալ կայք ի դարձուցանել զարքայ։

Եւ սկսան այնուհետև պատգամաւորք յամենայն ցեղից իսրայէլի հասանել ի մանայիմ առ արքայ։ Ուրախ լինէր դաւիթ ընդ բարեմտութիւն նոցա, և հայրագութ սիրով ընդունէր զնոսա զամենեսին։ Այլ կայր զարմացեալ ընդ միտս իւր, զի՞ է զի յամենայն ցեղից գան հրեշտակութիւնք առ նա, և միայն ի յուդայէ չիւր բնիկ ցեղէ՝ որ առաւել քան զամենայն ցեղս էր յարեալ ի նա, ոչ ոք երևի. ուր ակնունէր՝ թէ նոքա լինիցին առաջինն ի դարձուցանել զնա չիւր արքայանիստ քաղաք, որ էր ի միջի նոցա։ Ապակայն որպէս երևի՝ իմացաւ դաւիթ, թէ այն յապաղումն նոցա ոչ էր յօտարանալոյ նոցա սրտիւ ի նմանէ, այլ յամօթոյ և յերկիւղածութեան պատկառանաց թէ որո՞վ դիմօք ունիցին երևիլ առաջի նորա վասն զչէաս երթալոյ նոցա աբեսողոմայ։ Վասնզի այս սովորական է ի յանցաւորս, որք թէպէտ և չունիցին ինչ խէթ ի սրտի, բայց կրեն զսարսուռ իմն և բնական դիմամարտութիւն երևիլ առաջի նորա՝ ուր մեղան։ Որ ձանաչէ զանձն պարտապան, և չունի ինչ որով կարիցէ վճարել զպարտիս անթերի, երկնչի յերեսաց պարտատեառն. սիրէ յամենայն սրտէ, այլ կասկածն և ամօթն հեռացուցանէ։ Դաւիթ կանխեաց և եբարձ զայս խոչ ի միջոյ. առաքեաց գիր առ սադովկ, և առ աբիաթար քահանայս՝ որք էին յերուսաղէմ. պատուիրելով նոցա առնել չիւր անուն սիրալիր կշտամբանս իմն իշխանացն յուդայ։ Ընդէր ասէ լինիք յետինք գալ առնուլ զարքայ, և չիւր արքունիս դարձուցանել զնա, զի դուք ոսկերք իմ և մարմին իմ էք, և քիրք աչաց իմոց, ահա այլք ամենեքին եկին, ապա զնոսա դուք լինիցիք յետինք։ Եւ զի ամենայն զօրաւոր էր և կարօղ շարժել զնոսա ի կոչ արքային, կամարգելոյ, քայց քան զամենեսին ունէր նա պատճառս երկիւղի, զի էր սպարապետ և առաջնորդ ասպետամարտից

առ սբեսողոմաւ, նմին իրի պատուիրեաց դաւիթ խօսիլ և ընդ նմա ՚ի դիմաց իւրոց լի գորովանօք, ո՞չ արիւն իմ ես դու՝ որդի քեռ իմոյ, ՚ևկ առ իս, զի ոչ կորուսանիցես, այլ ստանայցես զիշխանութիւն քո. երդնուաւ յած, եթէ ոչ իշխան զօրուն լինիցիս առաջի իմ՝ զամենայն աւուրս փոխանակ յովաբայ: Այս սիրալիր և համբոյր պատգամք եղեն անուշակ և հեշտ ինն շղթայ, որով յինքն ձգեաց դաւիթ զսիրտ համօրէն ցեղին յուդայ:

Ի վաղվաղակի առաքեցին առ նա հրեշտակս, աղաչեցին զի դարձցի յիւրն երուսաղէմ. խոստանալով գալ ընդ առաջ նորա, և փառաւք ընդ ունել զնա: Այսպէս բազում անգամ թագաւորք քաղցրութիւն հասանեն, ուր բռնութիւն ոչ կարեն ժամանել: Ոյք յաղթութիւն որ ունիցի լինել այնպէս ախորժ և հաճոյական թագաւորի, որպէս զոր ստանայ առանց արեան ձապաղեաց՝ լոկ մարդասիրութիւն: Պատամբք նուաճեալք բռնութիւն՝ սովորաբար միշտ ապստամբ են սրտիւ, թէև խոստանայցեն բերանով հպատակութիւն. բայց ապստամբք շահեալք քաղցրութիւն և սիրով՝ լինին առաւել հաւատարիմք, զի ամաչեն ընդ լինել իւրեանց երբեմն ապստամբ. և զի կամաւոր հպատակութիւնն գայ ՚ի սրտէ, ջանան ջնջել զամենայն յիշատակ անցեալ ապստամբութեն՝ գործով անկեղծ և հաստատ հաւատարմութեան: Վակայն գոյ խոհ ընդ ժողովուրդ և ժողովուրդ. զի է որ ըստ ընդաբոյս բարուց փոփոխամիտ է և յեղյեղուկ, ապաշնորհ յետսամիտ և ըմբռստ առ չարութիւն. զնոսա պարտ է առ փոքր ի խստութիւն պահել. զի ի՛ր նեղողութիւն իշխանին զեղծանիցին՝ դնելով ՚ի մտի թէ երկնչի ՚ի նոցանէ, և առաւել ըմբռստանայցեն և յանդգնեացին: Այս է ժողովուրդ ՚ի բնէ հլու, քաղցրաբարոյ, բարեմիտ և երախտագէտ. ընդ սոսա քաղցրութիւն արժան է գնալ, թէև երբեմն ըստ դիպաց ինն յանցուցեալ իցեն խաբանօք ոմանց, կամ՚ի բռնադատութենէ, և կամ՚ի յեղակարծ ինչ դիպուածոյ. քանզի յետոյ տեսեալ նոցա զքաղցրու-

Թէ իշխանին առ նոսա՝ այնուհետեւ իբրեւ երախտապարտք անմեկնելի յարին ՚ի նա։

Օ այս տեսանեմք ՚ի յուդա, որ քան զամենայն խորհել միամիտ և անկեղծ սիրով էր յարեալ ՚ի տունն դաւթի. զուցէ այն միամիտ սէր մասամբ ինն յօժարեցոյց զնա երթալ զհետ աբեսողոմայ, ոչ յեղծուածն, այլ ՚ի հաստատուԹիւն տանն դաւթի ՚ի Թագաւորեցուցանել զորդի նորա. Թէպէտ զի ՚ի պատրանս անկան արք յուդայ, երբ ոչ սակաւ գրգիռ եղև և կեղծ սիրելուԹիւն աբեսողոմայ առ որասալոյ զնոսա յիւր կողմն։ Այլ որպէս և է՝ գԹա սիրուԹիւն դաւթի փուԹով անդրէն յինքն ձգեաց զյուդա. մինչ զի նախ քան զայլ ցեղս, որք յառաջագոյն հրեշտակս արձակեցին առ արքայ, ցեղն յուդայ կանխեաց և եկն ՚ի գաղգաղա բաղումբ պատրաստուԹիւբ սպասել անդ առ ամին յորդանանոյ՝ անցուցանել զնա արքայական շքով. և այնուհետեւ յայնչափ խռովուԹիւնն որք եղեն յետոյ, ոչ ևս երբեք քակեցաւ ՚ի տանէն դաւթի։ Ի նմին ժամու աձապարեաց և սեմէի որդի գերեայ ՚ի բաւուրիմայ հանդերձ հազար արամբք ՚ի բենիամ մինչ խառն ընդ արս յուդայ գալ ընդառաջ արքայի, և մեղայասացուԹիւբ անկանիլ առ ոտս արքայի յաղագս կսկծագին նախատանացն՝ զոր արար արքայի ՚ի գաղԹել իւրում յերեսաց աբեսողոմայ։ Այն և սիբա, որ երբեմն ծառայ էր մեմփիբոսԹեայ, և անիրաւ մատնուԹիբ ժառանգեայ զամենայն ինչս նորա. և ընդ նմա հնգետասան որդիբ նորա, և քսան ծառայբ սպաս հարկանել արքայի անցուցանել զնա ընդ յորդանան։ Այնպէս կասկածեր Թէ ՚ի խօսիլ ևեԹ արքայի ընդ մեմփիբոսԹեայ, ՚ի յայտ գայցէ անօրէնն դաւաճանուԹիւնն. նմին իրի կամեցեալ առաւելագոյն լինն սպասաւորուԹիւն ցուցանել արքայի առ գողանալոյ զսիրատ նորա, այն ինչ եհաս արքայ յամին գետոյն, ահա ինքն և որդիբ և ծառայբ նորա յառաջեկին կազմեցին զյորդանան առաջի արքայի (ըստ ասոր. և արաբ. ԹարգմանուԹիւն՝ կազմելով կամուրջ ՚ի վերայ գե-

տոյն· իսկ ըստ լատ· յարձակեցան մտին՝ի յորդանան առաջի արքային, և այնպէս շուրջ պատեալ զնովաւ՝ յայտ է թէ ընդ որդւոցն յուդայ, անցուցին զարքայ և զամենայն տուն նորա յաջողութիւն յայնկոյս։

Եւ մինչդեռ էր ելեալ արքայն՝ի ցամաք, սեմէի որդի գերեայ անկաւ՝ի վերայ երեսաց իւրոց առաջի արքային· աղաչէր և ասէր արտասուալից, մի համարեսցի ինձ իմ արքայ անօրէնութիւն, և մի յիշեսցէ զոր ինչ յանցեաւ ծառայ քո յաւուր յորում ելանէր ինձ իմ յերուսաղէմ· զի գիտայ ծառայ քո՝ թէ մեղայ· և ահաւասիկ ես եկի այսօր քան զամենայն տունն յովսեփայ, այսինքն խորայէլի, իջանել ընդ առաջ ինն իմոյ արքային։ Եւ պատասխանի նախագրաւ աբեսսա որդի շարուհեայ· զայդ յառաջագոյն պարտ էր քեզ զմտաւ ածել· և դարձեալ առ արքայ՝ ասէ· միթէ վասն այդը ցուրտ մեղայասացութեան ոչ մեռանիցի սեմէի՝ որ անէծ զօծեալ ինն յայնմ դառն աւուր· եթէ բանք իմ տեղի գտեալ էին, ի նմին իսկ ժամու ընկալեալ էր դորա ի ձեռաց իմոց զարժանահաս պատիժ իւրոյ անօրէնութենէ· այդ անագան զեղջ դորա ի տեսանել զարքայ դառնալ յաղթական փառօք՝ կալի կասկածելի է· վասն այնորիկ անարժան թողութենէ։ Պատւեի հեզն և անյիշաչարն նեղեալ ընդ բանս աբեսսայ, ասէ ցնա· զի՞ կ ձեզ որդիք շարուհեայ, զի ցանգ հակառակ կայք ինձ· զի՞ ատիպէք զիս այսօր յարիւն· մի և մի լինի ումեք յիսրայէլէ մեռանիլ այսօր իմով հրամանաւ· միթէ ոչ գիտիցեմ ես, զի այսօր իբր նորոգ թագաւորեմ՝ի վերայ իսրայէլի· և դարձեալ առ սեմէի, և ասէ ցնա· ոչ մեռցիս· զոր և երդմնմբ հաստատեաց։ Եւ արժան է՝ի միտ առնուլ վասն այնր, զոր յետոյ հանդերձեալ եմք ասել, զի արքայն այլ ինչ ոչ խոստացաւ նմա, բայց միայն զկեանս· և ոչ զօրութիւն երդմանն պարտաւորեաց զանձն չտալ նմա այլ ինչ պատիժ· ոչ ասաց արձակել զնա, և ներել նմա զամենայն յանցանս, և ոչ ևս

'ի քննութիւն կոչել. այլ լոկ ոչ դատապարտել զնա 'ի մահ՝ ոչ մեռցիս ասաց: Եւ այս չէ փոքր շնորհ, եթէ 'ի միտ ածիցեմք զզարհուրելի թշնամանս և զնախատինս զոր արար:

Եւ եղև յետ այնորիկ իբրև եմուտ արքայ յերուսաղէմ, ելին ընդ առաջ նորա իշխանք քաղաքին ամենեքին 'ի զգեստս փառաց զարդարեալ որպէս յաւուր յաղթութեանն և հասարակաց ցնծութեանն. մի միայն մեմփիբոսթէ որդի յովնաթանու, որ և նա ել ընդ նոսա, էր 'ի հանդերձ սգոյ. որ յօրէ յորմէ հետէ գնաց արքայ, մինչև ցայն օր՝ ոչ էր դարմանեալ զոտս իւր. ոչ զեղնգունս հատեալ, ոչ զմօրուս փոքրեալ, և ոչ զընկէօք արարեալ, և ոչ զհանդերձս լուացեալ: Ցայն սգալի տարաձ ել ընդ առաջ արքայի. որ ըստ որում երևի՝ չէղև այնչափ լինչ հաձոյ արքայի. գուցէ յուշ առնեալ զբան սիբայ ծառայի նորա, կասկածէր թէ նա չէ լինչ հաձ 'ի սրտի ընդ յաղթականն դարձ իւր՝ կամ կարծէր թէ յայնմ անպատեհ ժամու եկեալ է բողոք արկանել առ արքայ սակս զրկելոյ զնա յընչից իւրոց: Ո՛հարդ և իցէ, այս յայտնի է, զի ցուրտ ինն եզանակաւ ընկալաւ զնա արքայ. զի՞ է ասէ՝ զի ոչ գնացեր ընդ իս մեմփիբոսթէ, յորժամ տեսեր զիս մեկնիլ յերուսաղէմ: Եւ պատասխանի մեմփիբոսթէ ցառաքին սրտիւ, և ասէ. տէր իմ արքայ, ծառայ քո յայդմ մասին յաւէտ թշուառ համարելի է քան թէ յանցաւոր. ծառայ իմ արհամարհեաց զիս. ասացի ցնա՝ կազմել ինձ էշ, զի հեծայց 'ի նա և գնացից ընդ արքային. իսկ նա թէպէտ կազմեաց զէշն, բայց ոչ վասն իմ, այլ վասն իւր, և գնաց. և այնու ոչ շատացեալ՝ սուտ ամբաստանութիւք զայրացոյց ընդիս ընդ ծառայ քոյ զքեզ տէր իմ արքայ. և տէր իմ արքայ արդար՝ արար զբարին առաջի իւր իբրև հրեշտակ ոմն: Ո՛անաչէ ծառայ քո զնիշխանութիւն տան իմոյ արքայի. չէմ անգէտ և իմումն թշուառութիւնէ, զի ոչ էր ամենայն տուն հօր իմոյ, եթէ ոչ արք մեհու առաջի տան իմոյ արքայի. սակայն և այնպէս

կարգեցեր զծառայ քո ընդ այնոսիկ, որ ուտեն զսեղան արքայի. և արդ զինչ իրաւունք կան իմ այսուհետև բողոք ունել միւսանգամ առ արքայ: Զանեաւ դաւիթ զդաւաճանութիւնն ծառային, այլ զի ժամանակն և տեղին չէին՝ ի դէպ՝ երկար հարցփորձիւ՝ ի քննութիւն մտանել, կարճեաց զխօսս, ասելով. զի՞ և ես խօսիս զբանս քո, ասացի՝ թէ դու և սիբա բաժանեցէ՛ք զագարակն. որով դարձոյց ըստ մասին զառաջինն վճիռ իւր. զկէս ագարակին դարձուցանելով անդրէն ցմեմփիբոսթէ. և փոխանակ կիսոյն կալաւ զնա յարքունիս՝ առնելով իւր սեղանակից, որպէս յառաջն: Այր էր ինչ փոյթ մեմփիբոսթեայ, թէև զամենայն թողեալ էր սիբայի, որպէս յայտ արար յասել իւրում անկեղծ սրտիւ. * Զամենայն իսկ առցէ, որով հետև եկն արքայ խաղաղութեամբ՝ ի տուն իւր ||:

Այլ յամենայն բազմութենէ մարդկան, որ անցին ընդ արքայի զյորդանան, առաւելագոյն սէր և պատիւ հանդերձ շնորհապարտ գոհութեբ եցոյց արքայ առ բերզելի գաղաադացի՝ ի քաղաքէ յուդգելիմայ, ուրախանամեան յարդոյ ծերունի, և մեծատուն յոյժ: Այս բայ՝ ի յառաջնոյ պաշարաց, և յամենայն կահից և կարասեաց կարևորաց արքայի և արանց նորա՝ զոր մատոյց՝ ի սկզբան անդ՝ ի հասանել արքայի՝ ի մանայիմ, նաև յետ այնորիկ զամենայն ժամանակս զորս նստաւ արքայ անդ, ինքն յիւրոյ ընչից մատակարարեաց զամենայն պետս կերակրոյ արքայի և արանց նորա. և ոչ այսչափ միայն, այլև յայնմ ծանրացեալ ծերութենէ հասակի անց ընդ արքայի զյորդանան յուղարկել զնա մինչև յերուսաղէմ: Պատուիթ՝ ի հատուցումն այնչափ սիրոյ նորա և երախտեաց հրաւիրեաց զնա յերուսաղէմ յիւր արքունիս՝ նստիլ անդ՝ ի հանգիստ, և վայելել՝ ի սեղան արքայի, և յամենայն բարութիւնս արքունեաց: Այլ բերզելի պատճառելով զծերութիւն իւր՝ հրաժարեաց. որդի ամաց ութսնից եմ ես առ, միթէ իմանայցեմ զհամ կերա-

կրոց կամ ըմպելեաց. և զուարճանայցեմ ՚ի ձայն դուսանաց և վարձանաց. և ընդէր լինիցիմ վայրապար բեռն տեառն իմոյ արքայի. Թո՛ղ զինստցի ծառայ քո և մեռցի ՚ի քաղաքի իւրում, և Թաղեսցի ՚ի գերեզմանի հօր և մօր իւրոյ: Ա՛սէ արքայ. եԹէ այդպէս իցէ, ապա անցցի ընդիս որդի քո քամահամ, և ես արարից նմա զամենայն բարի, զոր ինչ ակնունիցիս յինէն: Եւ ՚ի հանդիսի անդ բազմուԹե՛ մարդկան արքայ գիրկս արկեալ յարգոյ ծերունւոյն համբուրեաց զնա. և զի մի աշխատ լինիցի անդր ևս յուղարկաւորուԹի՛ արքայի, օրհնեաց զնա արքայ՝ զամենայն բարիս մաղԹելով նմա: Եւ այնպէս բաժանեցան ՚ի միմեանց, բերելի դարձաւ ՚ի յուզելիմ քաղաք իւր հայրենի. իսկ դաւիԹ անց ՚ի գաղգաղա փոքր մի հանգիստ առնուլ, և ապա անցանել անտի յերուսաղէմ. աճեալ ընդ իւր զքամահամ. որ և եկաց առ դաւիԹի զամենայն աւուրս իւր ՚ի վայելումն արդեանց ծերունի հօր իւրոյ:

Ա՚ յորդանանէ մինչև ՚ի գաղգաղա անց դաւիԹ խաղաղութ՛ արքայական փառօք ունելով ՚ի սպասաւորուԹի՛ անձին զամենայն տունն յուդայ, և զսիբա և զորդիս և զծառայս նորա, և զսեմէի հանդերձ հազար արամբք ՚ի բենիամինէ, և իբրև զկնի մի ՚ի ժողովրդենէ այլոց ցեղից իսրայէլի: Այլ որդիք յուդայ՝ կրկնապատիկ առաւել էին քան զնոսա զամենեսին. սակայն յաջորդաբար գային հասանէին անդ ՚ի գաղգաղա և յայլոց հեռաւոր ցեղից իսրայէլի, և յաւելուին յառաջինսն ՚ի փառաւորել և ՚ի մեծացուցանել զյաղԹանակ արքայի: Այլ անակնկալ դիպուած լինի զայն ամենայն շքեղապանծ հանդէս վեր ՚ի վայր շրջեաց, վաւելով միւսանգամ զՀուր քաղաքական նեղբքին պատերազմի. և պատճառն եղև այս: Վանդի տունն յուդայ աՀասպարեաց և եկն աղգովին ՚ի գաղաադ ընդ առաջ արքայի, և անցոյց զնա և զամենայն տուն նորա ընդ յորդանան. իսկ այլք ՚ի տասն ցեղից յետոյ ուրեմն ոչ միահամուռ, այլ խումբ խումբ ժամա-

նեցին ՚ի գաղգաղա՝ մինչ անցեալ էր արքայն ըզ-
գեան։ Այր նոցա պարտ էր կանխել, զի նոքա եղեն
առաջինք առաքել հրեշտակս առ արքայ դարձուցա-
նել զնա. զի չէր ՚ի ձեռ արքայի նստիլ վայրապար
յափն գետոյն հանդերձ այնչափ բազմութեբ և
սպասել դանդաղաքայլ ժամանելոյ նոցա. վասն որոյ
նոցա էր մեղն չհասանելոյ ըստ ժամանակին։ Այլ
նոքա ժողովուրդ խռովայղք տմարդիք և ամբար-
տաւանք, պատրուակել կամեցեալ զդժրուվելն դան-
դաղութեն իւրեանց՝ խումբ կազմեցին ոչ սով ապա-
տամբութե, և մատուցեալ առ արքայ Հարցանեն ցնա
զայրագին, զի՞ է ասեն՝ զի արք յուդայ դաղտ դա-
ղացան զքեզ զթագաւորդ մեր. և որո՞վ իրաւամբ
առանց հնալոյ մեզ՝ ինքեանք միայն յափշտակեցին
զպատիւ՝ անցուցանելոյ զարքայ և զտուն նորա ընդ
յորդանան։ Արքայ չարաչար զնոսա արժանի պատաս-
խանւոյ, և որպէս երևի՝ դարձոյց նոցա թիկունս,
և եմուտ ՚ի խորանն իւր։ Այս փոխանակ արքայի՝
իշխանք յուդայ ետուն նոցա պատասխանի ջերմա-
գին հանդերձ փոքր մի երկիւծանութբ։ Արքայ ՚ի
մէնջ է. ուստի առաւել մերձաւոր մեզ քան ձեզ.
և ընդէր դժկամակ լինիք վասն այսր բանի. միթե
ուտելով կերաք ինչ յարքայէ, մինչև չհնալոյ ինչ
և ձեզ, կամ թե պարգևս ինչ ընկալաք, և կամ
ազատ եղաք յարքունի ինչ հարկաց, և այնու ամե-
նայն բեռն ՚ի վերայ ձեր ծանրացաւ։ Ետուն պա-
տասխանի արք իսրայէլի. զի այդչափ պարծիք.
դաւիթ ոչ է թագաւոր ցեղի իւրոյ միայն, այլ ա-
մենայն իսրայէլի, որ տասնապատիկ առաւել իրա-
ւունս ունի ՚ի դաւիթ քան զտունն յուդայ. և ՚ի
դաւթի անդրանիկ է քան զձեզ. ապա ընդէր ասեն
այդպէս թշնամանեցիք զմեզ. և չէզև ՚ի համարի
քան մեր որ նախ առաքեացք առ արքայ դարձու-
ցանել զնա առ մեզ։

Այս այնպէս յաձախեցին բանք յերկուց կողմանց.
բայց առաւել խստացաւ բան յուդայեանց, զի նոքա
զօրաւորագոյն էին, յորմէ և յայտնի ապստամբուի
վառեցաւ։ Օ՛ի այր մի յանդուգն սաբէէ անուն

նորա որդի բոքորայ ՚ի ցեղէ բենիամինի ամբար-
ձեալ զձայն իւր ասէ. որով հետև չիք մեր մնան ՚ի
դաւիթ և ոչ ժառանգութիւն յորդին յեսսեայ, ապա
չուեա՛ այր իւրաքանչիւր ՚ի քնակուն քո իսրայէլ. և
յայնժամ երևեցաւ թէ իսրայէլ արդեօք կարօտաս-
ցի թագաւորին յուդայ, եթէ թագաւորն յուդայ
կարօտ լինի իսրայէլի։ Այս ասացեալ՝ փող եհար
եղջերաւ, և եղեալ գլուխ երկրորդ ապստամբու-
թեան, ՚ի բաց գնաց անտի. և էլ ամենայն իսրայէլ
՚ի դաւիթ զկնի նորա։ Միայ դաւիթ ընդ որդւոցն
յուդայ եմնաւ յերուսաղէմ, ոչ նովին ուրախութիւ
և քաղցր յուսով որում ակնունէր, զկնի մեծի
յաղթութեանն ՚ի տեսանել զամենայն ժողովուրդ իս-
րայէլեան ինքնայօրդոր դիմել ՚ի հնազանդութիւն։
Եվ վերայ այսր յաւելաւ և այլ դառնութիւն ՚ի սիրտ
դաւթի ՚ի մտանել նորա ՚ի տուն իւր, և ՚ի տես-
անել զտասն կանայս խայտառակեալս յաղգապիղծ
որդւոյն. և յառաջ քան զձեռնարկել ՚ի նուաճումն
ապստամբութեանն՝ փութացաւ հեռացուցանել զայն
տխրագին առարկայս յաչաց իւրոց, եդեալ զնոսա
յառանձին տան ամրափակեալ. և յարքունուստ
կերակրեաց զնոսա. բայց այնուհետև ոչ եմուտ
առ նոսա. վասն որոյ ասէ գիրն, և էին նեղեալ,
մի մինչև ցօր մահուան իւրեանց կեցին այրիք։

Այսպա փոյթ կալաւ վաղվաղակի զառաջս առ-
նուլ ապստամբութեանն, մինչեւ իցէ զօրացեալ. կո-
չեաց զամեսայի, և ասաց ցնա ժողովել զամենայն
այր յուդայ զերիս աւուրս, և նոքօք հանդերձ
գալ յանդիման լինել նմա։ Այլ ամեսայի որպէս
երևի ՚ի գործոց նորա՝ էր ՚ի զօրապետաց անտի,
որոց առաւել է անունն՝ քան զգործ։ Որ սուղ
ինչ ժամանակ եղև զօրավար զօրուն աբեսողոմայ,
բայց յառաջնում մարտի անդ թիկունս դարձոյց՝
զանձն հազիւ ողջանդամ ապրեցուցեալ. իսկ այժմ
առաջին փորձ իւրոյ անվեհեր գործունէութեան,
զոր երևեցոյց ՚ի ծառայութիւն դաւթի, եղև յամե-
նալ նորա ՚ի ժամանակին՝ զոր եդ նմա արքայ։
Այսին իբր ստիպեցաւ զգործն յանձնել ցաբեսա

Եղբայր Յովաբայ, պատուիրելով նմա առնուլ զԴաւնդն Յովաբայ և զքերէթին և զփելէթին՝ այսինքն զանձնապահս արքայի և արքունեաց նորա, և զամենայն զօրաւորս Երուսաղէմ, և պնդիլ զՀետ սաբէի որդւոյ Բոքորայ, մինչեւ իցէ ամրացեալ ՚ի մի յամուր քաղաքաց և զօրացեալ, և վըտանգ մեծագոյն քան զաբեսողոմայն ածիցէ նմա։ Եւ բար աբեսա ըստ ամենայն բանից արքայի. և Յովաբ թէպէտ ՚ի ժամուն չունէր ինչ պատուէր յարքայէ, այլ զի էր բարձեալ արքայ ՚ի նմանէ զսպարապետութիւնն, գնաց և նա ընդ զօրուն իբր դերագոյն զօրավար. բայց անօրէն խորհրդով՝ եդեալ ՚ի մտի բառնալ ՚ի միջոյ զամբոխայն, և այնպէս գլխով սաբէայ նոր արդիւնս ցուցանել արքայի, զի դառնայցէ ՚ի հնորհս նորա, և կամ գէթ մի՛ անկցի յիշխանութենէ իւրմէ։ Եւ անցանել Երուսաղէմ ՚ի յաբել քաղաք, ուր խոյս ետ սաբէէ, էր հարկ զձանապարհ գաբաւոնի ունել, որ ՚ի մի կողմն անկանէր, և վայրապար երկարել զձանապարհ. բայց գիտելով Յովաբայ, զի ամբոխայն ընդ այն ունէր գալ, զնոյն ձանապարհ կալաւ և նա, զի հանդիպեսցի նմա։

Եւ՝ մինչդեռ էին Յովաբեանք առ վիմին մեծի որ ՚ի գաբաւոն, եհաս անդր ամբոխայն. և Յովաբ՝ որ արկեալ էր զանձամբ զինուորական վերարկու, և ՚ի ներքոյ էր զգեցեալ զրահս, և ՚ի վերայ նորա սուսեր ածեալ առ միջոցն՝ ընդարձակ պատենիւք թերաքամեալ, զի առ դոյզն շարժումն ինքնին ելցէ սուսերն, մերձեցեալ առ ամբոխայն՝ ասէ ցնա. Եթէ ո՞ղջ իցես եղբայր. և կալաւ աջով ձեռամբն զմօրուացն ամբոխայեայ համբուրել զնա իբրև ազգակից և բարեկամ, զմիւս ձեռն ունելով ՚ի սուրն. յորմէ ոչ զգուշացաւ ամբոխայն. և յեղակարծումն մխեալ Յովաբայ զսուսերն ՚ի մնակուշտ նորա՝ արար պատառուած մեծ, մինչեւ վայթիլ որովայնի նորա յերկիր, և չեղև հարկ կրկնելոյ զխոցուածն, զի մեռաւ ամբոխայն նոյնժամայն։ Եւ Յովաբ յետ այսպիսի անօրէն դաւաճանութե՛ան

մենեւին անխոռով, որպէս թէ չէր լինէ քնաւ գործեալ, եդ ի կարգի զզօրս եկեալս ընդ ամեսայեայ, և թողեալ զգի նորա ի մէջ ձանապարհին անթաղ յարեան թաթաւեալ, պնդեցաւ ընդ առեսայ եղբօր իւրոյ զհետ սաբէայ։ Եւ այր մի յերիտասարդացն յովաբայ եկն եկաց առ դխահամբ ամեսայեայ, և ասէ քարձրաձայն, որ ոք սիրիցէ զյովաբ կամ զդաւիթ, երթիցէ զհետ յովաբայ և աբեսայ։ Եւ տեսեալ նորա՝ զի ամենայն զօրն որ ընդ այն անցանէր, զտեղի առնոյր ի վերայ ամեսայեայ մորմոքելով ընդ տարապարտ մահ առնն, առ զնա և տապալեաց ի ձանապարհին յանդն. և արկեալ ձորձ ի վերայ նորա ծածկեաց զնա. և այնուհետեւ ամենայն զօրն անցանէր առաջգել երթալ զհետ յովաբայ, որ դիմէր ընդ հիւսիս։ Եւ զի գիտաց յովաբ, զի սաբէէ եւս ի դաղդաղայ դիմեաց ի հիւսիս, և անցեալ ընդ երկայնուն երկրին իսրայէլի որ կայն կոյս յորդանանու, զհետ լուր ձգեաց զընտիր ընտիրս յամենայն ցեղից, և նոքօք գնացեալ ամրացաւ յաբէլ և ի բեթմաքա ի սահմանս նեփթաղիմայ. զոր ումանք երկու այլեւայլ քաղաքս համարեցան։ Եւ այլոց ըստ այլոց՝ աբէլ էր քաղաք երևելի, և բեթմաքա, որ Թարգմանի տուն մաքայ, էր ամրոց նորա։

Եւ զդ՝ հասեալ յովաբայ յաբէլ, ծանեաւ նոյն ժամայն թէ քաղաքացիք միացեալ ընդ սաբէայ՝ ամենայն զօրութիւբ պատրաստին ի դիմամարտութիւն։ Ոմանք այնորիկ ետ վաղվաղակի զօրայ իւրոց փոս հնձանել, և հողաբլուր պատնէշ կանգնել շուրջ զքաղաքաւն իբրև զպատուար, զոր հասոյց մինչև ի պարիսպս քաղաքին. և հրամայեն ետ զօրուն եղծանել զպարիսպն։ Եւ նոքա սկսեալ էին խրամս քանալ ի պարիսպն, կին մի իմաստուն և այրաւիրտ ելեալ ի վերայ պարսպին՝ աղաղակեաց առ զօրս իսրայէլի, և ասէ. լուարուք լուարուք, ասասջիք ցյովաբ մատչել այսր, զի խօսեցայց ընդ նմա. Եւ զրև եկն յովաբ, ասէ ցնա կինն. եթէ դու իցես յովաբ. ասէ, ես եմ. և ասէ ցնա կինն, լուր բա-

նից աղախնոյ քո. ասէ յովաբ, ՚ի լսել եկեալ եմ ես։ Այլ խօսեցաւ կինն մէնին ինն առակաւ, զոր առնայն թարգմանութիւնք այլ եւ այլ օրինակաւ ընթեռնուն. յոյր սակս եւ մեկնիչք յայլ եւ այլ միտս առնուն։ Ամենք հայեցեալ ՚ի լատին թարգմանութենն, որ զայս օրինակ ընթեռնու. * Ման ձառէը ՚ի հին առակս, որք հարցանէնն հարցանեն յաբէլ. և այնպէս կատարէին. Ես եմ որ տամ պատասխանի զձշմարտուն իսրայէլի. և դու լինդրես եղծանել զքաղաքս, և կործանել զմայր իսրայէլի։ Այս հայեցեալ, ասեն թէ յաբէլ էր մայրաքաղաք անուանի ՚ի մէջ իսրայէլի յաղագս բազմութեանն իմաստնոց որ ՚ի նմա։ Զմին իրի յամենայն գժուարին խնդիրս կրօնի, կամ քաղաքական իրաց՝ անդ դիմէին իբր առ պատգամախօս հասարակաց. և առնուին լուծումն տարակուսանաց։ Այնմանէ յառակս եզև առ նախնիս ասել զայնոսիկ որք ուրնէին ծանր խնդիրս ինչ, հարցանել յաբէլ։ Զայն իբր յառաջաբան եղ կինն ՚ի պատրաստել զսիրտ յովաբայ առ այն զոր ուներ ասել։ Ապա յարէ զկնի ՚ի դէմն քաղաքին խօսելով առ նա. Ես եմ քաղաք մայր իսրայէլի, այսինքն մայրաքաղաք հռչակաւոր խաղաղարար և ձշմարտասպատում, և դու լինդրես եղծանել զիս և այնպէս ընկղմել զժառանգութիւն տեառն։ Այլ ըստ թարգմանութեանն եօթանասնից Թուի այլ միտս ընծայեցուցանել. իբր թէ խօսէին ՚ի նախնումն և ասէին, ՚ի լինել երբեմն հակառակութիւնք իրիք յաբէլ և ՚ի պան, նախ հարցանելով հարցաւ, եթէ պակասեցուցանիցեն զհնազանդութիւն, այսինքն ապստամբիցեն ՚ի հպատակութենէ զոր եդին հաւատարիմք իսրայէլի։ Զնոյն պարտ էր և այժմ առնել, նախ հարցանելով հարցնել յաբէլ. և ապա թէ պակասեցուցանիցեն, պատժեսցին։ Այս դարձուցեալ զբանն ՚ի դէմն քաղաքին՝ ասէ. Այս ոչ եթէ ապստամբ, այլ խաղաղարար եմ հաստատութեանն իսրայէլի ՚ի ձեռն քաղմութեանն իմոցս իմաստուն խորհրդականաց. և դու առանց հարցանելոյ՝ խնդրես կոտորել զայս

պիսի մայրաքաղաք Իսրայէլի, և ընկղմել զԺառանգութիւն ան։

Այս պատասխանի յովաբ, քաւ լիցի ինձ, քաւ լիցի Թէ ընկղմեցից և ապականեցից. չունիմ Թըշնամութիւն ընդ քաղաքդ, և ոչ ընդ Հաւատարիմ հպատակս Իւրոյ արքայի. այլ խնդրեմ զայր մի և եթէ ՚ի լեռնէ Եփրեմի՝ սաբէէ անուն նորա որդի բոքորեայ, որ ձեռն ապստամբութիւն Համբարձ ՚ի վերայ արքայի դաւթի. եթէ զնա միայն տայցէք ինձ, բարձից զպաշարումն և գնացից Խաղաղութիւն ՚ի քաղաքէ աստի։ Այսէ կինն. եթէ այդպէս է, ապա Հանդարտ լեր, զի զկնի սակաւուց ընկեցցի գլուխ նորա առ քեզ ընդ պարիսպս։ Այլ կինն և գնաց խօսեցաւ առ ամենայն ժողովուրդն, այնպիսի Ճարտար իմաստութիւնբ նկարագրելով առաջի նոցա զանմտութիւն մեծ՝ ՚ի վերջին վտանգ կորստեան դնել զքաղաքն ողջոյն վասն առն միոյ ապստամբի, մինչև Հաւանեցուցանել զամենեսին. որք և առ ժամայն Հատին զգլուխ նորա, և ընկեցին զնա առ յովաբ։ Այն նա ըստ խոստման Իւրում ետ փող Հարկանել եղջերեաւն. և ցրուեաւ զզօրն զայր իւրաքանչիւր ՚ի բնակութիւնս Իւրեանց՝ ինքն դարձաւ յերուսաղէմ, և յանդիման եղև արքայի ՚ի ձեռին ունելով զյաղթանակն զգլուխ սաբէայ։ Այս այսպէս վերջ եղև ապստամբութեն. և յովաբ եՀաս Իւրոց կամաց կատարման. զի Հաստատեցաւ յիւրումն իշխանութիւնէ, բայց ներկեաւ յանպարտ արիւն ամենայնեայ։ Այլ տայ երբեմն ած անօրէնութիւնէ լինել առ ժամանակ մի ՚ի յաջողութիւնէ անօրինին. բայց երկայնմտութիւնէ նորա ոչ է անգիտութիւնէ, և յապաղումն նորա ոչ է մոռացումն. և անօրէնն որ երջանիկ համարէր զանձն, լացցէ ՚ի վախճանի, այլ անագան՝ զթշուառութիւնէ իւր, յորժամ տեսցէ զանձն անկեալ ՚ի ձեռս արդարադատին այ կենդանւոյ։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Ասի երեւոյթեայ ի պարիսպ աներեւելոյ սատանայի ի գաբաւոնացիս։ Ա՛հ եօթանից ի փանէին սատանայ։ Գլխոյն ի ձեռս սատանայի առ մեռեալս։ Օձանալն պարբերականք սատանէին։

ՕՁ ամենայն որ միանգամ պատմին աստանօր ի ԹՎ. գլ. Բ. նոփ. բազումք համարին դիպեալ կէս մի յառաջ և կէս մի զկնի ապստամբութեանն աբեսաղոմայ և սաբէեայ, ընդ միջոց երկոտասան ամաց։ Այլ զի ասեն՝ որով հետեւ այս ամենայն ի մի կարգ պատմութեանն հային, վասն այնորիկ և ես դիպեն միասին առանց ընդհատուածոյ պատմէ զամենայն. և ապա ըստ իւրումն սովորութեան, զոր ի բազում տեղիս գոյ տեսանել, դառնայ պատմել զեղեալսն յայնմ միջոցի ժամանակի։ Այսմ կարծեաց նպաստեն և պատերազմունք պատմեալք յայս գլուխ. զի չէ հաւանելի, թէ դաւիթ ծանրացեալ ծերութիւնն, և թափեալ յուժոյ ի սակս այնչափ վաստակոց և տառապանաց, զոր կրեաց ի մանկութենէ, անձամբ մտեալ էցե ի մարտ. Թէպէտ զի և յաջորդ բանիս՝ որ պատմին զնմանէ, ոչ յարմարին այն պատերազմունք։ Այլ թողեալ զայս՝ մատիցուք ի կարգ պատմութեան։

Առաջին սով եամ զամի զկնի անընդհատ՝ որ եղև յայսմ միջոցի ընդ ամենայն հրէաստան, նշանաւոր է յոյժ. բայց առաւել նշանաւոր է դերն, որով դադարեցաւ։ Տեսեալ դաւթի՝ զի երաշտն յերկարի, և սովն օր քան զօր սաստկանայ, ըստ իւրումն սովորութե՝ որ յամենայն դժուարինս դիմէր առ Ա՛ծ, գնաց ի խորանն և խնդրեաց յերեսաց Ա՛ծոյ. և ընկալաւ պատասխանի ի Ա՛ծոյ, Թէ պատիժ է ամենայն երկրին վասն սաւուղայ, և վասն

արեանց տան նորա, զի կոտորեաց զդաբաւոնացիս ընդդէմ ուխտի երդմանն յեսուայ առ նոսա, և չեզև ցարդ դառաստան ի վերայ տանն սաւուղայ, և ոչ վնարուծն դաբաւոնացւոց. որ թէ լինիցի, յայն ժամ բարձցի ապա և սուին։ Եւ ասէ՝ թէ երբ գործեաց սաւուղ զայն կոտորած. երևի թէ յետ հարկանելոյ նորա և կործանելոյ զնոմբա քաղաք քահանայից, զտապանակն փոխեալ էր ի դաբաւոն. և դուցէ յայնժամ կոտորեաց զդաբաւոնացիս ջնջել կամելով զնոսա իսպառ ի քաղաքէ անտի, զի անդ հաստատեսցէ զտապանակ տէն։

Օ իմարդ և էջ, առեալ դաւթի զայս պատասխանի ի տէնէ՝ կոչեաց վաղվաղակի զդաբաւոնացիս, և եհարց ցնոսա, թէ զբո հատուցումն պահանջէն յաղագս չարեացն, զոր յանիրաւի կրեցին ի սաւուղայ։ Նոքա ետուն պատասխանի. արծաթ և ոսկի ոչ խնդրեմք ի սաւուղայ և ի տանէ նորա, այլ արիւն ընդ արեան. քայց ոչ պիտի մեզ այր սպանանել իսրայէլ։ Ասէ արքայ. և արդ զինչ ասէք, զի արարից ձեզ։ Ասեն. այր որ սպառեաց զմեզ և հալածեաց, որ և համարեցաւ սատակել զմեզ, զնա ջնջեսցուք, զի մի ինասցէ ոք ի սերն դոց նորա յամենայն սահմանս իսրայէլի։ Այլ յետոյ կամ ի յորդորելոյ դաւթի, զի ապրեցուսցէ զանմեղն մեմփիբոսթէ, զորդի սիրելոյն իւրոյ յովնաթանու՝ վասն սերտ բարեկամութեն և վասն երդմանն յանուն տէն որ ի մէջ երկոցուն, և կամ գաբաւոնացիք ինքնին զնջան, զմտաւ ածեալ թէ յորպիսի ատելութիւն ընդդէմ ինքեանց ունէին զրգռել զժողովուրդ իսրայէլի, ի խնդրել իւրեանց սպառ սպուռ ջնջել զտոհմ սաւուղայ. շատացան եօթն արամբք. տային ասեն՝ մեզ եօթն արք յորդւոց նորա, զի ի գաբաա սաւուղայ յարագեսցուք զնոսա՝ այսինքն յանդիման արեգական ի խաչ հանցուք ի հաշտութիւն այ. զգաբաա ընտրեն զքաղաք թագաւորութեան սաւուղայ՝ յատաւելոյ զվիշտս եղկելի դատապարտելոց, անդ մեռանիլ անարդաբար, ուր հայր և հաւ նոցա թագաւորեաց։

Դաւիթ խոստացաւ տալ նոցա. բայց անտա-
րակոյս միւսանգամ հարցեալ ի նմանէ, Թէ զի՞նչ
ունիցի առնել. կամ յաւաջնումն անդ պատուիրե-
ցաւ նմա ի նմանէ՝ կատարել զոր ինչ խնդրեսցեն
գաբաւոնացիք: Այլ Թէ ոչ՝ զո՞ր դատաստան նա-
խանձու ոչ արկանէր ի վերայ նորա ժողովուրդն,
որպէս Թէ ինքնին զայն պատրուակ հնարեաց, առ
բառնալոյ ի միջոյ զտոհմ սաւուղայ Թշնամւոյ ի-
րոյ. ուր՝ դաւիթ աստ եղև լոկ գործադրիչ կա-
մացն նոյ: Պատիժն մահուան անկաւ ի վերայ եր-
կուց որդւոց ռեսփայ դստեր այիայ հարճի սաւու-
ղայ՝ երմոնեթեայ և յեբուսեթեայ. (կամ ըստ այլ
Թարգմանութեաց՝ մեմփիբոսեթեայ, որ էր համա-
նուն որդւոյն յոնաթանու՝ այլ ի նմանէ.) և ի
վերայ հնգեցունց որդւոց մերովբայ դստեր սաւու-
ղայ կնոջ եսդրիելի, որդւոյ բերզելեայ մովա-
Թացւոյ: Ասա ընագիր եբրայեցւոց՝ յորմէ և այլ
Թարգմանութիք և սովորական օրինակք մեր, փո-
խանակ մերովբայ՝ ընթերցուն մեղքողայ. զոր ջա-
նացեալ մեկնչաց միաբանել, ասեն զնոսա ծնեալ ի
մերովբայ. և յետոյ որդեգրեալ մեղքողայ քեռ
մերովբայ: Այսմ կարծեաց նպաստէ մեկնաբա-
նութիւն քաղդէացւոց. որ է օրինակ զայս. * Եւ
զհնգեսին որդիսն մերովբայ, զորս ննուցեալ էր
մեղքող դուստր սաւուղայ. զորս ծնեալ էր եսդ-
րիելի որդւոյ բերզելեայ ‖: Այլ այս ոչ բառնայ
զդժուարութիւնն. վասն այնորիկ այլք համարին
կամ մերովբայ կոչել և մեղքող, որ սովորական էր
առ եբրայեցիս զանազան անուանս ունել, և կամ
համաձայնութիւն և վրիպակ իցէ սպրդեալ յեբ-
րայականն. որ առաւել հաւանելի Թուի:

Օ եօթանեսին զնոսա ըստ հրամանի նո՝ մատ-
նեաց դաւիթ ի ձեռս գաբաւոնացւոց. զորս խա-
չեցին ի գաբաա՝ ի վերայ լերին. և մեռան նոքա
եօթանեքին ի միասին յառաջնի աւուրս ի սկզբան
հնձոյ գարեաց, որ լինէր յարևադարձն ամարայ-
նոյ: Այնգ երևեցոյց ռեսփա հարճ սաւուղայ զըս-
քանչելի գԹուԹի, և զմայրենի սիրոյն հաստա-

տուեալ , զի առեալ հնոտի քուրձ մի՝ արկ ՚ի ներքոյ իւր ՚ի վերայ վիմին , (կամ զիւրև ՚ի վերայ վիմին . ուր ՚ի մեզ դնի , ՚ի վերայ նոցա , որ կամ է վրիպակ գրչաց . և կամ պարտ է իմանալ , ՚ի սակս նոցա) : Եւ այն եղև նորա սեղան , և աթոռ , և մահիճ , զամենայն ժամանակն ցորչափ կացին մարմինք կախելոցն ՚ի խաչի : Ո՛չ անմեկնելի եկաց նա անդ զցայգ և զցերեկ ՚ի պահպանութեան դիականց նոցա , ՚ի տուէ ՚ի գիշակեր թռչնոց , և ՚ի գիշերի ՚ի գազանաց անապատի , ոչ տալով թոյլ մերձենալ ՚ի նոսա : Յայսմանէ երևի թէ խաչք կամ փայտք կախաղանաց , յորս ՚ի հնումն հանէին զմահապարտս , էին բարձր յերկրէ , մինչև մարթ էր հասանել գազանաց և շանց պատառել զմարմին կախելոց . զոր ունիմք և ՚ի վկայաբանութիւնս մարտիրոսաց . զորս երբեմն ՚ի խաչ հանեալ՝ կենդանւոյն տային գազանաց և շանց պատառել : Ի վերայ ժամանակի յորս կացին մարմինք նոցա ՚ի խաչի , և ռեսփա առ նոքօք , զանազան կարծիք են . ոմանք երկարեն ցամաքեալ ժամանակ , այլք համառօտեն ցմի օր : Սակայն որպէս ցուցանէ նոր դիրն , թէ ոչ ամնօրեայ , գէթ աւուրս քանի մի հարկ է դնել . * մինչև ասէ կաթեաց ՚ի վերայ նոցա ջուր յերկնից ‖ . իմա ՚ի նշանակ հաշտութեան՝ առ ՚ի բառնալ զերաշտն և զսով . որով ցուցանէ նատել անդ ռեսփայ , մինչև կաթեաց , յայտ է թէ ոչ առ ժամայն , և ոչ ՚ի նմին աւուր . ապա թէ ոչ՝ անդէպ էր յաւելուլ աստ զինչ-ինչ , որ զժամանակ ինչ ցուցանէ . և առաւել անդէպ էր ասել և ոչ տայր թոյլ թռչնոց երկնից հանդչել ՚ի վերայ նոցա ՚ի տուէ , և ոչ գազանաց անապատի ՚ի գիշերի . որ ըստ սովորական ոճոյ ասից՝ զանազան տիւս , և զանազան գիշերս ցուցանէ . Թո՛ղ զի ՚ի վերայ բերի , (յորժամ պատմեցաւ դաւթի զոր ինչ արար ռեսփա) ըստ եօթանասնից թէ մարմինք կախելոց լուծան , այս է ըստ մերումն՝ լքան . այսինքն պատմեցաւ դաւթի կալ մնալ ռեսփայ առ դիակամբք , մինչև նեխիլ նոցա և լուծանիլ :

Եւ մի լեցի ումեք զարմանալ ընդ Թողուլ դաւթի զմարմին յարագելոյն երկար՝ի խաչի, ուր՝ հրամայեալ էր յօրէնսն, մի ագանել մարմնոյ կախելոյն՝ի փայտի, այլ զի Թաղելով Թաղեսցի՝ի նմին աւուր· Ե· օրէն· ԻԸ· 23: Վասնզի նախ՝ ասէ կալմէթ, օրէնքն զայդ պատուիրեն վասն հասարակ մահապարտաց, որք առ չարագործութէ իւրեանց մեռանին· իսկ այս դիպուած նոր էր գլխովին· զի սոքա ոչ եթէ յաղագս իւրեանց անձնական չարագործութէ խաչեցան, այլ՝ի պատճառս այլոց ըստ վերին կարգաւորութէ: Եւ երկրորդ՝ զի ոչ դատակնքով դաւթի մեռան, այլ գաբաւոնացիք ըստ իւրեանց օրինաց արարին զոր ինչ արարին· և զի նոքա չէին՝ի ժողովրդենէ իսրայէլի, վասն որոյ և ոչ պարտաւոր՝ի պահպանութէ դատաստանական օրինաց նոցա: Այս զի՝ ունէին գաբաւոնացիք և պատճառ յերկար Թողուլ զայն աղետալի տեսարան յահարկութէ երբայեցւոց՝ի չհարստահարել զնոսա: Այդ իբրև պատմեցաւ դաւթի սքանչելի գորով գթոյ ռեսփայ հարճի սաւուղայ, խորհեցաւ և ինքն խորհուրդ արժանի իւրումն մեծանձնութէ և ընդառաջս գթասիրութէ առնել բարութէ տանն սաւուղայ: Ողջաւ վաղվաղակի յաբէս գաղաադու, առ զոսկերս սաւուղայ և յոնաթանու, զոր արք յաբէսայ գողացեալ էին՝ի հրապարակացն բեթսանայ, և Թաղեալ անդ՝ի յաբէս· անտի անցեալ՝ի գաբաա, եւ իջուցանել՝ի խաչէ զմարմինս յարագելոյ որդւոց և Թոռանց սաւուղայ, և Թաղեաց զնոսա՝ի միասին յերկրին բենիամինի՝ի գերեզմանն մերձ առ կիս հայր սաւուղայ: Եւ յետ այնորիկ ասէ դէրն, լուաւ Աստ երկրին· քանզի զառաջինն՝ մինչ տակաւին՝ի խաչին էին մեռեալքն, կաԹեցաւ՝ի վերայ նոցա սակաւ ինչ ջուր յերկնից· այլ յետ այնորիկ էջ անձրև յորդառատ, և դարձոյց զսովորական արգասաւորութէ երկրին:

Այս ժամանակ, յորում հաշտեալ էր Աստ ընդ դաւթի, և ընդ ժողովրդեան նորա, չէր՝ի դէպ փղշտացւոց այլազգեաց պատերազմ յարուցանել

ընդդէմ իսրայէլի ։ Բայց նոքա զսոյն իսկ ժա-
մանակ ընտրեցին ՚ի գործ արկանելոյ զՀնացեալ
ԹշնամուԹի՝ իւրեանց . համարելով, Թէ յերեքա-
մեայ սովէ անտի տկարացեալ, և շտեմարանաց նո-
ցա դատարկացեալ, ոչ կարիցեն պաշտպանել ան-
ձանց ։ Բայց խաբեցան . որպէս ելք չորից պատե-
րազմաց յուշին , զոր միմեանց զինի մղեցին ընդ
իսրայէլի , յիւրաքանչիւրսն ունելով մի մի ահեղա-
խրոխտ սկայս առ երկիւղ արկանելոյ իսրայէլացւոց ։
Յառաջնումն մարտի , յորում դաւիԹ անձամբ ա-
ռաջնորդեր զօրուն իւրոյ , անկաւ ՚ի վտանգ մեծ .
քանզի գոլով վաստակեալ ոչ առ ծերուէ , որպէս
ոմանք համարեցան , այլ յաշխատուԹէ պատերազ-
մին , եսբէ որ էր ՚ի ծննդոց սկայից ռափայ , և
կշիռ նիզակի նորա յերեք հարիւր ունկւոյ կուռ
պղնձոյ , ունելով և Թուր ածեալ ընդ մէջ իւր ,
յարձակեցաւ հարկանել զդաւիԹ . այլ օգնեաց
նմա աբեսսա որդի շարուհեայ . որ ՚ի ժամու հա-
սեալ՝ եհար և սպան զՀսկայն անդէն առ ոտս դաւ-
Թի ։ Այս էղև վերջին պատերազմ , ուր անձամբ
եմուտ դաւիԹ . քանզի երդուան յայնժամ զօրա-
վարք նորա , Թէ ոչ ևս մտցէ արքայ ընդ նոսա ՚ի
մարտ , դնել ՚ի վտանգ զկեանս իւր , որ Հարկաւոր
էր յոյժ ՚ի պահպանուԹիւն ԹագաւորուԹեանն իսրայէ-
լի ։ Վարձեալ երկրորդ անգամ էղև պատերազմ
ընդ այլազգիս ՚ի գԹէ առ գազեր քաղաքաւ . ա .
Ճահ . Է . 4 . ՚ի սահմանս ցեղին Եփրեմայ , բայց գա-
զեր էր ՚ի ձեռս այլազգեաց . ուր սովքաք ոմանցի ,
կամ սուբաքէ ուսումնացի Եհար և սպան զսեփտոն ,
կամ զսեպփիաս ՚ի ծննդոց սկայիցն ռափայ ։ Ընդ
՚ի յոտվքե էղև երրորդ անգամ պատերազմ ընդ այ-
լազգիս . և ելևանան որդի արխովգիմայ կամ յայի-
րայ բեԹղահեմայցւոյ Եհար զՀսկայն գողիաԹ . որ
՚ի ա . Ճահ . Է . 5 . կոչի լեհմի , զեղբայրն Հռչակաւոր
գողիաԹու գեԹացւոյ . և փայտ նիզակի նորա էր
իբրև զստորի ոստայնանկաց ։ Յետ այսորիկ էղև
և չորրորդ պատերազմ անդ ՚ի գԹէ . և էր ՚ի բա-
նակին այլազգեաց այր մի հսկայաձև նոյնպէս ՚ի

ծննդոց անտի ուսիայ. անուն նորա մադոն, (այս-
ինքն չափ, իմն՝ մեծաչափ մարմնով կամ մատամբք)
և մատունք ձեռաց նորա և ոտից վեց վեց՝ քսան և
չորք թուով. բայց ոչ անհեթեթ բարձրութեի հա-
սակին, և ոչ լայնութեի ձեռաց և թաթից ոտից
նորա օգնեցին նմա ի պահպանութիւն կենաց։
Վասնզի այն ինչ երգիծանօղ բանիւք նախատէր
զիսրայէլ, յոշնադաք որդի սամսայ եղբօր դաւթի
եհար և սատակեաց զնա։ Նա այնպէս ի սուղ ժա-
մանակի չորեքին սոքա սկայք գեթացիք ի ծննդոց
ուսիայ կորեան ի ձեռաց զօրավարացն դաւթի. և
ցուցին թէ մեծութեի և պնդակազմութեի մարմնոյ
չօգնէ ինչ ի պատերազմի, եթէ չունիցի իւր լծորդ
զարիւթեի և զհանձար ի հնարս մարտի։

Այս չորրորդ պատերազմ իսպառ նկուն արար
զայլազգի փղշտացիս անհաշտ թշնամիս իսրայէլի,
մինչև խոնարհիլ նոցա և խնդրել հաշտութիւն ի
դաւթէ ամենայն պայմանօք, որպէս զիարդ հաձոյ
թուեցի նմա։ Յայնժամ հանգուցեալ դաւթի
յամենայն կողմանց՝ երգեաց գոհացողական օրհ-
նութեի՝ ասն, որ ի կարգս սաղմոսաց՝ նովին իմաս-
տիւք քան բառիւք, և եօթն և տասնեերորդ. ուր
երկնային լիմն քերթութեք մի առ մի յառաջ բերէ
զվիշտս տառապանաց՝ զոր կրեաց ի թշնամեաց, և
զհրաշալի ողորմութիս և զբարութիւնն՝ զոր արար
նմա ած, յամենայնի յաղթական կացուցանելով
զնա. և զվստահութեի և զանդրդուելի յոյս իւր
առ ամենակալն։

Դաւթէն պայ ընութել կիսողովրդդ էր. այր վասն երկա աչքս պատճոյ առաջարկէ նմա զաղ մարգարէ. և նա ընդ կնմ։

{Եւ բազմադիմի թշուառութեց ապստամբութեց, սովու, և զանազան պատերազմաց, յորս միշտ յաղթական հանդիսացաւ զաւիթ օգնական նութեք նն, այն ինչ՝ ի խորին խաղաղութե վայելէր ինքն, և ամենայն երկիրն ընդ նմա, ՝ի թոյլ տալոյ վերին տնտեսութե՝ արկ բանսարկուն ՝ի սիրտ նորա սնոտի իմն գրգիռ գիտելոյ ձշտիւ զհամար ոյնոցիկ, որք ՝ի ժողովրդեան իւրում ՝ի քսան ամենից և՝ ի վեր կարօղ էին զէն առնուլ և մտանել ՝ի պատերազմ։ Ոմանն որոյ կոչեաց զյովաբ զմեծ սպարապետ զօրուն, և զայլ զօրավարս, և պատուիրեաց նոցա շրջիլ ընդ ամենայն ցեղս իսրայէլի ՝ի դանայ մինչև ցբերսաբեէ, և առնել հանդէս ժողովրդեան. զի գիտացից ասէ զ[illegible] նոցա։ Յովաբ թէպէտ չէր ՝ի կարի բարեպաշտից անտի և յերկիւղածաց, բայց տեսեալ զընդունայնութի խորհրդոյն, և կասկածեալ ընդ չար հետևանս գործադրութեանն, հնարի ՝ի բայ դարձուցանել զարքայ ՝ի խորհրդոյ անտի՝ կրկին իրաւացի վասութիւք։ Այն՝ զի այդ բան ոչ այլ ինչ է, քան թէ լոկ հետազօտութի իմն անպատճառ և անօգուտ։ * {Յաւելցե՛ ար ասէ, ՝ի ժողովուրդն որչափ եննն՝ հարիւրապատիկ... և ար իմ արքայ ընդէր կամիցի զբանդ զայդ ‖. Ե. Նափ. ԽԲ. 3։ Այրկրորդ՝ զի ոչ միայն անօգուտ է, այլև ծանր յոյժ երկրին, և պատճառ բազում մեղաց ՝ի ժողովրդեան։ * Ասեն քեքեան ասէ, ծառայք են ան իմոյ ‖. ոչ ոք ապրստամբ, ոչ ոք թշնամի, ոչ ոք դիմադարձ. * և ընդէր խնդրէ ար իմ զայդ. զի մի լինիցի մեղք ՝ի ժողովրդեանդ իսրայէլի ‖. կամ ըստ արաբ.* եր-

կընչիմ, զի մի ՚ի մեզս դարձցի այդ իսրայէլի ‖. ա. Թագ. ի՛. 3։

Ա՛յս ընդդիմութիւնք յովաբայ լուծման առանց պատասխանւոյ. որպէս սովոր են իշխանք լուծանել, յորժամ հնազանդութի՛ն խնդրեն, և ոչ խորհուրդ։ Այսուհետև ասէ գիրն՝ բանն արքային առ յովաբ, և առ իշխանս զօրուն. և ել յովաբ, և ընդ նմա ամենայն զօրավարք յերեսաց արքային. և առեալ ընդ իւրեանս դպիրս, և զայլ բազմութի՛ն պաշտօնէից, այլև զինուորս, որք կարևոր էն առ այսպիսի գործ ծանր, ելին ՚ի Ձանապարհ. և անցեալ զյորդանան՝ եկին և բանակեցան առ պարսպօք արուեր քաղաքի, որ ՚ի մէջ ձորոյն գադայ. անդ սկսան առնուլ զհամար ժողովրդեան։ Ա՛պա անտի ՚ի վեր կոյս դիմեալ ընդ ձորն յազերայ՝ եկին ՚ի դաղատադ. և ուղղեալ ընդ հիւսիս՝ հասին ՚ի դան. ապա խոտորեալ յարևմուտս, և պատեալ զսիդոնաւ և զտիւրոսիւ, դարձան ՚ի հարաւ, և եկին ՚ի բերսաբեէ. ուր սպարին զվերջին համար հանդիսի։ Այս այնպէս շրջեալ ընդ ամենայն երկիրն իսրայէլի, ՚ի կատարիլ ինն ամսոց և աւուրց քսանից, հասեալ յերուսաղէմ, եւ յովաբ զհամար հանդիսի ժողովրդեանն արքային. * Այս եղև իսրայէլն ութ հարիւր հազար արանց զօրու սուսերամերկաց, և այր յուդայ հինգ հարիւր հազար արանց մարտակաց ‖. Բ. Նահ. իէ. 9։ Ա՛յլ թիւն նշանակեալ ՚ի գիրս ա. Թագ. ի՛. 5. բազմօք առաւելու. զի ասի անդ. * Այս էր ամենայն իսրայէլ հազարք հազարաց, և հարիւր հազար արանց. այսինքն միլիոն մի, և հարիւր հազար, որ ձգէին սուսեր. և յուդաս չորեքհարիւր յիսուն հազար արանց սուսերաւորաց ‖։

Ո՛չայս անհամաձայնութիւնն Թուոյ մնրթ էր դիւրաւ միաձայնել, եթէ հաւաստեալ կարէաք՝ Թէ ՚ի գիրս Ճեացորդաց Թիւ ամենայն իսրայէլի փակէ ընդ իւրև և զցեղն յուդայ չորս կամ հինգ հարիւր հազարօք. իբր Թէ յասէն, * Ամենայն իսրայէլ... և յուդաս ‖. ոչ առցուք զատաբար, այլ խմաստուք.

և զյուդայի Թիւն զայդ ընդ գումարն ամենայն իսրայէլ. այլ զի գժուարին Թուի այդ, նմին իրի կամեցեալ մեկնչայց միաբանել զիրսդ, են որք ասեն՝ Թէ՝ ի գիրս մնացորդաց նշանակի ընդհանրապես Թիւ ամենեցուն, որք՝ ի քսանամենից և՝ ի վեր կարօղ էին զէն առնուլ, որպէս ասի անդ, * որ ձգէին սուսեր ‖: Այլ՝ ի մէջ նոցա էին պատանիք փոքր հինչ՝ ի վեր՝ ի քսանամենից, որք տակաւին ուսնէին զօրանալ աճմամբ հասակաւ. կային և որք սկսեալ էին միտել՝ ի ծերութիւն և տկարանալ յուժոյ. իսկ երիտասարդք՝ ի հասակ կատարեալ ուժաւորք սնդակազմ և քաջագօտի ոչ միայն կարօղք ձգելոյ սուսեր, այլև միշտ զինեալք սուսերամերկ, ուր Թարիւր հազար. և ահա սոցա և եթ Թիւ նշանակի՝ ի գիրս Թագաւորաց: Այլք այլազգ մեկնեն. զի ասեն Թէ մինչև էր յովաբայ յաւարտ հասուցեալ զհամար հանդիսի ամենայն ցեղից որդւոցն իսրայէլի, ետես զի բազումք՝ ի նոցանէ, որք չէին վճարեալ զկէս երկդրամենին, զոր հրամայեաց ած՝ ի ձեռն մովսիսի, վճարել որոց մտանիցեն՝ ի համար, զի մի լինիցի՝ ի նոսա մահ. ելից. լ. 12. աստ և անդ յեղակարծ անկեալ մեռանէին. կամ այլովք յայտնի և խայտառակ պատժովք պատուհասէին. ըստ որում ասի. * Եւ չար երևեցաւ առաջի ոյ վասն իրացն այնոցիկ, և եհար զնոսայէլ ‖: Ուստի երկեաւ յովաբ, և անկատար Թողեալ ընդգործն, զոր արդէն ակամայ կամօք առ հարկի առնէր, * զղեխի, և զբենիամին ոչ Թուեաց ասէ գիրն, վասն զի տաղտկացաւ բան արքայի առ յովաբայ ‖. ա. ԹագԹ. իա. 6: Այսն որոյ դարձաւ առ արքայ, և ետ նմա զհամար հանդիսի, զոր ցայն վայր արարեալ էր, ուր Թարիւր հազար արանց իսրայէլի. և հինգ Թարիւր հազար՝ ի յուդայ. ՝ի մէջ առեալ և զայնոսիկ, որք էին յերուսաղէմ. զոր Թերևս հեղինակն գրոց ՃԹացորդաց՝ ի բաց Թողու, չորեք Թարիւր յիսուն, կամ ըստ եօԹանասնից, և ասորւոց՝ համաձայն բնագրի եբր", եօԹանասուն Թազար եւեթ նշանակելով:

Յայնժամ և դաւիթ հարեալ ՚ի խղճէ, ատըրջացաւ ընդ գործն զոր արար. ՚ի միտ առեալ ՚ի պատժոյն՝ թէ չար թուեցաւ այն առաջի ՚ուր. վասն որոյ հրամայեաց դադարեցուցանել զգործն. նաև զթիւն այնոցիկ զորոց առեալ էին զհամար, ոչ ե-թող գրել՝ որպէս սովորութիւն էր, յարքունի արձանագրին. որպէս երևի ցուցանել. ՚ա. ՚ճաց. իէ. 24. յասելն. * Եւ յովաբ որդի շարուհեայ սկսաւ թուել զժողովուրդն, և ոչ կատարեաց ‖. կամ ըստ այլ թարգ. * զի եղև յաղագս այնորիկ բարկութիւն ՚ի վերայ իսրայէլի, և ոչ յարգեցաւ՝ այսինքն ոչ արձանագրեցաւ թիւն ՚ի գիրս քանից ա-ւուրց թագաւորին դաւթի ‖: Սակայն ՚ինձին ժամանակի՝ այլք յիշխանաց որք ՚ի հեռագոյն ցեղս յայս գործ էին կարգեալ, մինչև ծանեան զարգելս արքայի, էին հաւաքեալ այլևս երեք հարիւր հազար յիսրայէլէ. որով ընդ ամենայն՝ եղեն հազարք հազարաց, և հարիւր հազար. որպէս նշանակի ՚ի գիրս մնացորդաց: Սմանք այլ պէսպէս մեկնութիւք գուն գործեն միաբանել. զորս երկար լինի լինել մի մի յառաջ բերել: Տես կալմետ. ՚ի ՌԷՆ. Է. Նագ. էԲ. 9. Հայեցեալ ՚ի մեծ զանազանութիւնն որ ՚ի մէջ այսոցիկ թուոց, լաւ համարի թողուլ զմին ՚ի բաց, քան միաբանել զերկոսին բռնական մեկնութիւք. որք յաւելուն՝ քան թէ նուազեն զգժուարութիւնն: Օ ի չէ ինչ նոր ասէ գտանիլ վրիպակաց յերբայական բնագրին ՚ի թիւս և ՚ի յատուկ անուանս յանհոգութիւնէ գրչաց, և յերկարութիւնէ ժամանակի. և ինքն ընտրէ զթիւն նշանակեալ ՚ի գիրս թագաւորաց. բայց կարծեմ թէ սակաւս ունիցի յայսմ մասին համախոհս:

Սեղանչելն դաւթի ՚ի թուել զժողովուրդն հաւաստի է՝ ոչ միայն ՚ի նորին խոստովանութիւն, այլև ՚ի պատժոյն, զոր վասն այնորիկ առաքեաց նմա ՚ած. այլ թէ յորմէ եղև մեղք նորա, զանազան կարծիք են: Սմանք ասեն, թէ դաւիթ թուեցուել զժողովուրդն՝ գործեաց ընդդէմ կամաց և դիտաւորութե ՚ած. որ խոստացեալ էր այնչափ բազ-

մացուցանել զժողովուրդ որդւոցն իսրայէլի, մինչև մարդկօրէն լինել անթուելի. ինքեան միայնոյ սեպհականելով զգիտուելի որքանուելն թուոյ նոցա։ Այլ անհիմն է և մնոտի այդ պատճառ. քանզի դաւիթ ոչ եթէ զթիւ համօրէն ժողովրդեան կամեցաւ գիտել, այլ միայն զնոցայն, որք՝ ի քսանամենից և՝ ի վեր կարօղ էին զէն առնուլ. որպէս այլուր յայտնի ասէ գիրն. * Այս ոչ ամ դաւիթ զթիւն նոցա՝ ի քսանամենից և՝ ի վայր (ուր՝ ի մեռումն գրի վրիպակաւ, և՝ ի վեր) վասն զի՝ ետ առաջ բազմացուցանել զիսրայէլ իբրև զաստեղս երկնից ‖. ա. ճ. իէ. 23։

Այլք ասեն մեղուցեալ նեղքին ամբարհաւաճ ձուելոյ սրտի և մնափառուելոյ, առնեալ՝ ի յաջողուելոյ և՝ ի բազմապատիկ յաղթուելոյ. զնդ որ անխորհրդաբար մեծամտեալ, որպէս թէ զօրուելոյ զօրուն իւրոյ արարեալ էր զայն, ցանկացաւ գիտել ձչտիւ զմեծուելի զինուորականն զօրուելոյ իւրոյ, և զընդարձակուելի թագաւորուելոյ. յայն յաւէտ՝ քան թէ յօգնականուելին՝ այ դնելով զյոյս իւր։ Այս զայս առնուն՝ ի բանից խոստովանուելոյ նորա. զի ասէ. * Ներեալ յոյժ, զոր արարի. և արդ անցո՛ զանօրէնուելի՝ ի ծառայէ քումմէ. զի ընդունայնացայ (կամ ըստ այլ թարգմ. զի անմտացայ յոյժ)‖, որպէս թէ վստահանալով՝ ի զօրուելի բազմուելոյ իմոյս զօրաց։ Այլք և զայդ ասել ծանր է վասն լուսաւորեալ մեծահաւատ՝ եբ արքայի. որոյ անյողդողդ և հաստատուն յոյսն առ աստ՝ առաւել քան զմիջօրեայ արեգականն ձառագայթ՝ լուսափայլէ յամենայն սաղմոս, ՝ի բանս, և՝ ի գործս նորա. զամենայն բարիս՝ ետն այ միայնոյ վերագրելով։ Այսպէս որոյ այլք իրաւամբք ոչ այլ ինչ մեղս գրեն դաւթի յայս գործ, բայց միայն զայն, զոր յովաբ առաջի արար նմա. այսինքն զանպատշաճ և զանօգուտ հետաքրքրուելիսն, ոչ միտ դնելով՝ ըստ որում պարտական էր՝ ընտանական հետևուելոյն որք հարկաւ զհետ գային։ Այլ առ՝ ի գլուխ հանելոյ զայն՝ հարկ էր առաքել զբազմուելի պաշտօնատա-

բաց իշխանական շքով, և ընդ նոսա բազմութիւն դպրաց և սպասաւորաց, այլև զինուորս ՚ի զգուշութիւն: Այսք ծախք նոցա լինէր կամ յարքունուստ և կամ յանցնիւր ցեղից, ուր նստէին նոքա առնուլ զհամար այնր ցեղի այլ եթէ այսպէս, և եթէ այնպէս, ծանրութիւն բովանդակ անկանէր ՚ի վերայ ժողովրդեան: Ո՛չ թէ լինէր յարքունուստ, կարևոր էր նոր հարկս արկանել ՚ի վերայ ժողովրդեան առ ՚ի ընուլ զնուազուածն հասարակաց արկեղ. իսկ եթէ լինէր յառանձինն ցեղից, նոյն հարկ ՚ի վերայ կայր: Այս ևս ծանր էր ժողովրդեան հատանել բազմամղոն ձանապարհ մինչև ՚ի տեղին, ուր լինէր համարագրութիւն: Ոչ՝ անդր էին նոցա և ծախք զոր ունէին առնել ՚ի դեգերիլ նոցա յօտար տեղիս, մինչև հասանիցէ կարգ իւրաքանչիւրոց տալոյ զանունն իւր: Այս ծանրագոյն՝ ՚ի չգտանել իջևան վասն բազմութեն խռնելոց ՚ի քաղաքս համարակալութիւնէ. Թո՛ղ զկաշառս զոր բռնադատէին տալ առ ՚ի մուտ գտանել, և փութով վճարել զիրս իւրեանց. Թո՛ղ և զգաղտնի յափշտակութիւնս դպրաց և սպասաւորաց ընդ պէսպէս պատրուակօք: Այս յայսմ ամենայնէ տրտունջք, քրթմնջիւնք, և անէծք ժողովրդեան ընդդէմ թագաւորին և թագաւորութե. ԵՒս առաւել, զի չէր անծանօթ նոցա զայն ամենայն ծանրութիւնս կրել լուկ ՚ի վճարումն սնոտի խնդ ըղձանաց արքայի: Այսոքիկ չեն նշանակեալ ՚ի ՚ձե գիրս, բայց չիք տարակոյս թէ եղեն, քանզի են բնական հետևմունք այսպիսի գործոց: Այլ ՚ի վեր քան զամենայն, ոչ գտանեմք թէ ոք ՚ի մտելոց ՚ի հանդէս համարոյ տուեալ իցէ զկէս երկրամասինն ՚ի հաս ՚ին, զոր հրամայեաց ՚ձ ՚ի ձեռն մովսիսի ՚ի գիրս ելից, որպէս վերագոյնդ նշանակեցաք. զոր ոչ արդեօք լուեր ՚ձ գիրն՝ եթէ տուեալ էին, գոլով այս բան նշանաւոր իմն ՚ի պատմութե: Այս ըստ վերջին կարծեացս՝ մեղաւ դաւիթ՝ տալով վայրապար այսչափ ծանրութիւն ժողովրդեան, ընդ նմին և պատճառս մեղաց. մեղաւ և ժողովուրդն: Այսոքիկ և ՚ձ առ ՚ի ձեռս

զպատիժ հանրական. և թէպէտ ապաշաւեաց դա-
ւիթ ընդ գործն զոր արար, բայց այն չէզև բաւա-
կան, որպէս և ոչ մեղայն, զոր առաց առաջի նա-
թանայ՝ ազատել զնա ի ժամանակեան պատժոց։

Արաքեաց ասծ առ նա զդատ մարգարէ, և սա
եդ երիս ինչս առաջի նորա, ընտրել զմի ի նոցա-
նէ. կամ երիս ամս սովոյ, կամ զերիս ամիսս փախ-
չել յերեսաց թշնամեաց, և սուր նոցա հղիցի ասէ
ի կոտորել զնա. և կամ զերիս աւուրս սուր ՚ի՛ն՝ և
մահ յամենայն երկրի նորա։ Արաքանչիւր ի պատ-
ժոց աստի ծանր էին և անբերելի. բայց գիտելով
դաւիթ, զի չիք ներումն, ընտրեաց զմահ. յոր ոչ
մտանէր անգութ ձեռն մարդոյ. * Ասանգ է ինձ
ասէ՝ յամենայն կողմանց յոյժ. բայց արդ՝ անկայց ի
ձեռս ՚ի՛ն, զի բազում են գթութիւնք նորա յոյժ, և
մի՛ անկայց ի ձեռս մարդոյ։ Եւ սկսաւ կոտո-
րածն ի նմին առաւօտու. բայց ոչ յերկարեաց զա-
ւուրս երիս՝ ըստ սպառնալեացն, այլ ցճաշաժամ
և՛եթ ըստ սահմանելոյ ՚ի՛ն, որ նախադէտ էր
ապաշխարութիւնէ դաւթի և ժողովրդեան, և խնա-
յուն և՛ զբ ընտրութիւնէ նորա։ Սակայն յայն վէց
ժամն՝ մեռաւ ի ժողովրդենէ ի դանայ մինչև
ցբերասքեէ եօթանասուն հազար արանց։ Ոյս
յիշելով որպէս միաբան ունին ամենայն ընթերց-
ուածք գրոյն, տայ մեզ խմանալ՝ թէ կանայք անկը-
նդրդ պահեցան ի մահաբեր ախտէ անտի։ Որպէս
և դաւիթ՝ արանց և եթ հրամայեաց հանդէս առ-
նել՝ ի գիտել զպինդ ուղղութիւնէ իւրոյ թա-
գաւորութե. վասն այնորիկ զնոսա միայն կոտորէր և
հրեշտակն. որ արդէն հասեալ կայր ի վերայ երու-
սաղէմ, և սկսեալ էր առնել և անդ զկարուածն,
յորժամ հրամայեաց նմա ՚ի՛ն ամփոփել զձեռն և
դադարեցուցանել զկոտորածն։ Ամբարձեալ դա-
թիթ զաչս իւր՝ ետես զհրեշտակն յօդս ի վերայ
կալոյն ուռնեայ յերուսացւոյ, և սուրն մերկ ի ձե-
ռին իւրում կարկառեալ ի վերայ երուսաղէմ՝ իբր
առանց շողացուցանելոյ։ Անկան դաւիթ և իշ-
խանքն յերկիր ի վերայ երեսաց իւրեանց, առե-

նէքեան քուրձս ապաշխարուէ զգեցեալ· խոստովան
էզև դաւիթ հրապարակաւ զմեղս իւր, և ասէ·
* Ա՛ւ ապաքէն ես սասցի Թուէլ զժողովուրդ·
ես եմ որ մեղայն, առնելով արարի զչարիսդ· և
ոչխարքդ այդոքիկ զի՞ արարին· տէ՛ր Ա՛ծ եզիցի
ձեռն քո յիս, և ՚ի տուն հօր իմոյ· և մի ՚ի ժողո-
վուրդ քո կորուսանել Ա՛ր ||։

Յայնժամ հրեշտակն պատուիրեաց գադայ մար-
գարէին ՚ի դիմաց Ա՛ն ասել ցդաւիթ՝ ելանել և
կանգնել սեղան Ա՛ն ՚ի կալն ուռնեայ յեբուսացւոյ։
Ա՛ւռնա էր սյլազգի յազգէ յեբուսացւոց· որոյ ըստ
ժամանակին ընկալեալ զնծպաշտուԹէ օրէնս եբ-
րայեցւոց, ապրեցաւ ՚ի հասարակաց կոտորածէ
անտի ազգին իւրոյ· և խաղաղուԹէ բնակէր յերու-
սաղէմ· Ա՛ս մինչ կասոյր ցորեան ՚ի կալն իւր, տե-
սեալ զարքայ և զծառայս նորա երԹեալս առ նա,
եել ընդառաջ նորա և երկիրեպագ դաւԹի ՚ի վե-
րայ երեսաց իւրոց։ Ա՛յս բան ՚ի գիրս Ա՛ծացորդաց
զայս օրինակ պատմի· * Ա՛ւռնա իբրև եառես զարքայ
և զէրուեսին որդիս նորա ընդ նմա ծածկեալս ||, և
այլն· զոր լատինն, ասորին և արաբացին այսպէս
ընԹեռնուն· * Ա՛ւռնա իբրև եառես զՀրեշտակն, և
չորեքին որդիք նորա ընդ նմա, ծածկեցան ||։ Պատ-
Ճառ այսչափ զանազանուԹէ չերևի լինել այլ ինչ,
եԹէ ոչ՝ եբրայական գրուԹիւնդ Ն՛էռ, կամ Ն՛էռ· զոր
եօԹանասունք ընԹերցան Ն՛էռ, այն է՝ աբէայ· իսկ
լատինն՝ և այլք Ն՛լայէռ, որ է Հրեշտակ· և ըստ այնմ
յարմարեցին զբանն· այլ առաջինն յարմարագոյն
է կարգի պատմուԹենն։ Ո՛վ իբրև եառես ուռնա
զարքայ և զիշխանս նորա ընդ նմա, ընդ որս գու-
ցէ էին և որդիքդ դաւԹի, ծածկեալս քրձով գալ
առ նա, դարձաւ ՚ի կալէյն ուր կասոյր ցորեան,
և եել ընդառաջ նոցա· և երկրպագեալ արքայի,
ասէ ցնա, * Ո՛վ է զի եկն Ա՛ր իմ արքայ առ ծա-
ռայ իւր· ասէ դաւԹի, գնել ՚ի քէն զկալս, շինել
սեղան Ա՛ն ||։

Ա՛ւռնա մատոյց զկալն յընծայ, և տեսեալ զի
կամք արքայի էր կանգնել անդ սեղան, զի մա-

առաջի ողջակիզ ՚ին, մատոյց նմա և զեզինս յողջակէզ. և զփայտ սայլից և զամենայն կահ եզանց ՚ի պէտս հրոյ և ՚ի վերայ այսոցիկ՝ նաև զցորեանն ՚ի զոհս։ Այլ արքայ ոչ արժան համարեցաւ յընչից օտարի պատարագ մատուցանել ՚ին, ընկալաւ զամենայն զոր ինչ մատոյց նմա ուռնա, բայց գնոյ արծաթոյ. վասն կալոյն ետ յիսուն սիկղ. իսկ վասն եզանց և ցորենոյ և փայտի սայլից հինգ հարիւր յիսուն. ընդ ամենայն վեցհարիւր սիկղ արծաթոյ անթերի կշռով. (որ առնէ սկուտ երեքհարիւր.) և այսու միաբանի հաշիւ թագաւորաց, և մնացորդաց։ Այս շինեաց անդ դաւիթ սեղան ՚ին, և եհան ողջակէզս և խաղաղականս ՚ի վերայ նորա. և եցոյց ՚ին զհաճութիւն իւր՝ առաքելով հուր յերկնից ՚ի վերայ սեղանոյ, որ ծախեաց զողջակէզն. և հրամայեաց հրեշտակին դարձուցանել զսուր իւր ՚ի պատեանս։ Ցեսեալ դաւթի ընդ լուսաւ նմա ՚ին, եղեն անդ ՚ի կալն ուռնեայ զոհս փրկութեան ՚ի գոհութեան ՚ին, ըստ երբարձ զմտին։

Պատրաստ էր յօժարամիտ երթալ ՚ի խորանն, և անդ մատուցանել զողջակէզս ՚ի վերայ յատուկ սեղանոյ ողջակիզացն, զոր արար մովսէս յանապատին, որք ՚ի ժամանակին յայնմիկ էին ՚ի բամա գաբաւոնի. այլ առ մեծի երկիւղին ՚ի տեսանել նորա զհրեշտակն սուսերամերկ ՚ի ձեռին, այնչափ տկարացեալ նուաղեալ էր, ընդ և զկնի տեսանելոյ նորա դարձուցանել հրեշտակին զսուրն ՚ի պատեանս, չունէր զօրութիւն առնել զայն ձանապարհ ՚ի կատարել զուխտ իւր։ Այլ յայնժամ լուսաւորեալ առ յով, սահմանեաց զկալն զայն հանդերձ շրջակայ վայրօք, ընդ անդ սաղոմն որդի նորա ըստ ժամանակին շինեաց տաճար տեառն ՚ին. զոր հոգւոյ ակամբ իւրոց արդիւն կատարեալ տեսանելով, յառաւելութիւն ներբին ցնծութիւն՝ աղաղակեաց ՚ի լուր ժողովոյն, * Այս է տուն տեառն ՚ին. և այս սեղան ողջակիզացն իսրայէլի ‖ ա. ֆ. էբ. 1. իբր թէ աստ միայն և ոչ յայլ տեղիս հանդերձեալ է իսրայէլ մատուցանել զոհս և ողջակէզս ՚ին։ Այսմ

վայրն՝ ուր կատարի պատմուԹիւն երկրորդ Թագաւորաց, ՚ի դէպ էր և մեզ կնքել զինեւերորդ գիրս. այլ զի գիրք առաջին մնացորդաց հասուցանէ զբանն մինչև ցվախճան կենաց դաւԹի, և երկրորդին սկիզբն առնէ յառանձին ԹագաւորուԹիւնն սողոմոնի, զնոյն ընԹացս ունիմք և մեք պահել յառաջիկայդ։

ԳԼՈՒԽ ՀԱՅ.

ԳաւԹն առ ՀԷնդանուԼիք իւրով Լագաւորէցուցեալ զսողոմոն, ցրուէ զկորիւրդ ազգինայ՝ որ գաղթ ՚է հօրէն ԼնդրէԼ Լագաւորել։

Եւ այսորիկ տեսեալ դաւԹի զանձն ծանրացեալ ոչ միայն ՚ի ծերուԹէ, այլև ՚ի յոգնադիմի տառապանաց, և յաշխատուԹեանց բազմապատիկ պատերազմաց. և զի սողոմոն որդի նորա՝ որ ըստ սահմանելոյն ՚ի Հանդերձեալ էր յաջորդել զաԹոռ նորա, և շինել զտաճարն ՚ի նմա, տակաւին մանուկ էր, առ դիւրելոյ նմա զայն գործ մեծ, պատրաստեաց նիւԹ բազում յոյժ։ Այս եւ ժողովել յերուսաղէմ զամենայն էկից, որք յայլազգուէ դէպ ձեալ ՚ի Հնմարիա ՚ՀԱծապաշտուԹիւն՝ խնդրն ընդ երբայեցիս բնակէին յերկրի նոցա։ Այս կացոյց ՚ի նոցանէ քարտաշս հատանել քար ՚ի լերանց, կոփել և պատրաստել. և երկաԹ ՚ի բեւեռս դրանցն և յայլ ամենայն պէտս. և պղինձ անչափ, և մայր փայտս անԹիւ, զոր ՚ի լերանցն Լիբանանու, և ՚ի տիւրոսէ և ՚ի սիդոնէ օր ՚ՀՀ օրէ բերէին յաձախուԹիւն յերուսաղէմ։ Այրև զայս ամենայն այսպէս պատրաստեաց դաւԹի, կոչեաց զորդի իւր զսողոմոն զառաջեաւ. և ծանուցանելով նմա զկայանուԹիւնն, զոր առեալ էր յայ վասն նորա՝

յաջորդել ՚ի թագաւորութիւն, և լինել զտաձար
ին, օրհնեաց զնա, և խրատեաւ յորդորեաց զնա
հայրենի գթով յանվրէպ պահպանուի օրինաց ին
ոյ իւրոյ, և հրամանաց և իրաւանց, զոր պատուի-
րեաց ին մովսիսէ ՚ի վերայ իսրայէլի: Այլ ապա
քաջալերեաւ զնա չզանգիտել ՚ի ծանրութիւն շինու-
թեան տաձարին՝ ասէ. ահա ես ըստ աղքատութեանս
իմում պատրաստեցի ՚ի շինուածս տան տեառն
ոսկի տաղանդս հարիւր հազար. և արծաթ տա-
ղանդս միլիոն մի և առաւել. իսկ պղինձոյ, և եր-
կաթոյ, և այլոց պատրաստութեանց ոչ դոյ սակ կշիռ
և ոչ թիւ: Վասդուստ քեզ և արուեստաւորս ձար-
տարս և բազմահմուտս յամենայն դործս արուես-
տից, հիւսուածս փայտից, և արուեստաւորս ոսկւոյ
և արծաթոյ, և պղնձոյ և երկաթոյ. տայ քեզ և
զօրինակ շինուածոյն զոր եցոյց ինձ ին: Այս
դարձուցեալ զքան իւր առ իշխանս և առ զօրա-
պետս, յորդորէ զնոսա լինել օգնական և ձեռնտու
որդւոյ իւրում սողոմոնի ՚ի շինուել տաձարի ին,
առաջի դնելով նոցա զմեծամեծ բարութիւնս, զոր
արար ին, հնազանդեցուցանելով ընդ ձեռամբ
նոցա զբնակիչս երկրին, և հանդուցանելով զնո-
սա յամենայն կողմանց ՚ի շրջակայ թշնամեաց: Այլ
՚ի տրիտուր այսչափ բարերարութեց ին խրախուսէ
զնոսա յամենայն սրտէ և յամենայն անձնէ խնդրել
զին, և արիանալ ՚ի շինութիւն տան ին:

Ապա ամենայն այսպէս պերճագիկ տնօրինեալ
դաւթի՝ համարէր բաւական ՚ի հաստատել զսողո-
մոն յիւր յաջորդ՝ յաթոռ թագաւորութեն: Այլ
տարապայմանն գորով նորա առ որդիս, յորմէ յետ
այնչափ փորձոյ տակաւին պաշարեալ կայր, փոքր
ինչ ևս զամենայն կարգադրութիւնս նորա վեր ՚ի
վայր տապալէր. և տայր նմա փոխանակ սողոմոնի
զադոնիա զերկոց որդի իւր առեալ յաթոռ թա-
գաւորութիւն իւրոյ: Զանգի ադոնիա որդի ագի-
թայ կնոջ դաւթի, որ զկնի մեռանելոյ աբեսողո-
մայ՝ եր ՚ի մէջ եղբարց իւրոց երիցագոյն, ուստի
չափ անգիտանալով, որչափ արհամարհելով զնոա

տուաւն հօր իւրոյ, որ խոստացեալ էր բերսաբէի զսողոմոն զորդի նորա թագաւորեցուցանել, եդ՚ի մտի, թէ իբրև երիցագունի՝ ինքեան անկ իցէ թագաւորութիւն հօր իւրոյ։ Այլ թէպէտ ցայն վայր ոչ գոյր յիսրայէլի այս կարգ յաջորդութիւն, բայց օրինակ այլոց ազգաց տալոյ զթիրապետական իշխանութիւն երէց որդւոց, որ և ըստ իւրաք բնական լինի էր, ՚ի նոյն վստահացոյց զնա։ Ալ սակս որոյ ըստ օրինակին աբիսողոմայ՝ արար և սա ինքն կառս, և հեծեալս ՚ի թիկնապահս անձին, և յիսուն այր սուրհանդակս ընթանալ առաջի նորա։ Դաւիթ տեսանէր և լսէր զոր առնէր ադոնիա. այլ մանկտկան մնափառութիւն ընծայելով զայն ամենայն, ոչ արգելոյր զնա, և ոչ երբէք ասէր՝ թէ ընդէր առնես զայդ, սակս հայրագութ սիրոյն զոր սիրէր զնա, զի ադոնիա գեղեցիկ էր տեսլեամբ։

Այս լուեալ դաւթի, զոր ադոնիա ինքնին լուելեայն հաւանութիւն համարէր, որպէս և բազումք ՚ի ժողովրդենէ՝ որք ոչ գիտէին զխորհուրդ արքայի, այնչափ վստահացոյց զնա, մինչև յայտնի հրապարակաւ սարծիլ և ասել, Ես թագաւորեցից։ Ձեռնտու էին նմա յայսմ յովաբ սպարապետ զօրուն, և աբիաթար քահանայապետ, երկոքին ևս առ անկասկած առնելոյ զնշխանութիւն իւրեանց, զոր երկնչէին կորուսանել։ Այլ ադոնիա յերուսաղեմ իւրով սովորական հանդիսիւ թիկնապահօք և սուրհանդակօք՝ պատրուակաւ զոհս մատուցանելոյ առ վիմին զոողեթայ, որ մօտ էր յաղբիւր ռովգեղայ· զորմէ ՚ի վեր անդր խօսեցաք։ Այնդ կոչեաց զյովաբ և զաբիաթար հանդիսադիր հանդիսի թագաւորութեան իւրոյ· ընդ որս գնացին և այլք բազումք ՚ի զօրապետաց, և ՚ի քահանայից, և ՚ի ղևտացւոց։ Կոչեաց ադոնիա և զամենայն որդիս արքայի, բաց ՚ի սողոմոնէ, և զամենայն իշխանս և զպաշտօնեայս արքունեաց· բայց զսադովկ քահանայապետ, և զնաթան մարգարէ, և զբաննա որդի յովիդեայ զօրագլուխ թիկնապահաց արքայի, և զայլ երկու զօրապետս զսէմէի, և

ղեռի, զորոց կասկածէր լինել հակառակ իւրումն խորհրդոյ՝ ոչ կոչեաց. և ոչ գուշդն Թիկնապահ հայ՝ կոչեցեալ զօրաւորք դաւթի՝ երևեցաւ անդ։ Այլն ադոնիա ոչխարս և եզինս և գառինս, և ըստ սովորութեանէ՝ զկնի զոհից, այն ամենայն բազմութիւնք նստան ուտել և ըմպել, և՝ ի ջերմանալ բազմականացն՝ ի գինւոյ՝ սկսան աղաղակել, կեցցէ՛ արքայ ադոնիա։ Զկին կամք ադոնիայ առնուլ զթագ արքայութենէ՝ ի գլխոյ հօր իւրոյ, որպէս կամէր աբեսողոմ, այլ միայն յապահովացուցանել զիւր թագաւորութիւն. զի՝ ի մեռանել հօրն՝ մի՛ ոք իշխեսցէ դիմակալ լինել նմա։

Այրև գիտաց նաթան զայն ամենայն պատրաստութիւն, ծանոյց վաղվաղակի զերսն բերսաբեայ մօր սողոմոնի, և խրատեալով զնա՝ թէ զի՛նչ խօսիցի, յորդորեաց նոյնհետայն մտանել և խօսիլ ընդ արքայի. և մինչ ասէ դու խօսիցիս անդ, ես մտից և լցից զբանս քո։ Այմուտ բերսաբեէ առ արքայ՝ ի սենեակն, և խօսեցաւ նմա աղդուխմն եղանակաւ բանս զօրաւորս, որոց անհնարին էր չներգործել՝ ի սիրտ արքայի։ Յուշ արար նմա զերդուխմն զոր երդուաւ նմա յանուն տեն ծայ վասն թագաւորելոյ սողոմոնի որդւոյ իւրոյ՝ յետ նորա. առաջի եդ նորա զնախատինս, զոր արար նմա ադոնիա՝ հրատարակելով զանձն թագաւոր, առանց քնաւ գիտելոյ ինչ զայնմանէ արքայի։ Այցոյց զվտանգն յոր ինքն և որդին իւր անկանին՝ եթէ ընաատպարտ երևեալ առաջի ադոնիայ, մայրն որպէս թէ խորամանկութեամբ ինն ջանացեալ էցէ զորդին իւր մեռ յաթոռ թագաւորութենէ. և որդին, զի ոչ երբէք հանիցէ՝ ի մտաց զբան թագաւորութենէ, զմիանգամ խոստացեալն նմա։ Այցոյց և զայն, թէ չիք ինչ օրինք առ իսրայէլացիս ոչ յայր և ոչ՝ ի մարդկանէ եղեալ, և ոչ գէթ սովորութի՝ զանդրանիկս թագաւորեցուցանել. այլ կախեալ կայ զազատ ընտրութենէ արքային, * աչք սակ ամենայն իսրայէլի՝ ի քեզ են՝ որ իմ արքայ, ցուցանել նոցա, թէ ո՞ նստիցի յաթոռ՝ ի՛մոյ արքայի ‖։

Մինչ խօսէր բերսաբեէ զայսոսիկ, ազդ արարին արքայի, թէ անդ է նաթան մարգարէ, և խնդրէ խօսիլ ընդ արքայի. որ և մուծաւ վաղվաղակի ի ներքս, և բերսաբեէ ել արտաքս։ Ասէ նաթան, տէր իմ արքայ դո՞ւ կացուցեր զադոնիա քեզ յաջորդ ի թագաւորութեէ, զի ահա էջ նա այսօր, և եզեն արջառս և ոչխարս, և գառինս բազումս, և արար խրախուճ մեծ, և ետ հրատարակել զանձն թագաւոր։ Եւ կարեմ հաւատալ՝ թէ այս բան ի քէն յարքայէ, և ինձ ծառայի քում չիցէ ինչ ծանուցեալ արքայ։ Զաւիթ թէպէտ ծերացեալ էր և ոչ ևս ելանէր ի սենեկի, բայց պահէր զընաբոյս արիութէն սրտի, և զվեհանձնութէն, և զարագութէն մտաց ի գիւտ հնարից գժուարին իրաց. արդ տեսեալ նորա, զի թէ ոչ իսկ և իսկ նստուցանէր զսողոմոն՝ թէպէտ մանուկ, յաթոռ թագաւորութէն իւրոյ, առ ի հատանել զամենայն յոյս երկից եղբարց նորա, ոչ երբէք դադարէր խռովութիւնն ի տանէ իւրմէ, վճռեաց առժամայն վճարել զնորան։ Երթէք՛ասէ առ իս զբերսաբեէ. եմուտ նա. և ել նաթան արտաքս. քանզի կամեցաւ արքայ զորոշումն մտաց իւրոց նախ բերսաբեայ յայտնել, զի մի երևեսցի թէ առնէ զայն յաւէտ ի չնորհս նաթանայ, քան թէ նորա։ Եւ ևս՝ զի բանն գոլով վասն որդւոյն ի նիւթ այսչափ կարևոր, անկ էր զի թագուհի մայր նորա նախ առաջին գիտասցէ զամենայն։ Ասն որոյ ասէ ցնա արքայ, դու խօսեցար ինձ վասն ադոնիայ, և անկատար ձեռաց բանն, առ ի չյամեցուցանել զմուտ նաթանայ. այլ արդ՝ ահա երդնում քեզ վերստին, զի սողոմոն որդի քո նա թագաւորեսցէ յետ իմ. և ի սմին իսկ աւուր ի վերջ հատուցից զամենայն ամբոխմունս, նստուցանելով զնա յաթոռ իմ։

Եւ հրամայեաց կոչել վաղվաղակի զսադովկ քահանայապետ, և զնաթան մարգարէ, և զբանեա որդի յովիդեայ. և պատուիրեաց նոցա կազմել զջորին՝ յորոյ վերայ նստէր նա ինքն արքայ, և հեծուցանել ի նա զսողոմոն, և առեալ զդաւնդն

արքունի գքերեթին և զսիեղեթին, իջուցանել արքայական շքով՝ ի գեհոն աղբիւրն, որ ելն յարևմտեան կողմն երուսաղէմի, յանդիման աղբեր ուովդելայ. և անդ սադովկ քահանայապետ, և Նաթան մարգարէ օծցեն զնա՝ ի թագաւոր՝ ի վերայ իսրայելի. և սկսանիցին հարկանել փող եղջերեաւն, և աղաղակել, կեցցէ արքայ սողոմոն։ Ապա նովին հանդիսիւ դարձցի յարքունիս, և նստցի յաթոռ իմ, և նա թագաւորեսցէ ընդ իմ. և ես եառ հրամայն լինել նմա առաջնորդ՝ ի վերայ իսրայելի, և յուդայ։ Այս ամենայն վաղվաղակի կատարեցաւ. և զկնի սակաւ ժամուց հընչեաց ամենայն երուսաղէմ՝ ի ձայնէ փողոցն և նուագարանաց, և՝ ի բարբառոյ ժողովրդեան, որոց պար առեալ մեծաւ ուրախութիւն՝ աղաղակէին, կեցցէ արքայ սողոմոն։ Այն ինչ բազմականք ադոնիայ կատարեցին զուտելն և յառնէին՝ ի սեղանոյ, լուեալ յովաբայ զհնչիւն փողոց և զբարբառ որ հնչէր՝ ի քաղաքին, անկաւ՝ ի կասկած եթէ նոր ինչ դիպաւ անդ. և մինչդեռ խօսէր նա զայնմանէ, ահա եհաս՝ ի քաղաքէ յոնաթան որդի աբիաթարու քահանայապետի. իսկ ադոնիա ակնուռնելով յաջող լինն լուր առնուլ՝ ի նմանէ, ասէ ցնա, մուտ, զի այր զօրութիւն ես դու, և բարութիւնս աւետարանես։ Ապա պատասխանի յոնաթան. և կարի՛ իսկ քաջ. լեր թէ ասել, արդարև բարութիւն աւետեմ, այլ վասն քո չար. զի ո՛ր մեր արքայ դաւիթ թագաւորեցոյց զսողոմոն. և մի՛ պատմեաց զամենայն որ եղևն. և թէ որպէս երկիր եպագ արքայ յանկողնի իւրմէ, և օրհնեաց զնո՛ր աճ իսրայելի, զի ետ նմա այսօր տեսանել աչօք՝ ի զաւակէ իւրմէ նստեալ յաթոռ իւր։

Այն լուեալ բազմականացն ադոնիայ՝ զարհուրեցան յոյժ, և առ ժամայն ցրուեցան աստ և անդ իւրաքանչիւր զձանապարհ իւր. իսկ ադոնիա գնաց ապաւինեցաւ՝ ի խորանն կալեալ զեղջերայ սեղանոյն։ Եղև սողոմոնի՝ թէ միաբանեալքն ընդ ադոնիայ ցրուեցան. և թէ ադոնիա ունի զեղ-

ջերաց սեղանոյն և ասէ, ոչ ելից աստի, եթէ ոչ երդուիցի ինձ սողոմոն արքայ ոչ սպանանել զծառայ իւր սրով։ Ասէ սողոմոն. երթայք ասասջիք նմա. եթէ յետ այսորիկ լինիցի այր բարեկիրթ հանդարտ և զգուշաւոր, անցեալ յանցանք նորա ոչ յիշեսցին. և մազ մի ի հերաց նորա ոչ անկցի վասն այնորիկ ի գետին. ապա թէ չարութիւն գտցի ինձմա, նոր խռովութիւն գրգռելով, թէպէտ և եղբայր իմ՝ մահու մեռցի։ Ձու այժմ թո՛ղ իջցէ ի սեղանոյ անտի, և եկեսցէ ձանաչել զթագաւոր իւր։ Այն ադոնիա, և երկիր եպագ արքայի սողոմոնի. և ասաց նմա արքայ երթալ ի տուն իւր և հանդարտիլ։

Գ[Լ]· Ժ·

Ամբէկարգութիւն՝ զոր արար դաւիթ ի պաշտօնեայս պաճարին, և արդունեաց ընտանութիւն։ Յորդոր նորա առ սողոմոն ի շինութիւն պաճարին։ Պատուէր նորա վասն յովաքեայ և սեմեայ։ Ա՛ր երջանիկ մահ նորա։

Յետ այսորիկ փոյթ կալաւ դաւիթ յառաջ քան զվախճան կենաց իւրոց հաստատել և յարդարել ի կարգս բարեաց զթագաւորութիւն իւր ի բոլոր մասունս, առ ի թեթևութիւն նորատակ որդւոյ իւրում սողոմոնի. սկիզբն արար նախ ի տանէն ա՛յ՝ օրինադրել զկարգ, և զգործ պաշտօնէից տաճարին։ Ժողովեաց զամենայն իշխանս իսրայէլի, և զքահանայս, և զղեւտացիս, և հանդէս արարեալ զղեւտացւոց յերեսնամենից և ի վեր, գտաւ թիւ նոցա երեսուն և ութ հազար. քանզի ի քահանայից՝ որք ոչ մտին ի թիւ։ Այլ ի զեւտացւոց անտի քանի և չորք հազարք կարգեցան ի վերայ գործոյ տանն սպասաւորել ընդ ձեռամբ քահանայից ի

գործս զոհից և ողջակիզաց, և ի պահպանութիւն կահից և կարասեաց և ամենայն սպասուց տաճարին: Այլ հազարք ընտրեցան դպիրք և դատաւորք. որոց գործ էր զղաստս որդւոց իսրայէլի քննել, դատել, և ըստ օրինաց վճարել երկիւղիւն և ձշմարտութիւբ. (Է. Ճառ. ԺԲ. 8): Որք հազարք կացուցան դռնապանք պահել զդրունս տաճարին. և չորք հազարք երգիչք երգել ի տաճարին տաւղօք և քնարօք, և ծնծղայիւք օրհնութիւն ասել: Եւ այնորիկ միւսանգամ հանդէս արար դաւիթ զևտացւոց ի քսանամենից և ի վեր. որպէս ցուցանէ գիրն. Ա. Ճառ. ԻԳ. 24. և 27: Ի սկզբան անդ պատուիրեալ էր ամէն մովսիսի թուել զևտացիս ի սպասաւորութիւն խորանին ի քսան և հինգամենից և ի վեր մինչև ցյիսներորդ ամ հասակի, և այնուհետև լինէր նոցա ի բաց կալ ի պաշտամանէ անտի խորանին, իբր անկարօղ բառնալոյ զկարասիս խորանին. Ղեւտ. Է. 25: Իսկ աստ թուէ դաւիթ յերեսնամենից և ի վեր, այսինքն մինչև ցհնգերորդին. և դարձեալ ի քսանամենից և ի վեր. վասն զի զկնի շինութեանն տաճարին ոչ ևս գոյր հարկ աստ անդ տեղափոխելոյ զխորանն, և զսեղանս զոհից և ողջակիզաց, և զայլ կահս սրբութեանց, առ որ առաւել ոյժ և զօրութիւն պիտէր. իսկ ի տաճարի կային զանազան սպասաւորութիւնք թեթեւք, զոր և անցեալքն զյիսնամենիւք կարօղ էին առնել. որպէս և որք էինն ի քսանևհինգ ամենից և ի խոնարհ:

Եւ այսպէս հաստատեալ դաւիթ զկարգ պաշտօնէից տաճարին, որ ընդարձակ պատմի Ա. Ճառ. ԻԳ. ԻԴ. ԻԵ. և ԻՀ. խորհեցաւ յանպահովացուցանել և զիագաւորսն որդւոյն ընդդէմ ամենայն խռովութեց և ապստամբութեց: Զաոն որոյ բաց ի սուրբ կան թիկնապահաց քերթեի և ոփելեթի անուանեալոց, որք միշտ նստէին յերուսաղէմ առընթեր արքայի, ընտրեաց յանցնիւր ցեղէ մի մի այր ընտիր հաւատարիմ և պատերազմական, և արար երկոտասան զօրագլուխս՝ ունել իւրաքանչիւր ընդ իւ-

բով հրամանատարութիւն քսան և չորս հազար զինուորս. որով միշտ ունիցի յոտին բանակ երկերիւր ութսուն և ութ հազարաց, բաժանեալ յիւրաքանչիւր ցեղս, որոց դիւրին էր միանալ և նուաձել անդէն՝ ի սկզբան զամենայն ապստամբութիւն. և սահմանեաց ամսոյ ամսոյ քսան և չորս հազարաց գալ յԵրուսաղէմ՝ ի պահպանութիւն, և իւրաքանչիւր զօրապետի զիւր ամսական հաս։ Կացոյց և երկու գանձապետս, մի՝ ի վերայ գանձուց արքային յԵրուսաղէմ. և միւս ևս՝ ի վերայ գանձապահաց այլ ամենայն քաղաքաց, ամրոցաց և աւանաց։ Սակ ի վերայ արքունի կալուածոց կացոյց տասն գործակալս. որոց գործ զայս օրինակ էին բաժանեալ։ Առաջինն խնամ ունէր միայն արօրադիր անդաստանաց. երկրորդն՝ այգեաց. երրորդն համբարսնոցաց արմտեաց. չորրորդն ձիթենեաց և մոլեթզենեաց. հինգերորդն ձիթահան գործեաց և շտեմարանաց ձիթոյ. վեցերորդն արջառոց սարովնայ. եօթներորդն եզանց արօտականաց՝ ի հովիտն. ութերորդն՝ երամակաց ուղտուց. իններորդն իշոց. տասներորդն հօտից խաշանց։ Այս ևս պաշտօնատարութիւնք չէն ինչ դիւրին. զի քայ՝ ի հմտուէ՝ զի գիտասցէն հրամայել և դատել զգործս ծառայից, և՝ քայ՝ ի ձարպկուէ և յաչալըրջուիթէ՝ զի մի խաբեսցին՝ ի ստորին պաշտօնէից, կարևոր է նոցա և հաւատարմութիւն մեծ. զի մի մածանիցի՝ ի ձեռս նոցա այն որ ունէր անցանել յարքունիս։ Սակ առաջինն խորհրդականք նորոյ արքայի ընտրեցան քուսի արաքացի, և յովիդայէ որդի բանեայ փոխանակ աքիտոփելայ, և աբիաթար քահանայ. ընդ որս և յովաբ թէպետ մահապարտ, քայց առ ժամն թողաւ յիւրում իշխանութէ։

Առդ՝ զայս օրինակ կարգեալ դաւթի և տնօրինեալ զամենայն իրս թագաւորութէ, ժողովեաց յԵրուսաղէմ զամենայն իշխանս և զգօրավարս իսրայէլի. և խօսեցաւ առ նոսա լի ածային հոգւովառաջի արարեալ նոցա, թէ որպէս ընտրեաց ած զնա թագաւոր, որ էր վերջին յեղբարց իւրոց. և

Թէ նոյնգունակ պատուիրեաց նմա ՚ի յամենայն որդւոց իւրոց, զի որդիք բազում էին նորա, զօղոմն կրսեր որդին նստուցանել յաթոռ թագաւորութեանն ՚ի վերայ իսրայէլի: Կու ևս՝ Թէ մի՛ պէս կամեցաւ ՚ի, զի սողոմոն շինեսցէ նմա տուն, և ոչ նա ինքն դաւիթ, զի արիւն բազում եհեղ ՚ի պատերազմունս: Պա բազում ջերմութիւք յորդոր եղև ամենեցուն ՚ի պահպանութիւն ՚ի ծայրին օրինաց, և ՚ի մշտնջենաւոր հաւատարմութիւն առ բարձրեալն ՚ի: Եթող դարձուցեալ զբան իւր առ որդին՝ ասէ. և դու սողոմոն որդի իմ՝ ծանիր միշտ զՅԾ հօր քո, և ծառայեա՛ նմա կատարեալ սրտիւ, և ընդարձակութ հոգւոյ քո. վասն զի զամենայն սիրտս քննէ ՚ի, և զամենայն խորհուրդս ճանաչէ: Կթէ խնդրեսցես զնա, գտցի քեզ. և եթէ թողցես զնա, լքցի զքեզ իսպառ. տե՛ս այժմ, զի զքեզ ընտրեաց ՚ի որբուիթի. զօրացի՛ր և քա՛ջ լեր ձեռն ՚ի գործ արկանել, և մի՛ ձեռնթափ լինիցիս, մինչև հանցես զգործն զայն մեծ ՚ի գլուխ:

Յայնմ վայրի ետ ածել ՚ի տես ժողովոյն, և առաջի աչաց նոցա յանձն արար սողոմոնի զգաղափար և զձև մեծի շինուածոյն, և ամենայն մասանց նորա, սենեկաց, գանձարանաց, վերնատանց, շտեմարանաց, և սրահից, և այլն: Կա և զչափ կշռոց, որ կոչի կշիռ սրբուիթէ. և զձև սեղանոց և անօթոց ՚ի սպաս պաշտամանց ՚ի. ետ և զկշիռ ոսկւոյ և արծաթոյ. եցոյց և զներքին հանգամանս նոցա, զորս զատուցեալ ՚ի միմեանց ուրոյն ուրոյն եդեալ էր. ուսուցանելով Թէ յորմէ՛ ունէր շինել զայս ինչ, և յորմէ՛ զայն ինչ. զամենայն գրով առեալ ՚ի ձեռանէ ՚ի՝ ետ սողոմոնի, շինել ըստ օրինակին ըստ այնմիկ իւրով ՚ի ծատուր խնամատուիթ: Կու բաց ՚ի ցայս վայր նշանակեալ ոսկւոյ և արծաթոյ, զոր նուիրեալ էր տան ՚ի, յաւել ՚ի զեղմանէ առատութիւն սրտին՝ և յիւրոց անտի՝ զոր պահեալ էր յիւր առանձին պէտս, ոսկի սուիփերայ երիս հազար տաղանդս, և եօթն հազար տաղանդս

արծաթի ընտիր, օծանել նովաւ զորմունս տաձարին, նախ արծաթապատել, և ապա ՚ի վերայ տալ ածել զոսկի յառաւել պայծառութիւն։

Այս պարզև արար դաւիթ առաջի ժողովոյն ՚ի յորդոր և այլոց իշխանաց իւրով օրինակաւ՝ լինել և նոցա յառաջամիտ յօժարակամ առատաձեռնութիւն. որպէս և յաջողեցաւ իսկ։ Ի իշխանք և հազարապետք և հարիւրապետք՝ որք կային, խոստացան յայնժամ բանիւ, և ապա ետուն արդեամբք ըստ իւրաքանչիւր կարի՝ տաղանդս հինգ հազար և բիւր դահեկան ոսկի. (դահեկանն ոսկւոյ էր վեցերորդ մասն միոյ ունկւոյ.) և արծաթի՝ տաղանդս տասն հազար. պղինձ՝ տաղանդս բիւր և ութ հազար. և երկաթի՝ տաղանդս հարիւր հազար. և որք ուրուք գտաւ քար պատուական, ետուն ՚ի ձեռս յեհիէլի որդւոյ եսրովմի ՚ի պէտս տանն տեառն։ Եւ զուարճացաւ յաւուր յայնմիկ ժողովուրդն, վասն զի ինքնայօրդոր և լի սրտիւ եղեն յառաջամիտք տեառն։ Եւայց առաւել քան զնոսա դաւիթ արքայ ցնծայր ՚ի հոգի, և ոչ գիտէր յագենալ յօրհնել զտէր և գոհանալոյ զնմանէ յաղագս մեծամեծ և անկշռելի բարութեացն՝ զոր արար նմա տէր և ժողովրդեան իւրում. մատոյց և զոհս և ողջակէզս տեառն։ Եւ ՚ի վաղիւն թագաւորեցուցին երկրորդ անգամ զսողոմոն. և միաբանգամ օծին զնա տէր ՚ի թագաւոր առաջի բազմութեան ժողովոյն, և զսադովկ ՚ի քահանայութիւն. և եղեն դաւիթ զուարթակս հազար, խոյս հազար, և գառինս հազար. կերան և արբին ուրախութիւն. և ամենայն իշխանք և զօրավարք և որդիք դաւթի արքային հնազանդեցան սողոմոնի. և արձակեցաւ ժողովն։

Յետ այսորիկ կոչեաց դաւիթ առանձինն զորդի իւր զսողոմոն. և ետ նմա պատուէրս լինել։ Տեսաք ցայս վայր, ո՛վ դաւիթ թէպէտ բազում անգամ դառնացեալ ոգւով խօսեցաւ ցյովաբայ, բայց ոչ երբէք դատապարտեաց զնա ՚ի մահ. որպէս և ոչ զսեմեի, նա զի սեմեայ երդուաւ թէ ոչ սպանցէ զնա. բայց ոչ երբէք լիակատար նե-


բուժեն չնորհեաց անօրինութեանց նոցա, որով և անդրոշ թողեալ զդատաստան նոցա՝ եթող միշտ երբեք և իցէ տեղի քննութեան յանցաւածոց նոցա։ Զայն որոյ՝ ի վախձան կենաց իւրոց՝ յանձն արար սողոմոն վճարել զդատաստան նոցա. ասէ. դու ինքնին գիտես, զոր ինչ արար ինձ յուսաբ որդի շարունակեայ. որով տայր և զայն իմանալ, թէ նա սպան ի պատերազմի զաբեսողոմ զորդի իմ հակառակ յայտնի հրամանաց իմոց. և ի վերայ այնր՝ փոխանակ ապաշաւանաց՝ սպառնալիս ևս սպառնացաւ ինձ յանդուգն խիղախմամբ։ Գիտես և զոր ինչ արար ընդ երկուս իշխանս զօրաց իսրայէլի ընդ աբենններ որդի ներեայ, և ընդ ամեսայի որթի յեթերայ, որք միամտութեաբ սրտի դարձան առիս, և ես ի տեղի նորա խորհեի հաստուցանել զնոսա. և նա առ չար մախանաց սպան զնոսա դաւաճանութեաբ. և խնդրեաց զարիւն պատերազմի ի խաղաղութեան. որով և ես գտայ պարտաւոր արեանց նոցա։ Այլ զի բռնացեալ էին յոյժ յուսաբ և եղբարբ նորա, ի մեծագոյն չարեաց խնթացեալ լռեցի առ ժամն առնել զարդար վրէժխնդրութեան։

Գոյնպէս ի կախ թողի և զդատ սեմեայ որդւոյ գերեայ որդւոյ յեմենայ բաւարիմացոյ, որ անէծ զիս անէծս ցաւագինս յաւուր յորում փախչէի յերեսաց աբեսողոմայ եղբօր քոյ. այլ զի ի դառնալ իմում յերուսաղէմ, էջ սէմէի ընդ առաջ իմ՝ ի յորդանան, երդուայ նմա ոչ սպանանել զնա սրով. և պահեցի զերդումն իմ։ Այսր դու ազատ ես յերդմանէ անտի, վասն որոյ կարօղ ես՝ ի գործ արկանել՝ ի վերայ նորա, որպէս և՝ ի վերայ յուսաբայ զտիրական արդարութեան ըստ գործոց նոցա։ Արդ՝ քեզ յանձն առնեմ առնել զդատաստան նոցա ըստ իմաստութեան քումմ, զի այր իմաստուն ես դու. գիտեմ զի ոչ անպարտ առնիցես զնոսա, և ոչ թողուցուս խաղաղութեամբ մեռանել նոցա՝ ի մահիճս։ Յանձն արար բազում ջերմութեամբ խնամոյ նորա զորդիս մեծի բարերարին իւրոյ ծերունւոյն

քերզելեայ գաղաադայեոյ, պատուիրելով պահել զնոսա յարքունիս, և ունել միշտ իւր սեղանակից։ Այս այսպէս վճարեալ դաւթի զպարտիս իմաստուն Սաղոմոն և երբ թագաւորի, և գործակատար հօր, կնքեաց զկեանս իւր լի աւուրբք, մեծութիւք և փառօք՝ ամաց հօթանասուն և միոյ. յամի աշխարհի ըստ կաղինոսի՝ 5156. և թաղեցաւ ի քաղաք իւր ի սիան, թագաւորեալ ամս քառասուն, և ամիսս վեց։

Վասն մեծին այն և սքանչելին՝ Սաղոմոնի անուան արժանացեալ, որ ի մանկուէ վկայեցաւ լինել այր ըստ սրտին Աստուծոյ, ի նուաստ և յանշուք տոհմէ աստիճան առ աստիճան ելեալ՝ ամբարձաւ յաթոռ թագաւորութիւնն իսրայելի։ Վասն զի թագաւորական և զքաղաքական առաքինութիւնս միացուցանել յանձին իւրում ընդ գերագոյն ածպաշտութիւն։ Վհարկու էր թշնամեաց, և անոխակալ չարեաց կրելոց յանիրաւի. արի և անսասան ի վտանգս, այլ հեզ և բարեհամբոյր ի համբերութիւն. արդարակորով՝ բայց և գթասիրտ. իմաստուն ի տնտեսութիւն թագաւորութիւնն, և երկիւղած ի պահպանութիւն պատուիրանաց Աստուծոյ։ Վնախանձ ի խնամս ժողովրդեան, մինչև ընտրել՝ տալ զկեանս իւր փոխանակ նոցա. և անքուն ի պաշտօն տան Աստուծոյ, յամենայնի կամեալ կան աղջակիզ մատուցեալ զանձն հաճոյից կամաց նորա. որով և յառաջ քան զերևիլ լուսոյ աւետարանական օրինաց՝ եհաս ի ծայր աւետարանական առաքինութեան, և քրիստոնէական իմաստասիրութեան. մինչև ստեպ վկայել գրոյն զնմանէ, թէ * Վբար դաւթի ուղղութիւն առաջի տեառն, և ոչ խոտորեցաւ յամենայնի, զոր պատուիրեաց նմա, զամենայն աւուրս կենաց իւրոց. բաց ի բանէն ուրիայ քետացւոյ ‖. գ. Ռագ. ԺԵ. 5. և այլն։ Վայց և զայն յայտ է թէ զիարդ քաւեաց. սրպիսի ջերմ և բեկեալ ոգւով ապաշխարութիւնէ խոստովան եղև. և զիարդ առաջի համօրէն ամենեցուն նշաւակեաց զմեղս իւր. որով և եթող աշխարհի յաւէժական

օրինակ չհմարիտ ապաշխարութեանէ ։ Այլև թագաւոր և մարգարէ . նորա մարգարէութիւնք յօրհնեցուցեալ էին սաղմոսաց հնչեցոյին յեկեղեցիս քրիստոնէից ցկատարած աշխարհի . և թագաւորութիւն նորա ՚ի քէ յո ձգեսցի յաւիտեանս յաւիտենից ։ Այրանելի են՝ ո՛չ որք ընդ ամն քառասուն թագաւորեցին յերկրի , այլ որք մահուամբ կորուսեալ զերկրաւոր թագաւորութիւնն՝ գիտացին հորդել ինքեանց ձա նապարհ առ յաւիտենական թագաւորութիւն երկնից ։



ՎԱԽԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐՈՑ

ՅՈՒՆԿ ԳԼՈՒԽՈՑ

Բ· ՀԱՏՈՐՈՑ

ԳԻՐՔ· Լ·

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԳՐՈՑՆ

ԴԱՏԱՒՈՐԱՑ ԵՒ ՀՌՈՒԹԱՑ·

գլ· երես·

ա. Աղիքաւորութեան որդւոց իսրայէլի: Վասն եղեալ որդւոց յուդայ առնու զբեղեզի զաղաչ. և զլապագաւոր նորա զադոնիբեզեկ իւրեալ՝ պայ կռիւ զծայրս ձեռաց և ոտից նորա, և այնպէս պահէ զնա ինձեւ՝ ի մահ նորա: Գտանիլ առնու զդրաբեր զաղաչ, և նուաճ զեւսայանայ զաղեքայ: 3:

բ. Ի դէպ պաղտէ հուսա առանձին՝ ի գան իւրում: Ոչդէդ դանայ յափշտակէն զհուսա նորա. և առեալ զլայնա զաղաչ՝ հրձիգ առնէն զնա. և շինեն նոր զաղաչ, զոր յանուն նախահաւուն իւրեանց կոչեն գան. և անդ կանգնեն զհուսա յայսմհետ՝ ի պաշտօն: 10:

գ. Ոչ խաղայ՝ ի լեռնէն եփրեմայ: Ոռնաբարութիւն հնոչ նորա չեղեռնագործ գաբաաղոց: 17:

դ. Վաղաւակն պաթերաղմ՝ ի զի որդւոցն իսրայէլ, և հորձանուտն չեղին բեթհորին: 20:

ե. Ծառայութիւն որդւոց իսրայէլ ընդ չեռամբ հռաստրաքեմայ արքային միջագետաց: Պատուիրէ նոցա՝ ի չեռն գտանիլէ: Այրիրուդ ծառայութիւն նոցա առ եգղոնա արքայիս մոաբայ. և պատուիրէ նոցա չեռամբ առաւղոյ, ուր պատմի և չաղութիւն սահմանացոյ: 31:

զ. Ծառայութեան որդւոց իսրայէլ ընդ չեռամբ

յաբէնաց արտայէ չանանացւոց : Ա՛ղաքունէն նոցա ՛է
յեռան դեբերայ ևբարձայ : Յարուհարիւ նոցա ՛է
մարքանացւոց : 38 :

Ի. Գ՛նդէռն գրկէ զքողովրդն իսրայէլ ՛է ճառա-
յունէ մարքանացւոց : 46 :

ԻԱ. Պատմունէ Յեսունայ, առ դպատուրս : 63 :

ԻԲ. Ա՛բիմելէխ բռնաւոր դպատուր իսրայէլի : 72 :

ԻՃ. Յովղա. Յայիր. Յեփթայէ. Ի՛բսեբոն. Ի՛ղլոն.
և Ա՛բդոն կամ ղաբդոն դպատուր իսրայէլի : 81 :

ԻԴ. Գ՛նդապետունէ Սամփսոնի, և Յեղեայ : Ա՛ռե-
պեօ ծնունդ սամփսոնի, և անունդ նորա : 97 :

ԻԵ. Սամփսոն առնու կին այլազգի. և ՛է պատճառս
նորա հրկէզ առնէ ՛է յեռն աղուէսաց զանդս այլազ-
գեայ : Ա՛րդէ՛ յոյդայ պան զնա ՛է յեռս այլազ-
գեայ. և նա ծնօպիս եղեյ սպանանէ հազար այր յայլ-
ազգեայ անդր : 103 :

ԻԶ. Սամփսոն զբրկուսին փեղչս դրան գաղայ չաղաչին
լափել հանէ ՛է գլուխս լբրին : Ա՛տկնէ ՛է ինոջէ
իւրմէ ՛է յեռս այլազգեայ : Կործանէ զպատճառ դա-
գունայ, և ղեռանէ անդր. բայց յայլազգեայ անդր
ղեռուցանէ երկս հազարս : 112 :

ԳԻՐՔ. Ը.

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵԱՆՑ :

ԻԷ. Ծնունդ սամուէլի. և դասդիարաիունէ նորա
ընդ յեռամբ հեղեայ : 123 :

ԻԸ. Ա՛մաբղդունէ ոդդոյն հեղեայ : Պատանալէ՛ ԱՅ
առ հեղէ ՛է յեռն հրեշտակէ : Ակնկբն մարգարէու-
նէ սամուէլի ՛է հաստատունէ սպատնալեայ : 129 :

ԻԹ. Ա՛յլազգե՛ երկեցս հարկանեն զղդրս իսրայէլի ՛է
չարաչար հարուածս : Ա՛ղնուն զպատանեկ ՅՆ. և
հոպոբնն զղդրս հեղեայ : Ա՛ետանէ և հեղէ բնկ-
մամբ ոգին եբոյ : 136 :

Ճ. Սամուէլ հայուցանէ դպատուր իսրայէլի, և յոր-
դորանօ իւրով դարձուցանէ զքողովրդն առ ԱՐ :

Չարուածքին այլակերպ վանն պապանակի ՚ն, և դարձեալ
յուրայնքին գնա ընծայիւք ՚ի Բեթլեհեմ: 141:

Ե. Չարուածքին Բեթլեհեմացոյք յաղագս անպատուհասելոյն գնացեալ նոցա գրապանակ ՚ն: Ծնողացն պապանին ՚ի հրեշտակին: Ելանեն այլակերպ մարդոյ ՚ի վերայ իջանելի. յաղթեն նոցա որդիք իջանելի ՚ի յերեսն աղօխիկ սամուէլի: 149:

Զ. ՚Ի պատճառս որդւոյ սամուէլի՝ որ էարուածքն վարձին գրագործ գրապահութեանն, ծողովուրդն խընդրէ նահապետ: Սամուէլ առաջի գնէ նոցա զձանրութիւնն երեսանց նահապետի. քայց և այնպէս նոյա պնդեն գինդրէլ իւրեանց: 156:

Է. Սաուղ ընտրեալ յայ առաջին նահապետ իջանելի օձանէ ՚ի Սամուէլէ: Ընդրի և վիճակաւ ՚ի հաստատութիւն ծողովի ՚ի մասեփան: 165:

Ը. Սաուղ զօրածողով լինի ընդդէմ ամաղեկացոց. յաղթէ նոցա. ապրեցուցանէ գագաղացս. երկրորդ անգամ օձանի նահապետ ՚ի գաղգաղա: Սամուէլ անարգեալ վիճայէ ՚ի ծողովրդենէ: Ցանդիմանէ գապերախտութիւն նոցա առ աՀ: Տայ նշան յերկինից ՚ի վիճաւորութիւն ճշմարտութեանն քանից իւրոց: 173:

Թ. Ընտրէ գնոսա գանասկան հարճից ՚ի վերայ ամաց նահապետելոյ առաւուղայ, ըստ գանի ամս նահապետեաց: 182:

Ժ. Ընտրու յոշխալան գամրոյն գաբեայ ՚ի յեռաց այլակերպաց: Ելանեն այլակերպ ընդդէմ իջանելի անհամար բազմութիւն: Սաուղ երկուցեալ տարուցանէ գնմա, ոչ ճանալով ըստ ժամադրութեանն գալոյ սամուէլի, որով և հեղաւ ՚ն: Սակայն և այնպէս օգնէ նմա աՀ խորտակել գայլակերպս, որոյ սիրելիք արար յոշխալան որդի նորա: 191:

ԺԱ. Սաուղ հանէ հրաման չուտել ինչ զօրուն մինչև ցերեկոյ: Յոշխալան յանգիպ անցեալ գհրամանատուն անհնար ՚ի վնասակ մահու. այլ ծողովուրդն ապրեցուցանէ գնա: 200:

ԺԲ. Սաուղ ապրեցուցանէ գափագ նահապետ ամաղեկացոց ընդդէմ յայտնի հրամանի ՚ն, զոր պատուիրեաց նմա ՚ի յեռն սամուէլէ: Ասէ նայ, և վասն

առաջին անհնազանդությունը որ ՚ի սկիզբն, մերձ առ
առուղ ՚ի լինգաւորությունէ :
ԺԶ. Վասիլն օձանէն լինգաւոր. և հոգի ոչն գայ ՚ի
նա : Ասի ՚ի առուղ այս չար տիրանէ և լլկէ զնա :
Վասիլն չաղցրայինն զնարբերգությունէ դէմքն նմա :
ԺԷ. Վասիլն պարտատրամբ յաղանանէ կիսկային գո-
ղեալ :
ԺԸ. Յոհաննէս աչքս բարեհամությունէ հալէ ընդ
դառնիլ : Ալանայ պարտուղ նուագելով զերգս
յաղթությունէ ՚ի ձայնոցանէն զդառնիլ չուտ զառուղ.
վասն այնորիկ լնդրէ առուղ սպանանել զդառնիլ :
Առուղ սպէ դաշինն, չի գոհանակ երէց գործէն,
զոր խոստացաւ, այլ չերկերդէ գուսդ էր :
ԺԹ. Յոհաննէս չապագովէ զդառնիլ առաջէ հօր
երդոյ. և նա առ ձայն երդմանէ չափ խոստանայ ոչ
սպանանել զդառնիլ : Այլ սպա սպեալ երդմանն,
անդրէն լնդրէ սպանանել զնա. բայց հեղուղ էին
դառնիլ չերկնութեանէ զնա գեղերայն :
Ի. Վասիլն դառնայ ՚ի գաբաա առ յոհաննէս :
Ալկին և էրէն հապարէն զուխս սերոյ բարեհա-
մությունէ առ հիմնան՝ գաղդ ՚ի առուղայ ոսոխէն
դառնիլ : Վասիլն երկայ ՚ի նոմբա, և առնու զհայ
առաջաւորությունէ ՚ի պէտս էր և ընկերայ էրոյ :
ԻԱ. Վասիլն գախչէ ՚ի գերն. և անպէ յայրն ոդո-
ղոմայ : Առուղ պայ հուրել զպահանայս պէն, և
պահնայն բնակիչս նոմբայ չաղպէ չահանայէդ. զի
դայն աբելաբար որդէ ապիլչէպայ չահանայպէպէ
չերկնել երկայ առ դառնիլ :
ԻԲ. Վասիլն պաղպէ զիչեալս : Ասպէ գախուցեալ
երկայ ամրանայ ՚ի հայել լեռն անապատին զի-
գայ. ուր հանդիպի նմա յոհաննէս. և պան հի-
նանայ զվերչին ողջոյնն հրաժարական : Ո՞վ յիպայէ
ապէ առնչէն զնմանէ առուղայ : Վասիլն անցանէ
յանապատն գաղդայ : Ասէ յայրին առուղ յան-
գեպա անկանի ՚ի չեռս դառնիլ. այլ նա չար ինչ ոչ
առնէ նմա :
Իգ. Առեալ զնէն պչանիկալի զնանա երբ : Ասէ
զերծէ առարգելաբար զդառնիլ : Ասբերգեա զին նաբա-

ղայ արքելու զբաւելն հրել չչեան յարիւն անապարս։
Ալարաղ հարեալ ի գնել հեռանել։ Ընթեցա լինել չչեն
զրաւելն։ 268։

ԽԱ. Գաւելն վերարին գայ յանապատն չչեայ։
Ասուաղ մատնուելոյ չչեայոյ՝ հասանել անդ չչեն
նորա, և մատնել զարչեալ ի չեաս զրաւելն. այլ աս
խնայել ի նա, և խոյս պայ ի գնել։ 276։

ԽԲ. Ընդունել հայի գանել զբաւելն ի պատերազմ
ընդդեմ իսրայելի։ Գաւելն աս երեսս յուսանել
յօժարուելոյ. այլ ի սրոի չրե պահպանել չեզ։ Չա-
հասուելոյ նախարարաց ազգին գնա։ Գաւելն ըսդ
հրամանին անհասաց զրաւելոյ ի զաղտ իսր ի սիկե-
լակ. զոր գտանել այրեցեալ, և չընակիչս նորա գե-
րեալ ընդ երիս հանայս իսր։ Չասանել չինել
գերելոյ, հոտորել գնասս, և զանձնային գերին և զա-
ւարն առնուս։ 287։

ԽԳ. Գապերազմ գեղերուայ. ուր հեռանել ասուաղ,
և երեք որդիք նորա յոչնչանալ, ասինադաբ, և
հղչիասաբ։ 295։

ԳԻՐՔ. ԺԱ.

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՑ։

ՅԱ. Գաւելն պայ ապանանել զամաղեկացին, որ ասաց
լել ինքն սպան զասուաղ։ Ընդե առնու ի վերայ
ասուաղայ և յոչնչանալոյ։ Ցանել ի հերբրոն զա-
գաւոր ի վերայ ցեղին յուդայ։ 305։

ՅԲ. Չեհասանել որդի ասուաղայ լագաւորել ի մա-
նասէ ի վերայ հիսասան ցեղիդ իսրայելի հնարա-
գործուելոյ աբենադեբայ սպարապետի։ 313։

ՅԳ. Ա պարանջուելոյ աբենադեբայ, և ուխտ նորա ընդ
դաւելի։ Ա՝ահ նորա. և մահ չերեսելոյ. և լել
չանիւ ասա լագաւորելոյ չերեսելի։ 322։

ՅԴ. Չանդիսասոր օձուին դաւելի ի հերբրոն ի լա-
գաւոր ամենայն իսրայելի։ Ընաչին պատերազմ նո-
րա ընդդեմ չերեսելոյ չերուսաղեմ։ 333։

ՅԵ. Ընդարձակին զօրավարք դաւելի, նզանասորք հե-

ձանձ չալափարձուելիք։ Երկիւղս հարկանել զառաքեալսն՝ չարաչար խորտակելով զինսս։ 340։

Ձ. Զառաքեալսն ընծայհանդէս ճառօք հանել պատգամաւորս՝ զի պանդխտութեան վճռոյն մերձենալոյ յետոյմբ՝ ի պատգամին։ Ոչ պատճէն մահուանէն վասն մերձենալոյ յետոյմբ՝ ի պատգամին. ուստի յետոյ է լեալ դառնալ՝ առ ձայն զնոսա պատգամին՝ ի տուն աբեղդարայ գերեզմոյ։ 346։

Է. Զառաքեալսն հանել պատգամաւոր զի՝ ի պանդխտութեան, և նախափրեալ պանճալէ հանդիսիւս պանդխտի՝ ի սիոնէն նոր չաղաղ, և հանգուցանել յապարանսն՝ ի ներքսագոյն խորանի։ 350։

Ը. Պատերազմունս դառնալ արտաքոյ հրէասպանի։ Հարկանել պանդանս արտաքոյ սմանայ յաղագս նախատանացն՝ զոր արար հրէշտակաց երկոց, զոր առաքեցաւ՝ ի ջնջելոյ զնա վասն մահու հօր նորա նասայ երկրէնմէ երկոյ։ 354։

Թ. Զնուագնէ դառնալ առ ներքինեսանէ որդի յոնէլոնաս։ Ընդունել դառնալ՝ ի ձեղս շնորհէ և մարդապատուհէ։ Պատրեալ դարձ և ապաշխարութենէ նորա։ 362։

Ժ. Ասահ անդրանիկ որդւոյ բերքաբերէ։ Ծնունդ Պողոմանէ։ Ընտուն առքելոյ մայրաքաղաքէ ասղնագործ, և խեսա հարուածք նոցա։ 376։

ԺԱ. Ընտնեան աղեխտ և վիշտ դառնալ։ Ընտն բռնաբար պղծել պղոմայ՝ զիամամայր իւոյ աբեսողոմայ։ Ընբեսողոմ դառնաձանուելիք ապանանել զամոն պերեդ եղբայր իւր։ 384։

ԺԲ. Ընբեսողոմ փախստական անկանել առ արտոյ գեառնոյ, և դառնալ յերուսաղէմ ձկնորդունելիք յովեբոյ։ 393։

ԺԳ. Ընպատմելունեան աբեսողոմայ։ Փախուստ արքայնն դառնալ յերուսաղէմ յերեսաց աբեսողոմայ։ 399։

ԺԴ. Զառնալ հաշտելունեամբ պանդ դառն անիծանոյ սեմեայ։ Ոչ ուստ արտաքոյ ցրեալ չիամ խորհրդոյ աչելոփելոյ։ 410։

ԺԵ. Զարտաքոյ հայ աբեսողոմայ. և չոճ դառնալ՝ ի վերայ նորա։ 420։

ԺԶ. Ընձնայն յերկրէ խորհելի փան՝ ի հնազանդու-

ի՛ր տալով. և զառանց զայդ զալիքն գառօք չերտա-
ւաղէմ։ Զի՛ ապաւամբութիւնի էսրայէլ. ոչ խաղա-
ղի համուամբ աբէբեայ որդւոյ բոչորայ։ Ա՛հա
ամենայն զառաջանութիւնք յովաբայ։ Զպատ յա-
բել զաղաւ՛ զ պաշարմանէ զ չեռն հնարիչ էմատուն
կնոջ։ 429։

ԺԶ. Ա՛ով երբեմն էր պատճ անիրաւելոյ սաւու-
ղայ զ գաբաւոնացիս։ Ա՛ահ ելիանդ զ փանէն սա-
ւուղայ։ Զլուսիք ոչխար սա ջեռելս։ Ջա-
նալան պատերազմունք առանձին։ 443։

ԺԷ. Զաւիթ պայ լուսել զիշողովուրդ էր. ոյր վեան
երթս աղգս պատճոյ առաջարկէ նմա գալ մարգարէ.
և նա ընդրկէ զմահ։ 450։

ԺԸ. Զաւիթ առ չէնդանութիւնք իւրով ևագաւո-
րեցուցեալ զսողոմոն, յորս զիշորհուրդ ազոնիայ՝
որ գալայ զ հօրէն խնդրելոր ևագաւորել։ 459։

Ի. Զարեհարգութիւն՝ զոր արար դաւիթ զ պաշտա-
նեայս պաճարին, և արձանեայ ևագաւորութիւնք։
Յորդոր նորա առ սողոմոն զ շինութիւնք պաճարին։
Պատուէր նորա վեան յովաբայ և սեմեայ։ Զա՛ եր-
զանիկ մահ նորա։ 465։

Ինքը Խնկո Ապո է ասում
Ջ/Ա -42 թ.